



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material


L5r

149

1999



ԳԱՐՐԻԷՂ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆ.



Домъ М.И.Искракова въ Искра.

ԻՍԿՐԱՅԻ ՄԱՐԿԱՆԻՆԻ ԳՐԱԳՐԱՐԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ Ի ՓՆԳՐԱԿԱՆԻԿԸ.

7.

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ԽԱԼԻՊԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ

### ԱԶԳԻԱ ԷԱՅՈՅ.

(1858—1871)



Շ Ա Ր Ա Գ Ր Ե Ա Ղ

Ի ԳԱՐԻԷԼԷ ԱՐՔԵՊՈՍԿՈՊՈՍԷ ԱՅՎԱԶԵԱՆ.



ՀՐԵՏՈՐԻՍԿՈՒԹԻՒՆ ԽՐԵՏՈՐԻՍԿՈՒԹԻՒՆ Ա. ԹԱԵՐԵԱՆՑ.



344

Дозволено цензурою. Тифлисъ. 9 Февраля 1880 г.

Типографія И. Мартиросіанца на Орб. ул. д. № 5.

4 149 - 60

## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ինչպէս ամենայն ազգաց, նոյնպէս մեր ազգին համար ևս եղած են ասողներ՝ թէ՛ ի մերայնոց և թէ՛ յօտարաց՝ թէ՛ «Հայերը բնութեամբ ուսումը կզովեն, կպատուեն, կսիրեն, բայց ուսումնականաց և ուսումնարանաց, մանաւանդ յառաջադէմ ուսումնարանաց, թշնամի են և ատեցող:» Այս խօսքը եթէ ճշմարիտ լինէր, անշուշտ կնշանակէր թէ Հայերը ծառին պտուղները վայելել կը սիրեն, բայց ծառը իրենց աչքին փուշ կհամարին, կկտրեն, կփճացրնեն. աղբիւրին ջուրը խմելով՝ իրենց ծարաւը անցրնել կսիրեն, բայց աղբիւրը քանդելու փճացրնելու, ջրին վազուածքը խափանելու կաշխատին. ճրագին լոյսը վայելել կսիրեն, բայց ճրագը իրենց թրշնամի համարելու պէս՝ ամէն կողմանէ

վերան կյարցակին, կփրչեն, կմարեն, և ճրագակալը կկործանեն, կկոտրեն, մէկզի կնետեն) . . . Այս ու սորա նման խօսքերը ո՛րքան որ հակասական՝ ու բնական խելքի դէմ կերևնան, ուստի և բազմաց անհաւատալի, նոյնքան և ցանկալի էր որ բոլորովին անհիմն և երևակայական ցնորք և աղճատանք, կամ այրած սրտի մուխ ու գանգատանք լինէին. և սակայն անողորբելի փորձը և գործնական անժխտելի ապացոյցները յայտնապէս կցուցանեն մեզ որ այլ և այլ ժամանակներ ու զանազան տեղեր իրօք տեսնուած են մեր ազգին մէջ ևս այդ ողբալի երևոյթները:

Թողումք առ այժմ՝ մեր ազգային հին պատմութեան ժամանակները, Թողումք Խորենացւոյն ողբերը, Փարսեցւոյն գանգատները, Անորհալոյն՝ Ատմբրոնացւոյն, և ուրիշ ազգային մատենագրաց կարծես թէ ոչ այնքան թանաքով՝ որքան դառն արտասուքով գրածները ի վերայ աշխարհակործան անմիաբանութեան ազգիս, ի վերայ ապակահիչ՝ անհաշտ նախանձու ազգիս . . .

Մէկզի դարձրնեմք աչքերնիս նաև այն բարոյական և ուսումնական Թշուառութիւններէն՝ յորոց պաշարուած ենք նաև այժմու ժամանակս. չիշեմք նաև այն մեծ և փոքր ուսումնարանները՝ որ իրենց նպատակներէն գուրս խոտորելով, օր ըստ օրէ ի կործանումն և ի կորուստ դիմելու վերայ են: Թողումք յանուանէ Իւսկիւտարի Ղեմարանը, որ այնքան ջանիւք, այնպիսի յոյսերով և այնչափ ծախքերով բացուեցաւ Տաճկաստանի մայրաքաղաքին մէջ, և այնչափ կարճ կեանք ունեցաւ:— Աչքերնուս առջևը բերեմք մեր օրերուն մէջ բացուած ու փակուած երկու մեծամեծ ուսումնարաններ, այսինքն Փարիզու Հայկազեան վարժարանը, և Թէոդոսիոյ Խալիպեան ուսումնարանը. . . Միայն թէ բաւական չհամարիմք տեսնել զսոսա դիակնացեալ ու կործանեալ բաւական չհամարիմք կարգալ նաև նոցա վերայ այն պաղ խօսքը՝ զոր խեղճ ազգերնիս վարժել է ասելու ամէն անգամ որ ազգային մեծկակ գործողութեան խափանիլը, փճանալը կտեսնէ. «Ա՛հ, մեր ազգին բանը

այսպէս եկել՝ այսպէս կերթայ. ո՞ր լաւ բանը առաջ գնացել է որ այս երթայ»...

Բաւական չհամարիմք կասեմ՝ այս ցուրտ և անպտուղ խորհրդածութիւնը, յորմէ ոչ խրատ կայ և ոչ մխիթարութիւն. այլ քննեմք տեսնեմք հետաքրքրութեամբ՝ թէ ի՞նչ կերպով պատահել են կամ կպատահին այսպիսի ձախորդութիւններ ու կործանմունքներ, և ի՞նչ մարդիկ կամ ի՞նչ պարագաներ նոցա պատճառ կլինին: Գուցէ ասով խրատ առնումք, և մեր ապագայ սերնդոց ևս գործնական խրատ թողումք, որ գոնէ նորա՝ երբ այսպիսի ազդօգուտ ձեռնարկութեանց սէր ձգեն ու հետամուտ լինին՝ անցելոյն փորձը առաջնորդէ իրենց դէպի ապահով ճանապարհը, և դէպի կատարեալ յաջողութիւն, որպէս զի յետոյ չզղջան անօգուտ ապաշաւանօք:

Այս մտածութիւնները հարկադրեցին զմեզ զիր անցրնելու թէոզոսիոյ Խալիպեան ազգային ուսումնարանին համառօտ՝ բայց ամբողջ և ստոյգ պատմութիւնը, ամէն մէկ պարագաներուն

գրաւոր հաւաստիքը աչքերնուս առջևն ունենալով:

Կարծէր նաև Փարիզու Հայկազեան Արժարանին ստոյգ պատմութիւնը տեղն ի տեղը գրել. բայց մեր այն աշխատութիւնը ուրիշներու ձգելով՝ բաւական կարծեմք համառօտել այսանդ նոյն վարժարանին պատմութենէն այնչափը միայն՝ որչափն որ հարկաւոր է Խալիպեան ուսումնարանին նպատակը՝ սկզբնաւորութիւնը և ընթացքը հասկացրնելու: Ուստի Հայկազեան վարժարանին պատմութիւնը կամիտփեմք պատմութեանս սկիզբը՝ Աերածութեան մէջ, յետոյ կսկսիմք Խալիպեան ուսումնարանինը:

Խալիպեան ուսումնարանին պատմութեանը մէջ ոչ սակաւ տեղ բռնած է բնականապէս իմ հրապարակական կենաց և գործունէութեանս երևելի մէկ մասը, որովհետև իմ ձեռքովս հիմնուեցաւ և առաջ գնաց, և իմ այն ուսումնարանին կառավարութենէն հեռանալէս գրեթէ անմիջապէս յետոյ փակուեցաւ: Ուստի հարկ կհամարիմ այստեղ յիշե-

ցընել նախ ընթերցողաց՝ իմ ծագումնս,  
և նախընթաց գործողութեանցս զլիա-  
ւորները, և յետոյ առաջիկայ պատմու-  
թեանս մէկ քանի յատկութիւնները,  
ամէն բան յերրորդ դէմս պատմելով:

ԳՆԲԲ. ԵՐԲ. ԵՅՎ. ԵՂԵՆՆ,

Գաբրիէլ վարդապետը (այժմ Արքեպիսկոպոս) ծնած է թէոդոսիա 1812-ին ի Հաչատէր Հռովմէական Հայ Հօրէ և ի Լուսաւորչական մօրէ. մկրտուած է նոյն քա-  
ղաքին Լուսաւորչական Հայոց Ս. Գէորգայ եկեղեցին, և ի մանկութենէ Հաչատանեաց եկեղեցւոյ սպասա-  
ւորութեամբ և դպրութեամբ՝ ազգացին արարողու-  
թեանց և ժամերգութեանց վերայ մեծ սէր ունեցել է: Տատերելու տարեկան ժամանակին Հայրը առաջարկել է զնա Հանդուցեալ Մանուէլ վարդապետին Վիմիւշ-  
կանացւոյ միաբանի սրբոյ Էջմիածնի չաշակերտութիւն և յորդէգրութիւն՝ Խարատուպաղար քաղաքը, և երբ նա պէսպէս պատճառանօք չէ ընդունած պատանեակը երկն քով, Հայրը տարել է զինքը Հանդուցեալ Բժըշ-  
կեան Հ. Մինաս Մխիթարեան վարդապետին, որոյ գի-  
տութեան համբաւը արդէն տարածուած էր Խրեմու մէջ: Հ. Մինասը սիրով կընդունէ զպատանին, կենամէ, կտոյրեցընէ երկու տարի, և յետոյ 1826-ին կտուգարիէ Վենետիոյ Մխիթարեանց վանքը Ս. Ղազար կղզին: Այնտեղ 17 տարի մնալով, չեա կրօնաւորելոյն և քա-  
հանայնաւոյ՝ քանի մի ամսուան համար կղաւնայ իւր հայրենիքը, չետոյ դարձեալ Վենետիկ՝ 1842-ին, ուր աւելի ևս եռանդով կաշխատի գրաւոր երկասիրու-  
թիւններու, և վանքին երկու ուսումնարանացը մէջ դասատուութիւն անելու. կհիմնէ, և վեց տարի առաջ

կտանի Բաղնիկ օրագրին խմբագրապետութիւնը. Միա-  
բանութեան արբային վեց Առաջականներէն՝ այսինքն խորհրդականներէն մէկը կլինի, և միանգամայն ընդ-  
հանրական Ատենադպիր կընտրուի: Այն պաշտօններուն ու աշխատութիւններուն ժամանակը, 1848-ին, կտու-  
ղարիուի Միաբանութենէն ի Փարիզ՝ իբրև Գաստիարակ և Տեսուչ ուսմանց Մուրատեան վարժարանին: Այն տեղ երեք տարի անխոնջ աշխատութեամբ վարժարանին բա-  
րեկարգութեանը և ծաղկելուն ինչ աստիճանի փոյթ և ջանք ունեցածը չայտնի է՝ զոնէ Մխիթարեանց, և այն ժամանակները Մուրատեան վարժարանին աշակերտեալ պատանեաց: Իսկ թէ չետոյ, 1852-էն մինչև 1856 թուականը ինչե՛ր պատահեցան Մուրատեան վարժա-  
րանին մէջ, և անտի դուրս, տեղովը գրուած ու տպուած է «Յայտարարութիւն անցից Մուրատեան վարժարա-  
նին», անունով գրքին մէջ՝ որոյ վերնագրին է «Պատ-  
մութիւն և պատճառք վերադարձի երկց վարդապե-  
տացս Հայոց՝ Սարգիս, Գաբրիէլ և Ամբրոսեայ՝ ընդ Հովանեաւ Լուսաւորչական Աթոռոյ Հաչատանեացս եկեղեցւոյ»:

Նոյն նիւթերը ընդարձակագոյն սպացոյցներով, և մեծաւ մասամբ չարմարաւոր խորհրդածութիւններով Հանդերձ Հրատարակեց ի Փարիզ և Հանդուցեալ Գերա-  
պատիւ Սարգիս վարդապետն Թէոդորեան՝ «Պատմու-  
թիւն Մուրատեան և Հաչիպեան վարժարանաց» ա-  
նունով քառահատոր գրքին մէջ. այնտեղ Խալիպեան ուսումնարանին վերայ ևս կան տեղեկութիւններ, թէ-  
պէտ և շատ թերի պարագաներով և նախապաշարեալ կարծիքներով գրուած: Ուստի ճշմարտութիւնը, ժամա-  
նակիս Հանգամանքը և բաղմաթիւ ճշմարտապէս ան-  
ձինք և վաղեմի աշակերտք և սանք նոյն ուսումնարա-  
նին կպահանջեն որ վերջապէս տպագրութեամբ Հրա-  
տարակուի Խալիպեան ուսումնարանին ստոյգ պատ-

մութիւնը՝ իբրև ի լրումն վերջիշեալ դրուածոց։  
 Պատմական երկասիրութեանց մէջ ամենէն դժուարը ժամանակակից պատմութիւնն շարագրելն է. վասն զի ճշմարտութիւնը անպատրուակ և համարձակ դիր անցընելը շատ դժուար է պատմաբանին՝ եթէ չկարենայ բոլորովն աղատել ինքզինքը մարդահաճութեան, երկչտութեան, կողմնասիրութեան և ուրիշ սոցա նման պակասութեանց վտանգներէն ու կապերէն։ Այս դժուարութեան դիւրութիւն տուող եթէ բան մի կայ ճշմարտասէր պատմաբանին, այն է անտարակոց՝ որ առանց ճշմարտութիւնն այլայլելու կամ ծածկելու՝ այնպիսի փախուի կտորներուն վերայէն համառօտ կերպով անցնի, ուրիշ ժամանակի պահելով՝ կամ թէ ապագայից ձգելով նոցա մանր պարագաները քննել և դուրս հանել՝ ի հաստատութիւն գլխաւոր դիպուածոց։ Այս աչտպէս լինելով, կմնաց մեղ աչտքանը միայն աւելացընել, թէ առաջիկայ պատմութեանս մէջ չկայ և ոչ մէկ պարբերութիւն որ իրեն դրաւոր ապացոյցները կամ հաւաստիքը (աստիճանները) չունենայ, թէպէտ և մեք այն հաւաստեաց խիտ հարկաւորները և գլխաւորները միայն մէջ պիտի բերեմք։— Եթէ տեղ տեղ հարկադրեալ եմք քանի մի անձանց տարագէտ գործողութիւնները՝ ոմանց նաև անուններուն չիշատակութեամբը հաստատելու, մեր միտքը ամենեւին զնոսա դարովել չէ եղած. այլ միայն ճշմարտութիւնը պայծառ կերպով երևան հանել, և տարակոցս հանողներուն կասկածները դիւրաւ փարատել։

Գուցէ ոմանց այնպէս երևնա, նորա ներհակ, որ իբր թէ Պատմութեանս մէջ տեղ տեղ չափազանց գովեստներ տրուած են Գարբիէլ վարդապետին և նորա գործերուն, այնպիսի գովեստներ՝ որոց արժանի չեն երևար այն գործերը... Բայց այդ մտածող պարոնները պէտք է նաև այս չիշեն որ Գարբիէլ վարդապետին վե-

րաց ծուռ կարծիքներ ունեցող շատ աւելի չափազանցութեամբ պարսաւներ դրած են նորա և նորա ձեռնարկութեանցը դէմ։ Կամեցողը դիւրաւ կարող է գրտնել այն պարսաւները այն ժամանակի աղագչին օրագրաց և լրագրաց շատերուն մէջ։ Որոց խօսքերը մէջ բերելն ու մի առ մի հերքելու աշխատելը հարկաւ մեր նպատակէն դուրս բան էր. բայց և չէինք կարող չպատմել այն գործողութիւններն որ բնական և զօրաւոր հերքումն են այնպիսի պարսաւներուն՝ գոնէ մէկ մասին, և կամ սրբագրութիւն այն ծուռութեանց և ստուութեանց՝ զորս օրագիրները կամաւ կամ ակամայ հրատարակել են։ Եւս առաւել հարկաւոր ճանաչեցինք մէջ բերել արժանահաւատ անձանց ու պաշտօնական գրքուածոց գոնէ տասնին կամ քսանին մէկը՝ ի հաստատութիւն մեր պատմած բաներուն ստուգութեանը։



## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ



Փարիզու Հայկաղեան վարժարանին բացուիլը՝

Այն երեք վարդապետները՝ որ Մխիթարեան միա-  
բանութենէն բաժանուեցան, և Հռովմայ պապին օտա-  
բախտութիւնս իշխանութենէն հեռանալով՝ իրենց ազգային  
Յիկեղեցոյն առաջնորդացը հպատակիլ չօժարեցան,  
չէին կամենար իբրև փաշա չոր կտրուիլ ճգուիլ Մխի-  
թարեան միաբանութեան պտղաբեր ծառէն, և այնու-  
հետև անպիտան ու անպտուղ կեանք անցընելով ան-  
գործ մնալ: Մտածեցին թէ աստուածային նախանա-  
մութիւնը անտարակոյս խորհուրդ մի ունի որ թոյլ  
տուաւ իւր ամենասուրբ կամօքը իրենց այնքան նե-  
ղութիւն և հալածանք կրել անպարտ տեղը, մանա-  
ւանդ թէ ի պաշտպանութիւն արդարութեան և ճշ-  
մարտութեան, և ի ջատագովութիւն անարատ Յիկեղեցոյ  
միտջ՝ որում միշտ ցանկացել էին օգտակար և հաւատա-  
րիմ պաշտօնեաց լինել: Խորհուրդ արին իրենց մէջ, և  
քաջալերուեցան Վ. Պօլսոյ գլխաւոր իշխաններէն ու  
եկեղեցականներէն, որ Փարիզու մէջ նոր վարժարան  
հաստատեն՝ Ղուսաւորչական Հայ պատանեաց կր-  
թութեանը համար: (1)

(1) Այս փորձողութիւնը շանի մի հայտատուի մոտնայ այնպէս էրե-  
ւեցաւ որ իբր թէ վարդապետներուն ի պատուանութենէ ի լուսաւորչանո-

Վարդապետաց ձեռքը ոչ Մուրատեան և ոչ Ռաֆայէլեան վարժարաններուն միլիոնաւոր փողերը կաշին. բայց մեծ էր իրենց յոյսը՝ թէ երեք չորս միլիոն Համարուած Հայկաղունք՝ օգնութեան կարօտ չեն ձգել զիրենք, եթէ տեսնեն իրենց անձնանուէր և եռանդուն աշխատութիւնը չօգուտ ազգին: Մուրատեանցի բարեսիրտ իշխանաւորին մէկը, Հանգուցեալ Աղա Նասայի Գրանխորեանց, յայտնապէս ասաց իրենց մէկ օր մի թէ «Մեծ նախատինք արած կ'Համարուիք. Լուսաւորչական Հայ ազգին, եթէ չյուսաք՝ թէ ձեր այս «պիսի ազդարարական ձեռնարկութեանը Համար ո՛ր և «իցէ Հայ՝ տարին դոնէ մէկ դահեկան չջօժարի տալ «ամենայն սիրով»: Բայց աւելի յոյս աւելն վարդապետները՝ երբոր Պօլիսէն երեսունէն աւելի Հարուստներ ու ամիրաներ՝ իրենց որդւոց կրթութիւնը յանձնեցին Հայազեան վարժարանին:

Փութացան այնուհետև երեք վարդապետները, Փարիզու Կրքնէլ ասուած արուարձանին մէջ գեղեցիկ և ընդարձակ պարտէզով տուն մի վարձեցին, և Հարկաւոր դպրոցական կահ կարասին պատրաստեցին մէջը. վարձեցին քաջ վարժապետներ և վերակացուներ, և իրենք վարժարանին կառավարութիւնը և դասատուութեան պաշտօնները մէջբերին ըստանելով՝ սկսան այն կերպով աշխատել՝ ինչպէս որ կ'պահանջէր իրենց նոր վիճակը և տաժանական ձեռնարկութիւնը:

Ինչն որոնալը որ այժմոն ալ ան որոնարարութեան պէս Բն Տի է, իբր լէ ոչ Տիայն որորն չէրէր նոցա, հոպա նաև անորոնալիան չարող է համարուել: Բայց պայանանոց և անորոնութեանոց ոմանոց այսպիսի Բարոնանոց Բաւանն զբաւոր կերպովն չհամարիմ: Տէ՛ սոյն ինչ այս Գրուածքը, որ աշխարհաբարող և անձիարելի ապացոյց է վարդապետաց Տիւնն ուղղութեանը և չարարեալ ազգասիրութեանը:

Քիչ ժամանակէն աշակերտաց թիւը 70-էն աւելի եղաւ, և Հայազեան վարժարանին Համբաւը սկսաւ ազգին մէջ տարածուել:

Չէին կարող վարդապետները անձայն և անմուռնջ աշխատել. ուստի տպագրութեան տառեր փորագրել տուին. Մասեայ Աղաւնի ամսագիրը և ուրիշ գրքեր սկսան Հրատարակել և ազգին մէջ տարածել: Ազգային մատուց մի ևս ձևացուցին Հանգուցեալ բարեչիշատակ Յակոբոս պատրիարքին Հրամանով վարժարանին վաչելուչ դահլիճներէն մէկը, և այնտեղ եկեղեցական պաշտօն կ'կատարէին ամէն կիրակի և տօն օրեր՝ ըստ արարողութեանց Հայաստանեայց Սեղեցւոց, որով Հայկազեան վարժարանը երկու տարուան մէջ եղաւ չեւրաւի նոր կենդրոն լուսաւորութեան ազգի, և այն՝ Փարիզու պէս մաքրաքաղաքի մէջ, և իբր լէ աղատ ո՛ր և իցէ Հռովմէական կամ Լուտերական աղեցութեանց վնասակարութեանէն:

Խորհրդով ասացինք՝ իբր լէ աղատ. վասն զի ո՛ւր որ պայպական սկզբունքը և Հռովմէական տիրապետութեան հողին աւելի զօրաւոր է՝ քան թէ ո՛ր և իցէ կրօնական, բարոյական և քաղաքական սկզբունք, այնտեղի աղատութիւնը անունն'ով է միայն և ոչ իրական: Սորա փորձը արին նաև երեք Հայ վարդապետները՝ Հայկազեան վարժարանին վերայ:

Նև նախ՝ Մխիթարեանք և Հարկէ չէին կարող անտարբեր աչքով նայիլ այն վարժարանին վերայ՝ որ իրենց ձեռքը մնացած Մուրատեան վարժարանին սպառնալու քանդումն կ'սպառնար: Երկրորդ՝ Մխիթարեանք իրենց վախը դիւրաւ Հաղորդեցին Փարիզու քանի մի մոլեռանդն եկեղեցականներուն, Հասկացնելով նոցա՝ թէ ո՛րքան վնասակար է կ'աթուղիութեան՝ Փարիզու մէջ Հայկազեան հերշոտող վարժարանի մի բացուելը: Երրորդ՝ Գաղղիացի եկեղեցականք և Փրովանստայի


պաշտօնեացք առ Հասարակ միաբանեցան, Հասկացուցին նաև Գաղղիոյ տէրութեան՝ թէ այն երեք վարդապետները առանց տէրութենէն իրաւունք ունենալու դպրոց բացեր են ու կհառաւարեն:

Գաղղիոյ աղբալին կրթութեան Ոստիկանը սկսաւ երեք վարդապետաց գործոյն քննութիւն անել. իսկ նոքա արգէն դուշակելով իրենց Հակառակորդներուն անելիքը, Հաչկաղեան վարժարանին վերատեսուչ, մեծաւոր և կառավարիչ անուանել էին Տիւֆլօ անուամով գաղղիացին, և իրենք զիրենք Հրատարակել էին սոսկ վարժապետ և դաստիարակ աշակերտաց: Ասով թէպէտ Գաղղիոյ օրինաց պահանջմունքին Համաձայն ճանապարհ մի բռնած կլինէին՝ ուրիշ շատերուն պէս, բայց իրենց Հակառակորդներուն Հալածանքէն անով ևս չկարողացան աղատիլ:

Փարիզ կեցող Օսմանեան Վեսպանին Հասկացուցին քանի մի անգամ այն նեղութիւնն որ Գաղղիոյ տէրութեան կողմէն կբաշխին. բայց փոխանակ պաշտպանութեան՝ այս պատասխանս կընդունէին նորանէ՝ թէ «Սո պատրաստ եմ ձեզ պաշտպանութիւն անելու՝ եթէ Օսմանեան Գունէն Հրաման դաչ ինձ»: Գրեցին քանի մի անգամ և Պօլիս աղբալին Վերագոյն ժողովոյն, որ Գունէն այդ Հրամանը առնուի և չուղարկուի Փարիզու դեսպանին, ասուի թէ «Հաչկաղեան վարժարանը՝ Հաչոց աղբին կամօքը և փողովը բացուած վարժարան մի է, և Օսմանեան տէրութիւնը կուղէ որ նորա կառավարութիւնը նոյն Հաչոց աղբին ընտրած և ճանաչած երեք վարդապետաց ձեռքը լինի. և որովհետև աշակերտաց մեծ մասը՝ և այն վարդապետաց երկուքը՝ Օսմանեան Հպատակ են, իրաւունք ունենան վարդապետները աղատօրէն առաջ տանելու այն վարժարանը»: Բայց Վերագոյն ժողովը—դուցէ ուրիշ կարեւորագոյն գործերու զբաղած լինելով—Հաչկաղեան վար-

ժարանին խնդիրը ամիսներով ու տարիով ուշացուց: Գուցէ կային նաև ուրիշ պատճառներ Վերագոյն ժողովոյն այնպիսի թոյլ և դանդաղ վարմունք ցուցանելուն անջնջան ծանր և կարեւոր խնդրոյ մէջ. բայց մեք այն պատճառներուն Հաւատով տեղեկութիւն՝ և մասնաւոր դբաւոր ապացոյցներ չունենալով մեր ձեռքը, լաւ կհամարիմք այս մասին վերայ խօսքերնիս չչերկարել:

Վարդապետները թէպէտ և կցանկային օր առաջ աղատիլ այն անստոյգ վիճակէն, բայց և Համբերութիւնը ձեռք առած՝ կնայէին որ վարժարանին ներքին բարեկարգութիւնը և չառաջադիմութիւնը ո՛րքան կարելի է չխախտնի:





Հայկազեան վարժարանին հաստատութեանը համար հարկաւոր ցանաչուած քաղաքական պաշտպանութիւնը:

Թէպէտ և վարդապետները ոչ սակաւ յոյս ունէին՝ թէ աղգային Վերագոյն ժողովը վերջապէս պիտի կարենայ Հայկազեան վարժարանին պաշտպանութիւնը ապահովել Օսմանեան տէրութեան կողմանէ, բայց շատ լաւ տեղեկացել ու Հասկացել էին՝ թէ Մխիթարեանք, և նոցա տէր կեցող Հռոմէական Վատիկանի իշխանաւորները, նաև Պօլսոյ մէջ ամենայն Հնարք կրանեցնեն որ Գուռը այդ պաշտպանութիւնը չխոստանայ երեք վարդապետներուն: Մինչև այսպիսի որոշմունք մի ևս կարողացել էին Հակառակորդները պատրաստել տալ՝ թէ Տաճկաստանի Լուսաւորչական Հայք իրաւունք և իշխանութիւն ունենան աղգային Ուսումնարան բանալու Փարսիոյ մէջ, բայց նորա կառավարութիւնը ո՛ւն ձեռքը կուզեն տան՝ Բայ և այն երէ՛ վարդապետներէն: Այս խորհուրդը տուողներուն յոյսը այն էր՝ որ եթէ վարդապետները Հայկազեան վարժարանը ձգեն ու մէկդի քաշուին, վարժարանը անպատճառ փակուի, և աշակերտները ցրուին:

Այսպիսի տաղնապի ու Հալաճանաց մէջ՝ չէին գիտեր վարդապետները թէ ի՞նչ անեն:

Գարբիէ վարդապետը՝ իրել Ռուսաց դեսպանարանին պաշտօնատեսարցը ծանօթ, միևս երկու վարդապետաց խորհրդովը գնաց օր մի դեսպանատունը, և քարտուղա-

րին Հետ խօսելով (որ էր Պ. Պալապի՛ն), բացատրեց Հասկացուց՝ իրեն և երկու ընկերացը մինչև այն ժամանակ, և այն միջոցին ևս, քաշած նեղութիւնները: Նկարագրեց Հայոց աղգին ընդհանուր վիճակը, մանաւանդ Տաճկաստանի Հայերունը, պարզ կերպով առջևը դնելով՝ թէ Եւրոպայի ո՛ր տէրութիւնները Հայոց աղգի ո՛ր մասերուն պաշտպանութիւն կանեն, և ի՞նչ մտքերով: Հասկացուց նաև մեր աղգին այս միջոցներուս ուսումնասիրութեան կողմանէ արթնացածը, ու եւրոպական քաղաքակրթութեան Հետևիլը. բացատրեց թէ ի՞նչ դիտաւորութեամբ Պօլսոյ Հարուստները քանի մի տարիէ ի վեր մեծամեծ ծախքերով իրենց զաւակները և շատ աղքատաց որդիք կյուղարկեն Փարսի, Լոնտոն, Վիեննա, Պեուլին, և մինչև Ամերիկա, որպէս զի ուսում և արհեստներ սովորին, և թէ նոքա ընդհանրապէս ո՛ր աստիճանի կրթութեամբ կամ որպիսի՛ սիքքունքներով կրաւնան իրենց Հայրենիքը: Վերջապէս խօսքը այսպիսի խորհրածութեամբ լմընցուց, որ եթէ արևելքի Հայք՝ Ռուսաստանի Հարաւային կողմերը մէկ մեծ քաղաքի մէջ, զոր օրինակ Օսեստա, կարենային ուսումնարան մի ունենալ, և նորա մէջ սովորի աղատօրէն այն ամենայն ուսմունքը և լեզուները՝ որ կտրվին ի Փարսի կամ ի Լոնտոն, դուցէ շատ աւելի սիրով և յօժարութեամբ այնտեղ կրկնէին՝ դոնէ՛ նախնական և միջակ կրթութեամբ և աստիճանով Համար, և ապա դարձեալ՝ կարողութիւն ունեցողները կրնային երթալ Փարսի կամ Վիեննա և կամ Լոնտոն՝ իրենց ուսումն ու կրթութիւնը կատարելագործելու Համար: Քարտուղարը վարդապետին այն խօսքերը մեծ մտադրութեամբ լսելէն չէտոյ՝ խնդրեց որ նա իւր խօսակցութիւնը գիր անցնէ ու այնպէս տայ իրեն: Վարդապետը խոստացաւ, ու քանի մի օրէն տարաւ գրուածքը գաղղկարէն լեզուով՝ չանձնեց քարտուղարին:

Երկու ամիս չանցած, Փարիզու Ռուսաց Գեոպան Քիսելեօ՛վ կոմսը իմացուց գրով և խօսքով Գարբիէլ վարդապետին՝ թէ նորա գրուածքը և առաջարկութիւնը արտաքին գործոց Ռատիկանին ձեռքովը արժանացել է Ռուսաց Վեչն. Փ. Ս. Ս. մտադրութեանը և լիովն հաւանութեանը, և թէ այժմ նորա գործադրութիւնը՝ միայն վարդապետին և նորա երկու ընկերակցացը կամքէն կախեալ է: Հարկ էր այնուհետեւ վարդապետներէն մէկուն անձամբ երթալ Ռուսաստան, և տեսնել թէ արդեօք ի՞նչ կերպով և ի՞նչ միջոցներով կարելի է հաստատել Օսեսայի մէջ կամ ուրիշ շարձար տեղ մի այնպիսի Ուսումնարան աղագային, որոջ մէջ հասարակաց հարկաւոր երեցած ուսումն ու կրթութիւնը ամբողջ սովրին աշակերտք, և միայն նոցա կատարելագործութեանը համար՝ 10-ին կամ 20-ին մէկը միայն չուղարկուի ի Փարիզ Հայկազեան վարժարանը, կամ թէ ուրիշ գաղղկական բարձրագոյն Գլոցոց, երեք վարդապետաց մէկուն խնամակալութեանը ներքեւ:

Ուստի որոշեցին իրենց մէջ որ այն ճանապարհորդութիւնը անէ Գարբիէլ վարդապետը՝ իրեւ արդէն այն կողմերուն և Ռուսաց լեզուին ծանօթ. ուստի նա պատրաստուեցաւ երթալու նախ ի Պօլիս, և անտի ի Ռուսաստան:

Պօլիս երթալը երկու բանի համար ամենահարկաւոր էր. մէկը այս՝ որ Հայկազեան վարժարանին աշակերտաց ճնողքներէն շատը արդէն սկսել էին դանդաղիլ իրենց որդւոց թողաններն չուղարկելու. որով և վարժարանին տնտեսական կառավարութիւնն օրէ օր ծանրանալու և դժուարանալու վերայ էր. — հարկ էր ուրեմն անձամբ խօսիլ Պօլսոյ իշխանաւորաց հետ, և այն դժուարութիւնը դիւրացնել: Երկրորդը այս, որ պէտք էր հասկանալ թէ ի՞նչպէս կերեւոյց Պօլսոյ իշ-

խանաւորաց այն նոր դիտաւորութիւնն ու առաջարկութիւնը, որ իրենց կարծեօք՝ ամենայն կերպով և ամէն կողմանէ օգտակար էր աղբին:

Նոյն միջոցին եկաւ վերջապէս Օսմանեան Գոնէն այն պաշտպանութիւնը և հրամանը՝ որում Հայկազեան վարժարանը անպատճառ կկարօտէր. այսինքն թէ Օսմանեան դեսպանը հասկացնէ Գաղղկոյ տէրութեան, որ Փարիզու Հայկազեան վարժարանը՝ Հայոց աղբին կրթութեանը համար բացուած Ուսումնարան է, և աղբը իրաւամբ կինդրէ ու կպահանջէ որ երեք վարդապետները լինին նորա վերատեսուչ, ու ամէն տեսակ պաշտպանութիւն վայելէն Գաղղկոյ տէրութեան կողմանէ՝ Օսմանեան դեսպանին միջնորդութեամբը:

Յայտնի բան է որ այս ուրախալի լուրը, որով Փարիզու մէջ աղագային վարժարանը հաստատութիւն կառնուր և աղատ կմնար հակառակորդաց հալածանքներէն, մեծապէս քաջալերութիւն և յոյս տուաւ վարդապետներուն թէ պիտի չաջողի նոցա միաբանական աղագային ձեռնարկութիւնը: Բայց և Ռուսաստանի մէջ բացուելու Ուսումնարանը երբ բացուէր այն կերպով՝ ինչպէս որ վարդապետները կխորհէին, որովհետեւ պիտի լինէր իրեւ Փարիզու Հայկազեան վարժարանին նախաբան, և ոչ թէ բոլորովին և ըստ ամենայնի նորա տեղը բռնող վարժարան մի ինչպէս որ ասացինք, դարձեալ մեծապէս օգտակար էր:


Ուստի 1857-ին մայիս ամսոյն մէջ ճանապարհ ելաւ Գարբիէլ վարդապետը Փարիզէն ու դնաց Պօլիս. տեսնուեցաւ աղբին եկեղեցական և աշխարհական գլխաւորացը հետ, (1) նոցա արած դանդաղան հարց-

(1) Վարդապետը, ենչես որ բնական էր, ուղարկեալ Պարիսի մտայն և որովհետեւ հանգուցեալ Յաւիթոս պարիստից այն միջոցին Ռուսաստան

մունքներուն պատասխան տուաւ, Հաչիպղեան վարժարանին ի՛նչ վիճակի և ի՛նչ պարագաներու մէջ գըտնուելը Հասկացուց. և երբոր նոքա տարակոչս կցուցանէին թէ մի՛ գուցէ իրեն Ռուսաստան երթալը առ ժամանակեաց չլինի, որովհետև ընիկ ռուսաստանցի վնեւրովը կարող էր դիւրաւ իւր Հայրենիքը մնալ, կամ այն տեղը շատ ուշանալ, և անով կդժուարանար Փարիզու վարժարանին կառավարութիւնը, մանաւանդ որ արդէն թշնամիք պէս պէս չարախօսութիւններով շատ ծնողաց սրտերը պաղեցուցել էին վարժարանին վերայէն, և պատճառ եղել էին քանի մի Պօլսեցի ամերացից որդւոցը ժամանակէ դուրս վարժարանէն ելնելուն, — վարդապետը Հաստատուն ապացոյցներով լուծեց նոցա տարակոչաները, և վարատեց կասկածանքները, Հասկացուց նոցա՝ թշնամեաց չարախօսութիւններուն անհիմն վնեւրը, և վարժարանին օր ըստ օրէ աւելի բարեկարգ ընթացքի մէջ գտնուելը. միայն թէ, ասաց, ձեզ կընկնի աշակերտաց թոշակները մէկ ժամ առաջ Հաւաքել և չուղակել, որպէս զի վարժարանին կառավարութիւնը անտանելի չլինի երկու վարդապետներուն: Աչտու ամենայնիւ չկարողացաւ Գաբրիէլ վարդապետը Գերադոյն ժողովոյն թախանձանացը և ստիպողական Հարցմանցը որոշ պատասխան մի չտալ՝ երբ նոքա կասէին թէ արդեօք ո՛րչափ ժամանակի Համար և ի՛նչ մտքով է Ռուսաստան երթալդ: Հարկադրեցաւ Հասկացընել նոցա Խորհրդաբար իւր գիտաւորութիւնը: Խորհրդաբար կասեմք, վասն զի վարդապետը դեռ չէր դի-

Ինչպէս, հարկադրեցաւ այն որոնք երկաշա և շանի մի օր քնալու: Կուղեր որոնել անպարտաւ նաև նախկին Պարսկաք (յեթոյ կալուադիոս) Մարթէոս Արշեղիսիոսը. բայց նա Օրլանդէի Ինստիտուտի ուլը օրէն հարկադրեցաւ երկաշ նոքա որոնելու:

տեր թէ ի՛նչ միջոցներ կան ի Ռուսաստան՝ իւր և ընկերացը գիտաւորութիւնն ի գործ դնելու, և միտքը դըրած էր որ եթէ արդելք կամ դժուարութիւն մի տեսնէր նորա գործադրութեանը, իսկոյն ետ պիտի կենար. պիտի դառնար Հաչիպղեան վարժարանի վերայ աշխատանքը շարունակելու: Այս կլինէր անշուշտ անելիքը՝ եթէ կարողանար գուշակել այն մեծամեծ դժուարութիւններն որ վեց եօթը տարի չետոյ գլմացը պիտի ելնէին: Վարդապետին գիտաւորութեանը ամէնքը միաբան Հաւանեցան Հանդերձ դարմացմամբ, և գովեցին. և նա վրայ բերաւ՝ թէ այժմ անձամբ դնալս նորա Համար է որ տեսնեմ ու տեղեկանամ թէ արդեօք չիրաւի գործադրելն՝ բան է այն առաջարկութիւնը, և կամ ի՛նչ գիւրութիւններ ու դժուարութիւններ ունի. այնպէս որ եթէ չորս Հինգ ամսուան մէջ մեր ուղածին պէս չաջողելու յոյս չերենաց, ամենևին մի՛ տարակուսիք որ դարձեալ Պօլիս կուգամ, և աստի կդառնամ Փարիզ՝ Հաչիպղեան վարժարանին մէջ աշխատելու: Եւ այնպէս Հասաւ Ռուսաստան չունիս ամսոյն մէջ 1857-ին:



# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽԱԼԻՊԵԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ Թ Է Ո Դ Ո Ս Ի Ո Յ

## Գ Լ Ո Ւ Խ Ա.

Ռուսաստանի Հայոց վիճակը 1857-ին և Գարրիել վարդապետին այնտեղ ազգային ուսումնարան բանալու դիտարութիւնը:

Գարրիել վարդապետը իւր Հայրենիքը դառնալուն պէս (յունիս ամսոյն սկիզբները), բոլոր մտադրութիւնը դարձուց Ռուսաստանի Հայոց ուսումնական և առանձնական վիճակը քննելու հասկանալու:

Իրեն այնպէս երեցաւ՝ թէ մեծ փոփոխութիւն եղած է մեր ազգին այն կողմերը ցրուած ժողովուրդներուն վերայ. և այս փոփոխութիւնը գլխաւորապէս չափն էր, որ ունեւորները ազգային հայկական շատ կութիւններէն հեռանալու վերայ էին օր ըստ օրէ, իսկ չքաւորները թէպէտ և իրենց ազգային Սկեղեցւոյն՝ լեզուին և սովորութեանցը նոցանէ աւելի մօտիկ, բայց բնականապէս կարողացածներուն չափ ունեւորներուն հետեւը:

Սկեղեցականներուն մեծ մասը իրենց պէտք եղած

ուսմունքը ոչ թէ կանոնաւոր եկեղեցական ուսումնարանի մէջ աւած, այլ ո՛րը քահանայի, ո՛րը վարդապետի, ո՛րն ալ եպիսկոպոսի մի քով մէկ քանի տարի ծառայելով՝ քահանայութեան աստիճանին հասած, ուստի շատը զուրկ կանոնաւոր ուսումնառութենէ ու լեզուագիտութենէ, որով եկեղեցական բարեկարգութեանց խանգարումը անխորշէլ:

Ընդհանուր Ռուսաստանի Հայոց այս հանգամանքը քաջացատ էին անմահ յիշատակաց արժանի Ներսէս կաթողիկոսին: Այն արդարեւ մեծահոգի և մեծագործ, և ճշմարտապէս ազգատէր զարմանալի անձը, Նախիջվեւանի և Պետրապոլոյ վիճակին Առաջնորդ եղած ժամանակը, թէպէտ 17 տարի Պետրապոլոյ Քիչնէ քաղաքը քաշուած նստել էր, բայց արթուն հսկողութեամբ կիսաւախճէր իւր վիճակը: Եւ որովհետեւ իւր նախորդաց ժամանակէն՝ վիճակին քաղաքներուն ու դեղերուն մէջ շատ եկեղեցիներ կային աւրուած կամ քանդուած, և եկեղեցաց երէցփոխաններէն ոմանք եկեղեցիներուն արդիւնքները ինչպէս որ կուզէին՝ այնպէս բանեցուցել էին ըստ իւրաքանչիւր խղճմտանաց, Ներսէս Առաջնորդը (որ և յետոյ արժանընտիր Կաթողիկոս ազգիս) հրամայել էր որ երէցփոխաններէն եկեղեցական փողերուն հաշիւները խստութեամբ պահանջուին, և այս բանիս համար երեք Աբուսիւր կամ Գործիւր նշանակել էր վիճակին երեք գաւառները, որոց պարտքն էր այն փողերը հաւաքել և ապահովել: Պետրապոլոյ մէջ դործակալ դրած էր Աւետեան Աստուածատուր Աղան, Խրիմու մէջ Տէօլլիթեան Փորոս Աղան, և Նախիջվեւանի մէջ Խալկիւեան Յարութիւն Աղան:

Այն բարեյիշատակ կաթողիկոսին մեծագործութեանցը մանրամասն պատմութիւնը ձգելով նորա լիակատար կենսագրութիւնը պատրաստող ականատես և մերձաւոր հաւատարիմ անձանց, մեք այսքանը միայն

չիշատակեմք՝ իբրև այս մեր պատմութեան Հարկաւր դիտելիքներէն մէկը, որ թէպէտ կաթուղիկրտանալէն վերջը ինքը նշանակել էր Նախըլեանի և Պետարապետոյ վիճակին առաջնորդ զՎեհապետեան Մատթէոս Արքեպիսկոպոսը, բայց քիչ ժամանակէն զանազան պատճառներ ունեցել էր դժգոհ լինելու այն առաջնորդին կառավարութենէն ու ընթացքէն. որով և Առաջնորդը Հարկ Համարել էր Փեթերպուրի և Մոսկուա քաշուել, և վիճակին կառավարութիւնը մնացել էր առ ժամանակ մի Քելշնէի կոնստատորիային ձեռքը, որ ուղղակի Վաթուղիկոսէն կընդունէր Հրամանները և կրատարէր:

Վիճակին այս կերպ կառավարութիւնը՝ Ներսէս կաթուղիկոսին վախճանելովը դադարած էր առ ժամանակ մի 1857-ին սկիզբները, և Մատթէոս Առաջնորդը դարձել էր Մոսքուայէն Քելշնէ: Եւ ահա նոյն տարին էր որ Բարբէլ վարդապետը եկաւ Քէտուսիա իւր Հայրենիքը իբրև Հիւր, և ազգային ուսումնարան հաստատելու հնարքը և միջոցները կղկտէր:

Ո՛ր և իցէ Բարոց կամ Ռուսումնարան այն ժամանակը կարող է օգտակար Համարուել ազգի և ժողովրդեան, երբ չարմար միջոցներ ունենայ՝ մէջի աշակերտացը մեծ մասին իրական օգուտներ բերելու: Այսպիսի Ռուսումնարան ամենահարկաւոր էր Հարաւային Ռուսաստանի Հայերուն, որք բաց ի մանր մունր ժողովրդական Բարոցներէ՝ չունէին գրեթէ և ոչ մէկ դպրոց՝ յորում աշակերտք կարենային սովելի Հայերէն կարգաւ դրելէն աւելի բան, զոր օրինակ ազգային Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Թուաբանութիւն, ռուսերէն և գաղղիարէն լեզուներ, և այլն: Յիրաւի, Խրիմու Խարասու քաղաքին ժողովրդական դպրոցին մէջ այս ուսմանց սկզբունքները կսովելին աշակերտք՝ Քօլիճեան Նահապետ վարժապետին դաստիարակութեամբը, և բաւական չառաջադիմութիւն կցուցանէին, բայց նոքա

պարզ նախնական սկզբունք լինելէն դատ, աշակերտներն ևս չորս տարիէն աւելի ժամանակ չէին անցըներ Բարոցին մէջ, և այն ևս վաթսուն աշակերտէն գրեթէ միայն 8 կամ 10 հոգի, միւսները երկու կամ երեք տարի Հայրե Բարոցին մէջ կենալէն ետև՝ կելնէին խանութի առջև կենալու, իրենց սովրածներն անգամ մոռնալով: Սորա նման էր ըստ իմիք նաև Նախըլեանի առանձնական գլխաւոր Բարոցը, որոյ վարժապետն էր Պ. Միրախ Նիկենեան Հոովմէական Հայր: Եւս և Ագքերմանի դպրատունը, որոյ նիւթական շինուածքին վայելչութեանը Համեմատ չէր ներքին խաղիան օգտակարութիւնը, թէպէտ և Հոգաբարձու Աստուածատրեան աղաները նորա վերայ ըստ կարի ամենայն ջանք ու փոյթ կցուցանէին: Բայց սոքա և սոցա նման ամէն Բարոցներն ևս երթեկող աշակերտաց Համար էին: Շատ տղայք ևս կային որ թէ՛ Նախըլեան և թէ՛ ուրիշ գլխաւոր քաղաքներ՝ տէրութեան գաւառական Բարոցները և Կիստուս ասուած վարժաւանները կերթային, չորս Հայերէնի դասատուութիւն ամենեկին չկար:

Իսկ Լաղարեան Հոյակապ ձեմարանը, որոյ մեծամեծ օգուտները չայանի են ազգիս, բոլորովին բարձրագոյն կարգի ուսումնարաններէն լինելով, միջակ ուսումնարանէ պահանջուած ամէն օգուտները չէր կարող ընծայել Հասարակաց:

Հարկաւոր էր ուրեմն, գլխաւորապէս Հարաւային Ռուսաստանի՝ և երկրորդաբար Տաճկաստանի Հայ տղացոց Համար այնպիսի ազգային միջակ Ռուսումնարան մի, չորում աշակերտք գելեր ցորեկ մնալով ընդունէին ազգային կրթութիւն և բարոյական դաստիարակութիւն՝ դոնէ վեց տարի ժամանակով, և նորա մէջի ուսմանց ընթացքը աւարտելէն չետոյ՝ կամեցողը կարենար իւր ուսմունքը կատարելագործել Լաղարեան ձեմարանին

մէջ, կամ թէ ի Փարիզ, կամ թէ Մոսքուայի և Փեթեր-  
պուրիկ համալսարաններուն մէջ. իսկ ուրիշները իրենց  
առած չափաւոր կըթուլթեամբը և ուսմամբը լինէին  
աղբին պիտանացու անձինք ո՛ր և իցէ վիճակի մէջ,  
այսինքն՝ թէ՛ եկեղեցական և թէ՛ աշխարհական, թէ՛  
վաճառական, թէ՛ արուեստաւոր, և թէ՛ Տէրութեան  
ճառաչութեանը մէջ աշխատող աստիճանաւոր:

Գարբիէլ վարդապետը այսպիսի Ուսումնարանի նա-  
խագիծը հաստատուն կերպով մտքին մէջ տպաւորած,  
բանի մի անգամ խօսեցաւ ու խորհրդակցեցաւ այս բա-  
նիս վերայ այն աղբային երեւելեաց և բանադէտ ան-  
ձանց հետ՝ որոց հետ առիթ ունեցաւ տեսնուելու:  
Նոքա թէպէտ և շատ ուրախացան վարդապետին այն  
դիտաւորութեանը վերայ, բայց կտարակուսէին՝ թէ ի՞նչ  
միջոցներով կարելի պիտի լինի նորա գործադրութիւնը.  
որովհետև չաչանի բան է որ այսպիսի մեծամեծ ձեռ-  
նարկութեանց համար՝ եթէ ոչ առաջին՝ գոնէ երկրորդ  
հարկաւոր բանը փողն է. իսկ իրենց որդւոց դաստիա-  
րակութեանը համար տարին 250 կամ 300 ռուպլի  
վճարելու կամք և կարողութիւն ունեցող մարդիկ խիտ  
քիչ կճանաչէին այն կողմերը: Թող որ Ուսումնարանի  
շինուածքին և սկզբնական պատրաստութեանցը համար  
մեծ գումար հարկաւոր էր անտարակոյս:

Վերջապէս այն իշխանաւորաց մէջ խօսք եղաւ, և  
չաչանեցին վարդապետին՝ թէ Նախիջևանի և Պեսա-  
րապիոց վիճակին եկեղեցիներուն փողերը կան երկու  
երեք հողւոյ ձեռք՝ անգործ մնացած, և գլխաւորապէս  
Նախիջևանի եկեղեցիներուն փողերը՝ որ Սալիպեան  
Յարութիւն Աղային ձեռքն են, և որոց համար քանի՛  
տարիէ ի վեր մեծ երկպառակութիւն և սաստիկ կռիւ  
կայ Նախիջևանի ժողովրդեան մէջ: Արդեօք կարելի չէ՞  
կատէն՝ տէրութեանէն հրաման առնուլ որ այն փողերը  
գործածուին այդպիսի հարկաւոր աղբային Ուսումնա-

րանի կանոնաւորուն և առաջ երթալուն, և նորա մէջ՝  
բաց ի ունեւորներէ՝ նաև աղքատ աշակերտներ ձրի-  
աբար կըթուլթիւն և ուսում առնուն: Վարդապետը  
թէպէտ և հաւանեցաւ այն խորհրդին, բայց և չմո-  
ռացաւ այս հարցմունքս անել նոցա՝ թէ արդեօք վի-  
ճակին Առաջնորդը դէմ չի՞ կենար այդպիսի առաջար-  
կութեան: Նոքա պատասխանեցին թէ մեք՝ իւրաքան-  
չիւր քաղաքի ժողովուրդք դատ դատ, բայց նոյն մըտ-  
քով, խնդրազիր կուտամք Ներքին Գործոց Ոստիկանին,  
և եթէ պէտք լինի՝ նաև Առաջնորդին, որպէս զի այդ  
հրամանը անպատճառ տրուի, այսինքն եկեղեցական  
փողերը կարողանամք աղբային ուսումնարանի գործա-  
ծել: Գրեցին Խրիմու գլխաւոր քաղաքաց բնակիչներուն,  
և ամենէն ևս, այսինքն հինգ քաղաքէ խնդրագրերն  
եկան բաղմաթիւ ստորագրութիւններով, այս իմաստով՝  
թէ մեք լսեցինք որ Այվաղեան Գարբիէլ վարդապետը  
դիտաւորութիւն ունի բանալու այս կողմերս աղբային  
Ուսումնարան մի՞ որոյ ամենահարկաւոր լինելը կճա-  
նաչեմք. բայց որովհետև մեք կարողութիւն չունեմք  
մեր զաւակաց համար տրուելիք չափաւոր թոշակէն  
աւելի բան վճարելու, կխնդրեմք որ Տէրութիւնը բա-  
րեհաճի հրամայել որ Ուսումնարանին շինութեանը  
և սկզբնական պատրաստութեանցը, ևս և մէջը չքաւոր  
աշակերտներ դաստիարակելու համար, գործածուին վի-  
ճակիս եկեղեցիներուն անգործ մնացած արդիւնքները:

Նախիջևան ևս գրել էին Թէոդոսիոց հայ ժողովըր-  
դեան երեւելիքը, այսինքն Ալթունճեան եղբարք, իրենց  
առաջարկութիւնը. բայց այն ժամանակի քաղաքա-  
դուլը, որ էր Սեմէոն Աղա Ալաճալեան, պատասխա-  
նել էր նոցա խոհական խորհրդով՝ թէ Նախիջևանի  
ժողովրդեան մեծ մասը չօժար կերեւի այդ բանին. մի-  
այն թէ ժամանակին պարագաներուն նայելով՝ առ-  
այժմ պատշաճ չերեւիր այդպիսի խնդրագիր գրելը, այլ

944

պէտք է սպասել որ Տէրութիւնը իրենց կարծիքը հարցանէ: Այս պատասխանը թէպէտ և դոհացուցիչ բան չէր բացի վարդապետը—որ արդէն շատ չոչնչեւ ացն առաջարկութեան կատարուելուն—հարկ չհամարեցաւ հետադատել ու տեղեկանալ թէ Նախիջևանի ժողովը՝ դեան մեծ մասին պատասխանը արդեօք ի՞նչ պիտի լինի՝ երբ Տէրութիւնը այդ առաջարկութիւնն անէ իրենց կամ Առաջնորդին:—Առաւ հետը ացն հինգ քաղաքաց խնդրագրերը և ուրիշ հաւաքած տեղեկութիւնները, և 1857-ին հոկտեմբեր ամսոյն սկիզբը ճանապարհ ելաւ, հասաւ Մոսքուա և Փեթերպուրկ 15-ին:

**Գ Լ Ո Ւ Խ Բ.**

Նախիջևանի եւ Պետրապոլի վիճակին կառավարութիւնը Գարրիէլ վարդապետին յանձնուիր:

Ինչպէս որ առաջ ասացինք, Գարրիէլ վարդապետին Ռուսաստան գալուն գլխաւոր պատճառը ծանօթ էր աւելի Արտաքին Գործոց Ոստիկանին, այսինքն Կորչաքով իշխանին, որուն արդէն օգոստոս ամսոյն մէջ ծանուցած էր վարդապետը իւր Ռուսաստան եկածը և Փեթերպուրկ երթալու ղետաւորութիւնը՝ առանձին նամակով: Այն մայրաքաղաքը հասնելուն պէս՝ գնաց ներկայացաւ իշխանին, և նա սիրով և ուրախութեամբ զինքը ընդունելով՝ առաջին խօսքը այս էր որ ասաց. «Շատոնց կապակէինք մեք ձեր գալուն. վասն զի Կաչսերահան հրովարտակն ևս արդէն պատրաստ է, և դուք հարկաւ պիտի երթաք, Ներքին Գործոց Ոստիկանին, նա ամէն բան տեղովը կըմացընէ ձեզ»:

Ներքոյ օրը գնաց վարդապետը Ներքին Գործոց Ոստիկանին, որ էր հանդուցեալ Լանսքօյ կոմսը. և նա նոյնպէս քաղցրութեամբ և սիրով ընդունելով զնա՝ ասաց թէ «Ահա Կաչսեր կամքը այս է որ դուք լինիք Նախիջևանի և Պետրապոլիոյ Հայոց վիճակին Առաջնորդի տեղի Մատթէոս Արքեպիսկոպոսին, իսկ նա պիտի լիտիադրուի Աժտէրխանի աթոռը, որ Բարսեղ Արքեպիսկոպոսին վախճանելէն ի վեր պարապ է: Տէրութիւնը կըտուայ որ այս կարգադրութեամբ կարող էք դուք աւելի ղեւորութեամբ հիմնել ու կառավարել այն աղգային ուսումնարանը՝ որոյ նախագիծը և նպատակը հաճոյ եղած է Կաչսեր: Եթէ, ասաց, ձեր կողմանէ դժուարութիւն մի չունիք այս պաշտօնը յանձն առնելու, խօսք տուէք ինձ համարձակ, վասն զի Կաչսերահան հրովարտակը պատրաստ է և միայն կըմնայ «ստորագրութիւնը»: Պատասխանեց վարդապետը թէ իրեն գլխաւոր և մի միայն դժուարութիւն կերելի այս բանիս մէջ այն թէ արդեօք էջմիածնաց Սինոդին համաձայնութիւնը չայսմ մասին առնուած է կամ պիտի առնուի՞ թէ ոչ, որովհետև այժմ կաթողիկոս չկայ, ու Սինոդն է կառավարիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ: Ստիկանը պատասխանեց համառօտիւ՝ թէ «Տէրութիւնը նախատես եղած է արդէն ըստ արժանւոյն ամենայն հարկաւոր պարագայից, և հարկաւ ըստ այնմ կանէ իւր կարգադրութիւնները՝ համաձայն Կաչսերաղի օրի նաց. այս կողմանէ կարող էք ձեր սիրտը հանդիստ պահել, և յանձն առնուլ ձեզ առաջարկուած պաշտօնը, առանց տարահրուսելու որ Ոստիկանարանը այժմէն ձեզ կապահովէ իւր պաշտպանութիւնը և ամէն տեսակ բարոյական օգնութիւն և քաջալերութիւն»: Եւ ահա այս խօսքերուն վերայ և այս պայմաններով հարկադրեցաւ վարդապետը չայտնել Ոստիկանին՝ թէ ինքն ևս իւր կողմանէ արդէն կամ դժուարութիւն չտեսնէր Ահա Կաչսեր հաճութիւնը կատարելու:

տիկանին, որ էր հանդուցեալ Լանսքօյ կոմսը. և նա նոյնպէս քաղցրութեամբ և սիրով ընդունելով զնա՝ ասաց թէ «Ահա Կաչսեր կամքը այս է որ դուք լինիք Նախիջևանի և Պետրապոլիոյ Հայոց վիճակին Առաջնորդի տեղի Մատթէոս Արքեպիսկոպոսին, իսկ նա պիտի լիտիադրուի Աժտէրխանի աթոռը, որ Բարսեղ Արքեպիսկոպոսին վախճանելէն ի վեր պարապ է: Տէրութիւնը կըտուայ որ այս կարգադրութեամբ կարող էք դուք աւելի ղեւորութեամբ հիմնել ու կառավարել այն աղգային ուսումնարանը՝ որոյ նախագիծը և նպատակը հաճոյ եղած է Կաչսեր: Եթէ, ասաց, ձեր կողմանէ դժուարութիւն մի չունիք այս պաշտօնը յանձն առնելու, խօսք տուէք ինձ համարձակ, վասն զի Կաչսերահան հրովարտակը պատրաստ է և միայն կըմնայ «ստորագրութիւնը»: Պատասխանեց վարդապետը թէ իրեն գլխաւոր և մի միայն դժուարութիւն կերելի այս բանիս մէջ այն թէ արդեօք էջմիածնաց Սինոդին համաձայնութիւնը չայսմ մասին առնուած է կամ պիտի առնուի՞ թէ ոչ, որովհետև այժմ կաթողիկոս չկայ, ու Սինոդն է կառավարիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ: Ստիկանը պատասխանեց համառօտիւ՝ թէ «Տէրութիւնը նախատես եղած է արդէն ըստ արժանւոյն ամենայն հարկաւոր պարագայից, և հարկաւ ըստ այնմ կանէ իւր կարգադրութիւնները՝ համաձայն Կաչսերաղի օրի նաց. այս կողմանէ կարող էք ձեր սիրտը հանդիստ պահել, և յանձն առնուլ ձեզ առաջարկուած պաշտօնը, առանց տարահրուսելու որ Ոստիկանարանը այժմէն ձեզ կապահովէ իւր պաշտպանութիւնը և ամէն տեսակ բարոյական օգնութիւն և քաջալերութիւն»: Եւ ահա այս խօսքերուն վերայ և այս պայմաններով հարկադրեցաւ վարդապետը չայտնել Ոստիկանին՝ թէ ինքն ևս իւր կողմանէ արդէն կամ դժուարութիւն չտեսնէր Ահա Կաչսեր հաճութիւնը կատարելու:

Նախնիքեանն և Պետարապետոյ վիճակին կառավարու-  
թիւնը այս կերպով Գաբրիէլ վարդապետին յանձնուելը  
Ռուսաստանի ազգայիններէն բաղմայ Հաճոցական կամ  
ուրախալի բան երեցաւ. բայց զարմանք չէ որ ոմանց  
ոչ սակաւ զարմանք պատճառեց՝ թէ՛ աշխարհակա-  
նաց և թէ՛ եկեղեցականաց, որք զբաժ էին մըտ-  
քերնին թէ ո՛ր և իցէ վիճակի Առաջնորդ նշանակելը  
Տիպոն՝ Վեհափառ կաթողիկոսին և կամ Ս. Էջմիածնաց  
Սինողին գործն է, և Տիպոն նոցա առաջարկուելեա՞նք պիտի լինի  
վիճակներուն Առաջնորդ գնելը կամ վերցնելը:

Սոքա նախ չէին գիտեր կամ չէին չիշեր 1836-ին  
Կաջսերական վճռով Հաստատուած Օրէնքին ժԱ. Հա-  
տորոցն 966 չօդուածը, որ կասէ չաջնապէս. «Թեմա-  
«Կալ Առաջնորդք Եկեղեցւոյ Լուսաւորչական Հայոց  
«Պատմիչն է ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐԷ չեկեղեցականաց այն դա-  
«Լանութեան: Նոքա հասարակն և ուրիշն Կայսերական հրովար-  
«դիչն»: Եւ թէպէտ կային ոմանք որ այս չօդուածը կար-  
դալէն չետոյ ևս կասէին թէ զորա գէմ Հանդուցեալ  
Յովհաննէս կաթողիկոսը խնդիր տուած է Տէրութեան,  
բայց մտադրութիւն չէին աներ նոքա այն ժամանակ-  
ները նոցն կաթողիկոսին Ռուսաց տէրութենէն առած  
պատասխանին՝ Պլո՛ւտով կոմսին ձեռքովը՝ թէ «Վեհա-  
փառ Կայսրը իրեն յազելով միշտ առաջնորդ նշանակելու  
երաւունքը, երբէք չարդելուք որ Կաթողիկոսն անէ «ու-  
րիշ» Առաջնորդի Համար առաջարկութիւն»:

Արդ Հարցանեմք՝ մէկ կողմանէ միամիտ և ճշմարիտ  
ազգասիրաց, և միւս կողմանէ իմաստակ կամ կեղծ աղ-  
դասիրաց, որք մինչև ցայժմ կայնդեն՝ թէ Գաբրիէլ  
վարդապետը պէտք չէր բնաւ ամենեւին յանձն առնուր  
այն առաջարկութիւնը: (\*) Հարցանեմք կասեմ, թէ

\*) Ինչպէս որ իստէ նախ խղճուէ շարունակողն Պատմա-լեւոն Հայոց  
Աւետիս Պերդերեան իւր գրքին 373 էրեսը, է հարկէ ընդ աղբեցու-լեւոնք  
հանդուցեալ Մարկէոս Կաթողիկոսին, և է հաճոյս ոմանց է մերջալոյն նարուս

կարող էր արդեօք կամ պարտաւորն էր վարդապետը  
պատասխան տալու Ռատիկանին՝ թէ «Մինչև որ Էջմի-  
ածնաց Սինողին դբաւոր առաջարկութիւնը կամ Հա-  
լանութիւնը «ուրիշ» չեմ կարող խօսք տալ և չօ-  
ժարութիւնս չաջանել»: Ապաքէն վարդապետը չաջմ  
մասին սոսկական Հարատակ մի էր՝ կանգնած է միջև  
երկու իշխանութեանց, և նոցա սեպհական գործն ու  
պաշտօնն էր կարգադրել՝ իրենց մէջ օրինաւոր թղթա-  
կցութեամբ առաջ կամ չետոյ՝ այս խնդիրը, — ինչպէս  
որ իրօք ևս արած էին, — և ըստ այնմ անել վարդապե-  
տին և ո՛ւմ և իցէ այն առաջարկութիւնը: — Բայց մեր  
նախանձացող ազգասէրները աւելի ևս Հեռուն գնա-  
ցին իրենց անտեղի պահանջմունքներովը, երբոր Մաջր  
Աթոռն պատուցն և իշխանութեանը ի՞նչ պաշտպան  
և ակոյցեան Հանդիսանալով՝ կանչվուտեցին թէ վար-  
դապետը ոչ միայն պէտք չէր որ խօսք տար Ռատիկա-  
նին, այլ և Ռուսաստան ոտք կոխածին պէս պարտա-  
կան էր դիմել նախ առ Սուրբ Աթոռն անձամբ կամ  
գրով, և նորա՛ Հաճութեամբը, նորա՛ ձեռօքը և առա-  
ջարկութեամբը ձեռք դարնէր ո՛ր և իցը «ուրիշ» գոր-  
ծողութեան, զոր օրինակ, Հրաման խնդրել Ուսումնա-  
րան բանալու է Ռուսաստան, կամ թէ Փարսիզու Վար-  
ժարանը Ռուսաստան փոխադրել բոլորովին կամ ըստ  
մասին, և այլն: Այս զարմանալի պահանջմունքն անող  
նախանձացողները կերել թէ կմոռանան քանի մի  
Հարկաւոր պարագաներ, որոց մէջ կդառնուէր այն մի-  
ջոցին վարդապետը, այսինքն նախ այս՝ թէ է՛նչ պատ-  
ճառներէ տոխպուած էր նա Ռուսաստան դալու կամ  
Ռուսաց Տէրութեան պաշտպանութեանը ներքև աղ-  
դային Ուսումնարան մի բանալու (զոր կարող էին Հաս-  
կանալ նորա Հրատարակած գրուածքներէն): Նրկորը՝  
թէ վարդապետին եկեղեցական կամ Հոգևորական անձ  
գանուածը՝ այս գործողութեան կողմանէ գրեթէ պա-

տահախան մէկ չատկութիւն էր, և ինքը ստիպական անձ մի: Նրորորդ՝ թէ ինքը ամենեւին միտք չունէր Սեփեղիմի Գարբայ կամ Սեփեղիմի բանալու, այլ Ընդհանուր միջնակարգ Ուսումնարան մի՛ թէ՛ Ռուսաստանի և թէ՛ Տաճկաստանի Հայ պատանեաց Համար: Չորրորդ՝ թէ ինքը արդէն Հանդուցեաց Ներսէս կաթողիկոսին դրաւոր չալտարութեամբ ծանուցած լինելով իւր ընթացքը և դիտաւորութիւնները, (1) և այնուհետև անմիջական կապակցութիւնները՝ մինչև այն ժամանակ Կ. Պօլսոյ Սրբազան Պատրիարքին Հետ արած լինելով, Հարկ չէր Համարեր Էջմիածնայ Աբուդի պարտք եղած Տիգրան անմիջապէս թղթակցել ամեն ինչու Սինոդի անդամներուն Հետ, որոց կարծիքներն ու իրաւասութիւնները դեռ լաւ ծանօթ ևս չէին իրեն: Հինգերորդ՝ նաև իբրև եկեղեցական անձ ո՛չ ապաքէն ինքզինքը պարտական կճանաչէր գտնուելու Ռուսաստանի մէջ ընդ անմիջական կապակցութեամբ օրինաւոր Աստուծոյ ղեկավարութեան և Պետարապետի, որ էր Վեհապետեան Մատթէոս Նպիտոսոյ, առ որ և գրած էր՝ Ռուսաստան մտածին պէս՝ պարտապաշտած եղանակաւ լիցելու նամակ, և պատասխան ընդունած էր՝ լի քաղաքալարութեամբ և ուրախակցութեամբ: Վեցերորդ՝ թէ ամենեւին իրաւունք չունէր տարակուսելու Ոստիկանին այն խօսքին վերայ, որով նա կապահովէր զինքը՝ թէ Տէրութիւնը նախատես եղած է արդէն ամենայն Հարկաւոր պարտապետի, որպէս զի այն գործը օրինաւորապէս ի գլուխ տարուի: Եւ վերջապէս՝ եօթներորդ, թէ վարդապետը կըրուէր ո՛չ թէ Հաստատուն Առաջնորդ վիճակին (Епархiаль-ный Начальникъ), այլ Կառավարիչ վիճակին (Управ-ляющій Епархією), որ չաչանապէս կնշանակէր՝ թէ

1) Տես ի Պարտ. վերաբարչի երկն վարդապետաց, ի Փարիզ և ի Տփլիս.

երբ նոր կաթողիկոսն ընտրուի, աթոռը Արքեպիսկոպոսական աթոռ լինելով՝ Կաթողիկոսէն ձեռնադրուի վարդապետը արքեպիսկոպոս, որ կարողանայ առաջնորդական պաշտօնները անթերի կատարել:

Յայտնի բան էր որ Գարբայէլ վարդապետը եթէ այս պարագաներուս առաջուց տեղեկացած չլինէր, դեռ Հրովարտակը չհրատարակուած՝ բացարձակապէս կհրա-ժարէր այն պաշտօնը չանձն առնելէն. վասն զի կարող էր դուշակել՝ թէ նախանձը և Հակառակութիւնը երբ այսպիսի կուռան մի գտնեն, մեծամեծ շիտթութիւններ կարող են Հանել ամէն տեղ, մանաւանդ մեր ազգին մէջ, և չեսոց թէ՛ պաշտօնն ընդունողին՝ թէ տուողներուն գլխացաւութիւն, տաղնապ և ճանձրութիւն պատճառել:

Ոստիկանը կանչեց իսկոյն իւր մօտ ալլադաւան ազգաց բաժնին վերատեսուչ Սելերս Կոմսը, և նորա չանձնեց որ ցուցանէ և մանրամասն կերպով բացատրէ Գարբայէլ վարդապետին առջև այն ամենայն գրուածքները և պարագաները՝ որ կըլերաբերէին այն կարգադրութեան. չորոց մէք բաւական Համարեմք չիշատակել աչտեղ միայն նոցա լիտքիկ մէկ կտորը, որով կտեսնուի՝ թէ Ներքին Գործոց Ոստիկանարանը և Սինոդը յիսուի աստուծոց Եղևիցէն է՝ եղել իրարու Հետ այն կարգադրութեան վերայ, և ոչ թէ, ինչպէս որ վարդապետին բամբաստողները գանդատ կանեն, առանց նախընթաց գլխութեան Սինոդին ի գործ դրուած են Պետարապետի և Նախիջեւանի վիճակին Համար եղած կարգադրութիւնները:

Գիտեմք որ այն նախանձացողները գոհ չէին լինել նաև ասով, այլ կպահանջէին որ վարդապետը Մայր Աթոռոցն պատկը և իշխանութիւնը աւելի ջերմեռանդութեամբ պահած լինէր, ուստի միշտ պատրաստ էին Հարցանելու իրեն իւրաքանչիւր քաջլախոխին մէջ՝ թէ «Որով իշխանութեամբ առնես դու զայդ, կամ ո՛վ

և ա ղեղ զիշխանութիւնդ զայդ» . . . Բայց որովհետև Սինոդին աչն ժամանակի խոհախան և օրհնագէտ անդամները և ոչ իսկ արժան համարել էին սորա նման հարցմունք անել Ոստիկանին կամ վարդապետին, արդեօք մեք ևս իրաւունք չունինք ասելու նոցա՝ թէ «Իսկ դուք որով իշխանութեամբ հարցանէ՞ք զայդ» . . . Սակայն լաւ կհամարիմք արհամարհութեան արժանի դատել նոցա կեղծ աղբաւիրութիւնը, որով ամէն ժամանակ ուղած են ջատագով ձեանալ Մայր Աթոռոջն և Աղգիս իրաւանցը և պատուոջն, մինչդեռ չայտնի է որ ընդհանրապէս աչնպիսի նախանձաշուղութիւն ծախողներէն շատերը առաջին անգոմնողք են ամենայն եկեղեցականաց առ հասարակ, և եկեղեցական իշխանութեան ևս. միթէ նոցա համար դժուար բան էր քարոզելը՝ թէ Գաբրիէլ վարդապետը (որոյ նախընթաց աշխատութիւնները և աղբային իրաւանց համար կրած նեղութիւնները դուցէ իրենց միայն ծանօթ չէին, մանաւանդ թէ հաճոյ չէին), անարժան միջոցներով և փառամով զխաւսըութեամբ հետամուտ եղել է աչն պաշտնին: Այս զբարտաւթիւնը բարձրաձայն քարոզութեամբ տարածողներուն գլխաւորն եղաւ աչն ժամանակները և չետոյ՝ Նալբանդեան Մեքայէլ ջանդուզն երիտասարդը, որ միտքը դրած էր թէ իւր պաշտպան ու բարերար Մատթէոս Արքեպիսկոպոսին այս վեճակէս Աժտէրխանի վեճակին Առաջնորդութեան փոխադրուելը անպատուութիւն ու գրկանք էր նորա՝ Գաբրիէլ վարդապետին պատճառաւը. ուստի ամէն տեսակ հրահարքներով ու խճրճանօք կը անար վնասել նորա համբաւոջն և ձեռնարկութեանցը, և ըստ մասին չաջողեցաւ ևս իւր վնասակար ջանքին ու աշխատութեանը մէջ, ինչպէս որ չետոյ պիտի տեսնեմք:

Այժմ աչն նայեմք՝ թէ ի՞նչ թղթակցութիւն եղած էր արդէն ի մէջ Սինոդին և Ներքին Գործոց Ոստիկա-

նարանին՝ երբոր Գաբրիէլ վարդապետը նշանակուեցաւ կառավարիչ վեճակիս Նախիջևանի և Պեսարապետոյ:

Ոստիկանարանին մէջ պահուած վաւերական գրքուածքներէն տեսաւ վարդապետը՝ որ կարդադրութիւնը եղած էր իրեն համար ա՛չն ժամանակ որ ինքը տակաւին ի Փարիզ էր, և աչն այս կերպով: Ս. Էջմիածնաց Սինոդը տեսնելով որ Ռուսաստանի վեճակներէն տմանք առանց Առաջնորդի մնացած են հանգուցեալ Ներսէս կաթողիկոսին կառավարութեան վերջի ժամանակներէն ի վեր, առաջարկել էր Կովկասու Փոխարքային, և նա Ներքին Գործոց Ոստիկանին, որ Գաբաղու կառավարիչ կամ առաջնորդ (1) նշանակուէ վեհապետեան Գէորգ Արքեպիսկոպոսը, Թիֆլիզու Ջաւախեանց Սարգիս Արքեպիսկոպոսը, և Աժտէրխանի՝ Մակար Արքեպիսկոպոսը: Ոստիկանը պատասխանել էր՝ թէ Տէրութիւնը արդէլք չ'տեսնէր Գաբաղայի և Թիֆլիզու Առաջնորդութեան աչն անձանց կառավարութեանը ջանձնուելուն, միայն կուղէ որ Աժտէրխանի աթոռը առ այժմ պարապ մնաց, որովհետև Այվաղեան Գաբրիէլ վարդապետին Ռուսաստան գալը կապտուի, և հարկ պիտի լինի ուրիշ կարդադրութիւն անել: Արդ թէ Սինոդը ընդդիմութիւն մի տեսնէր աչն պատասխանին մէջ, կամ բռնաբարութիւն օրինաց և իրաւանց Մայր Աթոռոջն, ո՛չ ապաքէն կարող էր և պարտական ևս էր գոնէ այս ասելու՝ թէ Սինոդս խոնարհաբար կինչդրէ

(1) Ռուսաստանի Հայոց Տեղագործութեան եղած է Կ ա ռ ա վ ա ղ ի լ արգ-  
ձանէն Ռուսոց Управляющий Բառը, զոր իտրէլի է Լարգձանէլ նախ  
Տ ե դ ա չ ա լ Ա ռ ա ջ ն ո ղ ու լ ի ն ի Բայց աղբային զանազանութեան  
չրնելով այս երկու խոսքերուն Տե՛ջ, Управляющий Епархією և Е-  
пархіальный Начальникъ, շար ա ն գ ա յ Ա ռ ա ջ ն ո ղ ի ա ճ վ ի-  
ճ ա չ ա ղ ի Տ Թ է Տ ա չ լ ի ա ն է ն ա ն ի առավարէին:

Տէրութենէն որ այդպիսի կարգադրութիւն մի չլինի առանց իւր նախընթաց գիտութեանը կամ հաւանութեանը: Քայց Սինողը լաւ գիտնալով կարգադրութեան 966 յօդուածին զօրութիւնը, ձայն չհանեց, հաւանեցաւ, կամ հաւանած երեցաւ: Ահա այս հիման վերայ եղաւ Մատթէոս Արքեպիսկոպոսին Աժտէրեան փոխադրուելը, և նորա պաշտօնին Գաբրիէլ վարդապետին յանձնուելը:

Սոյն բանը ստուգեցինք յետոյ նաև Ս. Էջմիածնայ Սինողին գործերէն, որով այս ևս լիովին հասկացուեցաւ՝ թէ Ռուսաց Տէրութիւնը լաւ տեղեակ լինելով արդէն Ռուսաստանի Հայոց ուսումնական կարօտութեանցը, և կամենալով Գաբրիէլ վարդապետին դործունէութեան ասպարէզը յառաջադրին պատրաստել, առանց իսկ նորա գիտութեանը արած էր իւր կարգադրութիւնները, որպէս զի Ռուսմիսարանին գործը անխափան և առանց դժուարութեան յառաջանայ:

Այս այսպէս լինելով, աւելորդ կհամարվմք հերքել այստեղ նաև այն տղայական և անձուռնի մակարերութիւնը, որով այս գործողութենէն առիթ առին ոմանք ասելու՝ թէ «Ուրեմն վարդապետին կողմանէ մեծամեծ խոստմունքներ եղած պիտի լինին Տէրութեան՝ որ այսքան պատուով և պատրաստութեամբ ընդունելութիւն գտել է նա Տէրութեան առջև», և ոմանք յայտնապէս ևս կասկածեցան իմաստախօրէն՝ թէ ուրեմն Տէրութիւնը խօսք առած կլինի վարդապետին որ Հայերը Ռուս գործնէլու աշխարհի: Ո՛հ այլանդակ ցնորք տգիտութեան և չարամտութեան, և կեղծ աղգասիրութեան խա՛մ պտուղ:

Քանի մի օրէն հրատարակուեցաւ Կաջսերական հրովարտալը՝ որ կասէր, «ՀՐՈՎԱՐՏԱԿ ԱՌԻՍՏՐԱՐ ԾԵՐԱԿՈՅՏ»

«Զառաջնորդ զինճակին Հայոց Նախիջևանի և Պետարապետի Արքեպիսկոպոսն Մատթէոս Վեհապետեան՝ «բարեգթութեամբ աղատ արարեալ յայնմ պաշտամանէ,

«պատուէր տամք լինել նմին Առաջնորդ զինճակին Հայոց Աժտէրեանու, իսկ զկառավարութիւն զինճակին «Նախիջևանի և Պետարապետի յանձն առնեմք Գաբրիէլ վարդապետի Այվաղեան»

(Ի բնագրին ստորագրեալ է)

ԱՂԵՔՍԱՆԳԻՐ.

«Ի Յարսքոյէ—Սէլօ, 1 Նոյեմբ. 1857»:

Նոյեմբերի 9-ին նորընտիր Կառավարելը, կամ Տեղակալը, Փեթերպուրիկ եկեղեցւոյն մէջ առաւ իւր հանդիսաւոր երդումը հաւատարմութեան առ Տէրութիւնն ի ներկայութեան Վերատեսչի բաժնին այլադաւան աղգաց՝ Սելերս Կոմսին, Լազարեան Խաչատուր և Ադա Յովհաննէս իշխանապետաց, և ուրիշ աղգային և օտարազգի մեծամեծաց: Յետոյ նոյն ամսոյն 11-ին ներկայացաւ Վեհափառ Կաջսեր առանձին ի Յարսքոյէ—Սէլօ, և Նորին Վեհափառութիւնը բարեհաճեցաւ կէս ժամի չափ խօսիլ վարդապետին հետ նորա նոր պաշտօնին վերայ, Ռուսմիսարանին Թէոդոսիա հաստատուելու խորհրդին վերայ և այլն:

Նոյեմբերի 20-ին Լանսքօյ Կոմսը պաշտօնական մեծահաց կոչունք մի առաւ ի պատիւ վարդապետին, հրաւիրելով՝ բաց ի քսանի չափ մեծամեծաց Ռուսաց՝ Լազարեան Վեհաղնեաց իշխանները, Ադա Յովհաննէսը Տէլեանեան, Սիմէոն Աբամելիք իշխանը և ուրիշները:

Փեթերպուրիկէն Մոսքուա դառնալով՝ հաղիւ կարողացաւ վարդապետը այնտեղ շարաթ մի կենալ, որովհետև հարկ էր փութալ Քիշնև երթալու՝ քանի որ ձմեռուան սաստիկութիւնը չէր տերած. և այն վեց օրուան մէջ Մոսքուայի աղգայինք առ հասարակ մեծամեծ պատիւներ ու հարկներքնէր արին՝ իրենց վեճակի նորընտիր Առաջնորդին, և յանուանէ Լազարեանց Վսեմափայլ բեռօրդէրը, նմանապէս Ադա Յովհաննէս

Ստեփանոսեան Յովնանեանց, Ադա Մեքայէլ Յարու-  
թիւնեան Ստեփանեանց, Ադա Յովհաննէս Գանիկեան  
Լօսու-Մելիքեանց, Ադա Բախշի Կիրակոսեան Խալա-  
թեանց, Ադա Աղեքսանդր Թալրիզեանց, և Ադուլեցի  
վաճառականները:

Ադուլեցուց արած մեծահանգէս կոչունքին ժամա-  
նակը Պ. Ստեփանոս Նաղարեանց վարժապետը, մաղ-  
թողական ճառ մի ևս կարդաց, զոր ինքը շարադրած  
էր, և զոր արժան կհամարվմք այտեղ հրատարակել:

«Վեհապատիւ Հայր,

«Հոգևոր Տէր մեր.

«Ադուլեցուցուց պատուելի հասարակութիւնը յանձնել է ինձ  
այս րոպէս Թարգման լինել այն սրտովին շնորհակալութեանը  
որ մասուցանում է Ձեզ այն մեծարական շնորհի համար, որ ցու-  
ցել էք Գուր Կորան, հաճելով ընդունել Կորա համաստ կըրա-  
սիրական աղուհացը: Այս աղուհացը վայելելով Ձեր պատուական  
Հայրութեան հետ միասին, կամե նա համարել մե բարեկամական  
սիրոյ սեղան, մե տեսանելի բարոյական հաղորդակցութիւն, որ  
պետոյ է աւուղական կերպով սիրտ սրտի հետ կապէ, հոգի հոգու-  
հետ զուգաւորէ, մե քաղցր յարաբերութիւն հաստատէ ազգի  
Հօր և Կորա հոգևոր զաւակներն մէջ, Հայոց աւերակ տունը  
վերստին շինելու և բարեգարգելու համար:

«Ուրախ ենք, Վեհապատիւ Հայր, և անպատմելի ուրախ, որ  
այս եղբայրսիրական հացկերութիւնը այսպէս մօտեցրնելով մեզ  
միմեանց, իրաւունք է տալիս մեզ մե քանի բառ խօսելու Ձեր  
խոհական Հայրութեան հետ այն ցաւերն վերայ, որոնց մինչև  
այժմ համբերել է Հայոց ազգը, ոչինչ բժշկութիւն, ոչինչ Թե-  
թևութիւն չզտանելով: Դատերը եկել են, շատերը դնացել են,  
ոչ մի ողորմած Սամարացի չէ հարցրել այնտեղ անհող ու անտես  
ձրած վերաւոր Հայ ժողովրդի որպիսութիւնը, ոչ ով ձիթով ու  
զինով չէ պատել վերաւորն վեջքը, ոչ ով ինսամ չէ տաքել բարձ-  
րացրնելու այն անկեալը, տանելու և հասուցանելու Կորան դէպ  
ի մի ապահով իջևան: Միջոցի բերանից զովասանութիւնը շատ,  
բայց դրո՞ծ ու արդե՞նք ազգի մէջ և ոչ մի: Բայց մեր ցաւերն  
չափը լցուել է արդէն, օրէ օր սաստիանումէ վտանգը և վեր-  
կութեան հարկաւորութիւնը: Ուրեմն, Վեհապատիւ Հայր, այս

րոպէս ներկայ լինելով մեր ընկերական ժողովն մէջ, կարող էք,  
աւանց մեր բերանի բարբառը լսելու, մեր երեսներն վերայ  
կարդալ մեր սրտերն յանկութիւնը, փախազը, ուխտերը, վեր-  
ջապէս մեր քաղցր ակնկալութիւնը: Ձեզանից ապագայն օրերում:

Այս բարե յոյսերովս Թո՛ղ այժմ վերաւարենք դէպ ի երկնք  
մեր բարեմաղթութիւնը. Կեցցէ՛ Հայր Գաբրիէլ Տեղակալ Առաջ-  
նորդ մեր, կեցցէ՛ վտան շինութեան ազգի, կեցցէ՛ որպէս բարե  
Հայր ժողովրդի, որպէս ընտիր քահանայ եկեղեցու, որպէս շինող  
և բարեգարգող Հայկական ազգի չոր ու ցամաք անդաստանին:

Նոյեմբերի 28-ին, 1857.

Մոսկվա.»

Նւ թէպէտ մեք այսպիսի մաղթողական ճառերու  
և դովասանութեանց ներքին և իտիական չարքը չհաս-  
կացողներէն չեմք, և այն պատճառաւ դանց կանեմք  
հրատարակել այս տեղ ուրիշ շատ շնորհաւորութեան  
նամակներ, գրուածքներ և արձակ ու ոտանաւոր բա-  
րեմաղթութիւններ՝ զորս ընդունեցաւ այն միջոցին  
Գաբրիէլ վարդապետը շատ տեղերէ, բայց նախ վերոյ-  
գրեալ ճառը՝ իրեւ «Հիւսիսախաչը» օրագրի խմբագրա-  
պետին այն ժամանակի դրացմանցը չաչտարարու-  
թիւն՝ հրատարակման արժանի երեցաւ մեզ, և երկ-  
րորդ՝ վարդապետին եղած այսպիսի ընդունելութիւն-  
ները ի կողմանէ Ռուսաստանի Հայոց այն մասին որ  
ուրիշներէն շատ աւելի ցաւաջաղէմ են՝ ոչ միայն քա-  
ղաքագիտութեան մէջ, հասպա նաև ճշմարիտ ազգա-  
սիրութեան և ազգային եկեղեցու պատուոյն և իրա-  
ւանցը նախանձաշուղութեանը կողմանէ, -- մէկ մէկ  
ապացոյցներ են թէ ուրեմն վարդապետին աւանց Սե-  
նոգի կարգադրութիւնը աչքովը տեսնելու կամ նախըն-  
թացաբար Սինոդին հաւանութիւնը խնդրելու՝ Տէրու-  
թիւնէն իրեն աւաջարկուած պաշտօնը յանձն առածը  
այնքան մեծ յանցանք ու սխալանք չէր՝ որքան որ  
նորա հսկառակորդները երեւակացեցին ու հոչակեցին:

### Գ Լ ՈՒ Խ Գ.

Գարրիէլ վարդապետին Քիչնե երթալն ու Առաջնորդական կառավարութիւնն ընդունիլը:

Ներքին գործոց Ոստիկանին կարգադրութեանը Համեմատ, Գարրիէլ վարդապետը Մտքուայէն ուղղակի Քիչնե գնաց դեկտեմբերի առաջին օրերը:

Ի ճանապարհին Սե'րփուխովի կաշարանին մէջ Հանդիպեցան վարդապետին քանի մի Նախիջևանցի վաճառականներ, և սիրով և ուրախութեամբ մեծարեցին իրենց նոր Առաջնորդը. մէջերնէն մէկը, որ էր Խլքիճեան Ազա Յակոբը, մաղթողական ճառ կամ թուղթ մի ևս կարգաց վարդապետին, զոր Նախիջևանէն պատրաստել ու Հետեւնին բերել էին այն վաճառական ճանապարհորդները:

Վեհապետեան Մատթէոս Արքեպիսկոպոսը սիրով ընդունեցաւ զԳարրիէլ վարդապետը, Հիւրընկալեց զինքը Առաջնորդարանին մէջ, և Հետզհետէ վիճակին գլխաւոր գործերուն ծանօթացընելէն չետոյ, դեկտեմբերի 17-ին բոլորովին չանձնեց նորա Կառավարութիւնը կամ Տեղակալութիւնը:

Այն միջոցին Առաջնորդական Ատենին կամ Կոնսիստորիային առաջին անգամ, և զրեթէ կառավարող վիճակին, էր՝ այժմ Հանդուցեալ Բեկնադարեանց Յովհաննէս վարդապետը: Մատթէոս Արքեպիսկոպոսը առաջարկեց այն վարդապետին որ իւր Հետը Աժտերխան երթայ. բայց նա կամք չտուաւ, այլ յօժարակամ սիրով ուղեց մնալ Քիչնե՝ թէ՛ իբրև այն տեղի եկեղեցական կալուածներուն վերատեսուչ, և թէ՛ Պետարապետի Հոգևորական Կառավարութեան առաջին անգամ,

որովհետև ըստ նոր կարգադրութեան Ոստիկանարանին Ներքին Գործոց՝ Նախիջևանի և Պետարապետի վիճակին Կոնսիստորիան պիտի փոխադրուէր Թէոդոսիա (ուր պիտի բացուէր ուսումնարանը), և Քիչնեի մէջ պիտի Հաստատուէր նորա տեղը Հոգևոր Կառավարութիւն:

Արդէն Մատթէոս Արքեպիսկոպոսը իւր առաջնորդութեան առաջին տարիները խնդրած էր Տէրութենէն որ Առաջնորդական Աթոռը և Կոնսիստորիան փոխադրուի Քիչնեէն նոր Նախիջևան. և իրաւունք ունէր. որովհետև Քիչնեը այն ընդարձակ վիճակին Հեռաւոր մէկ ծայրը գտնուելով, թղթակցութիւնները և ամէն տեսակ գործողութիւնները մեծ դժուարութեամբ և շատ ժամանակ կորուսելով կլինէին: Եւ թէպէտ Նախիջևանն ևս վիճակին միւս ծայրն էր, և շատ Հեռու կմնար Պետարապետէն, բայց գոնէ վիճակին ամենէն բաղմամարդ քաղաքը լինելով՝ Քիչնեէն շատ աւելի չարմար էր Առաջնորդական Աթոռոյն և Կոնսիստորիային այն տեղը լինելուն: Տէրութիւնը Մատթէոս Առաջնորդին առաջարկութիւնը թէպէտ օրինաւոր ճանաչած էր, բայց և Հանդուցեալ Ներսէս Կաթողիկոսին կարծիքը հարցուցել էր. խի նա, գուցէ վախնալով որ այնու փոխադրութեամբ Քիչնեի կալուածները երեսի վերայ կմնան, պատասխան տուել էր Տէրութեան՝ թէ «Ինչպէս որ ես 17 տարի Քիչնե նստած՝ կառավարեցի այդ վիճակը, այսպէս և Մատթէոս եպիսկոպոսը կարող է շատ լաւ կառավարել վիճակը՝ Քիչնե մնալով»:— Բայց որովհետև Կապտերական Հրամանաւ ազգային Ուսումնարանը պէտք էր բացուէր Թէոդոսիոյ մէջ, ինչպէս որ ասացինք, և նորընտիր Առաջնորդին ձեռքովը և վերատեսուչութեամբը կառավարուէր, բնական էր որ Առաջնորդական Աթոռն ևս ոչ Քիչնե մնայ և ոչ Նախիջևան փոխադրուի, Հայա ի Թէոդոսիա. մանաւանդ որ Խրիմը Պետարապետի և Նախիջևանի զրեթէ մէջտեղը

դանուկերով, աւելի դիւրութիւն կուտար վիճակին կառավարութեանը: Այս պատճառներով որոշուեցաւ որ Առաջնորդարանը և Կոնսիստորիայն փոխադրուին Քիշնեկէն Թէոդոսիա. Քիշնեկ մնաց Հոգևոր Կառավարութիւն Պետարապետ, և Խրիմու Խարասու քաղաքէն վերցուի Հոգևոր Կառավարութիւնը՝ Թէոդոսիայի մօտ գլտնուելուն պատճառաւ:

Եւ այսպէս 1858-ին սկիզբէն Նախիջևանի և Պետարապետի վիճակին Առաջնորդական Սթոլը փոխադրուեցաւ Քիշնեկէն Թէոդոսիա՝ դիտութեամբ Սինդոլին Ս. Էջմիածնի:

Մատթէոս Արքեպիսկոպոսը պիտի մնար այնուհետև ի Քիշնեկ երբև հիւր մինչև գարուն, և Բեկիազարեան Յովհաննէս վարդապետը պիտի սկսէր Կոնսիստորիայի գլուխը: Բնակարանները չուզարկել Թէոդոսիա, ընդ որս նաև Կոնսիստորիայի պաշտօնեաները: Իսկ Գաբրիէլ վարդապետը իւր հետը ունենալով Աղափիբեան Գրեգոր անունով ուրարակիւր գպիւր՝ զոր Մոսքուայէն բերել էր իրբև գրադիւր, և ճանապարհ ելնելով գնաց հասաւ Գրեգորուպոլիս գեկտեմբերի 21-ին, անտի Օտեսաս:

Նոր Ռուսիոյ և Պետարապետի Ընդհանուր Կուսակալ այն Ժամանակը Սթոլիոնով կոմսն էր: Սա սիրով և մեծարանօք ընդունեցաւ գնորդնալը Տեղակալը, — որուն հետ երրորդ անգամն էր որ կտեսնուէր, — և ուրիշ խօսքերուն մէջ գրեթէ խնդրելով ապսպրեց վարդապետին որ ամենայն ջանք և փոյթ ի գործ դնէ վերջացնելու այն ցաւալի ու գայթակղական կռիւները որ կային Նախիջևանի մէջ՝ եկեղեցական գումարներուն պատճառաւ. ինքն ևս խոստացաւ որ իւր կողմանէ ամէն տեսակ օգնութիւն անէ վարդապետին՝ թէ՛ այն դործոյն և թէ՛ ուրիշ կառավարչական գործողութեանց մէջ:

Տարւոյն ետքի օրն էր որ հասաւ Գաբրիէլ վարդապետը Թէոդոսիա, և սկսաւ խիտցն Կոնսիստորիայի փո-

խադրութեան գործոյն միտ դնել, միանգամայն և վիճակին կառավարութիւնը ձեռք առած՝ կարելի հընարքները սկսաւ բանեցընել որ ամենայն գործողութիւն կանոնաւոր կերպով առաջ երթայ, և բարեկարգուելու արժանաւոր պակասութիւնները վերցուին կամ ուղղուին: Եւ թէպէտ ձմեռնային ճանապարհորդութիւնը և նոր պաշտօնին դժուարութիւնները տկարացուցին զինքը մէկ երկու ամիս, բաց արգելք չեղան գլխաւոր և կարևոր աշխատութիւններուն. այնպէս որ մինչև մայիսի սկիզբները լիովին տեղեկացաւ նա վիճակին գործերուն, և կարողացաւ պատրաստուել երթալու Նախիջևան, ուսկից կախեալ էր ըստ մասն նաև ազգային Ուսումնարանին հիմնարկութիւնը:

Արդէն երբոր Գաբրիէլ վարդապետը դեռ Մոսքուա էր, Նախիջևանի քաղաքագլուխը Սիմէոն Աղա Ալաճալեան, ուրիշ քանի մի Նախիջևանցի իշխանաւորաց հետ այն տեղը գտնուելով, յայտնել էին Առաջնորդին՝ թէ ի՞նչ ցաւալի երկպառակութիւն կայ Նախիջևան ի պատճառս Խալիբեան և Հայրապետի կուսակցութեանց, և եկեղեցական ու քաղաքական գումարաց: Իրենց խօսակցութեանց մէջ այս ևս ասել էին այն վիսասակար և անտանելի երկպառակութիւնը վերնար մեր մէջէն»։ Միանգամայն խնդրել էին վարդապետին որ այս քանիս դարման անելու համար ամենեկին աշխատութիւն չխնայէ: Ուստի և վարդապետին մեծ հողը և մտմտուքը այս էր՝ թէ արդեօք ի՞նչ կերպով պիտի յաջողէ իրեն Աստուած վերցընել Նախիջևանէն այն խառվարութիւնները, ու քրիստոնէականացել սէրն ու խաղաղութիւնը հաստատել ընակիչներուն մէջ:

### Գ Լ Ո Ւ Խ Գ.

Նախիջևանի եկեղեցեաց գումարներուն խնդիրը եւ նորա լուծուիլը .

Թէպէտ և Գաբրիէլ վարդապետը արդէն լրացած էր Նախիջևանի մէջ քանի տարիէ ի վեր եղած երկպառակութիւնը, ինչպէս որ ասացինք, բայց իրեն առաջին ու գլխաւոր պարտք ճանաչելով՝ երկու կողմի անձինք ևս շահել, և արդարութեամբ ու խաղաղութեամբ վերջացնել ամէն կռիւ և հակառակութիւն, մտաբերած էր որ Նախիջևան գնացած ժամանակը ամէն բանէ աւելի ջանաց անկողմնասէր և անաչառ կերպով վարուել ամենուն հետ:

Թօսք չկար այն սերալիը և հանդիսաւոր ընդունելութեան՝ զոր արաւ ժողովուրդը նորընտիր Առաջնորդին Նախիջևան մտած օրը, և այնուհետև մինչև տասն և հինգ օր: Առաջնորդը այն 15 օրուան մէջ Նախիջևանի գլխաւոր ժողովրդականաց հետ ծանօթանալով, մէկ կողմանէ եկեղեցիներուն բարեկարգութեանը հոգիտանէր, և միւս կողմանէ եկեղեցական գումարաց խնդրոյն վերայ տեղեկութիւններ կհաւաքէր ամենուն բերանէն, և իրենունները մինչև կէս գելեր այն խընդրոյն վերայ եղած գրուածքներն աչքէ կանցընէր, որպէս զի կարողանայ խնդիրը լաւ հասկանալ առաջ, և չետոյ նորա լուծման հնարքը գտնէ և առաջարկէ ժողովրդեան:

Իրեն հաւաքած տեղեկութիւններուն գլխաւոր կէտերն ստքա կէն: Որովհետև Մատթէոս Արքեպիսկոպոսը Խալիպեան Յարութիւն Աղային ձեռքը եղած փողերուն հաշիւները քննելու համար վեց հոգի ընտ-

րած էր Նախիջևանի ժողովրդեան մէջէն, որոց գլխաւորն էր Հայրապետեան Կարապետ Աղան, և նոցա ջանձնել էր որ ամենայն ճշտութեամբ հաշիւները քննելէն չետոյ՝ իրեն առաջարկէն, որպէս զի կամ անձամբ և կամ Տէրութեան ձեռքովը այն փողերը պահանջէ և առնու, ուստի և նոքա

Ա. Հաշուատեսութեան ժամանակը հաշուի դարկել էին ո՛չ միայն Նախիջևանի եկեղեցեաց մայր գումարները այն ժամանակէն՝ չորում հանգուցեալ Ներսէս Կաթողիկոսը ջանձնել էր Խալիպեան Յարութիւն Աղային դրամական մուրհակները և թղթերը, այլ և հաշուել էին այն գումարներուն տոկոսները՝ իւրաքանչիւր տարի 100-ին 6 սեպելով, և շահ շահ վերայ դարներով՝ մինչև 1857 տարւոյն հոկտեմբերի 15-ը. թէպէտ և Ներսէս Կաթողիկոսը այն գումարները Խալիպեան Յարութիւն Աղային ջանձնած ժամանակը չէր պատուիրած որ նա շահեցընէ դաշնա, կամ թէ նոցա զիմացը ապահովութիւն տայ իւր սեպհական կառուածները, այլ միայն անկողուստ պահպանէ:

Բ. Հաշուատեսները հաշուի դարկել էին նաև այն փողերուն շահը կամ տոկոսները՝ որ մինչև ցայսօր խի մնացած էին Նախիջևանի գիւղացիներուն ձեռքը, և Պ. Խալիպեանը չէր նարողոյած ձեռք բերել դաշնա, ինչպէս որ ձեռք բերած էր քաղաքի եկեղեցիներուն գումարները:

Գ. Խալիպեանին վերայ պարտք հաշուել էին շահովը հանդերձ նաև այն 15 հաղար բուպլին, զոր հանգուցեալ Կաթողիկոսը ապահանջել էր, և նա չուղարկել էր Թիֆլիզ (1):

(1) Երբոր Գաբրիէլ վարդապետը 1863-ին Ա. Լյժիվսկին գնացած էր, հանդուցեալ Ղազար Արքեպիսկոպոսը ասաց իրեն այս նշա-

Գ. Խաչկապեանին վերայ պարտք հաշուել էին տոկոսները հանդերձ նաև 18,000 ըուպլի չափ ստակ, զոր նա Ներսէս Կաթողիկոսին հրամանովը ծախք արել էր Նախիջևանի Ս. Խաչ վանքին շինուածքներուն և նորա քովը ընդարձակ պարտէղին վերայ:— Եւ այսպէս Մատթէոս Արքեպիսկոպոսին դրած պատգամաւորները կամ հաշուատես անձինքը իրենց հաշիւները կլիբջայցնէին՝ ասելով թէ Խաչկապեանը պարտական է վճարել Նախիջևանի եկեղեցիներուն 123,551 ըուպլի և 92 կոփ. արծ.

Իսկ Խաչկապեան Յարութիւն Աղայն իւր կողմանէ այս հաշիւը կցուցանէր: Հանդուցեալ Ներսէս Կաթողիկոսին Առաջնորդութեան ժամանակը՝ նորա հրամանովը ինքը Խաչկապեանը 1842 թուականէն մինչև 1845 մեծամեծ դժուարութիւններով, կարելի է ասել՝ թէ նաև չափազանց խստութիւններով ու անդժութիւններով, ժողովել հաւաքել էր 39,187 ըուպլի: Մատթէոս Արքեպիսկոպոսին Առաջնորդութեան ժամանակը, 1845-էն մինչև 1857-ին վերջը, եկեղեցեաց երէցփոխաններէն ընդունել էր 10,263 ըուպլի:

Այս գումարներուն տոկոսիքը մինչև 1856 տարին եղել էր իրեն ձեռքովը 24,050 ըուպլի:

Պատրաստական վողի տոմսակ մի կար՝ 117 ըուպլի և 61 քոփէկ:

նաւոր խոսո. «Նախիջևանցիք որքա՛ն է շորհալու շինին որ Ներսէս Կաթողիկոսին վախճանելուէ՛ր իրենց եկեղեցիներուն գումարները բոլորն ու «Էջմիածին չփոխարուսեցան. վրան զի հանգուցեալ Կաթողիկոսը քրտծ էր «Ենչ թիւքլիքէն լէ ան՝ առ այժմ 15,000 մանէլ. առ Սալիպեան «Յարութիւն Աղայն և իյողարի՛նձ առ չեղ. քրտծ է՛մ առ Յարութիւն «Աղայն որ հեթ ոչեթէ յաղարի՛նչ ինչ ճիւտ գումարներն ևս՝ հինգ հինգ հազար «մանէլ իւրաւանիւր լող լաթերով: Ելէ Կաթողիկոսը այն դարին չվախ «ճանէր, մինչև 1857-ն վերջերը բովանդա՛ն գումարները անարարունչս իս «քային Էջմիածին:»

Ս. Խաչ վանքին արդիւնքներէն իւր քովը հաւաքուած՝ 3,500 ըուպլի:

Որով ըովանդակ գումարը կլինէր 83,981 ըուպլի և 19 քոփ. արծ. :

Այս երկու տեսակ հաշիւները տեղն ի տեղը քննելով ու համեմատելով, Գաբրիէլ վարդապետը այսպէս գատեց՝ թէ

Նախ, չափազանց խստութիւն՝ մանաւանդ թէ անիրաւութիւն էր պահանջել Խաչկապեանէն 100-ին 6 շահը, և տարուէ տարե շահը շահին վերայ դարնել՝ նոյնպէս 100-ին 6, մինչդեռ հանդուցեալ Կաթողիկոսն այն գումարները չանձնել էր իրեն իբրև աւանդ (էմանէլ)՝ անկորուստ պահպանելու մտքով, ինչպէս որ կերևի Հանդուցելոյն բաղմաթիւ կոնդակներէն: Եւ եթէ նա կաթողիկոսին այնպիսի կարգադրութեանը չնայելով՝ իւր կողմանէ այն գումարներուն ևս տոկոսիքը կցուցանէր 24,050 ըուպլի, այդ դործը,—նորա խօսքերուն նայելով—իւր հաւատարմութեանը և առատաձեռնութեանը միայն հեռեանքն էր, և ոչ թէ ճիշդ պարտականութիւն:

Նրկորդ, թէպէտ և ըստ ինքեան ասօրինաւոր և անկարգ բան էր վիճակի գումարները ո՛ր և իցէ կերպով օտարացընել, կամ նաև ի սուրբ Աթոռն անցընելը՝ առանց ստիպողական հարկի, սակայն անկարելի էր Խաչկապեանին պարտք համարել այն 15,000 ըուպլին՝ զոր նա չուղարկել էր Ներսէս Կաթողիկոսին, և որոց անդորրագիրը կամ ընդունելութեան մուրհակը ձեռքն էր:

Նրկորդ, անկարելի կերևէր պահանջել իրմէ Ս. Խաչ վանքին շինուածոց վերայ արած ծախքերը, որովհետև այն շինքերն և պարտէղը կեցած են, և նոցա վերայ եղած ծախքերը հաշուելը դիւրին էր:

Չորրորդ, անիրաւութիւն կերևէր պահանջել Խաչկապեանէն այն գումարները՝ որ կա՛մ իրեն չանձնուած

չին, և կամ նորա աշխարհի խոստովեամբ արած պահանջներն քննելն և տալն ևս մէկուն մէկալն ձեռքը մնացել և անյուշապի առնելն քննելուն կարգն անցել էին:

Հինգերորդ, ևս տուաւ անխրատութիւն կերեկէր այն դրամներուն շահը պահանջելը, շահին ալ շահը, մինչդեռ չայտնի էր Սալիպեանին մեծ ջանքը և աշխատութիւնը՝ եկեղեցական դրամները ձեռք բերելու, անխորտապ պահելու և շահեցնելու համար:

Սուքա այսպէս գտնելով՝ Գաբրիէլ վարդապետը յունիս ամսոյ 22-ին իւր իջևանը հրաւրեց Նախիջևանի ամենայն եկեղեցեաց երէցփոխանները, քաղաքապետը, դատարանին՝ այսինքն հաստատակները, եկեղեցական դրամոց հաշիւները նայելու համար որոշուած պատգամաւորները և ուրիշ քառասունի չափ պատուաւոր ժողովրդականք:

Սրբոր ամէնքը ժողովեցան, առաջ խօսեցաւ և նկարագրեց ժողովականաց առջևը քաղաքին ցաւալի երկպառակութիւնը՝ որ մեծ արգելք էր քաղաքացւոց ամէն տեսակ շառաւղափնութեանը: Հասկացուց նոցա՝ թէ իւր պարտքն է այն վնասակար դժտութիւնը վերցնել ժողովրդեան մէջէն, ինչպէս որ ցանկալի էր նոցն իսկ քաղաքացւոց՝ թէ՛ հարուստներուն, թէ՛ միջակներուն և թէ՛ աղքատներուն: Յետոյ բացատրեց նոցա առջևը թէ ինքը ինչպէս հասկացել է այն խնդրոյն սկիզբը և շառաւղանալը, և այժմ ինչ վիճակի մէջ գրտնուելը: — Այս ասելէն չետոյ՝ հարցուց ժողովրդականաց թէ արդեօք ճիշդ կերպով և անաչառ դատողութեամբ հասկացել են երկու կողմին ևս իրաւունքներն ու պատճառները: Սրբոր նոքա միաբերան վկայեցին թէ տարակոյս չկայ որ ինչպէս պէտք է տեղեկացել է խնդրոյն ամէն պարագայիցը, դարձեալ խօսեցաւ ու հասկացուց նոցա որ թէ այն խնդիրը խաղաղութեամբ չվերջանայ, անտարակոյս շատ ցաւալի ու վնասակար

հետևանքներ պիտի ունենայ: Համոզիչ խօսքերով առաջարկեց ժողովոյն որ մէկ ժամ առաջ վերջացնեն այն վէճը, հաշտուին միմեանց հետ, և իրեն պէս իրենց հաւանութիւնը տան՝ մէկ կողմանէ այն ջանքին զոր հաշուատես որոշուած անձինքը ի դործ դրել են՝ իրենց պարտքը կատարելու մտօք, այսինքն մանրամասնաբար քննել են ամենայն հաշիւները՝ ըստ հրամանի Առաջնորդին, և միւս կողմանէ ընդունին այն հաշիւները որ կուտար Սալիպեան Յարութիւն Ադան:

Կաւ դիտէր Առաջնորդը՝ թէ այսպիսի վէճերու մէջ տարածանութեան բուն պատճառը վերնալէն չետոյ ևս՝ շատ անդամ մէկ կամ միւս կուտակցութեան սիրտը շուտով ու բոլորովին չէ կարող հանգչել, մանաւանդ երբոր դատապարտելի համարուած կողմը՝ քննութեան մէջէն անդատապարտ ելնէ: Բաց չայնմանէ ըստ բաւականին տեղեկացել էր վարդապետը որ Սալիպեան Յարութիւն Ադան տասն և հինգ տարի Նախիջևանի քաղաքապետն եղած լինելով, այն միջոցին իւր խնտութեամբն ու չափի դուրս անաչառութեամբը քաղաքացւոց մեծ մասին սիրտը ցաւցուցած էր, իսկ եկեղեցական փողերը հին երէցփոխաններու և ուրիշ վաճառականներու ձեռքէն սաստիկապահանջ կերպերով ձեռք ձգելովը՝ թշնամիներուն ատելութիւնը աւելի զրգռել էր իրեն դէմ. ուստի խղճմտանքին ձեռք չէր տար որ բոլորովին արդարացնէ զՊ. Սալիպեանը ամէն կողմանէ: Խօսք տուաւ ժողովականաց որ թէպէտ և Սալիպեանը թէ՛ իրեն, այսինքն Առաջնորդին, և թէ ժողովականաց կարծեօքը և միաբան վկայութեամբը, ազատ ճանչցուելու է ամենատեսակ պարտքէ եկեղեցական դրամոց խնդրոյն մէջ, սակայն ինքը չանձն կառնու խընդրել Սալիպեանէն որ նա իւր սեպհական ստացուածքէն գոնէ չափաւոր դումար մի տայ Նախիջևանի եկեղ-

դեցեաց իբրև նուէր կամ ընծայ՝ և նշան իւր Հաշտու-  
թեանը և և սէր խաղաղութեան Նախիջևանի:

Վեց ժամ քշեց միակերպ այն խօսակցութիւնը և  
բացատրութիւնները, և այն միջոցին ժողովականաց  
մէջէն երկու երեք անձանց առած առարկութիւնները  
լուծուեցան. յետոյ ամէնքը առհասարակ միախոր-  
հուրդ Հաւանութեամբ ընդունեցան Առաջնորդին վը-  
ճիւղը՝ իբրև իրաւացի դատաստան: Եւ մինչդեռ կարտ-  
րաստուէին ժողովականք ուրախակից լինելու միմեանց  
այն մեծ խնդրոյն արդարութեամբ և չարողութեամբ  
վերջանալուն Համար, Նախիջևանի քաղաքագլուխ՝  
Ալաճալեան Սիմէոն Աղայն, և Հանդուցեաց Բեհնադար-  
եան Յովհաննէս վարդապետը, — որ Առաջնորդին քովը  
նստած էին, — առաջարկեցին որ այն վճիւղը և որոշ-  
մունքը նոյն ժամուն դիր անցուի, և ժողովականք  
ամէնքն ալ ձեռք դնեն նորա: Հաւանեցաւ Առաջ-  
նորդը, և նորա Հեա բոլոր ժողովականք, և իսկոյն  
շարադրուեցաւ դիրը որ էր այս.

«Մեք ներքոյ գրեալքս առաջաւորք ժողովրդեան Նախիջևանի,  
«Քաղաքական Գլխով Հանդերձ, և դատաւորք և երէցփոխանք  
«Եկեղեցեաց քաղաքիս, և հին և նոր պատգամաւորք ընտրեալք և  
«Կարգեալք և քննութիւն Հաշտոց Եկեղեցական դրամոց պա-  
«Հանջեոյ կամ պահանջելեաց և Յարութիւն Աղայէ Խալիպեան,  
«Ժողովեալք և խորհուրդ այսօր և 22 ամսոյս Յունիսի 1858 ամի  
«Ե Տեղակալէ Առաջնորդութեան վիճակիս Նախիջևանի և Պեսա-  
«բասիոյ, յետ ըսելոյ զխորժիս և զխորհուրդս նորա՝ հաւանեցաք  
«և հաւանութիւն, զի այս խնդիր Եկեղեցական դրամոց պահանջելեաց  
«Ե Յարութիւն Աղայէ Խալիպեան՝ աւարտեցի քորսովն և անբար-  
«եղանակաւ՝ ըստ առաջարկութեան նորին Տեղակալ Հօր, այսինքն  
«Հաշտութեամբ և խաղաղութեամբ, դադարելով այսուհետեւ յա-  
«մենայն հակառակութեանց և յընդդիմաբանութեանց և վիճ-  
«մանց, մտտալ գոլով թէ և Աղա Յարութիւնն Պողոսեան Խալի-  
«պեանց՝ ըստ խոստմանն տուելոյ յինքնէ հաստատութեամբ  
«Գերապատիւ Տեղակալ Առաջնորդութեան վիճակիս՝ դադարեցէ  
«յիւրմէ կողմանէ յամենայն հակառակութեանէ, և յետս առցէ  
«յամենայն դատաստանական տեղեաց զոր և եցէ բողոք իւր և

«զգրուած՝ զոր տուեալ եցէ ընդդէմ՝ սրբազան Արքեպիսկոպոսին  
«Մատթէոսի նախկին Առաջնորդի վիճակիս, և կամ ընդդէմ պատ-  
«գամաւորաց ընտրելոց հրամանաւ նորա, և ընդդէմ ո՛ւր և եցէ  
«Ե գոտիոյն և քննութեան այսր խնդրոյ: Վստալ կմք և ևս, զի  
«ըստ երաշխաւորելոյ Գերապատիւ Տեղակալի Առաջնորդութեանս՝  
«Յարութիւն Աղա Խալիպեանցն ևս յիւրմէ կողմանէ յաւելցէ ինչ  
«յօդուտ եկեղեցեաց վիճակիս՝ ըստ արժանի իւրու մն առատա-  
«ձեւութեան, և այն՝ ի նշան Հաշտութեան, սիրոյ և խաղաղու-  
«թեան: Յաղաղս այսր ամենայնի և ստորագրեմք,

- «Երէցիփի Ստեփան Նաթալով.
- «Երէցիփի Գէորդ Խաթրանեանց.
- «Երէցիփի Թադէոս Քէօլլէ—Շահինեանց.
- «Երէցիփի Քերովրէ Յովհաննէսեան Չուչուիեանց.
- «Երէցիփի Մատթէոս Երէցիփիսեանց.
- «Մեքայէլ Տրապիզոնցոյ, դատաւոր.
- «Կարապետ Կողպէթով.
- «Սերոբէ Չուչուիփ.
- «Կարապետ Բորով.
- «Մանուկ Ասլատուրով.
- «Յակոբ Խըլաճիեան.
- «Նիքիզ Մուրատով.
- «Սարգիս Թամանցով.
- «Յովհաննէս Թուֆլիկեանց.
- «Դատաւոր Ասլատուր Սալթիքով.
- «Քանտիաթ Մալխով.
- «Հիմնաւոր Հաշտութեան յօժար եւ Կարապետ Հայրապետեանց.
- «Եւս՝ Գրիգոր Մալթիքով.
- «Մանուէլ Փոփով.
- «Յակոբ Հալլաճեան.
- «Պետրոս Սախաւով.
- «Լոյսպարոն Սալթիքով.
- «Մանուկ Ալաճալով.
- «Նիքիթ Կոկոյեփ.
- «Աստուածատուր Խալալով.
- «Գալուստ Խաճաճով.
- «Աղապապ Նիկողոսով.
- «Կարապետ Շըլթով.
- «Պաղտասար Պալեօզ.
- «Սարգիս Ալաճալեանց.

- «Միքիթ Պապասինով.
- «Միքտիչ Խաչկուռուզեանց.
- «Նդիազար Պետրոսեան Պապասինով.
- «Թիթուլեանի Սովեթներ, Յարութիւն Աւագով.
- «Ալեքսան Աւաճալով.
- «Խաչատուր Պողոսով.
- «Սաղաթիէլ Քայալով.
- «Նիկողայոս Աճ'էմով.
- «Վարդերես Միքայէլ Զէթունով.
- «Վաճառահան Պետրոս Քայալով.
- «Վաճառահան Պետրոս Շուպարնով.
- «Հիմնաւոր Հաշտութեան յօժար եմ Դանիէլ Քաւաքաշ»:

Չեմք կարող լուծեամբ անցնիլ այս տեղ այս պա-  
րագան որ Մատթէոս Արքեպիսկոպոսէն Հաշուատես  
որոշուած անձինքը, — գէթ երկուսը կամ երեքը, —  
թէպէտ և նախընթաց խօսակցութեանց մէջ դժուա-  
րութիւն չէին հանած, կամ առարկութիւն չէին արած  
Առաջնորդին առաջարկութեանը դէմ, — բայց երբ  
այն դրոշն ձեռք դնելու եկաւ բանը, փոքր ինչ դը-  
ժուարութիւններ ցցուցին, և ջանուանէ Հաշտապետեան  
Կարապետ Աղան, անտարակոչս դուշակելով որ այն  
Հաշտութիւնը Հաստատուն և անկեղծ պիտի չլինի:  
Բայց երբ Առաջնորդը յայտնապէս ասաց նորա՝ թէ  
չատ գալթակղական և վնասակար Հետեանք կարող է  
ունենալ նորա և ընկերացը այն թղթին ասանց պարձառի  
ձեռք չդնելը, ջանձն առաւ ստորագրել և ստորագրեց,  
միայն թէ արժան Համարեցաւ այսպիսի չաւելուած մի  
դնել իւր կողմանէ. Կիսաւոր Հաշտութեան յօժար եմ, և այլն:  
Նորա ետեւէն միւս Հաշուատեսներն ևս ստորագրեցին,  
և բոլոր ժողովականք Առաջնորդին շնորհակալութիւնն  
ու բարեմաղթութիւնները ընդունելով՝ ուրախութեամբ  
դարձան իրենց տները: Եւ թէպէտ կէս դելերն արդէն  
անցած էր, բայց կարելի է ասել՝ թէ բոլոր քաղաքը  
ոտքի վերայ էր, և ամէնքը մեծ անհանգստութեամբ  
կապատէին իմանալ թէ ինչպէս պիտի վերջանայ այն

ժողովը: Գուրաբ փողոցին ու Հրապարակին մէջ ևս  
խիտ շատ բազմութիւն կեցած կապատէր:

Երկրորդ առաւօտը շատ մարդիկ եկան Առաջնորդին  
իրենց շնորհակալութիւնը յայտնեցին այն ցանկալի  
խաղաղութեան իրենց մէջ Հաստատուելուն Համար:  
Եկաւ նաև Խալիպեան Յարութիւն Աղայն, — որ իւր  
ատկական անձնասիրութիւնը այս պարագայիս մէջ ևս  
ցուցնելով՝ ժողովոյն ներկայ լինել չէր կամեցած, —  
և երբ լսեց Առաջնորդէն ժողովոյն դատաստանը և  
որոշմունքը, ինքն ևս շնորհակալ եղաւ, և զանազան  
խօսքերէ ու խորհրդածութիւններէ վերջը խնդրեց որ  
առաջիկայ Հինգշաբթի օրը ժամաբար լինի Առաջնորդը  
Մայր եկեղեցին, և չետոյ իւր տունը Հրամայէ չայլ,  
ուր պիտի Հրաւիրուին՝ ասաց՝ նաև քանի մի առաջա-  
ւորներ:

Պ. Խալիպեանը դեռ առաջնորդին սենեկին մէջ  
նորա Հետ խօսած ժամանակին ոչ սակաւ դժկամակու-  
թիւն ցցուց ընդունելու այն առաջարկութիւնը՝ զոր  
արաւ իրեն Առաջնորդը, այսինքն թէ դոնէ չափաւոր  
դումար մի (առանց ճիշդ որոշելու) նուրիս Նախընթացի  
եկեղեցեաց, ոչ թէ երբև պարտք, այլ երբև ընծայ՝ և  
Հաստատութիւն և ի նշան խաղաղութեան և սիրոյ.  
Առաջնորդին չորդորանքովը վերջապէս Հաւանե-  
ցաւ, և խոստացաւ որ Ս. Խաչ վանքին մէջ եկեղե-  
ցական Գնդատուն մի կանգնէ իւր սեպհական փողովը:  
Այս զիջումը մեծ ուրախութիւն պատճառեց Առաջ-  
նորդին, վասն զի նա կատարեալ վստահութիւն չունէր  
որ կարողանայ դիւրաւ Համոզել Խալիպեանը իւր առա-  
ջարկութեանը, թէպէտ և ժողովոյն մէջ յայտնի խօս-  
քերով երաշխաւոր եղած էր այս բանիս: — Եւ թէ  
մինչև ցայժմ անկատար մնաց Յարութիւն Աղայն այն  
խոստմունքը, դիւրաւոր պատճառն էր, ինչպէս որ շատ  
անգամ ասած ու դրով ալ տուած էր, անսնելն որ եկե-

ղեցական բարձրագոյն իշխանաւորները ծուռ կնային Գարբիէլ վարդապետին գործերուն վերայ. ուստի և ջանաց որ փոխանակ Նախիջևանի վանքին մէջ նոր դըպրոց հիմնելու, Թէոդոսիոյ մէջ արդէն հիմնուածը պահպանէ, ինչպէս որ այս բանը յետոյ ևս պիտի տեսնենք:

### Գ Լ Ո Ւ Խ Ե .

Նախիջևանի եկեղեցական դրամոց խնդրոյն որոշման հաստատութիւնը ի Տէրութենէն եւ Ս. Էջմիածնայ Սինոդէն:

Գարբիէլ վարդապետը այն նշանաւոր խնդիրը վերջացընելէն ետեւ, յունիսի 25-ին Թուղթ գրեց առ Վսեմաւիպլ Ոստիկանն Ներքին Գործոց, որոց պատասխանն ևս ընդունեցաւ Ոստիկանէն այս խօսքերով.

«Տեսայ Ձեր Գերապատուութեան 16 համարով գրած յայտարարական Թղթին, և հետը յուղարկած գրաւոր վաւերագրէն՝ Թէ ինչպէս Պատուաւոր Խորհրդական Պ. Խալիպեանցին «քով հանդուցեալ Ներսէս Կաթուղիկոսին կարգադրութեամբը «զանուած այդ Ձեր վիճակին դումարներուն դործը և պահանջումները՝ որ կլինէր անտի բաւական երկար ժամանակէ ի վեր, «Ձեր հասկացումը և հանգամանաց բոլորովին յարմար հրահարելը խաղաղական վերջաւորութիւն ունեցել է. սորա համար «քաղցր պարտականութիւն կհամարեմ ինձ յայտնել իմ առանձին «շնորհակալութիւնս՝ Ձեր այդ քրիստոնէական սիրադործութեանը համար: Միանգամայն այս ևս կյայտնեմ Ձեր Գերապատուութեանը որ Ձեր այսպիսի մեծակշիւ խնդիրը յաջողութեամբ «աւարտելուն համար, որ Նախիջևանի և Պեսարապիոյ վիճակին «բարեկարգութեանը արդէլք եղող պատճառներէն մէկն էր, արդէն ծանուցի և Ընդհանրական Կուսակալին նոր Ռուսիոյ և «Պեսարապիոյ, անտարախոյս դուրով որ նա իւր կողմանէ նոյնպէս «իրաւունք կուտայ Ձեր լուսաւորեալ ջանքերուն յօգուտ Ձեր «կառավարութեանը տակ դանուած վիճակին, և զանց չաներ իւր

«իշխանութենէն կախուած միջոցներովը դործակից և օղնական «լինել Ձեզ—Արժանքնաւոր Հովուապետիդ—նաև Ձեր առաջնիայ «այլ և այլ ձեռնարկութեանցը մէջ՝ ի բարեկարգութիւն ծանօթակշիւ դործոց վիճակիդ:»

Քանի մի օրէն ընդունեցաւ Գարբիէլ վարդապետը նաև նոր Ռուսիոյ և Պեսարապիոյ կուսակալ Կոմս Սթրոկոնովէն շնորհակալութեան Թուղթ՝ հետեւեալ կերպով գրուած.

«Յատկական հաճութեամբ տեղեկացայ Ձեր Գերապատուութեան յունիսի 28-ին 18 համարով գրած յարգելի գրութենէն, «որ հանդուցեալ Ներսէս Կաթուղիկոսին և Ձեր նախորդին մէջ «անձեռնական ներհակութեամբ յաւաքացած վէճը, որ ծագել էր «այն եկեղեցական դումարներուն համար որ Նախիջևանի Ժողովուրդը կպահանջէր «ասիականաւոր Խալիպեանցէն, խաղաղութեամբ վերջացել է: Սորա համար չեմ կարող չայտնել այստեղ «իմ կարծիքս որ Նախիջևանի Հայ Ժողովուրդեան և Խալիպեանցին «մէջ եղած խնդիրը՝ միայն Ձեր բարեբար և խաղաղասէր միջնորդութեամբը կարող էր այնպիսի բարեյաջող կերպով վերջանալ. «խնդիր մի որ այնչափ երկար ժամանակէ ի վեր կվերապէր Նախիջևանի Հայոց խաղաղութիւնը և միաբանութիւնը, զրկել անվերջանալի երկպառակութիւն մի սերմաներով նոցա մէջ:»

Իսկ Թալաշի քաղաքապետն այս խօսքերով յայտնեց Գարբիէլ վարդապետին իւր շնորհակալութիւնը.

«Որքան որ մեծ էր սրտիս ցաւը այն դժտուութեանց համար, «որ աստի առաջ տարածայնութեան և երկպառակութեան կրակը «վառել էին Նախիջևանի Հայկազուն Ժողովուրդոցը մէջ՝ այն եկեղեցական դումարաց հաշիւներուն պատճառաւ որ կպահանջուէին Պ. Խալիպեանցէն, և այն անմիաբանութեանց և հակառակութեանց վերայ՝ որ ի մնաս էին նոյն Ժողովուրդեան, և կերպով մի կնստմանցընէին ի Տէր հանդուցեալ արժանաւոր Հովուապետին և ամենայն Հայոց Կաթուղիկոսին Ներսէսի յիշատակը, — «ենոյնչափ ևս ուրախալի է ինձ Նախիջևանի Ժողովուրդեան այժմու «հաշտութեան համբաւը լսելու: Նորա համար որ իմ կողմանէ ըստ «պարտականութեանս ամենայն հնարք ի գործ դնելէն յետոյ՝ քիչ «չոյս կտեսնէի առջևս այդպիսի միանգամայն արդարութեան «վերայ հաստատուած ընթացք մի տալու Պ. Խալիպեանցին հաշիւներուն մասին յաւաքացած խնդրոյն. ուստի և բոլորովին համաձայն եմ Ձեր Գերապատուութեան յունիսի 30-ին 19 համարով

«առ իս ուղղած տեղեկադրոյն բացատրած կարծեացը, և Ձեր այս «գործոյն աւարտմանը վերայ արած կարգադրութիւններուն ար- «դարացի և բարեբար լինելը ճանաչելով՝ փառք կուտամ Աս- «տուծոյ որ օղնեց Ձեզ՝ խաղաղարար Հովիւ հանդիսանալու մն- «լորեալ հօտին, սորա համար իմ ուրախակցութիւնս մատուցա- «նելով Ձեզ և ամենայն ժողովրդեան՝ կյանձնեմ զիս Ձեր աղօ- «թիցը»:

Ս. Էջմիածնաց Սիւնհոգոսն ալ այս կերպով չաչանեց իւր խնդակցութիւնն ու շնորհակալութիւնը՝ 1836 Թուահամարով:

«Ի Սինոդի սրբոյ Էջմիածնի լուան զյայտարարութիւն Ձերդ «Բարձր Արժանապատուութեան ի 1-ն Յուլիսի ներկայ ամի հա- «մարաւ 20, որ յաղագս վերջաւարելոյ ձեր զհաշիւս եկեղեցական «զբաժնոց դատնեցելոց առ աստիճանաւոր Յարութիւն Ազայն «Խալիպեան, և դտեղեկութիւնս ի գործոց Սինոդիս, հրամայիցին, «զայս յայտարարութիւն Ձերդ Բարձր Արժանապատուութեան «հանդերձ պատճենիւ հաշտադրութեան Հայոց Նոր Նախիջևանու «ընկալեալ ի ծանօթութիւն Սինոդիս՝ կցել ընդ գործոյն, այլ և «յայտնել Ձեզ զԽորհրդի Գործադրութեան վարս արեւմտիս և յաւարտից՝ «Հաշտոց եկեղեցական դումարաց՝ դատնեցելոց առ ազնուական «Խալիպեանն, և այնու մերժելով ի միջոյ Հայազգեացն Նոր Նա- «խիջևանու զիրձինն բազմաժամանակեայ խառնութեանց, անելով «զնոսա ի հաշտութիւն խաղաղութեան և քրիստոնէավայելն սի- «բոյ, նոյնպէս և բառնարոյ դաւիթս գժտութեանց յարուցելոց «ըստ այսմ աւարկայի ընդ մէջ Պ. Խալիպոյի և նախկին Ա- «ռաջնորդի տեղոյն Մատթէոս Արքեպիսկոպոսի ընդ նմին Սի- «նոդս պարտ վարիանի ծանուցանել Բարձու Արժանապատու- «թեան Ձերում, թէ ամենայն Գործի Գործադրութեան Ձեր, թէ՛ «յայսմ մասին և թէ՛ յայլ սոյնօրինակ գործս վերաբերեալս օգակ «սարբոյ եկեղեցոյն և ձեզ հաւատացեալ հօտին, շնորհ իմ Բնա- «տնորդի աստուծի ծայրագոյն Հոգիորդ իշխանութեան խորհրդի: Ի 2 սեպտեմ- «բերի յամի փրկչական 1858 և աղգական ՌՅԷ, ի Ս. Էջմիածին»:

Այսպէս ահա վերջացաւ այն խնդիրն որ այն մի- ջոցին Նախիջևանի և Պեսարապիտոյ վիճակին խնդիրնե- լուն ամենէն մեծն էր: Բայց ցաւալին այս է որ քիչ ժամանակէն դարձեալ գրգռեցին զայն քանի մի ան- Հանդարտ անձինք, որոց բանին ձեռք չէր տար խընդ-

րոյն այնպէս խաղաղութեամբ և սիրով վերջանալը: Կարելի է համարձակ ասել թէ նոցա արած վէճը ոչ այնչափ նորա համար էր որ իբր թէ սաստիկ նախան- ձաւորէին իրենց եկեղեցիներուն ստացուածքին ամ- ըտոջ պահպանութեանը, կամ թէ միտք ունէին այն փողերը գործածելու ի պայծառութիւն եկեղեցեաց և ուսումնարանաց, որքան սորա համար որ չարմար ա- ութ էր այն վէճը իրենց ձեռքը՝ որ Խալիպեանին դէմ էնչ իրաւացի կամ անիրաւ իս և ասելութիւն որ ունէին շատ տարիներէ ի վեր, այն կրքերնին կշտացը- նեն: Այսու ամենայնիւ մէկ երկու տարի լուռ կեցան, որովհետեւ թէ՛ Տէրութիւնը և թէ Սինոդը այն խըն- դերը վերջացուց ի համարէն՝ ըստ ամենայն արդարութեան և իրաւանց: Իսկ թէ չետոյ էնչ կերպով ուղեցին նորէն գրգռել այն հակառակութիւնները, ըստ ժամանակին տեղովը կպատմենք:

Պ Լ Ո Ւ Խ Զ.

Խալիպեան Առումնարանին սկզբնաւորութեան տառար- կութիւնը և որոշմանը:

Նախիջևանի եկեղեցեաց գումարներուն խնդիրը եր- բոր վերջացաւ, ինչպէս որ ասացինք, նորա չորրորդ օրը՝ Առաջնորդը Ս. Լուսաւորաց մայր եկեղեցոյն մէջ ժա- մարար լինելով՝ ատենախօսութիւն ևս արաւ ժողո- վրդեան, չորում չաչտնեց նոցա իրեն ուրախակցու- թիւնը՝ որ վերջապէս խաղաղութիւն պտաւ քաղաքը, և սիրոյ և միաբանութեան ու կատարեալ հաշտութեան սկզբնաւորութիւնն եղաւ իրենց մէջ:

Սուրբ պատարագէն վերջը գնաց ուղղակի Խալի-

պեան Յարութիւն Աղային տունը, ուր ժողովեցան քաղաքագլուխը և 12 կամ 13 իշխանաւորներ: Նոցա առջևը Պ. Խալիպեանը դարձեալ շնորհակալ եղաւ Առաջնորդին որ եկեղեցական գումարներուն խնդիրը այնպէս արդարութեամբ և խաղաղութեամբ վերջացուց. նորոգեց նաև այն խոստմունքը որ արած էր՝ Ս. Խաչ վանքին մէջ եկեղեցական դպրատուն բանալու, ևս և յետս կոչելու այն գանգատագիրը զոր տուած էր Տէրութեան՝ իւր Հակառակորդներուն վերայ, և պահանջած էր նոցանէ փոխարէն Հասուցումն այն դրամական մեծամեծ վնասներուն՝ զոր քաշել էր նոցա իրեն դէմ բացած կռիւներուն պատճառաւ: Յետոյ ասաց Առաջնորդին. «Այժմ մէկ նոր առաջարկութիւն մի ունիմ Ձեր Սրբութեանն անելու այս իշխանաւորաց առջևը: Լսել եմ որ դուք դիտաւորութիւն ունիք և Տէրութենէն Հրաման արած էք աղգային Աստուծոյն բանալու ի Թէոդոսիա. կուզեմ որ այն Աստուծոյն ինչպէս ի վերջը ես կանգնեմ իմ սեպհական փողովս, և նորա «ճախքը՝ զոր կհաշուեմ 50,000 ըուպլի արծաթ, այժմ «իսկ կհամրեմ ձեր առջևը: Այս փողը ձեր և իմ կնքովս «կնքուած կմնայ մօտս՝ մինչև որ Աստուծոյն ինչպէս «ցուելուն Համար պէտք եղած Կայսերական վճիռը կամ «Հրովարտակը ընդունիք:—Այս աղաներն ալ գիտեն որ «ես վաղուց միտք ունի եք քաղաքիս վայելուչ մէկ կողմը «իմ անունովս Հիւանդանոց և աղքատանոց կանգնել «Հանդերձ եկեղեցիով և ամէն պարագաներով. և այս «շինուածքներուն յատակագիծը և ձևը (պլան) առաջարկել է Ներքին Գործոց Ոստիկանին, որ այն ժամանակը Փերովսքին էր: Այնչափ երկարեցան Ոստիկանաբանին Հետ ունեցած թղթակցութիւններս որ ես՝ առանց իմ բաղձանքիս բողոքովին ետ կենալու՝ ճանձրացայ, և դիտաւորութեանս գործադրութիւնը Աստուծոյ կամացը չանձնելով ուրիշ չարմար ժամանակի

«Թողուցի: Արդ կտեսնեմ որ Աստուած կամեցել է որ «գէթ առ այժմ այն շինուածքին Համար ծախելու «փողիս գոնէ մեծ մասը ձեր ձեռքովը ի գործ դրուի «աղգային Աստուծոյն ինչպէս վերայ: Միայն թէ ես այս «նուէրը երկու պայմանով կանեմ. մէկը այս՝ որ Աստուծոյն «ստուծոյն իմ անունովս ասուի Սուրբ Ոստիկանս, «և երկրորդը այս՝ որ մէջը 20 աշակերտ ձրի ուսում «առնուն, և նորա ասուին Սուրբ Ոստիկանս»:

Այս խօսքերը և առաջարկութիւնը լսելով, թէ՛ Գարբիէլ վարդապետը և թէ՛ այնտեղ գտնուող իշխանները չէին գիտեր թէ ի՞նչ կերպով յայտնեն Յարութիւն Աղային իրենց ուրախութիւնը և շնորհակալութիւնը, որ այնպիսի սակաւագիւտ առատաձեւութեամբ մեծ և օդտակար բարերարութիւն կանէր բովանդակ ազգիս Հայոց:

Ոչ այն միջոցին, և ոչ յետոյ երկար ժամանակ՝ չանցաւ մէկուն մտքին ու չսուեցաւ մէկուն բերանէն՝ թէ այն աղգային Աստուծոյն ինչո՞ւ է Թէոդոսիա պիտի շինուէր, և ոչ ի Նախիջևան. վասն զի ամէնքն ալ գիտէին թէ Կայսերական վճռով Առաջնորդարանը Հաստատուած էր արդէն ի Թէոդոսիա, և Աստուծոյն պիտի բացուէր և կառավարուէր Առաջնորդին վերատեսչութեամբը ի Թէոդոսիա:

Գարբիէլ վարդապետը սաստիկ ուրախացած այն միջոցին՝ այս ամենահարկաւոր բանն ևս անհոգացաւ. Հարցանելու բարերարին՝ թէ այն 20 Սուրբ Ոստիկանս որ ձրիաբար պիտի կրթուին Աստուծոյն ինչպէս մէջ՝ ի՞նչ փողով պիտի առնուն իրենց ուսումն ու կրթութիւնը: Եւ չհարցանելուն մէկ պատճառը եթէ անհեռատութիւն կամ մոռացութիւն Համարիմբ, մէկ պատճառն ևս այն էր որ կարծել էր թէ—ինչպէս որ բնականէ—Խալիպեան իշխանը հարկաւ նոցա Համար դատ գրամագլուխ պիտի սահմանէ, որ նորա եկամու-

տողը սնանկն ու դաստիարակունին Խալիպեան սաները: Այն ուրախութեան միջոցին բերաւ Խալիպեան իշխանը 50,000 ռուպլին և Համրեց Առաջնորդին ու ժողովականաց առջևը, և էին ամէնքն ալ «հոյ» ունէի ըստած տոմսակներ. չետոյ այն դումարը կնքուեցաւ նորա և վարդապետին կնիքներովը, և նոյն տեղը այս դործողութեան վաւերագիրը շարադրուեցաւ, և ժողովականներուն ստորագրութեամբը Հաստատուեցաւ, և այս է վաւերագրին պատճէնը.

«Նս ներքոյ գրեալս Յարութիւն Պողոսեան Խալիպեանց, Թիւթուլեանի Սոյնթիք Նախիջևանցի, յանձն արարի և առնեմ «այսօր Գերապատիւ Տեղակալի Առաջնորդութեան միճակիս Նախիջևանի և Պեսարայիոյ՝ Տեառն Գարբիէլի վարդապետի Այվաղեան զգումար քառասուն և հինգ հազար և քսան ռուպլի «արծաթոյ՝ «հոյ» ունէի անուանեալ տոմսակօք, որոց ըստանդակութիւնն հանդերձ շահուք մինչև ցիլերջ 1858 տարւոյս՝ լինի շրջապի արծաթի յիսուս հողոր: Այս գումար սահմանեալ է լինէն շի ծախս կառուցման Ուսումնարանին Թէոդոսիա քաղաքի ի ձեռն շնորին Գերապատիւ Տեղակալի միճակիս, այսու պայմանօք. Ա, «Զի ուսումնարանն այն կոչեցի խալիպեան ուսումնարանն ազգի» Հոյ. Բ, «Զի աղքատ աշակերտք 20 դաստիարակեցին յայնմ Ուսումնարանի ընդ անուամբ խալիպեան ունից. Գ, «Զի գումարս այս շիացցէ մնացցէ առ այժմ առ իս կնքեալ առաջի վկայից կնքով շնորին Տեառն Գարբիէլի վարդապետի Այվաղեան և իմ, մինչև շիցցէ կայսերական կրօնարտակն բացման Խալիպեան Ուսումնարանին: Միանգամայն խոստացայ և խոստանամ կառուցանել շիմովը առանձին ծախուք և եկեղեցի մի ի դաւթի Ուսումնարանին այնտեղի, և զչափ ծախուցն և զայլ հանգամանս շինութեան «այնք եկեղեցւոյ՝ ըստայտեցից նմին Գերապատիւ Տեղակալի «Առաջնորդութեան միճակիս ի դէպ ժամանակիս — Ի Հաստատութիւն այսր ամենայնի ստորագրեմ, և կնքեալ իմով կնքով առաջի «վկայից աւանդեմ զմուրհակս զայս նմին Գերապատիւ Տեառն «Գարբիէլի վարդապետի Այվաղեան այսօր ի 26 յունիսի 1858 «ամի, և ի Հայոց Թուականիս ՌՅԷ, յաստուածապազ քաղաքիս «Նոր Նախիջևան որ առ Տօն զետով:

«Թիթուլեանի Սոյնթիք Արթեմ Խալիպով.  
«Ներկայ դտաք և վկայեմք, Յովհաննէս վարդապետ Բեկնադարեան.  
«Վերջոյգրեալ աւանդութեանը վկայեմ Թիդուլեանի Սոյնթիք  
«Ստեփան Նաթալով.

«Խորհրդական Պետութեան Յարութիւն Աւագեան.  
«Նախիջևանայ քաղաքական գլուխ Սիմէոն Ալաճաւեանց.

- «Վաճառականք, Գէորգ Խաթրանով.  
— Մէրէթ Կոկոյեւ.  
— Մանուկ Ալաճաւով.  
— Սերբէ Զորջոյիով.  
— Կարապետ Փոփով.  
— Քերբէ Զորջոյեանց.  
— Ալեքսան Ալաճաւով.  
— Գրեգոր Զէյթինով.  
— Մատթէոս Երէցփոխեանց.  
«Գատաւոր Աստուածատուր Սալթիքով.  
— Թադէոս Քէօլլէ-Շահինեանց»:

S. 4.

Երկրորդ օրը Գարբիէլ վարդապետը խնդրեց պաշտօնական կերպով ծանուցց այս բանս Ներքին Գործոց Առախականին, և ինչպէս որ սոյնըութիւնն է՝ խնդրեց որ կայսերական միճակով Հաստատուի Ուսումնարանին խալիպեան անուանակոչութիւնը, նմանապէս 20 աշակերտաց խալիպեան ասուելը:

Մեծ ուրախութեամբ լսեցին նաև ըտրը Նախիջևանցիք Պ. Խալիպեանի արած առատաձեռնութիւնը, և մառք կուտային Աստուծոյ որ իրենց մէջ եղած Հաշտութեան և խաղաղութեան ցանկալի պտուղները սկսան տեսնուել, զորս այնուհետև պիտի վայելէին թէ՛ իրենք և թէ՛ իրենց որդեքը:

Նոյն օրերը վարդապետին առաջարկութեամբը Հաւանեցաւ Խալիպեան իշխանը որ Ուսումնարանը Տպարան ևս ունենայ, և նորա սկզբնական ծախքն ալ ինքը խոստացաւ մճարել, ինչպէս որ մճարեց չետոյ Տեճ Տառ: Եւ Գարբիէլ վարդապետը իւր կողմանէ առանձին գրով խոստացաւ որ այն տպարանը մշտնջենաւորապէս Խալիպեան Ուսումնարանին սեպհականութիւն Համարուի: Խոստմնադրոյն պատճէնը այս է.

«Յամի Տեառն 1858 յամենան յունիսի, մինչդեռ էի ի Նախիջևան քաղաքի, Ազա Յարութիւն Խալիպեան լուեալ լինէն «զգլխաւորութիւն իմ բանարոյ առ ազգային Ուսումնարանաւն

«Թէոդոսիոյ և զՏպարան աղբային, ինքնայօժար սերով յանձն  
 «էառ ոչ միայն զճախս շինուածոյ Ուսումնարանին այնորիկ յեր-  
 «մէն հասուցանել, և 20 աշակերտս տալ ձրի դաստիարակել ի  
 «նմին ընդ անուամբ Խալիպէան սոնոս, այլ և զպարտն սեպհա-  
 «կանել այնմ Ուսումնարանի՝ իբրև զգործարան օգտակար ի լուսա-  
 «ւորութիւն աղբիս, և իբրև աղբիւր ինչ եկամտից ի նպաստ Ու-  
 «սումնարանին: Վասն որոյ ըստ իմուսն աւաջարկութեան՝ կա-  
 «մակար մտօք խոստացաւ նախ տալ վասն մամլոց և տաւից տպա-  
 «գրութեան ըուպ. արծ. երէն հոգար և հինգ հարիւր. զոր և ետ ի  
 «15 հոկտեմբերի և ի 23 դեկտեմբերի այնր ամի: Ապա հաւանեալ  
 «հասուցանել և զայլ ևս ծախսն գլխաւորս եղեալս ի պատրաս-  
 «տութիւն գործեաց և կահուց Տպարանին, աւանդեաց ի ձեռս  
 «իմ այլ ևս ըուպ. արծ. երէն հոգար և հինգ հարիւր ի  
 «21 մայիսի և ի 22 սեպտեմբերի տարւոյս, որով և եղև ը-  
 «մանդակ զուսման աւատաձեւնեալ ի մեծապատիւ իշխանէն հինգ  
 «հոգար ըուպ. արծութի: Եւ ևս խոստացայ, և սովին զբոլս խոս-  
 «տանամ նմին իշխանի, զի Տպարանն այն ծանկից և անուանեցի  
 «մշտնջենաւորացէս Տպարան Խալիպէան Ուսումնարանին, և որ ինչ  
 «հասք կամ շահք լինիցն անտի՝ յետ հանելոյ զճախս տպագրու-  
 «թեանցն՝ երթիցն անխափան և անպատճառ ի զանձ Խալիպէան  
 «Ուսումնարանին ի նպաստ դաստիարակութեան աղբատ աշակեր-  
 «տաց նորին:

«Աւ Տպարանաւն բացի ի 1 հոկտեմբերի տարւոյս և առան-  
 «ձինն Գրասէնէ՝ ըստ գրաւոր հրամանին զոր ընկալաք ի Պե-  
 «տութենէս, և ի նմա վաճառեցին զբեան և օրագիրք տպագրեալք  
 «աստ և այլուր, և շահքն եղեալք ի վաճառմանէ անտի՝ նոյն-  
 «պէս երթիցն ի նպաստ Խալիպէան Ուսումնարանին՝ յետ հա-  
 «նելոյ զճախսն Գրայաճառութեան:

«Ի հաւատարմութիւն վերողբելոցս ետու զվաւերական զերս  
 «զայս առ Ազա Յարութիւն Խալիպէան ի Թէոդոսիա, ի 23 սեպ-  
 «տեմբերի 1859:

«Գարբէլէ վարդապետ Ա. յվազեան»:

Վարդապետը լիութացաւ՝ քանի որ Նախիջևանէր՝  
 ընտրելու այն տեղէն բաղնաթիւ աշակերտներ, և գլու-  
 խաւորացէս աղբատ եկեղեցականաց որդիք, կամ եկե-  
 ղեցական լինելու փախաք ցուցանող պատանիներ:  
 Միտքը այն էր՝ որ թէպէտ ինքը հրաման ունէր Տէ-  
 րութենէն է՛կեղեցական փողբուսն ճէ՛ ճառը Ուսումնարանին վե-

րաց զործածելու, բայց այս բարիքը բնական կերպով  
 աւելի իրաւունք ունէին վաչկելու եկեղեցականաց որ-  
 դիքը: Իսկ Խալիպէան սաներու ընտրութիւնն ուղեց  
 այնպէս անել իսկզբան՝ որ վիճակին ամէն քաղաքնե-  
 րէն մէկ մէկ աշակերտ ընտրուին, մէկ քանին ևս ա-  
 րեւելքի քաղաքներէն, և մնացեալը դարձեալ Նախի-  
 ջևանէն: Առաջարկուած և ընտրուած աշակերտները  
 բերել տուաւ առջևը, և պատուիրեց Նախիջևանի Հո-  
 դեոր կառավարութեան անդամներուն; որ երբ հրա-  
 ման ցուղարկուի իրենց՝ ճանապարհ դնեն այն տղաքը  
 ի Թէոդոսիա:

Եւ այնպէս ուրախութեամբ և գոհութեամբ դար-  
 ձաւ Թէոդոսիա, որ պատրաստութիւն տեսնէ Ուսում-  
 նարանին և Տպարանին բացուելուն: (1)

**ԳԼՈՒԽ Է.**

Խալիպէան Ուսումնարանին Կայսերական հրամանով հաս-  
 ատուիլը եւ բացուիլը:

Գարբէլէ վարդապետին Նախիջևանէն ճանապարհ  
 ելած օրերը, այսինքն ցուլիսի 4-ին, վճռել էր Վեհա-  
 փառ Կայսրը Թէոդոսիոյ աղբային Ուսումնարանին

(1) Վարդապետին նախորդէս գլուխաւորութեանն ու սուսն ուսումնար-  
 անն իբրէք այս պարտէան՝ որ Նախիջևանի Ենչպատիւութեանը Բուրսովին  
 վերցուած նարձելով՝ շուշպուս այնորդը փնէ ճէ՛ ամի չափ, որպէս զի  
 հարսութեանն ու խողողութեանը, սերն ու ճիւղանութեանը հասարակէին  
 ժողովրդեան ճէ՛ր. ուսորի և բնաւան էր որ արժէ՛ն անչին: ասիլ Գրան  
 շուսով պողեցնելու ժողովրդաց սերտն ու համոզել դնտտ՝ լէ եղած հաշ-  
 րութեանն անհասարակ բան ճի է:

Հաստատութիւնը և գլխաւոր կանոնները. զոր այս կերպով իմացուց Առաջնորդին Ներքին Գործոց Ոստիկանը.

«Առ Տէր Տեղակալն Առաջնորդութեան Վեճակին Հայոց Նախնային և Պետրապոլոյ.

«Բարեբախտ դռեալ մատուցանել խնարհաբար առ Ինֆնտրադուքսի ԿԱՍՏԱՆՍՆՈՒԼՆԱՅ ԿԱՍՏԱՆՍՆՈՒԼՆԱՅ զառաջարկութիւն Գերագաւոր Տեառնդ՝ որ յազգաց կառուցանելոյ է Թէոդոսիա զառանձինն Ուսումնարան մասն ապտանեաց աղքէն Հայոց, ընդ նմին արկի ընդ ակնարկութեամբ Վեճակաւորութեան ՆՈՐԻՆ զգծադրեալն յՈստիկանաբանի Ներքին Գործոց, Համաձայնութեամբ Ոստիկանաց Արտաքին Գործոց և Ազգայնոյ լուսաւորութեան, միանգամայն և Հանրական Կուսակալին Նորոյն Ռուսիոյ և Պետրապոլոյ, և զհիմնեալն գլխաւորապէս է վերայ առաջարկելոցն ինձ ձեռք՝ մինչդեռ աստ է փութեղութեան էլք՝ խելամուտութեանց, զնկարագրել Կանոնաց Ուսումնարանին այնորիկ:

«Վեճակաւոր Ինֆնտրադուքսի ԿԱՍՏԱՆՍՆՈՒԼՆԱՅ առատաբար որդմանութեամբ բարեհաճեալ ընդ վերայեւտակեալն ձեր առաջադրութիւն, այնու զի Ուսումնարանն բայցի և յառաջացի բոս Կանոնացն այնոցիկ արժանաւորելոց հաւանութեան Վեճակաւորութեան ՆՈՐԻՆ, պատուելեաց ինձ առարել յայնցանէ մէն մի օրինակս առ Ոստիկանն Ազգայնոյ Լուսաւորութեան, առ Հանրական Կուսակալ Կոմսն Սթրոկոնով և առ ձեզ՝ է պարտւպատաճն «անօրէնութիւն:

«Չայսպէսեղ Կայսերական կամեցողութենէ տալով Գերագաւոր Տեառնդ տեղեկութիւն, յարելով է սոյն և զօրինակ Կանոնացն է վեր այս յիշատակելոց, հարկ համարիմ աղաչել զձեզ՝ զի է դէպ ժամու ծանուցիք Ոստիկանարանիս Ներքին Գործոց զհարգաբարձութեանն՝ զորս է ձերմէ կողմանէ առնելցէք վասն կառուցման Ուսումնարանին այնորիկ:

«Ոստիկան Ներքին Գործոց (ձեռնագրեալ) Ս. Լանբոյ.  
«Վերատեսուց (ձեռնագրեալ) Կոմս Սթրոկոնով:

Իսկ գլխաւոր Կանոնադրութիւնը այս էր.

«Ի բնադրին ձեռամբ Տեառն Ոստիկանին Գործոց գրեալ է. «Ինֆնտրադուքսի ԿԱՍՏԱՆՍՆՈՒԼՆԱՅ Հաճեցաւ յակն արկանել». Ս. Լանբոյ, է 4 Յուլիսի 1858 է փետրեհոֆ.

«Հաւաստի. Վերատեսուց (ձեռնագրեալ) Կոմս Սթրոկոնով.

«Կանոնը Հայկազեան Ուսումնարանին, որ հաստատ է Թէոդոսիա քաղաքի է Տաւրիան Կուսակալութեան.

«Ուսումնարանն պարտ է լինել մասնական վարժոց սահմանեալ

է դաստիարակութիւն Հայկազն պատանեկաց՝ առանց խտրելոյ գտեղի ծննդեան և զճաղուքն սերնդեան նոցա:

«Յուսումնարան անդը մարթին ընդունելի լինել ոչ միայն Հայք հպատակեալք Լուսաւորչական եկեղեցւոյ, այլ և այնքիկ է Հայկազանց՝ որ զհետ երթայցեն հաղթական և բողոքական եկեղեցեաց: Սորին և ս յամենայն հոյատակին կարգաց սահմանելոց յՈւսումնարանի անդ, բայց ոչ բունապատեցին ունկնդիր լինել դասուց կրօնական գետութեան՝ որ պարտին տուեալ լինել է նմա բոս Կանոնաց Լուսաւորչական եկեղեցւոյ:

«Ուսումնարանս այս ազատ մնալով յանընդմէջ տեսչութենէ Ոստիկանին Ազգայնոյ Լուսաւորութեան, պարտի կալ և մնալ ընդ անձնական առաջնորդութեամբ և վերատեսուցութեամբ Գարեբէէի վարդապետի Այվազեան, և յետ նորա Առաջնորդաց Վեճակին Հայոց Նախնային և Պետրապոլոյ:

«Առաջնորդին սեպհական զործն է՝ կարգել ուսուցիչս, և ընտրութիւն սունել զընեղ և ոճոյ դասախօսութեանց: Սակայն զհետ երթալով կանոնին առհասարակ ընդունելի եղելոյ սակս վարժարանաց՝ որ չլցեն ընդ տեսչութեամբ Ոստիկանին Ազգայնոյ Լուսաւորութեան, Առաջնորդին պարտ են տալ ամ բոս ամէ առ Ինամակալն Ուսումնական Շրջանակին որ յՕտեսսա քաղաքի տեղեկութիւն զվարժապետաց, զթուոյ աշակերտաց և զընթացից ուսման:

«Հրաման է Ուսումնարանին բանալ զՏպագրատուն, և հրատարակել զՕրագիր է Հայ, է գաղղիացի և է ռուս բարբառս:

«Քննութիւն Օրագրոյն, որպէս և մատենից որ բերելցին է պէտս Ուսումնարանին յօտար պետութեանց՝ բոս հանրական կանոնաց անկ է Գրաբնական Ատենին Օտեսսայի՝ մինչչև դռեալ իցեն հնարք հաստատելոյ զգրաբնութիւն անդէն իսկ է Թէոդոսիա. բայց քննութիւնն օրագրական հատուածոց, որպէս և ամենայն զընեղ որ իցեն է Հայ լեզու, հաւատացեալ լինել Այվազեան վարդապետի, որ միայն է առ այն պատասխանատու:

«Աշակերտք Ուսումնարանին՝ որ յերս իւրեանց անտի ընդունելցին յառաջնորդաց նորին վկայութիւն բարի յաղաքս ուսումնական զարգացման և բարեկրօն գնացից իւրեանց, վայելեն՝ յորժամ պէտք լինիցին՝ յօրինաւոր պաշտպանութեան և է հովանաւորութեան Պետութեան:

«Յուսումնարանի անդ հրահանգին մանկուք է լեզուս Ռուսաց, Գաղղիացոց, Հայոց և Տաճկաց. նոյնպէս և յայնոսիկ ուսմանս՝ որք բովանդակին առ հասարակ է հրահանգս մարդարանաց

կամ վարժարանաց (ГИМНАЗИЯ) և կամ կարևոր են հետամուտ եղելոցն արուեստի վաճառականութեան:

«Սմենայն աշակերտաց Ուսումնարանին պարտք են ուսանել զուսմունսն՝ որ բովանդակին է սահմանի անդ մարդական հրահանգաց (ГИМНАЗИЧЕСКИХЪ НАУКЪ):»

Հայկազունք հրատակեալք Պետութեան Ռուսաց չտարիկն ուսանել զառձիկ լեզու, և ոչ Հայկազունք հրատակք Օսմանեանց՝ ուսանել զուսու լեզու:

«Բովանդակ ընթացք ուսմանց բաժանին է դասարանս վեց:

«Գասախօսութիւնքն լինին է հայ լեզու, և մասամբ է դաղղիարէն և է ռուսերէն:

«Աշակերտք բաժանին է լիաթոշակս, այսինքն է հատուցողս ամբողջ թոշակի, և է կիսաթոշակս և է ձրեալարժս. բայց ամենեցուն ևս բնակութիւն պարտի յՈւսումնարանի անդ լինել:

«Թիւ բաղմութեան աշակերտաց սահմանի՝ ըստ ընդարձակութեան Ուսումնարանին և ըստ չափու հասկնցն՝ որովք պահպանեցին:

«Ուսումնական մասինն տեսչութիւն է ընդ ձեռամբ ժողովոյ՝ զոր կազմեն Վերատեսուչ Ուսումնարանին, և վարժապետք է նմանէ ընտրեալք և որոշեալք:

«Տնտեսական մասն ուսումնարանին է՝ է ձեռս աւանձին Խորհրդարանի՝ որոյ գահերէց է Վերատեսուչն, և անդամն անձինք վեց. չորք է նոցանէ ընտրին է պատուաւոր ժողովրդականաց քաղաքին Թէոդոսիոյ:

«Հիմնադրի ուսումնարանին Գաբրէիլի վարդապետի Այվազեան՝ իբրև Տեղակալի Աւագնորդութեան վիճակին Հայոց Նախիջևանի և Պետրապոլոյ՝ յանձն է դատանել զմասն ինչ դրամաբլիտոյ և եկամտից եկեղեցեաց այնք վիճակի է շինուած և է պահպանութիւն Ուսումնարանին: Եւ զզուամարն՝ որ սխտոյ լցէ առ է սոյն՝ ճշդիւ պարտ է սահմանել և որոշել վասն տարեկան ծախուց, յետ է յայտ ածելոյ զամենայն զգլուխս դրամոց և զեկամտից վիճակին: Բաց յայսմանէ ընդ հնարս պահպանութեան Ուսումնարանին պարտ է համարել և զհամաւոր նուէրս ժողովրդոց:

«Ոստիկան Ներքին Գործոց (ձեռնադրեալ) Ս. Լանսբոյ:

«Հաւաստի. Վերատեսուչ (ձեռնադրեալ) Կոմս Սիլերս:»

Այս կանոնադրութեանց մէջ գիտելու արժանի են աւելի այն կէտերը՝ որովք Թէոդոսիոյ աղբալին Ուսումնարանը նախ ասոր Ռուսաստանի աղբալին լուսաւորութեան Ոստիկանարանին անմիջական կառավարու-

թենէն, և միայն Ներքին Գործոց Ոստիկանարանին ընդհանուր տեսչութեանը ներքև պիտի դառնուէր:— Նրկորդ, պիտի հիմնարկուէր և կառավարուէր Նախիջևանի և Պետրապոլոյ վիճակին է: Եղեցաւ ևս Թիւ Ռուս: Եւ թէպէտ այս մասն ո՛րքան լինելը որոշուած չէր՝ սկզբնական ծախքերուն անորոշութեանը պատճառաւ, բայց Ուսումնարանը կարգի մտնելէն չեսոյ՝ հարկաւ պիտի որոշուէր: Նրկորդ, Գաբրէիլ վարդապետը գրեթէ լիափութեամբ և բացառաբար իշխանութիւն ունէր Ուսումնարանին թէ՛ ուսումնական և թէ՛ տնտեսական կառավարութեանը մէջ, և միայն կպարտաւորուէր ընդհանուր տեսչութիւն տալու տեսչութեան ամէն տարի՝ ըստ սովորութեան: Եւ թէպէտ թէ՛ ուսումնական և թէ՛ տնտեսական կառավարութեանը մէջ իրեն խորհրդականներ պիտի ունենայ, բայց այն ժողովոց ալ գահերէց կամ նախագահ ինքը պիտի լինէր: Ուրեմն անտի բնականորութեան է ոմանց ասածը՝ որ իբր թէ վարդապետը չունէր բացարձակ իշխանութիւն, այլ հոգաբարձուներով պիտի կառավարէր ուսումնարանը՝ բուն սկզբնաւորութենէն: Իրաւ որ նա լաւ կանէր որ տնտեսական մասը իսկըանէ ջանձնէր բոլորովին տնտեսական ժողովոց մի, բայց այս բանիս համար շատ նիւթական դժուարութիւններ տեսնելէն զատ, մեծապէս աչքը վախցած էր ուրիշ քանի մի աղբալին դպրոցներու համար անգղուշաբար նշանակուած հոգաբարձուաց և տնտեսական ժողովոց անսպառ կուրսերէն: Այսու ամենայնիւ ուսումնարանին ներքին և արտաքին կարգադրութեանցն ու կառավարութեանը մէջ վարդապետը միշտ խորհուրդ կանէր բան հասկացող գործունեաց երեւելեաց հետ, և հարկաւոր կահ կարասին գնելը այնպիսի պատուաւոր ու հաւատարիմ անձանց կցանձնէր, չորոց չեսոյ ընտրեց նաև Տնտեսական ժողովոցն անդամները: Զորքորդ, այս կանոնադրու-

Թիւնը Հիմնուած էր Գարբեէլ վարդապետին պատրաստած ու առաջարկած նախագծին վերայ, ինչպէս որ Ոստիկանն ալ կ'իկացէ: Զարմանքն այս է որ անքաղաքագէտ կամ չարամիտ մարդիկ Ոստիկանին այն խօսքէն այսպիսի այլանդակ կասկած մը ուղեւ էին հանել՝ որ իբր թէ նորա ասածը թէ «զհիմնեալն գլխաւորապէս ի վերայ առաջարկելոցն ինձ ձեօք խելամորձեանց» ծածուկ և խորունկ միտք մի ունի: Այսպիսի ցիմարական կասկած նա միայն կարող է անշուշտ հանել այն խօսքէն՝ ով որ գիտէ որ եթէ իբօք այնպիսի դադանորոգացթ դաշնադրութիւն մի գտնուէր Ոստիկանին ու վարդապետին մէջ, Ոստիկանը ոչ երբէք կանոնադրութեանը մէջ չաջոնապէս կընէր, և այն՝ այնպիսի խօսքերով:

Ուստաստանի աղագչոց աչքին մէկ բան միայն կըտեսնէր, որ այն կանոններուն մէջ չէր դրուած, այսինքն թէ ուսումնարանին աշակերտները քանկերով աստիճանով՝ այսինքն չի՞ով՝ պիտի ելնեն անտի. բաց այդ բանին սաստիկ ցանկութիւն ունեցողները պէտք էր գիտնային՝ թէ այն Ուսումնարանը չէր կարող իւր աշակերտներուն համար աստիճանի իրաւունքը պահանջել՝ ասանց իւր գլխաւոր ուղարկելները չե՞նէ հանելու:

Գիտելու գլխաւոր մէկ պարագան ևս այս է որ Տէրութիւնը վարդապետին հրաման տալով եկեղեցական փողերը գործածելու այն Ուսումնարանին վերայ, ամենեւին չէր պարտաւորէր զինքը այն փողերը եկեղեցական ուղարկելու համար ճիշտ գործածելու, և կամ աշակերտները եկեղեցական վիճակի մէջ դնելու: Այսու ամենայնիւ վարդապետը ինքիւրմէ արժան դատեցաւ որ վիճակին մէջ քանի որ եկեղեցական դպրոց չկայ կանոնաւոր, այն ուսումնարանին մէջ եկեղեցական փողերով կրթողները լինին աւելի չքաւոր եկեղեցականաց որդիքը, և կամ եկեղեցականութեան փառաք ցուցանող պատանները:

Օդոստոս ամսոյն մէջ հրատարակեց Գարբեէլ վար-

դապետը բոլոր վիճակին ժողովրդոցը, ևս և վիճակէն դուրս գտնուող աղագչոց, թէ հոկտեմբեր ամսոյն սիկլընէրը պիտի բացուի Թէոդոսիոյ մէջ Սալեպտան ուղեւորն Ոստիկանին՝ այս և այս պայմաններով ու կանոնադրութեամբ: Եւ չիրաւի, այն ամսոյն 12-ին, 1858-ին, մեր սրբոց Թարգմանչաց տօնին օրը, կատարուեցաւ Ուսումնարանին բացման հանդէսը ի ներկայութեան Սալեպտան Յարութիւն Աղային, և գլխաւոր իշխանաւորաց և ժողովրդականաց՝ աղագչոց և օտարաց:

Ուսումնարանին շէնքը դեռ Հիմնադրուած չլինելով, հարկ էր առ ժամանակեաց տուն մի վարձել՝ գոնէ 50 աշակերտի համար: Եւ այս բանիս չարմար տեսնուեցաւ Զիւլայէթեան եղբարց տունը՝ մէկ տարուան համար, մինչև որ պատրաստուի Ալթունձեան եղբարց նորաշէն ընդարձակ բնակարանը, չորում կարելի պիտի լինէր նաև 100 աշակերտ ունենալ:

Ուսումնարանին կահն ու կարասին պատրաստեցաւ ըստ մասին Թէոդոսիոյ մէջ, և ըստ մասին գրեթէ բերուեցաւ՝ հաւատարիմ և բան հասկացող անձանց ձեռքով: Այս գրեթէ եկած կարասիներուն գլխաւորներն էին 100 հատ երկաթէ մահլիճ, որոց իւրաքանչիւրը՝ ճանապարհի ծակքն ևս հաշուելով՝ իննական ըուպլիէն աւելի թանկ չեղաւ. վասն զի Կայսերական վճուով՝ այն մահլիճները և նոցա հետ շատ դպրոցական գրքեր, թղթեր, և ուրիշ հարկաւոր բաներ, սահմանեալ մաքսէն աղատեցան՝ ինդրանօք վարդապետին և առաջադրութեամբ Ոստիկանին:

Թէոդոսիոյ պէս փոքրիկ և աննշան քաղաքի մէջ այսպիսի ուսումնարան բանալու մէկ մեծ դժուարութիւնն ևս այն էր Տեսուչ, վարժապետներ, վերականգններ, գրեթէ ամէնն ալ պէտք էր ուրիշ քաղաքներէ հրաւիրել: Եւ այս բանիս համար՝ բացի ընտիր և արժանաւոր անձինք գտնելու դժուարութենէն՝ հարկաւ

պէտք կրնէր նաև աւելի ծախքով բարձր ուճիկներ սահմանել նոցա:

Ուսումնարանին տեսուչ (Բնօրէն) եղաւ Սարգիս Աւետիքեան Տիգրանեանը, որ իւր 20 տարուան վարժապետութեամբը և Սրմֆերտիոյ, և արդէն առանձնական դպրոց մի (Գործի) ունեցած լինելովը այն քաղաքը, նմանապէս ուսումնականութեամբը և բարեբարոցութեամբը՝ գովելի և պատուաւոր անձի համբաւ ստացած էր Ռուսաստանի Հայոց մէջ: Իրեն ուճիկ նշանակուեցաւ տարին 1500 ռուպլի արծաթ, և բաց չայնմանէ ձրի բնակարան ճրագ և վառելիք:

Հայերենի վարժապետներ և վերահացուներ դրուեցան գլխաւորապէս Կողարեան ձեմարանէն ելած երկտասարդներ, Գաղղիարենի վարժապետներ՝ Նեքուլայէի և Փարիզէն հրաւիրուեցան, և այլն, և սոցա մէջ ամենէն քիչ ուճիկ առնողը կընդունէր 500 ռուպլի արծաթ:

Աշակերտներուն մեծ մասը ձրիավարժ էին առաջին տարին, ոմանք Խաչիկեան անունով, և ուրիշները Եֆրեյմեան անունով: Բաց ամենուն ապրուստն ևս եկեղեցական գումարներէն էր, բաց ի 8 կամ 10 թոշակաւոր աշակերտներէ, որ Թեոդոսիայէն, Սրմֆերտիոյէն և Սարատէն եկած էին: Ասով դիւրին էր նաև ա՛յն ժամանակէն գուշակել՝ թէ ուսումնարանին ծախքը ծանր պիտի լինի՝ մուտքին հետ համեմատելով, գոնէ մինչև այն ժամանակը՝ չորում Խաչիկեանին կանգնելու շէնքը աւարտի, և նորա անունն ունեցող աշակերտներուն ապրուստը՝ նորա սեպհական փողերովը վճարուի և ապահով կերպով հաստատուի, ինչպէս որ Խաչիկեանը իւր խօսակցութեանցը մէջ շատ անգամ յոյս տուած էր իրեն. նորա համար ալ Գաղղիէ վարդապետը չվախցաւ այն ծախքերուն շատութենէն, և յոյսը չստուած դրաւ՝ որ ամենայն բարի գործոց միմիայն չաղողութիւն տուողն է:

Եկեղեցական գումարները թէպէտ խոյրան առատապէս կըործածէր նա Ուսումնարանին վերայ, բայց հաստատ դրած էր միտքը որ ժամանակով՝ երբ Ուսումնարանը սկսի ծաղկել և չափաւոր եկամուտ բերել, այն գումարները տոկոսեօք հանդերձ դառնան ե՛րբ և իցէ յօգուտ եկեղեցեաց վիճակին՝ գոնէ ըստ մտին. չեմք կարող չասել՝ որ նա այս բանիս մէջ պէտք եղած հեռատեսութիւնն ու նախադուշութիւնը չունեցաւ, որով և չետոյ կրած նեղութիւններուն մէկ պատճառն ալ փողի պահասութիւնը պիտի լինէր: Նորա ամենայն ջանքն ու աշխատութիւնը այն էր որ ուսումնարանը բարեկարգ կամոնաւորութեամբ սկսի և առաջ երթայ, իրեն հիմն և նպատակ ունենալով ճշմարիտ և հաստատուն բարեպաշտութիւնը, ճշմարիտ ազգասիրութիւն, և որչափ կարելի է կատարեալ՝ բաց ամենահարկաւոր ուսում և կրթութիւն: Իհարկ է գիտէր ինքն ևս որ խոհեմութիւնը կցուցանէ՝ թէ ամենայն մեծ գործ պէտք է փոքրէն սկսել, և չետոյ աստիճանաբար մեծցընել և ընդարձակել. բայց չէր կարող չգիտնալ նաև մեր աղգին բնաւորութիւնը, որ այսպիսի ձեռնարկութեանց վերայ մինչև չտեսնեն նաև արտաքին մեծութիւն, և գոնէ չափաւոր ճոխութիւն կամ փառաւորութիւն, վերան ամենեւին համարում չեն ունենար, և դիւրաւ կարհամարհէն. ուստի եթէ խեղճութեամբ ու անշուք կերպով սկսէր գործը առաջ տանիլ, հարկաւ շատ տարներու կարօտ կմնար Ուսումնարանը՝ մինչև որ թուշակաւոր աշակերտներ գան իրեն՝ աշխարհիս ամէն կողմերէն: Արեւի որ այս պարագան ամենեւին չեն մտածեր այն անձինքը՝ որ կմեղադրեն զվարդապետը՝ խոյրան այնքան ծախքեր արածին համար:— Բայց սորա վերայ չետոյ ևս աւելի կունենամք խօսելու:

Ուսումնարանին պատմութիւնը անկատար պիտի համարուի՝ եթէ չպատմեմք նաև Գաղղիէ վարդապե-

տին առաջնորդական կառավարութեան գլխաւոր պարագաները. որովհետեւ նա նոյն իսկ առաջնորդութիւնը յանձն առած էր Ուսումնարանին համար, ինչպէս որ յայտնի է, և ոչ թէ Ուսումնարանը բանալու ձեռք զարկած էր՝ առաջնորդութեան հասնելու համար, ինչպէս որ նախանձը ասել տուաւ հակառակորդաց:

### Գ Լ Ո Ւ Խ Բ.

Վիճակային կառավարութեան մէջ սխառած բարեկարգութիւնները:

Թէպէտ և Գարբէլ վարդապետին գլխաւոր մտաւորութիւնը և աշխատանքը այն էր որ իրեն յանձնուած վիճակին, ու անով բոլոր ազգին մէջ ուսումն ու կրթութիւնը ազգային հոգւով տարածուին, և նորա համար նախ Խալիպեան Ուսումնարանը հաստատելու և սպա ժողովրդական դպրոցները բարեկարգելու և բազմացնելու ջանք կանէր, բայց միանգամայն վիճակային դործոց կառավարութեանը մէջ ամենայն կերպով կաշխատէր ո՛ր և իցէ բարեկարգութիւն և կանոնաւորութիւն հաստատելու:

Կոնսիստորիացի և Հոգևոր կառավարութեանց պաշտօնեաներէն մեծաւ խոտութեամբ կարահանջէր կաշառքէ հեռու կենալ, և գործերն առանց ամենեկին ուշացնելու կամ ձգձգելու աւարտել, և թէպէտ գրեթէ ամէն ժամանակ անպակաս էին Կոնսիստորիացին մէջ՝ չափաւորապէս դատաստանական գործոց և գրուածոց տեղեակ անձինք, սակայն ինքը իրեն պարտք կհամարէր խոլբան, որ առանց իւր աչքէն անցնելու՝ ոչ օրագրութիւն մի կազմուի, և ոչ հրամանագիր կամ յայ-

տարարութիւն մի չուղարկուի: Տարախոյս չկայ թէ այս զդու շութիւնը իրեն ոչ սակաւ ժամանակի կորուստ և աշխատութիւն կպատճառէր. բայց որովհետեւ լաւ գիտէր թէ պարսաւադէտ անձինք ե՛րբ և իցէ կարող են մեղադրել զինքը՝ որ իւր թէ վիճակի կառավարութիւնը կրեսի վերայ ձգած՝ դպրոցներու և գրաւորական աշխատութիւններու հոյս կպարսպի, կուզէր այնպիսի պատճառախնդիրներուն չարախօսութեան առիթ չտալ իւր կողմանէ: Գուցէ նաև այս պատճառաւ երեք չորս վարդապետք, որ հետզհետէ Կոնսիստորիացի առաջին անգամք եղան, չկարողացան տարիներով իրենց պաշտօնը շարունակել. վասն զի Առաջնորդը անմիջական որոշմունքն ու կարգադրութիւնները նոցա հրամանին չէր յանձնէր բոլորովին, թէպէտ և նոցա հետ ամէն ժամանակ քաղցրութեամբ և պատուով կվարուէր:

Կոնսիստորիացի պաշտօնէկց արդիւլելով որ ամենեկին տինկալութիւն չանեն դրսէն պատահական շահ կամ վաստակ ունենալու, հարկաւ պետի աւելցնէր նոցա ուձիկները. ուստի առաջ որ Ատենադպիրը, օրինակի համար, ամիսը 25 թուպլիէն աւելի չէր առնուր, սկսած մինչև 35 և 45, ևս և 58 և 60 թուպլի առնուլ. և միւս պաշտօնատէրներն ու զբաղիւնները, որոց ամսական թոշակը առաջ 4 կամ 5 կամ 6 թուպլիէն աւելի չէր, սկսան առնուլ 15 թուպլի, և ոմանք 20 թուպլի: Յայտնի բան է որ ասով վիճակային արդիւնքները շատ կպակոսէին. բայց նա միտքը դրած էր թէ վիճակային արդիւնքները կարելի չէ ուրիշ բանի այնքան իրաւամբ և ըստ պատշաճի գործածել՝ ինչպէս ի բարուք Կառավարութիւն նոյն իսկ վիճակին:

Առաջուան սովորութեամբ շատ արդիւնքներ կային որ կհաւաքուէին վիճակէն յօգուտ Առաջնորդին կամ Առաջնորդարանի, ինչպէս պողի, շնորհք, սրբորոտ, աստուածային, պատիւ, հոգեբան, լուսի, գիտաբար, զանազան հարուստի,

«ստիճանաւորաց անօրհնէ», և այլն և այլն: Գաբրիէլ վարդապետը միտքը դրած լինելով՝ թէ իրեն համար տէրութեան կողմանէ որոշուած տարեկան չափաւոր թոշակը պէտք է բաւական լինի իւր անձնական, և թէ վերագրեալ արդիւնքները մեծաւ մասամբ նեղութիւն կպատճառեն ժողովրդոց և իրաւացի արտունջ ու տհաճութիւն, և ոմանք առիթ կուտան դանաղան հարստահարութեանց, և թէ՛ կարելի է նոյն արդիւնքներուն աւելի բնական և գոյելի նպատակներ սահմանել, — սրոշեց և հրատարակեց բոլոր վիճակին մէջ որ այն արդեանց մեծ մասը սահմանուի Խալիպեան Ուսումնարանին մէջ ո՛րքան կարելի է աւելի թուով աղքատ աշակերտներ կրթելու:

Առաջնորդին այն կարգադրութիւնը ըստ իմիք մեծ սխալմունք էր, ինչպէս որ չետոյ փորձով տեսնուեցաւ. վասն զի չկարողացաւ նախատես լինել՝ թէ ժողովուրդները այն արդիւնքները պահեսցընելով՝ աւելի եռանդ կամ թէ՛ ասեմ երախտագիտութիւն մի չէին ցուցաներ Առաջնորդին բարի դիտաւորութեանը, և ուրիշ կողմանէ՛ իրեն համար սահմանուած թոշակը՝ որ տարին 2,500 ռուպլի հաղիւ կհասնէր, անկարելի էր որ բաւէր իրեն աստիճանին վայելուչ առանձին Առաջնորդարան կանգնելու կամ վարձելու, և այնպիսի կեանք անցընելու՝ զոր թէ՛ մերադնեացք և թէ՛ օտարազգիք սովորած են տեսնելու ուրիշ Առաջնորդաց վերայ: Թող որ Առաջնորդութեանը չորրորդ տարիէն սկսեալ՝ շատ անգամ իւր խի ուձիկը կերթար թէ՛ Ուսումնարանի և թէ՛ մանաւանդ Տպարանի ծախքերուն, չորոց ինքը բնաւ ամենևին շահ չունէր. այնպէս որ ամենադիւրին և ամենապարզ հաշուով կարելի է համարձակ ասել՝ թէ եօթը տարուան միջոցին՝ Գաբրիէլ վարդապետին դալու առաջնորդական արդիւնքներէն՝ քեզէն քեզ՝ հոգիս ըուպլի Ուսումնարանին անցել է. թող նաև իրեն

այն Ուսումնարանին վերայ ձրիաբար աշխատածը ութը տարի վերատեսչութեամբ և դասախօսութեամբ, որոց համար եթէ տարին դոնէ 2000 ռուպլի առնուր ամենայն արդարութեամբ, հոգիս ըուպլի ալ այն պիտի անէր: Բայց նորա խելքը միտքը այն էր միայն որ ուսումնարանը իւր ամենայն պիտոյցն ու պարագաներովը կարգի դրուի, հաստատուի, մուտքը ծախքին հաւասարուի, մանաւանդ թէ՛ մուտքը աւելնաց ծախքէն. չետոյ կլուսար որ իրեն ալ աշխատութիւնները չափաւորապէս կվարձատրուին:

Քանի մի քահանաներ կային, մանաւանդ Խրիմուքաղաքներուն մէջ, որ սաստիկ չքաւորութեամբ և աղքատութեամբ հաղիւ կապրէին, և ժողովուրդները թէև կամք ունենային՝ դոնէ կարողութիւն չունէին նոցա աւելի ապրուստ սահմանելու: Առաջնորդը հարկ համարեցաւ այնպիսի քահանայից տարեկան նպատտ սահմանել, ոմանց վիճակացին արդիւնքներէ և ոմանց եկեղեցական արդիւնքէ, նորա տեղը խստիւ պահանջելով որ ժողովուրդներէն պատկերամ, հոգեբաժին և ուրիշ տուրքեր առնելու ատեն դժբախտութիւն չընեն, և ժողովուրդները առաւել ևս չպաղեցընեն եկեղեցիէն:

Եկեղեցիներ կային Խրիմու և Պեսարապիոց մէջ, ևս և Նախիջևանի ամէն գեղերը՝ որ հիմնական նորոգութեան կարօտ էին. և թէպէտ ժողովուրդները 20 կամ 25 տարիէն աւելի էր որ հրաման կենդիւն Առաջնորդներէն այն եկեղեցիները եկեղեցական փողերով նորոգելու, բայց նոքա հրաման չէին տուած:

Թէոդոսիոց Ս. Գէորգ եկեղեցւոյն կէսէն աւելի աւերակ, և մնացեալ մասը քանդուելու վերայ էր. վարդապետը փութացաւ նորոգել տալ այն եկեղեցին՝ որ մեծ ուխտատեղի է ամենայն Հայոց Խրիմու, ևս և օտարազգի բրիտանացի:

Նոյնպիսի ուխտատեղի էր նոյն քաղաքին մէջ նաև

Սրբոյն Յովակիմոս և Աննայի եկեղեցին, որոյ Համար չորդորական նամակով 3000 ըուպլի Հաւաքեց վեճակէն, և Հնոյն Հիմանցը վերայ կանգնել տուաւ եկեղեցին, և անոր մօտ փոքրիկ ժամատուն մի:

Նորայսքի եկեղեցին մեծ կարօտութիւն ունէր նորոգութեան. Հրամայեց որ եկեղեցւոյն քանի մի տաւուան եկամուաներովը նորոգուի:

Նախիջևանի Ս. Աստուածածնայ եկեղեցւոյն զանգակատան շէնքը դադրած էր՝ Հարկաւոր եղած ծախքին չբաւելուն Համար. Հրաման տուաւ որ եկեղեցւոյն արդիւնքովը և բարեպաշտ ժողովրդականաց տուրքովը շէնուի վերջանայ: Նախիջևանի Նետիթայ գեղին եկեղեցին միայն՝ մահտեսի Կարապետ Աղա Տօնիկեան իւր ծախքովը սխաւ կանգնել. իսկ միւս չորս գեղերուն մէկ մէկ նոր եկեղեցիները Առաջնորդին Հրամանովը և եկեղեցական արդիւնքներով շինուեցան և դեռ շինուելու վերայ են:

Մելիթոփոլ քաղաքին Հայաղբի ժողովուրդը դոնէ փոքրիկ Աղօթատուն մի ունեցաւ:

Նմանապէս Կերչ քաղաքին ժողովուրդը ունեցաւ Աղօթատուն մի՝ ուր փոխադրուեցան Առաջնորդին Հրամանաւր Անափայլ աւերեալ եկեղեցիէն բերուած խաչկալն ու զարդարանքները:

Օրպաղարի եկեղեցին գրեթէ ի Հիմանց նորոգուեցաւ և ընդարձակուեցաւ՝ կիսով չափ նոյն եկեղեցւոյն Հին և նոր արդիւնքներովը, և կէսէն աւելին ժողովրդեան կամաւոր տուրքերովը:

Սիմֆերոփոլի եկեղեցին ընդարձակուեցաւ և զարդարուեցաւ՝ նոյնպէս ժողովրդեան կամաւոր նուէրներովը:

Խարասուի մօտ Փրիչալիանքը նորոգուեցաւ ու զարդարուեցաւ՝ կէս մի վանքին արդիւնքովը և կէս մի ժողովրդեան նուէրանօքը:

Նոյն իսկ Խարասու քաղաքին մէջ շինուելու նոր

եկեղեցւոյն Համար ընդարձակ տեղ գնուեցաւ՝ եկեղեցւոյն արդիւնքովը:

Քիչնևի եկեղեցւոյն նորոգութեանը Հրաման տրուեցաւ՝ ըստ մասին եկեղեցական արդիւնքներէն:

Գրիգորուպօլսոյ Ս. Պօղոս և Ս. Աստուածածին եկեղեցիները նորոգուեցան նոյնպէս Առաջնորդին Հրամանաւր, կէս մի եկեղեցական արդիւնքներով և կէս մի ժողովրդեան տուրքերովը:

Օրհէջ քաղաքին մէջ Զաքարեան Գաւթ Աղալին կանգնած եկեղեցին անկատար մնացած լինելով, նորա մօտ արժամանակեայ Աղօթատուն շինուեցաւ՝ նոյնպէս Առաջնորդին Հրամանովը, և այլն:

Նորոգութեան կարօտ մնացին միայն Թէոդոսիոյ Ս. Սարգիս եկեղեցին, և Հին Խրիմու մօտ Ս. Խաչ վանքը, և Առաջնորդը երկուքն ալ նորոգելու մեծ բաղձանք ու ջանք ունէր, բայց ժամանակը չբաւեց:

Սօքա այսպէս լինելով, չեմ գիտեր՝ ի՞նչ իրաւունք կուենան ոմանք գանգատ անելու՝ թէ այս Առաջնորդը քոր եկեղեցական գումարները առել և դործածել է Խաչիկեան Ուսումնարանը կանգնելու և առաջ տանելու: Եթէ ճշմարիտ ևս լինէր այդ անհիմն և անիրաւ մեղադրութիւնը, ո՞չ ապաքէն ամենայն արդարութեամբ կարելի է այնպիսեաց ասել՝ թէ արդեօք լաւ չէ՞ բարեպաշտ և բարեկիրթ ժողովուրդներ և եկեղեցւոյ արժանաւոր պաշտօնեաներ պատրաստել այնպիսի աղգալին Ուսումնարանի մէջ, քան թէ եկեղեցական փողերը գրեթէ անօգուտ կերպով թողուլ իրաւարաններուն (փրկեալներուն) մէջ, կամ երէցփոխաններուն և աթոռակալներուն ձեռքը ձգել, որով մեծամեծ գումարներ կորսուել՝ ոչնչացել են, կամ թէ այն փողերով նիւթական եկեղեցիները կանգնել ու զարդարել, բայց նոցա մէջ աղօթք անող ժողովուրդ չուենալ, և ժամերգութիւնը կամ Աւետարանը Հասկացող քահա-

նաներէ զուրկ մնալ . . . : Բայց մեք այդ ևս չեմք ասեր. այլ կհարցանեմք թէ ո՞ր եկեղեցին առանց նորոգութեան կամ հարկաւոր դարդարանքի թողել է այն Առաջնորդը, և նորա համար պէտք եղած փողովը բացել է Ուսումնարան:— Գիտեմք որ հակառակորդները այս հարցմանս չեն կարող ուղիղ պատասխան տալ խղճմտանքով, և սակայն դարձեալ ասեմք. եթէ այնքան հալածանք ու բամբասանքները Առաջնորդին սիրտը չկտրելին և ձեռքերը չթուլացնէին, անշուշտ ուրիշ շատ եկեղեցական պայծառութեանց ետեւ լինելու ջանքը կաւելցընէր: Ինչպէս ահա 1863-ին սկիզբները երբ Նախիջևան պատահեցաւ, իւր մէկ չորդորանօքը այնպէս շարժեցաւ ժողովրդոց սիրտը՝ որ մէկ վայրկեան մէջ 6000 ըուպլի հաւաքեցին, և ձեռք դարկին Ս. Խաչ վանքի եկեղեցին և հիմանց նորոգելու, աւելցընելով չետոյ այն գումարին վերայ այլ ևս 7 կամ 8000 ըուպլի, զոր մեծաւ մասամբ հաւաքեցին ժողովրդեան կողմանէ ընտրուած Հոգաբարձուները, որ էին Խաթրանեան Աղա Գէորգը և Արաճալեան Աղա Աղեքսանդրը. և սոքա ոչ միայն շինակցեցին իրենց ուլուլ չափ աշխատութիւնը և ջանքը՝ այն սուրբ ուխտատեղւոյն շինութեանը համար, այլ և տեսնելով որ՝ ժողովրդեան երկպառակութեանը պատճառաւ՝ շատ դժուար է «մէն» առնուլ հաւաքել ծախքին հարկաւոր գումարը, իրենց սեպհական փողէն ևս շատ բան առատաձեռնեցին որ այն շինուածքը անկատար չթողուն: Գաբրէէլ վարդապետը քանի մի անգամ յայտնեց իւր շնորհակալութիւնը գրով և բանիւ այն երկու բարեպաշտ իշխանաւորաց. բայց ինչպէս ուրիշ շատ առիթներու մէջ, այն գործին ժամանակներն ևս շատ ցաւեցաւ որ չկարողացաւ Նախիջևանի բնակիչներուն մէկ մասին դռնէ այս ճշմարտութիւնս հասկացընել՝ թէ «Նրիւ իրեք երկպառակեալ կուսակցութիւնները ո՞ր-

քան և ներհակ լինին իրարու, բարեգործութեան հոգոյն վերայ պէտք է միաբանին», ինչպէս որ ասած է գաղղիացի գիտունին մէկը, և համոզել զնոսա որ իրենց երկպառակութեամբը պատճառ չտան այն բարեպաշտակուն ձեռնարկութեան անկատար մնալուն:

Այսպիսի բարեկարգութեանց վերայ երկարօրէն խօսելը աւելորդ համարելով, դառնամք քանի մի գլխաւոր դէպքեր ու գործողութիւններ պատմելու՝ որ 1858 և 1859 թուականներուն մէջ պատահեցան:

**Գ Լ Ո Ւ Խ Թ.**

Ընտրութիւն Տեառն Մատթէոսի Արքեպիսկոպոսի ի Կաթողիկոսութիւն ամենայն Հայոց, եւ առաջին ուղեւորութիւն Առաջնորդին յԵջմիածին:

Գաբրէէլ վարդապետին Ռուսաստան դարձած միջոցին Ս. Եջմիածնաց աթոռը պարապ էր, ինչպէս որ յայտնի է, և ըստ սահմանեալ կարգին՝ հանգուցեալ Ներսէս Կաթողիկոսին վախճանելէն տարի մի չետոյ պէտք էր լինէր նոր Կաթողիկոսի ընտրութիւնը: Այն ժամանակը Ռուսաստանի Հայոց Եկեղեցական կառավարութիւնը առաջ կերթար Սինոդին ձեռքովը, չորում Նախագահ և միանդամայն Տեղապահ Աթոռոյն էր բարեչիշատակ Աուրաս Սրբադան Սրբեպիսկոպոսը: Գաբրէէլ վարդապետը առաջնորդական պաշտօնն ընդունելէն չետոյ՝ իսկոյն գեր գրեց Փեթերպուրիէն Սրբադան Տեղապահին և Սինոդին, և նոցանէ ընդունեցաւ պատասխանները՝ հանդերձ շնորհաւորութեամբ:

Երբ որ նոր Կաթողիկոսի ընտրութեան համար Սինոդին հրովարտալը հրատարակուեցաւ ամէն տեղ,

Գաբրիել վարդապետը խնդրէ շրջաբերական նամակներով կոնացուց վիճակին ամէն քահանաներուն և ժողովրդականներուն՝ որ ժողովուրն, խորհուրդ աննն, և աղբն մէջ համբաւեալ Եպիսկոպոսներուն ո՛րն սր կուրէն ընտրել՝ քուէարկութեամբ որոշեն, և չուղարհեն Կոնստանտինոս: Այս որ եղաւ, Առաջնորդը վիճակին եկեղեցականներուն կողմանէ պատգամաւոր որոշեց Բեկնաղարեան Յովհաննէս վարդապետը. իսկ աշխարհականաց կողմանէ՝ բոլոր վիճակին ժողովուրդներուն առաջարկութեամբը՝ Նախըկանի ժողովուրեան ընտրած անձը հաստատեց, որ էր աստիճանաւոր աշխարհականացեալ Յարութիւն Մինասեան Աւագեանց:— Ետցա հետ և միասին չուղարհեց Առաջնորդը լիքմիտներն նաև ուրարակիւր Գրեգոր դպիրը Աղախիբեանց, որպէս զի քահանայ և վարդապետ ձեռնադրուի:

Անշուշտ չաջանի է բաղմաց՝ թէ ի՞նչ կերպով և ի՞նչ պարագաներով եղաւ նոր Կաթողիկոսին ընտրութիւնը, որ էր Տէր Մատթէոս Ա, Արքեպիսկոպոս, երբեմն Առաջնորդ Չմիւռնիոց, և ապա Պատրիարք Կ.—Պօլսոց, չետոց Առաջնորդ Արմաշու վանից:

Երբ որ այն ընտրութիւնը Կայսերական վճռով հաստատուեցաւ, Գաբրիել վարդապետը փութացաւ հետագայ շնորհաւորութեան նամակով չաջանել նորընտիր Կաթողիկոսին իւր բարեմաղթութիւնները, և միանգամայն հարկուի իւր իւր և իւր իւր հաշտանեաց Եկեղեցւոց:

«Աստուածապատիւ Վեհափառ Տէր,  
«Արքազան Հայրապետ.

«Մինչդեռ ժամ ի ժամ անխիղճ մնացը անձկանօք՝ լսել զԿայսերական կամացն բարեհաճութիւն ընդ աստուածադպեցիկ ընտրութիւն Վեհափաճութեանդ յԱթու Կաթողիկոսութեան «Հայաստանեայց Եկեղեցւոյ, և ահա երկիւստն նամակներ հասեալ ի մայրաքաղաքէ այսի՝ աւետաւորեցին մեզ զկատարումն «տենչանաց համասկեռ ժողովրդոց Արամաղնեայցս առ հասա-

«րակ՝ հաստատութեամբ ընտրութեան Վեհիգ: Որոյ վան պարս «անձին վարկուցեալ յառաջել ի մտուցումն բողոքանօք հոգա- «տակութեան մերոյ առ հրամանս պաշտելիս Մեծի Հոգւոցս «տիգ, փութամբ աւասիկ ի նոյն այսու գրովս մերով՝ ի դիմաց «մերոց և ի դիմաց համօրէն հաւատացելոց մերոյ Վիճակիս եկե- «ղեցականաց և աշխարհականաց:

«Այժմէն իսկ յաճախեն, Վեհափառ Տէր, ի բերանս մեր և «հասարակաց՝ սրտաւուչ բարեմաղթութիւնք առ Հայրն զթու- «թեանց և Աստուած ամենայն միթարութեանց, զի որ զԱրքա- «զան Տէրդ մեր պարզեւեայ տաւապելոյ Աղբիս ի Հայր բարե- «խնամ և յԱռաջնորդ իմաստուն, շնորհեացէ մեզ յամայր ամօք «վայելել ի բարութիւնսն մեծամեծս՝ որոց կարօթմբ ազգովիմք՝ «ըստ հոգեկան և ըստ մտաւորական բարեղարդութեանց, և որոց «Իրաւամբ ակն ունիմք հասանել ընդ հովանեաւ ինամոց Ձե- «րուդք Վեհափառութեան:

«Իսկ մեր աւանձինն և այս յոյս է զուարթարար, զի զուղե- «ւորութիւնդ Ձեր յԱթուն Հայրապետական՝ ընդ մերս արեւօք «հաճեալք անել զիճակ. որով և ի մօտոյ ևս լցուածքք զմեզ «երկնաձիւր օրհնութեամբ, և զսիրաս մեր ամպատում բերկրու- «թեամբ: Միանգամայն և աղերսմբ, զի եթէ սրդարև անկալի «լցէ մեզ երանականս այս բարեբախտութիւն, ի դէպ ժամու աղդ «մեզ աւանիցէ Վեհափառ Տէրդ մեր, որպէս զի ըստ այնմ՝ և ի «մէնք կուսէ սնօրինեացի արժանն և վայելուչ:

«Հայցելով վերստին համօրէն ժողովրդովքս մերովք զՀայրա- «պետականն Ձեր զօրհնութիւն, խոնարհիմք ի համբոյր աստուա- «ծարեալ աջոյ Վեհիգ, և մնամք

«Վեհափառ Տէրութեանդ Ձերում՝  
Ամենախոնարհ ծառայ  
Գաբրիել Վ. Այլաղեանս»

Եւ քիչ ժամանակէն ընդունեցաւ հետագայ պատասխանը.

«Գերապատիւ և Ենօրհնայեք՝ Հարազատ իմ և յոյժ Սերելե- «Նորօրինակ իմն շարժաւիթ հոգեպարար հրճուանացս հա- «մարեցայ զսիրատոյց ցանկալին ձեր գրութիւն, զայն՝ որոյ իւ- «րաբանչիւրն իմաստ զանկեղծական սիրոյ և հաւատարմութեան «ցոլացուցանէր զշաւաւիգ: Ասկայն ես նշմարեմ ի նոսս սրտի «մտօք և զայլ ընտիր ընտիր քանքարացոք բարեմանութիւնս, «որով դիտէք զմեծոցս ի փառաւորութիւն Աղբիս, որպէս և զա- «պայցոյցս նոյն վայելին զարդիս որք ի Վիճակիւր քն բարեկրօն

«եկեղեցականք և հոգեսէր ուսումնատենչ և անուատոհմ աշխարհահանք» ըստ բարեհռչակն լրոց:

«Օրհնեալ է Նախախնամութիւնն Աստուածային, որ ոչ միայն զգիտէ կոչել է ծառայութիւն բարերար կամայն, այլ և շնորհիւ շնորհով առաջնորդէ և զօրացուցանէ է հանդէս փառաւոր արդեանց իւրոց պաշտօնէից:

«Օրհնեալ է և եղիցի նորինն կամք Աստուածութեան, որոյ ամենաբաւական շնորհացն միայն յուսացեալ՝ խոնարհեցաւ և զմերս ապիկարութիւն է յանձնառութիւն այնպիսի իմն պաշտաւման՝ որ է վեր է յաւատքան զիմն բաւականութիւն, հայեցեալ «միանգամայն է ծանրակշիւ պարագայս ընթացից Ազգիս: Բայց շնորհ է իմ յոյս և օգնական, եթէ ոչ Տէր Յիսուս Քրիստոս, որ է բաւականալ և ամենակարող զօրութիւն բաւական ամենայնի՝ ըստ յարգարէին:

«Ահա տոյս այս զօրութիւն և օգնականութիւն երկնածիր է յամբարանայն անձին Ձերդ Պատուարժանութեան ճոխացեալ ցուցցաւ. քանզի, Հոգեհարազատդ տնչալի, ո՞ առաջնորդեաց ձեզ բարեբանութեան յորջամիտ ազգի մերում զլինկալեալն ձեր է Տեսանէ զդատարանդ հոգեկան և մտաւորական իմաստից. ոչ ապաքէն նոյն շնորհն՝ որ շնորհեաց զնոսին Արժանաւորիդ աւատապէս: Ապա շնորհն կարողացուցէ և արեացուցէ զձեզ փառաւորս առնել զպզոզուտ և զբարեփախան պաշտօնն՝ յոր կրօնեցեալն էք յԱմենախնամ Տեսչութենէ անտի, որով յաւատ և մեք ընդ համազգի սիրելեացդ Արձակիդ ոչ սակաւ ունեմք բերիլի է հոգի:

«Եւ գոյս ոչ առնեմք զանց առ է յայտնել Մտերմութեանդ, զի անազանել ճանապարհորդութեան մեր աստի ունի առիթ զկարեւոր զխանդարմունս վիճակաւորացն բարեկարգութեանց է «Տաճկաստանիս, և զպզոյնոց ոմանց ընդ իրեարս երկամայ բաւականութիւն և խաղիւթիւն, զորս պարս և հարկ եղև մեզ շնորհիւ Տեսան անկետ և արմատախիլ առնել՝ որչափ մերովբայանն է:

«Առ այժմ Քիամ կարօտեալ ցանկալի տեսող, և բարօրութեան «Հարազատիդ բարեացակամ է սրտէ

Ն. Ծառայ Տեսան  
Մատթէոս Արքեպիսկոպոս և ընդհանուր  
Պատրիարք ամենայն Հայոց»

«Է Մեջագիւղ. 1858»:

Նորընտիր Կաթողիկոսը գրեթէ ամբողջ մէկ տարի մնաց Կ.—Պօլիս, և այն միջոցն ոչ սակաւ թղթածուցութիւն եղաւ նորա և վարդապետին մէջ:

Այն թղթոց մէկն ալ էր չորդոր կամ հրատմանագիր մը՝ որ Գաբրիէլ վարդապետը իւր վիճակին մէջ քսան հազար դահեկան հաւաքէ և չուղարկէ իրեն, որպէս զի անով Սեպուհ լեռան վերայ Սրբոյ Հօրն մերոյ Գրեգորի Լուսաւորչի ձգնարանը, այսինքն եկեղեցին՝ որ սկսած էր շինուել, կարենայ վերջանալ: Գաբրիէլ վարդապետը խորհն այն գումարը հաւաքեց, և 1859-ին սպրիլի սկիզբները հասուց Կաթողիկոսին ձեռքը:

Վարդապետին նամակներուն մէկ նիւթն ալ այս էր. կենդրէր սր Վեհափառ Կաթողիկոսը Ս. Էջմիածին երթալու ժամանակը հանդիպի Թէոդոսիա, և ինքը օրհնէ Խալիպեան Ուսումնարանին հիմնարկութիւնը՝ որ պիտի լինէր մայիս ամսոյն մէջ, ինչպէս որ վերջիւ շեալ թղթին մէջ ևս ասած էր. Կաթողիկոսն ալ գրեթէ խոստացել էր այն խնդրքը կատարել ամենայն սիրով. բայց չեսոյ իմացուց վարդապետին՝ թէ իւր Խրիմ հանդիպելը կարելի չէ, այլ պէտք է որ վարդապետը ղեմաւորէ զինքը է Փոթի, և անտի է միասին երթայ Էջմիածին՝ Կաթողիկոսական օժման հանդիսին ներկայ գտնուելու:

Մայիսի 18-ին կատարեց վարդապետը Խալիպեան Ուսումնարանին շէնքին հիմնարկութեան հանդէսը, և չեսոյ աճապարեց չունիսի 1-ին Փոթի երթալու, հետը առնելով Բեկիազարեան Յովհաննէս վարդապետը. վասն զի նոյն օրերը Կաթողիկոսն ևս Կ.—Պօլսէն ճանապարհ պիտի ելնէր՝ հետը ունենալով Մակար Սրբբազան Եպիսկոպոսը, Անդրեանուպօլսեցի Սարգիս Արքեպիսկոպոսը, Թէոդորեան Սարգիս վարդապետը և ուրիշ վարդապետներ և սպասաւորներ, և Տէրութեան կողմանէ հրաւիրուի զնացած Լուու-Մեքիքեանց (Լուսիս-

Մեղքով) հաշկադն դորապետը: Սրբազան Կաթողիկոսին հետ է մեղադրում՝ այսինքն նույն օրը՝ հասաւ Առաջնորդը և Փոթի, և շատ սիրալիք ընդունելութիւնս դատարարացն նույն խի շողենաւին վերայ: Ընչպէս նաև բոլոր ճանապարհորդութեան ժամանակը հաշկախնամ սիրով և մեծարանօք ընտանեբար վարուեցաւ հետը Կաթողիկոսը:

Յունիսի 14-ին հասան Քիֆլիզ, և որովհետև Առաջնորդարանին մէջ նեղուածք կլինէր այնքան եկաւորաց, Գաբրիէլ և Սարգիս վարդապետները ըստ առաջաբնուելութեան Լուսն-Մեղիքեանց դորապետին, և հաւանութեամբ Սրբազան Կաթողիկոսին, իջևանեցան նույն իշխանին տունը:

Այն 15 օրուանը մէջ՝ որ Կաթողիկոսը Քիֆլիզ կեցաւ, Գաբրիէլ վարդապետը առթուեցաւ տեսնուելու Քիֆլիզու աղագչին իշխանաւորաց, և Տէրութեան մեծամեծներուն հետ, որք առհասարակ շատ չոյսեր կցուցանէին նորընտիր Կաթողիկոսին կառավարութեանն՝ և բարեկարգութիւն և ի պաշտառութիւն մեր աղղին և Եկեղեցւոյն:

Վերջապէս չուլիսի 7-ին հասաւ Սրբազան Հայրապետը և Ս. Աթուռն Էջմիածնի, ուր Գաբրիէլ վարդապետն ևս 15 օր մնաց, զմայլելով այն սուրբ և վաղեմի Տաճարին պաշտառութեանը, և այն Հայաստանի կեդրոնին հրաշալի տեսարաններուն:

Առաջ խօսքը այնպէս էր որ Վ. Կաթողիկոսին օծումը պիտի կատարուէր անմիջապէս զեմացի կերակին. բայց նորա անձնական տկարութեանը պատճառաւ օրէ օր և շաբաթէ շաբաթ ձգել հարկ եղաւ օծման հանդէսը. մինչև կարծիք եղաւ միաբանից մէջ՝ թէ գուցէ Վերափոխման օրն ևս այն հանդէսը չկատարուի՝ օղերուն տաքութեանը պատճառաւ, այլ սպասուի աշխանացին օրերու:

Գաբրիէլ վարդապետին դործերը չէին ներեր որ աւելի ուշանայ այն տեղ. ուստի հրաման ընդունեցաւ Կաթողիկոսին որ դառնայ իրեն վիճակը: Կաթողիկոսը այն հրամանը տալու ժամանակ նոր և դեղեցիկ խաչ մի պարզեց այնոր՝ հետագայ Կոնդակով:

«Մատթէոս ծառայ, և այլն»

«Գերապատիւ Սրբազան Գաբրիէլ Ս. յիւղովըւոյ Ծնորհապարզ վարդապետի՝ Հարազատից Աստուծոյ և եկեղեցւոյ սրբոյ: Գրաւորական վաստակք և աղագիրական ծառայութիւնք ձեր քաջածանօթք են մեզ և ամենայն աշխարհի, և մանաւանդ պաշտօնականութիւն ձեր և ճատագոյնութիւն յաղագս ուղղափառութեան «Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, որ յետ բազմապատիկ ճգանց և «ղրաւորական պատերազմաց ընդդէմ թշնամաց սրբոյ եկեղեցւոյ մերոյ՝ հրաժեշտ տուեալ ի նոյն միաբանութեանն, յարեցայք ի միութիւն բարոյական մարմնոյ Լուսաւորչեանս Տննդոց, և ժառանգեցիք իրաւամբք զժառանգութիւն ձեր, «զոր շնորհեաց Մայրն մեր Սուրբ Էջմիածին՝ ըստ պահանջելոյ «արդար իրաւանց, և ըստ ըզձե՛ ձերոցդ մտախաղանաց և հաւատարմութեան: Ապա և Մեր՝ որ Գահակալս եմք Սուրբ Լուսաւորչի Աթուռն, պարտ և արժան վարկաք նուիրել ձերդ Արժանաւորութեան զձերանշան աղամանդեայ խաչի՝ ունելով ի սրտին զմիջադործ պատկեր խաչելոյն վան մեր, և հրամայեմք «ձեզ կախել ի կուրծս ձեր ի ձոյցս ձերոց աղագիրական արձեանց, և ի պարծանս Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ:

«Մատթէոս Կաթողիկոս ամենայն Հայոց:

«Տուեալ է 1859, յուլիսի 25,

«Ի Ս. Էջմիածին:»

Բայ չայնմանէ ուրիշ Կոնդակ մի ևս տուաւ Նախիջևանի և Պետարապետի վիճակին ժողովրդոցը անունով, և չանձնեց վարդապետին, որոյ օրինակը արժանի համարեմք այս տեղ դնել, որպէս զի հասկացուի թէ ո՞րտի անհիմն պէտք է համարել այն կարծիքներն ու կասկածները՝ զոր ունեցան ոմանք, որպէս թէ Գաբրիէլ վարդապետը ոչ միայն եպիսկոպոսական ձեռնադրութեան արժանի չէ տեսնուած Վ. Կաթողիկոսին, այլ և անպատիւ եղանակաւ ետ դարձել է Ս. Էջմիածնին:

կամ թէ (որ աւելի ևս անտեղի և անճոռնի կերևի) երբ թէ Վեհափառ Կաթողիկոսը կամաւորապէս ինքզինքը Հիւանդ ձեւացուցել է ըստ խրատու ոմանց չեպեսկոպոսաց Էջմիածնի՝ որպէս զի զԳաբրիէլ վարդապետը եպիսկոպոս չձեռնադրէ . . . Ոչ ապաքէն այդպիսի կասկածն անգամ ծանր նախատինք կրելէ Վեհափառ Հաջրապետին ամենայն Հայոց, որ անշուշտ կարող էր չայտնապէս ասել՝ թէ արժան չեմ տեսներ ձեռնադրել զվարդապետը՝ այս կամ այն պատճառաւ, կամ թէ բնաւ իսկ առանց ուրիշներուն իմացընելու նորա պատճառը: — Իսկ կոնդակը այս է.

«Մատթէոս և այլն.

«Հայրական սիրով և Աստուածային օրհնութեամբ նուիրելը զՔրիստոսականն կենսաձիր սուրբ ողջոյն առ համօրէն հաւատացեալ որդեակս մեր է Քրիստոս և Սերելի ժողովուրդս Մեծի Վեճակիդ Նախնիքանի, Պետրապետի և Ղրբնու, Հանդերձ մաղթանօք երկնաձիր պարզեաց և միեթարութեան Հողոյն Սրբոյ շի վերայ ամենեցուն ձեր մեծի և փոքու, կալ մնալ ձեզ ընդ բազում ժամանակս է շնորհս Յիսուսի Քրիստոսի:

«Յայտ առնելք սովին Հայրապետական Կոնդակաւս առ հասարակ Սերելեացդ մերոց, զի որպէս Գերապատիւ Գաբրիէլ վարդապետ Բարեկարգ Առաջնորդն Վեճակիդ՝ Սերելի որդեակն ձեր է Քրիստոս, ըստ զբաւոր Հրամանաց մերոց հրաւիրեալ՝ շեկն այսր է Սուրբ Էջմիածին, և բերեալ մատուց մեզ զպարտուպատշաճ մեծարանս ձեր և զխոնարհ հպատակութիւնս առ Լուսաւորչական Մայր Աթոռս և առ Մեզ՝ է հաճութիւն բերկրութեան որդեգորով սրտի մերոյ, ըստ նմին օրինակի ահա և Մեր Սուրբ Կոնդակաւս այսուիկ յանձն առնելք նմին Գերապատիւ Վարդապետի փոխարինաբար բերեալ բաշխել ձեզ առ հասարակ Սերելեացդ մերոց՝ ապսպարելոց է ինամն տեսութեան նորա՝ զլիաբերան զոհութիւն Մեր զձերմէ բարեպաշտութենէդ և զգամենայն յաւաքադիմութենէ է վարս բարիս և յուսմունս զիւտութեանց, որոց մեծապէս վաստակաւոր դիտելք զԳերապատիւ Առաջնորդն ձեր: Եւ թէպէտ հաստատութեամբ եղևալ էաք և շեմք է մտի՝ շնորհազարդել զսոյն Հողեւոր Հովիւն ձեր՝ ամբառնալ զնա է բարձր Աստիճան Սրբազան Արքեպիսկոպոսութեան, այլ քանիկ ըստ սնօրէնութեան Ամենօրհնեալ կամաց Բարձր-

ւոյն՝ տկարութիւնք մարմնոյ և ջերմութիւնք օգոցս ստիպեցին զզմեղ յապաղել զհանդէս Օծութեան մերոյ առ ժամանակ մի, «ուստի չկամելով զի Գերապատիւ Առաջնորդն ձեր խափանեցի այլ ևս է կատարելոյ զգործս կարևորս Վեճակիդ, հրաման տուաք ճամին դարձ առնել առ այժմ յաթոռ իշխանութեան իւրոյ: Մեանդամայն և պատուիրեցաք, զի ընդ առնուլն է մէնջ զհրաւէրն, — որ յուսամ թէ ոչ անագանեցի Տերամբ, — փութացի այսր վերատին, և ընդունել զՕծումն սուրբ ձեռնադրութեան իւրոյ:

«Զայս ծանուցեալ ձեզ Սերելի որդեակաց մերոց՝ յորդորմք ևս չե է մեր կողմանէ յաւելուլ է բարեպաշտութիւնդ ձեր և է ջերմ մեռանդն սէր որդեականս առ Լուսատուն հողաց մերոց Սուրբն Գրեգորիոս, զոր և ցուցէք արդէն յօժարակամ նուիրանօքն ձերովք է հատուցումն պարտուց նորաշէն ձգնարանի նորին Սրբոյ շիօնն է Սեպուհ լերին. որին վասն ևս յայտ առնելք ձեզ զգուհութիւն մեր, և բարեմաղթմք յայլնիկալ Բարեբարէն շնորհել ձեզ կեանս երկարս հանդերձ օրհնեալ ընտանեօք ձերովք, պահել և պահպանել զձեզ ընդ հովանեաւ ինամոց ամենազօր Աջոյն իւրոյ, զերձ և ազատ յամենայն արկածից երևելի չե աներկոյթ պատահարաց և է փորձութեանց, և զննջեցեալսն ձեր լուսաւորեսցէ է լոյս փառաց Աստուածութեան իւրոյ, շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ է օրհնեալ յաւիտեանս:

«Մատթէոս Կաթողիկոս ամենայն Հայոց:»

«Տուեալ է 1859, է յուլիսի 26,  
«է Ս. Էջմիածին.»

Յուլիսի 26-ին Ճանապարհ ելաւ վարդապետը Ս. Էջմիածնէն, և օդոստոսի մէջ հասաւ Թէոդոսիա, ուստի հրատարակեց վերոյգրեալ Հաջրապետական կոնդակը վեճակին բոլոր ժողովուրդոցը է տեղեկութիւն և է միեթարութիւն հողաց և սրտի բարեսիրաց:

## Գ Լ Ո Ւ Խ Ժ.

Գարրիել վարդապետին դեմ պէս պէս հակառակութեանց  
սկսիլը:



Մինչև 1859 թուականին վերջերը Գաբրիել վարդապետին դեմ չաչանի Հակառակութիւն չէր երևնար՝ ոչ վիճակին մէջ և ոչ դրսի երկերները. թէպէտ և Հակառակորդներ ամէն տեղ անպակաս էին՝ զանազան հոգևով ու պէս պէս պատճառներով, ինչպէս որ չընթացս գործոցս պիտի տեսնուի: Բայց երբ նա դարձաւ Էջմիածնէն առանց Սոխիստի շեռտարուելու, և այս չձեռնադրուելուն համար զանազան կարծիքներ տարածուեցան առ զիս անդին՝ ինչպէս որ ասացինք, համարձակութիւն ասաւ նախանձը և վատ Հակառակութիւնը՝ նորընտիր Առաջնորդին դիտաւորութիւնը և գործերը պակասակերտ վար դարնելու, և աշխատելու որ նորա ձեռնարկութիւնները առին ու վերաց լինին:

Նև նախ, նոյն իսկ Ա. Էջմիածնաց մէջ գանուեցան քանի մի անձինք՝ որ Վեհ. Կաթողիկոսին միտքը կարողացան հետզհետէ աւրելու և ծուրու Գաբրիել վարդապետին վերաց: Իսկ թէ ի՞նչ պատճառ և ի՞նչ նպատակ ունէին նոքա իրենց այս Հակառակութեանը, գիւրին չերևի գուշակելը:

Ներկորդ, Նախիջևանի ժողովրդեան գլխաւորներէն տմանք, մանաւանդ նոքա որ եկեղեցական գումարաց խնդրոյն լուծուած ժամանակը՝ կեղծ հաշտութեամբ միացն իրենց ձայնը քաշել էին, կարծելով թէ կարող են նորընտիր Կաթողիկոսին ձեռքովը ոչնչացնել այն հաշտութիւնը, նորէն գրգռել եկեղեցական գումարաց խնդիրը, նորէն դատաստանի տակ ձգել իրենց սիրելի թշնամին, այսինքն Խալիպեան Յարութիւն Ազան, և

Առաջնորդէն պահանջել և առնուլ իրենց եկեղեցիներուն գումարները, — գրեցին Վեհ. Կաթողիկոսին, քողքեցին, դանդառեցան, և վերջապէս իրենց կամացը և դիտաւորութեանը գոնէ ըստ մասին հաւանեցուցին զինքը:

Այս բաներուս մեծապէս չորդորիչ և ձեռնառու գտան իրենց՝ Նալբանդեան Միքայէլ անունով տաքալուխ երեսասարդը: Սա ուրիշ պատճառ չունէր Գաբրիել վարդապետին հակառակելու, եթէ ոչ այս՝ որ նախ՝ նա իւր թշնամոյն, այսինքն Խալիպեան Յարութիւն Ազանին ազգային բարեգործութիւնը ընդունեցաւ, և առաջ տարաւ. և երկրորդ այս՝ որ նա չաջորդել էր Մատթէոս Արքեպիսկոպոսին տեղը, որ իւր պաշտպանն ու բարերարն եղած էր ժամանակով, թէպէտ և նորա խորհրդոյր և գործոյր անհաղորդ: Այս Նալբանդեանը ոչ տակաւ չոյս տուաւ Նախիջևանի ժողովրդեան սոժոզ մասին, որ թէպէտ եկեղեցեաց գումարներուն խնդիրը լուծուած, և Տէրութեանն ու Սինոդէն վերջաւորեալ ճանաչուած է, բայց կարելի է այնպէս անել որ թէ՛ Առաջնորդը և թէ՛ Խալիպեան Յարութիւնը Էջմիածին կանչուին, դատաստանի տակ ձգուին, դատապարտուին ու պատժուին՝ իբրև գող և եկեղեցակորսուտ: (1)

(1) Նալբանդեան երկրորդորդին վերայ շատ բան խոսուեցաւ ու գրուեցաւ վերջին ժամանակներու Մեծ Բաւանի Կաթողիկոսին համարձե՛ նշանակել այս որեղ նորա Տէ՛ Կոմարոս Կենսագրութեան, զոր ճիշտ Կաթողիկոսին ըստ ամենայն ճանաչոյ, հանգուցեալ Ներսէս Կաթողիկոսին նորա Կոմարոս Կոմարոս խոսուեցաւ. «Չբաւանար գաղտնաբերելի գրութեանն արեւադարի շոքեար իստութեանն Հայոց Երբ—Նախիջևանայ, և օրորացելոյն ի շորհոց Աստուծոյ Միշայել որդի Ոստայեան՝ սխալաւորն հրովորարարաւ առաջեալ ի «Հոգեար իստութեանն Նոր Նախիջևանայ՝ և յառաջարկեալ այն՝ իստութեանն վերջոյն զնոս ընդ հոգեարարութեան արարածաւորն ներշնչացայսանէլ շորհոցն իստութեանն և խորհրդարանի, այն է՝ Մաթիոս»

Այստեղ Հարկ կհամարենք երկու խօսքով չիշատակել նաև Պատկանեան Գարբիէլ քահանային կարգընկեցութիւնը, որովհետեւ այն ևս զանազան անհիմն խօսակցութեանց պատճառ եղած է չգիտցողներուն մէջ: — 1857-ին վերջերը Հինգ տարի էր որ արդէն այն քահանայն Ռոսթոյլէ բանտը փակուած էր զանազան չանցանքներու համար: Նորընտիր Առաջնորդը վեռատու եղած ժամանակը՝ ցանկալով որ այն հաշտողի ձեռունի քահանայն ազատի բանտէն, և ի սոյն չորդուրուելով նաև մէկ երկու աղագայիններէ, խորհուրդ հարցուց Յերակուտի անդամներէն ոմանց՝ թէ կարելի չէ՞ արդեօք միջնորդել Տէրութեան առջևը, որպէս զի բաւական համարուի քահանային այնքան տարուան ապաշխարանքը: Նորա խորհուրդ չտուին Առաջնորդին, այլ մանաւանդ զգուշացուցին որ իւր պաշտօնին սկիզ-

բար և Տուճի, աւ որ ևս աստեղեղն էր շինանայն այնպէ՛ զարարար-  
 « քելի քրու-լեանց երչոյուն նոցա, չէր Սրբանու-լեանն՝ անխոստանալու-  
 « Լեւոնի արհամարհութեանցն արեւարարի Հոգեւոր Կառավարութեան օրհնու-  
 « Լեւոնի նշանի սորբէ պատկանութեանցն՝ քրուար քործարարութեամբ անօրէն իւրոյ  
 « իւրարոց աւ եղբայրն ինչեան սիրելի Կուսին նշանեցելոյ, զի ընդ ընկալ-  
 « անուն զայն իւր քրու-լեանն՝ անիցի աստեղ նախ՝ աւ հարազատ Բարեկամն  
 « իւր արեւարարի Վանսիարարի չսան և հինգ րուուի արծալն խոստանալով,  
 « զի զինի ևս անի աստեղ զգուճար քրոսման հանգրեց պարգևոս, որո՛ւ  
 « և ինչն անի քրեալ՝ զի նա՛ արեւարարի Վանսիարարի չսանն՝ անիցի վըճ-  
 « ասարարութեամբ Վանսիարարի չսանի զքահանու-լեանն պատի չրաջն իւրոյ  
 « շունացելոյ Կանխաւ յառաջ ընդ այլոյ որոսն Եկեղեցանի որպիսի զի ինչն  
 « քրուլ սիրահար չրաջն նորա (իւրոյ), անիցի պատի ընդ նմին ինչն: Նոյն-  
 « քոս և զանս արարապայճան քրուար անարգութեանցն անպարտաւ երիտա-  
 « սարարի Ռարայեանց՝ սիրելոյ չէր անիցի արծանաւոր անչանց պարտելի  
 « Տեղեկութեանց Նոր — Կանխիւան չարաչի Հայոց զհարապայճան Կարողութեան  
 « չէրո՛ւ վըճանայն արեւարարութեանց ի քիճի իարգեալ համալսութեան

բէն այնպիսի գլխապարտութեան չանցանաց մէջ գըտնուող մարդուն համար բարեխօսութիւն չանէ: Վերան տարի մի անցաւ, Տէրութիւնը Նախիջևանի և Պեսարակոյ երբեմն Առաջնորդ Մատթէոս Արքեպիսկոպոսին, և նորա չաջորդ Գարբիէլ վարդապետին կարծիքներն ընդունելէն չետոյ՝ վճիւ հանեց որ Պատկանեան Գարբիէլ քահանայն բանտէն ելնէ, բայց Բարեկարգանին (փօլիցիացի) աստիկ հսկողութեանը ներքև ձգուի: Այն վճռոյն վերայ ՎեչՍՓՍՌ ԿՍՅՍՐԸ Իւր ձեռօքը աւելցուցել էր այս իմաստը. « Եթէ այդպիսի կասկածելի մարդ է, պէտք է քահանայական կարգը նորանէ առնուի: » Եւ ահա այն Կաշսերական վճռոյն զօրութեամբը Սինոդէն Հրաման եկաւ Առաջնորդին որ կարգընկէց անի զՊատկանեան Տէր Գարբիէլը՝ կա՛մ իւր առջևը բերելով, և կա՛մ Նախիջևանի Հոգևոր Կառա-

Եկեղեցանի ճարտագոյն իշխանութեանց պարբեր: Կախուղ ինտի և Սինոդի  
 « Իջճ ի ձեռնի, աններելի չէր չարաւոր յանգիւնութեամբ աւ ոչ ինչ քրեալ  
 « Սինոդանն ասարարութեան Հոգեւոր Կառավարութեանն Հայոց Նոր-Նա-  
 « խիջևանաց Տէրով յառաջարկութեամբ յարգաւ ներշնչացուցանելոյ զերկուսն  
 « զնոսա Տեղեկանութեանց արեւարարի ի Մաղ իսրարարի և խորհրդանայն ի  
 « Տուճի, զի նոցան վերանու-լեամբ յարգաւ անարժան քրուարութեանց  
 « շնոցան այնպի՛ Տէրոյ Եկեղեցանաց վնասանայն հասարական Տեղ-  
 « քանութեանց իւրեանց. Բացայարարութեամբ արժանարարութեանց իւրեանց  
 « համայնոյ օրինաց Տեղան ասանց իւրեանց զճարարարութեանց աստեղեցն ի  
 « Սինոդն Իջճ ի ձեռնի, զքրեան արժանարարութեանց չարաչան իրարարանի  
 « իւրեանց՝ հանգրեց նոչնէ՛ք Եկեղեցանոս: Չէր Սրբանու-լեանն անխոստանալու-  
 « րութեամբ պարարարութեանց չէրո՛ւ վըճանարարութեանց ընդ ընդհանրա-  
 « ւան օրինոս Եկեղեցանի ճարտագոյն իշխանութեանց զեւղարարութեանց անար-  
 « ւան զասհան չէրո՛ւ Նախիջևանութեանն յառաջեալ ըստ չէր հաճոցից  
 « զարեւարարի չեանարբեալ չահանայ, և զՌարայեանն (Նալբանութեանց)  
 « իարգեալ զեւղար չէրո՛ւ համայ և հաճոցից, ո՛չ Բնա և յաւ ածելով,  
 « զոր ասղմոհար որոս ինչն ինչ « Տէր արար է, և խորհրդի զուսն Տեղաւարար: »

վարութեան ձեռքովը: Առաջնորդն երկրորդ կերպը աւելի չարմար դատելով՝ հրամայեց Հողեոր կառավարութեան որ Սինողին կարգադրութիւնը կատարեն Պատկանեանին վերայ:—Ոմանք այս գործը մեղադրութեան նիւթ առին Գարբիէլ վարդապետին համար, որ իբր թէ իշխանութիւն չունէր Պատկանեանին կարգը առնելու՝ ինքը կարգ տալու իշխանութիւն չունենալով: Բայց այնպիսիները չեն գիտեր, կամ կմոռանան թէ Գարբիէլ վարդապետը Սինողին հրամանը կատարեց, և այն ի ձեռն Հողեոր Կառավարութեանն Նախիջևանի, և ոչ թէ անձամբ ու կանոնական հանդիսիւ՝ եկեղեցւոյ մէջ, ինչպէս որ սովորութիւնն է:

Այս կերպով կարգադրուի եղած Պատկանեանը ոչ Նախիջևանի մէջ հանդարտ կեցաւ, և ոչ Առաջնորդին հակառակորդները գրգռելէն զբուշացաւ. այնպէս որ քաղաքին եկեղեցականները մեղաբանական գրով խընդրեցին Առաջնորդէն որ Պատկանեանը Նախիջևանէն դուրս հանուի: Առաջնորդը այն խնդրագիրը չուղարկեց Ներքին Գործոց Ոստիկանին, և վճիռ եկաւ որ Պատկանեան Գարբիէլը քշուի Վեա'թ-քա քաղաքը ի բնակութիւն:—Չեմք գիտեր թէ Առաջնորդին այս արած գործողութեանը մէջ ի՞նչ անիրաւութիւն կամ ի՞նչ չափազանց խտտութիւն կտեսնեն հակառակորդները . . . Նալբանդեան Մեքայէլը Նախիջևանի քաղաքապետոյն և նորա կուսակիցներուն ընտրութեամբը Գործակալ որոշուած էր՝ որ երթայ Հնդկաստան, և այն տեղ հանդուցեալ Բաբաջանեան Մասհէին յօգուտ Նախիջևանի «Գլրոց սրբոցն Սահակաց և Մեսրոպաց» ասուելու ու սուամնարանին համար կտակով թողած փողերն առնու և բերէ Նախիջևան: Այս գործակալութեան գիրը հաստատել տալու համար՝ չուղարկուեցաւ նա չիջմիածին. բայց չայտնի եղաւ որ այն պատգաւ արութեան մէկ գլխաւոր նպատակն ալ էր Թալիպեանին դէմ եկեղե-

ցական փողերուն խնդիրը գրգռել, և անով իբր թէ չաղթանակ կանգնել նաև Առաջնորդին դէմ, և չետոյ երթալ Հնդկաստան, ինչպէս որ արաւ: Մեղ տեղովը չայտնի չէ թէ Նալբանդեանը ի՞նչ ընդունելութիւն դտաւ չիջմիածին, կամ թէ չետոյ ի՞նչ կերպով ձեռք ձգեց, և ո՞ւր տարաւ Հնդկաստանի փողերուն մէկ մասը,—որոց տոմսակները (պահան «իէլէները») Նախիջևանի քաղաքապետոյն քոյն են: Երևու երեք անգամ հարցուց Սինողը Գարբիէլ վարդապետին՝ թէ ո՞ւր են այն փողերը, և նա միշտ պատասխանեց թէ «Ամենեւին տեղեկութիւն չունիմ. Նախիջևանի քաղաքապետոյն պէտք է հարցանել»:

Ահա այսպիսի պարագայից մէջ գտնուելով վարդապետը, այնուհետև Վեհախառ Կաթողիկոսին ծանր ծանր և կշտամբողական կոնդակները քանի գնացին աւելի չաճախեցին Առաջնորդին նեղութիւնը և տագնապը. վասն զի նոցա մէջ չայտնի կտեսնէր այնպիսի անտանելի զրուցուածքներ՝ որ և ոչ Հռոյմաց խրոխտ պապերուն միջին դարուց ժամանակները հանած կոնդակներուն մէջ կհարդացուին. ինչպէս կարող է ամեն մարդ վիպել և թէ կարդաց գոնէ այս պատմութեանս մէջ չիշուածները. և որ մեծն է, չայտնի կտեսնէր վարդապետը որ իւր ամէն մէկ գործողութիւնը ծուռ հասկանալու և դատապարտելու ջանք կայ իւր հակառակորդացը մէջ: Եւ թէպէտ ինքը իրեն պարտք կճանաչէր միշտ մեղմով և հեղութեամբ պատասխանել այն կոնդակներուն, հերքելով իւր վերայ եղած զրպարտութիւնները, և վարատելով ընդունայն կասկածանքները, բայց կարելի է ասել թէ մինչև վերջը,—և գուցէ մինչև ցայսօր,—չկրցաւ ճշմարտութիւնը և արդարութիւնը հասկացընել որոց արժանն էր, ինչպէս որ չետոյ պիտի պատմեմք:

## Գ Լ ՈՒՄ ԺԱ.

Գարրիէլ վարդապետին շարտիրած «Վարդապետարան  
Ուղղափառ Հաւատոյ Հայաստանեաց Յիկեցուոյ» ասուած  
դրքին քննութիւնը:

Այն պարագաներուն մէջ մէ'կ բան միայն կպակա-  
սէր հակառակորդներուն՝ որ Գարրիէլ վարդապետին  
ամէն ձեռնարկութիւնները խափանեն կամ խանգա-  
րեն, և անունը թէ՛ աղբին և թէ՛ Տէրութեան առջևը  
սեցնեն. այսինքն նորա վարդապետութեանցը մէջ  
բան որսալ՝ որ կամ կաթոլիկութեան, կամ բողոքակա-  
նութեան, կամ չունադաւանութեան հոտ ունենայ:  
Բաց այս մասը ոչ սահաւ դժուարութիւն ունէր. վասն  
զի ոչ միայն չաչտնի էր ամենուն՝ վարդապետին սոփայ  
սոփայ և ամէն տեղ արած քարոզութիւններէն՝ թէ որ-  
պիսի՝ հաւատարմութեամբ կապուած էր նա Հայաս-  
տանեաց սուրբ Յիկեցուոյ անարատ դաւանութեանը,  
այլ և գրեթէ չկար մէկ Հայ մի որ չգիտնար՝ թէ նա  
ուժը ինը տարիէ ի վեր ինչե՞ր քաշած է Վաթոլիկնե-  
րուն ձեռքէն. մանաւանդ թէ բոլոր կենացը մէջ ո՞ր-  
քան տառապանք կրել է՝ աղբային Յիկեցուոյ դաւա-  
նութեան և արարողութեանց ջատագով լինելուն պատ-  
ճառաւ: Այս բանս լաւ գիտցողներուն համար ի հարկէ  
անհաւատալի զրպարտութիւն կերեկէր ոմանց ասածը,  
թէ վարդապետին միտքը այն է որ աղբին մէջ մտնե-  
լով՝ աղբը պապականութեան դարձնէ: Կհասկանային  
թէ այդպիսի անճոռնի կարծիք անող չիմարներէն ա-  
ւելի չիմարագոյն պէտք էր լինէր Գարրիէլ վարդա-  
պետը՝ որ այդ նորօրինակ առաքելութիւնը կատարէր,  
և այն՝ Ռուսաստանի պէս երկրի մէջ, և այն՝ յօգուտ  
պապական աթոռոյն, յորմէ բաց ի հալածանաց ամե-

նեկն շահ մի տեսած չէր և տեսնելիք չունէր:—Աղբին  
մէջ բողոքականութիւն (փրօթէսթանութիւն) մտցը-  
նելու միտք ունի ասելն և ո՞ առաջնոցն պէս անտեղի  
զրպարտութիւն լինելը չաչտնի էր. որովհետեւ վարդա-  
պետին ո՛չ մէկ գրուածքին և ոչ մէկ քարոզութեանը  
մէջ բողոքականաց վարդապետութեան հետքը անգամ  
երեցած չէր:—Իսկ նորա որ իրենց կարճ խելքովը՝ իբր  
թէ խորունկ քաղաքագիտութեամբ՝ կարծիք կանխէին թէ  
վարդապետին ջանքը այն էր որ Հայոց աղբը չունադաւան  
անէ, իբր թէ Ռուսաց Տէրութեան հաճոյնաւոր հա-  
մար, միւսներուն արած դատողութեանցը վերայ այս  
միամտութիւնն ևս կաւելացնէին՝ որ դուցէ առանց  
խմանալու՝ չախաղանց պատիւ արած կլինէին վարդա-  
պետին, որովհետեւ իբրև ճանաչած կլինէին զինքը այն-  
պիսի «անբէլ» ձեռնարկութիւնը գլուխ հանելու:

Նւ սահայն վերջապէս լաւ առիթ գտած համա-  
րուեցան այն խմատակները՝ որ վարդապետին աննե-  
րելի պահատութիւն կուղէին ճանաչել մինչև իսպառ՝  
նորա ժամանակով կաթոլիկներու մէջ ուսում և կըր-  
թութիւն առածը և աշխատածը: Նւ այս առիթն էր  
«Վարդապետարան ուղղափառ Հաւատոյ Հայաստա-  
նեաց Յիկեցուոյ» անունով գրքուկին հրատարակուելը,  
որոյ մէջ սրպէս թէ Վաթոլիկական վարդապետութիւն-  
ներ գտել էին:—Վարժէ որ տեսնեմք այս տեղ թէ ի՞նչ  
է այն գրքուկին շարադրութեանն ու տպագրութեանը  
ստույգ պատմութիւնը, և ի՞նչ կերպով պատճառ տուաւ  
քանի մի կիսեփեաց և ինքնախոյ աստուածաբանից ասե-  
լու՝ թէ նորա վարդապետութեանցը մէջ Վաթոլիկու-  
թեան հոտ կայ:

Պատմութիւնը այս է:—Փարիզու մէջ երբ Հայկաղ-  
եան Վարժարանը բացուեցաւ 1856-ին, կրօնական ուս-  
մանց դասատուութիւնը Գարրիէլ վարդապետին ջանձ-  
նուեցաւ. և նա պարտք ճանաչել էր իրեն ա՛յնպէս

սովրեցընել աշակերտաց Հայաստանեաց Յիեղեցւոյ ուղղախառ վարդապետութիւնն որ թէ՛ իրենց դաւանանքը լաւ գիտնան, և թէ՛ կարող լինին պապականաց և բողոքականաց սովորական Հարցմունքներուն և առարկութեանցը դոնէ այնքան ճիշդ և զօրաւոր պատասխաններ տալ՝ որքան և ինչպէս որ կախանջուր բարեկիրթ և խաղաղասէր աշխարհականէ: Իւր այս գիտաւորութիւնը կատարելու չէին կարող օգնել ուրիշ տարաբնույն տեսակ տեսակ Հայերէն քրիստոնէականները, չորոց ոմանք սաստիկ Համառօտ են և անկատար, և ոմանք չափէ դուրս ընդարձակ կամ գրաբառ, և գրեթէ մէկին ալ չկար այն գրուածոց մէջ որ Հասկացընէք աղայոց թէ ինչո՞վ կղանաղանի Հայոց Յիեղեցւոյ դաւանութիւնը մեզ քրիստոնէաց աղգաց դաւանանքներէն: Լաւ Համարեցաւ նորէն շարադրել Հայերէն քրիստոնէական վարդապետութիւն մը՝ Համառօտ Հարցմունքներով ու պատասխաններով, ռամիօրէն չստակ լեզուով, պարզ ոճով, մէջը Հաւատոյ և բարե վարուց վերաբերեալ ամէն Հարկաւոր գիտելիքներն ամփոփելով, և Հայաստանեաց Յիեղեցւոյ վարդապետութեան ուրիշ քրիստոնէաց Յիեղեցեաց դաւանանքներէն ինչ տարբերութիւններ ունեցածը որոշակի նշանակելով:

Այն վարդապետարանին շարադրուած մէջոցին էր, — 1857-են սկիզբները, — որ Գաբրիէլ վարդապետը Ռուսաստան դառնալու ժամանակ՝ Պօլևս Հանդէպեցաւ ուր լուսահոգի Պատրիարքն Յակոբոս ուրիշ քանի մը վարդապետաց առջև, չորոց բազումք կենդանի են, չորդորեց զինքը Ասորւոսաբանութիւն մը Հրատարակելու և երբ խօսքը վարդապետարանին վերայ եկաւ, Հեղինակը պատասխանեց թէ «Չայն ևս պատրաստ եմ նորէն այքէ անցընելով տարաբնույն, բայց այս պայմանաւ որ Ձեր Սրբութիւնը և Հոգևորական Ժողովը բարեհաճին նախ ձեռագիրը գրել, և եթէ Հարկ Համարին՝ պիտի գրուի»:

և չետոյ Հրաման տան տարաբնութեան»: Հաւանեցաւ Սրբապետը, և Գաբրիէլ վարդապետը իրեն դառնալէն ետև՝ նոյն տարւոյն Սեպտեմբերի վերջերը վարդապետարանին ամբողջ ընտղերը չուղարկեց Պատրիարքին՝ Հանդերձ այսու նամակաւ:

«Ամենապատիւ Սրբազան Տէր և Հայր Հոգևոր»

«Յետ ընդունելութեան օրհնութիւնաբեր նամակի Սրբութեանդ՝ տուելոյ յ13 Յուլեայ, ընկալայ և զպարզեւդ Հայերնի՝ «գղաւաղանն սրտուական, իբրև արդարև դաւադան զօրութեան «առաքեալ ինձ ի Սինէ՝ կազմուելչ տկարութեան անձինս, և «ցուպ միևթարութեան Հաւատացեալ Ժողովրդոց մերոյ Յիեղեցւոց, և անմոռաց յեշատակ Ձերուդ առ իս Հայրագործ խնամոց, որոյ վասն և շնորհակալու մտօք Համբոյր մատուցանեմ «աջոյ Սրբութեանդ:

«Պատեհաւ ուղևորութեան ի կողմանսդ մեծապատիւ քաղաքակցի մերոյ և աղգասէր բարեկամի՝ \*\* ընիկ Պօլևսեցւոյ, յղեմ «առ Ամենապատիւ Ձերդ Սրբութիւն զՀամառօտ վարդապետարան ուղղախառ Հաւատոյ՝ յօրինեալ առ յինէն ի պէտս աղգասցին ուսումնարանաց, և ինդրեմ յանձն առնել զայն ի քննութիւն Հոգևորական Ժողովոյն, որպէս զի տարաբնույն ի Փարիզ վաղադոյն որչափ իցէ հնար, քանզի և ի Հայկաղեան Աղղային վարժարանին կարևոր է յոյժ: Ի դարձուցանել զայն առ իս Սրբութեանդ հանդերձ ուղղաբնութեամբն որոց ունիցի արդեօք պէտս, յեղեցի թերևս և զընդարձակն նորին յօրինեալ ի գրոց բարբառ ի պէտս կղերիկոսաց, և յետ այնորիկապա բուռն Հարկեց զեռամանն Աստուածարանութեանն խոստացելոյ՝ սատարութեամբ աղօթից և օրհնութեան Ամենապատիւ Սրբութեանդ:

«Ստիպեալ ի զորձոց կարևորաց ուղևորել ընդ հուպ ընդ եղբօրն իմում ի Փեթրպօլսի՝ վասն երկամեայ ժամանակի, «հարկիմ ասաին ձմերել, և զվերադարձն իմ ի Պօլևս յապաղել «մինչև զմեզս զարնայնոյն, յորում ժամանակի ակն ունիմ տեւաբամբ արժանաւորել զարձեալ տեսութեան Սրբութեանդ Ձերոյ: . . . Մեամ

«Ամենապատիւ Սրբազան Տէր,  
«Ձերուդ Սրբութեան  
«Նուսատ և աղօթարար որդի  
«Գաբրիէլ Վ. Ս. յվաղեան»

վարդապետարանը շարադրուած էր, ինչպէս որ ա-

սացինք, գլխաւորապէս Փարիզու Հայկապեան վարժա-  
 րանին աշակերտներուն համար, սակ է՝ Տաճարասի Բէշ  
 գանուող Հայոց համար, և տպագրուած էր Տաճարասի  
 Հայոց Պատրիարքին հրամանաւր կամ յորդորանօքը. ուստի  
 բնական կերպով երկու սեպհական յատկութիւնք պիտի  
 ունենար. մէկը այս որ՝ մէջը—Թէ և հարեանցի խօս-  
 քերով—պիտի գանուէին այն կրօնական խնդիրներն որ  
 ուրիշ տեղերէն աւելի Տաճարասանի Հայոց մէջ շատ  
 կրանէին, մանաւանդ քանի մի տարիէ է վեր, և որոնք  
 ըստ մասին ընդարձակ և պարզ՝ բաց ճապաղ խօսքե-  
 րով տպագրուած էին արդէն 1854-ին՝ հանդուցեալ  
 Մատթէոս Կաթողիկոսին հրատարակած այն գրքին  
 մէջ, որոց անունն է «Հանդիսարան ուղղափառու-  
 թեան Հայաստանեայց Եկեղեցւոյ:» Երկրորդ յատկու-  
 թիւնն այս պիտի լինէր հարկաւ, որ Տաճարասանի  
 Հայոց ընդունելի լինելու համար՝ Կ. Պօլսոյ Պատրի-  
 արքին հաւանութեամբը տպուէր:

Մինչդեռ Վարդապետարանը է Պօլիս Պատրիարքին  
 և Հոգևոր Ժողովոյն ձեռքը քննուելու վերայ էր, նորա  
 հեղինակին Ռուսաստանի մէջ Առաջնորդական պաշտօն  
 տրուեցաւ: Յայտնի բան է որ եթէ նա այնպէս աւ-  
 տուածաբանական ծանր գրուածք մի հանել ուղէր,  
 կարգը և բարեկարգութիւնը կ'պահանջէին որ էջմիած-  
 նայ Սրբազան Կաթողիկոսէն կամ Սեւնհոզոսէն ըն-  
 դունէր գրաւոր հաւանութիւն, և այնպէս հրատա-  
 րակէր:

Վերջապէս չաջորդ տարւոյն սկիզբները Սրբազան  
 Պատրիարքին հետագայ նամակն ընդունեցաւ Գար-  
 րիէլ վարդապետը:

«Գերապատիւ և սրբակրօն վարդապետ, իմ ընտրելազոյն և  
 հոգեկցորդ սիրեցեալ. է սրտէ նուրբեմ ողջոյն սիրոյ և յարգա-  
 նայ:

«Զսիրամտոյց նամակ Զերում Գերապատիւ Սրբութեան՝

«դճանուցարան տեմ զքաջաւոյճ Ժամանելոյ է հայրենիս, վաղ  
 «ուրեմն բերեալ այսի մատոյց մեզ պատուատիրելի անձն այն \*\*  
 «սիրոյ արդարեւ արժանի աւ է ձէնճ, որ և հայրենակից մեր դո-  
 «ւրով՝ ոչ անձանաջ էր է մէնճ, և ոչ անբաժ է սիրոյ:

«Ընդ գրոյք ընդ այնմի էր և Վարդապետարան ուսմանց հա-  
 «ւատոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ է միջակ դաս աւանդեալ. տե-  
 «ւաք դեա յընդամեն ընդիր, զորոյ և զհաւասարն առաք, և կա-  
 «մէաք Ժողովովն զնոյն տալ է տպագրութիւն:

«Զարմացար ամենեքումք, զի չունէիր և ոչ մի ժամ պարա-  
 «ւոյ է ստէպ նամականաց առ վարդապետի բարեկամն քոյ, և  
 «ոչ ճեպանք նորասացին հայրենակցացը՝ տայն քեզ թոյլ և  
 «պարտոյ, առ որս կերպարանէիր զքո վսեմական խորհրդածու-  
 «թիւնս, և համոզէիր իսկ. բաց հայելով է պիտոյս աղբային վար-  
 «ժարանաց, և սրդէս ակնունեաքն է քումմէ Գեր. Սրբութեանէ՝  
 «զգրասիրակ միտս քո և զձեռսդ ժբացուցեր, զի մի՛ մանկտին  
 «Հայկազուն՝ է պղտոր աղբերաց ըմպեցեն զվարդապետութիւն  
 «քրիստոնէական ուսմանց:

«Գոպէս լինումնսլից ոգիւմ էզև դիպումն և շնորհիւն Հոգիարա-  
 «մն Ժողովոյս, զի տեսնի թէ սիրելեաւն քո վարեալ համառօտա-  
 «սիրութեամբ՝ խորշեալ էիր է կրկնութեանց, Թէպէտ յառաջն  
 «կամ զինի ըստ ճշմարտութեանն շար շար լուսաբանեալ էիր:

«Ուստի արժան դատեաց՝ առ է շատոյ որդի արարատարս զրու-  
 «ցից՝ յայլ հաւասար աւնուլ յամենայնի, թէև կրկնութեամբ  
 «մեկին վարել. և զնոյն կնքեալ վաւերացուցար է մամուլ տալ:  
 «Որպէս և հաւասարն զրոյ հաւանութեան Ժողովոյն է ընդ գրոյս.  
 «Ընդ նմին է և օրինակն արձակեալ է ձերմէ Գեր. Սրբութեանէ.  
 «Եւսամբ Ժողովովն հանդերձ՝ Թէ ոչ դժկամակիք ընդ մանա-  
 «ւոր փոխտութիւնս:

«Յուսամբ Թէ սիրեալ էք և զխտարելազոյն Վարդապետա-  
 «րանն, և ընդ ք զիտեաք կղերց Հայաստանեայց Եկեղեցւոյ ոչ  
 «անաղան. քանզի լու եղեալ նոցա Թէ վասն իւրեանց յատուկ  
 «ինն պատրաստի, անդուսոյ ոչուով լինին է խնդրէ:

«Այլ ինձ տեմ աւանձին, որպէս և ամենայն Եկեղեցականաց  
 «Ազգիս մերոյ, յաւետազոյն եղև անձկալի հրատարակութիւն  
 «մեծի Աստուածաբանութեանն, զոր վաղու խոստացար զրով,  
 «զոր և բազումք զրով և բանիւք յորդորեաուն:

«Արդարեւ որոց ծագիւ մատին ճաշակ աւեալ են այնմ բը-  
 «ձալի դպրութեան, ցայս վայր յաղամոյ դրենիս Թարթախին.  
 «Վաստակին բազմօք և շահին սակաւուք. իսկ որոց փախաքնն

«նմին բերել սրբապ, տեսեալ զանսոյնը ձև խօսելն՝ յետս խօսաւ  
«խուսարինն: Բայց թէ լուսարանեալ հրատարակեցն այնմ գե-  
«տութեան մատենան՝ դոնէ յերևս և ի չորս հատորս, պիտանի  
«լինի աղղին մերոյ, և վաղվաղակի առ ամենայն տեղիս տարա-  
«ծանի. ուստի մի՛ լիցն յապագումն և այսր կարևորագոյն զործոյ:

- «Ողջ լինել ըզձանամ
- «Ձերդ Գերապատիւ Սրբութեան
- «Բարեացակամ և մտերիմ միշտ
- «Պ. Կ. Յակոբ Արքեպիսկոպոս:
- «Ի Պատրիարքարանի մերում որ ի Կ. Պօլլիս:
- «Յ Յունուարի 1858:»

Անոր հետ մէկտեղ էր նաև Հոգևորական ժողովոյն  
քննողական վառաւոր վճիռը՝ այս խօսքերով գրուած.

«ՀԱՒԱՆԱԳԻՐ ՀՈԳԵՒՈՐ ԺՈՂՈՎՈՅ,

ԱՌ ՏԷՐ ՅԱԿՈԲ ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ Կ. ՊՈԼՍՈՅ.

«Աստուածարեալ Հայր և Տէր Սրբազան,

«Մեջակ դասու դասատեար Քրիստոնէական Վարդապետու-  
«թեան, անուանեալն «Վարդապետարան ուղղափառ Հաւատոյ  
«Հայաստանեայց եկեղեցւոյ», զոր յօրինեալ է Գեր. Տէր Գաբ-  
«րէէլ վարդապետ Ա. յվաղվոյրն ընտրելագոյն եղբայր մեր, և  
«առաքեալ ի քննութիւն, ահա՛ մատուցաւ յՍտեան Հոգևորական  
«Ժողովոյս:

«Որ և սա ինքն՝ բաց յառանձնական ղխմանց՝ ի քանի մի  
«նկատս իւր արար ի հասարակի մանրակրկիտ խուզողութիւնս, և  
«ետես՝ զի Քաջիկ Հեղինակն զործոյդ՝ ըստ գծին անուանելոյ  
«Մեջակ գոս՝ վարեալ յամենայնի, ուրէք ուրէք չէր զբեալ բացա-  
«յայտ ըստ կարևոր իմաստելն, լեզուի յոստմոյ չամ գէնի չաջ չաջ  
«պարզութեալ էր:

«Զգուշաւորեցաւ ժողովս, և ոչ աւելորդ գատեաց յամենայնի  
«ղլրկնութիւնս. զի Տէ՛ր ո՛ր հոգեւորական ղղոտորոտիւրէլի Հեղինակն,  
«և ո՛չ ղ ընդիւր ընդիւր բերածոց նորոս. և զի ակնկալը են՝ նորին ար-  
«գելեաւոր և վախճանի ալոյց ևս վաստակոց հետզհետէ հան-  
«դիպել:

«Ապա ներեցէք, Հայր Աստուածարեալ, զի անագանեաց ժո-  
«ղովս զիւր դատումն, և կամ որոս իբնութեանս, կամ յողոտեաց և  
«կամ յառեւ ղ բոսոս ինչ չամ ղ բոսոս Հեղինակն, և ի նոր հաւատարն

«էառ. զոր անդ մատուցանեմք ստորագրութեամբ մերով առ Աս-  
«տուածարեալ Հայրութիւնդ:

«Հաճեալ է ժողովս ըստ այսմ օրինակի հոգեւորական յամե-  
«նայն հոգեւոր Արքեպիս. աղաչեմք զի դու ինքն հաճեցն զօրինակն  
«քննակեալ ի ժողովոյս արձակել առ Ուսումնական Հեղինակն, և  
«տացես հրահան տպագրութեանն ի Փարիզ: Ո՞ Հայր և Տէր Սրբ-  
«բազան:

«Նուստ կաճաւորդք Հոգևորական ժողովոյս,

- «Սրբազան Հօր Տեղապահ, Գաւթի Եպիսկոպոս.
- «Պատրիարքական փոխանորդ, Ն. Իգնատիոս վարդապետ.
- «Ն. Ծ. Խաչակ վարդապետ, փոխանորդ Ս. Նրուսաղէմի.
- «Նուստ Յովհաննէս վարդապետ Ղուզղունձուխի.
- «Ն. Ծ. Պօղոս Պ. վարդապետ.
- «Գրեգոր քահանայ Պէշիկթաշու.
- «Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Տէր Յարութիւն.
- «Մահտէսի Տէր Գալուստ.
- «Յովհաննէս քահանայ Փախաղեան.
- «Ն. Նրեմիա քահանայ Խասկելի.
- «Սուրբ Գէորգ եկեղեցւոյ Տէր Փելեպպոս.
- «Մայր եկեղեցւոյ Տէր Գէորգ.

«6 Գեղեցնելի, 1857, ի Պատրիարքարանի Հայոց»:

Այն վճռոյն մէջ գլխաւորապէս երկու գիտելու բան  
կայ. մէկը այս որ Հեղինակին աղաչանացը Համեմատ՝  
Հոգևորական ժողովը ամենայն հոգեւորական հանդէս է այն  
գրուածքը, և ոչ թէ վեր ի վերոյ և հարեանցի կերպով,  
ուստի և չառաքել վերոյցել՝ ուղածը աւելցուցել է մէջը: Եւ միւսը  
այս որ, կարծես թէ գուշակելով թշնամեաց ասելիք-  
ները, բողոքականաց գրելիքները, և անտարբերեաց  
աղաղակները, գրելիք ընտանեաց արեւէ իւր քննութիւնը,  
որպէս զի ամենեւին տեղիք չմնաց ասելու թէ այն գըր-  
քուկին քննութիւնը աչառութեամբ, կողմնասիրու-  
թեամբ կամ գէթ սպառութեամբ և անհոգութեամբ  
կրճած է:

Եթէ Կ. Պօլլոց Պատրիարքարանին պէս պատկա-  
ռելի ժողովը այսքան զգուշաւոր քննութիւնէն յետոյ  
ալ՝ ո՛չ կաթոլիկութեան հոտ տեսել է կամ թողուցել է

դրքին մէջ, ոչ բողոքականութեան և ոչ ուրիշ ո՛ր և իցէ օտար կամ մոլար վարդապետութեան, ո՛ր Հայը կհա-  
մարձակի ասելու թէ ինքը այն Վարդապետարանին  
մէջ շատ մոլար վարդապետութիւններ կդանէ. բայց  
եթէ այն ինքնակոչ աստուածաբանները՝ որ իրենք  
գուցէ բոլորովին անկրօն են, և սակայն Հայրէջքն մէջ  
անգամ տասը տեսակ մոլորութիւն կդանենք ասելով  
կհայհոյեն. բայց եթէ այն բողոքականները՝ որ մըտ-  
քերնին դրել են թէ Հայաստանեայց Եկեղեցին շատ  
դիւրաւ պիտի կանեն՝ թէ որ կարողացածներուն չափ  
աստիպացնեն Հայոց սրտին մէջ այն տառերութիւնն  
որ իբր թէ բնականապէս մտած է ընդդէմ Յունաց և  
Ղատինացոց. և այն տառերութեան գլխաւոր պատ-  
ճառն այս եղած է միշտ՝ որ մեր Եկեղեցիէն ժամանակ  
ժամանակ շատ անկրաւ և անտեղի պահանջմունքներ  
արած են, և մոլորութիւն անուանած են նաև ա՛յն Հին  
և որբաղան վարդապետութիւնները՝ որ նո՛յնչափ սեպ-  
հական են Հայաստանեայց Եկեղեցոյ՝ որչափ Յունաց  
և Ասորոց և Ղատինացոց: Այս մտքով կհասկանամք  
ահա բողոքականաց Աւետարանն անուանեալ լրագրոյն՝ վարդա-  
պետարանին գէմ արած տղայական խօսքերը. այս մտքով  
կհասկանամք նաև այն իմաստակին խօսքն որ արժա-  
նահաւատ անձի մի ասել է թէ «Այն վարդապետարա-  
նին Հեղինակը կա՛մ պապադաւան է և կամ չունողա-  
ւան», ուստի և արժանաւոր պատասխանն ընդունել է  
թէ, «Այս ալ աւելցուր. — և կամ Բողոքական. — և ես քեզ  
կցուցանեմ որ հարազատ հայադաւան է և ուղղափառ  
լուսաւորչական»:

Բայց մեք մեր պատմութեանը գաւառներ: — Հեղի-  
նակը վարդապետարանին այնպէս բոլորովին նոր դա-  
դափարուած օրինակը առնելուն պէս՝ անսխալ հա-  
ւատարմութեամբ խոսչն չուղարկեց Փարիզ որ տպագ-  
րուի, 1858-ին սկիզբները, առանց հարկի կամ շահաբաժնի

ևս աւելցնելու, որովհետև իրեն չանձնուած Առաջ-  
նորդական պաշտօնին նոր և ծանր գրադմունքները  
չէին ներել որ այնպիսի մանր պարագայից աւելի մտա-  
դրութիւն անէ: Ուստի և դարմանք չէ որ տպագրե-  
ները (Պերպպ. Գալֆայեան և գրարք) ճակատը այնպէս  
տպագրեցին՝ ինչպէս որ իրենց պատշաճ երեցած էր,  
յառաջաբանական ծանուցումն ևս այնչափ համառօտ  
արին՝ որչափ որ իրենց հարկաւոր երեցել էր, չտարա-  
կուսելով հեղինակին իրենց վերայ ունեցած վստահու-  
թեանը:

Տարածուեցաւ վարդապետարանը Տաճկաստանի ազ-  
գայնոց մէջ, և առ հասարակ ամենուն ընդունելի ե-  
ղաւ՝ իրեւ պարզ և միանգամայն ամբողջ և ամփոփ  
դասատեարակ քրիստոնէական վարդապետութեան,  
պատանեկաց ձեռքը տալու ամենայն կերպով չարմար.  
և թէպէտ պապականք ամենայն հնարք բանեցուցին  
որ ազդին այքէն Հանեն այն գրքոցը, և ինչպէս որ  
մինչև ցայժմ արել են՝ իրենց Ղատինական լսմորով  
ծթած քրիստոնէականները քշեն, բայց այս անգամ  
խօսքերուն մտիկ անող չունեցան:

Գանուեցան Ռուսաստանի Հայոց մէջ քանի մի  
հոգի՝ նոցա մտքին և շահուն գուցէ չանգէտս ձե-  
ռընտու, կամ նոցա տառերութեանը ուղղակի և անուղ-  
ղակի գործադիր, և մէկը մէկալը գրեցին ու գրգռեցին  
ճածուկ՝ ընդդէմ վարդապետարանին և նորա հեղինա-  
կին, բայց անով ևս բան չշահեցան. վասն զի այն  
գրքուկին առաջին տպագրութիւնը լմնցած լինելով,  
հեղինակը աճապարեց չուղարկելու դաչն առ նորըն-  
տիւր Վաթուղիկոսն, և խնդրեց որ իւր հաւանութիւնը  
կամ հրամանն ալ շնորհէ երկրորդ տպագրութեանը  
համար: — Նոյն մեջոցին Տէր Յովսէփ Օրբէլեան Արժա-  
նապատիւ ուսումնասէր Աւագ քահանայն ևս նոյն  
գրքոցը թիֆլիզու աշխարհաբաւին վերածեց, և չու-

ղարկեց հեղինակին որ տպագրուի: Այուսացուէր թէ երկու տպագրութիւնն ալ սխեկնն և աւարտուէին շնորհիւ և հրամանաւ Հովուապետին Հայաստանեաց Եկեղեցւոց, բայց վարդապետին յոչսը պարապ էր: Վասն զի Կաթողիկոսը երկու տարի աջն վարդապետարանին քննութիւնը մէկըն զնեւէն վերջը՝ կամեցել էր նորա տեղը հրատարակել տպագրութեամբ իւր շարադրած մէկ գիրքը՝ որոց ճակատն էր այս. «Ուղղեցոց Քրիստոնէական ուղղափառ վարդապետութեան» (Մոսքուա, 1861). բայց ինչպէս որ ամէն մարդ ալ կարող է տեսնել, Կաթողիկոսին աջն գիրքը ամենեւին նմանութիւն չունի Գաբրիէլ վարդապետին գրուածքին հետ՝ ոչ ըստ ոճոցն և ոչ ըստ նիւթոցն: Եւ այս բանիս հաւատարու գուցէ իրաւունք ևս չունէր Գաբրիէլ վարդապետը՝ եթէ 1863-ին ինքը անձամբ չլսէր Վեհափառ Կաթողիկոսին բերանէն այս խօսքը թէ «Քու վարդապետարանիդ տեղը ես նորը շարադրեցի ու տպել տուի:» . . .

Այսպէս ահա ո՛չ թէ անորոշ մնաց վարդապետարանին խնդրը, այլ շատ լաւ կերպով որոշուեցաւ ու հաստատուեցաւ՝ թէ ուրեմն նորա մէջ *հարգութեան*, և կամ մեր Եկեղեցւոցն հակառակ վարդապետութիւն չկայ եղել, որովհետեւ Հայրապետական Կոնդակ չեւաւոր դաջն դատապարտէր, ու նորա տեղը Վեհափառ Կաթողիկոսին գիրքը ցուցանէր:

Այս գլուխը վերջացնենք՝ ասելով որ մինչև ցայժմ մեք երկու գրուածք տեսել եմք վարդապետարանին դէմ, երկուքն ալ ձեռագիր. մէկը անանուն իմաստակի մի գրուածք ուսուցիչն, իսկ միւսը յայտնի հակառակորդէ մը, այսինքն Նալբանդեան Միքայելէն շարադրուած և Կաթողիկոսին յուղարկուած: Այս երկրորդիս հերքումն ալ ունիմք՝ շատ զօրաւոր և գեղեցիկ կերպով գրուած և Թեֆլիզ՝ չգետեմք որո՛ց ձեռքով. բայց թէ՛ մէկը և թէ՛ միւսը աւելորդ կհամարենք Պատմութեանս մէջ բերել և կամ վերլուծութեամբ քաղել:

## Գ Լ Ո Ի Խ Ժ Բ.

Փորիդու Հայկական Վարժարանին փակուիլը:

Ինչպէս որ առաջ չիշատակեցինք, Գաբրիէլ վարդապետը այնպիսի միճակի մէջ թողուց Փնորհու Հայկական Վարժարանը 1857-ին, որ եթէ միայն գրամական պարտք և նեղութիւն չունենար՝ ամենեւին տարակույս չկար որ հաստատ պիտի մնայ և առաջ պիտի ելթայ: Վասնզի աջն Վարժարանը Օսմանեան Տէրութեան պաշտպանութեամբը վերջապէս Գաղղիոց Տէրութեան առջևն ալ ճանչցուեցաւ իբրև աղգային ազատ Ուսումնարան, որոց անտեսական կառավարութիւնն յանձնուած էր արդէն Կ. Պօլսոց աղգային Գերագոյն Ժողովոյն, և ներքին կառավարութիւնը երեք վարդապետներուն, որոց աղգասիրութիւնը, աշխատասիրութիւնը և քաջափորձ հմտութիւնը ըստ բաւականին հասկացուած էր: Իբրև էր որ Գաբրիէլ վարդապետին աջն վարժարանէն հեռանալովը միւս երկու վարդապետաց աշխատութիւնը կճանրանար. բայց որովհետև 1858-ին Վենետիոց Միլիթարեան միարանութեանէն զատուելով զնաց միացաւ Թէոդորեան Սարգիս Վարդապետին և Գալֆայեան Ամբրոսիոս վարդապետին հետ նաև Գալֆայեան Խորէն վարդապետը, ո՛ր կարող էր տարակուսել՝ թէ աջն Վարժարանը առաջ պիտի չելթայ, և պիտի չբառնայ օր մի մեր աղգին համար կատարեալ համալսարան մի ի կեդրոնի ամենայն գիտութեանց և արուեստից աշխարհէ՝ ի մայրաքաղաքն Փարիզ . . . Բայց աւա՛ղ. Պօլսոց Գերագոյն Ժողովը ուրիշ ճանր խնդիրներու, և մասնաւորապէս աղգային Սահմանարանի վէճերուն զբաղած, և երկու կուսակցութիւն բաժնուած լինելով, ժամանակ չունեցաւ ճար մի մտա-

Տերու որ Հայկազեան Վարժարանին պարտքերը վճարուին, և ապագան ապահովուի:

Գերագոյն ժողովոյն ազգասէր և Հայրենասէր անդամներէն մէկ քանին, որ դովելը եռանդեամբ միշտ աշխատած էին այն Վարժարանին Հաստատութեանը, — և չանուանէ՝ Հանգուցեալ Խորասանձեան Պետրոս ամիրան, Մոմձեան Միլտիչ և Աղաթոնեան Միլտիչ աղաները, — վերջին դարման մի այս մտածեցին որ Թէպոբեան Սարգիս վարդապետը անձամբ երթայ Պոլիս, խօսի ազգային իշխանաւորաց հետ, Վարժարանին առնելիքները հաւաքէ, պարտքերը վճարել տայ, և ապագային համար ալ հնարք մի առաջարկէ և ընդունելի անէ: Գերապատիւ Սարգիս վարդապետը, որ արդէն այնքան արդիւնք ունէր ազգին վերայ՝ Մուրատեան վարժարանին Հաստատութեամբը, չնայեցաւ իւր ալեղարդ հասակին համար ծանր ճանտարհորդութեան դժուարութեանցը, և գնաց Կ. Պոլիս, խօսեցաւ սրոյ հետ որ կարելի էր խօսիլ և գործ տեսնել այն շիթ ժամանակներուն: և թէպէտ փոքր ինչ դումար մի կարողացաւ հաւաքել, բայց առաւելագոյն խոստմունքներուն կատարման չուսովը՝ հարկադրեցաւ մնալ Կ. Պոլիս գրեթէ տարի մի չափ ժամանակ:

Այն մեջոցին էր որ եղաւ Կաթողիկոսի ընտրութիւնը, և Սարգիս վարդապետը աւելի ալ չոչս առաւ նորընտիր Կաթողիկոսին մեծամեծ խոստմունքներէն, որ Հայկազեան Վարժարանը նորա պաշտպանութեանը շանձուելով՝ պետի լինի արդարեւ կեդրոն ազգային լուսաւորութեան: Այս իւր չոչսը հազորդեց գրով նաև Գաբրէլ վարդապետին, և նա խիղջն փութացաւ իւր կողմանէ ևս չնորհախալութիւն գրել առ նորընտիր Հայրապետն՝ ազգանոք հանդերձ, ինչպէս որ անակ առաջ ևս աղաչանաց և չորդորանաց նամակներ գրած էր առ Սրբազան Պատրիարքն Կ. Պոլսոյ Գէորգ Արքե-

պիսիոսոս, և առ Գերագոյն ժողովն ազգային: — Այսու ամենաչնիւ, մինչև 1859-ին մայիսի վերջերը, ոչ Վեհափառ Կաթողիկոսին և ոչ Գերագոյն ժողովոյն կողմանէ գործնական և որոշ կարգադրութիւն մի եղաւ յօգուտ Հայկազեան Վարժարանին: (1)

Գաբրէլ վարդապետը գրած էր Գեր. Սարգիս վարդապետին իւր կարծիքը, թէ քանի որ Կաթողիկոսը Պոլիսէն չէ հեռացած՝ պէտք է անպատճառ հետեւի որ Հայկազեան Վարժարանին դործը կարգի մտնէ, և ինքը Կաթողիկոսը Կոնդակ հանէ առ ամենայն Հայս, մէջը բացատրելով Հայկազեան Վարժարանին Փարիզու մէջ Հաստատուելուն կարևորութիւնը և օգուտները, և միանգամայն անոր պահպանութեանը և անընդհատ շտառադրելութեանը պէտք եղած միջոցները, այս ալ աւելացընելով թէ դուցէ այնպիսի կոնդակի մի հրատարակումը դժուարանայ, կամ նոյն գորութիւնը չունենայ՝ Նորին Սրբութեանը Ռուսաստան գալէն վերջը. և ըստ առաջարկութեան Սարգիս վարդապետին, մանաւանդ թէ Կաթողիկոսին, Կոնդակին իմաստն անգամ շարագրեց և չուղարկեց: Բայց Վեհափառ Կաթողիկոսը արժան դատել էր այն կոնդակին հրատարակումը ուրիշ ժամանակի թողուլ, և իւր հետը առնուլ տանիլ Թէպոբեան Սարգիս վարդապետը և Թիֆլիզ և չէջմիածին, այսու խոստմամբ որ իւր օժմանէն չետոյ ձեւնադրէ գնա Սպիսիոսոս ամենայն Հայոց ցրուելոց և զանազան կողմանս Եւրօպոս, և միանգամայն Կառավարիչ Հայկազեան Վարժարանին, այն վար-

(1) Գ ր Ժ ն ա ի ն ի արգարտութեան խոսեմ, վասն զի խոսով եղած չարախոսութիւնները պատճառ չէին՝ ոչ ճիշտն իշխանաւորաց կողմանէ, այլ և նորընտիր Մարկէոս Կաթողիկոսին, որոյ փրօժ նամակներէն ճիշտն պատճէնը քես Պատրիարքեան վերջը՝ Յ ա ռ է լ ո ս Տ Ա:

Ժարանին համար ևս պէտք եղած փողը հաւաքէ Թիֆլիզէն ու Էջմիածնէն և տայ ձեռքը:

Թէոդորեան Սարգիս վարդապետը գնաց ուրեմն Վեհափառ Կաթողիկոսին հետ մինչև Էջմիածին, ընկերակցելով ի ճանապարհին և այն տեղը Գաբրիէլ վարդապետին, և հետը խորհրդակցելով Հայկազեան Վարժարանին վերայ՝ Թերազոյս ակնկալութեամբ: Բայց մէկ կողմանէ եղանակին սաստիկ տաքութեանը չդիմանալով, միւս կողմանէ ևս տեսնելով որ Կաթողիկոսի օժման ժամանակը պիտի ուշանայ շաբաթներով կամ ամիսներով, և Վարժարանին գործերուն վերայ մեծ լուծիւն կայ, Գաբրիէլ վարդապետին Խրիմ դառնալէն չետոյ ինքն ևս դարձաւ Թիֆլիզ, և այնտեղը անցուց բոլոր այն ձմեռը, միշտ չուսալով որ Թիֆլիզեցիք Հայկազեան Վարժարանին համար փող հաւաքեն իրենց մէջ՝ ի հարկէ Կաթողիկոսական կոնդակի մի զօրութեամբ: Բայց դժբաղդաբար Վեհափառ Կաթողիկոսը՝ փոխանակ չորդորական կոնդակի՝ բացասական և չուսահատեցուցիչ նամակ գրել էր Գերապատիւ Սարգիս վարդապետին, չորում դարմանալին այս էր՝ որ կասէր իւր Թէ Գաբրիէլ վարդապետը չ'ըկամենար Հայկազեան Վարժարանին հաստատուիլը, կամ նորա համար փող հաւաքուիլը: Հարկ չէ ասել նոցա՝ որք այս գործոյս ամէն պարագաներուն տեղեակ են, Թէ ո՛րքան անհիմն էր Վեհափառ Կաթողիկոսին այս կարծիքը, մանաւանդ Թէ ո՛րքան հակառակ Գաբրիէլ վարդապետին Թէ՛ դիտաւորութեանը, Թէ խօսածներուն և Թէ գրածներուն: Ուստի Վ. Կաթողիկոսին այդ կերպերով իւր խոստմունքէն ետ յենալուն ուրիշ պատճառներ կային՝ որ չետոյ չայտնի եղան:

Այն մեջոցին, այսինքն 1859-ին ձմեռուանը մէջ, Ամբրոսիոս վարդապետը Հայկազեան Վարժարանին մէկ քանի աշակերտները հետն առած՝ դարձաւ Կ. Պօլիս,

որպէս զի Հայկազեան Վարժարանին չփակուելուն մէկ ճարը տեսնէ, որովհետև վարժարանին չքաւորութիւնը չետին աստիճանի հասած էր, աշակերտներն ևս խիտաքիչ մնացած. բայց դարձեալ բաց ի չուսադրական խոստմունքներէ ամենեւին օգուտ չտեսնելով չաղգայնոց, որ նոցն Սահմանադրութեան վէճերուն զբաղեալ էին՝ առաջինէն ալ աւելի, փութացաւ Փարիզ դառնալու՝ Թէոդոսիացէն անցնելով: Եւ Թէպէտ ո՛չ ի ճանապարհին ուշացաւ, և ոչ ի Թէոդոսիա, ուր Գաբրիէլ վարդապետին հետ խորհրդակցելու և նորա աշխատութիւնները տեսնելու համար միայն հանդիպած էր, և ուղիղ դէպ ի Փարիզ գնաց, բայց աղգային Պատրիարքարանէն՝ չգիտեմ ի՛նչ պատճառաւ՝ հեռագրական Թղթով արդէն հրաման զնացել էր Փարիզ Կոճիկեան Յակոբ Էֆէնտիկին, որ Հայկազեան Վարժարանին կահ կարասին հրապարակական աճուրդով ծախել տայ, աշակերտները իրենց տեղերը ճամբէ, և Վարժարանը փակէ, իսկ ծախուած նիւթերուն գնովը վարժարանին պարտքերուն փոքրիկ մէկ մասը վճարէ: Յակոբ Էֆէնտիկին ալ այնպէս արաւ՝ ահագին ամօթով աղգիս առաջի օտարաց, ողբալի հանդամանօք, մեծամեծ վնասներով, և կորուստեամբ այնպիսի մէկ Վարժարանի՝ որոյ նմանը նորէն բանալը և այնքան առաջ տանիլը շատ դժուար պիտի լինի նոցա՝ որ կամենան փորձը անել. Թո՛ղ այն անբուժելի սրտախոտութիւնը երեք չորս անձանց, որք այնքան աշխատութիւն, տառապանք, նախատինք և հալածանք քաշել էին այն վարժարանին բացմանը և հաստատութեանը համար չօգուտ աղգին:

Այս է ահա Փարիզու Հայկազեան Վարժարանին փակուելուն ցաւալի և համառօտ՝ բայց ստոյգ պատմութիւնը, զոր եթէ ուրիշները ուրիշպարագաներով կարենան ընդարձակել, սակայն դիտաւոր և հակա մասունքը չեն կարող փոխել և այլայլել՝ առանց անխիղճ

և յանդուգն դատողութեանց: Այս աչալէս լինելով, ընթերցողաց դատաստանին կլթողումք մեր կողմանէ՝ նաև աչս խնդրը որոշել՝ թէ Հայկաղեան Վարժարանին փակուելուն պատճառ կարո՞ղ է ասուել արդեօք իրաւամբ Գարբիէլ վարդապետը, ինչպէս որ ոմանք հրատարակեցին, և բարեմիտ մարդիկ հաւատացին. մինչդեռ չաչտնի է ամենուն՝ թէ Հայկաղեան Վարժարանին փակուելը ո՛չ թէ օգուտ, այլ մանաւանդ մեծ վնաս էր նաև Թէոդոսիոյ մէջ բացուած Ուսումնարանին. վասն զի անտի ելնող աշակերտաց առջևը Լաղարեան ձեմարանէն դատ ուրիշ Բարձրագոյն աղագային ուսումնարան չէր մնար՝ իրենց ուսմունքը կատարելագործելու. իսկ այն ձեմարանը աղբին ամէն տեսակ կարօտութիւնը լեցնելու հարկաւ բաւական չէր: Յետոյ իմացուեցաւ որ այն սուտ լուրը հրատարակողներուն միակ դիտաւորութիւնն է եղել Հայկաղեան Վարժարանը փակել, Սարգիս ու Գարբիէլ վարդապետաց մէջ դժտութիւն ձգել, և Թէոդոսիոյ Ուսումնարանն ևս այնուհետև ամենայն դիւրութեամբ կործանել. իմացուեցաւ, բայց ի՞նչ շահ որ բանը բանէն անցել էր, և ատուածային նախախնամութեան թոյլտուութեամբը պիտի դիուէր սղղը այն ակնկալեալ բարեքններէն:

Գերապատել Սարգիս վարդապետը անհնարին ցաւով սրտի լսեց ի Թեֆլիզ Փարիզու Հայկաղեան Վարժարանին փակուելը, ինչպէս որ բնական էր, և այնուհետև ո՛չ էջմիածին դարձաւ, ուր կհրաւիրէր զինքը Վեհափառ Վաթուղիկաբ Սպիտկոպոս ձեռնադրելու համար, և ոչ Ղարաբաղի վիճակին Առաջնորդութիւնը չանձն առնելով՝ ըստ խնդրոյ ժողովրդոց տեղւոյն. այլ 1860-ին սկիզբները դարձաւ զնաց Պօլիս, այն տեղն ալ մէկ շարաթիէն աւելի չմնալով՝ քաշուեցաւ զնաց ի Փարիզ, և Լքեալ ու դառնացեալ սրտիւ կպատրաստէր

ի տպագրութիւն Մուրատեան և Հայկաղեան վարժարաններուն Պատմութիւնը: (1)

### Գ Լ Ո Ի Խ Ժ Գ.

Խալիպեան Ուսումնարանին ընթացքը, և Թէոդոսիոյ մէջ Լաւրան բացուիլը:

Հայկաղեան վարժարանին աչնպիսի ցաւալի կերպով փակուելը Գարբիէլ վարդապետին սաստիկ տրտմութեան և տարախուսանաց պատճառ եղաւ,—վասն զի չաչտնապէս կտեսնէր նաև անով թէ ո՞րքան դժուարին բան է մեր սղղին մէջ մեծ դործի մի ձեռք դար-

(1) Այն պարսո-լիւնը վերջապէս հրատարակեցաւ պայտքութեամբ ի Փարիզ 1866-ին ի չորս հատրոս, երկարապարօճ ոճով Գրքին անանը իտրելի էր քնել ոչ թէ Պատմութիւն, այլ պարզապէս «Հասարակական հասարակութեան Սարգիս վարդապետի Թէոդոսեան ընդ այլ և այլ անչանց յաղաքս Մուրատեան և Հայկաղեան վարժարանաց, և պէս պէս անչանց և իրաց Միլիթարեան Տիւթանութեան» (De omni re sciffili et quibusdam aliis). . . . Ելեւ ըստ տրժանույն եղած լինէր այն նախնայ ընդդէմութեանը, պարտույն չէր որ պարզեալ ոչ ստիտ յարգ իտանէնար հասարակութեան իբրև աղբային ժամանակից պարսո-լիւնն Տէլ Տալին ընդարձակեմիլ, թէ և Ան քի քոսոյ ան պէր Քալց հարէ է անել՝ որ այն պարտքութեան Տէլ Քալցոյ և նախնայ Տէլ Տալին հրատարակութեան Քալցոյ թէ և Էլ քոսոյ էր, ոմանցը քալ թէ քալ իտան ու վնաս ստիտը, և ոմանցը նոյն ինչ իրեն՝ Գեր. վարդապետին պարտույն ան վայել և անարժան, իբրև ճիւղման և անանչանան իտրժեաց և քաղանեաց պած Տալին ու Քալցոյ, հայտարար ուղիղ իտրժի, և զինաց ճարտութեան, չաղաքութեան և Քարէլիտանութեան . . .

ներն ու առաջ տանելը, մանաւանդ երբ ազգին մեծերն ու կարծեցեալ իմաստունները Հակառակ կենան: Սահաչն ինքը յոյր Աստուծոյ օգնութեանը վերայ դրած՝ ետ չկեցաւ սկսած աշխատանքներէն, որոց դըլսաւորներն էին Խալիպեան Աստումնարանը, նորա Տարւանը և «Մասեաց Աղաւնի» ամսագրոյն և ուրիշ Հարկաւոր դրքերու տարագրութիւնը: Մեանդամայն ուղելով այն ձեռնարկութեանցը մէջ քաջադօտի և Հաւատարիմ օգնական ունենալ, իրեն քովը հրաւրեց Փարեղէն Գալֆաշեան Խորէն վարդապետը՝ խոստանալով նորա աշխատութեանցը չափաւոր ռոճիկ և վարձատրութիւն. և նա Հաստատուն պայմանագրով յանձն առաւ երեք տարուան Համար դալ Թէոդոսիա, ուր և Հասաւ 1860-ին դարնան սկիզբները, և սկսաւ Հաշկարանութեան դասախօսութիւն անել Աստումնարանին մէջ, ամսագրոյն

Գեր. Ասրֆէս վարդապետը ճիշտ դրած էր անշուշտ՝ իւր Մարտեան վարձարանին պարտաւէտն հրատարակմամբն ոչ ճիշտ իւր առիտներուն այնպէս լինանները պիտի ճանաչուին, հաշկարանն ու ժողովարանին, հոգաւորն ճեճամէծ օգուտներ պիտի լինին անով ճեր ազգին . . . նմանապէս Հայնապետն վարձարանին Բայնանը, ընկալիւն ու փառելուան պարտաւէտութեամբն իւր ճեր իւրի տարւոյսցընէ ինչպիսիք, և ճիշտ ինչպիսիք, առօրէ տարեաց և ապագայից: Այս պէս այժմէն պետուեցաւ որ այնու հրատարակմամբն ոչ առօրէն նպատակին հասաւ և ոչ երբորորին. վասն զի Գրաւորներն երբու ճանչին ևս ինչն ճեճամէծ հաշկարան լինելու որով, ինչպէս որ իւրով զվէջել ո՛ր և իցէ անշուշտներ ճարտը որ այն շար ահագին հարստները ճարտը ի ճարտը իւրաւուն համբերութեան անշուշտ: Իսկ ճեճ Բաւանն համարելէ այնպէս ճիշտ աւելցրին ևս ճան՝ Բարձրաբուն ճերունունն սկսանալը ըստ իւրի լեւեղներուն ճարտը, իւր նորա այս վերջին ճանաչաններն այլ և այլ անշուշտ և պարտաւէտն պարտաւէտն իրան վերի պետն ու դասախօսութիւնները յիստաւ այնպէս ճանն որ պիտի է ներելի համարել նորա ճարտը և ընդարձակութեան շինութեանը ու լուսնայ ան-

խմբագրութեանը աշխատակից լինել, տպարանի սրբագրութիւններն ալ կատարել:

Այն տարւոյն մէջ էր որ Գաբրիէլ վարդապետը նորա մէկ աշխատանքի ձեռք զարկաւ՝ Թողովրդական կրթութեան Համար: Թէպէտ տղայոց և պատանեաց ուսում տալու Համար՝ Թողովրդական դպրոցները բարեկարգելու և Խալիպեան Աստումնարանը առաջ տանելու մեծ ջանք և աշխատանք ունէր, բայց սերտը կեփէր նոր նոր Հնարքներ մտածելու՝ որ մեծահասակ Թողովրդականներն ևս զուրկ չմնան բոլորովին այն հարկաւոր տեղեկութիւններէն՝ որ կարելի է գիւրաւ և զուարճութեամբ սովորեցնել իրենց. ինչպէս որ արդէն Ռուսաց Տէրութիւնն ևս նոյն օրերը Հրաման տուել էր որ ամէն տեղ Կիրակի օրուան Դպրոցներ բացուին նոյն նպատակաւ: Աստի մտածեց Գաբրիէլ վարդապետը որ «Լսարան կենցաղօրում գիտելեաց» անունով Թողով Հաստատե. այսինքն շարաթը մէկ անգամ ուսումնարանին մէկ մեծ սրահին մէջ Հաւաքուին արք և կա-

ցած արեւորդ հասակին ճեր: Մեր Գրքոյն նպատակն այս ևս պիտի է անէ՛ն նախ՝ իւր Գաբրիէլ և Ա. Բարսեղ վարդապետները փոխէ ճիշտ 1859 թարին մէնելին յետո՛ւ զարեւմ շարին ո՛ր և իցէ ապագային աշխատութեան՝ առանց Ասրֆէս վարդապետին հետ խորհրդակցելու և նորա հաստատութեան ընդունելու Բանին իմ փորով, ինչպէս որ յայտնի է նորա հրատարակած նամակներէն: Երբորոր լե Բարսեղ ընկերոջը իւր ճեր որ ուղարկութեամբ իւր տար այն փոքին շարորդ հարդին ճեր Գաբրիէլ վարդապետին ղանապետն նամակները՝ զոր փրած է հեղինակին (առանց մէնելին իւր ճեր լե նորա է՛րբ և իցէ պիտի պայտարանին), և ինչն իւրանէ՝ ո՛րոնն անհիմն էն Թեոդոսիան ճեր երեսուցած իմ ուրիշներն լամ իսպառները, որ իւր լե Գաբրիէլ վարդապետին անշուշտ ևս իւր ու լուսնայ անշուշտ ևս լուսնայ ան-

նայք, և լսեն նորա և Խորէն վարդապետին դերեմաց  
ոճով պատմած պատմութիւնները և ուրիշ գետնէք-  
ները՝ ի սուրբ գրոց, չաղագլին և չարտաքին պատմու-  
թիւնէ, չաշխարհագրութիւնէ, ի բնագիտութիւնէ և այլն:  
Այս օգտակար ձեռնարկութիւնը այնքան Հաճոյ երե-  
ցաւ ժողովրդեան որ քանի գնացին բազմացան շաբաթի  
եկողները, և Հարկ եղաւ շարունակել նաև երկրորդ  
տարւոյն ձմեռը: Մէկ կողմանէ ալ իւրաքանչիւր դասը  
զատ տեսարկով կտպուէր ու աժան գնով կծակուէր  
ժողովրդեան:

Բայց ի՞նչ օգուտ որ այսպիսի տաժանական աշխա-  
տանքներուն մէջ իւր մեծերէն, այսինքն Բարձրագոյն  
Հոգևորական իշխանութիւնէն քաջալերութիւն լսելու  
տեղը՝ մեղադրանք, չանդիմանութիւն և արգելք տեսաւ  
անդադար և մինչև իսպառ: Վեհափառ Կաթողիկոսին  
միտքը ո՞րքան պզտորած էր վարդապետին դիտաւորու-  
թեանը և գործերուն վերայ որ նախ մեղադրեց զինքը  
կոնդակով թէ ինչո՞ւ Համար Խորէն վարդապետը քովն  
ընդունել է՝ փոխանակ զինքը էջմիածին չուղարկելու  
և երկրորդ՝ ուրիշ կոնդակով մեղադրեց թէ ի՞նչ Հար-  
կաւոր էր «շաբաթ», Հաստատել, և այնտեղ արանց և կա-  
նանց խրատական պատմութիւններ պատմել, մինչդեռ  
կարող ես, կասէր, եկեղեցիներուն մէջ քարոզութիւն  
անել, և այն բաւական է: Յայտնի բան է որ վարդա-  
պետը զօրաւոր փաստերով արդարացուց իւր նաև այս  
գործը, և սակայն Կաթողիկոսին առջևը ոչ երբէք ար-  
դարացաւ: Ինչո՞ւ:—Վասն զի աւելի իրաւացի երեցան  
ու կերևնացին միշտ իրեն Նալբանդեան կուսակցու-  
թեան ամբաստանութիւնները, որ Հետզհետէ կզօրա-  
նային ու կաստականային ընդդէմ վարդապետին:

Բայց կարժէ որ զնեմք այս տեղը Վ. Կաթողիկո-  
սին մեղադրական մէկ նամակը, (որ իւր թէ նորա առ  
Գաբրիէլ վարդապետն գրած կոնդակներուն մէջ ամե-

նէն մեղմ ու Հանդարտ խօսքերով գրուածն է.) զնեմք  
չետոյ նաև նորա պատասխանը՝ յորում գետնէ է աւելի  
այն կտորը՝ որ շաբաթի կվերաբերի: Նամակը այս էր,

«Արժանապատիւ Գաբրիէլ վարդապետի Այվազեանց:

«Խորհրդարար և ցաւովք սրտի փութացայ գրել ուղղակի  
«ու Ձեզ, և յընցուցանել զբարոյական խրատ երջանիկ Առաքե-  
լոյն Յակոբայ և թէ «Որ ոք զիտեցէ զբարին և ոչ առնիցէ՝ մեղք  
«են նմա». (Յակոբ. Գ, 17): Զճշմարիտ վարդապետութիւնն ի  
«Սարդաէ Ենորհալոյ ի վերայ սոյն հողերուդն բանից կարէք  
«ընթեանուլ և ի միտ առնուլ, զի՞ պիտոյ է զկարևորագոյնս հո-  
«գևորական պաշտօնի մերում զբարի բարի աստուածապարգև  
«տաղանդ ծրարեալ թագուցանել, և ձեռնամուխ լինել ի մտա-  
«ցածին գործ, կամ հնարել զնորոճայն բանս: Այնպիսի է հնա-  
«րեայն ի ձէնջայն շաբաթ՝ յորում աղգարարութեամբ ձեր հրաւիրին  
«աղգայինք մեր արք և կանայք: Սակայն զիտեմ զի ընթերցեալ  
«էք զայն հեղինակութիւն զաղղիարէն՝ անուանեալ Խարդաւանք  
«Լուտերի, Կալվինի, և Զուինքլիանոսի, թարգմանեալ յԱնդրէաս  
«վարժապետէ ի հայ բարբառ, զոր ի գրատան աղղային Ուսում  
«նարանի Զմեռանոյ տեսեալ իսկ եմ ի լինելն իմ անդանօր:  
«Վկայէ այս հեղինակութիւն՝ թէ Լուտեր հնարեաց Լսարան՝  
«յորում խոստանայ տալ զբացատրութիւն հին և նոր կտակարա-  
«նաց, բայց ունէր ներքին խարդակութիւն և չարութիւն մտաց,  
«որով որսայր զմիտս հրաւիրելոյն ի վերանորոգութիւն եկեղեց-  
«ւոյ իւրեանց: Ուստի զԱստուածաշունչ սուրբ գիրս հին և նոր  
«կտակարանաց ներքին խարդաւանաց իւրեանց զիմակ ունէին  
«Բայց մեք չեմք կարօտ լսարանի կամ ժողովարանի, վասն զի չու-  
«նիմք զաղանի խարդակական դիտաւորութիւն ինչ:

«Ապա զի՞ է մեզ հնարել լսարան, և զհեղինակութիւն Լու-  
«տերի և հետևողաց նորին ի վերայ մեր բերել, որովհետև շնորհիւ  
«Յեսուսի Փրկչին մերոյ ունիմք յամենայն տեղի զԱստուածային  
«սուրբ տաճարս, յորս խուռն բազմութեամբ զիմեն բարեպաշտ  
«և ջերմեռանդն ժողովուրդք մեր, և անդանօր շնորհիւ սուրբ Հոգ-  
«ւոյն Աստուծոյ կարող եմք որչափ մեր վրանն է բացատրել զմիտս  
«սուրբ գրոց խորհրդական և բարոյական ուղիղ վարդապետու-  
«թեամբ, որպէս առնէր և ուսուցանէր ճշմարիտ վարդապետն  
«մեր Յեսուս Փրկիտոս ի Տաճարին և ի մէջ բազմախումբ ժողո-  
«վրդոց, և ոչ ի զաղանի յատկացեալ տեղիս, որպէս զբն Սրբա-  
«զան Աւետարանիչք, Մատթ. ԻԶ. Մարկ. Ա, 21. ԹԲ, 35,  
«Լուկ. ԺԹ, 47. Ի Ե. 37, 38. Յովհ. Է, 28. Ը, 20:

«Սոյնպէս և սրբազան Առաքելաւքն ըստ օրինակի երկնաւոր  
 «Ճշմարիտ Վարդապետին իւրեանց» քարոզէին և ուսուցանէին զա-  
 «Լեւտարանական ճշմարիտ վարդապետութիւնն՝ ոչ յաւանձին  
 «Վայրի, այլ համարձակ ի տաճարին ի ժողովս հաւատացեալոց ըստ  
 «քաղաքաց քաղաքաց ժողովրդոց. Գործ. Ե, 21. ԻԵ, 42. Ա.  
 «ՏԻՄ. Գ, 17: Յաղազս այսօրեկ սուրբն Յօհան Ոսկեբերան ի  
 «16-դ ճառին ի բնաբան երջանիկ առաքելոյն Պողոսի. «ՁԼ ԵԹէ  
 «աւետարանեմ՝ ոչ ինչ են ինձ պարծանք, քանզի հարկ ի վերայ  
 «կայ. բայց վա՛յ է ինձ ԵԹէ ոչ աւետարանեմ.» Ա. ՏԻՄ. Թ, 16,  
 «զբէ դարձուցեալ զբան իւր առ ժողովուրդն յասելն. «Շնորհիւ  
 «սուրբ Հոգւոյն Աստուծոյ ոչ երբէք դանդաղեցայ և զլացայ քա-  
 «րոզել զբանն կենաց Աւետարանին ճշմարտութեան ի սուրբ Ժո-  
 «զովն եկեղեցւոյ Քրիստոսի, որ է տեղի սրբութեան և տաճար  
 «Աստուծոյ:»

«Ապա զի՞ պիտոյ է քեզ, և ուստի՞ ստիպեալ ես թողուլ զա-  
 «բահետ ճանապարհն և զուղիղ սրբոտայն, ընթանալ յաւապարհն՝  
 «յլնդունայն վաստակ և յոչինչ շահ ըստ հոգւոյ: Ա. Մ. զԵ՛ՆԷ,  
 «հարկ ի վերայ մեր կայ ըստ հոգևոր հովուական պաշտօնի մե-  
 «քում բարձր ընթանալ. մինչև ընդ սրբազան Առաքելոյն Պո-  
 «զոսի համարձակեցուք ասել. «Ձբանն ունել յանձինս ի պար-  
 «ճանս ինձ յաւուրն Քրիստոսի, զի ոչ ընդունայն ինչ ընթացայ,  
 «և ոչ ընդունայն վաստակեցի.» Բ, 16:

«Ձայս ևս հարկ եղև ինձ աղբ առնել ձեզ և զգուշացու-  
 «ցանել զձեզ, զի մի՞ դուցէ արատաւորեցէ զբաւոր աշխատու-  
 «թիւնն ձեր զբարեհամբաւեալ ձեր զանուն: Մեք ուշի ուշով ըն-  
 «թերցեալ զառաջին և զչորրորդ դասս Լսարանի ձերոյ (1860)  
 «և զերրորդ և զչորրորդ դասս (1861) գտի ի նոսա բան ինչ  
 «հակառակ սուրբ գրոց, աւանդութեան և վարդապետութեան  
 «սուրբ Հարց, որս կամեցայ բացատրել մի ըստ միտքէ. որպէս զի  
 «ի զալ ժամանկն ձեր աստ յայտնել ձեզ զայնս ազացուցել. և  
 «ԵԹէ կամք իցնն ձեր՝ ընդ ձեզ բերձք զմիացեալ տերութիւնս ի  
 «քննութիւն, որպէս զի զբարե բարին ժողովել ի մի և զխոտանն  
 «ի բաց ընկենուլ:

«Առ այժմ՝ փոքր ի շատէ գրեցաք առ ձեզ. յուսամք զի ողջամիտ  
 «կամօք ընկալեալ զայս մեր գրութիւն զգուշացելք ըստ ամենայնի:

«Ողջ լե՛ր աստուածահաճոյ կենդանութեամբ.

Վ. շապուի ՄՍՏԹԻՍՍ Կաթողիկոս ամենայն Հայոց:»

Ե՛ Յեպտեմբերի 1861.

ի Ս. Էջմիածին:»

Այս նամակին իմաստը և խօսքերը ո՛րքան և ան-  
 յարմար երևնան առաջարկեալ խնդրոցն և անտեղի,  
 բայց Վ. Կաթողիկոսը այնքան հաւանած կերևի ասած-  
 ներուն որ նոյն նամակը գրեթէ ամբողջ տպագրել  
 սուաւ չետոյ իւր տետրակներէն մէկուն սկիզբը: Թող  
 ուրեմն այն նամակը կարդացողները կարդան ամբողջ  
 նաև Գաբրիէլ վարդապետին տուած պատասխանը, որ  
 է այս.

Վեհափառ Տէր, Աստուածաբաւ Հայրապետ.

«Յորմէ յետէ համբոյր հրաժեշտի տուեալ շնորհարաշխ աճոյ  
 Արքուժեանդ՝ դարձ ի կողմնս յայտոսիկ արարի, չև ևս էր իմ՝  
 հանդիպեալ յԱստուածաբաւ Հայրապետէդ այնպիսում քաղցր  
 մխիթարութեան՝ որպիսի աղիւսաց յիս օրհնութեանաբերն Վեհիդ  
 տողեալ խորհրդա՛բոյ Ե՛Յ աւուր սեպտեմբերի տարւոյս. քանզի ի  
 նմա նկատեալ տեսի այս առաջին անգամ զհայրապետութ խնամոցդ  
 նշոյլս ցանկալիս՝ որ իբրև ի միջոյ թխպայորդ ամբոց գէղա-  
 դէդ կուտակելոց զԱրքատեանն Մասիւք՝ շողան տակաւին ի  
 հեւացեալքս մարմնով ի տարաբանի որդիքս լուսանկար տաճա-  
 րիդ սրբոյ Էջմիածնի. Ընկալարուք ապա, Աստուածաբաւ Հայ-  
 րապետ, յաւաջ քան զամենայն՝ զերախտապարտ սրտի իմոյ  
 զանմուտաց և զանսահման շնորհակալիս վասն այսր մեծապարզ և  
 շնորհի աղբելոյ անշուշտ ի Ձերդ Վեհափառութիւնն յայնմանէ  
 որ Հայրն է գթութեանց և Աստուած ամենայն մխիթարութեանց:

«Արդարև իսկ, Աստուածաբաւ Հայրապետ, յայնպիսում արդ  
 դտանիմք մեք ժամանակի, յորում հովիւքս և հովուապետք եկե-  
 դեցւոյն Աստուծոյ ո՛րչափ և յաւելուցումք ի զգուշութիւն և  
 յաջալընութիւն, տակաւին ևս անգոր իմն դտանիմք մերօրմանն  
 ջանիւք արապ արապ ժողովել զխարատեալսն, և զմիացեալսն ան-  
 կորուստ պահպանել՝ զլուսակիցն դաւինս բանաւորս, զյայտ-  
 նեալսն երբեմն աստուածահաշ տեսեամք սրբոյ Հօրն մերոյ  
 Գրեկորի Լուսաւորչին, ի գաւթիս Հոյսատանեայցս սուրբ Նիկե-  
 դեցւոյ, սուանց օգնականութեան ամենագոր աճոյ Բարձրելոյն,  
 և աւանց զերազուեի հսկողութեան Աստուածընտել Հօտապետիդ  
 մերոյ: Ձայս ինչ քաջ զեւելով ոչ կարելի լիովին յայտ առնել  
 գրով կամ բանիւ՝ ԵԹէ քանի՛ քաղցր է ինձ սաէպ սաէպ իւր-  
 բաստ և յորդորանս հայրենիս ընդունել առ ի Ձերմէ Արքու-  
 թեանէդ, և ըստ այնմ՝ տքնել և վաստակել՝ որչափ յինն է կարօ-

դուրթիւն՝ ի շահ օգտից այնք մասին ժողովրդոցն Աստուծոյ որ յիս հաւատացաւ:

«Ասիայն եթէ իցէ ինչ երբէք ի խրատն յայնոսիկ որ զյանդիւնսնութեան և զսասից բերելէ կերպարանս, և միանդամայն խեղճ մտաց իմաց և հասարակացն վկայութիւն երաշխաւորելն՝ զի ոչ արժանի այնպիսում սաստից գործեալ է իմ գործ, այլ մաւնաւանդ գովութեան և քաջայերուութեան, միթէ ի յանցանս ինձ գրեցել երբէք՝ յորժամ իբրև որդի հարադատ պարտեալ գնիցեմ առաջն արդարասիրի Հօր զիրացն ճշմարտութիւն: Եւ ահա յայսպիսեաց սակի թուի ինձ, Վեհափառ Տէր, և գործ Լաւրանն՝ զորմէ խորհրդաբար ազդ առնել ինձ հաճեցաւ Ձերդ Սրբութիւն իւրոյն մեծարոյ նստակաւ:

«Ապաքէն քաջայայտ է Սրբութեան Ձերում, Վեհափառ Տէր, զի ազգս մեր յամենայն տեղիս, ևս և առաւել ի կողմանս յայտոսիկ, իւրոյն բնիկ դաւանութեամբ և եթ կայ և մնայ անկորուստ և անյերափոխ՝ շիրջիւ ամենայնամ Սրբաբնն: Այլ թէ որպիսի՝ թանձր տղիտութիւն զբաւեալ պատեալ ունի զմիտս եկեղեցականաց և աշխարհականաց առհասարակ յաղաղս կարեւորագոյն մասանց հաւատոյ և սեպհական դաւանութեան, ևս և պատմութեան շին և Նոր կտակարանաց, աղբային պատմութեան, և քարոյական ուղիղ սկզբանց, նոքա միայն կարող են լիով խելամուտ լինել, որ ի մտոյ զժողովուրդս մեր տեսանիցեն, և ընդ նոսա և առ նոսին թարթափելցեն՝ գէթ դամ մի և զերկուս: Բեմբասացութիւնք և քարոզութիւնք յեկեղեցւոջ թէպէտ և ստէպ ստէպ լինիցին առ ի մէնձ, և այն ըստ կարի պարզ և զիւրեմաց բանիւք, սակայն և այնպէս յանհարկցն իմն է այնպէս զիւրեմտել և ախորժ ընծայեցուցանել նոցա դո՞ քարոզութեանն և զպատմութեան, և այնպէս ի մանուսն իջանել, և այն ընդ ժամն ձիգս, զի ցանդ յօժարափոյթ սիրով ունինդիր լինիցին ժողովուրդքն, և ի միտ զամենայն զբանսն առնուցուն: Ես առաւել անմարթէ նոցա նստել հանդարտութեամբ յեկեղեցւոջ, և այն ի ձմեռային յերանակի, և ժամն երկուս և երկն անբողհատ մտաւրութեամբ ունին գնել խրատուց և քարոզից և պատմութեանց:

«Մինչդեռ գննարս իմն իրացս Հայթիայթիւն ճիւղէ յինէն կողմանէ, և ահա ել Հրաման յօրհնարանեալս Անտուրթիւնէ՝ զի ամենայն ուրեք համարձակ լիցի ամենեցուն բանալ զպրօցս կիւրահէից: այսինքն է ձրի դասախօսութիւնս հասարակաց առնել առ ժողովրդականս և առ սամիկս՝ զկարեւորագոյն գիտելեաց, զվերձանութեանէ ասեմ, զզրոյ, զթուարանութեանէ, զբրևտոնէականս

վարդապետութեանէ և այլն: Յայսմանէ խրախոյս առեալ յորդորեցաք և մեք սահմանել՝ զի ի յերկարածիգ երեկոյս ձմեռնային կիւրահէից հաւաքեսցի կամաւորապէս ժողովուրդն մեր ի միումն յընդարձակ սրահից Աստուծոյն յանդիւն մերոյ, յի ժամն ցՅ ժամ, և անդ լուրթեամբ և հանդարտութեամբ նստեալ ի վերայ աթոռոց՝ արքն առանձինն և կանայք առանձինն՝ իբրև յեկեղեցւոջ, ունինդիր լիցին ամենեքեան պարզախօս դասախօսութեանց մերոց զպատմութեանէ շին և Նոր կտակարանաց, զերեկել անցից ընդհանուր և աղբային պատմութեան, ևս և զքարմանահրաշ տեսարանաց ընութեան, զհրաշակերտցն ասեմ Աստուծոյ, և զարդասեաց մարդկելոյն ճարտարութեան, և ամենայն զիւրեմտել ոճով ինկալաք առ այս և յատկեանէ Ներքին Գործոց զհաճութեան հաւանութեան, և ի ժողովրդոցս առ հասարակ զլեւերեան շնորհակալս:

Այս է ահա, Վեհափառ Տէր, զոր ենն ի գէպ համարեցայ «Լսարան կենցաղօրուտ գիտելեաց» անուանել, և որ ոչինչ բնաւ ամենեկն ունի նմանութիւն ընդ խմբարանաց Լուսերականացն և Կալվինականաց, որ իբաւամբ ծակամուտ լինէին և թաքթաքուր շրջէին խիզբան անդ հերձուածոյն իւրեանց, և զթոյնս մոլորութեանցն ի ծածուկ տեղիս ժայթքէին ի լսելիս ողջամտաց, զանդիտելով յառաջնորդաց եկեղեցւոյ և ի քաղաքական տեսչութեանէ, և այնուհետև ո՛չ եթէ տեղին էր որ վտանդաբեր և վնասակար զլարդապետութիւնս նոցա առնէր, այլ վարդապետութիւնն էր որ զտեղիսն առնէր խմբարանս և լսարանս մոլորութեան, ուստի և խորշիկս ողջամտաց: Արդ եթէ մերս վարդապետութիւն և ուսումն ուղղափառական իցէ, — որպէս և է իսկ, — չիցէ՞ արդեօք մեզ օրէն, Վեհափառ Տէր, ո՛ւր ուրեք և կարող լիցեմք՝ կրթել և հրահանգել զժողովուրդս մեր, և այն սպարէն ըստ օրինակի երկնաւոր Վարդապետին մերոյ, որ ոչ միայն ի Տաճարին ուսուցանէր, այլ և ի ժողովարանս շրէից, այլ և ի լիւրինս, այլ և ի տափարակ տեղւոջ, այլ և ի ծովեղեղին, այլ և ի նաւակի, այլ և ի տան, զորօրինակ յորում զանդամալոյճն բժշկիկաց, և ուր ոչ էր տեղի և ոչ առ գրանն, և խօսէր նոցա զբանն:

«Ապա ուրեմն որք այլազգ ամենեկն տուեալ են զիրացս տեւտեղեկութիւն Ձերումը Վեհափառութեան, Աստուածաբաւ Հայրապետ, յայտնապէս ի բաց եղեալ է նոցա զերկեղն Աստուծոյ և զամօթ կրեաց» եթէ գիտութեամբ առնելցն զայն, և այլն:»

Կարծէք Գաբրիէլ վարդապետը՝ թէ այն պատասխանով փարատել է Կաթուղիկոսին կասկածանքը, և

մեծ Հետաքրքրութիւն ունէր թէ արդեօք ի՞նչ են այն մոլորութիւնները՝ որ Կաթուղիկոսը դասէ է Լսարանին տպագիր դասերուն մէջ՝ հոգաւոր սուրբ Գրոց, «անդամներն և վարդապետներն սուրբ Հոգի»։ Եւ ահա 1863-ին Ս. Երմիածին երթալով՝ լսեց Կաթուղիկոսէն ու պատասխանները տուաւ, ինչպէս որ չետոյ պիտի պատմեմք։

### ԳԼՈՒԽ ԺԴ.

Օգոստոսի 10-ը Ինքնակալին Ռուսաց Աղերսանդր Բ. Կոյսեր այցելութիւնը ի Խալիպեան Ուսումնարան աղբիս Հայոց։

Սեպտեմբեր ամսոյն 10-ը օրը նշանաւոր և երջանկաւէտ օր մի եղաւ Խալիպեան ազգային Ուսումնարանին համար. վասն զի այն օրը արժանացաւ ՎեչնափԱՌ ԿԱՅՍԵՐ Աղերսանդր Բ. բարեսէր և շնորհաբեր այցելութեանը։

Ինչպէս որ լրագիրներէն ևս չայտնի էր, Օգոստոսի 10-ը ԿԱՅՍԵՐ և ԿԱՅՍԵՐՈՒՆԻՆ՝ իրենց երկու ծիրանածին կրտսեր դաւաններովը, որ են Մեծ իշխան ՍԵՐԿԻՅ և Մեծ իշխանուհի ԱՂԵՔՍԱՆԴՐԱ, օգոստոս ամսոյն 25-էն ի վեր կդառնուէին Խրիմու հարաւային ծովեղերքը, Եալթաքաղաքին մօտ, Լիվադի անունով ծովահայեաց գեղեցկանիտ ամառանոցը։ ՎեչնափԱՌ ԻՆՔՆԱԿԱԼԻ կամեցաւ այս իւր ուղևորութեան ժամանակը երջանկացանել այցելութեամբ նաև Խրիմու մէկ քանի քաղաքները, այսինքն Սևասթոփոլ, Պաղչեսարայ, Թէոդոսիա, և Կերչ։ Ս.յս չորսն ալ մէկ մէկ սեպհահան մեծամեծ չատուութիւններ ունին՝ ՎեչնափԱՌ ԿԱՅՍԵՐ՝ ևս և ամէն մարդու մտաւորութեանն արժանի. Սևասթոփոլը՝ երբև արևելեան պատերազմին տխրատեսիլ չիշատակ,

Պաղչեսարայն՝ երբև թաթար խաներուն և բոլոր Խրիմու հին մայրաքաղաք, Թէոդոսիան՝ երբև Մոսքուայէն մինչև Սև ծովը շինուելու երկաթուղոյն գլուխ և կայարան, և Կերչը՝ երբև Աղովի ծովուն բանալին և նուազէն մարտիրոսներովը նոր Սևասթոփոլ։

Ինչպէս երկու շաբաթ առաջ Խրիմու կուսակալին ձեռքովը հրատարակուել էր, ՎեչնափԱՌ ԻՆՔՆԱԿԱԼԻ պիտի դար Թէոդոսիա սեպտեմբերի 10-ին. և թէպէտ ո՛րքան ժամանակ կամ քանի՜ ժամ կենալիքը չայտնի էր, սակայն քաղաքացիք մեծ ուրախութեամբ օթեան պատրաստեցին Կայսեր՝ Քոչուպէջ իշխանին փառաւոր և նորաչին տունը։ Բայ չայնմանէ փողոցները մաքրեցին, տները սպիտակացուցին, ծովեղերքն ուղղեցին, և նաւահանգստին վերայ մեծ ու գեղեցիկ չաղթական կամար մի կանգնեցին՝ ծառերով ծաղկիկներով ու ԿԱՅՍԵՐ անունան փակագրովը զարդարուած։

Ամսոյն 10-ին առաւօտը կանուխ՝ ծովը հանդարտ, երկինքը պայծառ, օդը բարեխառն էր, և բոլոր քաղաքացիք ոտքի վերայ. մեծ մասն ալ նաւահանգստին վերան ու քովերը դեկուած կապախէր ՎեչնափԱՌ ԿԱՅՍԵՐ գալտեանը։ Ժամը 6 ու կէսին Թէոդոսիոյ բարձրագագաթ լեռներուն ծայրէն երևցաւ հեռուանց կայսերական Թիւր շողեհաւը, և նորա ետեւէն Թաճաճ շողեհաւը. երկուքն ևս ժամը 8-ին եկան կանգնեցան նաւահանգստին բերանը, և թնդանօթներու ձայներով ողջունեցան։ ՎեչնափԱՌ ԿԱՅՍԵՐ իջաւ իրեն համար պատրաստուած գեղեցկապարզ նաւակն ու եկաւ ելաւ նաւահանգիտը, ուր խառն ժողովրդեան բազմութիւնը անդադար չեցէ՛ (սուս)՝ կանչելով ընդունեցան զինքը, և քաղաքին գլխաւոր պաշտօնատէրները բոս սովորութեան աղ և հաց մատուցին իրեն։ Յաղթական կամարին տակէն ոտքով անցաւ ԿԱՅՍԵՐ, չետոյ կառքը նըստաւ՝ Ռուսաց եկեղեցին դնաց, սուրբ պատարագին

ներկայ եղաւ. անտի գնաց զինուորական Հիւանդանոցը տեսնելու, յետոյ քաղաքիս Հնու-թեանց Թանգարանը, անտի ալ Խալիպեան ուսումնարանը:

Ուսումնարանին զահլիճը զարդարուած էր ՎԵՀԱՓԱՌ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ մեծադիր կենդանազրոյն ու զանազան աշխարհացոյց տախտակներով, և 132 աշակերտքը կենդանադրին երկու կողմը երկու կարգ շարուած կեցել էին՝ իրենց միաձև հագուստները հագած: Տեսուչը, վարժապետներն ու վերահացուները, և մէկ քանի պատուաւոր հայազգի քաղաքացիք զահլիճին մէկ ծայրը հաւաքուել էին:

Ժամը 10-ին Ուսումնարանին վերատեսուչ Առաջնորդը իջաւ վարի մեծ դուռը, հետն ալ Խալիպեան Յարու-թիւն Աղան, որ երեք օր առաջ Նախիջևանէն եկել էր: ՎԵՀԱՓԱՌ ԻՆՔՆԱԿԱԼԻ կառքէն իջնալուն պէս սղջոյն տուաւ երկուքին ալ, և ասաց Առաջնորդին. «Ուրախ եմ որ զձեզ դարձեալ կտեսնեմ այս տեղ:» Առաջնորդը շնորհակալութեամբ հանդերձ պատասխանեց, ու խոյն ներկայացուց ԿԱՅՍԵՐ Ուսումնարանի շէնքին հիմնադրին ու բարերարը, որում հարցուց ԻՆՔՆԱԿԱԼԻ Թէ «Ձեր հաստատուն բնակութիւնն ո՞ր է» և այլն: Յետոյ Առաջնորդին հարցուց Թէ «Գո՞հ էք Ուսումնարանին յառաջադիմութենէն. — քանի՞ են աշակերտները. — ո՞ր երկիրներէն հաւաքուած. — ի՞նչ վիճակի մտնելու կպատրաստուին . . .

Դահլիճին դռնէն ներս մտնելուն պէս՝ ասաց աշակերտաց. «Բարև ձեզ, սղաչք.» և աշակերտները առ հասարակ միաբերան պատասխանեցին. «Բարի է դուրստ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՁԵՐՈՅ»: Աշակերտաց մէկուն հարցուց Թէ «Ի՞նչ կուտակալութենէն ես.» և նա պատասխանեց. «Թիֆլիզէն ՎԵՀԱՓԱՌ ՏԵՐ»:

Դահլիճին պատուհաններէն նայելուն պէս տեսաինքնակալը Խալիպեան Ուսումնարանին նոր շէնքը, որ

զիմացը՝ նաւահանգստին միւս կողմը կանգնած էր. հարցուց Թե ե՞րբ կաւարտի. և երբոր Առաջնորդը պատասխանեց Թէ յառաջիկայ դարնան, դարձաւ ասաց հիմնադրին. «Շնորհակալութիւն վասն բարուց դործուց (Спасибо за доброе дело)»: — Առաջնորդին խնդրքը սիրով ընդունելով՝ առաջուց պատրաստուած փառահաղմ գրքին մէջ գրեց ՎԵՀԱՓԱՌ Կայսրը իւր անունը ուսերէն այսպէս:

ԱՂԵՔԱՅԵՐԻ, է 10 Սեպտեմբերի 1861 թ.:

Յետոյ դարձաւ քանի մի խօսքով խրատուսեց աշակերտները յուսումնասիրութիւն և ի հաւատարիմ հպատակութիւն: — Նոյն դահլիճին մէջ խօսեցաւ նաև Առաջնորդին եղբորը՝ Ալվաղովսքի Յովհաննէս Աղաչին հետ:

Դահլիճէն ու դասարաններէն անցաւ Հիւանդանոցը, չորում տեսնելով որ Աստուծոյ ողորմութեամբը Հիւանդ չկար, ասաց. «Փա՛ռք Աստոծոյ:» Յետոյ իջաւ սեղանատունը և ննջարանները նայեցաւ, զանազան հարցմամբք խօսելով Առաջնորդին ու Խալիպեան Յարու-թիւն Աղաչին հետ:

Ուսումնարանէն ելած ժամանակը ՎԵՀԱՓԱՌ ԿԱՅՐԸ աջ տուաւ Առաջնորդին և «Շնորհակալ եմ», ասաց բոլոր բաղմութեան առջև, որ Ուսումնարանին գաւիթը լցուեր էին: Քանի մի հարցմունքներ ևս արաւ նորէն Յովհաննէս Աղաչին՝ նորա նկարչական զբաղմանցը վերաց. յետոյ ձի հեծաւ, և բոլոր բաղմութեանն ու աշակերտներուն կեցցէներովը ճանապարհ ելաւ. Թէ ոչ ոստիոյ լեռներէն մէկուն վերայ գնաց որ ծովածիւր արիանց ընդարձակ տեսարանը գիտէ: Անտի ևս դարձաւ նաւահանգիստը, ժամը 11-ին մտաւ շոգենաւն ու նոյն գեղեցիկ օդովը ելաւ ճանապարհ դէպ ի Կեր՝ բոլոր քաղաքացուց ցնծալից բարեմաղթութիւններովը:

Այն իրիկունը բոլոր Թէոդոսիան գեղապայծառ կան-

Թեղներով ու ճրագներով լուսաւորուեցաւ, և շէնքերուն մէջ ամենէն փառաւոր կերպով լուսաւորուածներն էին Ուսումնարանը և նորա նորահառոց շէնքը՝ ի նշան այն օրուան անմոռանալի բարեբաղդութեանը, որով արժանացաւ ՄԵՄԱԶՕՐ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ բարեհաճ այցելութեանն ու վեհանախան մտադրութեանը՝ ի պարծանս ազգիս Հայոց, և ի քաջալերութիւն Հիմնադրաց, կառավարչաց և աշակերտաց ուսումնարանին:

### Պ Լ Ո Ւ Մ Ժ Ե .

Նախիջեւանի երկպառակութեան սաստկանալը, եւ երկպառակելոց առերևոյթ հաշտութիւնը:

Նալբանդեան Մեքայէլին էջմիածին երթալուն գլխաւոր նպատակն էր անշուշտ՝ ամենայն հնարք ի դործ դնել որ Գաբրիէլ վարդապետը առաջնորդութենէն ձգուի: Առ ժամն այսչափ միայն կարողացաւ անել որ նորա առաջարկութեամբը Աղափիրեան Գրեգոր վարդապետը չուղարկուեցաւ Կաթողիկոսական կոնդակով ուղղակի Նախիջեւան՝ իբրև Ինքնաշարժ վանահայր Ս. Խաչ վանքին, ուր և իբր թէ Ուսումնարան պիտի Հաստատէր՝ ըստ ինդրոյ Հայրապետեանց: Գրեգոր վարդապետը ակամայ կամօք չանձնառու եղաւ այն պաշտօնին, և խիղբան այն կերպով շարժեցաւ որ առաջնորդին դէմ Հակառակութեան չեղածը չաշտնի էր. ուստի Նախիջեւան երթալէն չետոյ՝ դեր գրեց Առաջնորդին և յայտնեց իւր դաւաճեան նպատակը և գլխաւոր պայմանները: Իսկ Առաջնորդը թէպէտ և ինքն ևս Գրեգոր վարդապետին վերայ կասկած չունէր որ իրեն դէմ շարժի, բայց և ստոյգ գիտնալով թէ որո՛չ գրգռմամբ և

ինչ նպատակաւ եղած էր այն կարգադրութիւնը, չէր կարող հաւանիլ որ Հակառակ Գրեգորին հասարակած կանոններուն՝ վանքերու գլխաւոր կառավարութիւնը առնուի վիճակաւորին ձեռքէն. ուստի գրեց Նախիջեւան որ Ս. Խաչ վանքը չջանձնուի Գրեգոր վարդապետին, այլ միայն Հրաման տրուի իրեն այն վանքին մէջ բնակելու՝ իբրև առանձին վարդապետ՝ եթէ կամենայ: Այն որ տեսաւ Գրեգոր վարդապետը, լուսամտեցաւ քաղաքին մէջ բնակիլ Հանդարտութեամբ, և սպասել էջմիածնէն նոր Հրամաններու. բայց Հակառակորդաց կուսակցութիւնը նորա ներկայութեամբը աւելի ոչժ առաւ այնուհետև ընդդէմ Առաջնորդին պատեւադմելու, և ասելու թէ նա ո՛ր է սր Կաթողիկոսին վանահայր նշանակած անձին Հրաման չի տար վանքը չանձնելու:

Այնչափ սաստկացան այն միջոցին Նախիջեւանի Հակառակութիւնները՝ որ Սալիպեան Ուսումնարանին Հայազգի վարժապետներուն վերայ ևս ոչ սակաւ ազդեցութիւն ունեցան: Վարձեցին նոցանէ ոմանք՝ թէ Գաբրիէլ վարդապետին ձեռնարկութիւնները այնքան և այնպիսի Հակառակութեանց մէջ ամենեւին առաջ երթալիք չունին. ուստի, ինչպէս որ կերէէր, Նախիջեւանի և Թեֆլիզու Կաթողիկոսական անուանեալ քանի մի երկսասարդաց խօսքերէն ու գրուածքներէն սիրտ առնելով՝ Առաջնորդին դէմ ելան, թէպէտ և ի սկզբան անոչ չաշտնապէս. և նա խիղջն Հրաժարեցուց զիրենք վարժապետութեան պաշտօններէն:

Նոցանէ երկուքը փոքր ինչ ժամանակ ասդիս անդին պտըտելէն չետոյ՝ գնացին Նախիջեւան, և առանձնական Գպրոց մի բացին չորդորանօք և ձեռնառութեամբ Հայրապետեան կուսակցութեան, որոյ երկրորդական մէկ նպատակն էր՝ անով լաւիանել Սալիպեան Ուսումնարանին չառաջադիմութիւնը, և Նախիջեւանէն

Թողալու որ աշակերտաց Թէոդոսիա գնալը: Տէրութիւնը Հարցուց Առաջնորդին՝ Թէ նորա հրամանովն է աչն դպրոցին բացուելը, և ո՞չք են գաչն բացողները: Երբ որ Առաջնորդը պատասխանեց Թէ նորա Խալիպեան Ուսումնարանին տեղահարութեամբ ելած վարժապետներ են, և ինքը նոցա գործին շնորհակալ, Ստեսսայի ուսումնական շրջանակին Հոգաբարձուին հրամանովը խափանուեցաւ դպրոցը: Բայց վարժապետները և նոցա պաշտպանները մտքերնին դրած լինելով Թէ աչն խափանման միմիայն պատճառ Առաջնորդն է, դարմանք չէր որ աւելի ևս դաշտացան ու ժողովուրդը դաշտացուն նորա դէմ՝ ասելով Թէ ահա Գաբրիէլ վարդապետը աղբին լուսաւորութեանը չաչանի Թշնամի է, և չԹողուր որ Նախիջևանցիք իրենց տղայոց ուսում առնել տան իրենց փողովը: Այսպէս ահա երբ որ մէկուն դէմ կըզորանայ Հակառակութեան հոգին, պակասութիւն և ջանցանք չը՝ մնար որ չըլտուի վերան, առանց նայելու չարմարութեան կամ անչարմարութեան, արդարութեան կամ անիրաւութեան, ճշմարտութեան կամ ստուութեան:

Մտածեց Առաջնորդը որ այս խռովութեանց վերջ տալու համար, կամ դոնէ նոցա աւելի սաստկանալուն արդեւք գնելու համար, հարկ էր որ ինքը տարիով, կամ դոնէ ամիսներով, անձամբ Նախիջևան բնակի. բայց Խալիպեան Ուսումնարանին անմիջական կառավարութիւնը հանդերձ դասախօսութեամբ՝ իւր վերայ լինելով, արդեւք էր այս բանիս: Պէտք էր ուրեմն որ Նախիջևանի մէջ գէթ աչնպիսի հաւատարիմ անձ ունենայ՝ իբրև իրեն փոխանորդ, որ անով Թէ՛ Նախիջևանի Հոգեւոր Կառավարութիւնը ոչժ առնու, և Թէ վիճակային իշխանութեան դէմ կեցող անձինքը և նոցա զրգուութիւնները սանձահարուին:

Այս պաշտօնիս չարմար միմիայն անձ ունէր աչն ժամանակը վիճակին մէջ, և էր Բեկնադարեան Յով-

հաննէս վարդապետը, որ արդէն լաւ գիտէր Նախիջևանի Հին և նոր վէճերը, և լաւ հասկացած էր նոցա պատճառները: Նա Առաջնորդին հրամանաւը 1861-ին չունուար ամսոյն մէջ ճանապարհ ելաւ Քիշնեկէն, ելաւ Թէոդոսիա, և դնաց Նախիջևան: Չէին կարող ախորժիլ նորա ներկայութենէն՝ Նախիջևանի խռովութիւնը զրգուող և սերող անձինք, Թէ՛ աշխարհականք և Թէ՛ եկեղեցականք. բայց նա հոգ չարաւ, և իւր պաշտօնը ամենաչն ջանքով և հաւատարմութեամբ կկատարէր: Սակայն երեք ամիս չանցած, դիւազրդիւ զըպարտութիւն մի արին խեղճին վերան իւր Թշնամիները. և ինքը Թէպէտ և անմեղ էր և արդար աչն ջանցանքէն, բայց մարդկային անձնասիրութենէն ու տըրտմութենէն չաղթուելով՝ կաթուածի եկաւ, և դրեթէ ջանկարծական մահուամբ վախճանեցաւ մարտ ամսոյն մէջ: (1)

Այս լուրը մեծապէս վշտացուց Գաբրիէլ վարդապետին սիրտը. և երբ Յովհաննէս վարդապետին մահուան պատճառներն ու պարագաները տեղոյը իմացաւ, աւելի ևս զղուեցաւ Նախիջևանի ցաւալի երկպառակութեան դառն պտուղներէն: Եթէ չունենար երկայնմտութիւն, և իւր մտաց և գործոց ուղղութեան վերայ վստահութիւն, աչն ժամանակէն ևս կուղէր հրաժա-

(1) Թէ էնչ Գաբրիէլ ունէր Յովհաննէս վարդապետը (որ Ս. Էջմիածնայ Մեթաք, է- Տիւս Մեթաքից Տէջ յաստիւարէճ ու արդիւնաւոր անշոնց Տէն էր) Գաբրիէլ վարդապետին Գործոցն ու Կառավարութեանը վերայ, ըստ Բաւոյանի յայտնի կերպի այն նամակէն զոր գրած է Թէոդոսիայէն (առանց Գաբրիէլ վարդապետին Գործութեանը) 1860-ին Գեղարձէբի 27-ին տարիէն՝ Գառնիցն իւր \*\*\* որոյ ուղեւորութիւնը յէր վախճանի Յովհաննէս վարդապետին ընկաւ Տէր յեռալ: Տէր է վերջ Պատմութեան՝ Գառնի շառն Բ.

րել՝ ետ քաշուել ամէն բանէ. բայց այն անդամունքն ևս հարկ համարեցաւ սպասել որ կարդադուրութիւն լինի Նախիջևանի խաղաղութեանը համար. ապա թէ ոչ՝ անկառավարելի կհամարէր այն քաղաքին մէկ քանի եկեղեցականներն ու աշխարհականները:

Քիչ ժամանակէն կոնդակ եկաւ Վեհ. Կաթողիկոսէն՝ ըստ հրամանի Տէրութեան՝ որ Աղափիբեան Գրեգոր վարդապետը դառնաց երթայ Էջմիածին: Յետոյ Կատարինապետ Նահանգապետ Սեփերս Կոմսը անձամբ գնաց Նախիջևան, ու երկպառակեալ կուսակցութեանց գլխաւորները իրարու հետ հաշտեցընելէն չետոյ՝ բարեկամական ոճով գիր գրեց Գաբրիէլ վարդապետին, յորում կտրորէր գնա՝ որ անձամբ երթայ Նախիջևան, իւր սկսած հաշտութիւնը հաստատէ, և միանգամայն Նախիջևանի ժողովրդեան գլխաւոր գանգաւոր դադրեցընելու համար, — որով կորսնցան թէ իրենց քաղաքը զուրկ մնացել է կանոնաւոր դըպրատունէ՝ մինչդեռ իրենց եկեղեցիներուն ժողովը Թէոդոսիոյ մէջ Խալիպեան Ուսումնարանը կանգնուել է և առաջ կերթայ, — Նախիջևանի մէջ ևս սղգային դպրոց մի հաստատէ:

Սեփերս Կոմսը Խալիպեան և Հայրապետեան կուսակցութիւնները իրարու հետ հաշտեցընելու ժամանակ՝ խօսք առել էր Հայրապետեան Կարապետ Աղաչէն որ ներումն խնդրելու ձեռով գիր մի գրէ Առաջնորդին. և նա չիրաւի գրեց այն թուղթը, բայց թէ ի՞նչ խօսքերով և ի՞նչ խմատով՝ կարժէ այս տեղ ամբողջ նամակը գնել որ կարդացողներն ևս դատեն, որովհետև այս բանս ևս նիւթ եղած է ոմանց մեղադրութեան, որ իբր թէ Գաբրիէլ վարդապետն է յանցաւոր՝ որ Նահանգապետին արած հաշտութիւնը հաստատութիւն չառաւ:

«Նախիջևան, 13 Նոյեմբերի 1861 ամի.  
«Գերապատիւ Տէր!»

«Նորին Պայծառախալութիւնն Կոմս Սեփերս կուսակալ կողմանցս մերոյ՝ յայցելութեան քաղաքս 12 Նոյեմբերի, ի ներկայութեան Աղա Յարութիւն Խալիպովի առաջարկեաց ինձ միջնորդ լինել ընդ մէջ Սըբութեան Ձերոյ և Ժողովրդեան քաղաքիս, զոր և ի մտի ունէի միշտ ամենայն սիրով և միանգամայն ուղեւորել առ Ձեզ ի Թէոդոսիա՝ ի խորհրդակցել զամենայն զհնարելցն դարմանոց, զի դադարեցին և մուսացին յայսմ հետէ մինչ իսպառ ամենայն արտունջը նոցին և տժգոհութիւնք, և անդորրացին սիրտք ամենեցուն ի մասին եկեղեցական դըրամոց: «Նս յիմմէ կողմանէ պատրաստ եմ յամենայն սրտէ կատարել իմովանն դառաջարկութիւնս Տեառն կուսակալին՝ նաև ուղեւորելով այլը ի Թէոդոսիա, ստացեալ զօրհնութիւն Սըբութեան «Ձերում՝ յայդ ուղեորութիւն. այլ անանելով զցանկութիւն «Ժողովրդեան՝ թուի ինձ թէ բարեւոք ևս լինիցի Սըբութեան «Ձերում՝ ի քաղաքս, և ըստ սուրբ կուցման Ձերում և ձերց՝ յանկուցանել գիւրագոյնս զմիտս նոցին ի սէր հաշտութեան և ի խաղաղութիւն բլծալի ամենեցուն. յորս համոզել և յորդոք լինել և ես զամենայն ջան ի զործ եղից սիրով խաղաղութեանս:

«Ապասելով որոշման ի Ձէնջ կողմանէ, մնամ  
«Գերապատիւ Տէրութեան Ձերում»

«Ամենախոնարհ ծառայ և որդի, Կարապետ Հայրապետեանն»

Այն նամակին խօսքերէն ապաքէն չալտնի կերեկէր որ գրողին միտքը ամենեւին այն չէր որ գոնէ անուղղակի մէկ կերպով ինքզինքը պատճառ ճաննչաց այն խռովութեանց և հակառակութեանց, այլ թէ ի՞նքը պէտք է լինի միայն Տիֆլիսի հաշտութեան Առաջնորդին ու Նախիջևանի Ժողովրդեան Տէր, որով ինքիքը բոլորովին կխտլուէր: Ուստի և Առաջնորդը հետագայ պատասխանը գրեց.

«Մեծապատիւ Իշխան»

«Լուեալ անպատում՝ բերկրութեամբ սրտի զհաշտութիւնն ցցանկալի, զոր առթեաց ի միջի ուսադորերոյդ Նախիջևանի բարեկեցապարտ Նահանգապետ կողմանցդ՝ Վսեմախալ Կոմսն Սեփերս, այն ինչ պատրաստէի գրել առ Ձերդ Պատուաւանութիւն «գիր ինդակցութեան ընդ այս երկնապարզ և խաղաղութիւն»

«աստուածապա՛հ քաղաքիդ, ընկալայ յՍ Նոյեմբերի զմեծարոյ նա-  
 «մանն Զեր զքրեալն յՅ այնր անոյ, յորոյ ի բանկէն երեւէ՛ թէ  
 «չէ ևս աւարտեալ և գլխաւորեալ է հաշտութիւն խաղաղու-  
 «թանն՝ որպէս համբաւեալ էր, այլ տակաւն յուսով և անկա-  
 «չութեամբ և և թ միութարէ այն զբարեհետք՝ իբրև հնարաւոր  
 «ինչ և մօտաւոր: Քանզի ստէլք ի գրին Զերում, Մեծապատիւ  
 «Իշխան, և թէ Պայծառափայլ Կոմսն աւաջարկեաց Զեղ Տիգրայ  
 «չինէլ ընդ իս և ընդ Ժողովարդ հողահիւր, և ուղեւորել այսր ի Թէո-  
 «դոսեա ի խորհրդակցել զամենայն զհնարեցն բժշկելոյ զմեզս  
 «բազմութիւ ընտելաց տեղւոյդ ի մասին եկեղեցական զբամոց:

«Մենչդեւ խորհէի՛ թէ առ ի՛նչ կցէ միջնորդութիւնն ա-  
 «ւաջարկեալ Զեղ ի Վսեմափայլ Կոմսէն ընդ իս և ընդ Ժողովուրդն  
 «հիմ Պատուական, — ըստ որում՝ անդասին ի սկզբանէ հաշտ զիս  
 «զիտեմ ընդ նմա, և զնա ընդ իս, — և թէ ընդէ՛ր կամ որով  
 «հրաւամբ միբաւորեալ համարեցին առ յինէն միտք ընտելաց  
 «Նախնիքեանն ի մասին եկեղեցական զբամոց, և հաս առ իս և ի  
 «նմին իսկ Պայծառափայլ Նախնորդապետէն նամակ զրեալ յ17  
 «Նոյեմբերի, յորում աւետարտէ նա ինձ զկատարեալն հաշտու-  
 «թիւն արարեալ յիւրմէ ի մէջ երկոցունցդ կուսակցութեանց, և  
 «միանգամայն ծանուցանէ՛ զի Զերդ Պատուականութիւն յայտ  
 «արարեալ է զյանկութիւն անձամբ գալոյ առ իս՝ յուսով (որ-  
 «պէս ստէ) ի մոռացնա զարձուցանելոյ զառաջին եղեալն, և  
 «յօրենակ բարի ժողովրդեան և որ այլն ևս:

«Արդ քանզի բանք նամակացս երկոցուն գժուարաւ համա-  
 «ճայնին ընդ միմեանս, Թուի ինձ թէ անհրաժեշտ հարկաւ կա-  
 «ւերոր է մեզ Մեծապատիւ Իշխան, փութալ ի տեսութիւն իրե-  
 «ւաց, և ի յարդարել զամենայն ինչ այնպէս՝ զի անվիանդ իմն  
 «հաստատութիւն աւետարտ խաղաղութիւնն ցանկալի ի բնակիւս  
 «քաղաքիդ, և ազգի ազգի ստուգք նորին ըստ կարի վաղընդ  
 «փոյթ երեւոցին ի գոտա: Եւ քանզի Մեծ Տէրութիւնդ յայտ  
 «առնէ արդէն զերն սրտորատականութիւն ի գալ առ մեզ,  
 «խնդալոյ յուսով սպասեալ մնամ, զի բարենշան զարտեամբդ  
 «ձերով՝ մարդոյն որչափ կցէ հնար ուրախ աւելցէք զմեզ, և  
 «միանգամայն ինդրեմ զի հաճեաջիք զէպ ուղիդ ի մերս բնա-  
 «կարան եկաւորելով և իջևանելով պատուասիբել զմեզ:

«Յանձն արարեալ զԶեղ ի ինտան Բարձրելոյն և այլն:

«Ի Թէոդոսիա,

«9 Ռեհտեմբեր. 1861.

Թ. 541.

Հաչրապետեան Կարապետ Աղան այս թղթին պա-  
 տասխանը երիււ ամսոյ չափ ուշացընելէն չետոյ՝ գրեց  
 Առաջնորդին թէ իւր անձնական տկարութիւնը և գոր-  
 ծերուն բազմութիւնը չեն թողուր որ գաց Թէոդոսիա՝  
 ինչպէս որ կցանկար, և կապասէ որ ինքը Առաջնորդը  
 երթայ Նախնիքեան, և հաշտութիւնն ու խաղաղու-  
 թիւնը հաստատէ ժողովրդեան մէջ: Առաջնորդն ալ  
 պատրաստուեցաւ որ առաջիկայ Զատիէն վերջը ան-  
 պատճառ երթայ այն քաղաքը, թէպէտ և լաւ հաս-  
 կացած էր՝ թէ դարձեալ անօգուտ պիտի լինի իւր աշ-  
 խատանքը չաչնմ մասին:

### Գ Լ Ո Ւ Խ Ժ Զ.

Հանդէս նուակատեաց նորակառոյ շինուածոյ Խալիպեան  
 Ուսումնարանին Ազգիս Հայոց:

Աղնուամեա և ճշմարտապէս ազգասէր Հայկազունք  
 վաղուց կապասէին ուրախարար աւետիսը լսելու թէ  
 Խալիպեան ազգային Ուսումնարանը տեղաւորուեցաւ  
 երկն համար պատրաստուած հոյակապ շինուածքին  
 մէջ: Ահա այս աւետիսը տուաւ Առաջնորդը նոցա ու-  
 րախութեամբ, և շնորհաւորեց նոցա այն անմուս-  
 նալի հանդէսը՝ որ կատարուեցաւ սեպտեմբեր ամսոյն  
 8-ին 1862 ամի:

Ուսումնարանին հիմնադիրքը ամսով չառաջ հրա-  
 լերեցին գրով զանազան քաղաքներէ բարեսէր և աղ-  
 գասէր պատուաւոր անձինք, որ գան ժողովին ոչ մի-  
 այն ներկայ լինելու այն հանդիսին, այլ և աջօք տես-  
 նելու Ուսումնարանին ինչ վիճակի և հանգամանաց  
 մէջ գանուելը չորս տարուանէ ի վեր, և այնուհետև

ստոյգ տեղեկութեամբ դատաստան ընեն իրենց ականջը Հասնող զանազան չար և բարի լուրերուն վերայ, որով և ոչ ևս պղտորի վայրապար իրենց սիրտը, և չգայթակղի իրենց մետքը:

Օգոստոսի ետքի օրերը եկաւ Հասաւ Թէոդոսիա ուսումնարանին կառուցող բարերարը Ադա Յարութիւնը Խալիպեան, և ապա Հետ զՀետէ այլ և այլ քաղաքներէ Հրաւիրեալ անձանց գլխաւորները. իսկ որոնք որ զանազան արգելքներով չէին կարողացած անձամբ գալ՝ շնորհակալութեան և խնդակցութեան նամակներով փութացեր էին իրենց բարեմաղթութիւններն ընելու, ինչպէս Օտեսասպէն Նոր Ռուսիոյ Ընդհանուր Կուսակալութեան պաշտօնը կատարող Ժորապետը, և Օտեսասպի ուսումնական շրջանակին Խնամատարը Արքեպիսկոպիտը, և Սիմֆերոպոլէն Տաւրիկեան նահանգին ուսումնարանաց Վերատեսուչ Սեպեմիանը. նոյնպէս և Տրապիզոնէն, Գանձակէն, Սաշէն և ուրիշ տեղերէ մերապահեաց աղգասէր անձինք:

Ուսումնարանին շէնքը բարձրադիր ու եռաջարկ է. դրսի գլխաւոր ճակատը դէպի քաղաքին ու նաւահանգստին վրայ կնայի, աջ թևը դէպի Փոշուրի ասուած լեռներն ու ըլուրները՝ որ դարբարագեղ այգեստաններով զարդարուած են. ձախ թևը դէպի Կերչի ճանապարհին ուղղութեամբը տարածուած ընդարձակ դաշտերը, և ներսի ճակատը դէպի Փոշուրի ասուած լեռն ու անոր ստորտը ծածկող այգեստանները: Եւ որովհետեւ ուսումնարանին բուն շինուածքին տեղը և գերքը բարձր է, ինչպէս որ ասինք, մինչև վարի չարին անգամ քաղաքին ու ծովուն վերայ կնայի պայծառաշէն պատահաններովը, իսկ երկրորդ և երրորդ չարին տեսքը շատ սրտաբաց ու դեղեցիկ է:

Այս շէնքին դրսի տեսքին ու ներքին Համեմատութեանը վերայ որչափ որ չայնի կերևի ճարտարա-

պետին՝ այսինքն Պ. Աղեքսանդրի Արքեպիսկոպիտի լուրձակն ու Հասկացողութիւնը, նոյնչափ և ներքին բաժանմունքը զարմանալի կերպով չարմար ձգուած է 150 և 200 աշակերտաց Համար պէտք եղած ուսումնարանի մի բարեկարգութեանը: Կասարանները ամփոփ, ննջարանները սրտաբաց, ճաշարանն ընդարձակ, սրտարանը Հանգիստ, ընթերցարանը՝ գեղեցիկ, դահլիճը կամ Հանդիսարանը փառաւոր, քարաշէն սանդուղները մեծադործ. մէկ խօսքով՝ դրսէն և ներսէն այնպիսի շէնք մի որ տեսնողներուն բերնէն ինքնաբերաբար կըսուի այս վկայութիւնը թէ չըբաւի ոչ միայն 150 Հազար ըուպլիով, այլ և 200 Հազարով Հաղել ըմբնալու շէնք է. թող նաև առանձին եկեղեցին որ ուսումնարանին արեւմտեան բակին մէջ պետի կանդնուէր բարձրադիր բլրի մի վերայ. ևս և խոհանարանն ու բոլոր ծառայական աշխատութեանց տեղերը՝ որ գլխաւոր շէնքէն դուրս պետի կանդնուէին Հետզհետէ. նմանապէս ուսումնարանին գիմացի ընդարձակ այգին ու պարտէզը, որ պետի մշակուէին ու զարդարուէին:

Թէոդոսիոյ բազմալեզու և բազմատեսակ ազգերէ կազմեալ ընտանիքները, մանաւանդ ներսէն և դրսէն հրաւիրեալ գլխաւոր անձինքը, մեծ անհամբերութեամբ կոպասէին սեպտեմբերի 8-ին՝ որ ականատես լինին նաւահանգստաց Հանդիսին:

Եկաւ Հասաւ այն օրը, որ տօն էր Հրաշափառ Ծննդեան Տիրամօր Կուսին, և միանգամայն Հազարամեաց ֆորելեան տարեդարձ թագաւորութեան ազգին Ռուսաց, և տօնախմբութիւն ճննդեան թագաժառանգ Կայսրուհուոյն՝ Նիկողայոսի Աղեքսանդրովիչ, և եղանակին գեղեցիկութիւնն ու պայծառութիւնը առաւօտէն սկըսեալ՝ լցոյց դուարթութեամբ ամենուն սիրան ու երեսը:

Հրեշտակապետաց եկեղեցւոյն մէջ առաւօտեան ժամերգութեան մէկ մտար կատարուէին չետոյ, ու-

սումնարանին աշակերտները 153 հոգի իրենց մինձև հագուստները հագած՝ ելան Ալեքսանդր Եղբարց մեծաշէն տնէն, ուր 3 տարի տեղաւորուած էր ուսումնարանը, դնացին Առաջնորդարանը՝ Առաջնորդին օրհնութիւնն առնելու, և միանգամայն Սալիպեան իշխանին իրենց երախտագիտութիւնը յայտնելու, և զոչ ոչ ուղեորեցան դէպի նորակառուց Աստուծոսարանը:

Հաւաքուեցաւ հետզհետէ ժողովուրդը մեծ բազմութեամբ ուսումնարանին բակին մէջ, ուր եկեղեցւոյն կանգնելու տեղոյն վերայ ընդարձակ տախտակամածով բեմ շինուած, խորան կանգնուած և վրան ու քովերը աւաղաստներով ծածկուած, ևս և ծառերով ու ծաղիկներով զարդարուած էր:

Գերապատել Առաջնորդը բազմութիւ եկեղեցական պաշտօնեաներով ժամերգութիւնը կատարելէն յետոյ սկսաւ սուրբ Պատարագին մատուցումը: Պատարագին վերջերը աւուր հանգիսին համեմատ քարոզ տուաւ ժամարարը, բացատրելով այս իմաստը թէ «Սալիպեան «Ուսումնարանին հաստատութեանը հիմունքն են «Ճշմարիտ և լուսաւոր աստուածապաշտութիւն, ազգային եռանդուն և խոհական հոգի, և ժամանակիս «պահանջմանցը յարմար ուսում և գիտութիւն»: Գովեց բարերար կառուցողին ուղիղ գիտաւորութիւնը և աւատածեւունութիւնը, և մանաւանդ նորա իմաստութիւնը՝ որ սուրբ Աւետարանին մէջ գոյութեամբ չիշատակուած իմաստուն մարդոցն օրինակին հետեւելով, իրեն ուսումնարանին նիւթական շէնքէն աւելի բարոյական հաստատութիւնը մտածեց, և այն երեք հիմանց վերայ կանգնեց իւր անունին անմահական չեղատակը, որ վախ պիտի ջունենայ չարախօսութեանց անձրեւներէն, նախանձու հեղեղներէն, հալաւակութեանց քամիներէն, «Քանզի հաստատեալ է հիմն է վերայ վիմի»: Յետոյ շնորհաւորեց ազգիս այս նոր ուսումնարանը, շնորհակալ եղաւ հանդիսականաց՝

մանաւանդ հեռաւոր քաղաքներէ եկողներուն բարև սիրութեանը, յառաջադիմութիւն մաղթեց ազգիս՝ սիրով և միաբանութեամբ, և ներկայ և սպառնալից աշակերտաց քաջասուղջ կենօք և աստուածահաճոյ վարուք և փութաջան ուսումնասիրութեամբ բարև վայելումն իրենց հոյակապ բնակարանին:

Պատարագէն յետոյ կատարուեցաւ ըստ սովորութեան Ապսերական հանդիսից համար սահմանեալ մաղթողական արարողութիւնը, և այնուհետև սկսան դպրեք երգել բազմութեամբ և քաղցր ու հանդարտ եղանակաւ «Յաւուրս վերջին ժամանակի», շարականը: Այն երգեցողութեամբ թափօրը կազմեցաւ այսպէս, առջևէն կերթար ուրարաւոր դպրիներէն մէկը՝ վերամբարձ բռնելով փառաւոր սոկեղօժ մեծ խաչը, և երկու կողմէն ջահճնիալք, և յետոյ երկու գեղեցիկ խաչվառք: Յետոյ աշակերտք զոչ ոչ, իրենց հայրենի քաղաքներուն և կամ դաւառներուն անուններովը խումբ խումբ շարուած, իւրաքանչիւր խումբին առջևէն դրօշակը մէ երթալով: Տասը խումբ բաժնուած էին աշակերտները այսպէս, և տասը դրօշակք բարձրացած կծածանէին թափօրին մէջ, որոց մէկ երեսը գրուած էր ուսերէն՝ մէկ կուսակալութեան կամ երկրի անունը, և միւս երեսը հայերէն՝ սոկեղոյն տաւերով, և այս էր խումբերուն ու դրօշակներուն կարգը և անունները.

1. ԽՐԻՄ—Таврическая Губернія.
  2. ՆԱԻԻՋԵՌԱՆ. — Екатеринославская Губернія.
  3. ՕՏԵՍՍԱ, ՔԻՇՆԵԻ, ԱԳՔԻՐՄԱՆ — Бессарабска Область.
  4. ՏՓԻԻՍ—Тифлисская Губернія.
  5. ԵՐԵՒԱՆ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ—Эриванская Губ.
  6. ԳԱՆՁԱԿ, ՆՈՒԻԻ, ԱԳՈՒՎԻՍ—Арменія.
- ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՏՐԱՊԻՋՈՆ, ՋՄԻՒՈՆԻԱ—Турція.

- 8. ԱսպաՀան. — Персія.
- 9. ՄՈՒՏԱԻՒԱ.—Соединенные Княжества.
- 10. ՉԻՐԻԷՉԱՀԱՅՔ.—Кавказъ.

Աշտիերաց ետեէն կերթացին քառասունի չափ դպիրք, չետոյ քրոցաւորք, չետոյ չորս սարկաւազունք բուրխաւաւորք, չետոյ քահանայք շուրջաւաւորք, որոց չորս հատը բռնած էին փառադարդ աւետարաններ, և երկուքը սրբոյն Գէորգաց զօրավարին և սրբոց Յովակիմայ և Աննայի՝ պաշտպանացն թէտոսիոց արծաթապատ մասունքները՝ ոսկեհուռ քօղերով ծածկուած. և նոցա ետեէն Առաջնորդը զգեստաւորեալ և ձեռքը սուրբ խաչը բռնած վերամբարձ: Թափօրին անմիջապէս ետեէն կերթար շէնքին հիմնադիրը Ադա Յարութիւն Խալիպեան, չետոյ Ռուսաց և Հռովմէական Հայոց եկեղեցականները, և չետոյ մեծամեծներն ու բոլոր ժողովուրդը:

Թափօրին անցնելու ճանապարհէն վերայ, աչսինքն ուսումնարանին չորս բոլորը, դալար խոտ սիւռած էր, և թափօրը ուսումնարանին աջ կողմէն դէպի արեւելք, և չետոյ դէպի հիւսիս պտըտելով, մէջտեղի արեւմտեան մեծ դռնէն մտաւ ուսումնարանին վերի դահլիճը: Այն տեղը խաչարուացի հանգէսը կատարելէն ետե տեսնողքեցին և օրհնեցին կարգաւ՝ նոյնպէս թափօրով և շարահաններով բոլոր գլխաւոր ընտելարանները, աչսինքն ննջարանները, դատարանները, հիւանդանոցը, ճաշարանը, և չետոյ հանդիսարանին մէջ «Առաջնորդ հաւատոյ» շարահանով վերջացուցին ուսումնարանին օրհնութիւնը:

Առաջնորդը և միւս եկեղեցականք իրենց զգեստները հանելէն ետե հաւաքուեցան նորէն հանդիսարանը, որոց պատեղէն մէկուն վերայ դարդարուած դըրուած էր Վեհափառ Ինքնակալին կենդանագիրը, միւ-

սին վերան ալ Խալիպեան իշխանինը, որ երկուքն ալ Ա. յիւրապէս Յովակիմայի Ադային նոր նկարածներն էին: Աշտիերաք երկու բաժնուած կանգնեցան կարգ կարգ կայսեր կենդանագրին երկու կողմը, և հրաւիրեալ հանդիսականք պատրաստուած աթոռներով նստան դիմացը:

Գեր. Խորէն Վարդապետը Գալփայեան ելաւ զարդարուն բեմին վերայ և աչս իրեն շարադրած բանաստեղծութիւնը կարդաց, որոց տպագիր օրինակները բաժնուեցան հանդիսականաց:

Ի մեծանանդէս նաւակառօնս բացման Խոյսպեան Ուսումնարանին Ազգիս Հայոց:

Երկնաւատ զթութեանց օր աւետարել  
Հայկազունք, ձեզ ի դահլիճ յայս տայ հրաւել.  
Եկայք օհ սերայորդօր դունդ դունդ իպար  
Յիմաստից տաճար.

Եկայք օհ տեսնել զԱյլըն դերագանց  
Որ վառեալ ի հայրենի սէր դերագանձ  
Բազմամեայ իւրոց քրքրանց զերկ և ըզգանձ  
Տայ ձօն անեախանձ:

Եկայք օհ ցըրուեալքդ ի չորս երկրի ծագաց  
Տեսնել ըզհայր որդւոցդ հասարակաց,  
Որ զայս սուն արքայայել յաւերժակայ  
Իմուտ ձեզ բանայ:

Աւանիկ լուցեալ աստ ջահ ստտուածատուր  
Հայկազունք, նըւիր յաչրս ձեր հանուր,  
Օհ իրնդաւք վայելեալ յայս լոյս երկնաբեր  
Քրիստոսեան իսէր.

Մեզ աստուատ բոլորքեցի այսուհետե  
Գիտութեանց և Հայրենեաց հուր մըշտատե,  
Յոր վառեալ մատաղաբոյս սերտք մեր որդւոց  
Յազգաշունչ իւրոց,

Գրնասցեն ճաւախելով երամ երամ  
Ձերկնաւոր և զերկրաւոր լուսոյ պատգամ,  
Իբր ալիք ականակիտ ջուրց վիժանուտ  
Յաճուս ծարաւուտ.

Գրնասցեն աւետաւոր աղանկիք հեղ  
Հաշտութեան տանել ըղձիւղ իշէն Ներէզ.  
Եւ զսիրոյ նոցին ճայնից վանդս աղուական  
Տացէ Հայաստան.

Գրնասցեն, և ընդ իւրեանս ի սիրտ բեղուն  
Եւ զքո՛, Վեհազըն տէր, տարցեն զանուն.  
Որ նոցա այսօր ըզտուն զայս վեհաշէն  
Չօնես ապաւէն.

Տանիցեն քո զերախտիս անջինջ խաղաւ,  
Տանիցեն զհայրենի տէր քո մըշտախաւ,  
Տանիցեն՝ ոչ թէ ընդ բնաւ լոկ Հայաստան,  
Այլ մինչ ի տապան:

Տես զորդիս զոր քեզ ծընաւ ժրպիտ զըթոյդ.  
Դու զնոքօք ըզհովանին արկեր սիրոյդ,  
Եւ զնոսա ետուն երկինք զըլխոյդ ի պսակ  
Փաւաց մեծ հըռչակ:

Ո՛վ, փառք քո ոչ միայն յայս շքեղ ակումբ՝  
Որ յեւից և ի մտից խրոնեալ ի խումբ,  
Այլ ընդ սուղ սրմ՝ քաղաքիս այս հորչեացեն  
Յաշխարհ համօրէն:

Եւ զաշխարհ՝ յանունդ և զործ կայցին զարմանս,  
Եւ ըզբեղ ցուցեալ մատամբ յիւր մեծ պարծանս,  
Յապագայն աւանդեսցէ ներկայս մեր զար  
Յաւազ մարդկան շար:

Այո՛ քաջ, նոր քեզ այսօր բսկրսին կեանք,  
Կեանք վրեժմ՝ յոր ոչ մըթար ոչ նըւողանք.  
Այլ ընդ սեամբս տաճարիս զոր կաւուցեր  
Յանմահութիւն ելցես վեր:

Յետոյ Ռուսաց լեզուի գլխաւոր վարժապետը ճաւ-  
հարդաց ուսուերէն՝ յորում համառօտ կերպով կպատ-  
մէր ուսումնարանին սկիզբէն սորա անցեալ չորս տար-  
ւոյն ընթացքը, ներկայ վիճակը և ապագայ ակնկալու-  
թիւնները: Այս ճառին հաջերէն թարգմանութիւնը  
հրատարակուեցաւ տպագրութեամբ:

Փամբ 3-ին ուսումնարանի ճաշարանին մէջ պատ-  
րաստուած սեղանը բազմեցան 130 հրաւիրեալք՝ թէ  
ազգայինք և թէ օտարք, և հացկերութիւն վերջերը  
կենդանութեան բաժակներ խմուեցան բարձրաձայն  
կեցցէներով ի պատիւ Վեհախառ Ինքնակալին, և ապա  
հետ զհետէ ի կենդանութիւն թագաժառանգ Կաշ-  
րորդուն և բոլոր Կաշսերական Ազգատոհմին, և ի բա-  
բօրութիւն Ռուսիոյ՝ չիշատակաւ հազարամեայ յորելի-  
նին. յետոյ ի կենդանութիւն Վեհախառ Կաթողիկո-  
սին ամենայն Հայոց, ընդհանուր կուսակալին Նորոյն  
Ռուսիոյ, վեհախաղ Ռատիկանաց Ներքին Գործոց և  
Ազգային Լուսաւորութեան, Գեր. Առաջնորդին, Խալի-  
պեան իշխանին, բոլոր հանդիսականաց, և այլն: Վե-  
հախառ Կաշսեր բաժակին ժամանակը աշակերտք գե-  
ղեցիկ ներդաշնակութեամբ երգեցին Ռուսաց ազգային  
երգէն մէկ տուն ուսուերէն և մէկ տուն նորա թարգ-  
մանութիւնը հաջերէն՝ նոյն եղանակով, նոյնպէս և  
Սըբազան Կաթողիկոսին բաժակին տուն ուրիշ երգ  
մի հաջերէն:

Նոյն միջոցին նաև 300 աղքատաց կերակուր բաժ-  
նուեցաւ ուսումնարանի բակին մէջ:

Այս հանդիսին համբաւը արդէն տարածուած լինե-  
լով շատ տեղ, Խրիմու մինչև հեռաւոր ծայրերէն ժող-  
վուել էին այն օրը ի Թէոդոսիա շատ թաթարներ, և  
քանի մի մուգաներ, ձիարշաւ անելու մտքով, ինչպէս  
որ իրենց մէջ սովորութիւն է այսպիսի հանդէսներու  
ատեն: Խալիպեան իշխանը չօժարեցաւ ձիարշաւի պար-

գեները տարու, և ժամը Յ-ին Հանդիսականք և շատ ժողովուրդը դնացին Ուսումնարանէն Հեռու Կերչի ճանապարհին դաշտը՝ այն ձիարշաւը տեսնելու: Իսկ իրեկունը բոլոր ուսումնարանը գեղեցիկ կերպով լուսաւորուեցաւ:

Այսպէս վերջացաւ ահա այն օրուան Հանդէսը, որ անտարակոյս պիտի չմոռցուի այս դարուս աղգային տարեգրութեանցը մէջ. վասն զի այնպիսի Հանդէսներէն մէկն էր որ նաև մեծամեծ և հզօրագոյն աղգաց և ժողովրդոց առջև միշտ չարգի են և պատուական. ապա ուրեմն ևս առաւել մեր աղգը՝ իւր կարօտութենէն ու ակնկալութեանցը մեծութենէն կցափէ ու կհասկընաց անշուշտ այն Հանդիսին նշանակութիւնը:

Իրաւունք ունէին թերևս մեր աղգասէրներէն ոմանք անխտահալութեամբ նայելու այս նոր ուսումնարանին վերայ, չգիտնալով սորա նպատակին սրբութիւնն ու ուղղութիւնը, սորա միջոցներուն ոչմի ու չարմարութիւնները, սորա բարոյական և նիւթական հաստատութեանը երաշխաւորութիւնները, և դեռ տեսած չլինելով սորա հասուցած անշակերտաց վարքն ու գիտութիւնը, ուստի և Առաջնորդին սիրտը շատ պիտք չէր ցաւեր այն կասկածոտ վարմունքներուն որ նորա չորս զին կերեւնային, և այն տարակուսական խօսքերուն վերայ որ ամէն կողմէ ականջին կհասնէին, մանաւանդ որ չայտնի կտեսնէր Առաջնորդը որ դեռ իրօք ևս կարելի չէր եղած ուսումնարանին ամէն պիտոյքը ըստ արժանուոյն պատրաստել, և այս գործոց վերայ այնպէս տաք պահել ոմանց սիրտը՝ որ փոխանակ թեթեւամտութեամբ զրարանելու՝ ջանային ճշմարիտ աղգասիրաբար օգնել նորածին ուսումնարանին հաստատութեանն ու ծաղկելուն: — Բայց կարելի է ասել թէ այս ուսումնարանս ևս (ո՛րչափ ալ ոմանք չուզէնային) անցաւ այն աղգային վարժարանաց կարգը՝ որոց հաս-

տատութեան վերայ ողջամիտ Հայը իրաւունք չունէր տարակուսելու, վասն զի սա ևս ըստ իւրում չափու և սահմանի կարող էր օգտակար լինել աղգին, և ամօթով ձգել այն պարսաւաղէտ սերմանաքաղները՝ որ համարձակեր էին ասելու և գրելու՝ թէ սա աննշան դրպոց մէկ է, և միշտ աննշան պիտի մնայ աղգին համար՝ իբրև ուրիշ աղգային մեծամեծ ճեմարանաց և անուանի ուսումնարանաց առջև ողորմելի բան:

Ամենայն սկզբնաւորութիւն դժուարին է, մանաւանդ մեր աղգին պէս աղգի մէ մէջ, չորում խաչաճամուկ գաղափարաց բաղձութենէն շատ դիւրաւ կըրնայ շփոթիլ ո՛ր և իցէ աղգային գործի ձեռք զարնող մարդ, եթէ իւր նպատակը լաւ չէ հաստատած: Այսպիսի ժամանակ Աղգային ուսումնարան մի բանալուն դժուարութիւնները Առաջնորդին շատ աւելի չայտնի էին քան թէ բաղձաց. բայց այս բանիս կարեւորութիւնն ալ ա՛յնքան մեծ էր՝ որքան որ մեծ և կարեւոր է մեզի համար մեր աղգութեան անկորուստ պահպանութիւնը, ուստի և ամենայն դժուարութիւն սիրով չանձնաւաւ Առաջնորդը վերնախնամ Տեսչութեան օգնականութեամբը, և կյուսար թէ սկզբնական դժուարութիւնք չաղթուեցան Աստուծով: Այնուհետև սիրտ առին և այն ճշմարիտ աղգասէրք՝ որ կարելից ացօք կնայէին Առաջնորդին աշխատութեանցը վերայ, և որոց մէկը գրել էր նորա Մուրովիպէն թէ՛

«Ձեր բաղձամեայ ձգանց փորձաւորութիւնը լաւ ճանաչել «տուեր է ձեզի՝ ձեր և ամբողջ աղգին թշնամիներուն թուրութիւնն ու վատութիւնը, ուստի և աղէկ զիտէք թէ ինչպէս «պէտք է ոչնչի տեղ դնէք նոցա ամենայն անօր թշնամութիւն «ներք: Ո՛րքան և ջանահար լինին նոքա՝ երբէք չեն կարենար «ձեզի և ոչ քիչ մը վրաս հասցընել. մանաւանդ թէ անով «փառքերնիդ աւելի ևս կմեծանայ, և առաւել ևս քաջալերութիւն կուտայ ձեզի մտածել յօգուտ և խղիւճաւորութիւն աղգիս: Վասն զի ինչպէս չին ասելի պատմութեանց մէջ կկար-

«զամբ, հիմայ ալ դժբաղդարար ստէպ առիթ հունենամբ դի-  
ւտելու որ շատ անգամ բարեքը փոխանակ երախտադատութեան՝  
Հասարակութեամբ կվարձատրուի. և սակայն բարեքը միշտ բա-  
ւերք է, և անաղտ լուսոյ պէս վառելով յառաջ կցայտէ, և  
զայն գործողին մի միայն վարձատրութիւն այս աշխարհիս վրայ  
«Թէ որ ուրեշ բան չըլլայ նէ ալ, անշուշտ ինեքըուտ զգացած  
«անկարծելի ուրախութիւնը և խղճմտանքի մեծ հանգստութիւ-  
նը պիտի լինի, որ քան զամենայն հոտուցումն գերելերոյ է»:

Ահա այսու անկարծելի ուրախութեամբ և ուղիղ  
խղճմտանքի հանգստութեամբ խրախուսեալ Առաջ-  
նորդը կրինապատկեց իւր անխոնջ աշխատութիւնը  
այս ազգային Աւսումնարանիս վերայ, և տարակոյտ չու-  
նէր որ անպտուղ և անօգուտ չպիտի մնար իրեն աշ-  
խատանքը և բարեսէր անձանց ակնկալութիւնը

**Փ Լ Ո Ւ Խ Ժ Է .**

Նախիջուանի երկպառակութիւնը վերցընելու համար Ա-  
ռաջնորդին արած առաջարկութիւնը, և նորա յաջողիլը:

Տրամաբանական գիտութեան հետևողներուն յայտ-  
նել է որ մարդիկ իրենց դատողութեանցը մէջ շատ ան-  
գամ ասով կսխալին՝ որ պատճառ չեղած բանը պատ-  
ճառի տեղ կդնեն: Այսպէս նաև Նախիջուանի երկպա-  
ռակութեանը խտրական պատճառ՝ ոչ թէ եկեղեցական  
զրամներուն ազգային ուսումնարանի վերայ գործա-  
ծուելն էր, ինչպէս որ կասուէր, հասկա այն հին ատե-  
լութիւնը և անողոքելի հակառակութիւնը՝ զոր իրարու  
դէմ ունէին մէկ քանի խօսքի տէր ու հարուստ ան-  
ձինք, և նոցա հետ Նախիջուանի ու գիւղերուն բնակ-  
չաց Տէ՛՛ Տառը, գուցէ նաև Տէ՛՛ Տառը. իսկ եկեղեցական փո-  
ղերուն խնդիրը լոկ պարճատուն: և առիթ էր՝ այն հակա-  
ռակութիւնը աւելի գրգռելու, և իբր թէ օրինաւոր ձև

տալու նորա: Այս բանս աւելի յայտնի եղաւ հետա-  
դայ պարագայից մէջ:

Ինչպէս որ վերև չեղեցինք, Կատարինասլաւի Նա-  
հանգապետը և Ներքին գործոց Աստիկանարանը որոշ  
կերպով չէին հասկացած Նախիջուանցոց ներքին խոր-  
հուրդը և ոգին. ուստի կարծիք կանէին թէ այն ժո-  
ղովրդեան տժգոհութիւնը դադրեցընելու, և քաղաքին  
մնասակար երկպառակութիւնը վերցընելու միմիայն  
հնարք այս էր, որ Գաբրիէլ վարդապետը (որոջ վերայ  
Նահանգապետը մեծամեծ գովեստներ խօսած էր ար-  
դէն Նախիջուան) անձամբ երթայ խօսի ժողովրդեան  
հետ, և Խալիպեան Աւսումնարանին նման Աւսումնա-  
րան կամ Գպրոց մի ևս այն տեղը հաստատէ: Ամե-  
նայն սիրով ընդունեցաւ վարդապետն այն առաջար-  
կութիւնը՝ իբրև իւր մտքին ու սրտին ըստ ամենայնի  
համաձայն. և հետն առնելով Մերաքեան Յովհաննէս  
Աղան՝ էջմիածնայ Սինողին Փրոքուրօրը, որ այն միջո-  
ցին Խընձ կբանուէր, գնաց Նախիջուան. խօսեցաւ ժո-  
ղովրդեան գլխաւորներուն հետ, և տեսաւ որ երկպա-  
ռակութիւնը՝ առ երեսս վերցուածի պէս է: Անտի  
սիրա առնելով ժողովեց իրեն մօտ երկու կողմէն քսան  
հոգւոց չափ գլխաւոր անձինք, և յայտնեց նոցա իւր  
գիտաւորութիւնը՝ Նախիջուանի մէջ ազգային դպրոց  
բանալու՝ այս և այս պայմաններով ու կանոններով:  
Ժողովականները հաւանեցան այն խորհրդին, և խօսք  
տուին որ իրենց կողմանէ նորա գործադրութեանը աշ-  
խատին: Բայց Առաջնորդը հարկաւոր ճանչցաւ որ ա-  
ւելի հաստատութիւն տայ ձեռք դարնելու գործոցն,  
որով և միաբանութիւնն ու սէրը ժողովրդեան մէջ չկ-  
րաւի ամբանայ: Անտի առաջարկեց Քաղաքադէլտոյն՝  
որ ժողովուրդը հաւաքէ, որպէս զի ինքը այն Գպրոցին  
առաջարկութիւնը ամենուն առջև անէ, և կարգն ու  
կանոնները բացատրէ, այնպէս որ չետոյ պատճառ  
չմնայ տժգոհութեան և դանդաղանայ:

Հաւաքուեցաւ ժողովուրդը 200 հոգւոյ չափ՝ Նախիջևանի Գաւառական Դպրոցին սրահներէն մէկուն մէջ, և Առաջնորդը պարզ ոճով և ընդարձակ բացատրութեամբ Հասկացուց ամենուն իւր դիտաւորութիւնը Նախիջևանի մէջ բացուելու Դպրոցին համար, և նորա նախագծին ամէն մէկ յօդուածը մեկնեց պարզեց և Հասկացուց: Գլխաւոր գիտելիքը այս էր որ վեճակին եկեղեցական գումարներէն ինքը կըստստանար տալու այն Դպրոցին հարկէն աղքատ աշակերտաց ձրի կըթու-  
թեանը համար տարին 1500 ըուպ: Միւս աշակերտները երեք կարգ բաժնուած, ոմանք պիտի Հասուցանէին տարին 60 ըուպ., ոմանք 30, և ոմանք 15: Դպրոցին կառավարութիւնը պիտի լինէր քաղաքին Գատարանէն ընտրուած Հոգաբարձուաց ձեռքը, և Առաջնորդը պիտի Հաստատէր միայն այն Հոգաբարձուներուն ընտրութիւնը: Չորս դատարան պիտի բաժնուէր Դպրոցը, իւրաքանչիւրը մէկ մէկ տարուան ընթացքով, և բաց չայնմանէ Նախաիրթարան պիտի ունենար: (1)

Ժողովուրդը թէպէտև լուութեամբ և հանդարտութեամբ լսեց ի սկզբան այն առաջարկութիւնը, բայց դարմանալին ու ցաւալին այս էր՝ որ երբ Առաջնորդը իւր բացատրութիւնները վերջացընելով՝ Հարցուց թէ ի՞նչ կասեն, իշխանաւորները՝ որ 50 հոգիէն աւելի էին՝ իրենց հաւանութիւնը գրեթէ լսուեա՞ծ չէին չայտնեցին. իսկ Հասարակ ժողովուրդեան մէջէն այլ և այլ ձայներ լսուեցան, որոց գլխաւոր իմաստը այս էր թէ «Մեք փող չունինք Դպրոց բանալու, մեր եկեղեցիներուն փողերը կուղեմք»: Առաջնորդը պատասխանեց թէ «Եկեղեցեաց հին փողին խնդիրը ար-

(1) Այն նախագիծը (էր օ էր 5) և գլխաւոր պայմանները «ե՛ն է վերջ Պատմութեան» 3-րդ էջում Գ.

դէն վերջացած է Տէրութեան և Սինողի Հաստատութեամբը»: Այն խօսքին վկայեց նաև Սինողին Փրօքուրօրը՝ որ այն տեղ ներկայ էր. բայց ժողովուրդեան մէջէն դարձեալ մի և նոյն խօսքերը կըսուէին. երբեմն ևս այսպիսի ձայներ՝ թէ «Մեք մեր կողմայէն գոհ եմք... մեք Մատթէոս Սրբազանին Առաջնորդութեանէն գոհ էինք...» և այլն: Վարդապետը երկու երեք անգամ Հասկացուց նոցա թէ խնդիրը ամենևին այս կամ այն անձէն գոհութեան կամ տժգոհութեան վերայ չէ. սակայն բաղմութեանը մէջ երեք չորս տեղ քանի մի ծանօթ անձինք կանգնած՝ կզրգուէին ժողովուրդը որ անդադար նոյն խօսքերը կըրինէն, ուրիշ հարցմունքի պատասխան չտան:

Նրբ որ տեսաւ վարդապետը թէ այն ամբողջ խօսք Հասկանալու միտք չունի, և աղաղակը հետզհետէ բարձրանալու վերայ է, Հասկացաւ որ այն առաջուց պատրաստուած հարբ է. հարկ համարեցաւ առաջարկել նախ Քաղաքագլխոյն՝ որ սաստիկութեամբ լուցընէ զնոսա չետոյ իւր գիտաւորութիւնը, առաջարկութիւնը, և նոցա անտեղի և անիրաւ խօսքերը համառօտ կերպով մէջ բերելէն չետոյ ասաց. «Նւ որով՝ «Հետև ձեր այդ խօսքերէն կըմացուի որ կա՛մ չէք Հասկանար իմ առաջարկութիւնս, և կամ չէք կամենար «ձեր հաւանութիւնը տալ՝ չետ այսչափ բացատրութեանց, ես ոչ նոր բան ունիմ ձեզ ասելու և ոչ ժամանակ կըթողում որ մտածէք ասածներուս վերայ՝ եթէ «կուղեք, և չետոյ ի՞նչ լորոշմունք որ անէք՝ ձեր Քաղաքագլխոյն ձեռքովը՝ ինձի իմացընէք:» Այս ասաց և ելաւ ժողովքէն:

Նրբորդ օրը Քաղաքագլուխը եկաւ վարդապետին, և ցաւակցութիւն ցուցանելով՝ ներումն խնդրեց նախընդաց ժողովոյն մէջ ամբօխին արած անտեղի խօսակցութեանցը համար: Առաջնորդը պատասխանեց.

«Ես ամենեւին չեմ դարձանալ ուսման ժողովրդեան խօսք  
 «չհամարձակուիմ, բայց շատ հցաւիմ որ այն խեղճերը  
 «օրինաւոր կանախարութեանէ դուրի, և չարադրոյի ու  
 «խռովասէր մարդեանց ձեռքը մատնուած են. այսու  
 «ամեննայնիւ, ինչպէս որ ժողովրդեան ասացի, ահա ես  
 «հրաւրեամ տեղս; և երկու երեք ամիս կսպասեմ ձեր  
 «որոշմանն ու պատասխանին: Սթէ կարենաք ընդունելի  
 «անել բոլոր ժողովրդեան իմ առաջարկութեանս, իմաց  
 «տուէք ինձի; իսկոյն կուգամ դարձեալ՝ տուած խօսքս  
 «կատարելու:»

Արդէն յայտնի էր վարդապետին որ այն սպասած  
 պատասխանը պիտի չընդունէր՝ ոչ երկու ամիս և ոչ  
 երկու տարեկէն. սակայն սպասեց երկու երեք ամիս; և  
 չետոյ տեղեկութեան տուած թէ՛ Տէրութեան և թէ՛  
 Սինոդին՝ իւր Նախնիքեան արած այցելութեանը վերայ:  
 Տէրութեանէն պատասխան չընդունեցաւ. բայց Սե-  
 նոդը 1863-ին յունուարի 12-ին պատասխան գրելով,  
 այս Հարցմունքս արաւ թէ արդեօք մինչև այն ժա-  
 մանակն ալ չվերջացա՞ւ Նախնիքեանցուոց երկպառակու-  
 թիւնը: Սինոդին Հրամանագրոյն պատճէնը այս է.

«ՀՐԱՄԱՆ ԳՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱԿԱ-  
 «ՂԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍՄՅ Ե լուսաւորչական Հայոց Սինոդէ Սբոյ  
 «Եջմիածնի Տեղակալի Առաջնորդութեան վիճակին Հայոց Նախնի-  
 «քեանի և Բնաբարբոյ Գերապատիւ Գաբրիէլ վարդապետի Այ-  
 «վաղեանց: Ըստ ՀՐԱՄԱՆԻ ԳՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ  
 «Է Սինոդիս լուսն զյայտարարութիւն Ձերդ Գերապատուութեան  
 «Է 27 Յունիսի տարւոյս համարաւ 205, որով յայտ աւանչք զայ-  
 «ցելութեանէ Ձերմէ կեկեղեցեաց և ժողովրդեան նորոյն Նախնիքե-  
 «ւանի և շքակալ դեղօրէիցն. և Է միջի այլոց գէշք թէ Է վեր-  
 «ջին աւուրս Մայիսի յուզի անկեալ ընդ միծապատիւ վերջուրօ-  
 «րին Սինոդիս ընդ Աղա Յովհաննու Միլաբեանց Է Նախնիքեան,  
 «խօսեցեալ էք տուանձինն երկիցս և երկցս ընդ Հայրապե-  
 «տեանին և ընդ գլխաւորս Է խորհրդալիցաց նորս, առաջի  
 «եղեալ էք նոցա զնախադիճն դպրոցին զոր մարթ էր կանդ-  
 «նել Է քաղաքի անդ զման 300 կամ 400 աշակերտաց՝

«աւանց ինչ ծանրանալոյ Է վերայ քաղաքացոյն, և յորդո-  
 «ւրալ էք զնոսա մի՛ դանդաղել յընդունել զառաջարկու-  
 «թիւն Գերապատուութեան Ձերոյ, կամ թէ զսպաս ծառայու-  
 «թեան Ձերոյ Է կառուցումս դպրոցին, զոր համարեալ էր կեղ-  
 «ւրն միաբանութեան պառակտելոցն եղբարց: Եւ թէպէտ Հայ-  
 «ւրապետեանց և կուսակիցք նորս ո՛չ յուշին յայտնի ինչ հակա-  
 «ուսիւթիւն բանից Ձերոց, սակայն Ձերդ Գերապատուութիւնն  
 «Երբև ծանուցեալ էր նոցա թէ կամրք բացատրել զգիտաւորու-  
 «թիւնս Ձեր և առաջի բարձրութիւ ժողովրդականաց, զուսմարեցին  
 «Նորա Է 16 Յունիսի ժողով արանց աւելի քան երկերեւոց և  
 «Հրաւիրեցին զՁեզ անդր: Բայց յետ Ձերդ Գերապատուութեան  
 «բացատրելոյն առ նոսա զկան Ձեր և զգիտումս մտացդ, խու-  
 «ժանն հաւաքեալ Հրաւիրանաւ Հայրապետեանցն այնպիսի աղօ-  
 «ւրնաւոց, անտիկ և անպատիւ բանիւք կտ պատասխանի ա-  
 «ռաջարկութեանց Ձերոց, զի յայտնի եղև ամենեցուն թէ Հայ-  
 «ւրապետեանցն է այն թելադրութիւն, որպէս զի մի՛ գացէ առա-  
 «ջարկութիւնն Ձեր զյաջողութիւն. քանզի խառնակոչ աղաղու-  
 «կաւ և յանդուզն բանիւք յուղեցին նորս դարձեալ զինդիք  
 «Եկեղեցական գումարացն, և Ձեզ հարկ եղև տալ նոցա ժամա-  
 «նակ խորհելոյ Է զգաստանալ և Է ճանաչել զորուտ անձանց և  
 «քաղաքին իւրեանց, և ապա՛ թէ առաջարկել Ձեզ զիրս դպրո-  
 «ցին. որում այնչափ ցանկային բացմանն ըստ երևութիւն, և յետ  
 «Երկց աւուրց դարձ արարիք Է թիտղոսիս: Ճշմարտութեան իրացս  
 «Վիպեցէ անշուշտ և Մեծապատիւ վերջուրօրն, որ ակնատես  
 «և ակնջալուրն էր ամենայնիւ Եւ զտեղեկութիւնս Է գործոց  
 «Սինոդիս. ՀՐԱՄԱՆՅԵՑԻՆ Հարցանել Է Ձերդ Գերապատուութեանէ,  
 «Թէ՛ զի՞նք եղբեցս ինքիքն Է ծառն զնոսա ինչոն նորոց ուսումնարանի  
 «է Նախնիքեան բողոքի, որ պատմաւաւ դժտութեան Է մէջ Հայադ-  
 «ղեանց տեղոյն յերկուս դասս պառակտելոց խախտն կալաւ առ  
 «ժամն. Կարայի՞ն աւրել ինչ Է նոսա Բանս համարանոց Ձերոց, առ Է  
 «հարտութիւն խաղաղութեան անկոյ զնոսա և ձեռնամուխ լի-  
 «նելոյ Է զոր՝ ընդհանրապէս Է կառուցումս ուսումնարանի հա-  
 «մայօժար իւրութիւն թէ տակաւին ևս կան մնան նորս յամա-  
 «ւալ յառաջին անմիաբանութեան և ատելութեան առ իրեարս:  
 «Իսկ Է ձեռն հակահարկաւորն Սիրաբերինոսալու ծանուցանել հա-  
 «տարակութեանն Հայոց նոր Նախնիքեանու, թէ ինքիքն Է ծառն վե-  
 «րոյքեալ էլեղեցանն դրամոց որոցելոց Է Խաղաղեանց վող ուրեմս աւար-  
 «քեալ է զնոսահարկութեմ Սինոդիս, համաձայն համաձայն յօժարու-  
 «թեան և դրուոր պայմանագրութեան ընտրեալ առ այն Է հա-  
 «տարակութեանն պատգամաւորաց, Կարձելով ինքնագործն զգիտութեան

«Լինանս ըստ այնմ, ուստի անորդի ինչ է ի նորմանէ ոմանց ի հայազնեաց  
«Նախնիքանոս, ճիշտման լինել յայն գործ և յուրել վերստին զնոյն պո-  
«հանջ հանասոյ վախճանաւորն անորդնու-Լեան ծայրագոյն հոգևոր քաջու-  
«Լեան»»

Սինոդին այն հարցմունքին որոշ պատասխան տա-  
լու համար՝ Առաջնորդը մարտի 7-ին դեր գրեց Նա-  
խնիքեանի Հոգևոր Կառավարութեան, և հրամայեց որ  
քահանաները հաւաքուին, և հարցուի նոցա թէ ար-  
դեօք յոյս կա՞ որ ցանկալի հաշտութիւնը շուտով  
հաստատուի ժողովրդեան մէջ, և թէ յօժարութիւն  
կերենա՞յ ժողովրդականաց վրայ՝ ընդունելու այն պաշ-  
մանները զորս ինքը առաջարկել էր անցած տարի՝ Նա-  
խնիքեանի մէջ ազգային դպրոց բանալու համար:

Հոգևոր Կառավարութիւնն արաւ այն ժողովը մար-  
տի 21-ին, և քահանայից գրաւոր կարծիքը հաղորդեց  
Առաջնորդին, որոյ նշանաւոր խօսքերը կարժէ ամբողջ  
այս տեղ բերել ի հաստատութիւն և ի բացատրութիւն  
դրեթէ բոլոր վերը չիշուած խօսքերուն և գործերուն:

«Նորին Ամենապատիւ Սրբութեան Տեառն Տեղակալի Առաջ-  
նորդութեան վիճակիս Նախնիքեանի և Պետարպոյ Գարբէէ  
«Ծայրագոյն վարդապետի և Ասպետի,

«Ի Մխրան քահանայից քաղաքիս,  
«Յայտարարութիւն»»

«Առ առաջադրութիւն Ձերդ Ամենապատիւ Սրբութեան յ7  
«Մարտի տարւոյս՝ համարաւ 79, ծանուցանելոյ մեզ ի ձեռն Հո-  
«գևորական Կառավարութեան տեղոյս ի 21 աւուր մարտի յԱ-  
«տենի նորին, յաղաքս նախ՝ թէ յորում աստիճանի կցէ այժմ  
«Հնացեալն այն և ցաւալի երկպառակութիւն ժողովրդոց քաղա-  
«քիս, մանաւանդ յօրէ մեկնելոյ Ձեր աստի՝ ի Յուլիոս անցելոյ  
«ամին, մինչև յայտոսիկ աւուրս: Նրկորդ՝ թէ դուցէ՞ ինչ ակըն-  
«կալութիւն ածելոյ գնոսս փութով ի կատարեալ հաշտութիւն,  
«և Նրկորդ՝ թէ տեսանիցի՞ ի նոսա միակամ յօժարամտութիւն  
«զերջանելոյ ի սպամանն առաջարկեալս ի Ձերդ Սրբութենէ վասն  
«կառուցման Աղապնոյ Դպրոցին քաղաքիս:

«Առ վերոյգրեալ հարցմունս Ձերդ Ամենապատիւ Սրբութեան  
«փութամբ ամենանուստաբար ի պատասխանատուութիւն»»

«Ա. Հնացեալն այն անբաւականութիւն ի ժողովրդեան քա-  
«ղաքիս, որով պառակտեալ յերկուս կուսակցութիւնս վասն եկե-  
«ղեցական դումարաց՝ սկզբնաւորեալ է յօրէ անտի Առաջնորդու-  
«թեանն Մատթէոսի Արքեպիսկոպոսի, և ի մասնելն Ձեր ի սար-  
«տաւորութիւն թեմակալի, քաղաքակիցք մեր ամենեքին ուրա-  
«խացան՝ յուսալով աւարտման այնր դործոյ, և արդարև ի դալն  
«Ձերդ Սրբութեան յառաջին նուազ ի քաղաք մեր ի 1858 ամի՝  
«կարացին աղղել բանք համադանաց Ձերոց ի ժողովուրդս մեր, և  
«դործն այն համայօժար հաւանութեամբ հասարակութեան յըն-  
«տրեալ ի նոցունց սպտղամաւորաց՝ աւարտեալ էր բարեյաջող  
«կերպիւ»»

«Բ. Բայց յանցանել ժամանակաց ինչ ցաւալին այն դժտու-  
«թիւն վերստին բորբոքեցաւ, որպէս տեսանի, և յօրէ անտի ճա-  
«բակի ի ժողովուրդս մեր անբաւականութիւն և ատելութիւն առ  
«երեարս:

«Գ. Այլ քանզի լսելի լինելը միշտ ի ժողովրդականացն մե-  
«բոց՝ թէ պատճառ այսր անբաւականութեան նոցա է միմիայն  
«չլինելն աստանօր վարժատան միոյ, և եկեղեցական դումարաց  
«պահանջորութիւն, ուստի ի հերուն հետէ ցանկալով հաշտու-  
«թեան նոցին՝ Ձերդ Սրբութիւն յամենանն Յունիսի 1862 ամի  
«յայցելութեան Ձերում ի քաղաքիս՝ ամենայն ջանիւ դուն գոր-  
«ծեալ էր կառուցանել ի քաղաքիս զաղապնոյ Դպրոց մի վասն  
«300 կամ 400 աշակերտաց, դործ արդարև Աստուածակաճոյ և  
«դալիլի, և միանգամայն կարէր լինել զիկ հաշտութեան երկուց  
«բաժանեալ եղբարց, սակայն ի ժողովի իւրեանց հրաւիրեալ  
«դձեղ, որ եղեալն էր ի 16 Յունիսի, ըստ ամենայնի անպատեհ  
«բանիւք արարեալ էին պատասխանի առ առաջարկութիւնս Ձեր,  
«և միանգամայն ոչ հայելով ի սատիւ և ի յարդ վիճակաւորի՝  
«խօսեցեալ էին ի նմին ժողովի անպատկառ բանիւք՝ միմիայն այն-  
«պիսի անձինք՝ որք յայլ ժողովի ի քաղաքական դէպս կամ ոչ  
«կոչեալ լինին անդը, և կամ չունին իրաւունս խօսելոյ, կամ  
«չկարեն բան ինչ արտարերել ի նմին ժողովի: Չայտոսիկ և մեք  
«բաջ տեղեկացեալ եմք յայնմ ժողովի եղեալ ի պատուաւորագու-  
«նից անձանց»»

«Դ. Տեսանելով մեք զայտոսիկ խառնութիւնս ի ժողովրդականս  
«մեր՝ վնասակարս հոգւոց և մարմնոց, թէպէտ քանիցս քանի  
«ըստ քահանայական սուրբ պարտաւորութեան մերոյ խորհուրդ  
«արարաք ի միջ ոմանց ի մէնջ զամենայն հնարս հնարել առ ի  
«հաշտեցուցանելոյ զերկպառակեալ կուսակցութիւնս, սակայն  
«յայսր ամենայնի վերայ տեսանելով մեք՝ զի ուր երկու կամ

«երեք ժողովեալ աշխարհականք խօսին միշտ զայրացմամբ և անբաւականութեամբ է վերայ այսց դրժոց, չյաջողեցաւ խորհուրդն մեր, և ժողովուրդն մեր կայ մնայ տակաւին յառաջին և յամառեալ միտս իւրեանց»

«Հուսի ապա ծանուցանեմք և զայս, հասարակութիւնն մեր, որպէս երեւի է խօսից և է բանից նոցին, չունին ամենեւին միտս ընդունելոյ զառաջարկութիւն Զերդ Սմենապատիւ Սրբութեան «վասն կառուցանելոյ է քաղաքիս զԱղբային Գպրոց»

«Զայս ամենայն է գրի անցուցեալ մերով իսկ ինքնաձեռագիր և ստորագրութեամբ, ըստ քահանայական սուրբ կոչման մերով վիկայեմք զձշմարեան»

«Ի 21 Մարտի

«1863 ամի

Ի Ն. Նախիջևան»

Աւագ քահանայ Աստուածատուր Եղիայեան»

Կարապետ քահանայ Զօլախեանց»

Յարութիւն քահանայ Քարաքաշեանց»

Գաբրիէլ քահանայ Ճաւճաւեանց»

Պօղոս քահանայ Խոճեանց»

Թովմաս քահանայ Գանձապետեանց»

Բարսեղ քահանայ Պոպուլ»

Եղիա քահանայ Շաբշեանց»

Նիկողայոս քահանայ Սաղիսեանց»

Գէորգ քահանայ Պետրոսեան»

Պօղոս քահանայ Ստեփանոսեան»

Յովհաննէս քահանայ Տօխանեան»

Կարապետ քահանայ Խալթրաուխեան»

Աստուածատուր քահանայ Տէր Մինասեան»

Յովհաննէս քահանայ Սաղունեանց»

Խաչատուր քահանայ Զարեփեանց»

Մովսէս քահանայ Զարեփեանց»

Յովհաննէս քահանայ Տէր Սիմէոնեան»

Խաչատուր քահանայ Գասպարեան»

Ղուկաս քահանայ Գալստեանց»

Բայց վերոգրեալ չաչտարարութիւնը ստորագրող քահանաներէն ոմանք, այսինքն միայն երկու հոգի (որոց անունները արժան չեմք համարելը այստեղ չեւառակել) նախ իրենց կողմանէ ծուռ մտքի տարին

Առաջնորդին արած հարցմունքը, իբր թէ նա կուզէ քահանաներուն դէմ գրգռել զժողովուրդը, կամ թէ տէրութեան ձեռքովը պատուհասել տալու միտք ունի ժողովրդեան գրգռելներուն գլխաւորները, ուստի նաև այն չաչտարարութեան ձեռք դնելէն չետոյ՝ գնացին իմացուցին քաղաքագլխոյն և նորա կուսակցացը, իբր թէ իրենք «*Խոյ*» ստորագրել են: Նորա նոր առիթ առին անտե՛ ժողովուրդը գրգռելու, ասելով թէ Առաջնորդը նորա համար կուզէ իմանալ մեր քաղաքին մէջ իսկ խոսիլութեան ինչ վեճակի մէջ եղածն որ չիրաւի այն խոսիլութեան գլխաւոր պատճառ եղողները (որ իրենք էին) Տէրութեան իմացընէ, և պատժել տալ զնոսա: Չկարողացան կամ թէ չկրամեցան այն անձինքը մտածել՝ որ իթէ Առաջնորդը այդպիսի միտք ունենար, ուրիշ շատ կերպով կարող էր ճանաչել,—ինչպէս որ խիստ լաւ ճանչցել էր,—թէ ո՛չք էին իրեն հակառակորդները, և ժողովրդեան երկպառակութիւնը սաստկացընողները, և ո՛ւմ որ պէտք է իմացընել: Նլան դիւ ևս գրեցին Վ. Կաթուղիկոսին՝ թէ Առաջնորդին հրամանաւ Նախիջևանի Հոգևոր Կառավարութիւնը ժողով արել է քահանայից, և քոյ ստորագրութիւն առել է նոցանէ ի նպատ Առաջնորդին, հակառակ քաղաքագլխոյն և այլն. և Վ. Կաթուղիկոսը՝ առանց ամենեւին ստուգելու իրաց ճշմարտութիւնը՝ չանդիմանական կոնդակ գրեց Հոգևոր Կառավարութեան. և այն երկու քահանայից որ իբր թէ ահամայ ստորագրել էին չաչտարարութեան ու չետոյ դնացել դանդաղաւ էին քաղաքագլխոյն, մէկ մէկ վարդապետական խաչ զուղարկեց Պ. Հայրապետեանցին ձեռօքը, գուցէ և խընդրանօքը:

Գաբրիէլ վարդապետը այն անգամուն Նախիջևան որ դնաց, տեսաւ Ռուսաց նորաչէն եկեղեցին՝ Սուրբ Գէորգայ եկեղեցուցն մօտ կանդնուած: Նորա հակա-

ուսկորդները չամաչեցին այս բանս ևս չանցանք կամ ամբաստանութեան նիւթ Համարել վարդապետին, եւրև նորա անաղաքաէր Առաջնորդութեանը կամ կառավարութեանը պտուղ. ուստի մէկ երկու խօսք ևս պէտք է սորա վերայ ասեմք որ բարեմիտ կարդացողները չկարծեն թէ չերաւի Գաբրիէլ վարդապետն է պատճառ. Ռուսաց եկեղեցւոյն շինութեանը, և այն՝ իբր թէ Հայերը Ռուսաց դաւանութեանը դարձընելու դիտաւորութեամբ:

Նախիջևան քաղաքին մէջ երկու Հաղարէն աւելի ուսու կ'Համարուի՝ ծառայական կարգի մարդիկ, և քանի մի պաշտօնատեարք: Սոքա խնդիրք տուած էին տէրութեան, թէ որովհետև Նախիջևանը Ռոսթովին բաւական հեռու է, հրաման տրուի իրենց Ռուսաց եկեղեցի շինելու Նախիջևանին մէջ: Տէրութիւնը հարկաւ չէր կարող չկատարել այն իրաւացի խնդիրքը. ուստի հրամայել էր Քաղաքի քաղաքապետին որ փոյթ ունենայ այդ առաջարկութեան շուտով և ըստ պատշաճի ի գործ դրուելուն. քաղաքապետն ալ գրել էր Նախիջևանի Մակիսթրաթին:—Այս վիճակիս մէջ էր այն եկեղեցւոյն խնդիրը՝ երբ Գաբրիէլ վարդապետը որոշուեցաւ Առաջնորդ. նորա հետ ամենեւին պաշտօնական թղթակցութիւն չեղաւ սկիզբէն մինջև վերջը այս նիւթիս վերայ՝ ոչ Տէրութեան և ոչ Մակիսթրաթին կողմանէ: Միայն թէ նա Նախիջևանի քաղաքապետին հետ խօսք եղած ժամանակին ասած էր իւր կարծիքը՝ թէ անպարտաւոր էր կատարել Տէրութեան առաջարկութիւնը, և ըստ կարի փութապէս, քաղաքին մէջ առանձին պատշաճաւոր տեղ սահմանելով այն շինութեան համար. որպէս զի աղբիս չարախօսները նոր առիթ չգտնեն ասելու թէ «Ահա այսպէս ասելախտ են Հայերը, Տէրութեան կողմանէ այնքան բարեք և արատնութիւն ընդունել են ու կ'լայելեն ամենայն

աղատութեամբ, և իրենք չեն կամենար մէկ կտոր տեղ տալ իրենց քաղաքին մէջ որ տերող կրօնին (Ռուսաց) հետեւողները՝ սեպհական եկեղեցի ունենան», և այն: Եւ սակայն այն խնդիրը հինգ վեց տարի անկատար մնաց, մինչև որ վերջապէս Ռուսներն իրենց սրտին ուզած տեղն ընտրեցին առին, եկեղեցին կանգնեցին, և լրագրաց մէջ այն առիթով ծանր ծանր խօսքեր գրեցին Նախիջևանի Հասարակութեան դէմ:—Ուր կ'մնայ ուրեմն ոմանց արած գանդատը՝ թէ այդ բանին պատճառ Գաբրիէլ վարդապետն եղաւ: Եւ մի՞թէ իրաւունք չունին ուրիշներն ևս պատասխանելու թէ «Երանի՛ թէ Գաբրիէլ վարդապետը իրօք խառնուած լինէր ուղղակի այն գործոյն մէջ, և խօսք անցընէր Նախիջևանի Մակիսթրաթին որ մէկ օր առաջ կատարուի Տէրութեան իրաւացի պահանջմունքը, որպէս զի այժմ այս նախատական բաները չգրուէին մեր աղբին համար:»

Այս վիճակիս մէջ էր ահա Նախիջևանի երկպառակութիւնը 1863 տարւոյն մէջ, երբ որ Առաջնորդը՝ երկրորդ անգամ կանչուեցաւ Վեհափառ Կաթողիկոսին ի Սուրբ Էջմիածին:

## Գ Լ Ո Ի Խ Ժ Ը.

Գաբրիէլ վարդապետին երկրորդ անգամ Ս. Էջմիածին երթալն ու դառնալը:

Մինչդեռ կսպասէր Գաբրիէլ վարդապետը որ Նախիջևանին խաղաղութեան կամ Հաշտութեան լուր առնու,—որովհետև կ'մտածէր թէ Հակաուսկորդները դուրէ վերջապէս յողնեցան կամ ձանձրացան իրենց անօգուտ ընդդիմութիւններէն և աշխատանքներէն,—

Նորքա՝ ինչպէս որ վերն ասացինք չէին դադրեր վարդապետին ամէն մէկ դործը և գրուածքը ծուռ մտքի տանելով՝ նորա դէմ մէկդմէկ գրգռելէն, և Վ. Կաթուղիկոսին ևս ըստ այնմ զբարտապան և դանդաղասկան նամակները գրելէն:

1863-ին օգոստոսի վերջի օրերը նոր Կոնդակ ևս առաւ վարդապետը Կաթուղիկոսէն՝ յուլիսի մէջ գրուած, յորում ծանր ծանր խօսքերով կմեղադրէր Վ. Կաթուղիկոսը վարդապետին՝ որ իւր թէ իրեն Հայրապետական իշխանութեանը չհնազանդելը, իւր թէ քանի՜ անգամ է՝ խօսք կուտայ որ երթայ Եջմիածին, ու չե՛րթար. իւր թէ իրեն առաջնորդական պարտքերը կատարելը մոռցած՝ կամ մէկդի գրած, պարտք և անօգուտ աշխատանքներու, այսինքն Ուսումնարան կառավարելու, գրքեր հրատարակելու, ամսագիր տպելու, լրարաններ հաստատելու կաշխատի. իւր թէ Ս. Եջմիածնաց ամենայն եպիսկոպոսներուն ալ չհաւանել կցուցնէ, և այլն և այլն: Այն նշանաւոր կոնդակին խօսքերը ամբողջ այստեղս մէջ բերել և նոցա ի՞նչ ատուածակն անտեղի լինելը ցուցնելը աւելորդ համարելով <sup>(1)</sup>, այս միայն ասեմք որ վարդապետը կոնդակին խօսքերէն ոչ սակաւ դաշրացած ու վհատած, միտքը գրել էր որ Եջմիածին երթալէն առաջ՝ գրով պահանջէ Վ. Կաթուղիկոսէն և Սինոդէն այն մեղադրանքներուն հաստատութիւնը և ապացոյցները, և յետոյ որոշէ թէ ի՞նչ պատասխան պիտի տայ Կաթուղիկոսին: Բայց լաւ համարեցաւ՝ առաջ խորհուրդ հարցանել Մերաքեան Յովհաննէս Աղային (որ երկու ամսէ ի վեր Տեսուչ նշանակուած էր Խալիպեան Ուսումնարանին), և Գ. Խորէն վարդապետին, որ իւր օգնականն էր նոյն ուսումնարանին վերատեսչութեանը մէջ: Նորքա իրարու հետ

(1) Տէ՛ս ի վերջ Պարտաւթեան՝ Յ - Ե - Լ - Ի - Դ:

առանձին խորհրդակցելէն վերջը՝ գնացին վարդապետին քով, և ամէն տեսակ յորդորական խօսքերով համոզեցին որ այս անգամ չէ չասէ, երթայ Եջմիածին: Պ. Մերաքեանը կասէր և կայնդէր՝ թէ «Նս դուրս կուտամ որ այս անգամ Վեհափառ Կաթուղիկոսը շատ սիրով կընդունի գձեղ, ամենայն բան կմոռանայ, և ամենայն պատուով ետ կճամբէ. վասն զի գիտեմ նորա բարեւորութիւնը» և այլն: Գաբրիէլ վարդապետը ուրիշ շատ խօսքերէն վերջը այսպէս պատասխանեց նոցա. «Եթէ ուրիշներուն չէ, բայց ձեզ երկոցունցը ամենայն «կերպով չայտնի է որ իմ երկրորդ անգամ Եջմիածին «երթարս անպատճառ դանաղան կարծիքներ պիտի տայ «բարեկամաց և թշնամեաց՝ և գուցէ Վ. Կաթուղիկոսը «իրեն ինձ հետ բռնած վարմունքը արդարացնելու «համար վերաս նոր նոր պահասութիւններ գտածի պէս՝ «սեցընէ անունս թէ՛ Տէրութեան և թէ՛ Ժողովրդոց «կամ աղբին առջև: Այն ժամանակը անտարակոյս «հարկ պիտի լինի որ ետ դարձած ժամանակս ուղ- «ղակի գիմեմ Փեթերպուրի, և հրաժարականս տամ «Տէրութեան»: Պ. Մերաքեանը պատասխան տուաւ թէ «Այո՛, այն ժամանակը ամենայն իրաւամբ կարող «էք այդ բանն անել, և արդարանալ ամենուն առջև:»

Այն խօսքին վերայ որոշեց վարդապետը որ երթայ Եջմիածին. մանաւանդ որ Սինոդէն ևս հրաման եկած էր իրեն որ անպատճառ Կաթուղիկոսին կամքը կատարէ, որպէս զի անհնապանդ չհամարուի հոգեւորական Գերագոյն իշխանութեան: Պատասխան գրեց Վեհ. Կաթուղիկոսին և Սինոդին՝ թէ ահա կպատրաստուիմ շուտով գալու. և սեպտեմբերի 17-ին ճանապարհ ելաւ դէպ ՚ի Եջմիածին:

Այն օրերը կոպտուէր Վեհափառ Կայսեր Խրիմ գալը, և վարդապետը կարող էր անշուշտ քանի մի օր ուշացընել իւր ճանապարհորդութիւնը, որպէս զի եր-

Թայ՛ Կլեատիա, ներկայանայ նախ Կայսեր, և չետոյ ուղեորի յէջմիածին: Բայց նա զգուշանալով որ կասկածոտ անձանց նոր նոր զբախտութեանց պատճառ չտայ, անցաւ Կերչին վերայէն Քաման, Հասաւ Քիֆլիս սեպտեմբերի 30-ին, և այն տեղ երեք օրէն աւելի չուշանալով՝ գնաց Հասաւ Ս. Էջմիածին հոկտեմբերի 5-ին:

Ոչ Վեհախառ Կաթուղիկոսը կապասէր վարդապետին այնպէս շուտով Հասնելուն, և ոչ միաբանները, Թէպէտև երկու կամ երեք օր առաջ Հասել էին այն տեղը նորա գրած պատասխանները:

Վ. Կաթուղիկոսը այն օրերը էջմիածնայ Տպարանին մէջ տպել կուտար իրեն շարադրած մէկ տետրակը, որ էր «Սխալմունք Գասատետրին Մեկնութեան խորհրդոց և արարողութեանց սրբոց Պատարագին տպելոց «ի Քէոզոսիա և Նալիպեան Տպարանին»: Առաջին օրէն միաբանք ցցուցին վարդապետին այն գրուածքը և պատմեցին Թէ ի՛նչպէս Սինոդականք (յայտնի բան է որ «հոգ») դէմ կեցել են այն տպագրութեան, բայց չեն կարողացած արգելել, և սկզբան տետրակին ճակատը դրուած է եղել Սինոդի անդամներէն մէկուն (Նղիազար Արքեպիսկոպոսին) ստորագրութիւնն ալ՝ իբրև դատաքննական հրաման տպագրութեան, բայց չետոյ այն Թերթը վտխել տուած էր Սինոդը՝ որպէս զի բոլոր պատասխանատուութիւնը Հեղինակին վերայ մնաց: Վարդապետը այն նշանաւոր գործն ևս չգիտնալու զարնելով՝ ներկայացաւ Կաթուղիկոսին, և բաւական քաղցր ընդունելութիւն գտաւ. բայց այն ընդունելութիւնը Թէ՛ այն օրը և Թէ՛ միւս օրերը միշտ խառն էր Կաթուղիկոսին այլ և այլ Հեղինական և երգիծական Հարցմունքներովը, մեղադրանքներովը, ամբաստանութիւններովը և այլն: Եւ Թէպէտ վարդապետը առանց պատասխանի չէր Թողուր այն քարերը և անարգանքները,

բայց և ոչ երբէք իւր չափէն ու աստիճանէն դուրս կենէր. իսկ Հայրապետը՝ տեսնելուն պէս որ առած պատասխանը ճշմարիտ և ամբողջ է, խօսքը կիտխէր, և ուրիշ նիւթի կրարձընէր:

Նախիջևանի մէջ գտնուող Հակառակորդները երբ որ լսեցին Առաջնորդին էջմիածին գնալը, կասկածելով՝ Թէ մի՛ գուցէ վարդապետը Կաթուղիկոսին առջև արդարանայ, և այս անգամ եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունի, ընտրեցին իրենց մէջէն Սուլթանշահեան Անանիա անունով երեսասարդ բժիշկը, — որ Հիւսիսայն ասուած ամսագրոցն խմբագրէնէն մէկն եղած էր ատենով, — և ահադին ծախուց չեւնայելով՝ Հասուցին զինքը էջմիածին՝ որ Գարբէլ վարդապետին ասելու խօսքերը Հերքէ, և նորա ամէն գործերը խանդաբէ: Չգիտեմ ի՛նչ կերպով կարողացաւ այն բժիշկը սերալիւ ընդունելութիւն գտնել Վեհախառէն և ուրիշ քանի մի անձինքներէ, այնպէս որ Սինոդականներէն և ուրիշ միաբաններէն շատը իրաւամբ դարմացան, ցաւեցան ու տրտմեցան, բայց ուրախացողներ ևս եղան: Նոյն իսկ Գարբէլ վարդապետին իւր հետը Նախիջևանէն առած քահանայն — կարծես Թէ չուսահատելով իւր Առաջնորդին գործոցը արդարութեանէն, կամ դէթ նորա իրաւանցը յաջողութիւն գտնելէն, — միաբանեցաւ ծածուկ այն բժշկին հետ իւր վարդապետին դէմ, և Կաթուղիկոսին ևս կարողացաւ այնքան աչքը մտնել՝ որ առանց իւր այնտեղը ներկայ գտնուող Առաջնորդին հաւանութեանը կամ գիտութեանը՝ ընդունեցաւ Աւագ քահանայութիւն, և գլուխը Կահուսի զննելու եղանակութիւնը . . .

Այդ մեջոցին Կաթուղիկոսին մեծ քանքը այս երևցաւ որ ըստ խորհրդոց Սուլթանշահեան բժշկին, — գուցէ և այլոց ոմանց, — հաշիւ պահանջուի Սինոդին ձեռքովը Գարբէլ վարդապետէն՝ Թէ Նախիջևանի եկեղեցիներուն գումարները ի՛նչ արել է, և Թէ վնճար

կին ուրիշ փողերը ի՞նչ բաներու գործածել է և կործածէ: Վարդապետը պատասխանեց՝ թէ «Այն Հաշիւները ամբողջ Հետս չեմ բերած, սակայն կարող եմ առ «այժմ ընդհանուր և բաւական ժխտել Հաշիւ տալ Սինոդին, խոստանալով որ ի դարձիս աւելի մանրամասն «և ընդարձակ տեղեկութիւններ յուղարկեմ անպատճառ»: Գրեց այն Հաշիւները, ներկայացուց Սինոդին, և որովհետեւ նոքա Համառօտ էին, ուստի և անկատար, բերնով արած խոստմունքը գրոյն մէջ ևս կրկնեց: Բաց չայնմանէ այս կտորն ևս աւելցուց, թէ «Որովհետեւ «դժբաղդութեամբ իմ ամէն գործերս տարբեր կերպով «կհասկացուին ու կբատուին Եջմիածնայ մէջ, ինձ ևս «փափաքել է որ Տէ՛ն անդամներ անձ Տի յուղարկուի ի՞նչ վիճակ, «անձամբ տեսնէ ձեռնարկութիւններս և արած կառու- «վարութիւնս, և ստուգապէս հասկանայ վիճակիս ժո- «ղովրդոց մեծ մասին գոհութիւնը կամ տո՛գոհութիւնը:»

Ձեր կարող Սինոդը գոհ չլինել վարդապետին այն գրուածքէն, ուստի և օրագրութիւն ևս արաւ, թէ Վեհափառ Վաթուղիկոսին առաջադրութեանը Համեմատ՝ վարդապետը իրմէ պահանջուած Հաշիւները առ այժմ գոհացուցիչ կերպով տուաւ:

Գիտէր Գաբրիէլ վարդապետը որ Վաթուղիկոսը, մանաւանդ այն բժշկին գալէն յետոյ, ամենեւին կամք և միտք չունէր զինքը արդարացնելու, և թէ թիֆլիզու քանի մի աննշան և անանուն անձինքներէ ևս անանուն նամակներ ընդունել էր նոյն օրերը՝ որ չլինի թէ վարդապետը եպիսկոպոս ձեռնադրէ. բայց այն իրեն փոյթը չէր, միայն թէ անպատճառ կողմը որ Վաթուղիկոսն ասէ իրեն թէ ի՞նչ պիտէր կամ Տուրու-Ռիաններ գտել և իւր վարդապետութեանցը կամ գրուածքներուն մէջ:

Օր մի՛ երբոր Սինոդի անդամներէն երկու եպիսկո-

պոս և մէկ վարդապետ (1), ևս և Փրոքուրորը և Ատե- նադպիւրը Վաթուղիկոսին առջևն էին, Գաբրիէլ վարդապետը ուրիշ խօսքերուն մէջ խնդրեց Վաթուղիկոսին որ բարեհաճի ասել իրեն՝ թէ արդեօք որո՞նք են իւր մոլորութիւնները և սխալ վարդապետութիւնները: Վաթուղիկոսը նախ այս ասաց թէ «Սո դրուածքներու մէջ Տուրու-Ռիան կայ չեմ ըսած, Հասցա սխալներ կան՝ որ պէտք է շտիկել. զոր օրինակ Պատարագի Մեկնութեան Դատարարի մէջ ըսեր ես թէ քոցը ճանձ քշելու գործիք է. անանի բան ըսել կըլլա՞յ մե՛ն»: Վարդապետը պատասխանեց թէ «Այդ ամենեւին սխալ չէ, և ամենայն կերպով ճշմարիտ է՝ թէ քոցը ի «դէմն ո՛չ միայն մեր Սկեղեցուցն մէջ, այլ և Յունաց և Լատինացուց Սկեղեցեացը մէջ հնարուած էր՝ ճանձերը սուրը սեղանին քովէն բեր- Համար, ինչպէս որ անունն ևս կվկայէ. յետոյ Լատինացուց Սկեղեցին այն գործիքը խափանել է, Յունաց Սկեղեցին մինչև ցայժմ կգործածէ՝ մերկնէն փոքր, և փոքր ինչ տարբեր ձևով. իսկ մեր Սկեղեցին զարդարել է զայն սերովեհներով, և արել է գեղեցիկ և խորհրդաւոր զարդ մի եկեղեցուց:»

— «Հասցա որ Լատինի մէջ ըսեր ես թէ «Գրեատոս Կայէնի ցեղէն է՞:»

— «Կներէք, Վեհափառ Տէր, այդպիսի բան մտքիս անդամ չէ անցած բնաւ՝ որ կարենայ գրչես ելնել:»

— «Վհա այս տեղն է» ասաց, ու դրասեղանին վերայ կեցած Լատինի տետրակը բանալով ցրցուց այն տեղը, չորում ա՛յս իմաստը ընդարձակ բացատրուած է, թէ երբ որ Աղամ իւր Մնդրանիկ որդին ծնաւ, և անունը Կայէն դրաւ, ասելով՝ «Ապոս Գաբր Ապոս-Տոլ» — փոյց այս յայտը

(1) Գրիգոր Եպիսկոպոս Յոթեան, Սշխալար Եպիսկոպոս, և Ասրէի վարդապետ Տէր-Գասպարեան:

«...» թէ նորա ցեղէն պետի դաչ ժամանակով փրկէն աշխարհէ: Վարդապետը հարցուց թէ մեթէ այս խօսքէն կարելի՞ է մտկաբերել և ասել՝ թէ սորա հեղինակը կհաստատէ որ Քրիստոս Ապղէնի ցեղէն եկած է: Ներկայ եղող Սինոդականք ժպտեցան, և ասացին թէ «Չէ կարելի»:—Նւ այսպէս վերջացաւ Գաբրիէլ վարդապետին ճշմարտութեանը քննութիւնը: Բայց Կաթողիկոսին հեղինակէն արած մեղադրութիւնները չվերջացան: Հարցուց նորա որ մեթէ արժա՞ն էր էջմիածնայ Եպիսկոպոսներուն դէմ այնպիսի պարսաւներ դրել՝ ինչպէս որ գրած էիր ինձ, ասելով թէ նորա «...» աւանդուր, փառասէր, արծաթասէր անձինք են: Վարդապետը խնդրեց Վ. Կաթողիկոսը բարեհաճի ցուցանել թէ ե՞րբ կամ ո՞ր գրած է ինքը այնպիսի անտեղի խօսքեր: Հանեց Վեհափառը վարդապետին այն երկարածիգ նամակը՝ զոր գրած էր 1861-ին Հոկտ. 3-ին, (1) և տուաւ Տէր-Գառարեան Սարգիս վարդապետին որ կարդայ. և նա կարդաց մինչև այն մասն ալ՝ չորուն խօսած էր Գաբրիէլ վարդապետը ո՛չ թէ էջմիածնայ՝ այլ աշխարհիս ո՛ր և իցէ կողման եպիսկոպոսներէն «...» անկարգութեանցը վերայ: Վկայեցին ներկայ գտնուող եպիսկոպոսները՝ թէ չիրաւի ընդհանուր ձևով և զգուշաւոր ոճով ասուած են այն խօսքերը, և ոչ թէ բացարձակապէս և անձնական թշնամական ոգւով. Կաթողիկոսն ալ դադրեցուց կարդացմունքը, առաւ նամակը՝ զբաւ մէկդի:

Քանի մի օրէն եկան Հասան Տաճկաստանէն էջմիածին երկու վարդապետք՝ որ եպիսկոպոս ձեռնադրուին, մէկը Ալինայ առաջնորդ, և միւսը Արաբկերու: Կաթողիկոսը երկրորդ օրը պատասխանեց նոցա՝ թէ

(1) Տե՛ս է վերջ Աստուծոյն՝ Յուլիանոսի Գ:

բժիշկը (Պ. Սուլթանշահեանը) հրաման չտար իրեն այն ցուրտ եղանակին եկեղեցի երթալու. ուստի պէտք է սպասեն էջմիածնայ մէջ գոնէ երէ՛ չորս՝ «...» Այն խօսքին վերայ խեղճ վարդապետները տարակուսած՝ երբ առանձին դանդատելու պէս խօսեցան Գաբրիէլ վարդապետին հետ, նա պատասխանեց թէ «Այն երէ՛ չորս՝ «...» պէտք է հասկանալ երէ՛ չորս՝ եւ ճանապարհ ելնելէս վերջը.» ինչպէս որ իրօք ևս եղաւ. վասն զի Գաբրիէլ վարդապետը դեռ Նրեան գտնուած օրը լսեց որ այն վարդապետները ձեռնադրուել են եպիսկոպոս:

Հանդուցեալ Ղուկաս Սրբազանը այն միջոցին հիւանդ լինելով, Գաբրիէլ վարդապետին դրեթէ ամէն օր արած այցելութիւնները սիրով և հայրաբար կընդունէր, և պէս պէս քաջալերական խօսքերով սիրտ կուտար նորա. և թէպէտ իրեն՝ էջմիածնայ Միաբանութեան և Յիկեղեցուց ընդհանուր Կառավարութեանը վերայ ունեցած ցաւը և տժգոհութիւնը չայտնապէս կեմացընէր, բայց կցուսար որ Գաբրիէլ վարդապետին ձեռնադրութիւնը դէթ այս անգամ կիատարուի, ինչպէս որ միւս միաբանից ևս մեծ մասը կցուսային, կամ դէթ շատերը չոյս ունենալ կցուցանէին: Տեսնելով Ղուկաս Սրբազանը որ ինքը վարդապետը ոչ միայն չոյս չունի, այլ և կիւթայ ճանապարհ ելնելու, որովհետեւ արդէն Մասիսը, Արագածը և բոլոր միւս լեռները ձեռնով ծածկուեցան, իւր մօտը կիսնչէ Անդրէաս եպիսկոպոսը, և կցուղարկէ զինքը Վեհափառին՝ ասելով. «Գնա իմ կողմանէս Կաթողիկոսին աջը և ոտքը համբուրէ, խնդրէ որ այդ անձը առանց եպիսկոպոս ձեռնադրելու չթողու որ երթայ:» Անդրէաս եպիսկոպոսին այն խօսքն որ կրէ Կաթողիկոսը, մեծ ահաճութեամբ կիսնչէ խսկոյն իւր մօտ Սինոդի անդամները, և չայտնապէս կասէ նոցա՝ թէ «Չեմ ուղեր որ մէկը իմ իշ-

խանութեանս խառնուի. ես զո՛վ որ կուզեմ՝ կձեռնադրեմ կամ ոչ, իմ գիտնալու բանս է. ապա թէ ոչ, ես աչսուհեակեաց Կաթուղիկոս չեմ, Կաթուղիկոսը Ղուկասն է. անանկ է նէ վաղը երթամ եկեղեցին, զինքը աթոռը նստեցընեմ, ես վաղը կանգնեմ» և այլն և այլն: Սինոդականք կպատասխանեն՝ թէ «Վեհափառ Տէր, Ղուկաս Հօր ասածը ոչ ոքի է, և ոչ թէ Հրաման. «Եթէ նորա աղաչանքը չէք կամենում լսել, դուք գիտե՛ք. ձեր կամացը ո՛վ պիտի Հակառակի»:» Բայց Վեհ. Կաթուղիկոսը այն աղմուկէն վերջը Հիւանդացաւ՝ անկողին մտաւ, և Սուլթանշահեան բժշկէն դատ ուրիշ մարդ չէր ընդունել քովը: Մեք այսքանս միայն ասեմք՝ թէ Ղուկաս Սրբազանը չուսահատաբար պատմեց այս բաները Գաբրիէլ վարդապետին, և նա դրաւ միտքը որ անպատճառ երկրորդ օրը ճանապարհ ելնէ՝ ետ դառնալու:

Նոյն օրը գնաց խնդրեց Աւագ լուսարարէն, այսինքն եղիազար Արքեպիսկոպոսէն, որ սուրբ մատուցները բանան, և երկրորդ օրը նոցա Համբոյց տալէն յետոյ՝ գնաց Վեհափառ Կաթուղիկոսին աջը Համբուրելու և օրհնութիւնը առնելու. Հետը գնաց նաև Սինոդի անդամ Տէր-Գասպարեան Սարգիս վարդապետը: Կաթուղիկոսը,—որ արդէն առջի իրելուանէ առողջացել էր Հիւանդութենէն, ու անկողնէն ելել էր,—զարմանալի անտարբերութեամբ, մանաւանդ թէ քաղցրութեամբ ևս՝ ընդունեցաւ զվարդապետը, և օրհնութիւնը տուաւ. «Պիտի երթաս, Հա՛, սոսայ. բաց այս պաշմանով որ նորէն պիտի դաս . . . » վարդապետը խոնարհաբար չեղեցուց Կաթուղիկոսին՝ ճանապարհներուն դժուարութիւնը, վտանգները և Հեռաւորութիւնը, և Հասկացուց որ ամենեկին յոյս և ցանկութիւն չունի երբորք անգամ երթալու այն կողմերը: Բայց թէ այն մէկ քառորդի չափ միջոցին ուրիշ ի՛նչ խօսքեր եղան երկուքին

մէջ՝ Սարգիս վարդապետին ներկայութեամբը, Հարկ է թողուլ ուրիշ տեղուց և Ժամանակի: Միայն չեղեմք որ Գաբրիէլ վարդապետը այս միայն խնդրեց Կաթուղիկոսէն իբրև վերջին շնորհք՝ որ գոնէ աչսուհեակե ի՛նչ որ լսէ իւր վերայ՝ առանց քննելու և ստուգելու չհաւատայ:

Հոկտեմբերի 28-ին ելաւ Գաբրիէլ վարդապետը Ս. Էջմիածնէն, և երկու օր երեան մնալով՝ նոյեմբերի 2-ին Հասաւ Թիֆլիզ. ուր մէկ երկու շաբաթ ուշանալով առեթ ունեցաւ այն միջոցին Թիֆլիզու մերագնեաց գլխաւորներուն Հետ տեսութիւն և ծանօթութիւն անելու, և ոմանց Հետ աղբային խնդրոց վերայ պէսպէս խօսակցութիւններ անելու:

Նոյեմբերի 9-ին ձեռքը ընկաւ Մեղու Հայաստանի լրագրոյն նոյն օրը Հրատարակուած թիւը, որ կձանուցանէր թէ Վեհափառ Կաթուղիկոսը տետրակ մի Հրատարակել է «Գասատետը Մեկնութեան Պատարագի» ասուած գրքուկին դէմ: Յայտնի բան է որ այն լուրը որպէս թէ ուրախութեամբ սրտի կուտար Մեղուն՝ դուրսով Վեհափառ Կաթուղիկոսին այն նոր գրուածքը: Արդէն, ինչպէս որ ասացինք, այն տետրակը ծանօթ էր վարդապետին. բաց նա չէր կարծէր թէ այնպէս շուտով Հասնի Թիֆլիզ իւր ետեւէն, անշուշտ այն մըտքով որ քանի որ Թիֆլիզ է՝ իմանան Թիֆլիզու ժողովուրդները թէ ի՛նչ աչքով կնայի Կաթուղիկոսը նորա գրուածքներուն վերայ: Վարդապետը բաւական Համարեցաւ այն միջոցին Համառօտ նամակ մի Հրատարակել տալ նոյն Մեղուն, որ էր այս.

«Արդոյ Հրատարակէ Մեղու Հայաստանի լրագրոյ.

«Վեհափառ Կաթուղիկոսին Հրատարակած նոր տետրակին «վերայ ծանուցումն արել էք լրագրոյդ 39 թուահամարին մէջ, թէ ձօքբաւան լրագրոսն նորին Վեհափառութեան Տի նոր արժանաւոր «Քործքը, այն է «Սխալմունք Գասատետրին մեկնութեան խորհրդը»

«չոց և արարողութեանց սրբոյ պատարազին տպելոյ է թէոգոսիա  
«է տպարանի խալիպեան ուսումնարանի» և յետ այլոց բանից  
«Հարկ Համարել էք ասել. «Այս բոսորոտի հեղինակը իբրժէտո՞ւ պէտք  
է Գ. Հայր Գաբրիէլ Այվազյանի վարդապետը լինի»»

«Քարեմիտ ընթացողաց դատմանը յանձնելով այն խորհրդը-  
«դաճութիւնը՝ զոր այդ ծանուցման երկրորդ մասամբը կանէք,  
«ես ինձ պարտք կճանաչեմ ազդ առնել հասարակաց, թէ նախ՝  
«վերոյիշեալ դասատեօրին հեղինակը յերաւի ես եմ. երկրորդ՝  
«թէ այն դասատեօրին իրական կամ կարծեցեալ սխալանաց գլխ-  
«խաւորներուն դոհացուցիչ բացատրութիւնը արդէն բերանացի  
«տուել եմ քանի մը օր յառաջ Վեհ. Կաթողիկոսին՝ թէ՛ ա-  
«ռանձին և թէ՛ առաջի անդամոց Սիւնհոգոսին. և երրորդ՝ թէ  
«իմ գրուածոցս վերայ նոր հրատարակուած տետրակներուն իւ-  
«րաքանջելը բանկցը լիուլի բացատրութիւնները արդէն պատ-  
«րաստել եմ ընդարձակ նամակաձև գրութեամբ, և փութով պիտի  
«հասուցանեմ է Ս. Էջմիածին, յուսալով որ Վեհ. Տէրն կբարե-  
«հաճի հրաման տալ հրատարակելոյ տպագրութեամբ և այն  
«գրուածքս՝ է բուժումն գայթակղութեան տկարաց»

«Թնդելով որ այս իմ նամակս տպագրէք ձեր լրագրոյն առա-  
«ջիկայ թուահամարին մէջ, մնամ» և այլն.

«16 Նոյեմբերի 1863,  
«ի Թիֆլիզ»

Նոյն օրերը օրինաւոր բողոք մի ևս գրեց առ Սի-  
նոզն, որով կինդրէք խոնարհաբար՝ որ ասեմ իրեն թէ  
Վեհափառ Կաթողիկոսին այն նոր տետրակին մէջ  
ասածները պէտք է ճանաչուին իբրև հայրապետի վեր-  
համաձայն կարծեաց Սինոզին՝ ըստ օրինաց, թէ լոկ  
իբրև հասարակ տարածութեան աստիճանի իբրժէտո՞ւ պէտք  
ինքն ևս ըստ այնմ գիտնաց գրելիքը կամ անելիքը:  
Բայց Հարկ չկայ ասել՝ թէ այն իւր բողոքը պատաս-  
խանուոյ արժանի չէ տեսնուած մինչև ցայժմ, և Մատ-  
թէոս Կաթողիկոսին այն տետրակը մինչև ցայժմ ևս  
տեղի ունի Էջմիածնայ տպագիր գրեանց ցուցակին մէջ:

Նոյեմբերի 24-ին ճանապարհ ելաւ վարդապետը,  
ու Վլատիկավիասէն անցնելով՝ եկաւ Նախիջևան, ուր  
մտաւ դեկտեմբերի 9-ին: Այն տեղը երեք օր միայն

մնալէն վերջը՝ դարձաւ Թէոգոսիա, ուր և Հասաւ դեկ-  
տեմբերի 17-ին: Իսկ իւր հետը Էջմիածին տարած քա-  
Հանայն՝ դարձեալ իւր հետ մինչև Թիֆլիզ բերելէն  
յետոյ, երկու օրէն ճանապարհ դրած էր դէպի Նա-  
խիջևան: Որովհետև սուտ ազդասիրաց մէջ սովորական  
խօսք դարձած էր այն միջոցներուն ասելը՝ թէ Գաբ-  
րիէլ վարդապետին ընթացքին ու գործքերուն չհաւ-  
նողները ոչ միայն իւր Հակառակորդներն, այլ և նոյն  
իսկ Նախիջևանի և Պետարապետի վիճակին Բար. Հայրը  
առ Հասարակ, Հարկ կհամարեմք դնել այս տեղ այն  
միաբանական նամակին պատճէնը, զոր գրած էին առ  
Վեհափառ Կաթողիկոսն նորա Համար Նախիջևանի  
խաղաղասէր եշխանաւորները, և որ յետոյ ընկաւ մեր  
ձեռքը:

«Աստուածարեալ Քահանայապետ,  
«Վեհափառ Տէր.

«Սուրբ աջոյ Ձերում ճերադրական Համբոյր մատուցանե-  
լով՝ ամենախոնարհաբար յայտ առնեմք.

«Մեք Նոր-Նախիջևան քաղաքի ժողովրդականքս և հարազատ  
«օրդէք Ձերում Վեհափառութեան, առ ո՞ր որ դիմել պարտեմք  
«և ո՞ւմ Հարկ լիցի մեզ յայտնել մեր ներքին ցաւը և ժողովրդեանս  
«անխախտան տառապանքն, պատճառեալն է կողմանէ պէտքս ան-  
«բարեխէր, խռովարար և խառնակիչ անձանց, որ միշտ ձգտել են  
«ի մէջ հասարակութեան և թէ է մէջ հոգեւորականաց աղմուկ  
«ձգել և վրդովմունք յարուցանել, առ ո՞ր ասեմք՝ եթէ ոչ առ  
«Վեհափառ Տէրդ, և համբէն ազդիս դահաղուլս ինամակալ  
«Հովուապետդ:

«Ապաքէն յայտ իսկ է Ձերում Վեհափառութեան, թէ իսկըզ-  
«բանէ անտի, երբ որ Գերապատիւ Գաբրիէլ վարդապետն Այ-  
«վազեան նշանակեցաւ Տեղակալ Առաջնորդութեան վիճակիս մե-  
«րոյ, այն օրէն է վեր մինչև ցայսօր՝ նոյն խառնակիչքն չզաղա-  
«րեցան վասն նորա յարուցանել դանազան սուտ դանդաղանս,  
«արմուկս և վրդովմունքս, և տեսակ տեսակ զբարատութեամբը՝  
«թէ՛ զբաւոր և թէ՛ բերանացի՝ պատճառ եղին համարեա թէ  
«մասնաւոր երկպառակութեան և յայտնի խռովութեան. և մի-

«անդամայն այս քանի տարուան միջոցումն արդեւք ետուն այլ  
 «ե այլ հասարակի բարեկարգութեանց ե քաղաքի խաղաղու-  
 «թեան: Ահա ե ի ներկայումս լուեալ այնպիսեացն զգնան Տե-  
 «ղախալին մերոյ Առաջնորդի ի սուրբ Աթուռն Էմիլիանին, առա-  
 «քեալ են զինի նորա սուտ անուամբ երեսփոխան մի դադտ ի  
 «հասարակութենէս՝ իբր ի զինաց բնակչաց քաղաքիս, ե մտադիր  
 «են նոր ի նորոյ արմուկ յարուցանել, որպէս զի կարացեն նախ  
 «յնասել նմա յաչա Ձերդ Վեհափառութեան ո՛ր ե իցէ կերպիւ,  
 «ե ապա՝ եթէ հնար ինչ իցէ՝ արդել տալոյ ձեռնարդել զնա  
 «յնպիսիպոսութիւնս:

«Վեհափառ Տէր, դուք զիտէք որ նոր-Նախնիքեան քաղաքի  
 «մէջ կան բնակիչք աւելի քան 10,000 հոգի, ե ի միջի այնո-  
 «ցիկ կան բաւականին բարեխէր անձինք ե օդտաւէտ քաղաքիս,  
 «որ ըստ մեծի մասին բաղում ամս ծառայեալ են հասարակու-  
 «թեանս. որոց բերանէ ոչ երբէք թէ դրով ե թէ բանիւ դան-  
 «դատի ձայն լսվել է: Այլ միշտ հետզհետէ մի ե նոյն խառնա-  
 «կիչներն ե խռովարարներն ձայնը կլսուի, ե ընդ նոսին քանի  
 «մի սարգամիտ համախոհներն՝ որք ոչ բարին զիտեն ե ոչ չարն:

«Վեհափառ Տէր, արդարութիւնն կպահանջէ երախտաւորին  
 «երախտիքն ճանչնալ, չմոռանալ ե երախտադէտ լինել, որպէս  
 «մեք մեր Գերապատիւ առաջնորդին բարի բարի աշխատանքը  
 «տեսնելով, ե աղբօրուտ խոհեմ կառավարութիւնն ե ճշմարիտ  
 «ճառայութիւնը աին յանդիման տեսնելով, միշտ ամենայն տեղ  
 «խոստովանել ե քարոզել եմք, ե նմանապէս սպարտաւոր համարիմք  
 «այժմ ես առաջի Ձերդ Վեհափառութեան խոստովանել ե ու-  
 «ղիղ սրտիւ պատմել զի թաղուցանելն ե ծածկելն զարժանաւոր  
 «գործս այնպիսի անձին մեք միշտ մեղք ե ամօթ համարիմք:  
 «Մանաւանդ զի յայսպիսի գործոց ե աշխատանաց, զոր ցուցեալ  
 «է մինչեւ յայժմ Գերապատիւ Գաբրիէլ վարդապետն, աիներե-  
 «կաբող եմք մահաբերել, զի նա յասպաղային ընդ հօր հովանաւո-  
 «րութեամբ Ձերով՝ ես առաւել կարող է այսպիսի շահաւէտ կեր-  
 «պիւ ծառայել՝ թէ յօգուտ սպայծառութեան եկեղեցեաց իւրում,  
 «ե թէ կրթութեան ե լուսաւորութեան երախայից ե ամենայն  
 «տեսակ հոգևոր ե աշխարհական պաշտօնից ազգիս մերոյ:

«Ահա, Վեհափառ Տէր, այս է մեր սրտի ցաւը ե վիշտը, որ  
 «Գուք միայն կարող էք վարատել, ե ի միջոյ ժողովրդեանս բառ-  
 «ենալ զամենայն պատճառս խռովութեան ե անտանելի տարա-  
 «ձայնութեանց. զի եթէ բարեհաճեալք ձանաչել ե վարձատրել  
 «ըստ արժանւոյն արդար ծառայութիւնն ե բարի բարի աշխա-  
 «տանքն ասպիակ Գերապատիւ վարդապետիս, որպէս մեք ճա-

«հաչեմք ե խոստովանիմք, անշուշտ կարեմք միաբերան ասել ե  
 «հաստատել, թէ այդ լիցի սպացոյց Ձերում Վեհափառութեան  
 «անաչառ ե արդար դատաստանի, ե սպաճառ հաստատելոյ մեր  
 «քաղաքի միաբանութիւնը ե սէրը, խաղաղութիւնը ե երջան-  
 «կութիւնը:

- |                 |                           |
|-----------------|---------------------------|
| «Աստիճանաւոր    | Աւագով:                   |
| »               | Մինաս Ալեքսանդրով:        |
| Ա. կարգի վաճառ. | Սերոբ Չորչովով:           |
| Բ. > >          | Գէորգ Խաթրանով:           |
|                 | Սիմեոն Ալաճալով:          |
|                 | Քերոբ Չորչովով:           |
|                 | Մեքիթ Կոկոյով:            |
|                 | Մանուկ Ալաճալով:          |
|                 | Եկոր Խոտժայով:            |
|                 | Իլիա Շահինով:             |
|                 | Կարապետ Կողպէթով:         |
|                 | Մեքիթ Տրապիզոնցով:        |
|                 | Ասլատուր Սալթիբով:        |
|                 | Կարապետ Փոփով:            |
|                 | Յովհաննէս Կողպէթով:       |
|                 | Խաչերէս Սատեթով:          |
|                 | Կարապետ Չախմախով:         |
|                 | Յակոբ Սալթիբով:           |
|                 | Գրեգոր Սալթիբով:          |
|                 | Մահտեսի Մկրտիչ Սալթիբեան: |
|                 | Վարդերէս Սատեթով:         |
|                 | Մանուկ Խո մաճով:          |
|                 | Խաչերէս Խաղէզով:          |
|                 | Ակոր Մերիճանով:           |
|                 | Նիկողոս Խասապով:          |
|                 | Գէորգ Սալթիբով:           |
|                 | Թուամս Մահտէսեանց. »      |

7 Հոկտեմբ. 1863,  
 ՚ի նոր-Նախնիքեան.

Իսկ թէ ի՞նչ աղբեցութիւն ունեցել է այս խնդրա-  
 գիրը Ահհ. Կաթուղիկոսին մտքին վերայ՝ մեզ չայտնի  
 է: Նրան ասողներ իբր թէ Կաթուղիկոսը մերժել է զայն

բարութեամբ՝ իբրև աննշան մարդկանց անվաւեր գրուածք, և ասել է թէ «Քաղաքագլխոջն ստորագրու թիւնը չունեցող խնդրագիրները ամենեւին ընդունելի չեն»: — Չմոռանամք որ ինչ և իցէ «սահման» գրուածքներ ընդունելն ու նոցա խօսքերուն հաւատալով գործ տեսնելը նոր բան մի չէր այն միջոցին: Արդէն 1861-ին սկիզբներն ևս վիճակին այլ և այլ քաղաքներէն այնպիսի միաբանական խնդրագրեր չուղարկուած էին՝ թէ՛ Կաթուղիկոսին և թէ՛ Սինոդին. <sup>(1)</sup> բայց նոյնպէս ապարդիւն և առանց մտադրութեան մէկդի ձգուած էին:

**Գ Լ Ո Ւ Ս Ժ Թ .**

Անդրէաս Եպիսկոպոսին Նախիջևանի եւ Պեսարապիոյ վիճակին վերազննիչ դալը:

Մինչդեռ Գաբրիէլ վարդապետը տակաւին Քիֆլիկ էր, չանկարծ հասաւ էջմիածնէն Անդրէաս Եպիսկոպոսը, և իսկոյն հրատարակուեցաւ՝ թէ Կաթուղիկոսէն չուղարկուած է նա իբրև վերադննիչ (սէվեոս)՝ Նախիջևանի և Պեսարապիոյ վիճակին: Գաբրիէլ վարդապետը գնաց տեսնուեցաւ Եպիսկոպոսին հետ, իմացաւ որ ստոյգ է այն լուրը, և այն ժամանակէն ասաց նորա յաշտնապէս. «Այս լաւ դետցէք, Սրբազան, որ ես իմ «վիճակիս կառավարութեանը մէջ ամենեւին վախ մի

(1) Աս Սինոդն գրածներէն մէկուն պարզէնը գիտածով չէսքերն ընտել, որքան կհամարէր Պարմալեանս վերջը գնել, որ իմացուի թէ Պեսարապիոյ ժողովարարներն ևս ինչ կարծիք ունէին իրենց աստիարարին վրայ. որն Յ ա տ է լ ո ս ո ճ և .

չունիմ ո՛ր և իցէ վերադննութենէ կամ ըննութենէ. «միայն թէ ծանր նախատինք և անարդանք կհամարիմ «ինձ այդ վերադննութեան Կողմ, որով դեռ ես իմ վեճակս չհասած՝ դուք պիտի երթաք հասնիք այնտեղը, «իբր թէ արդէն իմ գողութիւնս բռնած կամ մէկ մեծ «չանցանքիս համար դատապարտութեանս վճիռը հասած լինէին Կաթուղիկոսը կամ Սինոդը»:

Անդրէաս Եպիսկոպոսը Վ. Կաթուղիկոսին փոքրաւոր, յետոյ Գաւաղանակիր վարդապետն ու Եպիսկոպոսն էր: Իրեն օգնական նշանակուած էր Կաթուղիկոսէն՝ Սաչաղնեանց Մովսէս աւագ քահանայն՝ իբրև վաղուց ճանաչուած ամէն տեղ իւր բժականիւր ըննադատութիւններովը: Հետոն էր նաև Սինոդի թարգման Տէր Յովսէփեան Պ. Նիկողայոսը: Սոքա երեքը Գաբրիէլ վարդապետէն երկու օր առաջ ճանապարհ ելան երթալու դէպի Նախիջևան, բայց վարդապետը հասաւ նոցա Վլատիկաւիաս, և անտի գրեթէ ի միասին հասան մինչև Ստաւրոփոլ: Եպիսկոպոսը երեք օր այն քաղաքը ուշանալուն պատճառաւ, մինչև վարդապետին Նախիջևանէն ելած օրը՝ նա այն տեղ չէր հասած:

Հասաւ վերադննիչ Եպիսկոպոսը Նախիջևան դեկտեմբերի 13-ին, և իջևանեցաւ Քարաքաշեան Գանիէլ Աղային տունը՝ որ առաջուց պատրաստուած էր Հայրապետեան կուսակցութենէն իբրև իրենց չարմար ժողովարան, և իսկոյն սկսաւ յաշտնի և ծածուկ տեղեկութիւններ առնուլ՝ թէ ինչ տժգոհութիւններ ունին քաղաքացիք Գաբրիէլ վարդապետին դէմ:

Առաջնորդը, ինչպէս որ բնական էր, դեր գրեց Ներքին Գործոց Ոստիկանին, և իւր ճանապարհորդութեան համառօտ պատմութիւնն անելէն յետոյ՝ Հարցուց թէ արդեօք այժմ ինչ կերպով պիտի լինի Կաթուղիկոսին որոշած վերադննութիւնը, և ինչ ծախքով և այլն: Ոստիկանը պատասխանեց (երկու ամիս վերջը)

Թէ Տէրութիւնը պատշաճ չհամարելը արգելել այն վերս  
դննութիւնը՝ զոր Կաթողիկոսը կուղէ անել տալ այդ  
վիճակին հոգեւոր կամ եկեղեցւոյ գործերուն համար. բայց  
չէ կարող թողուլ որ նորէն գրգռէ այն վերադննելը  
եկեղեցական գումարաց խնդիրը՝ որ արդէն վերջացած  
գործ է, և կամ խառնուի Խալիպեան Ուսումնարանին  
Կառավարութեանը՝ որ անմիջապէս Ոստիկանարանին  
վերատեսչութեանը տակն է: Եւ որպէս զի վերադննելը  
այս որոշեալ սահմաններէն դուրս չենէ՛ իւր պաշտօնը  
կատարելու ժամանակ, ապսպրեցինք՝ կասէ՛ր՝ Նոր Ռու-  
սիոյ Ընդհանուր Կուսակալին, որ իւր կողմանէ պաշ-  
տօնատէր մի որոշէ, և չուղարկէ Եպիսկոպոսին քովը, և  
նա արթուն կենաց այս պայմաններու ճիշդ կատա-  
րուելուն: Իսկ ճանապարհական ծախքերուն, կամ  
Եպիսկոպոսին տրուելու թոշակին համար այս ասաց  
Ոստիկանը՝ Թէ «Վիճակին եկեղեցւոյ գումարներէն կա-  
րելի չէ առնուլ, բայց Վեհապետ գումարներէն եթէ է  
պատրաստի կդռնուին, և դուք պատշաճ կհամարեք,  
նոցանէ կուտաք»: Այն պատասխանին վերայ Գաբրիէլ  
վարդապետը չուղարկեց Անդրէաս Եպիսկոպոսին առաջ  
500 ռուպլի արծաթ, և չետոյ այլ ևս 300:

Ոստիկանին հրամանովը Նոր Ռուսիոյ Կուսակալը  
հեռագրով կանչեց զԱնդրէաս Եպիսկոպոսը յՕտեսաս,  
և հասկացուց նորա թէ ինչ կերպով պիտի անէ այն  
վերադննութիւնը: Եպիսկոպոսը թէպէտ ցամաքով գնաց  
Օտեսաս, բայց է դարձին շողենաւով հանդիպեցաւ  
Թէոդոսիա, ուր Առաջնորդը պատուով ընդունեցաւ  
զինքը, և ցցուց Ուսումնարանը, Տպարանը և Եկեղեցին:  
Նրկու ժամ միայն կենալէն վերջը՝ ճանապարհը շա-  
րունակեց Եպիսկոպոսը և գնաց հասաւ Նախիջևան  
Չատկին երկրորդ օրը:

Գաբրիէլ վարդապետը հարկաւոր կտեսնէր այս պա-  
րզաններու մէջ առ ժամանակ մի հեռանալ վիճա-

կէն, որպէս զի վերադննութիւնը իւր բացակայութեան  
ժամանակը աւելի անխափան կերպով կատարուի: Ապ-  
րիլի 25-ին ճանապարհ ելաւ ծովով ու գնաց Թաշքան  
և Նախիջևան, և այն հինգ օրուան մէջ որ ուշացաւ  
քաղաքը՝ Տոնի շողենաւին սպասելով, սիրով ու պա-  
տուով տեսնուեցաւ շատ անգամ նաև Անդրէաս Եպիս-  
կոպոսին հետ՝ առանց վերադննութեան գործոցն վերայ  
պաշտօնական խօսք անելու:

Գնաց Առաջնորդը Մոսքուա. այնտեղը երեք օր կե-  
նալէն վերջը՝ հասաւ Փեթերպուրկ մայիսի 15-ին, ուր  
վիճակին հարկաւոր գործերուն վերայ պէտք եղածը խօսե-  
լէն ու գրելէն չետոյ, յունիսի սկիզբը ճանապարհ ելաւ,  
ու Պեռլինու և Վեննայի վերայէն հասաւ Օտեսաս,  
անտի ևս Թէոդոսիա յունիսի 26-ին: Նախիջևանցիք  
լսելով վարդապետին դէպի Վեննա երթալը, ո՛րը ու-  
րախութեամբ ո՛րն ալ տրամութեամբ՝ լուր տարածե-  
ցին մէջերնին թէ նա Իտալիա կամ Գաղղիա փախել  
է. բայց երբոր սկսան նորա թղթերը դալ Թէոդոսի-  
այէն, իմացան որ այն անգամուն ալ խաբուել են:  
Խաբուել էր նաև Անդրէաս Եպիսկոպոսը, և փութացել  
էր Էջմիածին գրելու այն անհիմն աւետիսը:

Անդրէաս Եպիսկոպոսը այնուհետև սկսաւ Նախի-  
ջևանի մէջ իւր վերադննութիւնը. և ինչպէս որ դիւրին  
էր առաջուց ևս գուշակել՝ այն կերպով առաջ տա-  
րաւ. այսինքն փոխանակ Կոնստանտնուպոլիսէն պահանջե-  
լու հարկաւոր տեղեկութիւնները, ինչպէս որ կարգն  
էր, — սկսաւ Նախիջևանի Հոգևոր Կառավարութիւնը և  
եկեղեցիներուն երէցփոխանները նեղել՝ զբամական  
հաշիւներու համար, և սուրբ յանցանք համարեցաւ  
նոցա գլխաւորապէս այս բանս՝ որ նոքա Առաջնորդին  
հրամանաւը կթողուն որ եկեղեցական գումարները  
գործածուին Խալիպեան Ուսումնարանին վերայ: Ասով է  
հարկ է յայտնապէս Ոստիկանին հրամանին հակա-

ուակը կգործէր, և նոյն խի Սինոզին քերթայեալ ասած խնդիրն ու կուիւր նորէն ուրք կհանէր. բայց նա անով ալ գոհ չեղաւ, և հետզհետէ՝ տեսնելով որ իրեն վերադննութիւնը արդեւք անող չկայ՝ մոռացաւ իւր պաշտօնին սահմանները, և վիճակին կառավարութիւնը ձեռք առաւ: Քահանաներէն մէկ քանին իրեն կողմը որսալով՝ միւս քահանաներուն դէմ գրգռեց, Առաջնորդին դէմ ամէն գանգատ ունեցողներուն իրաւունք և քաջութիւնն տուաւ, Առաջնորդին հաւատարիմ մնացող քահանաներուն երեսդարձութիւն և ամէն տեսակ անարդանք արաւ, ինքնագլուխ կարգադրութիւններով եկեղեցւոյ խաչեր օծեց, Չալթը գեղին եկեղեցւոյն հիմնարկութիւնը օրհնեց, և վերջապէս սեպտեմբերի 28-ին գնաց իտեց յանկարծակի Նախիջևանի Հողէոր Կառավարութիւնը, հետը տանելով իրեն կողմը անցած երկու երեք վատահամբաւ քահանաներ, ու Հայրապետեան կուսակցութենէն երկու երեք աշխարհականներ՝ հանդերձ Բարեկարգարանի պաշտօնէիւ: Հողէոր Կառավարութեան բուն օրինաւոր անդամները բռնութեամբ հրաժարեցուց, և իրեն բերած երեք քահանաները նոցա տեղը դրաւ, որ էին Գէորգ Պալապանեան, Պօղոս Ստեփաննոսեան և Նղիա Շաբշիքեան՝ որ Առաջնորդին հետ էջմիածին գնացողն էր:

Գարրիէլ վարդապետը այս ապօրինաւոր գործողութիւնները լսելով և իմանալով Նախիջևանի մէջ ծագած նորանոր խռովութիւնները, և մանաւանդ տեղւոյն եկեղեցականաց շիտթելը այն Հողէոր Կառավարութեան նոր անդամներուն վախէն, հեռագրով հրատարակեց որ Նախիջևանի Հողէոր Կառավարութիւնը առ ժամանակ փակուած ճանաչուի, և ոչ ոք պարտական լինի հնազանդելու՝ ոչ Անդրէաս եպիսկոպոսին, — որ իւր պաշտօնին սահմանէն դուրս ելած էր, — և ոչ նորա դրած Հողէոր Կառավարութեան անդամներուն:

Եւ այս իւր կարգադրութիւնը ծանոց գանդատանօք ոչ միայն նոր Ռուսիոյ Կուսակալին, այլ և Ներքին Գործոց Ոստիկանին՝ ընդարձակ բողոքագրով հոկտեմբերի 3-ին, յորում այս իմաստով կվերջացընէր իւր խօսքը թէ, «Վիսդրեմ որ Անդրէաս եպիսկոպոսը հեռանայ այս վիճակէս. և եթէ Ոստիկանարանը անպատճառ հարկաւոր կճանաչէ վերադննութեան շարունակութիւնը, ուրիշ վերադննիչ մի նշանակուի. իսկ եթէ Ոստիկանը պատշաճ համարի որ Անդրէասը այն կերպով առաջ տանի իւր անկարգ գործողութիւնները, իմացընէ ինձ, որպէս զի ես ալ հրաժարականս տամ ում որ արժան է»:

Այն միջոցին Սաչադնեանց Մովսէս աւագ քահանայն գնաց էջմիածին, հետը տանելով վերադննութեան մինչև այն ժամանակ գտած պակասութիւնները. և Վեհ. Կաթուղիկոսէն դարձեալ յուղարկուեցաւ Թեֆլիզ, որ անտի ևս երթայ Նախիջևան՝ վերադննութիւնը շարունակելու:

Մովսէս քահանայն մինակ չէր այս անգամ, այլ հաճոց թուեցաւ Վեհափառ Կաթուղիկոսին որ նորա հետ գաց Նախիջևանի և Պետարապետի վիճակին արծաճանայեալ կառավարիչ՝ Յովհաննէս եպիսկոպոսն Արշարունի, որ և հասաւ Թեֆլիզ գեկտեմբերի 18-ին:

## Գ Լ Ո Ի Խ Ի.

Գարրիէլ վարդապետին տեղը Առաջնորդութեան համար Յովհաննէս Արքեպիսկոպոսին զայն ու ետ զանապը:

Պատմութեանս ընթացքին մէջ ըստ բաւականին տեսնուեցաւ որ Անդրէաս եպիսկոպոսին այս վիճակս դալը թէպէտ դրսէն այնպէս կերևնար՝ թէ վերադն-

նութեան համար է, բայց զինքը չուղարկողին դիտաւորութիւնը այն էր որ վեճակին Առաջնորդութիւնը ձեռք առնու: Վերադննութիւնը այս հիման վերայ սկսելով, չաշտնի բան է որ Անդրէաս եպիսկոպոսը բաց ի դասակարգութեանը մէջ: Եւ այնքան շտապեցաւ նա այս բանին՝ որ դեռ վեճակին միայն մէկ քաղաքին ու նորա գեղերուն գործերը հաղիւ թէ քննած՝ փութացուց իւր օգնական Մովսէս քահանայն Սալազնեանց և չուղարկեց իջնիւածին, ինչպէս որ ասացինք որ երթաց իւր դատած ու տեսած, մանաւանդ թէ երեւակայած ու հնարած պահատութիւնները Սրբազան Կաթողիկոսին առջևը դնէ: Գնաց այն քահանայն, և ինչպէս որ դիւրին էր գուշակել՝ կարողացածին չափ պարսաւեց ու պատարակեց վեճակին կառավարութեան գործերը: Բաց չայնմանէ՝ այնպէս հասկացուց Կաթողիկոսին որ իւր թէ ոչ միայն Նախիջևանի ընտանիքները, այլ և բոլոր վեճակին ժողովուրդները ուրիշ Աստուծոյ կենդանի իրենց համար, և յանուանէ զԱնդրէաս եպիսկոպոսը և այս բանին ասպացոյց ունէր ձեռքը Հայրապետեան կուսակցութեան մէկ խնդրագիրը, յորում հարկւրաւոր մարդիկ ձեռք դրած էին, շատը անդիտութեամբ, ոմանք բռնութեամբ, և այլք խարդախութեամբ:

Սրբազան Կաթողիկոսը եթէ իսկոյն կատարէր նոցա խնդիրը, չաշտնի դուրս պիտի ելնէր իւր սկզբնական դիտաւորութիւնը, այսինքն թէ Անդրէաս եպիսկոպոսը ոչ թէ վերադննէ, այլ Աստուծոյ չուղարկած է. ուստի՝ հակառակ կարծեաց և խորհրդոց բազմաց ի Սենտախանայ (ինչպէս որ հաւաստեալ գիտեմք), և խորհրդով երկու ծանօթ պաշտօնիկցի, որոշեց որ իւր նոր եպիսկոպոս ձեռնադրած Սրբաբունի Յովհաննէս վարդապետը գաց այս վեճակի իւր և ծանօթաւոր Աստուծոյ, այսինքն մինչև որ վերադննութիւնը վերջանայ. չետոյ Անդրէաս եպիս-

կոպոսը հաստատուի Առաջնորդ, իսկ Յովհաննէս Արքեպիսկոպոսը ետ դառնայ իջնիւածին:

Գեղտեմբերի 5-ին ճանապարհ ելան իջնիւածին նորընտիր Առաջնորդը և Սալազնեանց Մովսէս քահանայն, իրենց հետ բերելով Խարազեանց Յովսէփ վարդապետը՝ իբրև նոր Կոնստանտնուպոլիսի նախանգամ: Նոյն ամսոյն 18-ին հասան սոքա Թիֆլիզ, ուր ժողովուրդեան մէջէն շատ խոհական անձինք խորհուրդ տուին եպիսկոպոսին որ չփութաց այն վեճակը երթալու, գուցէ ամօթով ետ դառնաս կասէին՝ իբրև առանց Կայսերական հաւանութեան չուղարկուած: Բայց եպիսկոպոսը հարկ համարեցաւ Սրբազան Կաթողիկոսին հրամանը կատարել, ասելով. «Եթէ այս բանէս ամօթ մի պատճառի, զիս չուղարկողին է, և ոչ թէ ինձ»: Վերջապէս նոր տարւոյն (1865) յունուարի 16-ին ճանապարհ ելաւ Թիֆլիզէն նոյն վարդապետով ու քահանայով, և իտխանակ ուղղակի Թէոդոսիա դալու՝ ուր էր Առաջնորդական Աթոռը, գնաց Նախիջևան, զոր կհամարէր իբրև վեճակի բերդին կամ պտտապին խրամատեալ մէկ մասը, յորում և արդէն գէթ կիսով չափ տիրապետել էր իւր ապագայ չաջորդը՝ Անդրէաս եպիսկոպոս, որ և այն միջոցին ընդունած կերևի Վեհ. Կաթողիկոսին Արքեպիսկոպոս ասուելու տիտղոսը՝ իբրև ի վարձ այնքան խռովութեանց զորս աւելցուց դժբաղդ Նախիջևանի աշխարհականացն ու եկեղեցականացը մէջ:

Յունուարի 26-ին կհասնի նոր Առաջնորդը Սթաւրոփոլ, և հեռագրով իմաց կուտայ Նախիջևան Անդրէաս եպիսկոպոսին. իսկ նա կփութաց Հոգևոր Կառավարութեան անդամներուն պատուիրել որ պատրաստուին արժանաւոր պատուով ընդունելու Յովհաննէս եպիսկոպոսը: Կարծեցեալ Հոգևոր Կառավարութեան անդամներն ևս բաց հրամանագիր մի չէնած՝ ստորագրել կուտան այն քահանայից, որոց իրենց նման

անկարգութիւնը և ընդդէմ օրինաւոր եշխանութեան անպատամբութիւնը յայտնի էր, և իրենք քանի մի աշխարհականներով ու դպիրներով կերթան մինչև Մախին ասուած կայարանը, ուր կհասնի եպիսկոպոսը երկրորդ օրը, այսինքն 27-ին իրիկունը: Նախիջևանի Քաղաքադուխը իմանալով եպիսկոպոսին հասնելը, միւս օրը՝ այսինքն 28-ին առաւօտը իւր կողմնակիցներէն մեծ բաղմութիւն հետը առած՝ կերթաց կառքերով մինչև քաղաքին ծայրը, կընդունի եպիսկոպոսը և կբերէ հանդիսով մինչև Մայր եկեղեցւոյն դուռը: Բայց ո՞ր էին այն Նախիջևանի վեց եկեղեցեաց զանգակներուն ձայները՝ որ ուրիշ ժամանակ օրինաւոր Առաջնորդի մի քաղաք մտած ժամանակները կհնչեցընէին բոլոր քաղաքը. ո՞ր էր այն հաղարաւոր ժողովուրդը՝ որ ծովու պէս կծիար այնպիսի ժամանակ փողոցներուն մէջ. և ո՞ր էին այն եկեղեցականները՝ որ Մայր եկեղեցիէն մինչև հարևարաւոր քաչ հեռու՝ ամենայն եկեղեցական զարդերով և փառաւորութեամբ ընդ առաջ կուգային Առաջնորդին, և շարականներով կտանէին կմտցընէին զինքը Մայր եկեղեցին, որոյ դռները կռնակի վերայ բացուած, և մէջը բոլոր ջահերն ու կերտները վառուած՝ կարծես թէ գրկաբաց կընդունէր իրենց օրինաւոր թրոյս Առաջնորդը . . .

Կհասնին սոքա մինչև եկեղեցւոյն դուռը, և կտեսնեն զանգակները լուռ, դռները փակ: Նախանձաշոյղ քահանայ մի և սարկաւազ մի կվայեն կերթան՝ կըստնեն դուռը ձեռքով ու դաւաղանով, բացող չեն դռները, և ոչ ներսէն յայտնի ձայնով պատասխան մի թէ «Ո՞վ են սոքա զի բացից» ուստի և գլուխները կախած՝ կբառնան Քաղաքադուխոյն և եպիսկոպոսին քովը, և նոքա կբաշուին կերթան իրենց տեղերը:

Հասկացաւ անշուշտ Յովհաննէս եպիսկոպոսը, նմանապէս Անդրէաս արքեպիսկոպոսը, թէ ուրեմն իրաւ

չէ՛ որ Նախիջևանի Քաղաքադուխը, և այն տեղի Քաղաքահանաները տժգոհ են եղել իրենց ընկի և օրինաւոր Առաջնորդէն: Ուստի և նոյն իրիկունը, երբոր իրենց Առաջնորդին հաւատարիմ մնացող քահանայք բարեկարգ կերթան եպիսկոպոսին, կասէ նա հանդարտութեամբ՝ թէ «Մինչև որ Նախարանէն՝ այսինքն Ոստիկանէն հրաման չգայ, բանի մի պիտի չխառնուիմ:» Եւ սակայն զինքը բերել տուողները չէին կարող ժամանակ կորսնել, և ոչ Տէրութեան անելու կարգադրութեանը սպասել, յայտնի գիտեալով՝ թէ այն դարու կարգադրութիւնը չէր կարող իրենց հաճոյցը չարմար լինել: Ուստի համոզեցին փութացուցին որ առաջիկայ Կիւրակին, այսինքն չունուարի 31-ին կերթայ նստի Առաջնորդական Աթոռը, տիրապետէ վիճակին, և այնուհետև սպասէ Տէրութեան վճռոյն կամ հաստատութեանը:

Կերթաց եպիսկոպոսը կիւրակի օրը Մայր եկեղեցին, կհրամայէ որ այն օրը պատարագիչ լինի իւր վարդապետը, ինքը կանցնի կրողմի Առաջնորդական Աթոռը, հրաման կուտայ Սալադեան Տէր Մովսէսին որ ելնէ բեմն ու կարգայ Կաթողիկոսին կոնդակը, չորում կիմացընէր նա ժողովրդեան և ամենուն՝ թէ Գաբրիէլ վարդապետը իւր անկարգ կառավարութեանը համար, և այս և այն դրամական հաշիւներուն պակասութեանցը համար՝ մերժուած է այսուհետև Առաջնորդական եշխանութենէ, ոչ ոք պիտի ճանաչէ զինքը Առաջնորդ, և ոչ պիտի չիշուի նորա անունը եկեղեցիներու մէջ, այլ Սըշարունի Յովհաննէս եպիսկոպոսինը՝ որ Սըբաղան Կաթողիկոսէն չուղարկուած է՝ իբրև հարազատ և սեպհական Առաջնորդ վիճակիս Հայոց Նախիջևանի և Պեսարապիոյ ժամանակաւորապէս. և եթէ քահանաներէն մէկը անհնազանդ գտնուի նորա հրամաններուն, իսկոյն պիտի լուծուի քահանայական կարգէն:

Կարգացողը ենքնին կարող է երեւակայել այն միջոցին Հակառակորդաց ուրախութիւնն ու ցնծութիւնը: Արդէն եկեղեցւոյն մէջ ոչ սահաւ շունչ, ծիծաղ, բարկութիւն, դարմանք, Հակառակութիւն, ապշութիւն, դաշթակողութիւն, չիշոցք, Հայհոյանք, սպառնալիք, խրոխտանք, ամենուն երեսը և ամենուն բերանը կտեսնուին ու կըսուին. իսկ եկեղեցիէն որ դուրս կելնեն՝ անպատմելի կլինի այս բաներուս վերայ եղած խօսակցութիւնները, կռիւները, Հակառակութիւնները, նախատինքները, արհամարհանքները և այլն և այլն. վասն զի անկարգ գործողութեան պտուղը Հարկաւ բաղմաճիւղ և մեծամեծ անկարգութիւնք և խռովութիւնք կլինին միշտ, և ոչ երբէք խաղաղութիւն, Հանդարտութիւն և ոչք:

Որչափ մարդիկ գիտեմք որ այն օրը, այն ժամուն՝ Մայր եկեղեցիէն ելած ժամանակները իրարու Հետ դարմանքով և ափշութեամբ խօսելով կասէին՝ Յմմաւուս գնացող Աղէովսեանց պէս. «Զի՞նչ գործ գործեցաւ յաւուրս յայտուիկ . . . մեք ալիս ունէաք թէ նա է . . . » բայց քիչը կար նաև այն ժողովրդեան մէջ որ չգիտնար թէ արդարութիւնն ու ճշմարտութիւնը երբեմն կխաչուին ու կթաղուին, բայց և երեք օրէն չարութիւն կառնուն, — ենչպէս որ եղաւ:

Երեք օր անցաւ չանցաւ, Հեռագրական Հրամանագիրներ եկան Հասան Փեթերպուրիէն Ռոսթոլլի Բարեկարգապետին, որ Հասաւ կայծակի պէս Նախնջեան փետրվարի 4-ին, Հրամայեց Քաղաքագլխոլն որ ժողովի խալոյն բոլոր ժողովուրդը՝ աշխարհականք և եկեղեցականք, և նորա ձեռքը տուաւ Բնդհանուր Աուսակալին այսինքն Քացիպու Սպարապետին Հրամանագիրը, որ կարգաց և Հասկացընէ ամենուն՝ թէ «Կայսերական «Հրամանով դրուած Առաջնորդը՝ միայն Կայսրը կարող է փոխել, և ոչ այլ ոք. ուստի ամէնքը պարտական են

«Այլադեան Գարրիէլ վարդապետը ճանաչել օրինաւոր Առաջնորդ վիճակիս, և ոչ զայլ ոք»: Եւ նորա առ Հատարակ աշխարհականք և եկեղեցականք՝ ո՛րը կամաւ և ո՛րը ակամայ՝ Հարկադրեցան պատասխանելու թէ «Արժան և իրաւ, այնպէս կճանաչեմք և այնպէս կընդունիմք:»

Այսպէս վերջացաւ ահա Արշարունի Յովհաննէս արքեպիսկոպոսին երեքօրեայ Առաջնորդութիւնը, և Գարրիէլ վարդապետը իւր տեղը Հանդարտ նստած՝ Հեռագրական լուրերով միայն կիմանար Նախնջեանի մէջ պատահած այն մեծամեծ անցքերը:

## Գ Լ Ո Ի Խ Ի Ա.

Գարրիէլ վարդապետին փետրուարի 19-ին հանած շրջաբերականը:

Այն դէպքերն որ 1864 տարւոյն վերջերը պատահեցան՝ այնքան նշանաւոր էին որ կարելի է Համարձակ ասել թէ նոցա նմանը չէ չիշատակուած մօտ ժամանակներս մեր ազգին Եկեղեցական պատմութեանը մէջ: Վասն զի «Ճէնայն Հայոց Կաթողիկոս» մի իւր ժողովրդեան մէկ մասովը գտնուելով մէկ Տէրութեան Հպատակութեան ներքեւ, չէր կամենար նորա օրինացը Հնադանդիւ, և իւր վարդապետներէն մէկուն ետեւին տարիներով ընկած, թէ՛ բանիւ՝ թէ՛ գրով դատափետուէն՝ նախատելէն, անարդեւէն ու Հալածելէն չետոյ, նորա տեղը Առաջնորդ կուղարկէր իւր Արքեպիսկոպոսներէն մէկը: Կհասնի Արքեպիսկոպոսը վիճակին դըլխատուր քաղաքը՝ Նախնջեան, կմանէ Մայր եկեղեցին, մեծ Հանդիսով կարդալ կուտայ բեմին վերայ Հայրա-

պետական կոնդակ մի՛ լի ամենատեսակ ամբաստանու-  
թեամբ ընդգլխմ Առաջնորդին. իւր անունը չեղատակել  
կուտայ պատարագին մէջ, կճանուցանէ քահանայից և  
ժողովրդոց՝ թէ Գաբրիէլ վարդապետը Կաթուղիկոսին  
հրամանաւ ձգուած է Իշխանութենէն, և ի՞նչքը նշա-  
նակուած է նորա տեղը կառավարել Վեհապետ Լայոց  
Նախիջևանի և Պետարապետի: Վերան էրեք օր կանցնի՛  
չանցնելը, Տէրութեան հրամանաւ կճանուցուի՛ նորա  
ներհան՝ քահանայից և ժողովրդոց, թէ Վեհապետ  
Կայսրը զո՛վ որ նշանակել է՝ նա՛ է Վեհապետ Առաջ-  
նորդը, և նորեկ Արքեպիսկոպոսին հրաման կուգայ հե-  
ռագրով որ դառնայ երթայ իրեն տեղը: Այն ևս բաւա-  
կան չէ. Կաթուղիկոսին կողմանէ Վերադննելի Հոգևոր Գոր-  
ծոց Վեհապետ նշանակուած Անդրէաս Արքեպիսկոպոսին  
Կայսերական հրաման կուգայ որ այն վերադննութիւնը  
դադրի, և Տէրութեան կողմանէ Յանձնաժողով մի (սօ՛՛խ-  
ի՛) գայ Նախիջևան, Կաթուղիկոսական վերադննելիչնե-  
րուն արածները քննէ, և մնացեալ վերադննութիւնը  
ինքը Յանձնաժողովը առաջ տանի՛ միայն մէկ պատ-  
գամաւոր (սօ՛՛խ-ի՛) մի ընդունելով Կաթուղիկոսի կողմէն:

Ի՞նչ կասէին, ի՞նչ կմտածէին, արդեօք այս անց-  
քերուն վերայ նոյն իսկ Նախիջևանի և Պետարապետի  
վեհապետ ժողովուրդները, թող թէ ուրիշ տեղերու Հա-  
յերը: Արդեօք քանի՞ հոգի կար մէջընդմէջ որ տեղով  
գիտնար, կամ թէ գիտնարու գիւրութիւն և կարողու-  
թիւն ունենար, այն դիպուածներուն բուն և իսկական  
պատճառները և ամէն պարագաները: Ո՞չ ապաքէն  
հարկւրին մէկը չկար գիտցող. ընդհակառակն, մանա-  
ւանդ թէ հարկւրին չիտունը պատրաստ էին գայթա-  
կելու, զարմանալու, շփոթելու, և մնացեալը ամենա-  
ցարմար առիթ գտել էին՝ այն դիպուածներով իրենց  
հակառակասիրութիւնը ևս առաւել բորբոքելով՝ բա-  
րեմիտ ժողովրդոց սիրտը պղտորելու:

Այս ամէնը գիտնարով և չայանի տեսնելով Գաբրիէլը  
վարդապետը, հարի համարեցաւ շրջաբերական գրով  
մի իմացնել վեհապետ ժողովուրդներուն այն  
եղելութեանց պատճառներն ու պարագաները, բայց  
այնպէս որ թէ՛ պարզ ճշմարտութիւնը հասկացուի,  
թէ՛ Տէրութեան իրաւացի կարգադրութիւնը իմացուի,  
և թէ միանգամայն Կաթուղիկոսին պատուը որ ի՞նչ  
էր պահպանուի, և առհասարակ ժողովրդոց գայ-  
թակղութիւնը բժշկուի: Միտքը դրած էր որ թէ կայ  
ժամանակ մի՛ յորում հարկաւոր է շրջաբերական գրով  
խօսիլ հեռաւոր ժողովրդոց հետ ո՛ր և ինչ Առաջնորդի  
համար, ահա այն էր ժամանակը նաև իրեն համար.  
ուստի մեարտարի 19-ին (1865) հրատարակեց հետագայ  
շրջաբերականը՝ Կոնստանտնուպոլսի ձեռքովը, պատուի-  
րելով քահանայից որ Կիւրակի օր մի կարգան ի լուր  
ժողովրդեան:

«Յիսուսի Քրիստոսի Ծառայ Գաբրիէլ վարդապետ Այլաղան,  
«Տեղակալ Առաջնորդութեան վեհապետ Լայոց Նախիջևանի և  
«Պետարապետի.

«Շնորհազարդ Քահանայից և Քրիստոսասէր ժողովրդակա-  
«նաց մերոց առհասարակ ողջոյն և օրհնութիւն ի Քրիստոս.

«Նօթենմեան բոլորեցաւ ժամանակ՝ յորմէ կետե կամօքն.  
«Աստուծոյ և հրովարտակաւ ՕԳՈՍՏԱՓԱՍԻ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ամե-  
«նայն Ռուսաց հաւատացաւ մերումն նուաստութեան տեսչու-  
«թիւն Առաջնորդութեան վեհապետ Լայոց Նախիջևանի և Պետա-  
«րապետի, յորում պաշտաման և հաստատեցաւ ապա հրամանա-  
«գրովք Սիւնհոգոսին Ս. Էջմիածնի, յետ այնորիկ և զանազան  
«կոնդակօք նորընտիք Արքայան Կաթուղիկոսին ամենայն Լայոց  
«Տեառն Մատթէոսի Ա:

«Ապաքէն ոչ անձանօթք են աղգիս մերում ընդհանրապէս, և  
«առանձինն հաւատացելոցդ այսր վեհապետ, ո՛րչաի ինչ գործե-  
«ցաւն ի մէջ յայս միջոց ժամանակի օգնականութեամբ շնոր-  
«հայն Աստուծոյ, և պաշտպանութեամբ մեծազօր Պետութեանն,  
«յօգուտ և ի պայծառութիւն հօտիդ յանձն եղելոյ ի ինամն  
«մեր. նորդութիւնը ասեմ եկեղեցեաց հնացելոց ի տեղիս տեղիս,  
«և յայլս նորոց եկեղեցեաց կառուցմունք, անթար պահպանու-

«Թիւն և բարեղարգութիւն կարգաց աստուածաբանութեան աւանդայն ուրեք բարեկարգութեանց վարդապետութեանց Հայաստանեայց Եկեղեցւոյ. անխոնջ և անընդհատ քարոզութիւն բաւնին Աստուծոյ առ հաւատացեալսդ յամենայն քաղաք և ի զգիւղօրէս վիճակիս. բարեկարգութիւն ժողովրդական դպրոցաց արդէն եղելոց, և բացումն նորանոր վարժարանաց ի հրահանգութիւն մերազնեայ մանկուոյն. հաստատութիւն ազգայնոյ «Ռատուհան» ի թէնդոսիա հանդերձ տպարանաւ, և տպագրութիւն պիտանի դրենոյ և ամառաբեր, և որ այլն ևս: Բայց «Թերևս ոչ ամենեցուն իցէ յայտնի և այն՝ Թէ որչափ ինչ արհաւիր կրեցաք կիրս մինչև ցայսօր առ ի կատար ածելոյ զայս բանայն անհրաժեշտ պարտս պաշտաման մերոյ:

«Այլ և մեզ ևս շատ խի էր արդարև և ցանկալի բարեբախտութիւն, եթէ կրեալքն ի մէնջ վիշտք և տառապանք յայս միջոց ժամանակի և վասն այսր ամենայն՝ միայնոյ ամենատես «և սրտազէտ Արարչին և եթ մնային քաջածանօթք. առ որ և շունկն ասել հանապազ. «Ծառայք անպիտանք եմք, զոր պարտաքն առնել՝ արարաք, և առ ի նմանէ ակնունեւ երանական պատասխանւոյն՝ Թէ «Ազնիւ, ծառայ բարև և հաւատարիմ. . . «մնւտ յուրախութիւն Տեառն քոյ:» Սակայն աւանդ. ստիպմք բաւասիկ և բռնադատելք յողբալի հարկէ իրաց այժմու ժամանակիս՝ բոլանդակել աստանօր ի լսելիս հաւատացելոցդ Քրիստոսի կարճաւօտ բանիւ զգլխաւորս ի վշտակութեանց անտի մերոց՝ հանդերձ պատճառօքն. և այս այնու մտօք և եթ՝ զի «Թերևս մարթոսոսք մերովսանն ի բաց փարատել զտկարացն «գայթակղութիւնս, որոց Թերևս տեղի տուեալ իցէ՝ եթէ ոչ «մերս գնացք ընդ սում և իցէ, դէթ այլոցն ընդ մեզ քաղաքաւալութիւն:

«Քանզի մեք անդտին ի ժամանակէ անտի յորում ԿԱՅՍՆ՝ «ՐԱԿԱՆ հրամանաւ կոչեցաք յԱթոռ Առաջնորդութեան վիճակիս, ցաւազին սրտիւ գտաք բունեալ ի նորն Նախնիքան զանհաշտ իմն և զվաղեմի հակառակութիւն՝ որով ժողովրդականք «քաղաքին այնորիկ պատուականի մաքառէին սաստիկապէս ընդհուգէմ իրերաց. Թշնամութիւն և հակառակութիւն ողբալի, որ «պատճառանօք եկեղեցական դրամոյն Նախնիքանի՝ աւանդելոց «ի բարեյիշատակ Կաթողիկոսէն Ներսիսէ ի պահեստ ի ձեռս միոյ «ուրուք յիշխանաւորաց քաղաքին այնորիկ՝ ևս քան զևս սաստակացեալ, հուսկ ուրեմն յերկուս յիշխանի Կաթողիկոսութիւնս պառակտեալ էր զբնակիչան, զմիոյ ազգի սերունդս սիրելիս, և զմիոյ «եկեղեցւոյ որդիս հարադատս: Զայս հերձուած չարաբասակ և

զդայս վիճ անհաղի՝ որ վասն դրամոյն եկեղեցականաց՝ մարաւնական և վաւերական հաւանութեամբ կողմանոյն երկրոցն դարեարեցուցաք մեք և բարձաք ի միջոյ անդէն խի յամին 1858. «որոյ վասն և դռնութիւն և դրուատիս ոչ սակաւս ի Պետութեան և ի Սինդիկատէն միանդամայն ընկալաք. և աներկմիտ «վստահութեամբ ակնունէաք այնուհետև՝ Թէ առատապէս կրութեցին ի քաղաքին յայնմիկ բաղմաբեղուն արգասիք սիրապարհուէն խաղաղութեան: Սակայն հակառակորդն ամենայն բարեաց «սատանայ յաջողեցաւ Թաղուցանել և սահել ի նմին քաղաքի «գլխմբն հին դատելութեան և զնախանձու՝ իբրև զհուր ընդ «դադարաւ՝ ի սիրտս ոմանց ի բնակչաց Նախնիքանի:

«Որոց տեսեալ ի վերջ կոյս 1859 ամին, և յորս յետ այնուրիկ, զի ընտրութեամբ ազգին և հաստատութեամբ ԿԱՅՍՆԻՆ «ՄԵՄԻ հրաւերեցաւ յԱթոռ Հայրապետութեան Հայաստանեայց «եկեղեցւոյ Սրբազան Արքեպիսկոպոսն Մատթէոս, որ հարկաւ «իմն անդէտ էր և անծանօթ ինդրոց և գործոց՝ որք յուզէին «ի ժամանակին յայնմիկ ի վիճակս վիճակս Ռուսաստանեայց Հայոց, «— ժամ պատեհ համաբեցան վերստին զբաւելոյ զնախնիքն եկեղեցական դումարաց Նախնիքանի՝ զաւարտեալն արդէն օրինաւոր «դատաստանաւ, և ամբաստանելոյ զմէնջ՝ որպէս Թէ ինքնակամ «և անհրաման յօրինաւոր իշխանութեանէ ի գործ ածեալ իցէ մեր «զղբաման զայնոյսիկ ի պէտս ազգայնոյ Ռուսաստանիս. և այն «պէս իմն պարաւանդեալ պաշարեցին զմիտս Սրբազան Հայրապետին, և այնպէս զբաւեալ զարթուցին զնա ի վերայ մերումն «նուստութեան ի բարկութիւն, զի ամենայն համօրէն խորհուրդք մեր և բանք և գործք առհասարակ ի Թիւրն մեկնեցան ի նորին Սրբութեանէ: Որ և առանց խի արժան համարելոյ արկանել զնոսին ընդ զգուշաւոր և օրինաւոր քննութեամբ «դատաստանի, վիճեաց և դատապարտեաց զամենայն դրով և բանիւ և տպագրութեամբ:

«Այնուհետև անթերի և անկեղծ հաւատարմութիւն մեր առ «վարդապետութիւնս մերոյ Եկեղեցւոյն, զորս յայտ յանդիման «ծատագովչաք և ջատագովմք միշտ ընդդէմ՝ Հռովմականաց և «նորադանդից՝ պարսաւեցաւ ի հակառակորդաց անտի իբրև զհակաժողովութիւն յայլ իմն դաւանութիւն զազգս մեր շրջելոյ: Վաստակաւ մեր և աշխատութիւնք նուրբեալք ի փառս Աստուծոյ և «եթ և ի լուսաւորութիւն Ազգի՝ խոտեցան և անարեւցան իբրև «հնաբք՝ փառամոլութեան և գործիք իշխանասիրութեան, և ի կիր «առնուէն մեր ԿԱՅՍՆԻՐԱԿԱՆ հրամանաւ զըբամն եկեղեցեաց վիճակիս ի կառուցումն և ի պահպանութիւն ազգայնոյ Ռուսաստան

զրանի, ևս և՛ որպէս օրէն էր՝ ի բարեկարգութիւն այլոց ժողովրդական դպրոցաց այսր վիճակի, և ի նորոգութիւն նոյն իսկ «եկեղեցեացն, անդոննեցաւ և դատարարտեցաւ՝ նոյնպէս առանց դատաստանի՝ իբրև դյախտակութիւն և զսեղանակապտութիւն:

«Զ՛նր տարապարտուց ջանակնար եղաք մեր մինչև ցայժմ՝ բարձրութեամբ զրուսածովք, — բայց միշտ խոնարհական բանիւք, — չանբասիր զանձն կացուցանել առաջի Սիւնհոգոսին Ս. Էջմիածնի, և և մանաւանդ առաջի Վեհափառ Ատենայետի նորին. բանք սուրբ խացն մերոյ և բանարիւր արանց, ևս և անանուն գրութեանց անարգ և փառուէր մարդկան յայլ և այլ քաղաքաց, հաւատարմադոյր երևեցան յաչս նոցա քան զմեր ճշմարտախօսութիւնս: Զ՛նր տարապարտուց անձամբ իսկ հատեալ անցեալ «դատաճանական ուղին՝ որ ընդ մէջ է Թէոդոսիոյ և Էջմիածնի, և յԱտենի կացեալ Վեհափառ Կաթողիկոսին երկրորդ անգամ՝ չյամին 1863, արդարացուցաք զանձն մեր լիուրի պատասխանատուութեամբ յամենայնէ զոր ինչ յաւակնեալ էին հակառակորդքն մեր շինել զմերօրս անստելետ փարդապետութեամբ և զանշահասէր դործովք և զղղուշաւոր բանիւք՝ կարծիս և կասկածանս անձուներս և անյարերս: Քանզի հասին և անդր զինի մեր պատգամաւորք առաքեալք ի հակառակորդաց անսի որ ի Նյախիջեան. և ոչ միայն խտրան արկին նորա ձեռնադրելոյ զմեզ «Վեհափառ Կաթողիկոսին յեպիսկոպոսութիւն, — որ ոչ ըստ մերում ինչ ցանկութեան սպասեալ լինէր, քաւ՝ լլցել. այլ ըստ բարձրում անդամ առաջարկութեան ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ, և ըստ ձեռոց իսկ բարեսէր ինդրադործութեանց, — այլ և յաջողեցան՝ չգիտեմք ո՛րպէս՝ տալ Սրբազան Կաթողիկոսին առաքել շտապաւ զմի որ յիւրոցն՝ զԱնդրէաս Եպիսկոպոս զինի մեր, ըստ երևութիւն՝ իբրև Թէ ի վերադննութիւնն եկեղեցական զդործոց վիճակիս, այլ իբրք ի փոխանակել զմեզ նոյաւ յԱռաջնորդութեան այսր վիճակի:

«Ենի եհաս Վերադննիչն այն, և փոխանակ զէս ուղիւ յԱռաջնորդական Ատեն այսր զիմելոյ, և աստէն տեղեկանալոյ շտուգութեամբ ամենայն հանգամանաց տեսչութեան վիճակիս, «տարի մի ողջ և աւելի եկաց մնաց ի Նյախիջեան, և այն ի խումբս «այնոցիկ ի հակառակորդաց Առաջնորդական իշխանութեանս մերոյ՝ որոց հրաւիրանաւ իսկ եկաւորեալ էր. և իբրև ի դործս «Հոգևորական Կառավարութեան տեղւոյն անգամ չկարաց դտանել զԹեբութիւնն զորս ինդրէր, այսինքն է այնպիսի ինչ իս, «որ բաւականք իցին ի դատապարտ առնել զմերս տեսչութիւն, «զարմանալի իմն համարձակութեամբ, և որպէս Թէ միշտ Կա-

«Թուղիկոսական կոնդակաց զօրութեամբ, ձեռնամուկ եղև ի «պէսպէս դործս կառավարութեան վիճակիս, մինչև ի փոփոխել «ապօրինաւորապէս և զանդամն Հոգևորական Կառավարութեան «Նյախիջեանի, հեռացուցանելոյ անտի զբահանայսն արժանաւորս՝ զհաւատարմն երզման և անմիջական օրինաւոր իշխանութեան իւրեանց, և կարգելոյ ի տեղի նոցա քահանայս համբարեալս արդէն ըմբոս դնացիւք իւրեանց, և անուանարիս ի «ժողովրդեան Նյախիջեանի:

«Մինչդեռ մեր բողոք հարեալ ըստ օրինի զայսմ ամենայնէ «առ Սիւնհոգոսն Սրբոյ Էջմիածնի և առ Վսեմախալ Ոստիկանն «Նյերքին Գործոց՝ սպասեալ մնայաք առ ի նոյննէ իրաւանց և «դատալճուոյ, և ահա այդ եղև մեզ՝ զի Հովհաննէս Արքեպիսկոպոս Արշարունի՝ կարգեալ ի Վեհափառ Կաթողիկոսին Առաջնորդ վիճակիս, դայ այսր ի Թէոդոսիա: Որ և եհաս ի 28 «Յունուարի ի Նյախիջեան, և յՅ1 նորին ամսոյ ի Մայր եկեղեցւոջ քաղաքին ետ ընթեռնուլ ի լուր ժողովրդեան զկոնդակ «մի անձնութ մեզ մինչև ցայժմ, որով որպէս Թէ Սրբազան Կաթողիկոսն մերժէ զմեզ յԱռաջնորդական իշխանութիւնէս յանձնելոյ մեզ հրամանաւ ՕԳՈՍՏԱՓԱՍԻ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ամենայն «Ռուսաց, և կարգէ ի տեղի մեր առժամանակեայ Կառավարիչ վիճակիս զՎիճաննէս Արքեպիսկոպոս Արշարունի, պատուիրելով «զնորա անունն յիշատակել ի պատարագի և ի հասարակ արժես, «և նմա միայնոյ հնազանդել յամենայնի:

«ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆ տեսանելով՝ զի այս տնօրէնութիւն Սրբազան Կաթողիկոսին յայտնապէս հակառակ է 966 «չյողուածոյ Ա. մասին ԺԱ. հատորոյ օրինաց, որ ասէ. «ԶԹեմակալ Առաջնորդս Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ի Ռուսաստան նշանակէ ԹԱԳԱԼԻՐ ԿԱՅՍՐՆ յեկեղեցական աստիճանաւորաց այսր դասնութեան. նորա կարգին և արձակին Բարձրագոյն Հրովարտակօք (1) . . . և զի զկարգեալն ի պաշտօն ինչ «հրամանաւ ՎԵՀԱՓԱՍԻ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ՝ ոչ որ կարէ փոխել առանց հրամանի ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՍԻՈՒԹԵԱՆ, ի ձեռն Վսեմախալ «Բնդհանուր Կուսակալին Նորոյն Ռուսիոյ Քոչկաւու Սպարապետին՝ հեռադրական հրամանաւ յՅ ամսոյս Փետրուարի պատուի-

(1) „Епархіальные Начальники Армяно — Григоріанскоі церкви назначаются ГОСУДАРЕМЪ ИМПЕРАТОРОМЪ, изъ духовныхъ сановниковъ сего исповѣданія. Они определяются и увольняются ВЫСОЧАЙШИМИ указами.“

«ըրեսց ժողովանորդի Բարեկարգապետին Ռոստովի Պ. Վասիլևիչի  
«Ժուլետի և Նախիջևանի, և ի ժողով կոչեալ զժողովուրդն և զա-  
«մենայն եկեղեցականս ի ձեռն Քաղաքադէտոյն ի 4 Փետրուարի՝  
«ճանուցանել, զի ամենեքեան աւհասարակ պարտին միմայն  
«Առաջնորդ օրինաւոր ճանաչել յայտմ զլիճակի զկարգեալն  
«Հրամանաւ ՕԳՈՍՏՍՖԱՌԻ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ, և ոչ զայլ ոք:

«Յողադս այսր ամենայնի անակնուենել և ծանր ծանր եղելու-  
«թեանց՝ հարկ անհրաժեշտ համարեցաք պատուէք հրամանի առ-  
«նել առ հասարակ շնորհադարձ եկեղեցականացդ և համօրէն  
«աշխարհահանաց յանձնելոց ի խնամս տեսչութեան մերոյ, զի  
«ամենեքեան միտ զնկցեն և ի դէպս յայտովի անվրէպ պահպա-  
«նութեան երեցունցս այսոցիկ կարևոր գիտելեաց և անստերիւր  
«էկանոնաց:

«Ա. Զի հաւատարմք կայցէք մնայցէք ամենեքեան ընդ մեզ՝  
«օրինաց և հրամանաց ՕԳՈՍՏՍՖԱՌԻ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ամենայն  
«Ռուսաց, ընդ որոյ հովանաւորութեամբն տաւաղիմքս ողորմու-  
«թեամբն Աստուծոյ, և որում երդուեալ եմք և մեք և դուք և  
«ամենայն որ զերդումն հաւատարմութեան մինչև ցմահ:

«Բ. Զի հաւատարմք իցէք նոյնպէս ընդ մեզ յանթերի հպա-  
«տակութեան Մայր Աթոռոյ Հայաստանեայցս Եկեղեցւոյ, և ի  
«հչու հնադանդութեան արժանաժառանգ Աթոռակալի Ա. Հօրն  
«մերոյ Գրեգորի Լուսաւորչին յամենայն խնդիրս և ի վարդապե-  
«տութիւնս հաւատոյ բացատրեալս ի նմանէ հաստատութեամբ  
«Սիւնհոգոսին Ս. Էջմիածնի, և յամենայն որ համաձայն իցէ  
«Հայրապետական կանոնաց և կայսերադիր Օրենաց: Եւ

«Գ. Զի Առաջնորդ հարադատ զլիճակիս այսորիկ ճանաչիցէք  
«յորում ժամանակի և իցէ գնա միայն՝ որ կարգեալ իցէ կամ  
«կարգելի ըստ օրենաց՝ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ Գերագոյն հրամանաւ, և  
«ոչ զայլ ոք:

«Իսկ ի կնիք բանիցս յորդորեմք զամենեան զձեզ ի  
«սէրն Քրիստոսի՝ ներել միմեանց, շնորհել իրերաց, հեռել լի-  
«նել յամենայն չարախօսութենէ և ի զրդուութենէ, և մանաւանդ  
«ի խառնելոյ ի դործս և ի խնդիրս՝ որք արտաքոյ իցեն ձերոցդ  
«Իրաւանց և իշխանութեան և դատողութեան: Եւ որ առաւելն է  
«քան զամենայն, և մեք և դուք աւհասարակ մաղթեսցուք վասն  
«ազգիս մերոյ և եկեղեցւոյ սրբոյ զՀոգւոյն Աստուծոյ զցանկալին  
«Երազարութիւն, որ ի վեր է քան զամենայն միտս և զխորհուրդս,  
«զի միեմարեացէ գանձինս ծառայից իւրոց՝ ընդունելով զազա-  
«չանս ամենայն սրբոց Հովուաց և Հովուապետաց Հայաստանեայցս  
«Եկեղեցւոյ, և անցուցէ ի մէջ զարդարեն զցասումն պատու-

«Հասի յանցանաց մերոց, որ է ողին երկպառակութեան և նա-  
«խանձու և հակառակութեան՝ ապականիչ և կործանիչ ազգի և  
«եկեղեցւոյ:

«Տեղեկալ Առաջնորդութեան զլիճակիս Գարրիէլ վարդապետ  
«Այլաղեան:»

«Յամի Տեառն 1865, ի Փետրուարի 19,  
«և ի մերումն Թուարբերութեան ՌՅԺԳ, ի Մեհեկի 7.

«Առաջնորդարանիս մերում որ ի Թէոդոսիա քաղաքի:»

«Քիչ ժամանակէն իմացուեցաւ որ այս շրջաբերա-  
«կանը իւր նպատակին հասել է ամէն տեղ, վասն զի  
«անոյլ զլիճակին ամէն ժողովուրդներն ալ ակորժելով  
«հասկացել էին եղած անցքերուն ճիշդ պատմութիւնը,  
«և տարակուսողներուն տալեկանս ու գայթակղութիւնը  
«բժշկուել էր: Բայց և զարմանք չէ որ այն շրջաբերա-  
«կանը անախորժ երեցած լինէր այնպիսի անձանց՝ որ  
«գլխաւոր՝ և դրեթէ միակ պատճառ էին այնքան շիտ-  
«թութեանց և խռովութեանց: Եւ թէպէտ Նախիջևանի  
«մէջ գտնուողները՝ Տէրութեան երկիւղէն չհամարձա-  
«կեցան յաջտնապէս ցուցանելու հրապարակաւ իրենց  
«տժգոհութիւնը այն շրջաբերականին դէմ, բայց Մոս-  
«քուա և Փեթերպուրի գտնուող և նոցա խորհրդակից  
«եղող Հայերէն ոմանք խիստ յաջանի արին իրենց արժ-  
«գոհութիւնը, դժկամակութիւնը և գաչոյթը: Նոքա  
«չբաւականացան՝ մեղադրանք և ջանդիմանութիւն տա-  
«լով այն շրջաբերականը եկեղեցեաց մէջ կարգացող  
«եկեղեցականներուն, հասցա նաև գանդատ գրեցին  
«Վեհափառ Կաթողիկոսին, ևս և ինչպէս որ կատու՝  
«Վանմափաջ Աստիկանին՝ Ներքին Գործոց:

«Կարելի չեղաւ մեզ ձեռք ձգել այն մէկ քանի նա-  
«խանձայոցդ ջատագոյներուն առ Կաթողիկոսն կամ  
«առ Աստիկանն դրած բողոքին օրինակը, որպէս զի որոշ  
«հասկացուէր թէ ի՞նչ ասած է Առաջնորդը՝ այնպիսի  
«բողոքման արժանի: Բայց բերնէ բերան անցած խօս-

քերէն աչսքանս իմացուեցաւ՝ թէ նորա մեղադրել և բողոքել են՝ նախ աչս բանիս համար, թէ ի՞նչպէս համարձակել է Գաբրիէլ վարդապետը, հասարակ վարդապետ մարդ, «Յիսուսի Քրիստոսի Մառայ» և այլն վերնադրով շրջաբերական հանելու, որովհետև (երենց խելքովը) աչս վերնադրը սեպհական է եղել միայն Կաթողիկոսաց ազգիս. ուստի և վարդապետին դրածը շրջաբերական չէ եղել, հապա Կոստանդնուպոլիս:—Չգիտեմ ի՞նչ պատասխան պետի տալին այն իմաստակիները՝ եթէ հարցանէր մէկը իրենց՝ թէ ո՞ր Կաթողիկոսը իրեն սեպհականել է երբէք աչս վերնադրը, և եթէ Կաթողիկոսական էր ի՞նչպէս համարձակել են ու կհամարձակին միշտ մեր ազգին ո՞ր և ինչ վարդապետները նոյն վերնադրով օրհնութեան նամակները դրելու մէկուն մէկալին. և չանուանէ՞ Ասպահանու և Վանայ վանահայր վարդապետները մինչև ցայսօր իրենց շրջաբերական նամակներուն սկիզբներն աչսպէս կգրեն, «Յիսուսի Քրիստոսի Մառայ . . . » Ուրիշ բան էր՝ եթէ վարդապետը իւր շրջաբերականին սկիզբը կամ մէջը չանուանէր ինքզինքը Տեղաւոր աչսինքն Փոխնորդ Առաջնորդութեան, աչս Կաթողիկոսական հայոց, կամ գէթ Կաթողիկոս—Առաջնորդ վիճակին Հայոց Նախիջևանի և Պեսարապետի:

Նրկորդ մեղադրանքը աչս է եղել՝ թէ վարդապետը անպատեալ արել է աչս շրջաբերականով Կաթողիկոսը կամ Կաթողիկոսական իշխանութիւնը:—Յայտնի բան է որ աչս իրենց մեղադրութիւնն ևս պետի չկարենալին ամենեւին մէկ ապացուցով հաստատել. վասն զի, ինչպէս որ առաջ ասացինք, և ինչպէս որ ուշադրութեամբ կարդացողները ինքնին ալ կտեսնեն, աչս գրուածքին մէջ չկայ և ոչ ի՞նչ որ Կաթողիկոսին կամ Ս. Աթոռոյն անպատուութիւն մի բերէ:

Նրկորդ մեղադրանքը աչս է եղել թէ ի՞նչպէս համարձակել է Առաջնորդը՝ կամ իրեն Կոստանուպոլիսի

հրամայելու որ աչս շրջաբերականը եկեղեցեաց մէջ կարդացուէրէն յետոյ, Վեհափառ Կաթողիկոս համար հանդիսաւոր մտղթանք կատարուի ըստ սովորութեան:—Չեմք կարծեր որ աչս մեղադրանքն անողները կասկածանքի մէջ ընկած լինին անով՝ թէ մի՞ գուցէ Առաջնորդը ուղի է որ աչսուհետև Ռուսաց Ինքնակալը ճանաչուի նաև Կաթողիկոս ամենայն Հայոց և գլուխ Հայաստանեայց եկեղեցւոյ . . . Ապա թէ ոչ, չեմք գիտեր թէ ի՞նչ կայ աչս գործողութեան մէջ մեղադրութեան արժանի: Պէտք էր՝ ընդհակառակն՝ մտածէին Առաջնորդին հետ, թէ որովհետև աչս պարագաներուն մէջ ևս չայտնապէս երևեցաւ Կաթողիկոսական կառավարութեան խնամքը և արթուն հսկողութիւնը ի վերայ բարեկարգ ընթացից արտաքին կառավարութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, ամենայն կերպով վայելուչ և պատշաճ էր հրապարակական շնորհակալութեան նշան մի ընծայել Վեհափառ Կաթողիկոսին՝ միաբանական մտղթանքով նորա կենդանութեանը համար: Թող որ պատահամբ աչսպէս հանդիպեցաւ որ Թէոդոսիոյ եկեղեցւոյն մէջ կատարուեցաւ աչս հանդէսը փետրուարի 19-ին, աչսինքն Կաթողիկոսը Գահակալութեան օրը. իսկ ուրիշ եկեղեցիներուն մէջ ևս արդէն տարին քանի՞ անգամ կատարուելով՝ ամենեւին վնաս մի չկար որ մէկ անգամ ալ աւելի կատարուի:

**Գ Լ Ո Ի Խ Ի Ֆ.**

Խալիպեան Ռատմարանին վերադնուծիւնը, եւ Գարիէլ վարդապետին վերջին անգամ Նախիջևան երթալը:

Ինչպէս որ առաջ յիշատակեցինք, Վեհ. Կաթողիկոսին նշանակած վերադնուծիւնը ոչ թէ նորա հա-

մար կնախանուէր Տէրութեան կողմանէ որ երբ թէ Գաբրիէլ վարդապետին գործողութիւնները պէտք չէ քննուին, կամ թէ Կաթողիկոսը իշխանութիւն չունի քննելու նորա կառավարութիւնը, Հապա միայն նորա Համար արգելուեցաւ Անդրէաս եպիսկոպոսին ու Սալադնեանց տէր Մովսէսին սկսած վերադննութիւնը՝ որ նորա իրենց պաշտօնին սահմանէն դուրս ելնելով՝ սկսել էին վիճակին կառավարութեանը խառնուել որով և ոչ սակաւ գանգատանաց և շփոթութեանց պատճառ եղել էին Նախիջևանի և նորա գեղերուն մէջ, ինչպէս որ Տէրութեան պաշտօնեաները ծածուկ և չայտնապէս տեղեկութիւն տուած էին Ներքին Գործոց Ոստիկանին: Ուստի և Հրաման եկաւ Փեթերպուրկէն՝ թէ ըստ բարեհաճութեան Վեհափառ Կայսեր, Անդրէաս եպիսկոպոսին սկսած վերադննութիւնը դադրել, և Յանձնաժողով մի սահմանուի՝ այն վերադննութեան Հետեանքները քննելու, և չետոյ վերադննութիւնը առաջ տանելու: Այս Յանձնաժողովոյն Նախագահ նշանակուած էր Կայսերական Համհարդ (Ֆլէշլ—Արիւլուի) Գալբլին Գնդապետը, իսկ Անդամք՝ Ներքին Գործոց Ոստիկանարանին կողմանէ մէկը, և Նոր Ռուսիոյ Ընդհանուր Կուսակալին կողմանէ ուրիշ Աստիճանաւոր մի. բաց և Կաթողիկոսին կողմանէ ներկայ պետի գտնուէր Յանձնաժողովոյն գործողութեանցը՝ նորանէ նշանակուած պատգամաւոր մի: Բաց չաչնմանէ, Տէրութիւնը այս ևս որոշելէր որ Յանձնաժողովը առաջ Թէոդոսիոյ Խալիպեան Ուսումնարանին քննութիւնն անէ՝ առանց ներկայութեան Կաթողիկոսի պատգամաւորին, և չետոյ երթաչ Նախիջևան՝ որ պատգամաւորին ներկայութեամբը կատարէ վիճակալին կառավարութեան վերադննութիւնը:

Ապրիլի վերջերը եկաւ Հասաւ Յանձնաժողովը Թէոդոսիա, և կանոնաւոր ու մանրամասն գրաւոր և բանա-

ւոր Հարցմունքներով տեղեկացաւ Խալիպեան Ուսումնարանին ամէն անցեալ և ներկայ պարագաներուն, մանաւանդ Հաշիւներուն: Մասնաւոր ուշադրութեամբ քննեց տեղեկացաւ թէ Ուսումնարանին սկզբնաւորութեանէն մինչև 1865 տարին եկեղեցական գումարներէն ո՛րքան ստակ գնացել է Ուսումնարանին և Տպարանին վերայ, ո՛րքան աշակերտաց Համար՝ ո՛րքան վարժապետաց և ծառայից ռոճիկ վճարուելով, աշակերտաց Հազուատն ու կերակուրը և՛նչ կերպ տրուելով, և այլն և այլն: Եւ թէպէտ Յանձնաժողովոյն առ Ոստիկանին Ներքին Գործոց տուած տեղեկադիրը չաչտնի չէ մեղ, բաց Հետեանքներէն կարելի է Հաստատութեամբ մակարեբել, թէ նախ՝ Ուսումնարանին ընդհանուր կառավարութեանը, բարեկարգութեանը, ռոճոյն և ընթացքին ամենայն կերպով Հաւանութիւն ցուցուցել է. երկրորդ՝ մինչև ցայժմ եղած ծախքերուն մէջ չափազանցութիւն կամ վատնողութիւն ամենեւին չէ դրտած. և երրորդ՝ թէ Ուսումնարանին Հաշուեկալութիւնը ա՛յս պակասութիւնը միայն ունեցել է որ Տէրութեան դպրոցներուն Հաշուեկալութեանը պէս որոշեալ և սահմանեալ ձևակերպութեամբ չէ եղած: Բաց այս վերջի դիտողութիւնը կամ պակասութիւնը անո՛վ կարդարանար նաև Յանձնաժողովոյն առջևը, որ Գաբրիէլ վարդապետը այն Ուսումնարանը Հիմնել և առաջ տարել էր իբրև «*պատմական ուսումնարան*» դպրոց, և Տէրութիւնը Ուսումնարանին Հիմնական կանոններուն մէջ չէր ասած թէ Ուսումնարանին Հաշիւները «*պատմական*» պետի ըռնուին, կամ թէ ընաւ իսկ հաշիւ ասածդ պետի տայ Ուսումնարանը՝ մանրամասն կերպով ո՛ր և ինչ Բարձրագոյն իշխանութեան: Յանձնաժողովոյն վերադննութեան նպատակը այս էր միայն՝ որ Հասակցուի թէ արդեօք Գաբրիէլ վարդապետը եկեղեցական գումարները չիրաւի գործածե՞լ է Ուսումնարանին վե-

րաց, և սրբան դումար, և ի՞նչ կերպով, և ահա այս տեղեկութիւնները լիութիւն Հանդամանօք ընդունեցաւ ընդարձակ դերով, և գնաց Նախիջևան:

Ուսումնարանին վերադննութեան երկրորդական մէկ նպատակն ալ այս էր՝ որ Յանձնաժողովը Քարբէէ վարդապետին ու Պ. Խալիպեանին հետ խորհրդակցելով՝ մտածէ և որոշէ թէ արդեօք ի՞նչ կերպով կարելի է այն Ուսումնարանին ապագայ հաստատութիւնը ապահովել: Աւ որովհետեւ Պ. Խալիպեանն Նախիջևան էր, Յանձնաժողովը այն տեղը հրաւիրեց նաև զԱռաջնորդն, և նա խոստացաւ որ անպատճառ երթայ:

Մայիսի 9-ին Քարբէէ վարդապետը հասաւ շոգեհաւով Քաջղան, ուր և լսեց Նախիջևանի հակառակորդաց կողմանէ այն տեղը պատահած նոր ցաւալի անցքը, որ էր այս: Քալէլին Գնդապետին Ռոսթով հասնելուն երկրորդ օրը նամակ մի կուգայ իրեն անանուն, չորում չանդուգն խօսքերով աղաքարութիւն կանկը գրողը՝ որ լաւ նայի, Խալիպեանին և Աջվաղեանին խօսքերուն չխարուէ, Նախիջևանի եկեղեցեաց փողերը սաստիւթեամբ պահանջէ, Խալիպեանին պատրաստած կաշառքը չսօճու, կողմնատիրութիւն չանի և ալին, և գիտնայ որ այն նամակը գրողները շատուր են, և իրենց իրաւունքը պաշտպանելու համար մինչև իրենց արևունը թափելու պատրաստ են: Գնդապետը խիտն կհրամայէ Նախիջևանի Քաղաքադըլտոն՝ որ առաջիկայ կերպին բոլոր հասարակութիւնը ժողովէ գաւառական դպրոցին սրահը, հարկաւոր բան մի ունիմ կասէ՝ ժողովրդեան իմացնելու: Հակառակողները կարծիք անելով թէ Գնդապետը ժողովրդեան գանդատները կուգէ լսել, կըմանան որչափ որ կարելի է մեծ բաղմութիւն հաւաքել. մինչև դպրոցէն դուրս փողոցին մէջ ալ շատ մե սաշլափաներ ու բեռնակիրներ ժողովելով խրատ կուտան նոցա որ երբ դպրոցին մէջ ժողովրդեան ձայները

լսեն, խիտն իրենք ալ դրսէն աղաղակ վերցնելով կանչուըւտեն թէ «Մեր եկեղեցիներուն փողերը կուգեմք»:

Կերակի օրը ժամը 12-ին կուգայ կհասնի Պ. Քալէլինը իւր ընկերներովը, բաց հետն ալ Ռոսթովի Բարեկարգապետը, և երկու շահագործ: Ժողովուրդը այն պատրաստութիւնները տեսնելուն պէս՝ կըմըն, կհասկանայ որ բանը իրենց հասկացածին պէս չէ եղել: Ներս կմտնէ Գնդապետը, կապուլէ ժողովրդեան սաստիւթեամբ՝ որ ոչ ոք չհամարձակի իրեն առջևը բերան բանալու. կհանէ ծոցէն այն անանուն գիրը, բարձր ձայնով ու ծանր ծանր կիարդաց, և գրեթէ ամէն մէկ տողին հերքումն ալ ինքը բերնով տալէն չետոյ, ասով կվերջացնէ իւր խօսքը. «Այս գիրը, կասէ, պէտք է որ ես այս տեղը պատըռտի կիճացնէի. բաց հարկ կհամարեմ ներքին Գործոց Ռատիկանին աչքին առջևը դնել, որպէս զի նա ալ հասկանա թէ «հա յոպիտի Բաներ են Նախիջևանին ելած գանդատներն ու իտաները, այսպիսի ցած և անարժան փճախօսութիւններ»:

Հասաւ Քարբէէ վարդապետը Ռոսթով մայիսի 10-ին, ուր արդէն հաւաքուած կապառէին Նախիջևանի դըխաւոր իշխանաւորները, և ժողովրդեան մէջէն շատ մարդիկ. գնաց մտաւ հանդիսով Մայր Եկեղեցին, և չետ սովորական աղօթից, բաց առանց ուրիշ անդամներուն պէս ատենախօսութիւն անելու, գնաց իրեն համար պատրաստուած օթեանը, ուր և նորէն եկան նորագաւուտը որջունելու իշխանաւորք և եկեղեցականք:

Քարբէէ վարդապետին այս անգամ Նախիջևան երթալուն դըխաւոր նպատակն էր, ինչպէս որ ասացինք, Խալիպեան Ուսումնարանին ապագայ հաստատութեան և ապահովութեանը մեջոցները քննել, խորհրդակցելով Պ. Խալիպեանին ու Յանձնաժողովոյն հետ. ուստի և շատ անգամ տեսնուեցաւ հետերին,

և ընդարձակօրէն բացատրեց նոցա իւր կարծիքը՝ Խօթը տարուան փորձառութիւնը օրինակ ունենալով:

Ուսումնարանը այն միջոցին 15,000 ռուբլի չափ պարտք ունէր այլ և այլ անձանց: Այս պարտքը Հարկաւ կամաց կամաց Հասել էր այն գումարին, զլիսաւորապէս երեք պատճառաւ: Առաջին՝ որ եկեղեցական փողերը չափեն աւելի ծախուած էին Խօթը տարուան մէջ ճրիւղաբժ աշակերտաց դաստիարակութեանը Համար. (1) որով և ետքի երկու երեք տարիները քիչ արդիւնք եկած էր Եկեղեցիներէն: Երկրորդ, Ուսումնարանին կառավարութիւնը քաշած Հալածանքներուն Համար, նմանապէս և Խրեմու ժողովրդոց այն տարիները շատ ձախորդութիւններու պատահած լինելուն պատճառաւ, Թոշակաւոր աշակերտաց Թիւը քանի զնացել պահասել էր: Եւ երրորդ, շատ Թոշակաւոր աշակերտք մինչև այն ժամանակը իրենց Թոշակները ամբողջ վճարած չէին. և այս անվճար մնացած Թոշակներուն գումարը մինչև 4500 ռուբլի կհասնէր:—Արդ Գաբրիէլ վարդապետին կարծիքը այս էր՝ Թէ Ուսումնարանին ապագայ Հաստատութեանը Համար կարելի չէ կարգադրութիւն մը անել՝ մինչև որ նախ այս 15,000 ռուբլի պարտքը չվճարուի: Յանձնաժողովն ալ իրաւունք տուաւ վարդապետին, նմանապէս և Պ. Խալիպեանը. բաց Թէ ուստի պետի վճարուի այս պարտքը՝ ամենեկին չաչտնի չեղաւ. վասն զի Առաջնորդին ձեռքը եկեղեցական փող չէր մնացած՝ Ուսումնարանին Համար գործածելու. Պ. Խալիպեանն ևս ասեր Թէ «նս արդէն

(1) Եկեղեցական փողերուն չափէն աւելի փնայածին փլիսաւոր պատճառն այն էր որ շատ քարի, աչքինին 1858-էն մինչև 1862, շատն պտտանի: Խալիպեանն ասն է անուանով ուսումնարանը իր լիւր-լիւր ասին ուսումնարանին մէջ՝ Եկեղեցական փողերով, ասանց Պ. Խալիպովէն փող մի ասուելու: Տե՛ս ի վերջ Պատմութեան Գրքի Գլուխ Գ:

այնչափ ծախք արի Ուսումնարանին վերայ որ կարողութիւն չունիմ այդ պարտքը վճարելու: Եւ այս աւան ծախքին էին նախ՝ 50,000 ին տեղը 150,000 արծաթ՝ որ շէնքին վերայ գործածեց, երկրորդ՝ շատն հարկով աւան 6300 տեսեթիւն Հողը՝ զոր չետոյ Թողուց Ուսումնարանին. և երրորդ՝ ուրիշ ծախքեր:—Նոյն պատճառաւ չետ կեցաւ նաև սուրբ Խաչ վանքին մէջ կանգնել խոստացած եկեղեցական դպրոցը շինելէն, ևս և Ուսումնարանին մէջ զատ եկեղեցի կանգնելու խորհուրդը մինչև ցայժմ ուշացուց, և գուցէ լալըրովն մէկըն դբաւ:

Այս խնդիրը այսպէս անորոշ ձգելու ստիպուած, մտածեցին Թէ անպատճառ Հարկաւոր է այնպէս Հաշուել Ուսումնարանին մուտքը և ծախքը, որ նախ գտնուի մէջը գտնէ 40 լիւթոշակ աշակերտ, այսինքն ամէն մէկը 250 ռուբլի վճարող երկրորդ՝ Պ. Խալիպեանը տայ ամէն տարի 20 ճրիւղաբժ աշակերտի Համար 5000 ռուբլի. երրորդ, վիճակիս եկեղեցիներէն ևս աւանուի ամէն տարի 30 աշակերտի Համար 7500 ռուբլի: Յանձնաժողովը յոյս ունէր որ Տէրութիւնն ալ երբ որ լաւ Հասկանայ Ուսումնարանին մեծամեծ օգուտները, ինչպէս որ Յանձնաժողովոյն անդամները լաւ Հասկացել էին, գուցէ կցօժարի 5 կամ 6 Հազար ռուբլի ալ իւր կողմանէ ընծայելու տարուէ տարի. որով Ուսումնարանին մէջ 110 կամ 120 աշակերտ կընային դաստիարակուիլ՝ առանց դրամական նեղութեան: Այս վերջին առաջարկութեանն ևս յօժարացաւ վարդապետը, բաց աճապարեց վերայ բերելու Թէ «Տէրութեան այդպիսի մէկ նպատար է Հարկէ շնորհակալութեամբ կընդունի Ուսումնարանին կառավարութիւնը. միայն լի անով իւր ազատութիւնները ամենեկին չկորսընելով. ապա Թէ ոչ, նորա գոյութիւնը Հիմնական պայմանները կարող են փճանալ:»

Այս խնդրոց վերայ, ինչպէս որ ասացինք, շատ խօսակցութիւններ եղան ընդ մէջ վարդապետին, Պ. Խալիպեանին և Յանձնաժողովոյն, և որոշուեցաւ որ ետքե կարգադրութիւնը կամ վճիռը սպասուի Ներքին Գործոց Աստիկանէն:

Առաջնորդը այս վերջին անգամ 15 օր միայն կեցաւ Նախիջևան, և այնտեղի Հոգևոր Կառավարութիւնը որ փակ էր՝ չբացաւ, որովհետև Կաթուղիոսէն նշանակուելու պատգամաւորը դեռ չէր եկած, և ո՛վ դալիքն ալ չգտանի չէր: Միայն մէկ քանի եկեղեցականներու այն միջոցներուն ըսնած ընթացքին վերայ դատաստաններ արաւ առանձնաբար, դոմանս խրատեց, ոմանց չանդիմանութիւն տուաւ, և մէկ քանիին ըմբոստութեանը արուելու պատիժները Կոնստատրիպէն չուղարկելու եղաւ: Եւ ինքը մայիսի 24 ին դարձեալ շոգենաւով Ռոսթովի ու Քաչղանի վրայէն դարձաւ Թէոդոսիա:

Իսկ Անդրէաս Նախիդպոսն, որ այս անգամ Առաջնորդին Հետ չտեսնուեցաւ, արդէն Մայիսի 18 ին ճանապարհ ելել էր դէպի Էջմիածին, Հետը տանելով նաև Սալազնեանց Տէր Մովսէսը:

**Գ Լ Ո Ի Խ Ի Գ.**

Խալիպեան Ասումնարանին կառավարութեան եւ ընթացքին փոփոխութիւնը :

Խալիպեան Ասումնարանին Համար 1965 ուսումնական տարին շատ նշանաւոր եղաւ. վասն զի նորա մէջ վերջացաւ ըստ իմիք իւր նախնական և հիմնական դրութիւնը, և սկսաւ ուրիշ վիճակ և դրութիւն՝ գոյցէ աւելի Հաս-

տատուն և զրամական կառավարութեան կողմանէ աւելի ապահով. թէպէտ և ներքին կարգադրութիւնը 1866 տարւոյն վերջերն ևս տակաւին չձևացաւ:

Վերատեսուչ վարդապետը Նախիջևանէն դառնալով՝ Հրամայեց որ Ասումնարանին տարեկան Հարցաքննութիւնները շուտով սկսին և վերջանան, այնպէս որ յունիսի 18-ին աշակերտաց մեծ մասը ճամբայ դըրուեցան, ոմանք իրենց ուսումը բարձրովին աւարտած, և ուրիշները Հանդատեան Ժամանակը իրենց տները անցընելու մտքով արձակուած, և մնացին Ասումնարանին մէջ միայն 25 աշակերտք:

Յունիսի 19-ին գիր մի գրեց Առաջնորդը Պ. Խալիպեանին, և այս արձակուողը ծանուցանելէն չետոյ՝ կինդրէր որ նա որոշ կերպով պատասխանէ իրեն Հեռագրով՝ թէ միտք ունի՞ արդեօք Ասումնարանին պարտուց ամբողջ և այժմէն Հատուցուելուն ճար մի անելու իւր քսակէն և կամ փոխառութեամբ, որպէս զի՛ կատէր՝ ես ալ ըստ այնմ դիտնամ անելիքս. այսինքն եթէ այն 15,000 ըուպլի պարտքը չվճարուի, մնացած 25 աշակերտներն ալ իրենց տները ճամբեմ, և արդէն դնացողներուն իմացընեմ որ չդառնան չգան նորէն. Ասումնարանը «- ծաման» է՝ փակեալ Համարուի, և Ներքին Գործոց Աստիկանին այս բանիս վերայ տեղեկութիւն արուի:

Պ. Խալիպեանը պատասխանեց Հեռագրով՝ թէ Ասումնարանին պարտքերը վճարելու կարողութիւն չունիմ, ինչպէս որ նամակով ալ պետի իմացընեմ: Այն նամակին ալ սպասեց վարդապետը մէկ ամիսի չափ, և նոյնպէս բացատրական խօսքեր ընդունելով՝ դրեց Փեթերպուրի Քալիքին Գնդապետին (որ Կաթուղիոսի պատգամաւորին ուշանալուն պատճառաւ՝ Տէրութեան Հրամանովը Մայրաքաղաքը դարձել էր) և պարտքին Հանդամանքը բացատրելէն չետոյ, կինդրէր որ

Ներքին գործոց Ոստիկանին սրտումը ընդունի և իրեն իմացընէ:

Այն միջոցին Պ. Քալեւինը արդէն Ոստիկանին Հետ տեղն է տեղը խօսած լինելով Ուսումնարանին ներկայ և ապագայ վիճակին վերայ, Տէրութիւնը հաւանել էր այսպիսի կարգադրութիւն մի անել Ուսումնարանին ապագայ տնտեսական կառավարութեանը համար: Տէրութիւնը տալ Ուսումնարանին ամէն տարի 11,000ր. (1) 30 աղքատ հայ աշակերտաց համար՝ որ դրսի երկերներէ, մանաւանդ արևելքէն առնուին. Պ. Խալիպեանը տալ 4500 ր. 30 Խալիպեան սաներու համար. վիճակիս եկեղեցիներէն առնուի տարին 3000 ր. 12 աշակերտի համար. մնացած քառասուն կամ աւելի աշակերտները ամէնքն ալ լինին լիաթոշակ:

Եւ որովհետև Վ. Կաթուղիկոսին կողմանէ պատգամաւոր չուղարկուեցաւ այն օրերը Սալադեանց Տէր Մովսէս աւագ քահանայն, Քալեւին Գնդապետն ալ իւր ընկերներովը դարձաւ եկաւ Ռոսթով, և սկսաւ վիճակին գործոցը վերադննութիւնը առաջ տանիլ: Հեռադրով իմացուց Առաջնորդին՝ թէ «Ուսումնարանին պարտքերուն վճարման ճարը մտածուած է, և շուտով անձամբ կրացատրեմ ձեզ. կինդրեմ որ Ուսումնարանը փակելու կարգադրութիւն մի չանէք»: Միանգամայն Պ. Խալիպեանին հետ ևս այս բաներուս վերայ անձամբ խօսել էր. որով և նա ուրախութեամբ կճանուցանէր վարդապետին դրով՝ Տէրութեան արած առատաձեռնութիւնը, և իւր անունը ունեցող Խալիպեան Ուսումնարանին այն կերպով հաստատութիւն առնուլը:

(1) Այս գումարին հիմն էր նախ այն՝ որ վիճակին եկեղեցիներէն քը-  
ժուարէն էր քարէն 3000-էն աւելի եկամտի սպասել. երկրորդ որ Խալի-  
պեանց քարէն 4500-էն աւելի բան քարու խոմէ չունէր:

Այս լուրին հետ մէկ տեղ լսեց յանկարծ Գաբրիէլ վարդապետը օգոստոսի 22-ին թէ ինքը Կոստանթնուպոլիսի վիճակին արձակուել է (չուլիսի 16-ին) Նախիջևանի և Պեսարապիտի վիճակին կառավարութիւնէն: Չղարմացաւ նա այս բանիս, վասն զի գիտէր թէ այն միջոցին ի՞նչ սաստիկապահանջ գրութիւններ արած էր Վ. Կաթուղիկոսը առ Տէրութիւնն, և իւր հակառակորդները ի՞նչ կարգէ դուրս դործունէութեամբ կաշխատէին իրեն դէմ: Բայց չիրաւի զարմացաւ մեծապէս՝ երբոր երկու օր վերջը իմացաւ հեռադրով թէ Մատթէոս Կաթուղիկոսը նոյն օրը օգոստոսի 22-ին՝ վախճանել է ի Ս. Էջմիածին՝ կարճատե հիւանդութեամբ, առանց լսելու դոնէ Գաբրիէլ վարդապետին պաշտօնէ հանուելուն աւետիար:

Մինչդեռ կապասէր վարդապետը իմանալ՝ թէ Ուսումնարանին վիճակը ի՞նչ պիտի լինի, լսեց որ արձակուել է ինքը նաև նորա վերատեսչութիւնէն, ու Պ. Խալիպեանին և Քալեւին Գնդապետին առաջարկութեամբը՝ Ուսումնարանին առժամանակեայ կառավարիչ որոշուել է ու Թէոդոսիա ևս հասել է Տեղբանեան Պ. Սարգիսը, որ առաջ Տեսուչ եղած էր Ուսումնարանին:

Քիչ ժամանակէն եկաւ Թէոդոսիա նաև Յանձնաժողովը՝ Կոնստանտնուպոլիսի գործերը քննելու, և այն միջոցին, այսինքն սեպտեմբերի 17-ին՝ Գաբրիէլ վարդապետը բոլորովին քաշուեցաւ Ուսումնարանին կառավարութիւնէն. իսկ հոկտեմբերի 12-ին, — ճիշդ այն օրը՝ չորրորդ և յետոյ տարի առաջ կատարուած էր Խալիպեան Ուսումնարանին բացման հանդէսը, (1) օրինաւոր ցուցակով յանձնեց վարդապետը Պ. Տեղբանեանին Ուսում-

(1) Տե՛ս էջ 53:

հարանը, նորա հաշիւները, տպարանը, և նորա ամէն գործիքները հանդերձ գրասենեկով:

Այս անցքերուն պատմութիւնը՝ ո՛րքան ալ կարճաւուրտ կերպով դրուած է այս տեղ, եթէ մէկը ուշադիր և անհաւու մտքով կարդայ, չգիտեմ ի՞նչ պէտք է ասէ այն իմաստակաց, այն սոսիստան ազգասիրաց՝ որ Գաբրիէլ վարդապետին վերայ վերջին կամ ճիշտ չանցանք և պահասութիւն այս կղնեն որ իբր թէ նա Խաչիպետի ազգային ուսումնարանը հասնել է Ռուսաց Տէրութեան ձեռքը . . . Ի՞նչ պիտի ասէ, եթէ ոչ այս. «Ոչ գիտէք զի՞նչ խօսիք, և ոչ վասն որո՞չ իրաց պնդեալ էք.» ձեր չգիտցած՝ չհասկացած բանին վերայ կխօսիք ու կհակառակիք. տղէտ էք, խեղճ էք, բայց և չանդուզն ու կամակորո՞ւարժանի չէք պատասխանուոյ: (1)

### Գ Լ Ո Ւ Խ Ի Գ.

Նախիջևանի եւ Պեսարապիոյ վիճակին վերադնութեան վերջաւորութիւնը:

Ըստ կարդադրութեան Ոստիկանարանին Ներքին Գործոց՝ Յանձնաժողովը հրաման ընդունել էր որ ամփոփէ վիճակին վերադնութիւնը միայն Անսխատորիացի դրամական հաշիւները քննելու. ուստի և սեպտեմբերի սկիզբէն մինչև հոկտեմբերի վերջին օրը անխոնջ և անդադար աշխատութեամբ այս քննութեան ետեւէ եղաւ:

(1) Վերջերեւոյ պեղելու ժամանակ հէջ հասին իբրև հարկուոր հաստատի քիչ քան և Յաւելուած էր. ի վերջ Պատմութեան:

Անսխատորիացի դրագիրները գրեթէ ամէն օր՝ առաւօտէ մինչև իրիկուն՝ ուստի կը թարգմանէին ու կը ցատրէին Յանձնաժողովոյն աւջեը՝ բովանդակ Մտեալ և Նլեալ դրամական թղթոց տետրակները, և նոցա վերաբերեալ օրագրութիւնները, յայտարարութիւնները, հրամանագրերը, 1858-ին սկիզբէն մինչև 1865-ին հոկտեմբերի 30:

Յանձնաժողովը իւր այս զգուշաւոր՝ մանրակրկիտ և անհաւու քննութեամբը այս մեծ պահասութիւնը դասու Անսխատորիացին մէջ, որ այն ութը տարուան հաշիւները հանոսար հարկաւորութեամբ և անսխալ ճշդութեամբ չեն գրուած, մանաւանդ առաջին տարիները, այլ քանի մի տեղ կրկնութիւններ կան, մէկ քանի տեղ զանցաւորութիւններ, քանի մի տեղ ալ օրագրութեանց և յայտարարութեանց պահասութիւններ: Բայց միանգամայն այս ևս հասկացաւ թէ օրինաւոր և կանոնաւոր հաշուեկալութիւն՝ Տէրութեան պահանջած ձևերովը՝ ոչ երբէք եղած էր այն Անսխատորիացին մէջ. և թէ ո՛րքան ալ կանոնաւորութիւն կերէին՝ այժմուս Սոսիստանի նորապարտութեան ժամանակ ոչինչ է հասնել հետզհետէ: Գիտելու բան մի ևս այս էր, և Յանձնաժողովը լաւ հասկացաւ, թէ Անսխատորիան զուրկ էր գործունեաց Անդամներից, և հմուտ Ատենագրերներից: Այս պահասութեան ևս արդարացուցիչ պատճառները հասկացաւ, որոց գլխաւորն էր Թէոդոսիոյ մէջ վարդապետներ և աւելի քահանաներ ունենալուն դժուարութիւնը, ևս և Առաջնորդին խտտութիւնը ընդդէմ կաշառակերութեան պաշտօնէից և այլն:

Այս ամենայն պահասութիւններով հանդերձ՝ տեսաւ և վիպից Յանձնաժողովը, դրամական հաշիւները քննելով, որ բովանդակ ութը տարուան մէջ եկեղեցական դումարաց և վիճակային արդեանց Մուտքն և Նւրը գրեթէ հաւասար են, մինչդեռ չարախօսները այն-

պէս Հասկացուցեր էին Վ. Կաթուղիկոսին, և նա այնպէս գրած էր Տէրութեան, որ իբր թէ 50 կամ 100 կամ նաև 200 Հազար բուպլի բաց կայ, որ Գաբրիէլ վարդապետը վատնել է, փճացուցել է և կամ կերել է: Բայց արդարութիւնն Աստուծոյ չթողուց որ մարդկային անիրաւութիւնը չաղթանակէ մինչև իսպառ, այլ Տէրութեան միտքը ձգեց նշանակել անկողմնասէր անձինքներէ բազմացեալ Յանձնաժողով մի՝ որ ճշմարտութիւնը դուրս ելնէ:

Իբրև է որ Յանձնաժողովը Կոնստատրիպլի Մտից և Նլից Հաշուեմատեանները մանրամասն քննութեամբ աչքէ անցընելէն չետոյ, գտաւ որ Մուտքը Նլքէն աւելի էր 6160 բուպ. և 33 քով.: Բայց այս գումարին ևս տեղը դիւրաւ գտնուեցաւ. վասն զի զանազան դումարներ կային Կոնստատրիպլին անուսովն եկած այլ և այլ ժամանակ, որ անցուած էին Մտից կամ Արդեանց Հաշուեմատեանը, բայց Նլից կամ Ծախուց Հաշուեմատեաններուն մէջ չէր գրուած նոցա դիմացը, ինչպէս որ Հարկը կպահանջէր, թէ այս գումարը տրուեցաւ Առաջնորդին, թէպէտև Առաջնորդը արդէն ընդունել և Խալիպեան Ուսումնարանին կամ նոյն իսկ Կոնստատրիպլին վերայ խարճել էր: Նւ այսպիսի ատենական զանցառութեամբ ծախս չգրուած փողերուն գումարը ոչ թէ վէջ հաւար, այլ և 12 Հազարի կհասնէր: — Յանձնաժողովը այս բացատրութիւնը լսելով և արացոյցները աչքին առջևն ունենալով, ուրախակից անգամ եղաւ վարդապետին:

Մէկ պահատութիւն մի միայն կերեւար Յանձնաժողովոյն կազմութեանը մէջ, որ էր Սալադնեանց Տէր Մովսէսին պատգամաւոր (Տէր-Լալ) ընդունուելը. վասն զի նա առաջին վերադննելներէն մէկը լինելով՝ չէր կարող պատգամաւոր նշանակուել ըստ օրինի այն Յանձնաժողովոյն մէջ՝ որոյ առաջին պաշտօնն էր՝ Անդրէաս

Նպիսիոպոսին արած վերադննութեան Հիտեանքները քննել: Սալադն այս պահատութիւնն ալ իւր օգուտը ունէր այս կողմանէ, որ Հակառակորդները չկարենան ասել՝ թէ Յանձնաժողովը կողմնասիրութեամբ կամ թուրութեամբ կատարեց իւր պաշտօնը, և պատգամաւորը նորա Հետ Համաձայնեցաւ ամէն բանի մէջ:

Նոյնմբերի սկիզբէն ճանապարհ ելաւ Յանձնաժողովը, և իւր բաղմաթերթ տեղեկագրոյն մէկ օրինակը տարաւ Փեթերպուրի, միւսը չուղարկեց Նոր Ռուսիոյ Բնդհանուր Կուսակալին, և երբորդը՝ Կաթուղիկոսին պատգամաւորը Հետը տարաւ Ե Ս. Էջմիածին:

Մինչև 1866 տարւոյն օգոստոսի 10 յայտնի չէր թէ Ներքին Գործոց Ոստիկանարանը ինչ գատողութիւն կամ վճիռ արած է վերադննութեան Յանձնաժողովոյն եղբակացութեանը վերայ: Նւ ահա այն օրը առաւ վարդապետը Նոր Ռուսիոյ և Պետարպուրի Կուսակալէն. կէս պաշտօնական գիր մի՝ օգոստոսի 5-ին գրուած, չորում կասէր թէ՛

«Ներքին Գործոց Ոստիկանը ծանոյց ինձ Յուլիսի 16-ին, Թ. «84, գրով թէ ըստ խոնարհական առաջադրութեան յաղագս «եզրակացութեանց աշխատութեանց Յանձնաժողովոյն կարգելոյ «վասն վերադննութեան վեճակին Հայոց Նախնիքանի և Պետարպուրիոյ, Վ.Ն.Ս.Ս.Ս. ԿԱՅՍՐԻ Բարձրագոյնս Հրամայել բարեհաճ «ձեցաւ որ փախուի այն Յանձնաժողովը, և այնպիսի ճանապարհ «բռնուի որ այն անկարգութիւններն որ Յանձնաժողովը գտած է եկեղեցական ստացուածոց տեսչութեանը մէջ՝ շտիպել: Այլ «և ի նկատի ունենալով ձեր ունեցած աշխատութիւնները՝ Կայսերական Հաւանութեամբ Խալիպեան Ուսումնարանը բացուելուն վերայ, խորհրդակցուի Կովկասու Վսեմախաւ ֆոխարբոյին «ու ֆոխարբոյի Կայսերական Ստենագրքին (Վեչեանոյէ) Հետ՝ «թէ օգտակար չը՝ ճանչցուի արդեօք թողուլ գձեղ առանց այլ «ևս Հետամտութեան, միայն և թէ լրացնէք այն գումարը «(6160 բ. և 33 բ.) որ Յանձնաժողովոյն Հաշուովը կպահար:»

Գաբրիէլ վարդապետը պատատխանեց Կուսակալին՝ թէ ինքը մէկ կողմանէ կարողութիւն չունի այն գումար

մարը վճարելու, մէկ կողմանէ ալ կհասկածի ու կզարմանայ որ իրեն այս դումարին համար 1865-ին հոկտեմբերը 27-ին 564 թուահամարով տուած բացատրութիւնը ինչպէս վերաբերէ Վսեմափայլ Ոստիկանին մտադրութեան:

### Փ Լ Ո Ւ Խ Ի Ե.

Նդիտար Արքեպիսկոպոսին Նախիջեանի եւ Պեսարպոյ վիճակին կառավարիչ գրուիր:—Երեւանի Յաջորդութեան Գարրիէլ վարչապետին առաջարկուիր:

Գարրիէլ վարդապետին առաջնորդութենէ արձակուելուն վճիռը ելած էր, ինչպէս որ տեսանք, 1865-ին յուլիսի 16-ին: Այս վճիռը կարգաց նա լրագրաց մէջ օգոստոսի 22-ին,—Մատթէոս Կաթուղիկոսին վախճանած օրը,— և իստք տուաւ Աստուծոյ որ աղատեցաւ այն անտանելի նեղութիւններէն որ քաշել էր ուրիշ: Բայց որովհետեւ ըստ օրինաց ոչ ոք կարող է թողուլ իւր պաշտօնը՝ մինչև որ իրեն տեղը նշանակուած նոր պաշտօնատէրը չգայ ու չընդունի իրմէ ամենայն դորձ և խնդր, հարկ եղաւ որ Գարրիէլ վարդապետը տեսնանք համօք շարունակէ վիճակին կառավարութիւնը ալ ևս ինը տասը ամիս, սպասելով իւր չաջորդին գալըստեանը:

Վեկտեմբերի վերջերուն ընդունեցաւ վարդապետը Ներքին Գործոց Ոստիկանին մէկ նամակը, չորում կճանուցանէր թէ Էջմիածնաց Աթուոյն Տեղապահ Առլանեան Յովհաննէս Արքեպիսկոպոսը առաջարկել է որ վիճակին կառավարիչ նշանակուի Էջմիածնաց տաճարին Աւագ Լուսարար Նդիտար Արքեպիսկոպոսը, և Վեհա-

փառ Կաջարը հրամայել է (Նոյեմբերի 22-ին) որ այն անձը որոշուի Առաջնորդի Կառավարիչ վիճակին այնպէս որ երբ նոր Կաթուղիկոսն ընտրուի, նա՛ առաջարկէ Տէրութեան երկու անձ, և Վեհափառ Կաջարը այն երկուքին մէկը հաստատէ Առաջնորդ վիճակին Նախիջեանի և Պեսարապոյ: Նոյն կարգադրութիւնը հաղորդեց վարդապետին նաև Սինոդը՝ զեկտեմբերի 7-ին գրուած հրամանագրովը՝ չորում կենացընէր թէ Նդիտար Արքեպիսկոպոսը պէտք է շուտով գայ Թէոդոսիա, Կոնստանտնուպոլիս մէջ երդնու օրինադրեալ երդումը, և ընդունի վիճակին կառավարութեան գործերը, և զԳարրիէլ վարդապետը կհրաւիրէր երթալ և իրաւաստիցութեան Աթուոյն:

Նդիտար Արքեպիսկոպոսը ճանապարհ էլաւ Էջմիածնէն 1866-ին մարտ ամսոյն սկիզբները, բայց Թիֆլիզ ուշացաւ մէկ ամիս, և չետոյ ուղղակի Նոր Նախիջեան երթալով հասաւ այն տեղը ապրիլի 22-ին: Գարրիէլ վարդապետը պատշաճ համարեցաւ մասնաուր նամակով մի շնորհաւորել իւր չաջորդին գալուստը, և մեանդամայն չայտնել՝ թէ կոպատէ նորա օր առաջ հասնելուն և Թէոդոսիա, որպէս զի գործերը և վիճակին կառավարութիւնը չանձնէ ձեռքը: Իսկ Նդիտար Արքեպիսկոպոսը զրեց վարդապետին մայիսի 12-ին՝ որ վիճակին կառավարութեան գործերը չանձնէ կոնստանտնուպոլիս, որովհետեւ ինքը քանի մի կարևոր գործոց պատճառաւ պիտի ուշանայ և Նախիջեան:

1866-ին մայիսի 23-ին չանձնեց Գարրիէլ վարդապետը Կոնստանտնուպոլիսն որքան զբուսածք, զբամ ու հաշիւներ որ մնացել էին զեռ իւր քովը, և այնպէս էլաւ արքային այն աղագլին ծառայութեանէն՝ զոր չանձն առել էր և իստու Արարչին և չօգուտ մանկանց Աղդին իւրոյ, և զոր կատարել էր ըստ իւրում կարի շնորհուն Աստուծոյ՝ ասելով միշտ իւր միտքն մէջ. «Ծառայ անպիտան եմ. զոր պարտ էին առնել արա-

րի:» Միանգամայն իսառ թուաւ Աստուծոյ որ նախ շօրացոյց զինքը Համբերելու բաւական երկայնմտութեամբ այնքան նեղութեանց և տառապանաց, և ապա բարեհաճեցաւ աղատել՝ զրեթէ նոյնպիսի աստուածային գթութեամբ, որով ասած էր երբեմն իւր երջանիկ Առաքելոց. «Նկայք դուք չանապատ, և Հանգեալք սահաւ մի.—զի էին բազումք (կասէ սուրբ «Աւետարանը) որ երթացին և դային, և (առաքելքն) «Հաց անդամ չժամանէին ուտել:» Եւ կլէշէր մտքին մէջ Տա՛նթէ բանաստեղծին գեղեցիկ խօսքերը թէ

«Եւ այն մարդուն նրման որ շունչն է բերան  
Նղերքն է դուրս ելած ահեղ անդունդէն  
Գառնայ Հացի կատաղի ջուրցը վերան,  
Իմ Հոգիս այլ՝ որ դեռ երթայր իսկնչէլէն,  
Գարձաւ չետիրչս տեսնել դարձեալ այն անցքը  
Ուտի չըկայր ողջ աղատուած մէկ անձ մը:»

Նախիջևանի և Պետարապետի վիճակին Նոր Կառավարիչը արդէն Նախիջևանի Հոգևոր Կառավարութեանը մէջ սովորական երդումն արած ու ամէն գործ ձեռքը առած լինելով, Թէոդոսիա Հասաւ չունիսի Ծին, և Գարբիէլ վարդապետը երկրորդ օրը գնաց Սրբազանին տեսութեան, ու չետոյ դարձաւ նորէն իւր առանձնական գրաւոր աշխատանացը պարապելու Հանդարտ և անդորրաւէտ կենցաղավարութեամբ՝ որում քանի՛ տարի է ի վեր կարօտ մնացած էր: (1)

Այն Հանդարտութիւնն ու անդորրութիւնը մէկ երկու օր ընդհատեցաւ անակնկալ զիպուածով մի,

(1) Ոչ սակաւ Տիբլիսիացի էին իրեն նաև այն պէսպէս նարեցական համայնքը շրտ լինողներն այլ և այլ նորձերէ. յորոց Տէրունը, այսինքն Մոյսա-իոյ Պօլո-շան բողոքի աղիւ և արդիւնական վարձապետին Գրքած օրինակի համար նրանց: Պատմութեան վերջը. Դեռ Յ աւ է լ ու ա ծ Ը:

բաց դարձեալ իւր ընթացքը դտաւ: Եւ զիպուածը այս էր:

Նրեանի Յաջորդը Ստեփան Արքեպիսկոպոսը յախճանած լինելով, քաղաքին իշխանաւորները խնդրել էին Սինոդէն որ իրենց Յաջորդ նշանակուի Այվաղեան Գարբիէլ վարդապետը: Սինոդը չէ չասաց նոցա խընդրոյն, և խոստացաւ որ Հեռադրով Հարցանէ նախ վարդապետին՝ յանձն կառնու՞ աչն պաշտօնը թէ ոչ: Ղահրաման Աղայն Մելիք-Աղամալեան, Նրեանի Ժողովրդեան կողմանէ իմացուց վարդապետին Հեռադրով այս խորհուրդը (վերաբուարի 22-ին), խնդրելով որ յանձն առնու աչն պաշտօնը: Վարդապետը խօսչն պատասխանեց իշխանին՝ նոյնպէս Հեռադրով՝ թէ «Շնորհակալ եմ ձեր մտադրութեանը. բայց չեմ կարող յանձն առնուլ առաջարկուած պաշտօնը. պատճառները կրապատրեմ նամակով՝ երբ որ Սինոդին առաջարկութիւնն «ընդունիմ:»—Նրիւ օրէն Հասաւ նաև այն առաջարկութիւնը՝ Տեղապալչին ստորագրութեամբը, և վարդապետը պատասխանեց թէ «Պէսպէս կարևոր պատճառներով չեմ կարող ընդունիլ ո՛ր և իցէ պաշտօն. այն պատճառները նամակով կրացատրեմ:»

Եւ չերաւի, մարտի 1-ին զրեց առ Տեղապալչն առաջիկայ նամակը.

Ամենապատիւ Սրբազան Տէր.

«Ընկալեալ է 24 վերաբուարի զՀեռադրական նամակ Սրբութեանդ, որով Հարցանէիք եթէ առնուցում յանձն զպաշտօն Յաջորդի վիճակին Նրեանայ՝ յոր Ժողովուրդքն կարգել խնդրեն զիս, ետու անդէն Հեռադրով պատասխանի՝ թէ անհնար է ինձ յանձն առուլ զայն՝ ըստ պէսպէս կարևոր պատճառաց, զորս և խոստացայ նամակադրութեամբ պարզբանել, և ահա վերթամ է կատարումն խոստմանս:

«Ապաքէն քաջապատ է Սրբութեան Ձերում, որպէս և Անդամոց Սինոդիդ Սրբոյ կջմիածնի, թէ Հանդուցեալ կթուղիկոնս «Մատթէոս ո՛րպէս վարեցաւ ընդ իս մինչ կենդանին էր, զողցես

«զամենայն առուրս Կաթողիկոսութեան իւրոյ: Եւ թէպէտ ծանր  
 է հզանգուցելոյն զրոյց ի մէջ առնուլ, իբր զի ըստ բարոյական  
 շառածին՝ «Չմուսուլմանի կամ բարիս արժանի է խօսել, կամ ոչինչ»  
 ամանաւանդ զի զօծեալ Հայրապետէ ազգիս է բան, սակայն ի  
 «Հարկէ Հանգամանաց Ժամանակիս և յառաջարկեալս խնդրոյ  
 բռնադատեալ՝ սասցից սակաւս ի բազմաց առ ի նմանէ ինձ հա-  
 սուցեալ վշտայն և փնասուց: Եւ նախ զայն՝ զի երկեցս կոչեալ  
 զիս յԵջմիածին, և երկեցս անդատիւ (ըստ կարծելոյ ոմանց) դար-  
 ձնոյց զիս այսրէն, ի տրամուլթիւն բարեւէր ժողովրդոց վիճա-  
 «կիս—Ներքորդ՝ զԱրքայապետին անուանեալ զբրոյն իմ՝ զորոյ  
 զտպաղբութեանն հրաման ընկալեալ էի ի Սրբազան Պատրիարքէն  
 «և ի Հոգեւորական Ժողովոյն Կ. Պօլսոյ յառաջ քան զկարգելս իմ  
 «Տեղակալ Առաջնորդութեան վիճակիս, եւ թարիեալ էի խոնար-  
 «Հարար յամին 1859 զերազոյն դատաստանի և քննութեան Կա-  
 «թողիկոսին, և նա ի բաց եթող ելլիք զայն պէտպէս պատճա-  
 «ւանօք մինչև խոսուլ:—Ներքորդ, ի շարադրածս իմ—տպաղբեալս  
 «յիտ վերադարձիս ի ծոց մայրենի Եկեղեցւոյ—որպէս թէ մոր-  
 «բութիւնս ինչ և վրեպակս մեծամեծս ի վեր հանեալ, փոխանակ  
 «ինձ զնոսին՝ որպէս օրէնն էր՝ ցուցանելոյ, տեսարկս յինքնէն  
 «շարադրեալս և լիս իրան ճեճածն տպաղբութեանց՝  
 «Իբր ի հերքումն իմոյն՝ ի տպարանի Սրբոյ Եջմիածնի և այլուր,  
 «և հրատարակեաց յազգին՝ յանհարկն զայթակողութիւն բարե-  
 «միա հաւատացելոյ:—Չորրորդ, ունկնդիւր եղեալ չարխօսու-  
 «թեանց սուտակասպաս մարդկան, առանց օրինաւոր քննութեան  
 «ամբաստանեաց զինէն առաջի Ազգին և Պետութեան ևս Ռու-  
 «սաց՝ իբրև զեկեղեցիակողոզուտ վիճակաւորէ, թէպէտ և զիտելով  
 «զիտէր և նա ինքն, որպէս և ամենայն ոք, թէ յինչ ինչ ի գործ  
 «արկեալ էր իմ զգուժմարս եկեղեցեաց վիճակիս, և այն ո՛րպէս, և  
 «ո՛յր հրամանաւ:—Հինգերորդ, զամենայն հարս հնարեցաւ առ ի  
 «խափանելոյ զհոյակապ Ռատմարանն Խաղկեան, զոր այնքան  
 «տաւապանօք և աշխատութեամբ և անչափ ազգային դրամով  
 «հիմնեցի, և զոր զամս ութ անհնարին տաւապանօք յառաջ վա-  
 «րեցի, զեկալարելով, անտեսելով, և անձամբ իսկ զաստիճակով  
 «ի նմին՝ միշտ ձրեալար, մանաւանդ թէ և զիմ սեպհական ար-  
 «զլւնս ի նոյն ծախելով, հանդերձ վտանգաւ կորստան անդամ  
 «մարմնական առողջութեանս: Ընդ նմին հնարեցաւ խափանել և  
 «զհրատարակումն զոր առնէի՝ պիտանի դրեւոյ և օրագրի ի տպո-  
 «ւանի անդ Ռատմարանին:—Վեցերորդ, զանարժանազոյնս ի  
 «քահանայից վիճակիս վարձատրեաց և մեծարեաց խաչիւք պա-  
 «րանոցի և կարմիր դոստիօք և աւազ քահանայութեամբ՝ միայն

«վասն այնորեկ, որպէս հաւաստեալ զիտեմ, զի բնութայեալ  
 «էին ընդդէմ վիճակաւորիս իւրեանց, և չարխօսեալ էին զինէն  
 «առ ինքն, և զարժանաւորազոյնս ի նոցանէ անվարձս եթող և  
 «անարդեաց, և սրատուհասակո՞ծ ևս արար, միայն վասն այնորեկ  
 «զի հնազանդք էին օրինաւոր հրամանաց իմոց և Կոնստանտնուպոլսի  
 «վիճակիս, և զի ես էի որ խնդրէի վասն նոցա զարժանին վար-  
 «ձատրութիւնս:—Նոթենքորդ, ընդ սրատուակաւ վերադննութեան  
 «զործոց վիճակիս՝ առաքեաց այսր զձեռնասուն աշակերտն իւր,  
 «զի բարուրս զինև շիեալ՝ ընկենտուցու զիս ի պաշտօնէ, և զնա  
 «փոխանակ իմ կարգեացէ, և օգնական և խորհրդական ետ նմա  
 «զերէց ոմն, որ թէ որպէսի որ համբաւեալ է ամենայն ուրեք՝  
 «ոչ է հարկ ասել:—Եւ ութերորդ, զողջես կամակար մտօք ի  
 «մուսացօնս արկեալ՝ թէ ո՛րչափ ինչ կիրս և հարածանս կրեալ  
 «էր իմ երկնիմ ի հարկակալանաց անտի, և թէ ո՛րքան և ո՛ր-  
 «պէսի վաստակօք յայտ արարեալ էր իմ, զէթ յերկոտասան ամաց  
 «հետէ, զհարազատութիւնս իմ առ Հայաստանեայցս սուրբ Եկե-  
 «ղեցի, բազում անդամ ամբաստան եղև զինէն առ իւրսն և առ  
 «օտարս բանիւ և դրով՝ իբրև զառնէ կախածելույ ի վարդա-  
 «պետութիւնս իւր, մանաւանդ թէ և զմտրեցուցէ Ազգին, մերթ-  
 «ւասելով թէ լատինացուցանել կամիցիմ զՀայս, և մերթ թէ ի  
 «բողոքականութիւն զնոսա շրջել ջանայցեմ, և մերթ ևս՝ թէ ի  
 «յուշականութիւն որսալ զնոսա ներսեցիմ, և որ այլն ևս:

«Արդ, Սրբազան Տէր, Կաթողիկոսն այն հանդեաւ արդարև  
 «մահուամբն ի վշտալի Կաթողիկոսութեանն իւրմէ. հանգեաւ և  
 «կրկն անտի՝ որովք զիսն հալածել խոկայր զտիւ և զգիշեր, թէ-  
 «պէտ և անդորբութեան սրտի իմոյ և խղճի ոչինչ կարաց այնու ա-  
 «մենայնիւ սոնանել, զի վկայէր ինձ Աստուած զոր պաշտեմնս հող-  
 «ւով թէ անպարտ եմ ես յամբաստանութեանցն՝ զորս առնէր  
 «զինէն Կաթողիկոսն, որում բազում անգամ մաղթեալ եմ յԱս-  
 «տուծոյ, և զարձեալ մաղթեմ՝ զթողութիւն որ առ իս յանցա-  
 «նայն. քանզի ել Հողի նորա ի նմանէ, և զարձաւ անդրէն ի  
 «Հող, և յայնմ առուր կորեան ամենայն խորհուրդք նորա: Սա-  
 «կայն,—բայ մտ զնել աղաչեմ բանեցս, Սրբազան Տէր,—սա-  
 «կայն փառքն բազմապատիկք և մեծամեծք զորս հասոյց նա ա-  
 «հուանս իմում:—զի՞նչ ասեմ անուանս,—այնքանեաց տաժանելի  
 «և բազմաճախ ձեռնարկութեանցն իմոց յօգուտ Ազգիս և վիճա-  
 «կիս, փնանքն այնորեք իբրև զծուխ հնոցի զեղացեալ բարձրա-  
 «ցեալ կան տակաւին զաւերափօքն բարոյականօք, որովք ծածկե-  
 «ցաւ լցաւ վիճակս այն հաւատացեալ իմոցս խնամոց, վիճակ՝ որ  
 «գուցէ և առաւել քան զոմնսն ի վիճակաց Հայաստանեայց Եկե-

«զեցեայ յայժմու ժամանակիս՝ և յառաջադիմութիւն և ի պայ-  
«ծառութիւն թեակրիսէր ըստ բազմացն վիայելոյ: Նւ յերաւի զի  
«ահա այժմ՝ յոլովք ի բարեմիտ ժողովրդականաց վիճակիս, մա-  
«նաւանդ թէ և ամենեքեան առհասարակ, բաց ի սակաւուց ու-  
«մանց, տեսեալ զայնպիսի դնացս Կաթուղիկոսին ընդ Առաջնորդի  
«իւրեանց, դեռ ևս զայժակզեալ կան չարաչար, և յանմխիթար  
«տըտմութեան թարթային տարակուսեալք: Այժմ՝ խաղաղասէրքն  
«և խոնարհամեծք յեկեղեցականս վիճակիս՝ յանարդութեան և ի  
«զղբիանս և յողբս յուսակատութեան ճնդին, մանաւանդ որք ի  
«Նորն Նախնիւն. իսկ խաղաղարքն և բանտարկուք, և պարա-  
«զուլքը նոցին՝ կարգեալքն հրամանաւ Կաթուղիկոսի երեքին  
«անդամը՝ Հողեւոր Կառավարութեան տեղւոյն, չար քան զդալս  
«քանասարս կեղեքն և տաւաղեցուցանեն զժողովրդականն և  
«զքահանայակցս իւրեանց. և որ և՛ս զարմանային է և ցաւալի,  
«զի աւաղակարարոյ քահանայքն երեքին պարծին ևս՝ թէ հրա-  
«մանաւ և հրովարտաբար Վինոգիդ առնեն զոր ինչ առնենն:  
«Այժմ՝ Աւսումնաբանն Խալիպեան ամայացեալ ի հարեւրաւոր աշա-  
«կերտացն, և զրեթէ զուրի յառաջնոցն բարեպաշտական կըր-  
«թութեանց, ի վտանգի կայ կրօնասանելոյ և զսեպհական յառ-  
«հուութիւնն իւր, որ էր հայկական ազգայնութիւնն, թէպէտե  
«ըստ նիւթականին դրութեան՝ Հաստատադոյն արդեօք քան  
«զառաւջին իցէ արդէն, կամ եղիցի ի մօտոյ, իբրև զի ի Հասա-  
«բակ ուսումնաբանաց Պետութեան: Այժմ՝ մամուլք շքեղ տպո-  
«բանի Աւսումնաբանին այնորիկ՝ աղբիւրը լուսաւորութեան ոլոր-  
«մելի մանկաւոյ ազգիս որ ի կողմանս յայտուի, զրեթէ լուեալ  
«զաղարեալ կան, և Ծիծառն անուանեալ օրագիր՝ յորում ամնոյ  
«բըզէի տարապեալ ազգայնոցս իբրև քաղցելոց ամնոց արքատաց՝  
«հաց հանապազօրդ, վաղու ևս անհետացեալ կայ յերեսաց թըր-  
«պայորդ և որոտաձայն ամնոցն խուճայելոց զՀայաստան աշխար-  
«հաւ:— Իսկ ևս այժմիկ, յետ այսչափ վատաւոց և քրտանց և  
«տընութեանց և հալածանաց, առաջարկութեամբ Կաթուղիկոսին  
«և հրամանաւ Նորին Կայսերական Վեհափառութեան արձակեալ  
«ի պաշտամանէ, և առանձնացեալ իբրև զձնձիղուի ի տանիս՝ լոկ  
«և թափուր յամենայն մտաւորական մխիթարութեանէ, ևս և ի  
«զբամական նպատակց և ի թռչակաց, և ազգականաց խնոց կարօ-  
«տեալ ձեռնաստուութեան, պարտաւորեալ եմ զանդորրութիւն  
«խղճի խնոց եւթ ունել ինձ բաժին հանդատեան, և զզրոցն  
«միխիթարութիւնս, և օրհնաբանել զամենատուրը կամն Բարձրե-  
«ւոյն, որում և փառս և դոհութիւնս տամ և տաց միշտ յամե-  
«նային:

«Այն ունիմ թէ ներեսցէ ինձ Արքութիւնդ, ներեսցեն և  
«որ զՁեօք մեծարոյ Սինողականք՝ եթէ կարեւոր դատեցայ զայս  
«ամենայն կիրս իմ զանցեալն և զներկայս՝ Համառօտել այսպէս  
«աստանոր: Քանզի կամիմ ի Ձերդ արդարադատ խոհականութեան  
«առնել ապաստան զուճուսն խնդրոյդ կարեւորի, թէ որպէս  
«և կամ զիս՝ իցէ ինձ հնար յանձն առնուլ վերստին և այ-  
«ժմէն զպաշտօն Վիճակաւորի կամ Յաջորդի, կամ թէ ընաւ խի  
«ժողովրդապետի, սւր ուրեք և իցէ, մինչև արդարացեալ իցեմ՝  
«ի բազմապատիկ և ի բազմակնձեռն յանցուածոց՝ և կասկածա-  
«ւնաց և ամբաստանութեանց բարդելոց ի վերայ իմ և ի վերայ  
«զործոց իմոց և գիտաւորութեանց, և այն՝ ոչ ի վայրագար  
«և ի վարկաբարդ մարդկանէ, այլ ի վեհափառ Կաթուղիկոսէ  
«ամենայն Հայոց. և այն՝ ոչ բանիւ եւթ բերանոյ, այլ և աշ-  
«խարհաբարոյ կնդակօք և տպադրեալ տետրակօք. ոչ առ աղ-  
«եղայինս եւթ և առ մերձաւոր ընտանիս, այլ և առ օտարս և  
«առ Պետութիւնն զլիսովինս: Նւ զինչ օգուտ, կամ ո՞ր ակնկա-  
«ւութիւն բարեաց ինկցի այսուհետե յինչն՝ յառնէ այսպէս  
«վատահամբաւելոյ, և գէթ կասկածելի եղելոյ յաջս մեծի և  
«վորու՝ իւրոյն գնացելք և վարդապետութեամբ և գրուածովք:  
«Կարձեալ և զայն չկարեմ իմանալ՝ թէ զիս՝ հնար իցէ ինձ  
«չյանձն առնուլ զՅաջորդութիւն վիճակին Արեւանայ, որոյ թե-  
«մակալ Առաջնորդ Կաթուղիկոսն է՝ ըստ այժմու օրինաց, մինչ-  
«դեռ չեւ ևս լեալ իցէ ընտրութիւն Կաթուղիկոսի, և ոչ իսկ  
«չյայտնի՝ թէ որպիսի՞ ոք նա լինիցի, և ոչ՝ թէ զիս՝ հայեացի  
«և նա յես և ի գործս իմ և ի գիտաւորութիւնս:

«Իսկ եթէ ինչիւր Հասարակութեանն Երեւանայ, ընդ որ հա-  
«ւանեալ թուի և Սինողդ՝ վասն հնդամնեայ ժամանակի եւթ  
«իցէ, յետ այնորիկ ի ձեռս և ի կամն նորոյ Կաթուղիկոսին գո-  
«ւով ի բաց տարադրել զիս և անտի, թուի ինձ թէ յաւերդաց  
«սակի իցէ և տեղափոխութիւն այդպիսի յաշխարհս հեռաւորս,  
«և որ վասն այնորիկ ծախք և բանադնացութիւնը:— Իցէ այն  
«որպէս և է, սակայն ես չկարեմ ապաքէն, Արքայան Տէր, այ-  
«ժմէն զյանձնաւականն տալ պատասխանի՝ մինչև Կաթուղիկոսն  
«այն հանցէ ի լոյս և զարդարութիւն իմ, և զմտացս իմոց ուղ-  
«ղութիւն, և զձեռնարկութեանցս օգտակարութիւն, և կամ  
«գէթ հրաման ինձ տացէ հրատարակել տպադրութեամբ զստոյդ  
«պատմութիւն ամենայն անցիցն անցելոց ընդ իս յուրից ա-  
«մնոյ ժամանակիս յերեսաց ամբաստանութեանցն Մատթէոսի Կա-  
«թուղիկոսի և կամաբարաց նորա, պատմութիւն՝ զոր և պատ-  
«բաստեալ է իմ արդէն ի հրատարակումն:

«Չեք երկբայութիւն՝ զի հաւանութիւն Սինողդդ Սրբոյ Եջ-  
 «Միանայ՝ և ի կատարումն ինդրոյ բարեպէր Հասարակութեանն Ե-  
 «բեանայ՝ ոչ սակաւ հզօր սպայոյց է յաչս իմ՝ Թէ ուրեմն ո՛չ  
 «նոյլին հայեցուածով՝ նկատեալ տեսանէ զգործս իմ և Սինողդ,  
 «դէ՛ծ այժմ, որով և հանդուցեալ Կաթուղիկոսն Մատթոս տե-  
 «սանէր. այլ և զործնական իմն հերքումն համարեմ՝ զառաջար-  
 «կութիւնդ զայդ՝ անհիմն կասկածանացն և երեւելեպեալ յան-  
 «ցաւորութեանց՝ զորս դեղեաց նա ի դլուէս իմ և դնաց, և ո-  
 «բոց մին ևեթ բաւական խի էր, եթէ ճշմարեա էր, առ ի  
 «բացէ ի բաց մերժելոյ զիս յամենայն եկեղեցական դործոց, քան  
 «Թէ՛ զնորին հակառակն՝ հաւատալ յիս վերստին զտեսչութիւն  
 «միոյ յերեւելի վիճակաց Հայաստանեայցս եկեղեցւոյ, այսինքն է  
 «զերեւանին: Սակայն ո՞ կարէ երաշխաւորել ինձ, Սրբազան Տէր,  
 «եթէ և ամենայն ոք առհասարակ զնոյն մեկնութիւն տացէ  
 «զործոյդ, մանաւանդ ի ժամանակի աստ պարագութեան Հայրա-  
 «պետականին Աթոռոյ: Եւ այն խի չլցէ՞ շատ պատճառս տալոյ  
 «չարախնդից ոմանց բաջաղել, Թէ քանզի յայտնի իմն է Ամենա-  
 «սպառիւ Սրբութեանդ և ոմանց ի Սինողական անդամոց և ի  
 «պաշտօնէից առ իս բարեհաճութիւն, հնար իմն են այսօրիկ և  
 «հեթեթանք կողմնասիրութեան, և ընդ այլս ոմանս հակառա-  
 «կութեան, և որ այլն ևս:»

«Չայս ամենայն հարկ և պատշաճ համարեցայ առաջի դնել  
 «աստանօր Սրբութեանդ՝ յերկարագոյն բանել, յայն սակա և եթ՝  
 «զի ծանկեց Սրբութիւնդ, զի ծանկեցն և որ առ Ձեօք Ատե-  
 «նակալքդ պատկառելիք, Թէ ոչ վայրագար և տղայական դրժ-  
 «կամակութեամբ իմն հրաժարեմ ես ի պատուաւոր պաշտամանէն  
 «առաջարկելոյ ինձ ի Սինողդդ՝ ըստ ինդրոյ մեծարգոյ Հասարա-  
 «կութեանն Երեւանայ, այլ արդարեւ ի ծանուցեց ստիպեալ պատ-  
 «ձառաց, և ի դաւն և յանստոյգ հանդամանաց ժամանակիս:»

«Թող ապա ընտրեսցի նախ Կաթուղիկոսն ամենայն Հայոց, —  
 «զոր դուցէ ոչ ևս ի բարկութեան իւրում շնորհեացէ մեզ Սա-  
 «տուած, այլ յամբաւ որդմութեանն ի վերայ Ազգիս տառապե-  
 «լոյ. Թող սկիզբն արացէ նա միանգամ իւրումն ամենաճանր  
 «տեսչութեան և անստերիւր զեկալարութեան՝ որում կարօտի  
 «յոյժ մերս Նիկիեցի. Թող երեւցուցէ, եթէ արժան համարեսցի,  
 «զնշանակս բարեհաճութեան իւրոյ՝ որպէս ասացի, ընդ ուղղու-  
 «թիւն մտաց իմոց, ընդ օգտակարութիւն ձեռնարկութեանցս, ընդ  
 «անխտեղի ցոյցս հարազատութեան իմոյ և հաւատարմութեան  
 «առ Հայաստանեայց եկեղեցի, և արդարացուցէ զիս առաջի  
 «այժմուցս և ապագայից յամբաստանութեանց նախորդին իւրոյ,

«և ապա Թէ առաջարկեցէ ինձ, — եթէ տակաւն մտայեմ  
 «յայտեմ կենդանի և յուժի, — զպաշտօն ինչ և զգործ որպիսի՝  
 «և իցէ. և ես ոչ դանդաղեցայց կամակատար լինել ըստ իմում  
 «կարել նուիրական հրամանաց արժանընտէր Աթոռակալի Սրբոյ  
 «Ղուսաւորչին իմոյ.

«Յանձն արարեալ զիս յարժանահայց աղօթս Սրբազումար  
 «Ռեխաիդ և Ձեք, մնամ՝

Ամենապատիւ Սրբութեան Ձերում Եայլն:»

«Թ. 30  
 ի 1 Մարտի 1866,  
 ի Թէոդոսիա:»

Այն դրոցն պատճէնը յուղարկեց նոցն օրը նաև  
 Ղահրաման Աղա Եշխանին՝ Հանդերձ այսպիսի նու-  
 մակաւ.

«Աղնուախայլ և Քաջատոհմիկ Իշխան.

«Ի պատասխանել իմում առ հեռագրական առաջարկութիւնն  
 «Ձեր որ ի 22 Փետրուարի, խոստացեալ էի՝ զի յորժամ ընդու-  
 «նիլիմ զառաջարկութիւնն զայն և ի Սինողէն՝ պարզեցից նա-  
 «մակաւ զպատճառսն՝ որոց վասն անկարանամ յանձն առնուլ  
 «զպաշտօն Յաջորդօրէութեան Երեւանի: Ի 24 ամսոյն եհաս ի ձեռս  
 «իմ և այն հեռագիր ի Սրբազան Տեղապահէ Աթոռոյն, որում  
 «և ես հեռագրով զնոյն տուեալ պատասխանի զոր առ Ձերդ  
 «Աղնուութիւն, ահա այժմ և Թղթատարաւ գրեցի առ նա  
 «զնամակ, զորոյ զպատճէնն ընդ ամին հարկ համարեմ առաջի  
 «առնել Աղնուութեանդ ի տեղեկութիւնս:

«Որպէս և տեսանէ Աղնուութիւն Ձեր ի բանից անտի նա-  
 «մակին իմոյ առ Տեղապահն, զլխաւոր պատճառ հրաժարմանս  
 «իմոյ ի պատուաւոր առաջարկութեանէ ձերմէ և Սինողին՝ այս է,  
 «զի ամենեկն անտառաճ՝ և անհնարին խի տեսանեմ յանձն  
 «առնուլ ինձ զայն՝ մինչև ընտրեսցի նոր Կաթուղիկոսն, որ  
 «Թերեւս հաճեցի արդարացուցանել զիս առաջի Ազգին և Տէ-  
 «րութեան յամբաստանութեանց անտի՝ որովք անարգեաց զիս  
 «մինչև խտրաւ նախորդն իւր, և քանզեաց զամենայն զձեռնար-  
 «կութիւնս իմ ի վիճակիս յայտնի. որովհետև առանց այնպիսոյ  
 «նախընթաց արդարացուցման՝ ոչ կարժեմ Թէ ճառայութիւն իմ  
 «օրդիսի՝ և իցէ՝ օգտակար լինիցի ազգիս և եկեղեցւոյ:

«Նն և այլ ևս ոչ սակաւ պատճառք որ արդելուն զիս ի  
 «յանձնառութենէ պաշտաման իրիք յանստոյգ և ի բաղմալտանց

«ժամանակի աստ հանդամանաց և տեսչութեան մերոյ եկեղեց-  
«ւոյն, և ինձ ոչ ի դէպ է զընդ զայնցանէ առ Սինոդն, բայց  
«ոչինչ երկըսայլմ' զի Ձերդ հեռատես խոհարանութիւնն ոչ միայն  
«ինքնին գուշակէ զայնոսիկ, այլ և իրաւունս տայ զգուշաւորու-  
«թեանս իմում յայսմ մասին:

«Ինձ մնայ զարձեալ լինելի ի Ձերմէ Ազնուութենէդ, և  
«Ձեօք ի համօրէն Քրիստոսասէր ժողովրդոց երեւանի, զի ընդունի-  
«ջիք դառ ի սրտէ շնորհակալիս իմ յաղազս բարեսէր առաջար-  
«կութեանն զոր հաճեցայքդ առնել ինձ, և զոր ոչ մոռացայց  
«երբէք ի կեանս իմ, որպէս և ոչ զյիշատակ սիրալիւ և պա-  
«տուամեծար ընդունելութեանն՝ որում պատահեցայ առ ի Ձէնջ  
«յամին 1863, յանցանելն իմում ընդ պանծալիւ այդ մայրաքա-  
«ղաք Արարատեան աշխարհին:

«Յանձն առնելով զԱզնուախալ Իշխանդ մեր ի խնամս Բար-  
«ձերելոյն, ողջ լինել մաղթեմ

«Մեծապապիւ Տէրութեանդ Ձերում  
Խ. Մառայ և այլն:

ի 1 Մարտի 1866  
ի Թէոդոսիայ:

### Գ Լ Ո Ւ Խ Ի Զ.

Գարբիէ վարդապետին իւր Առաջնորդութեանը ժամա-  
նակ ունեցած զիսաւոր Օգնականները:

Գարբիէ վարդապետին ութը տարուան ձեռնար-  
կութեանցը և դորձերուն պատմութիւնը ո՛րքան և ըն-  
դարձակ գրէինք, դարձեալ պակասաւոր կլինէր՝ եթէ  
չչեչատակէնք իրեն դորձակիցներուն և օգնականնե-  
րուն գոնէ գլխաւորները, վասն զի դորձերուն բազմու-  
թեանը և ծանրութեանը համեմատ՝ զօրաւոր դորձա-  
կիցներ ևս հարկ էր ունենալ, որք իրեն բաղդէն սա-  
կաւաւոր եղան, և այն սակաւաւորաց մէջ դորձու-  
նեալքը սակաւագոյն:

Ա. Եւ նախ՝ Կոնսիստորիային մէջ անպատճառ հար-  
կաւոր էր բանի բուն վարդապետ մի և դորձունեաց ա-  
ւաղերեցներ:— Բէկնաղարեան Յովհաննէս վարդապետը  
թէպէտ ունէր այն պաշտօնին ամենայն կերպով չար-  
մարութիւն, և մեծ փորձառութիւն, բայց չէր կարող  
հեռանալ շուտով Պետարապետի Հոգևոր Կառավարու-  
թեան նախագահութենէն՝ քանի որ Քիչնեկ եկեղե-  
ցական կալուածներուն դորձակալութիւնն իւր ձեռքն  
էր: Ուստի երբոր Տրապիզոնէն Միսիթարեան Աբէլ վար-  
դապետը (յետոյ Արքեպիսկոպոս, այժմ հանգուցեալ)  
առաջարկեց Գարբիէ վարդապետին իւր ծառայու-  
թիւնը, նա յօժարաւոր սիրով հաւանեցաւ, և քովը  
հրաւիրեց զինքը: Աբէլ վարդապետը 1858-ին սկիզբները  
Պօլսոյ Սրբազան Պատրիարքին և քանի մի իշխանաւո-  
րաց յանձնարարական թղթերովը եկաւ Թէոդոսիա, և  
դրուեցաւ անդամ Առաջնորդական Ատենին: Բայց նոյն  
տարւոյն ամառը՝ Սինոդին նախագահ հանգուցեալ  
Ղուկաս Տեղապահ Արքեպիսկոպոսին առաջարկու-  
թեամբը պէտք եղաւ որ Աբէլ վարդապետը դառնայ  
երթաց էմիսիս:

Բ. Աղափիւրեան Գրեգոր դպիրը չուղարկուեցաւ նոյն  
տարին ի Սուրբ Էջմիածին, և արեղաց ձեռնադրուեցաւ  
այն մտքով որ քիչ ժամանակէն Կոնսիստորիայի ան-  
դամ նշանակուի, ինչպէս որ նշանակուեցաւ մինչև  
1860-ին սկիզբները, և կցուացուէր որ նա իւր ուսում-  
նականութեամբը և լեզուադիտութեամբը լաւ օգնա-  
կան լինի Առաջնորդին: Բայց 1860-ին սկիզբները կան-  
չուեցաւ նա Կաթողիկոսին հրամանաւը ի Սուրբ Էջ-  
միածին՝ այն տեղ շինուելու ուսումնարանին դորձե-  
լուն համար:

Գ. Բնիկ Խրիմեցի Մարտիրոսեան Գէորգ վարդապետ  
մի կար էջմիածին, որ կցանկար Խրիմու կամ Նախիջե-  
ւանի մէջ պաշտօն ունենալ: Հաւանեցաւ Առաջնորդը, և

Հրաւիրեց զինքը և Թէոդոսիա, որ Կոնստանտնուպոլսի գործերուն հառաւիարութեանը մէջ աշխատի. միանգամայն իւր նախորդին պէս Խալիպեան Ուսումնարանին մէջ Կրօնագիտութեան դասախօսութիւն անէ: Բայց և նա՛ իւր ընտանեացը Հանդամանքէն ստիպեալ՝ Հարկադրեցաւ դառնալու Թիֆլիզ 1862-ին սկիզբները, ուր կը տնուէր այն ատեն Վ. Կաթուղիկոսը: —

Ի. Այնուհետև Գաբրիէլ վարդապետին յոյսը մնաց միայն Գալֆայեան Ամբրոսիոս և Խորէն վարդապետներուն վերայ, որոց զօրաւոր և Հաւատարիմ օգնականութեանը վաղուց կարօտ կճանաչէր ինքզինքը, և զետէր որ նոցա գործակցութեամբը Թէ՛ վիճակին կառավարութիւնը կարող էր իրեն Համար դիւրանալ, Թէ՛ Խալիպեան Ուսումնարանին կառավարութիւնը և դատարարութիւնը, Թէ՛ Տպարանին մէջ պիտանի գրքերը Հրատարակելը, և Թէ՛ «Մասեաց Աղանի» ամսագրոյն Հրատարակումը: — Ամբրոսիոս վարդապետը չէր կարող չանձն առնուլ այնպիսի աշխատանքներ, որովհետև իւր անձնական առողջութիւնը գրեթէ բոլորովին խանդարուած ու կորսուած էր՝ Հայկաղեան վարժարանին վերջի տարիները քաշած նեղութիւններուն պատճառաւ: Իսկ Խորէն վարդապետը Թէպէտ և Եկաւ սիրով Թէոդոսիա՛ ըստ Հրաւիրանաց Առաջնորդին, և իւր անխնայ գործակցութիւնը խորոյն սկսաւ ցուցանել վերայիշեալ աշխատութեանցը մէջ, բայց այն Հակառակորդները՝ որ գեշեր ցորեկ կաշխատէին Առաջնորդին ձեռնարկութիւնները խափանելու, նոյն իսկ 1860-ին սկիզբէն այնպէս արին որ Վ. Կաթուղիկոսը Հրաման գրեց Առաջնորդին՝ Խորէն վարդապետը Եջմիածին չուղակելու: Եւ այն Հրամանը այնպիսի սճալ՝ ու խօսքերով գրուած էր որ չաչանի կերևոյսը Թէ՛ Կաթուղիկոսին կամքը այն է միայն՝ որ Առաջնորդը զուրկ մնայ այնպիսի օգնականէ: Կարողացաւ Առաջնորդը պէսպէս զօրաւոր պատ-

ճառներով և Հնարքներով երեք տարիէն աւելի քովը պահել Խորէն վարդապետը, և նորա օգնականութիւնը վաչելել: Սակայն Խորէն վարդապետը յաշտնապէս տեսնելով որ Առաջնորդին քաշած նեղութիւններն ու Հաւածանքները վերջանալու պէս չեն, և նորա գործերուն հետ իւր աշխատութիւններն ևս ազգին Համար գրեթէ անօգուտ պիտի լինին, Թուլացաւ, վհատեցաւ, և վերջապէս Հարկ եղաւ որ 1864-ին ամառը դառնայ երթալ իրեն Հայրենիքը և Կոստանդնուպօլիս:

Այն միջոցին էր ահա որ վիճակին վերայ վերադրնութիւն բացել էր Անդրէաս Յպիսկոպոսը, և արդէն յաշտնի էր ամենուն նորա ի՛նչ նպատակաւ բացուելը, և ի՛նչ կերպով առաջ գնալը. ուստի Գաբրիէլ վարդապետն ևս լաւ Համարեցաւ չետ կենալ նոր վարդապետ մի քովը Հրաւիրելու դիտաւորութեանէն, և առժամանակ մի ամէն ծանրութիւն իւր վերայ առնելով՝ կուպատէր որ տեսնէ Թէ ի՛նչ էլք պիտի ունենայ վերադրնութիւնը:

Խալիպեան Ուսումնարանին կառավարութեանը Համար, բացի Խորէն վարդապետէն՝ որ վերջի տարիները Քրօնաբան էր, երեք տեսուչ ունեցաւ Առաջնորդը Հեալհետէ, որ էին Պ. Սարգիս Տիգրանեան՝ Հինգ տարի, Պ. Յովհաննէս Մերաքեան մէկ տարի, և Պ. Փեաթին՝ մէկ տարի, որոց երեքին ևս պէսպէս կատարելութիւնները կը արգէր ու աշխատանքը կճանաչէր, և նոքա ևս սիրով և Հաւատարմութեամբ կը կատարէին իրենց պաշտօնը, և սրտացաւութեամբ կը րեկցութիւն կցուցանէին մեշտ վարդապետին՝ նորա քաշած անտանելի նեղութիւնները տեսնելով

Շատ երկար կլինէր՝ եթէ ուղէինք այս տեղս մի առ մի չըլտաակել նաև Տպարանի տեսուչներուն, Ուսումնարանի վարժապետներուն և վերակացուներուն, նմանապէս դրսերը գտնուող գործակալներուն, և մա-

նաւանդ վիճակին այլ և այլ կողմերու քահանաներուն ինչ կերպով վարուելը Առաջնորդին հետ և ինչ կերպով իրենց յանձն առած պաշտօնները կատարելը: Ճշմարտութիւնը կհարկադրէ զմեզ ասելու՝ որ թէպէտ Գաբրիէլ վարդապետին առջեւ նոցա ամէն մէկուն աշխատանքը ո՛րքան և փոքր լինէր՝ մեծապէս յարգի էր, և ինքը իւր շնորհակալութիւնը նոցա յայտնելու ամենեւին չէր դանդաղէր բանիւ և դրով և վարձատրութեամբ, սակայն դժբաղդաբար դտնուեցան նոցա մէջ ևս ոչ սակաւ անձինք՝ որ յայտնի արին թէ աւելի իրենց անձնական շահուն, հանդատութեանը կամ սընսփառութեանը համար ծառայել են՝ քան թէ Առաջնորդին սիրոյն, կամ որ նոյն է՝ ազգին օգտին և պաշտառութեանը համար, որ էր Գաբրիէլ վարդապետին աշխատութեանցը միմիայն նպատակը:

### ԳԼՈՒԽ ԻԷ.

Գարրիէլ վարդապետին ուժը տարուան Առաջնորդութեանը մէջ կրած ներութիւններուն վերայ խորհրդածութիւն:

Կարդացողը կարող է հարցանել ինքնիրեն թէ այս ութը տարուան Առաջնորդութեանը մէջ Գաբրիէլ վարդապետին ձեռնարկութիւնները թէպէտ յաջողութիւն գտան երբեմն, բայց և ինչ պատճառներով արեւօք ձախող դնացին շատ անգամ: Ռուսաստանի Հայոց վիճակը, և այս ութը ինը տարուանս մէջ էջմիածնայ Աթուոյն հանգամանքը լաւ գիտցողը դիւրաւ կարող է մակաբերել այն պատճառները, եթէ Պատմութեանս սկիզբը դրուած խորհրդածութեանց

տեղեակ է: Այսու ամենայնիւ քանի մի խօսք ևս այս տեղ աւելացնենք:

Ունեցած յաջողութիւններուն պատճառ կարելի է համարել նախ Ռուսաց Տէրութեան նորա գործերուն արած պաշտպանութիւնը, և քանի մի բարեսէր ազգայնոց տուած քաջալերութիւնը, բայց անտարակոյս նոցանէ աւելի պատճառ էր այն յաջողութեանց՝ վարդապետին դիտաւորութեան ուղղութիւնը, և ձեռք դարկած գործերուն օգտակարութիւնը. զոր շատ լաւ ճանաչել էին թէ՛ հանդուցեալ Ներսէս Կաթողիկոսը և թէ՛ Կայսերական կառավարութիւնը, ևս և ազգին մեծազոյն և ընտրելազոյն մասը, ինչպէս որ յայտնի է խիտ շատ ապացոյցներէ, վկայութիւններէ և հրապարակական ու առանձնական գրութիւններէ: Բաց չաչնմանը, ոչ սակաւ ապացոյց էր մեր ազգին Վ. վարդապետին վերայ ունեցած վստահութեանը այս բանս, որ նորա ջանքը և դիտաւորութիւնը լսելով միայն՝ Պ. Խալիպեանին պէս հեռատես, զգուշաւոր ու խաբուելի վախցող անձը՝ իւր հարստութեան երեւելի մէկ մասը նուիրեց Ազգին՝ վարդապետին ձեռօքը, և շատ մարդիկ՝ աշխարհիս հեռաւոր կողմերէն, շատը նաև վարդապետին երեսօք անձանօթ, իրենց զաւակները նորա խնամոցը յաճնեցին՝ մեծամեծ ծաղբերով հանդերձ:

Ապա ուրեմն ոչ թէ նորա ձեռնարկութեանցը յաջողութիւն գտնելն է զարմանալին ու հետաքրքրականը, այլ այս՝ թէ Գաբրիէլ վարդապետին գործերուն այսքան հակառակութիւն կրածը ինչէ՞ն էր: — Կարժէ որ սորա վերայ մեր կարծիքը փոքր ի շատի բացատրենք, աւելին ձգելով ընթերցողաց և ապագայից գառատասանին:

Յայտնի է ամենուն՝ թէ մեր ազգին սրտին մէջ ինչ աստիճանի խորութեամբ արմատացած է այն ատելութիւնը՝ զոր ունի հարեւաւոր տարիներէ ի վեր

ընդդէմ կաթողիկոսաց և կաթողիկոսութեան. այնպէս որ կարելի է համարձակ ասել՝ թէ աւելի դիւրին է ո՛ր և իցէ օտար աղգելէ անձինք իրարու հետ բարեկամացընել, քան թէ Ղուսաւորչական և Կաթողիկոս հայերը մէկ մէկու հետ սերտ սիրով և հաստատուն կերպով միաբանել և հաշտեցընել: Այս բանիս պատմական և կրօնական պատճառները շատ են, և զայնս բացատրելը ուրիշ տեղոյ և ժամանակի դործ է: Բայց այս ևս յայտնի է՝ թէ այն ատելութիւնը չէր կարող իրարմբ տեղիք ունենալ Գարբէլ վարդապետին դէմ, դէթ նորա տուած այնքան ասպցոյցներէն չետոյ, նորա կաթողիկոսներէն քաշած այնչափ հալածանքներէն չետոյ, նորա ընդդէմ պապականաց հանած այնքան դուրածքներէն չետոյ: Եւ սակայն երբոր կաթողիկոսներէն ոմանք, մանաւանդ Պօլսեցիք, սիրան լուսաւորչականաց մէջ այս անձոռնի համբաւը տարածել՝ թէ Գարբէլ վարդապետին և նորա ընկերակիցներուն դիտաւորութիւնն է՝ վերադարձնել անպարտաւար և ազգը Պապին հպատակեցընելու. աշխատել,— իբր թէ քիչ եկած էր նոցա պապականներէն քաշած հալածանքը, իբր թէ մտքերը դրած լինէին թէ չիրաւի Պապը միայն ունի իշխանութիւն երկնաւոր և երկրաւոր բանալեօք. Հայոց ազգին առջևը արքայութեան դուռը բանալու կամ փակելու,— Ղուսաւորչականաց մէջ գտնուեցան այնպիսի միամիտներ, մանաւանդ թէ չարամիտներ, որ սիրան կտակածանօք նայել վարդապետին դործերուն վերայ: Սուտ ազգասէրներուն բանին ևս մեծապէս ձեռնտու էր այս կարծիքը. վասն զի «նորա վերայ Կաթողիկոսութեան նշան կայ» ասելով բարեմիտ լուսաւորչականաց՝ կյուսային աւելի դիւրաւ շատցընել իրենց լուսաւորչական կուսակիցներուն խումբը: Այս էր աւասիկ Գարբէլ վարդապետին ձեռնարկութեանցը ժամանակ ժամանակ ձախտող դնալուն մէկ պատճառը: —

Բայց ութը տարին բաւական երկար ժամանակ չէ՞ր արդեօք որ հասիացուի այնպիսի անձն մի դիտաւորութիւնը նորա դործերէն, և խելք կամ աչք ունեցողը չէ՞ր տեսնել արդեօք թէ այնչափ ժամանակին մէջ վարդապետը ոչ խօսքով, ոչ քարոզութեամբ, ոչ դուրածքով, ոչ եկեղեցուց մէջ և ոչ եկեղեցիէն դուրս, բնաւ ամենեւին մէկ կաթողիկոսութեան նշան չցուցուց, և ոչ իրեն յանձնուած 26,000 լուսաւորչականաց մէջէն մէկը կաթողիկոսութեան չորդորեց կամ չդարձուց. ընդհանրապէս, ամէն ժամանակ և ամէն պարագայի մէջ յայտնի արաւ՝ թէ ինքը ո՛րքան հաստատ և ամուր բռնած է և բռնել կուտայ աղգային լուսաւորչական դասնութիւնն ու արարողութիւնքը, սովորութիւնները, լեզուն, մատենադրութիւնը և այլն և այլն:

Ո՞ր կմնար ուրեմն քանի մի կաթողիկոսներու արած չարախօսութիւնը, և մերոնց մէջէն նոցա խօսքերուն խարուող միամիտներուն անհիմն կատկածանքը:

Բայց, շխտակն ասելով, այս պատճառը երբորքան պատճառ կերելի մեզ, մանաւանդ թէ պատճառանք (մահաւոր). իսկ գլխաւոր և զօրաւոր ու դրեթէ ճիշտն պատճառն այն էր՝ որ այս տեղս պէտք է դոմէ համառօտ կերպով բացատրել:

Ռուսաստանի Հայոց մէջ, մանաւանդ Փեթերպուրկի և Մոսքուայի համալսարանները ուսանող աղգասէր Հայ երիտասարդաց մէջ, վաղուց մտած էր սատարի սէր կամ համարում գերմանական ուսմանց: Տօրփաթի (Տերփի) համալսարանը դնացող երիտասարդներէն ոմանք այս գերմանաստիքութիւնը աւելի աճեցուցին իրենց մէջ, և տարածեցին որչափ որ կարողացան՝ ոչ միայն Փեթերպուրկի և Մոսքուա, այլ և Փիլիպի ու մինչև Երևան, Շամախի և Շուշի: Նոցա մէջ գտնուեցան այնպիսիներ՝ որ Գերմանացուց լուսաւորչականութիւնն ևս՝ նոցա ուրիշ ուսմանցը պէս՝ մեծ սիրով և փափաքանօք ընդու-

նեցան, և աշխատեցան ազգին մէջ տարածելու, ինչպէս որ չաչանի է նաև նոցա տպած քանի մի գրուածքներէն. վասն զի մտքերնին դրած էին թէ այն կրօնքն որ ընդունին՝ աւելի ապահով կմնայ իրենց «*սուբիմոն*» քան թէ լուսաւորչական կրօնը անխախտ պահէրով: Միանդամայն մեծ փուշ էր նոցա աչքին այս քանս որ Գ. վարդապետը ուղղակի Տէրութենէն նշանակուած էր առաջնորդ. և իրենց հակառակութեամբը կըմնային իր գործնական բողոք մի ցուցանել, այնպէս որ Տէրութիւնը զգուշանայ միւս անգամ այնպիսի կարգադրութիւն անելէն:

Իսկզբան անդ ազգայինք, թէ՛ եկեղեցականք և թէ՛ աշխարհականք, որոշ չհասկացան նոցա զիտաւորութիւնը, այլ իրբե զեղեցիկ լուսաւորութիւն, զարմանալի ուսումնասիրութիւն և դովելի աղատամտութիւն՝ ընդունեցան և պատուեցին նոցա սկզբունքները, հարկաւ վեր դնելով զայնս ազգային եկեղեցականաց տգիտութենէն ու ամէն տեսակ վարդապետութենէն: Միայն հանգուցեալ Ներսէս Կաթողիկոսը՝ իւր արդարև արծուի նման հեռատեսութեամբը և մեծասաստ իշխանութեամբը ահի և երկիւղի մէջ բռնեց այնպիսի երիտասարդները. և ոչ միայն երես չտուաւ նոցա, այլ և մէկ քանին հեռացուց ազգային պաշտօններէ և գործերէ: Վախճանեցաւ այն Կաթողիկոսը, եկաւ նորա տեղը Մատթէոս Կաթողիկոսը, որ թէպէտ շատ լաւ զիտէր թէ Տաճկաստանի մէջ անգղիական և աւետարանական նորադանդք ինչ կերպով մուտ գտան և յառաջացան, և թէ ինքը նոցա դէմ չափադանց նաստանձաղուղութեամբ հարածանք հանած լինելուն պատճառաւ ձգուած էր Կ. Պօլսոյ պատրկարքութենէն, բայց ամենեւին չկարողացաւ տեսնել՝ միչև իւր կենդանութեան վերջին տարին՝ թէ նոյն նորադանդութեան հողին ինչ կերպով կամ ո՛րչափ տարածուած էր

Ռուսաստանի մէջ: Մինչև 1859 ին վերջերը, այն երկտասարդներն չկրաւ շատ զգուշութեամբ վարուեցան, զիտելով ու սպասելով՝ թէ արդեօք ի՞նչ ճանապարհ պիտի բռնէ նորընտիր Կաթողիկոսը: Երբոր տեսան թէ նա պատրաստ է օգնելու այն ամենայն անձանց՝ որք իրեն մատենադրութեանցը և քարոզներուն վերայ մեծ համարում կձեացընեն, և իւր Կաթողիկոսական իշխանութիւնը կբարձրացընեն մինչև հաւասար ո՛ր և իցէ թաղաւորական և կայսերական իշխանութեան և այլն, ամենայն կերպով չարմար ժամանակ է ասացին այս Կաթողիկոսին ձեռքովը վիճացընելու և ոտնակոխ անելու առհասարակ ազգիս եկեղեցականները, իբրև «*մէնչն ևս տղէտ, մէնչն ևս բիրտ, մէնչն ևս անկիրթ, մէնչն ևս խաւարեալ անձինք*, որպէս զի այնուհետև իրենք իրենց մոլորական սկզբունքները համարձակ տարածեն ազգին մէջ. ձեռք առին Թիֆլիզու մէջ հրատարակուող Մեղու և Կոռնի՝ օրագիրներուն խմբագրութիւնը, և նոցա մէջ Կաթողիկոսին գործերուն ու գրուածքներուն կեղծուպատիր գովեստներ տալու մէկ կողմանէ, միւս կողմանէ ևս իրենց ոխը համարձակ թափեցին նոցա դէմ՝ չորոց կասկած ունէին՝ թէ կարող են արդեւք լինել իրենց զիտաւորութեանը: Մանաւանդ այն եկեղեցականաց՝ որ առաջնորդական պաշտօնի մէջ գտնուելէն զատ՝ իրենց քարոզութեամբն ու գրուածքներովը կարող կըրեային լուտերամիտ բանաքաղներու խմաստակութեանցը դէմ մաքաւել, և բարեմիտ ժողովուրդը նոցա որողայթներէն զգուշացընել: Այնպիսիներէն մէկն էր Ջալալեանց Սարգիս Արքեպիսկոպոսը, և միւսը Ալվադեան Գաբրիէլ վարդապետը: Մէկը՝ իբրև հանգուցեալ Ներսէս Կաթողիկոսին հաւատարիմ հետևող, աչալուրջ, աշխարհատես, զիտուն և գործունեաց անձ՝ կարող էր նոցա խաբէութիւնները դուրս հանել և խաչտառակել. և միւսը՝ իւր զանազան լեզուաց հմտութեամբը և ազ-

գային ու Եւրոպական Աստուածաբանութեանց տեղեկութեամբը՝ կարող էր նոյնպէս ընդդէմ զինել նոցա վարդապետութեանցը: Այնքան աշխատեցան որ Սարգիս Արքեպիսկոպոսը ձգել տուին Վրաստանի և Իմէրէթի Առաջնորդութեան Աթոռէն, իրենց ձեռքը առին Ներսիսեան Հոփոս Գարդնի կառավարութիւնը (Թէպէտե իրենք գրեթէ ամէնքն ևս աշխարհականք էին): Եղբայրացան Հիսուսիսի Հրատարակիչներուն հետ՝ որարդէն լուտերականութեան դրօշակը համարձակ բացել էին, մտերմացան Պօլսոյ Մեղր անուանեալ լրագրոյն և ուրիշ նոյնահոգի լրագրաց հրատարակիչներուն հետ, և այնուհետեւ ամէնը միաբան չարձակեցան Գարբէշ վարդապետին դործոցը վերաց, ամենայն ջանք անելով որ նորա անունը սեցընեն Կաթողիկոսին առջևը, ասելով անդադար՝ Թէ նա քու իշխանութեանդ չհնազանդիր, մանաւանդ Թէ քու Աթոռոյդ վերաց աչք տնկած է . . . Աղբին առջևը ջանացին անունը աւրել՝ ասելով Թէ նա մեր ազգը «ու» կուղէ դարձնեն . . . և Տէրութեան առջևը աշխատեցան զինքը ատելի անել, ասելով Թէ նա մեր ազգին մէջ Կաթողիկոսի կուղէ մտցընել . . . Տեղովը չայտնի չէ մեզ Թէ Կաթողիկոսը ինչ աստիճանի հաւատք կընծայէր նոցա խօսքերուն. բաց գործերէն և կոնդակներէն չայտնապէս կերևի Թէ բոլորովին հաւատացել էր, գէթ մինչև 1865 տարւոյն սկիզբները, և ըստ այնմ կվարուէր նաև Գարբէշ վարդապետին հետ: (1)

Նոր Նախիջևանի ժողովուրդը Թիֆլիզու և Փեթեր-

(1) Ի հասարակութեան այս մեր նորձեաց՝ հարչ համարէմք Պարմու-  
նեան վերջը գնել դիպուածով յեւթերնիս հասած նամակի մի պարտէնը,  
որը Թիֆլիզէն գրած է յէջմիածին առ Գեր. Գեորգ վարդապետին Արա-  
մեան՝ Բաղնուրիան Յայնք վարձապետին Կարենեանց: Տե՛ս Յ ա է լ ու ա ծ Թ:

պուրկի «ու»-էր անուանեալ երկտասարդներուն մէջ-  
տեղը կեցած, երկուքէն ևս կզբոլուէին անդադար՝ որ  
իրենց Առաջնորդին դէմ ելնեն՝ Թէպէտե ուրիշ պատ-  
ճառներով, այսինքն եկեղեցական փողերուն պատճա-  
ռանքովը: Նոցա մէջ ևս արդէն պատրաստ լինե-  
լով այն մասը՝ որ Պ. Խալիպեանին դէմ անձնական  
հին Թշնամութիւն ունէր, և անդադար կաշխատէր  
զնա չաղթահարելու, զիւրաւ խաբուեցաւ այն երկտա-  
սարդաց խօսքերէն. աշխատեցաւ նոցա դրուածքները,  
Հիսուսիսի, Մեղրները, Հիսուս և այլն տարածելու նաև  
ձրեալար այն խեղճ ու հանդարտ ժողովուրդեան մէջ. և  
մէկ կողմանէ Թուղթ Թղթի վերաց, դանդաղ դան-  
դառել վերաց գրեց Կաթողիկոսին՝ իւր Առաջնորդին  
հակառակ. և բաւական չհամարելով նորա եպիսկոպոս  
ձեռնադրուելուն արգելք լինելը ամէն տեսակ անար-  
ժան միջոցներով, ևս և նորա վերաց վերադննիչ բերել  
տալը, միաբանեցան՝ բազմաստորազիր բողոք մի դրե-  
ցին Կաթողիկոսին 1864-ին վերջերը՝ Թէ մեք այս  
առաջնորդը չեմք ուղեր. սորա տեղը մէկ ուրիշը կընդ-  
րեմք, և յանուանէ Անդրէաս Եպիսկոպոսը: Շատ կցա-  
ւիմք որ այն նամակին կամ աղերսազրոյն օրինակը  
չկարողացանք ձեռք բերել՝ որ այս տեղ դնէինք. բաց  
արժան կհամարեմք դնել Պատմութեանս վերջը այն  
նամակին Թարգմանութիւնը՝ զոր նոյն Նախիջևանի  
ժողովուրդեան խաղաղասէր և բարեմիտ մասը՝ նոյնպէս  
հարևաւոր ստորագրութեամբ չուղարկեց առ Վսե-  
մափաջ Ոստիկանն Ներքին Գործոց: (1)

Սոքա են ահա մեր գիտցած գլխաւոր պատճառ-  
ները, որովք այնքան հակառակութիւն կրեց Գար-  
բէշ վարդապետը իւր Առաջնորդութեան ութը տա-  
րուանը մէջ:

(1) Տե՛ս Յ ա է լ ու ա ծ Թ:

Կարող է մէկը Հարցանել որ մի՞թէ Վեհ. Կաթուղիկոսը և Ս. Էջմիածնաց Սինողին անդամները մինչև եօթը ութը տարի չհասկացա՞ն Գարբէէ վարդապետին դիտաւորութեանն ու գործերուն ուղղութիւնը, և նորա չարախօսներուն անիրաւութիւնը:—Այս Հարցմանս ճիշդ պատասխանը տալու համար՝ պէտք էր դիտնայինք ստույգ և մանրամասն տեղեկութեամբ՝ թէ ի՞նչ կերպով կկառավարուէր այն միջոցին Ս. Էջմիածնաց միաբանութիւնը, ի՞նչ չարաբերութիւն կար Վեհ. Կաթուղիկոսին ու Սինողին մէջ, ի՞նչ նպատակներով հանդուցեալ Կաթուղիկոսը դիւրաւուր կդտնուէր Գարբէէ վարդապետին չարախօսներուն, և ի՞նչ պատճառներով կը գուշանային Սինողականք այն վարդապետին համար աւելի ազդու ջատագովութիւն անելէն: Սոքա մեր եկեղեցւոյն այն ժամանակի պատմութիւնը գրել չանձն առնող պատմաբանին քննելու նիւթերն են: Մէք կարող եմք այս միայն անժխտելի ասպարոջներով հաստատել թէ Գարբէէ վարդապետին ութամեայ Առաջնորդութեանը մէջ կարելի չէ գտնել նորա կողմանէ մէկ իսկ կամ քրահ ընդդէմ պատուոյ և իրաւանց սրբոյ Աթոռոյն, Կաթուղիկոսին կամ Սինողին, թէպէտ և Վեհ. Կաթուղիկոսին Հաճոյ թուել էր՝ ոչ միայն ծանր ծանր կոնդակներով կշտամբել և նախատել զվարդապետը, այլ և քանի մի տետրակներ հրատարակել նորա գրուածոցը դէմ՝ Ս. Էջմիածնաց տպարանը և Թիֆլիզ տպարանը, ու ազգին մէջ գրեթէ ամենն ևս ձրի տարածուած:

Գժուար բան չէր Գարբէէ վարդապետին համար՝ այն տպագիր ամբաստանութեանց հերքումը հրատարակել. բայց նա մէկ կողմանէ կասկածելով՝ թէ գուցէ այնպիսի հերքման հրատարակուելը, մանաւանդ մեր ազգին պէս միամիտ ազգի մէջ, օգուտէն աւելի վնաս կարող է պատճառել, և միւս կողմանէ տեսնելով որ

այն տետրակները կարդացող կամ հասկացող արդէն քիչ կայ մեր ազգին մէջ, և ուշիմ կարդացողը դիւրաւ կհասկանայ նոցա արժէքը, իսկ չկարդացողին համար՝ ձեռքը առնուլն անգամ աւելորդ է, — լուութեան տուաւ:

1864-ին վերջերը նա մէկ ընդարձակ նամակ գրեց՝ «Բողոք առ Վեհափառ Կաթուղիկոսն՝ ազգես» վերնագրով, յորում մի առ մի մէջ կրեցրէր Վեհափառին առ ինքն գրած Կոնդակները, և կպատասխանէր նոցա մէջի անտեղի ամբաստանութեանց և չանդիմանութեանց. (1) բայց պատասխան չընդունեցաւ:

Չանէ մէկը թէ Հապա Գարբէէ վարդապետը ինքն ալ իւր ութը տարուան կառավարութեանը մէջ այնպիսի սխալմունքներ չգործեց արդեօք որ պատճառեղած լինին նորա ձեռնարկութեանցը չյաջողելուն... Տարակոյս չկայ որ սխալեցաւ, և շատ բանի մէջ, ոչ միայն իբրև մարդ սխալական, այլ և իւր բնատրական քանի մի չատկութիւններովը՝ որ դոնէ իւր կառավարած ժողովրդոց անչարմար էին, դուցէ և վնասակար:

Այս սխալմունքն ու պակասութիւնները երկու տեսակ կարող են համարուել. ոմանք ընդհանուր և անձնական, և ոմանք մասնաւոր ու դիպուածական: Ընդհանուր անձնական պակասութեանց առաջինն էր նորա կառավարութեան շփոթանոց փոփոխութիւնը, մանաւանդ թէ ընդունուելու որով թէպէտ ոչ երբէք իրաւունքն ու արդարութիւնը կըրհէր նա մարդահաճութեան կամ շահասիրութեան, բայց անդի կուտար շատ քահանայից և աշխարհականաց, որ իրենց կողման և աստիճանին պարտքը մոռանալով՝ չանդուլն համարձակութեամբ անկարգանան, և նախ նոյն իսկ Առաջնորդին դէմ գրուել վերցընեն: Եւ երկրորդ ընդհանուր պակասու-

(1) Տե՛ս Յոսէփ Գ.:

Թիւնն էր՝ իրեն սպասելուսն ետանդին շարժանցութեանը, որով առանց նայելու իւր կարողութեան և միջոցներուն չափաւորութիւնը, ևս և մինակութեանը, շատ մեծամեծ գործողութեանց ճիշտութեան ձեռք զարկաւ. ուստի և ոչ միայն շատին նախանձը աւելի գրգռեց և զայնուցոյց իրեն դէմ, այլ և գուցէ նոյն խոյն ձեռք զարկած գործերուն լաւութեանը արդեւք եղաւ:

Գործերուն շատութիւնը կատկայէր զինքը շատ մարդկանց հետ չարաբերութիւն ունենալու, մինչդեռ ինքը կարողութիւն չունէր նոցա ամենուն փառասիրութիւնն ու շահասիրութիւնը դո՛հ անելու. ուստի և զարմանք չէր որ փոխանակ երախտագիտութեան պարտատուութիւն գտաւ շատերէն, և փոխանակ սրտակից բարեկամներ ունենալու՝ ոչ սակաւ թշնամիներ վաստակեցաւ:

Չունեցաւ վարդապետը իւր պաշտօնին մէջ ամէն ժամանակ հաւատարիմ և հաստատամիտ, գործունեաց և համամիտ օգնականներ, ինչպէս որ ասացինք և այս նորա ձեռնարկութեանցը մինչև վերջը չաջողութիւն չգտնելուն հարկաւ մեծ պատճառ էր: Եւ թէպէտ իւր չափազանց եռանդովը ամէն բանի կողքը հասնել, չուսալով որ հետզհետէ գոնէ իւր հին և նոր աշակերտներէն իրեն օգնականներ ու գործակիցներ հասցընէ, բայց մինչև որ նորա հասնելու պէս եղան՝ իւր ոյժն ու պաշտօնին ժամանակն ևս վերջացաւ:

Նոյն չափազանց եռանդին հետ միացաւ նաև ուրիշ պակասութիւն՝ որ մեծապէս արդեւք է մեծամեծ ձեռնարկութեանց չաջողութեանը, այսինքն ինչ փոքրատիւն, այն փորձառութիւնը՝ որ անպատճառ հարկաւ է աշխարհիս մէջ զանազան անձանց հետ գործ՝ մանաւանդ ստակի գործողութիւն ունեցողին, ուստի և Գաբրիէլ վարդապետը քանի մի փոքրատիւն սխալմունքներ արաւ որ շատ վնաս տուին չետոյց իրեն և իւր աշխատութեանցը:

Սոցա մէջ գլխաւորը պէտք է համարել նորա քանի մի անձինքներէ խոփուիլը: Իրաւ է որ նա իրեն սկզբունք արած էր այս բանս.

«Եթէ մէկը հարցընէ  
Թէ արդեօք լաւը ո՞րն է,  
Ալէկոծեալ աշխարհիս մէջ  
Ուրիշներէն խաբուի՞լը  
Թէ զուրիշը խաբելը,—  
Իմ պատասխանս է պատրաստ.  
Թող ևս խաբուի՛մ քան թէ խաբեմ,  
Միայն լինիմ արդար ու զգաստ:»

Բայց այդ բարոյական սկզբունքը կարծես թէ աւելի չարմար կողմաց առանձնական մարդու, քան թէ հասարակաց գործի և կառավարութեան մէջ մտնողին, որուն հարկաւոր է անպատճառ լինել «Խորագէտ իբրև զօձ», և ոչ թէ միայն «Միամիտ իբրև զաղաւնի», ոչ միայն չխաբել զուրիշը, այլ և չխաբուիլ դիւրաւ ուրիշներէն: Եւ ահա գուցէ այս խորագիտութեան պակասութիւնն էր որ չթողուց Գաբրիէլ վարդապետին՝ Սալպեան Ուսումնարանին հիմնարկութեանը և տնտեսական կառավարութեանը մէջ բաւական հեռատեւութիւն և զգուշաւոր արթնութիւն ունենալ, որով չպո՛ւ մասին ևս աշխատանքը շատ եղաւ և չափազանց, խոյ պտուղը քիչ, և գրեթէ ոչինչ:—

Վթողումը խօսիլ այնպիսի պակասութեանց վերաց որ ոմանց աչքին կարող են կատարելութիւն անդամ երևնալ, մանաւանդ այժմու ժամանակս. ինչպէս չափազանց անձնանուէրութիւնը, անշահասիրութիւնը, անփառասիրութիւնը, և այլն և այլն. վասն զի մեր միտքը այս տեղ արդեօք գրել էր, և ոչ թէ փոքրատիւն. ևս առաւել միտք չունէինք ներքող և ջատագովութիւն շարագրելու: Պատմութիւն է ասացինք մեր գրածը, և ոչ թէ կենսագրութիւն, վասն զի՝ ինչ-

պէս որ տեսնուեցաւ՝ Նախիջևանի և Պետարապետի Հա-  
յոց վիճակին ութամեաց անցքերուն համառօտ նկա-  
րագիրն է, յորում Այվաղեան Գաբրիէլ վարդապետը ե-  
րեցաւ լոկ դըլաւոր գործող, մանաւանդ թէ Գործի Աս-  
տուածալին նախախնամութեան: Թէրևս ապագայից  
մնաց ճիշդ դատաստան անելը այն անցքերուն ու վար-  
դապետին գործքերուն արժէքին վերայ. բայց վարդա-  
պետը անշուշտ լաւ կանէ՝ եթէ իւր գործող և աշխա-  
տութեանց վարձը յԱստուծոյ միայն սպասէ, և անձ-  
կանօք փափաքի այն վաչրիներն հասնելուն՝ յորում  
կարող լինի լիաբերան դսՀութեամբ փառք տալ ամե-  
նողորմ Արարչին, որ չետ փորձելոյ նորա դիտաւորու-  
թեանց ուղղութիւնը՝ նախ ի հուր հոռիֆէմին նախան-  
ձայուղութեանց, և ապա ի ջուր հոռիֆէմ հալածանաց,  
վերջապէս հասցընէ կատարեալ հանդատութեան, ո՛չ  
անցաւոր աշխարհիս մէջ, այլ չերանաւէտ օթեանս  
ամենայն աշխատելոցն ի փառս Աստուծոյ և ի լուսա-  
ւորութիւն մտաց և սրտից մարդկան, ասելով. «Անցաք  
մեք ընդ հուր և ընդ ջուր, և հաներ զմեզ ի հանդիստ:»

### Գ Լ Ո Ի Ս Ի Ը.

Խալիպեան ուսումնարանին վերջի վեց տարուան փնակը՝

Պատմութեանս ամբողջութիւնը կտրահանջէ որ Հա-  
մառօտեմբ այս տեղ Խալիպեան Ուսումնարանին վի-  
ճակը՝ վերջին վեց տարուանս մէջ, թէ և սորա համար  
հարկադրիմք կրկնել քանի մի բան որ առաջ ևս չեղա-  
տակած եմք:

Խալիպեան Յարութիւն Աղան թէպէտ և մեծապէս  
արտում և տգոհ կերևար Գաբրիէլ վարդապետին ա-

ռաջնորդութենէ ելնելուն և Խալիպեան Ուսումնարա-  
նին վերատեսչութենէն հեռանալուն վերայ, բայց ոչ  
սակաւ միւլթարութիւն՝ դուցէ և ուրախութիւն կղզար  
այս բանով՝ որ տէրութիւնը կըստատանար ուսումնարանին  
նպաստ նշանակել ամէն տարի 11,000 ըուպլի. միան-  
գամայն կըստատանար ուսումնարանի աշակերտները աս-  
տիճանով՝ այսինքն շնորհ ելնեն անախ, վարժապետաց  
ճառաչութիւնն ևս համարուի արքունահան ճառաչու-  
թիւն, այսինքն այնպիսի պաշտօն որ չետայ թողակ  
(իհնոս) ընդունելու իրաւունք կուտայ: Բաց չայնմանէ,  
վիճակին արդիւններէն 3,000 ը. պիտի առնուէր ամէն  
տարի ի նպաստ ուսումնարանին, և ինքը պիտի տար  
4,500. որով տարեկան 18,500 ըուպլի եկամուտը ապա-  
հովեալ կլինէր. իսկ մնացեալ հարկաւոր փողը դիւրա-  
հաւաքուելուն տարակոյս չէր մնար՝ եթէ Ուսումնարանը  
իւր բարեկարգ ընթացքէն շտատրէր:

Կերևի որ Խալիպեանը՝ իբրև ուսումնական գործ-  
ղութեան և ուսումնարանի կառավարութեան անտե-  
ղեակ մարդ՝ չկարողացաւ հասկանալ այս գործնական  
և չափսն ճշմարտութիւնը, թէ ո՛ր և իցէ ուսումնա-  
րան կարելի է փողի ուժով բանալ, բայց անկարելի է  
հոյն փողի ուժով առաջ տանել, այլ հարկաւոր է փողին  
հետ մէկ տեղ ունենալ ուսումնարան կառավարելու  
կարող և անձնանուէր անձինք զանել: Ապա թէ ոչ,  
շատ ընտանի է կարծելը՝ թէ նա կարող էր և պէտք էր  
որ աշխատէր խնդիր տալու տէրութեան այս մտքով՝  
թէ «Նս երբոր իմ սեպհական ստացուածքէս մինչև  
«200,000ի մօտ փող նուիրեցի ուսումնարանին շնու-  
«թեան ու պահպանութեանը համար, գըլաւոր փոտա-  
«հուրութիւնս՝ թէ արած ծախքերս պարսպ պիտի չեր-  
«թան՝ Գաբրիէլ վարդապետին փորձառութեան ու  
«անձնանուէր աշխատութեանը վերայ: Այժմ որ տէ-  
«րութեան կամք է հեռացընել զինքը վիճակիս առաջ-

«նորդութենէն ըստ պահանջանաց կամ առաջարկու-  
 «թեան Կաթուղիկոսին աղբիս, կինդրեմ որ ուսումնա-  
 «րանին վերատեսչութիւնը դարձեալ մնաց նոյն վար-  
 դապետին ձեռքը, և գիտեմ որ այս բանիս ընդդիմու-  
 «թիւն չկայ ոչ Կաթուղիկոսի կողմանէ և ոչ Կայսերա-  
 «կան կառավարութեան կողմէն»: Բայց Խալիպեանը՝  
 մեզ անչաչտ պատճառաւ՝ կարծես թէ շիտթեցաւ,  
 տագնապեցաւ, և ինչպէս որ կիարծուի՝ չուսալով որ  
 ե՛րբ և ինչ դարձեալ վարդապետին կցանձնուի ուսում-  
 նարանին վերատեսչութիւնը՝ աճապարեց առաջարկել  
 Տէրութեան որ առժամանակեաց կառավարիչ ուսում-  
 նարանին նշանակուի Պ. Սարգիս Տիգրանեան, որ Տես-  
 չութեան պաշտօնէն վաղուց արձակուած էր և կրնակէր  
 է նախընտան:

Մատթէոս Կաթուղիկոսին վախճանիլը պատահե-  
 ցաւ, ինչպէս որ ասացինք, 1865 ին օգոստոսի 22-ին.  
 բայց նորա առաջարկութեամբը սկսուած վերադննու-  
 թիւնը առաջ տարուեցաւ Յանձնաժողովոյն ձեռքովը՝  
 մինչև հոկտեմբեր ամսոյն վերջերը, և այնուհետև  
 Գարբիէլ վարդապետը բոլորովին քաշուեցաւ աղասե-  
 ցաւ վիճակին և ուսումնարանին սրտամաշ և ծանր  
 կառավարութենէն: Իսկ Խալիպեան Ուսումնարանը օրէ  
 օր տկարացաւ. աշակերտաց թիւը քանի գնաց պակսե-  
 ցաւ, և նոր կառավարչին ու Խալիպեանին բոլոր աշ-  
 խատանքները և յոյսերը պարսպ ելան, թէպէտ և  
 առջի բերան վարժապետները նոյն էին, և Ուսումնա-  
 րանին կազմ կանոնը ընդհանրապէս անփոփոխ: Թոշա-  
 կաւոր աշակերտք փոխանակ աւելնալու գրեթէ բոլո-  
 րովին պակսեցան, և մնացին միայն ձրխավարժ աշա-  
 կերտները ու քանի մի եկեղեցականաց որդիք՝ նոյնպէս  
 ձրխավարժք:

Այն մեջոցին՝ չորում Կաթուղիկոսական Աթոռը  
 պարսպ էր, տեղասպահ Ասլանեան Յովհաննէս Արքե-

պիսիոպոսին առաջարկութեամբը նշանակուեցաւ կա-  
 ուավարիչ վիճակին նախընտանի և Պեսարապիոյ Եղիա-  
 զար Արքեպիսիոպոսը: Տէրութիւնը իմացուց նորա՝ թէ  
 ըստ կարգադրութեան Ոստիկանարանին ներքին Գոր-  
 ծոց՝ Խալիպեան Ուսումնարանին համար տարին 3,000  
 ըուպ. որոշուած լինելով վիճակին արդիւնքներէն  
 տրուելիք, բարեհաճի կարգադրել որ այդ դումարը  
 տարուէ տարի տրուի Ուսումնարանին անխափան: Իսկ  
 Եղիազար Արքեպիսիոպոսը պատասխանեց օստիկանին՝  
 թէ «Նս միտք ունիմ այս վիճակիս համար զատ Հողեոր  
 դպրոց բանալու. ուստի չեմ կարող վիճակալին ար-  
 դիւնքներէն փող մատակարարել է նպատտ Խալիպեան  
 Ուսումնարանին»: Ոստիկանը լուեց, և Արքեպիսիոպոսին  
 դործողութեան հետեանքը այս եղաւ որ ուսումնարա-  
 նին մէջ ձրի դատարարակող եկեղեցական աշակերտ-  
 ներն ևս արձակուեցան:

Նոր Ռուսիոյ ընդհանուր Կուսակալին կողմանէ բա-  
 ւական ջանք եղաւ որ տէրութեան տուած 11,000-ին  
 դիմացը Տաճկատանէն և ուրիշ օտար երկիրներէ հայ  
 աշակերտներ հաւաքուին Ուսումնարանը: Առջի բե-  
 րանը 15 աշակերտէն աւելի բերուեցաւ Պօլխէն, Տրա-  
 պիզոնէն ու Մոլտաւիայէն, գրեթէ ամէնքն ևս աղքատ  
 և չքաւոր ծնողաց որդիք. բայց և նոքա փոխանակ ա-  
 ւելնալով՝ քիչ ժամանակէն սկսան պակասիլ պէսպէս  
 պատճառներով, որոց գլխաւորն էր Ուսումնարանին  
 ներքին բարեկարգութեան օրէ օր խանդարուելը, և մե-  
 ծերուն կողմանէ պէտք եղած արթուն հսկողութեան  
 պակասիլը:

Այն ժամանակէն հասկացաւ տէրութիւնը որ Խա-  
 լիպեան Ուսումնարանէն սպասուած քաղաքական օ-  
 գուտներուն ու նպատակին պիտի չհասնի. ուստի ու-  
 րիշ հնարքով ուղեց այնպէս անել՝ որ տուած 11,000-ը  
 գուր տեղը չվատնուի Ուսումնարանին վերայ: Որոշուե-

ցաւ որ Օտեսսայի մէջ Ռիշըլիէօ դուքսին անուսովը եղած Գիմնասիօնին կամ վարժարանին քով առանձին ուսումնարան մի բացուի՝ օտար երկիրներէ եկող 30 Հաջ աշակերտաց համար, որ այն դպրոցին մէջ բնակին ու դաստիարակուին Հաջ դաստիարակի մի ձեռքով, և ուսմանց դասառութիւնը երթան ընդունին գիմնասիօնին մէջ: Օտեսսայի ուսումնական շրջանակին խնամակալը Պ. Կոլուպցով՝ կէս պաշտօնական կերպով առաջարկեց Գաբրիէլ վարդապետին թէ արդեօք չանձն կառնուի այն նոր բացուելու Հաջց դպրոցին վերատեսչութիւնը. և նա պատասխանեց թէ իրեն չանձնառութիւնը կատեալ է դպրոցին մէջ գրուելու կարգէն ու կանոնէն, և ուրիշ կարևոր պայմաններէ՝ որ դեռ չայտնի չեն իրեն: Տէրութեան այս դիտաւորութիւնը անկատար մնաց երկու երեք տարի, մինչև որ Խալիպեան Ուսումնարանին բոլորովին փակուիլը վրձուուեցաւ, և Օտեսսայի մէջ բացուելու դպրոցին համար որոշուած փողը (18,000 ռուպ.) Մոսքուայի Լազարեան ճեմարանին առնուեցաւ՝ և նպատակ այնտեղ նոր բացուած կամ բացուելու Արևելեան լեզուաց Բաժնին:

**Գ Լ Ո Ւ Խ Ի Թ.**

Նորընտիր Գեորգ Վեհափառ Կաթողիկոսին այցելութիւնը ի Խալիպեան Ուսումնարան:—Աստիճարանին տարազայ փճակին համար եղած առաջարկութիւնները:

Իրաւացի խօսք մի է ոմանց ասածը՝ թէ մեր ազգը չուսով կապրի. որ թէպէտ կենդանեաց ոմանց օգով ապրելուն կնամանցընեն, բայց այս տարբերութիւնը կայ որ, Առաքելոյն վկայութեանը նայելով՝ Հիմնա-

կան և հաստատուն չոյս ունեցողը ամօթով չմնար, և չուսով ոչ միայն կապրի, այլ և կինդայ կուրախանայ. «Յուսով խնդացէք»: Այսպիսի անդրդուելի չուսով և խնդութեամբ ողջունեց մեր ազգը 1866 տարուոյն մէջ այժմու Վ. Կաթողիկոսին Գեորգայ Գ. ընտրութիւնը, և 1867-ին Տաճկաստանէն սուրբ Եջմիածին եկաւորութիւնը: Մեծ համարում ունէին ամէնքը՝ Նորին Վեհափառութեան ազգասիրութեան և ուսումնասիրութեանը վերայ, և գրեթէ ոչ ոք կտարախուսէր՝ թէ նորա ձեռօքը պիտի լուսաւորուի ազգը այն ուսմանց և գիտութեանց լուսովը, որով միայն կարող է կալ մնալ իւր ազգութեանը մէջ, և ըստ պահանջանաց ժամանակիս շառաջադիմութիւն ունենալ: Մանր և դժուարին պաշտօն և աշխատութիւն էր Վեհափառին չանձնառածը. բայց կուսացուէր որ նորա ջանասիրութեանը գործադիր պաշտօնեայք չեն պակասիր ազգին մէջ, այլ և հետ գհետէ կբաղմանան:

Նորընտիր Հայրապետը Թիֆլիզ հասնելուն պէս՝ ի սուրբ Եջմիածին հրաւիրեց նաև Այվազեան Գաբրիէլ վարդապետը, և չետ իւրոյ մեծահանդէս օծմանը (որ կատարուեցաւ մայիսի 21-ին) չունիսի 1-ին ուրիշ չորս վարդապետաց հետ ի միասին եպիսկոպոս ձեռնադրեց նաև Գաբրիէլ վարդապետը, անուանեց զինքը Անդամ Սինդղին սրբոյ Եջմիածնի, և Ուսումնական Յանձնաժողով մի հաստատելով՝ բազկացեալ ի քանի մի անձանց, նորա անդամներէն մէկը անուանեց դարձեալ նոյն վարդապետը: Եւ որովհետև ինքը Վեհ. Կաթողիկոսը չուսով պիտի ճանապարհորդէր ի Ռուսաստան՝ երկու երեք ամսուան համար, հրաման տուաւ նաև եպիսկոպոսին որ դառնայ Խրիմ, հաւաքէ իւր գրքերն ու գրուածքները, և աշնան օրերը դարնայ Եջմիածին, ուր և բնակի այն ձմեռը, և դարնան սկսի կատարել ազգային ուսումնարանաց ընդհանուր տեսչութեան պաշտօնը:

Վեհափառ Կաթողիկոսին ճանապարհորդութիւնը երկարելով Հաղիւ կարողացաւ նա տարւոյն վերջի օրերը հասնել Փեթերպուրկէն՝ Քիշնեւէն անցնելով և Խրիմ և և թէողոսիա: Այնտեղ իւր այցելութեամբը պատուեց Խալիպեան Ուսումնարանը 1868-ին յունուարի 8-ին: Հետն էին այն միջոցին Խալիպեան Յարութիւն Ադան և Գաբրիէլ եպիսկոպոսը, նաև և քաղաքացւոց քանի մի անձինք, և Կաթողիկոսը շատ հաւանեցաւ ուսումնարանի շէնքին ու կարգադրութեանը: Պ. Խալիպեանը չիշեցուց Վեհափառին՝ թէ Նդիազար Արքեպիսկոպոսին բացատրութեամբը այն երեք հազար ըուպլին որ պիտի տրուէր և նպաստ Ուսումնարանին՝ ըստ կարգադրութեան Ոստիկանին Ներքին Գործոց, ահա երբորդ տարին է որ չտրուիր, և Կաթողիկոսը խոստացաւ որ էջմիածին դառնալուն պէս 6,000 ըուպլին յուղարկել տայ, թէպէտ և այնպիսի փող չհասաւ ուսումնարանը ոչ այն ժամանակը և ոչ չետոյ:

Վեհափառ Կաթողիկոսին կամքը այն էր՝ որ Գաբրիէլ եպիսկոպոսն երթայ հետը էջմիածին. բայց չետոյ խնայելով նորա բնական տկարութեանը, որ կարող էր աւելի մնասուել ձմեռնային օդերուն դառնութենէն, հրաման տուաւ որ մնայ իւր հայրենիքը մինչև դարուն, մինչև երեն հրաւերելը, և այնպէս դարձաւ և Մայր Աթոռն:

Գարունն եկաւ, և էջմիածնայ Սինոդը հրաւերեց զԳաբրիէլ եպիսկոպոսը՝ ոչ թէ ուսումնարանաց տեսչութեան պաշտօնը կատարելու, ինչպէս որ նա յանձն առած էր, հասպա իբրև Սինոդի անդամոց մէկը կենալու էջմիածին, զոր եպիսկոպոսը պիտի չկարենար ա՛նել՝ մնաստակար ճանաչելով իրեն անձին Արարատեան նահանգին ծանր օդն ու ջուրը, ուստի խնդիր տուաւ որ եթէ կարելի չէ համարել զինքը բացակայ անդամ Սինոդի, ընդունին իրեն հրաժարականը Սինոդի անդամութենէն:

Գաբրիէլ եպիսկոպոսին այն գիւրը և խնդիրը առանց պատասխանի մնաց մինչև 1870 տարւոյն մայիս ամիսը, չորում Վեհափառ Կաթողիկոսը Թիֆլիզ եկած լինելով, եպիսկոպոսին մէկ երկու բարեկամացը ձեռքովը հրաւերեց զինքը և Թիֆլիզ: Փութացաւ եպիսկոպոսը և տես և ի չարդութիւն Վեհափառ Հաչրապետին. սիրալիք ընդունելութիւն գտաւ Նորին Վեհափառութենէն, և մինչև սեպտեմբերի 15-ը, այսինքն քանի որ Վեհափառը և Թիֆլիզ էր, ինքն ևս այնտեղ կեցաւ, և ձեռքէն եկած դբաւոր ծառայութիւնները ամենայն սիրով մատոցց Վեհափառին. որոյ համար ոչ միայն լիաբերան շնորհակալութիւններուն արժանացաւ, այլ և առանձին պարգևատրութեանց:

Այն միջոցին էր որ Վեհափառ Կաթողիկոսը քանի մի անդամ խօսեցաւ եպիսկոպոսին հետ՝ թէ արդեօք ինչ անելու է որ Խալիպեան Ուսումնարանը դարձեալ իւր առաջին բարեկարգութիւնը գտնէ, այնպէս որ թէ՛ ծայրագոյն Հոգևոր իշխանութեան ձեռքէն չելնելով՝ աղագնութիւնը անխորուստ պահէ, և թէ՛ Տէրութեան շնորհած և շնորհելու արտօնութիւնները ձեռքէ չհաննէ: Գաբրիէլ եպիսկոպոսը պատմեց Վեհափառին՝ թէ «իմ լսածս այս է որ տարիէ մի և վեր տէրութիւնը ետևէ է դարձընելու այն ուսումնարանը Սեփուրիս, այսինքն Հոգևոր դպրոց կամ Գպրանոց վիճակին Հաչոց Նախիջևանի և Պեսարապիոց. իսկ Խալիպեան Յարութիւն Ադան տեսնելով որ այդ քանին վերջին որոշումը Վայսըր իրեն կամքին ու հաւանութեանը թողած է, կպնդէ որ իւր անունը ունեցող ուսումնարանը լինի հասարակաց վարժարան (Կիճուրիս), չորում 30 Հայ աշակերտք ձրի դաստիարակուին իրեն տուած և տալու փողերովը. իսկ ալլք՝ թէ՛ հաչաղգիք և թէ՛ օտարաղգիք՝ ուսում առնուն նոյն շէնքին մէջ՝ սահմանեալ թոշակը մճարելով»: Վեհափառ Կաթողիկոսը

պատասխանեց թէ «Այդ առաջարկութիւնը վտանգա-  
 «ւոր կերբէնայ ինձ ուսումնարանին ազգայնութեանը  
 «չպահանջուէն կողմանէ: Ես Փեթերպուրի եղած ժա-  
 «մանակս խնդրած էի տէրութենէն որ ուսումնարանը  
 «մեր դերագոյն տեսչութենէն չհանուի, և ազգային  
 «լուսաւորութեան Ոստիկանին անմիջական իշխանու-  
 «թեանը ներքեւ չձգուի. և դարձեալ նոյն մտքի վերայ  
 «եմ. ուստի քեզ կ'յանձնեն, սիրելի, որ ժամ մի առաջ  
 «երթաս աստի ուղղակի Նախիջևան, խօսիս բերան և  
 «բերան Խալիպեան Յարութիւն ազգային հետ, հասկա-  
 «ցընես իրեն մեր միաքը, որ այն ուսումնարանը պարզ  
 «Հոգևոր դպրոց (կամ ինչպէս ի Պօլիս կանուանեն) ժա-  
 «ռանգաւորաց դպրոց) դարձնել չէ, հապա սիզքնական  
 «կարգադրութեանը վերածել, որով միայն օգտակար  
 «կարող է լինել ազգիս և տէրութեան, ինչպէս որ եօթը  
 «տարուան փորձն ևս ցուցուց մեզ»:

Յանձն առաւ Գաբրիէլ եպիսկոպոսը այն նոր տե-  
 սակ դեսպանութիւնը, և Վեհափառին յանձնարարա-  
 կան մէկ կոնդակովը գնաց Նախիջևան, խօսեցաւ Խա-  
 լիպեանին հետ օրերով, հասկացաւ նորա անփոփոխելի  
 դիտաւորութիւնը, և ըստ այնմ տեղեկութիւն տուաւ  
 Վեհափառ Կաթողիկոսին՝ Հետագայ նամակով:

«Վեհափառ Տէր,

«Ստուածարեալ Հայրապետ.

«Շնորհաձիթ օրհնութեամբ Վեհափառութեանդ ճանապար-  
 հորդեալ անփորձ և անվանեղ ընդ Կովկասեան լեռանցն կոհակս  
 և ընդ լայնարձակ դաշտս Ստաւրփոլի, յետ ութից աւուրց ժա-  
 մանեցի ոյջամբ, և զիշերախառն մտի ի քաղաք այսր, ուր և դտի  
 զձերունի իշխանն մեր զազա Յարութիւն Խալիպեան ի թեթև  
 իմն տկարութեան: Խնդրութեամբ ընկալաւ նա զողջոյն Վեհա-  
 փառութեանդ, ապա և զիտնդակդ օրհնութեան. զոր և երկցս  
 և երկցս ընթերցեալ՝ զուարթացաւ յանձն իւր, իբր զի յոյժ  
 օրտարեկ և յուսակտուր է ընդ այսչափ անազանել փխձանական

վճուոյն որ զապալայ դրութենէ ուսումնարանին իւրոյ, և ընդ  
 մտալուտ վտանգն շիջանելոյ խստաւ այնր առկայձեալ ճրագի:  
 Յետ այնորիկ աճա դաւուրս երես խօսեցեալ ընդ նմա զամենայնէ՝  
 յայն հանգուցաք զբանս մեր և զխորհուրդս, զի որչափ և իցէ  
 հնար՝ միաբանեցին դիտաւորութիւնը նորին Խալիպեան իշխանի  
 և Տէրութեան զխոյլին ընդ իրաւացի ցանկութեան Ձերոյ Վե-  
 հափառութեանդ. այնպէս զի «ա, Խալիպեան ուսումնարանն մի՛  
 օտարացի ի նախնական և ի կիմնական ազգային սիզքանց իւրոց.  
 բ, զի օգտակար լիցի այն մանկանց ազգիս առհասարակ, և  
 մշտնջենաւորեացէ ընդ հովանեաւ ինամոց Ձերոց և Տէրութեան,  
 և գ, զի աղատ լիցի ի տալոյ ազգայնոց մերոց կասկածանս օ-  
 տարանալոյ աշակերտաց նորին յազգութենէ, միանգամայն և  
 յազգելոյ տէրութեան այնպիսի կասկածանս՝ զորովսիս զբժ-  
 րազգաբար՝ սիսեալ են ազգել նմա ոմանք յուսումնարա-  
 նաց ազգիս մերոյ, որպէս և յայտ է Ձերումդ Վեհափառու-  
 թեան: Զայս ամենայն ըստ բաւականին պարզեալ տեսցէ Վե-  
 հափառ Տէրութիւնդ Ձեր ի նամակին Յարութիւն աղայի որ ընդ  
 սկիւն. բայց ինձ կարևոր թուեցաւ հաղորդել Վեհափառութեանդ  
 և զթարգմանութիւն խոստմնադրոյն (հանգերձ բնագրան) զոր  
 սահմանեալ է նա արդէն ի լինել իւրում ի Փեթերպուրի յամ-  
 սեանն մարտի ընդ Տելեանովի և ընդ Կոմսին Սիվերսի: Յիշէք  
 անշուշտ, Վ. Տէր, զի զիմաստ դրուածոյդ այդորիկ զիտեղով իմ  
 ի լրոյ՝ ճանուցեալ իսկ էի Ձերումդ Վեհափառութեան. սակայն  
 դիտողութեան արժանի համարելով զբուն բանս նշանաւոր զը-  
 րուածոյն, արժան համարել յաւելուլ խոնարհաբար զկարծիս իմ,  
 թէ որպէս ինձ թուի՝ հարկ ի վերայ կայ փութալ զառաջս առ-  
 նուլ փտանդին խախտելոյ խստաւ ուսումնարանին այնորիկ, և  
 զհարկաւորն կամաւոր առնելով հաւանել ընդ այս՝ զի ըստ հայ-  
 կական մասին կացցէ մնացէ այն ընդ անմիջական հսկողութեամբ  
 Ձերոյ Վեհափառութեանդ և փոխանորդաց Ձերոց, և միանգա-  
 մայն ըստ ուսումնական ընթացիցն շարադասեսցի ի կարծս Կիմ  
 նազիւս անուանեալ վարժարանաց. որովհետև անհնար է (զէթ  
 յայժմու ժամանակիս) այլ ազգ. յայտահուլել զհաստատութիւննորին:

«Կամ էր ինձ, Վեհափառ Տէր, ըստ բերանացի պատուիրանի  
 Ձերում սպասեալ մնալ աստէն մինչև ցընդունելութիւն գէթ հե-  
 ուազրական պատասխանելոյ Վեհափառութեանդ. առ այդ թուղթ  
 իշխանին. այլ քանզի յառաջին աւուրս Հոկտեմբերի դպրոց է  
 Կայսրն յՕտեսսա և ի Խրիմ, կամի և Խալիպեան իշխանն անդր  
 դնալ, ուստի և ես յետ քանի մի աւուրց մեկնեցեսայց գնալ ընդ  
 ծով ի Քէդոսիս, և անդ սպասեցից պատասխանելոյ Վ. Տեսանդ,

քանդի և Յարուժիւն աղայն անդանօր դոցի մինչև ցայն ժամ  
«Խորնարհեալ է համբոյր Աստուածարեալ աջոյ Սրբազան  
Հայրապետիդ և այլն:

29 Սեպտեմբերի 1870,  
Ի Նոր—Նախիջևան.  
Թ. 27.

Ինչպէս որ այս նամակին խօսքերէն ևս չաչտի է,  
Թէ՛ Խալիպեանը և Թէ՛ եպիսկոպոսը դրած էին մըտ-  
քերնին՝ Թէ՛ մէջը չիշուած դաշնագրին զօրութեամբը՝  
պէտք էր անպատճառ որ ուսումնարանը Խալիպեանին  
ուղած կարգադրութիւնը ընդունէր, չաչտինքն դառնար  
Հասարակաց վարժարան, և մէջի Հաչիախան բաժինը  
միայն՝ ըստ կրօնական և բարոյական մասանցը մնար  
Կաթուղիկոսին ծայրագոյն Հսկողութեանը տակ, ուստի  
բոլորովին Համաձայն չէր Վեհափառին կամացը, նորա  
Համար եպիսկոպոսը Հետագայ պատասխանը ընդու-  
նեցաւ Կաթուղիկոսին.

«Գէորգ ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ  
Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս ամենայն Հայոց, ծայրագոյն  
Պատրիարք Համադղական նախալեծար Աթուոյ Արարատեան Ա-  
ռաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիէ Էջմիածնի, Հո-  
գեղոսն Գաբրիէլ Սրբազան Եպիսկոպոսի սիրելւոյ մերոյ հարա-  
զատի և հաւատարիմ՝ Մայր Աթուոյս խնդալ է Տէր Զգիւր սիրե-  
լութեան Ձերոյ գտողեալն է 27 Սեպտեմբերի ընկալեալ տեղե-  
կացաք զաշխատութեանց Ձերոց է բանս և է խորհուրդս ընդ զե-  
րամեծար Յարուժիւն Աղայի Խալիպեան յաղաչս ուսումնարանին  
որ է Թէոդոսիա Այլ որպէս խօսեցաք ընդ Ձեզ է Տիբիսի և պար-  
զեցաք զցանկութիւն սրտի մերոյ ըստ բաւականին, այս խի է զի  
ուսումնարանն կացցէ և մնացէ անփոփոխ է սկզբնական դրու-  
թեան իւրում, և կառավարեսցի ըստ առաջնայն ընդ տեսչու-  
թեամբ Ձերով, իբրև մերոյ փոխանորդի, որ Թուի ինձ լինել  
անշուշտ օգտակարագոյն յաւէտ և վասն Տէրութեան և վասն  
աղբայնոց մերոց, ապա Թէ ոչ՝ անուանեսցի Հոգևոր ուսումնա-  
րան, դարձեալ ընդ Ձերով տեսչութեամբ: Սակայն բանք նամակի  
Աղա Յարուժիւնի, ոչ Համապատասխանէր ըստ ամենայնի ցան-  
կութեան սրտի մերոյ և խորհրդոյ, և ուսումնարանն հեռանայր

յոյժ է բուն նպատակէ իւրմէ, վասն որոյ գրեալ նմա զպատու-  
խանին՝ ամփոփեալ է ծոց դոյս ուղղեմք առ Ձեզ, առ է յանձնել  
նորան գերադնուութեան, և ամենայն ջան է դործ դնել առ է  
համոզել զնա:

«Արեւի, զայս աղբօգուտ դործ ըստ ամենայնի ասպատան  
առնեմք է փոյթ մտերիմ աշխատութեանց քոց առ է վերականգ-  
նումն իրաւանց ուսումնարանի ըստ սկզբնական նշանակութեան  
է դործան նոյն խի Հիմնադրի և միանգամայն է շահ տէրութեան  
և Աղբի, լիայոյս եմք, զի դուք խոհական հանձարով Ձերով իբրև  
առաւել ծանօթ պարագայից իբաց և միանգամայն խորհրդոց  
մտացս աւանդելոց Ձեզ բովանդակ, համոզիկեր բանիւք հաճեալիք  
զկամն նորա է հաւանութիւն միաբանութեան ընդ խորհուրդս  
մեզ, որպէս զի միջնորդ լիցի առ Տէրութիւնն, և Գուք բերկրու-  
թեամբ սրտի փութասցիք մեզ աւետել զաւետիս ուրախաւիթ:  
Եւ է բանիլ դարնան է գալն Ձեր առ մեզ Տեսուն յաջողութեամբ,  
ջանալ և զնա ընդ Ձեզ ածել է սուբբ Էջմիածին:

«Մնամք վասն Ձեր աղօթարար և ակնկալու բարեյաջող կա-  
տարման աղբաշահ առաջարկութեանս: Ողջ լեր:

Ի 20 Հոկտեմբ. 1870 ամի.  
և ազգի մերոյ ՌՅԻ,  
Համար 325.

Գէորգ Գ. Կաթուղիկոս  
ամենայն Հայոց

«Հոգեղոսն Գաբրիէլ Ուսումնապետը՝  
«Սրբազան Եպիսկոպոսի Այլազեան:  
Ի Թէոդոսիա»

Մինչդեռ այս Թղթակցութիւնները կշարունակուէին  
Խալիպեանին, Եպիսկոպոսին ու Կաթուղիկոսին մէջ, է  
Փեթերպուրի (ինչպէս որ չետոյ իմացուեցաւ) Յանձնա-  
ժողով մի որոշուած էր Կայսերական Հրամանով՝ Խալիպ-  
եան ուսումնարանին այժմու և ապագայ վիճակը կարգի  
դնելու Համար: Խալիպեանը տեղեկութիւն չունենալով  
այս բանիս, կհարցանէր նամակներով մէկուէն մէկալին՝  
Թէ՛ արդեօք ի՞նչ է պատճառն որ իւր խնդիրն ու ա-  
ռաջարկութիւնը չկատարուի: Այն բաւական չհամա-  
բելով, խնդրեց եպիսկոպոսէն որ Թէոդոսիայէն չու-  
ղարկուի Փեթերպուրի փորձ և հմուտ անձ մի՛ իրեն  
Խալիպեանին ծախքովը, և նա երթալ՝ ոչ միայն տե-

դեկանայ գործոցն, այլ և աշխատի որ մէկ ժամ առաջ վճռուի ուսումնարանին ապագան, և կարգադրութիւնը Հաստատուի:

### Գ Լ Ո Ի Խ Լ.

Խալիպեան Ուսումնարանին փակուիլը: — Յարութիւն Աղա-  
յին վախճանիլը:

Խալիպեան Յարութիւն աղային խնդրանքը Փե-  
թերպուրի յուզարկուած անձը (որ էր Թէոդոսիոյ Երկ-  
րական կառավարութեան դահլերեցը՝ Պ. Փալիմիսես-  
թով) 1871-ին փետրուար ամսոյն վերջերը մայրաքա-  
ղաքը Հասնելով, տեղեկացաւ Խալիպեան ուսումնա-  
րանի խնդրոցն, և խնդրէն Հեռագրով իմացուց Գաբրիէլ  
Եպիսկոպոսին՝ թէ արդէն դեկտեմբերի 4-ին Վայսերա-  
կան վճռով որոշուած է, որ Թէոդոսիոյ Խալիպեան Ու-  
սումնարանը փակուի, շէնքը չանձնուի Հայոց Հողերը  
Երևանութեան՝ որ դառնայ Դպրանոց, և Խալիպեանին  
ընծայած կառուածն ու տները ետ տրուին իրեն: Այս  
լուրը մեծապէս զարմանք բերաւ թէ՛ Եպիսկոպոսին և  
թէ՛ Խալիպեանին. բայց կոպտակն որ պաշտօնական  
ստոյգ տեղեկութեամբ Հաստանան բանին հուժիւնը:

Վեհափառ Վաթուզիկոսը իւր մէկ կոնգրակին մէջ որ  
գրած էր առ Եպիսկոպոսն 1871-ին յունուարի 4-ին,  
ուրիշ կօտրեղէն զատ այս կասէր. «Յայտնելիք մեզ նաև  
«գլխոտունն Խալիպեան իշխանին՝ ընդ մերձ դարց  
«անձամբ ի Թէոդոսիա ի խորհրդակցութիւն զձանը  
«խնդրոց ուսումնարանի նորին, և զգիտաւորութեանց  
«ձեր և նորին՝ գաղոց ի մայր Աթոռս չառաջիկայ ապ-  
«րիկ ամսոյ տարւոյն: Այն ունիմք՝ վստահ ի Հաւա-

«տարմութիւն ձեր և ի խոհանարութիւնն՝ թէ որպէս  
«ունիք լուրջ մտօք ըստ ցանկութեան մերոց և օգտի  
«աղղի յանդ Հանել զգործը մեծ, նոյնպէս և արդեամբք  
«ճշմարտել զգալուստդ աստ առ մեզ ի սուրբ Եջմիա-  
«ծին ի խորհրդածութիւն կարգադրութեանց նորոց ու-  
«սումնարանի մայր Աթոռոց: Մաղթանօք և Հայրա-  
«կան սիրով յանձն առնելով զձեզ ի խնամս Աստուա-  
«ծային տեսչութեան, և աղօթս առնեմք յամենայն  
«ժամ առ Տէր, զի աւուրք ձեր որպէս ցարդ, նոյնպէս  
«և յայսմհետէ լիցին արդիւնաւոր պաղովք բարեաց  
«առաքինական» և այլն: Եւ չերաւի. Խալիպեան իշ-  
«խանը միտք ունէր Թէոդոսիա երթալու, Եպիսկոպոսին  
«Հետ խօսելու տեղն ի տեղը ուսումնարանին գործոցը  
«վերայ, և ապա Հետք ի միասին ծովով կամ ցամաքով  
«երթալու ի սուրբ Եջմիածին. սակայն Աստուածային նա-  
«խախնամութեան տնօրէնութիւնը ուրիշ կերպ երեցաւ:

Ապրիլի 7-ին Հեռագիր մի ընդունեցաւ Գաբրիէլ  
Եպիսկոպոսը Խալիպեան իշխանէն, յորում կճանուցա-  
նէր թէ ինքը ծանրկեղ Հիւանդ է, և կինդրէր որ ան-  
պատճառ երթայ Նախիջևան՝ իրեն այցելութեան:  
Աճապարեց Եպիսկոպոսը, ապրիլի 12-ին ճանապարհ  
Երաւ ցամաքով, ու 15-ին Հասաւ Նախիջևան՝ Խալի-  
պեանին Փոխովքա (կամ Քամըշլիվաթքա) անունով ա-  
զարակը: Այնտեղ գտաւ ճերուկն սպասիկ շնչարդե-  
լութեան ու ջրգողութեան ցաւերու մէջ, թէպէտ և  
միտքը զգաստ էր, և ինքը ոտքի վերաց, և լի յուսով՝  
առաջուան առողջութիւնը դարձեալ ձեռք բերելու:  
Սովորական սիրովն ու մեծարանօքը Հիւրընկալութիւն  
արաւ նա Եպիսկոպոսին, խօսեցաւ Հետք ուսումնարանի  
գործերուն վերայ, ցուցուց Վեհափառ Վաթուզիկոսին  
առած կոնգրակները, յայտնեց ու մի առ մի բացատրեց  
Եպիսկոպոսին իւր դիտաւորութիւնները, և խնդրեց որ  
նա դիր անցընէ ամէն բան՝ իբրև իւր կողմանէ այն

կոնդակներուն պատասխան: Շարագրեց եպիսկոպոսը նորա խնդրած պատասխանը, և սեւագրութիւնը երեք չորս անգամ առջևը կարդալով (այն միջոցներուն որ այնքան սաստիկ չէր լինէր ցաւերուն տուած նեղութիւնը) նորա կամքին ու խօսքերուն Համեմատ սրբազրեց, և մաքուր պատճէնն ալ պատրաստեց: Եւ ահա այս է այն կարևոր ու նշանաւոր գրուածքին օրինակը.

«Ձերդ Սրբադնասուրբ Օծութիւն Վեհափառ Հայ-  
ւրապետ Ազգիս մերոյ, Սրբոյ աջոյդ օրհնելոյ խո-  
նարհաբար համբոյր որդեական.

«Երկրքին կոնդակք օրհնութեան Վեհափառութեան Ձերոյ շնորհեալք առ իս ի 6 և ի 10 Մարտի տարւոյս՝ համաբօքս 52 և 56, հասեալ առ իս ի նոյն ամսոյ 18 և 27, դտին զիս ի մեծի տկարութեան մարմնոյ, այնչափ զի ոչ միայն ոչ կարեմ առ այժմ ճանապարհորդել և դալ ի Մայր Աթոռդ յերկրպագութիւն Միածնա կը տաճարին, և ի համբոյր սուրբ աջոյդ, որպէս փափաքէի ի բոլոր սրտէ և խոստացեալ իսկ էի, այլ և հազիւ ունիմ կարողութիւն՝ պատասխանելոյ վերոյիշեալ կոնդակաց Վեհափառութեանդ յետ այսքան աւուրց ի վերայ անցանելոյ, որոյ վասն յուսամ թէ ներողամիտ լիցի ինձ Վեհափառութիւն Ձեր:

«Գերապատիւ Գաբրիէլ Սրբազան եպիսկոպոսն ըստ հրամանի Վեհափառութեան Ձերոյ և ըստ հրաւիրանաց իմոց եկն առ իս այսր, բայց տեսնելով զվիճակ տկարութեանս՝ համոզեցաւ թէ արդարեւ անհնար է ինձ ճանապարհակից լինել ինքեան: Ուստի ահա ինքն փութայ առ սոս Վեհափառութեան Ձերոյ իբրև հաւատարիմ վկայ և թարգման խոնարհական յարդանաց իմոց առ Ձերդ Վեհափառութիւն, և ընդ նմա Մեծապատիւ (1) . . . իբրև հաւատարիմ պատգամաւոր ի կողմանէ իմմէ, որոց և յանձնեալ եմ բացատրել առաջի Վեհափառութեանդ զհաստատուն և զվախճանական դիտաւորութիւնս իմ ի վերայ նորոգ կարգադրութեանն եղելոյ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ բարեհաճութեամբ զԽալիպեան Ուսումնարանէն մերմէ որ ի Թէոդոսիա: Եւ թէպէտ յորհնաբանեալ կոնդակաց աստի Վեհափառութեանդ ոչ է յայտ՝ թէ նախարարութիւնն Ներքին Գործոց որպիսի՝ պայմանօք յանձնէ տեսչութեան Վեհափառութեան Ձերոյ զհաւաքարութիւն այնր

(1) Յուդարիւնէլա տնչը դէս որոշուած չէր:

ուսումնարանի, բայց որպէս տեսանեմ ի պաշտօնական նամակէ հասարակն Ներքին Գործոց, զորոյ զիմաստն հարորդէ ինձ ինամակալն ուսումնարանաց նահանգիս Պ. Կոլուպցովն զբոյն իւրով որ յ7 Ապրիլի ընդ համարաւ 1853, կամք և տնօրէնութիւն Տէրութեան յայտ մասին զլիաւորապէս այն է, զի տեսչութիւն ուսումնարանին այնորիկ յանձնեցել ինամոց Վեհափառութեան Ձերոյ առայս վախճան՝ զի եղիցի այն այսուհետեւ Սեփնաբլա, որ է Գրքոց Ժողովարարոց՝ վասն վիճակիս Հայոց Նախիջևանի և Պեսարապետի:

«Վեհափառ Տէր, իմ կամք և դիտաւորութիւն եղեալ էր ի բազում ամաց հետէ՝ հանել յարդար վաստակոց իմոց և ի չափաւոր կարողութեանէս տուելոյ ինձ յԱստուծոյ զմասն մի ի հիմնել զհաստատուն ինչ տեղի բարերարութեան և ուսումնական կրթութեան վասն մանկանց տաւապեալ ազգիս մերոյ առհասարակ՝ աշխարհակիսնաց և եկեղեցականաց: Վասն որոյ յամին 1858 տեսնելով ի ձեռին Գերապատիւ Գաբրիէլ վարդապետի (այժմ եպիսկոպոս) Ալիպեան զԲարձրագոյն հաճութիւնն և զհրովարտակ բանալոյ ի Թէոդոսիա քաղաքի ուսումնարան մի ազգային՝ ընդ տեսչութեամբ նախարարութեան Ներքին Գործոց (և ոչ թէ ընդ տեսչութեամբ Հողեւոր իշխանութեան), յորոյ ի բացումն և ի պահպանութիւն տուեալ էր նմա Տէրութիւնն զհրաման ի գործ դնելոյ զմասն ինչ դրամադրոց և եկամտից վիճակիս Հայոց Նախիջևանի և Պեսարապետի, ինքեակամ յօժարութեամբ եզի ի մտի իմում մասնակից լինել այնմ ազգասիրական և ազգօգուտ ձեռնարկութեան, խոստացայ առնուլ ի վերայ իմ զծախս շինութեան ուսումնարանին այնորիկ ի Թէոդոսիա, և որոշեցի առայն 50,000 ռուպ. արծաթ. և զայս արարի ոչ թէ սոսնոց իբրք Թեոֆիլոս կամ Կոնստանտին, այլ զի պահեցի և կատարեցի նպատակն եղեալ իսկզբանէ, և յայտնապէս նշանակեալ ի Վայսերական հրովարտակին որ ի 4 Յուլիսի 1858 ամի, այսինքն զի «Ուսումնարանն այն եղիցի մասնաւոր զպրոց՝ նախանշանակեալ վասն դաստիարակութեան հայազգի մանկանց՝ առանց խտրելոյ գտեղի «Տննդեան նոցա և զծաղումն . . . Ուսումնարանն այն ազատ գլուխ յանմիջական կառավարութեան նախարարութեան ազգային լուսաւորութեան, պարտի կալ մնալ ընդ սոսնոց Կոնստանտին և «Կոնստանտին Գաբրիէլ վարդապետի Ալիպեան, իսկ յետ նորա «Թեմակալ առաջնորդաց վիճակին լուսաւորական Հայոց Նախիջևանի և Պեսարապետի»: Յետ այնորիկ տեսանելով թէ ձեռնարկութիւնն այն երևի ունել Աստուծով յաջողութիւն, և ցուցանէ ոչ սակաւ յառաջադիմութիւն, ոչ ինայեցի ի վաստակս իմ և ի ծախս, և ի վերայ 50,000-ին յաւելի ոչ սակաւ նեղու-

Թեամբ նաև այլ ևս զընթի 150,000, մեծացուցանելով և զարգարելով զընթիւնն զայն հարուստ տպարանաւ, և հարկաւոր զընամբք և կարասեօք, նաև սահմանելով ի սնունդ 20 մանկանց աղքատաց Հայոց՝ ընդ անուամբ Խալիպէան սահուպ՝ տարեկան ըուպլիս 4,500:

«Սակայն վասն դժբաղդութեան տառապեալ աղղիս մերոյ և մեր իսկ, հանդուցեալ Սաթուղիկոսն Մատթէոս՝ ունին զնելով անհիմն չարխտութեանց նախանձստ և հակառակասէր անձանց ումանց, յարոյց ընդդէմ բազմաբզիւն Գաբրէիլ վարդապետին և ամենայն աղքատաց աշխատութեանց նորա հալածանս սաստիկս և անկրաւս, որպէս յայտ է Վեհափառութեան Ձերում, և պատճառ եղև ըրողովին խանդարելոյ նորածաղիկ կարգաց և կանոնաց վիճակիս այսորիկ, միանդամայն և Խալիպէան ուսումնարանին, հեռանալովն վարդապետին ի վերատեսչութենէ նորին: Իբրև տեսի ես՝ Թէ ամենայն ծախք իմ և վստակք յօրուստ ուսումնարանին այնորիկ ի դերև ելին, և ապագայն ևս նորին յանստոյգ և յանհաստատ վիճակի է, յօժարացայ յանձնել զտեսչութիւն ուսումնարանին նախարարութեան Աղգային Լուսաւորութեան, և այն՝ ըստ առաջարկութեան նորին իսկ Տէրութեան, առաջիկայ դրամական պայմանօք: Նախ, ես խոստանայի շարունակել տալ ուսումնարանին ի տարւոյն 4,500 ր.: Երկրորդ, Տէրութիւնն տալոց էր ի տարին 11,000 ր.: Երրորդ, եկեղեցեք վեճակիս կամ Հողեւոր տեսչութիւնն տալոց էր ի տարւոյն 3,000 ր.: Այս կարգադրութիւն հաստատեցաւ ի նախարարութենէ Ներքին Գործոց յամին 1865, և ուսումնարանն այնուհետև անընդհատ ընկալաւ ամ ըստ ամէ՝ յինէն 4,500 ր., և ի Տէրութենէն 11,000 ր. իսկ յեկեղեցական իշխանութենէ կամ յարդեանց վեճակիս այսորիկ և ոչ զիւր քով: Միայն Թէ յօրնումն խոստացեալ և անկալեալ կարգադրութեան կամ ուսումնարանին ի կողմանէ Տէրութեան յերկարաձգեցաւ պէսպէս պատճառանօք մինչև ցայսօր, և ի պատճառս այնպիսի տարտամ և տարակուսական վիճակի ուսումնարանին՝ աղղն մեր կորոյս բողբոջին զյոյսն և զվստահութիւնն՝ զոր ունէր ի վերայ հաստատութեան նորա, այնպէս զի յընթացս վեցից ամաց Թիւ աշակերտացն պահանջաւ յոյժ յոյժ, այսինքն ի 137 աշակերտաց՝ որք էին ի նմա յամին 1864—1865 (որոց վասն տարեկան ծախք լինէին քսան և ութ հազար ըուպ.) այնուհետև մնացին մինչև քսանիւ կամ երեսնիւ չափ աղքատիկ աշակերտք՝ աստի և անտի հաւաքեալք, և ի սնունդ նոցա ի վեցից ամաց հետէ ծախեալ են համագումար ոչ պակաս քան զըուպլիս 100,000:

«Տեսանելով զայսպիսի ողորմելի դրութիւն ուսումնարանին այնորիկ, և ոչ հայելով ի տկարութիւնս իմ և ի ծերութիւնս հասակիս, զնացի ես անձամբ ի Փեթերպուրի ի Մարտի ամսան 1870 ամի, և խօսելով ընդ մեծամեծաց տեղւոյն՝ արարի ընդ նոսա զայն դեր զաշնադրութեան, որոյ պայմանքն ստորագրեալք ի նորին Գերազանցութենէ յԱզա Տելեանովի, ի Արաֆ Սեփերսէ և յիւնէն՝ յայտնի են արդէն Վեհափառութեան Ձերում:

«Ի դաշն առ իս ի Սեպտեմբերի նոյն ամի Սրբազան Գաբրէիլ կպիսկոպոսի, և ի բերել զկանգակ օրհնութեան Վեհափառութեանդ, ծանեայ՝ զի Ձերդ Վեհափառութիւն ոչ ունի զհաճութիւն կատարելոյ դաւաջին պայմանն նշանաբեալ յայնմ դաշնագրի, այսինքն ոչ պահանջէ սուսել զուսումնարանն զայն Աեճիւնայի, և ոչ ունի կամ պահելոյ ի նմա ի վիճակային արդեանց աշակերտս 20: Վասն որոյ փութացայ ինդրել դարձեալ ի Տէրութենէն, զի ուսումնարանն այն մոցէ ի ներքոյ տեսչութեան Նախարարին Աղգային Լուսաւորութեան, և լինիցի Աիճուրիս հասարկաց, որպէս զի աշակերտքն որք ելանիցին անտի՝ ունիցին զերաւունս ընդունելոյ զլէն կամ զաստիճան, և մտանելոյ ի Համալսարան Տէրութեան, և վարժապետքն նմանապէս ունիցին իրաւունս ընդունելոյ զլէն կամ զԹոշակ՝ յետ որոշեալ ամաց ծաւալութեան իւրեանց. իսկ ծայրագոյն իշխանութեան Սրբազնագոյն Հայրապետիք մերում պահեսցի իրաւունքն նշանակելոյ զտեսչ և Հայրէն ուսմանց կրօնագիտութեան և բարոյականի յուսումնարանի անդ: Միանդամայն ինդրեցի՝ զի Տէրութիւնն շարունակեսցէ տալ ուսումնարանին զտարեկան նպաստն 11,000:

«Այժմ ցաւով սրտի տեսանեմ, Վեհափառ Տէր, զի նախարարութիւնն Ներքին Գործոց վճռեալ է Բարձրագոյն բարեհաճութեամբ, զի Խալիպէան ուսումնարանն փակեսցի, պարտք նորին հաստուցին տարեկան նպաստիւքն տուելովք յինէն և ի Տէրութենէ ի հաշիւ այսր 1871 տարւոյ, և շինուածն հանդերձ պարունակելովքն ի նմին շարժական և անշարժ կայիւք և տպարանաւ յանձնեսցի Վեհափառութեան Ձերում առ այս՝ զի հաճեալք բանալ ի նմա զԱեճիւնայի, և որ ցաւալին է վասն իմ և զարմանալին, Պարոն նախարարն հիմնէ զայս կարգադրութիւն իւր ի վերայ անհիմն ենթադրութեանս այսորիկ՝ որպէս Թէ զլէնուածն զայն նուերեալ եմ ես ուսումնարանին այնմիկ սահուպ իբիւր լէնուածն, և որպէս Թէ ոչ միայն ի սնունդ և ի կրթութիւն աշակերտաց, այլ և ի ծախս շինութեան ի գործ եղեալ են եկեղեցական դրամք, մինչդեռ յայտնի է ամենեցուն և յամենայնէ՝ զի նախ, որպէս ասացի, նուէրն իմ ոչ էր սահուպն ինչ կամ սահուպ լէնուածն:

բէսն, և Երկրորդ՝ զի Եկեղեցին կամ Վիճակն ոչ ունին ծախելու և ոչ քրօնէի մի, ո՛չ է զին տեղոյ ուսումնարանին, ոչ է կառուցումն շինութեանն, և ոչ է պահպանութիւն և խնորհութիւն շինուածոյն և Տպարանին, այլ իմոյք սեպհական ծախելքս եղևալ է այն ամենայն: Եւ զայս զիւրին է ինձ, կարծեմ և պարտ խկ է, Վեհափառ Տէր, ապացուցանել առաջի Տէրութեան և ամենայն աշխարհի՝ անհերքելի փաստիւք, որպէս զի ճշմարտութիւնն է յայտ եկեացէ, և անարատութիւն պատուոյ անուանս իմոյ անստղիւտ կացցէ մնացէ ի սերունդս իմ ազգէ յազգ:

«Ի վերայ այսր ամենայնի, որովհետև Վեհափառ Հայրապետդ մեր արժան համարի այժմ ի բարեբանեալ կոնդակի իւրում որ է Ն Կ Երտի՝ Կարապետի ինչ համարել վասն Հայրապետութ արև իւրոյ և մեր խկ՝ զնորոգ փոխարկումն դրութեան կառավարութեան ուսումնարանին, այսինքն զբաւանալ նորին ի բարոյ ծառայութեան ընդ տեսչութեամբ Վեհափառութեան Ձերոյ, կամիմ և ես միտթարել դարձեալ զանձն իմ յուսով բարեաց տառապեալ ազգիս ի նորոգ դրութենէ կառավարութեան ուսումնարանին: Միայն թէ բարեհաճեցի Ձերոյ Վեհափառութիւն ներել ինձ՝ զի եղչի սաստանոր պարզ և համաւօտ բանիւք զգլխաւոր պայմանն՝ որովք միայն կարող եմ տալ զհաւանութիւն կատարման նորոգ կարգադրութեանն այնորիկ, և որովք միայն համարիմ թէ կարգադրութիւնդ այդ կարէ հաստատուն և օգտակար ինչ լինել վասն ազգիս և Եկեղեցւոյ: Եւ ահա պայմանքն իմ այսորիկ են.

«Խոստանամ ես տալ զհաւանութիւն իմ, զի Խալիպեան Ուսումնարանն դարձցի ի Խալիպեան Հոֆոր բարոյ ուղեայն, եթէ,

«Նախ՝ Ծայրագոյն Հոգևոր Երկանութիւնն մեր խոստանայ հաստատուն և անփոփոխ պայմանագրութեամբ սահմանել յարդեանց վեճակիս այսորիկ չափաւոր դումար ինչ ամ ըստ ամէ կանխիկ վճարելի, ի սնունդ և ի կրթութիւն աշակերտաց՝ յիւրմէ ընտրելոց կամ նշանակելոց:—Յայնժամ,

«Երկրորդ, ես ես յանձն առնում և խոստանամ տալ ի սնունդ և ի կրթութիւն 30 աշակերտաց յինչն նշանակելոց կամ իմոյ հաւանութեամբս ընտրելոց՝ ամ ըստ ամէ 4,500 ռ.:—Բայ յայնմանէ,

«Յրրորդ, յանձն առնում զծախս պահպանութեան և նորոգութեան շինուածոյ ուսումնարանին՝ մինչև 51,000 ռ. ի տարւոյ:

«Չորրորդ, տամ Հոգևոր դպրոցին այնմիկ զՏպարան ուսումնարանին՝ հանդերձ զբասնեկան և ամենայն իրք որ է նոսա. որք և կարող են բերել դպրոցին զեկամուտ տարեկան 2,000 ռ. աւելի քան թէ պակաս:—Ի կողմանէ զբամակն օգնութեան

անփոփոխելի են վերոյիշեալ պայմանքն իմ. քանզի կարողութիւն ևս ոչ ունիմ աւելի ինչ տալոյ վասն մշտնջենաւորութեան Հոգևոր դպրոցին այնորիկ:

«Հինգերորդ, որովհետև վեճակս այս յընթացս վեց ամաց, այսինքն յամէն 1865 մինչև ցայսօր, ոչ է սուտեալ ուսումնարանին զտարեկան սահմանեալ զգումարն 3,000 ռ. արծ. ընդ ամենայն 18,000 ռ., Հոգևոր Երկանութիւնն յանձն առցէ՝ ըստ պահանջելոյ օրինաց արդարութեան՝ վճարել զայդ գումար միանգամայն կամ մասն մասն՝ ի հաստուցումն պարտուց ուսումնարանին մինչև ցայսօր անվճար մնացելոց:

«Ինքնին խկ յայննի է, Վեհափառ Տէր, և վեցերորդ պայմանն, զի իրաւունք և անուն Խալիպեան Հոֆոր բարոյն՝ այնորիկ պահուցին ինձ և յաջորդաց իմոց կամ ժառանգաց՝ հաստատութեամբ Վեհափառ Կաթողիկոսի ազգիս և Տէրութեան. և իրաւունքն այնորիկ անպատճառ և բացորոշ բանիւք զբեւոյն ի կանոնս Կարգադրութեանն որ լինելոց է վասն կառավարութեան Հոգևոր դպրոցին:

«Եթէ հաճոյ թուեսցին Ձերումը Վեհափառութեան պայմանքս այսորիկ՝ առաջարկեալք յինչն որդեկան խոնարհութեամբ և ամենայն յարգանք, բարի է. ապա թէ ոչ՝ ես պատրաստ եմ, և ի խղճէ մտաց իմոց ստիպեալ՝ պարտական զանձն իմ ճանաչեմ, և պարտաւորեմ ևս զյաջորդս իմ՝ օրինաւոր բողոքազրոյղ դիմել առ Նորին Կայսերական Մեծութիւնն, զի բարեհաճեցի վերստին ընդ քննութեամբ արկանել զիրաւունսն զոր ունիմ ես ի վերայ այնր ուսումնարանի, և տալ ինձ հրաման փոխարկելոյ զայն ի Կիւսուրի, և կամ եթէ հնար է՝ դարձուցանել ի նա զնախկին դրութիւն նորին և զարտօնութիւնն զորս ունիչ խկըբանն, իբրև մասնաւոր ուսումնարան Հայոց:

«Զլիովին բացատրութիւն դիտաւորութեանց իմոց, որպէս և բանից այսր խոնարհական նամակիս՝ յանձն առնեմ վստահութեամբ Նորին Սրբալիութեան Գաբրիէլ Կաթողիկոսի Այլաղեան, Գեղարատիւ փոխանորդի Վեհափառութեան Ձերոյ. և բաց ի նմանէ ի կողմանէ իմմէ նշանակելով փոխանորդ, Գործակատար և պատգամաւոր զհաւատարիմ բարեկամ իմ՝ զՄեծապատիւ Աղա . . . աւաքեմ զնա առ ոտս Վեհափառութեան Ձերոյ՝ հանդերձ այսու նամակաւ և կարևոր հրահանգք, և ինզրեմ խոնարհաբար ի Վեհափառ Տէրութեանէն ընդունել զնա սիրով և վստահութեամբ փոխանակ իմ, և հաղորդել նմա զամենայն զկամս Ձեր և զդիտաւորութիւնս ի զործս այս ուսումնարանին:

«Վի յուսով ընդունելոյ վաղ ընդ փոյթ զաւետիս կատարեալ

Հաճութեան և Հաւանութեան Սրբազնադոյն Հայրապետիդ մերոյ ընդ առաջարկութիւնս իմ, մնամ համբուրելու Աստուածարեալ սօրոյդ,

«Վեհափառ Տէր,

«Ձերումը Սրբազնասուրբ օծութեան նուաստ ծառայ և այլն.

Ի 18 Ապրիլի 1871,  
Ի Նոր—Նախիջևան:

«Չնամանս զայս ուղղեալ յանուն Վեհափառ Հայրապետին մերոյ Ե Ս. Էջմիածին՝ ըստ ամենայն իմաստիցն և բանից և բառիցն ևս էականաց՝ Ե Թեղադրանաց Աղա Յարութիւնի Խալիպեանց շարագրեցի ըստ ինդրոյ նորին Ե 16 Ապրիլի տալուոյս, և ապա Ե վաղիւն և Ե միւս վաղիւն երկիցս և երկցս ընթերցեալ Ե լուր նորին՝ մինչդեռ յուշի էր և Ե կատարեալ զգաստութեան, տեսի գնա ըստ ամենայնի Հաճ և Հաւան ընդ այս գրուած: Սակայն Ե 20 նորին ամսոյ Ե ծանրանալ օր ըստ օրէ և ժամ Ե ժամէ ըստ ըստս Հիւանդութեան նորա՝ ոչ ժամանեաց ստորագրել Ե ամին, և ոչ նշանակել յանուանէ զպատգամաւորն զոր կամեր առաքել ընդ իս առ ոոս Վեհափառ Տեառն, և Ե 24 աւուր ամսոյս Հանգեաւ Ե Քրիստոս:—Ի հաւատարմութիւն այս ամենայնի զվկայութիւնս զայս իմովս ստորագրութեամբ հաստատեմ: Ե Նոր Նախիջևան, Ե 28 Ապրիլի յամի տեսուն 1871:—Անդամ Սիւնհոդոսին Սրբոյ Էջմիածնի Գարբէլէ Եպիսկոպոս Այվազեան:»

Չկամեցաւ Խալիպեանը աչն նամակը ստորագրել և չուղարկել, քանի որ չէր ընդունած Տէրութեան կողմանէ Կայսերական վճիռը, որուն և օրէ օր կապասէր նոր Ռուսիոյ ընդհանուր Կուսակալէն. վասն զի ըսած էր Թէ աչն վճիռը արդէն նամակատունը տրուած է: Ապրիլի 16-ին Խալիպեան Ուսումնարանի տեսուչը Հեռագրով իմացուց Խալիպեանին՝ Թէ Ընդհանուր Կուսակալը նոյնպէս Հեռագրով կապտուրէ իրեն՝ ուսումնարանին աշակերտները խտրն գարձընել իրենց տեղերը, արձակել վարժապետները և յախել ուսումնարանը՝ ըստ Կայսերական վճռոյն: Խալիպեանը պատասխանեց տեսչին Հեռագրով, որ անչապաղ կատարէ աչն Հրամանները, միայն ուսումնարանի մէջի կահն

ու կարասին զգուշութեամբ պահպանէ՝ առանց մէկուն մի յանձնելու, մինչև որ ինքը պէտք եղած կարգադրութիւնն անէ: Մանր էր արդարև Հիւանդ Տեւունուոյն Համար աչնպիսի անակնկալ կարգադրութիւնը, մանաւանդ ատով՝ որ փոխանակ ուղղակի կամ յառաջադոյն իրեն Հաղորդելու Կայսերական վճիռը, աչնպէս երկրորդական ճանապարհներով կարգադրութիւնը կլինէին. բաց Եպիսկոպոսը ջանաց մեծիթարել զձերունին՝ յիշեցընելով նորա Թէ այդպիսի շիտթութեանց գլխաւոր պատճառ այժմու ժամանակս Հեռագրական Հաղորդակցութիւններն են, որով կանոնաւոր նամակագրութիւնները իրենց տեղերնին Հասնելէն առաջ՝ շատ անդամ նոցա իմաստին գործադրութիւնը առաջուց կլմացուի ու կկատարուի:

Ապրիլի 19-ին տեսնելով որ Հիւանդութիւնը փոխանակ մեղմանալու օրէ օր կճանրանայ, փութացաւ երթալու Ե Քաջղան, ուր Հարկաւ աւելի դիւրին էր բժշկաց երթեկիութիւնը: Քաջղան գնաց նաև Եպիսկոպոսը, որպէս և Խալիպեանի փեսան Խոճաչեան Գէորգ Աղան՝ իւր ընտանեօքը: Ճանապարհին նեղութենէն Հիւանդը և՛ս առաւել ուժէ ընկաւ, բաց զարձեալ անկողին չմտաւ, այլ միշտ նստած էր, և երբեմն տանը մէջ կը գալէր՝ սաստիկ Հեարով ու ստէպ Հաղարով: 21-ին հասաւ վերջապէս Օտեսսայի ուսումնական շրջանակին Հոգաբարձու Պ. Կոլուպցոսին նոյն ամսոյն 7-ին գրած պաշտօնական նամակը, որոյ Թարգմանութիւնը այս է:

«Մեծարգոյ Տէր,

«Յարութիւն Պօղոսեան,

«Պարոն Ռատիկանն Ներքին Գործոց ծանուցել է Պ. Ռատիկանին Ազգային Լուսաւորութեան, Թէ իւր ամենախոնարհ առաջարկութեանը համեմատ, Կայսերական բարեհաճութիւն եղել է, որ Հայոց Խալիպեան Ուսումնարանը փակուի, և Թէ միանգամայն թագաւոր Կայսրը ի նկատի ունենալով,

1, Թէ Խալիպեան Ուսումնարանը՝ ըստ կանոնաց Նորին Կայսերական Հրամանաւ Հաստատելոյ՝ կգտնուէր ընդ վերատեսչութեամբ Հոգևոր Եղևնութեան, որ այն ուսումնարանին վերայ երևելի գումարներու ծախք արած է, և Թէ դուք ընակարանին շինութեանը համար պէտք եղած գումարը նուիրեցիք ուսումնարանին հիմնարկութեան բուն խի սիկրէէն յամին 1858 առանց իրէ պայմանի (безусловно), խի Թայրանի մէջ եղած տուները և Թէոդոսիոյ դաւառին մէջ գտնուած երկերը նուիրեցիք դուք 1865-ին միայն պայմանով (лишь условно),

2, Թէ Խալիպեան Ուսումնարանին փակուելը և նորա հաշիւներուն վերջանալը, որ կայուած են նորա պահպանութեանը համար եղած պարտքերուն վճարմանը հետ, նմանապէս Տաճկաստանէն եկած Հայ աշակերտաց՝ որ տէրութեան ծախքովը կգաստարակուէին՝ իրենց հայրենիքը դառնալը՝ այնպիսի ծախքեր կպահանջեն, որոց համար ուսումնարանը ամենեւին կարողութիւն չունի, — բարեհաճեցաւ Կայսերական Հրամանով պատուելիք:

«ա) Ուսումնարանին փակուելու ժամանակը, Թայրանի տները և վերոյիշեալ երկերը, — որովհետև բոլորովին ի բաց մերժուած են այն սկզբունքները՝ որոց պայմանովը միայն նուիրուած էին ձեռք մէջ, — և այն ցանկութեանը համեմատ՝ զոր դուք յայտնել էիք ձեր Փետրուարի եկած ժամանակը 1870-ին, — Թողուլ ձեր կարգադրութեանը, խի ուսումնարանին տունը որ ի Թէոդոսիա, մէջը գտնուած շարժական և անշարժ ստացուածքներովը և Տպարանովը՝ Թողուլ ի կարգադրութիւն Հոգևոր Եղևնութեան ի պէտս Դպրանոցի վիճակին Նախիճևանի և Պեսարապիոյ:

«բ) Ուսումնարանին փակմանը համար պէտք եղած ծախքերը, այսինքն այն փողերը որ հարկաւոր են՝ նորա պահպանութեանը համար եղած պարտքերը վճարելու, նմանապէս աշակերտները իրենց հայրենիքը դարձնելու, հանել այն գումարներէն որ կտրուին այժմ ուսումնարանին ձեզմէ և արքունի գանձարանէն, Թողով այս բանիս համար Ներքին Գործոց Ոստիկանարանին կանխահաշուին մէջ նաև 1871 տարւոյն հաշուին այն 11,000 ռուպլին որ տէրութենէն որոշուած էր ի նպաստ ուսումնարանին:

«Հազարապետ Կոմսն Թուրթոյ անցեալ Մարտի 13-ին գրած առաջադրութեամբը ծանուցանելով էնձ վերոյիշեալ կարգադրութիւնը, այս ևս կաւելցրնէր՝ Թէ այսուհետև կարելի չէ առաջ տանիլ այն առաջարկութիւնը՝ որ ևս արած էի Խալիպեան Ուսումնարանը դասական վարժարան (классическая гимназия) դարձնելու համար. որովհետև 1872 տարեէն պիտի դադրի այն 11,000 ռուպլին տուրքը՝ որ կտրուէր Խալիպեան Ուսումնարանը:

նին, և որոյ վերայ յոյսը դրած էր վարժարանին համար կարգադրութիւն և կանխահաշիւ յորենողը:

«Այսու օրինակաւ Խալիպեան Ուսումնարանը դասական վարժարան դարձնելու դիտաւորութիւնը դժբաղդաբար բոլորովին ոչնչացաւ: Ասկայն և Թէ մէկ դիտաւորութիւն չկատարուեցաւ, մէկ ուրիշը կիմայ, որ կարող է մշտնջենաւորել ձեր անունը, և է բանալ Թէոդոսիոյ մէջ դասական փոքր վարժարան (Прогимназия) փոխանակ այն քաղաքին մէջ եղած դաւառական դպրոցին, որ այժմու ժամանակս հական օգուտ մե չբերէր. մինչդեռ փոքր վարժարանը մէկ կողմանէ կկատարէ ընտելաց կարօտութիւնը՝ որ ունի իրենց դաւակացը կրթութեանը, և միւս կողմանէ իւր վարժարաններովը, որ համալսարանի կրթութիւն առած կլինին, մեծ օգնութիւն կարող է անել Թէոդոսիոյ օրիորդաց վարժարանին, որ այժմ հարկադրուած է բաւականանալ դաւառական դպրոցին ուսուցիչներովը, խի դաւառական դպրոցը շատ վար է քան զվարժարանը:

«Այս մտածելով, և զխնալով Թէ օրքան է ձեր ազնուական եւանդը ժողովրդական կրթութեան սրբազան գործը առաջ տանելու, կլիմմմ առ ձեզ, Մեծարգոյ Տէր, խոնարհական աղաչանքով՝ Թէ արեւօք չէք բարեհաճիր կարելի ձանաչել, որ ձեր Թէոդոսիա դաւառին մէջ ունեցած երկրին եկամուտը, որ ի գործ կդրուէր ի պահպանութիւն Խալիպեան Ուսումնարանին, դարձնել մշտնջենաւորապէս յօգուտ դասական փոքր վարժարանի Թէոդոսիոյ, որոյ համար կընդունելիք հրաման Խալիպեան անունը տալու նորա Բացի այն երկրին եկամուտէն՝ ազգային լուսաւորութեան Ոստիկանարանը պատրաստ կլինի հրամայելու որ արուի ի պահպանութիւն փոքր վարժարանին նաև այն 2,100 ռուպլին, որ այժմ որոշուած է տէրութենէն ի նպաստ դաւառական ուսումնարանին: Իմ յոյսս հաստատ է՝ որ Թէոդոսիոյ քաղաքն ու դաւառն անտարակոյս իրենց ձեռքէն եկած մասնակցութիւնը չեն լնայել՝ փոքր վարժարանը պահպանելու համար:

«Ապասելով ձեր ծանուցմանը, Մեծարգոյ Տէր, Թէ Է՛նչ կորոշէք այս առարկայիս համար, խոնարհաբար կխնդրեմ ընդունել իմ ի սրտէ մեծարանքս և անձնանուէր յարգութիւնս.

Ստորագրեալ, Ս. Կոլուպցովը»

Այս նամակը ի հարկէ կարելի չէր առանց պատասխանի Թողուլ, մանաւանդ Կոլուպցովին վերջի նոր առաջարկութեանը պատճառաւ. բաց ձերունին հիւանդ

էր և շփոթած. և թէպէտ երկու երեք անգամ կարդալ տուաւ դաշն եպիսկոպոսին, և բացատրութիւնները լսեց, բայց հիւանդութիւնը չէր թողուր իրեն պէտք եղած ուշադրութիւնը բանեցընել. վերջապէս պատասխանեց եպիսկոպոսին՝ թէ «Թող առ այժմ մնայ այս թուղթը. տեսնեմք Աստուած ի՞նչ կցուցանէ, և ըստ այնմ կշարժիմք»: Եպիսկոպոսը կմտածէր թէ որովհետեւ սպասուած վճիռը եկաւ հասաւ, ի՞նչպէս անէր որ ծերունին ձեռք դնէր առ Վ. Կաթողիկոսն գրուելու նամակին, ու վերջանար դործը: Բայց նա այնուհետեւ ոչ թէ օրէ օր, այլ ժամէ ի ժամ տկարացաւ՝ բոլորովին ուժէ ընկաւ. լեղուն ծանրացաւ, դգագարանքները սաստիկ բթացան, և այնուհետեւ մեղացն եպիսկոպոսին իւր վերայ ստէպ ստէպ կարդացած աղօթքներուն ըստ կարն մեղ դնելով, և ջերմեռանդ կերպով երեսը խաչակնքելով՝ անցուց լուսթեամբ ու հանդարտութեամբ այն երկու օրը, և Ապրիլի 24-ին առաւօտեան ժամը 5-ին հոգին աւանդեց ի ձեռս Աստուծոյ:

Մեծահանդէս եղաւ Խաչիպեան իշխանին չուղարկաւորութեան հանդէսը՝ նախ ի Քաջղան և ապա ի Նախիջևան, ուր տարուեցաւ մարմինը առանձին շոգեկառաց ընթացքով, հանդերձ բազմութեամբ աղաւանաց, բարեկամաց, իշխանաւորաց և քահանայից, որ մինչև Քաջղան եկած էին: Ապրիլի 26-ին տարուեցաւ հանդուցեալը մայր եկեղեցին անթիւ բազմութեամբ ժողովրդոց. Գաբրիէլ Եպիսկոպոսը ժամարար եղաւ՝ ի հանդիսա հոգևոյ բարեացապարտ իշխանին ազգիս, որոյ նմանը խիստ քիչ կգտնուի մանաւանդ այժմու ժամանակս, ինչպէս որ սուրբ պատարագէն վերջը խօսած դամբանականին մէջ ևս բացատրեց, և ապա նոյնպիսի շքեղաշուք հանդիսիւ տարուեցաւ մարմինը ի հանդստարան սուրբ Նիկողայոս եկեղեցւոյն, և անդ թաղուեցաւ՝ իւր հանդուցեալ ամուսնոջն և մեակ սերելի որդւոյն մօտ:

## Գ Լ Ո Ի Մ Լ Ա.

Խաչիպեան Ուսումնարանի փակման վճռոյն գործադրութիւնը, և նորա տեղը վիճակիս համար Խաչիպեան Գեղարանի բանալու առաջարկութիւնը:

Խաչիպեան Յարութիւն Աղայէն տուած էր, ինչպէս որ տեսանք, Խաչիպեան Ուսումնարանը, գոհ լինելով մեր աղագայիններէն ոմանց թանձր տղետութեանը, դառն նախանձուն և անողբելի հակառակութեանը. բայց ուսումնարանին թաղումը դեռ չէր կատարուած: Հարկ է եղել որ Գաբրիէլ Եպիսկոպոսը, ինչպէս որ Խաչիպեանին չուղարկաւորութիւնը անձամբ կատարեց, նոյնպէս և մասնակից լինի դոնէ ըստ իմիք ուսումնարանին վախճանական չուղարկաւորութեանը, և նորա պատճառաւ ևս տառապի չարչարուի տակաւին մինչև այն վաչքեանը՝ չորում ուսումնարանին չիւշատին անգամ անհետանայ: Եւ թէ ինչպէս՝ պատմեմք համառօտիւ:

Պարոն Խաչիպեանը իւր բոլոր նիւթական կարողութիւնը թողուցել էր կտակով փոքր աղջկանը, այսինքն՝ Նուրելի տիկնոջ, որ էր ամուսին Խոճայեան Գէորդ Աղայի: Նոցա խնդրանօքը ուշացաւ եպիսկոպոսը Նախիջևան մէկ շաբաթէն աւելի, մինչև որ կատարեց հանդուցելոյն այդողը և կիրակիամուտքը: Կմտածէր նա թէ անօգուտ է այնուհետեւ իւր էջմիածին երթալը, որոյ նպատակը պիտի լինէր Խաչիպեան Ուսումնարանը. բայց Վ. Կաթողիկոսէն կրկին և կրկին հեռագրական հրամաններ ընդունեցաւ՝ որ երթայ դէպ ուղիղ էջմիածին, և անձամբ հաղորդէ Հաջրապետին հանդուցելոյն վերջին կամբը և կարգադրութիւնները:

Ոչ ոսկիւս նեղութեամբ և պէսպէս ճանապարհա-

կան փորձանքներէ անցնելով՝ Հասաւ Եպիսկոպոսը Էջմիածին, պատմեց Վեհափառին բոլոր լսածներն ու տեսածները, իմացաւ որ Ներքին Գործոց Ոստիկանը արդէն պաշտօնական գրով ծանուցել էր նաև Նորին Վեհափառութեան՝ Կայսերական վճիռը: Սրբազան Կաթողիկոսը շատ չորդորանօք և Համողիչ խօսքերով առաջարկեց Եպիսկոպոսին որ չանձն առնու թէոզոսիոց մէջ բացուելու դպրանոցին վերատեսչութիւնը. իսկ նա բացէ ի բաց կհրաժարէր այն ամենաձանր պաշտօնէն, պատճառ բերելով իւր անձնական տկարութիւնները, վհատութիւնը, անցեալ տառապանքները, դործոցն դժուարութիւնները, և այլն և այլն. բայց վերջապէս իրեն պարտք Համարեցաւ Հաջրապետին կամքը կատարել ըստ կարի, և ըստ նորա ակնարկութեան Համառօտ նախադիժ կամ ծրագիր մի շարադրեց, որով միայն կարելի կհամարէր Գպրանոցին բացուելը և անխափան յառաջանալը: Նւ այս էր նախագծին պատճէնը, զոր տուաւ Եպիսկոպոսը Վեհ. Կաթողիկոսին և Ս. Էջմիածին և Յունիսի 1871 ամի:

Ա. Խալիպեան Ուսումնարանն որ ի թէոզոսիա՝ Կայսերական հրամանաւ ի 4 Դեկտեմբերի 1870 ամի յանձնի հանդերձ կահիւքն և Տպարանաւ ի խնամս տեսչութեան Հոգեւորական իշխանութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ առ այս՝ զի լինելի Գպրանոց (Սեճ Խոթիթ) վասն վեճակին Հայոց Նախնական և Պետաբապտիստ:

Բ. Ժառանգք Յարութիւն Աղայի Խալիպեան յօժարին տալ մշանձնաւորապէս՝ ըստ վերջին կամաց ազգասէր իշխանին հանդուցելոյ՝ ի նպաստ Գպրանոցին այնորիկ, կամ ի սնունդ 30 աշակերտաց ի նմին՝ ամ ըստ ամէ բուպլիս արժաթոյ 10,000, յապահովելով զարեւութիւնն զայն զկալուածով հողոյն զոր դնեալ էր հանդուցեալն առ այն վախճանս: Գմին իրի ուսումնարանն այն կոչեաց ի այսուհետև Խալիպեան Գործոց վեճակին Հայոց Նախնական և Պետաբապտիստ, և մի ոմն ի ժառանգաց Յարութիւն Աղայի ունելի միշտ զանուն Պետաբապտիստա՛ւայի Գպրանոցին՝ Հաստատութեամբ Վեհափառ Կաթողիկոսի:

Գ. Զհիմնական կանոնս և զկարգադրութիւնս Գպրանոցին՝ հան-

դերձ յուցակօք ուսմանցն և ծախուց, պարտ է ըստ կարի Համաձայնել կարգադրութեանն հրատարակելոյ Կայսերական հրամանաւ ի 15 Մայիսի 1867 ամի վասն Գպրանոցացն Ռուսաց, յարմարելով զնոսին պետոյից ազդիս մերոյ և տեղական հանդամանաց, և ի ձեռն Վեհափառ Կաթողիկոսին ընդունել ի Կայսերական պետութենէ զհաստատութիւն այնը կարգադրութեան:

Դ. Հաստատուն թիւ ձրիալարժ աշակերտաց Գպրանոցին եղիցի առ այժմ 50, այսինքն 20 որդեգիրս՝ դաստիարակելիք արգեամբք Եկեղեցեաց վեճակին (յորոց 10 պատանիք ընկալեալ լինին ընտրութեամբ Սրբազան Կաթողիկոսին), և 30 Խալիպեան սոնս՝ ընտրելիք ի ձեռն Խորհրդարանի Գպրանոցին: Ընդունելի են և թուշահաւոր աշակերտք՝ որքան մարթ իցէ զեռիցի անդորրութեամբ ի շինուածի անդ Գպրանոցին:

Ե. Տարեկան թողալ միոյ միոյ աշակերտի՝ հատուցանելի միշտ կիսով չափ կանխիկ՝ սահմանեացի 300 ռ. արծ.:

Զ. Տեսեսական կառավարութիւն Գպրանոցին յանձն լինի աւանձինն Խորհրդարանի, որոյ նախադաշ իցէ վերատեսուչն, իսկ անդամք՝ տեսուչն, և երեք անձինք պատուաւորք ընտրեալք հաւանութեամբ Սրբազան Կաթողիկոսին ի միջոյ տեղական ժողովրդեան, յորոց մին վարէ և զպաշտօն Գանձապետիս—Փարտուղար Գպրանիցին կատարէ և զպաշտօն Հաշուեկալի Խորհրդարանի:

Է. Խորհրդարանն այն հսկէ և ի վերայ ուսումնական և բարոյական կառավարութեան Գպրանոցին, և ի դէպս այնպիսի խընդրոց հրաւերին ի Խորհրդակցութիւն և վարժապետք և ուսուցիչք զպրանոցին:

Ը. Զկանխահաշիւ կամ զյուցակ ուճկաց և ծախուց Խալիպեան Գպրանոցին մարթ է սահմանել առ այժմ՝ ըստ առաջիկայ օրէնակից.:

Վերառակչին . . . . .	2,000, հնդձ. բնկընւ. և սեղ.
Տեսչին . . . . .	1,500, » » »
Վարժապետաց երկուց Աստուածաբանական ուսմանց, այսինքն Մեկնութեան Ս. Գրոց, Տեսական և Բարոյական Աստուածաբանութեան, Ընդհանուր Պատմութեան Եկեղեցւոյ, բացարժութեան արարողութեանց և Բեմբասացութեան . . . . .	1,500

Ընդհանուր Պատմութեան, Աշխարհագրութեան և Պատմութեան Հայոց . . . . .	800
Վարժապետաց երկուց Հայկարանութեան և Պատմութեան մատենադրութեան Հայոց . . . . .	900
Տրամաբանութեան, Հոգեբանութեան և Դաստիարակութեան . . . . .	600
Թուաբանութեան, Երկրաչափութեան, Գրահաշուի և Եռանկիւնաչափութեան .	1,000
Բնական Պատմութեան, Բնագիտութեան և Բնալուծութեան . . . . .	1,000
Ուսուցչաց երկուց Ռուսերէն լեզուի և Մատենադրութեան . . . . .	1,000
Գաղղիարէն լեզուի . . . . .	700
Լատին լեզուի . . . . .	500
Յունարէն լեզուի . . . . .	500
Վարժապետի Երկրագիտութեան .	500
Վարժապետի Գեղադրութեան .	200
Ուսուցչի Մարդկաց . . . . .	200
Քարտուղարի, որ և Հաշուեկալ Գպրանոցին . . . . .	400
Գրագրի և Գրագետի . . . . .	200
Տնտեսի կամ ծախսարարի .	400
Բժշկի և Գեղոց . . . . .	200
Մատենադարանի, Թանգարանի և Օրագրաց . . . . .	200
Նորոգութեանց, վառելեաց և ճրագաց . . . . .	3,000
Սպասաւորաց և ծառայից .	2,000
Ի սնունդ և ի Հանդերձս 50 աշակերաց (Հաշուելով 120 ր. ըստ գլուխ) . .	6,000
Ծախք Հիւանդանոցի . . . . .	50
Ծախք Եկեղեցւոյ . . . . .	50

Կառաց և ձկոց . . . . .	800
Մանր ծախսի զանազանք . . . . .	200
26,500	

Թ. Զմուտս կամ զհաս Գպրանոցին մարթ է Հաշուել ըստ աւաջիկայ աղբերաց և գումարաց.

Ա. Ի ժառանգաց Խալիպեանին	10,000
Բ. Ի Տպարանին . . . . .	2,000
Գ. Ի Խանտավան կալուածոյն	2,000
Դ. յԱրդեանց Եկեղեցեաց վիճակին . . . . .	3,000
Ե. Ի Թոշակաց 30 աշակերտաց . . . . .	9,000
26,000	

Թ. Հնար է ընդունել ի Կայսերական Պետութենէն գումար ինչ տարեկան ի սնունդ և ի դաստիարակութիւն տասնիւ չափ աշակերտաց ընտրելեաց ի Տաճկաստանէ և յայլոց օտար աշխարհաց:

ԹԱ. Տպարան Գպրանոցին յայժամ Լեթ կարողացի տալ տարեկան արդիւնս 2,000, յորժամ հրատարակիցէ դամադիր ինչ՝ ըստ աւաջնոց արտօնութեանցն զորս ունէր ուսումնարանն Խալիպեանն:

ԹԲ. Զտարեկան արդիւնս Խանտավան կալուածոյն Թէպէտ չեւ ևս մարթ է ճշդիւ սահմանել, բայց Հայեցեալ ի դերս կալուածոյն, և յայն զի դամ քան զդամ բարձրանան զինք կալուածոց ի Խրեմ, մարթ է ակն ունել՝ Թէ ոչ նուազ լինիցին արդիւնքն քան զ2,000 ր. գէթ առ այժմ:

ԹԳ. Զարդիւնս Եկեղեցեաց վիճակին Նախիջևանի և Պեսարապիոյ սահմանելիս ի պէտս գպրանոցին՝ մարթ է Հաշուել ց3,000 ի տարւոջ Եթէ աւցի յարդիւնարեր Եկեղեցեաց անտի մասն ինչ տարեկան մարուր Եկամտից նոցին:

ԹԴ. Հանրական տեսչութիւն Խալիպեան Գպրանոցին եղիցի ընդ անմիջական իշխանութեամբ Վեհափառ Կաթուղիկոսին, անկախ և ազատ յԱւաջնորդէ վիճակին:

Յայտնի բան է որ այնպիսի աղագչին Հոգևոր դըպրոց մի ըստ կարգի կառավարելու և առաջ տանելու համար՝ անպատճառ հարկաւոր էր նիւթական միջոցներու ասպահովութիւն, մինչդեռ Խալիպեան Յարութիւն աղագչին ժառանգները զխաւորութիւն չունէին նորա վերջին անստորադիր առաջարկութեանը մէջ արած խոտմուռքէն աւելի բան նուիրել Գպրանոցին:

Համար: Վեհափառ Կաթողիկոսը կցանկար որ նորա յօժարին տարին 10,000 բուսիկ նպաստ սահմանելու, որով դպրանոցին վերայ պիտի պահուէր մշտնջենաւորակէս Խաչիկեան անունը: Եպիսկոպոսը միտքը դրած լինելով՝ թէ շատ դժուար է իրեն համողել ժառանգները այն առաջարկութեան, ինչոքեց Վեհ. Կաթողիկոսին որ բարեհաճ իւր կողմանէ հաւատարմ անձ մը յուղարկել Նախիջևան, որպէս զի նա խօսի ժառանգներուն հետ: Հաւանեցաւ Վեհափառը, և հրամայեց որ իւր թարգմանը՝ Պ. Նիկողայոս Տէր Յովսէփեանց՝ երթայ Գարբէէլ եպիսկոպոսին հետ Նախիջևան, համոզէ Խաչիկեանին ժառանգները՝ տարին 10,000 բուսիկ, և յետոյ անցնի Թէոդոսիա, ու պաշտօնական կերպով ընդունելով Խաչիկեան Ռատմնարանին շէնքը, հարասին ու Տպարանը, յանձնէ Գարբէէլ եպիսկոպոսին:

Վեհափառ Կաթողիկոսը այն միջոցին բացի սովորական հաշրադրով խնամքներէն՝ պատուեց Գարբէէլ եպիսկոպոսը նաև ասով որ հաստատեց նորա Աննուի Անդամ կոչուելու պաշտօնը, Արքեպիսկոպոսութեան աստիճանը շնորհեց նորա, և Տէրութեան առաջարկեց որ սրբոյն Աննայի հարգին առաջին աստիճանը տրուի նորա: (1) Պատուիւրեց որ շարադրէ Խաչիկեան Գպրանոցին Կարգադրութիւնը (Կարգադրութիւն) և յուղարկէ իրեն ի տեսութիւն և ի հաստատութիւն, և օրհնութեամբ ու հաշրակետական կոնդակով յուղարկեց զինքը ի Նախիջևան:

Յունիսի 28-ին հասաւ եպիսկոպոսը Տէր Յովսէփեանցին հետ ի Նախիջևան, և առաջուան պէս իջևանեցաւ հանդուցեալ Խաչիկեանին տունը, ինչպէս որ ինչոքեց ինն ժառանգները: Յաջանեց նոցա Վեհափառ Կաթողիկոսին առաջարկութիւնը, և յանձնեց այն նիւ-

(1) Այս շահանքը եպիսկոպոսը շարադրեալ Տէր անչայոս պատմաբանու:

թին վերայ դրուած կոնդակը, բաց հանդուցելոյն ինտան Պ. Խոճայեան չհամողուեցաւ տարին 10,000 բուսիկ տարու դպրանոցին, ոչ եպիսկոպոսին չորդորանօքը և ոչ Պ. Տէր Յովսէփեանցին եռանդուն և անխոնջ ջանասիրութեամբը: Միայն թէ այսքան յօժարութիւն տուաւ որ 4,500-ին տեղը Խաչիկեան ժառանգները կխոստանան տարու դպրանոցին տարուէ տարի 6,000 բուսիկ: Գարբէէլ եպիսկոպոսը Խոճայեանին այս որոշմունքը հաղորդեց Վեհ. Կաթողիկոսին առաջիկայ նամակով:

«Վեհափառ Տէր,  
«Աստուածարեալ Հայրապետ.

«Ի 20 Յունիսի յաջորդեաց մեզ Տէր Օրհնութեամբ Վեհիկոյ յուղի անկանել ի քաղաքէն Տիփլիսաց, և ի 28 նորին տնոյ ժամանել ողջամբ, թէ և ոչ սակաւ նեղութեամբ և փտանգօք, այսր ի Նախիջևան:

«Ժառանգ հանդուցելոյ Յարութիւն Արպի Խաչիկեան՝ Արա Գարբէէլեան Խոճայեանց, այն ինչ տակաւն վերադարձեալ էր ի Թէոդոսիոյ, ուր գնացեալ էր ըստ կողմանս Նահանգապետին առ ի կարգադրելոյ զհատուցումն պարտուց Խաչիկեան Ռատմնարանին ի մնացորդաց 11,000 բուսիկացն զորս տայր տէրութիւնն, և ի տարեկանէն սահմանելոյ ի հանդուցելոյն, և էր համակեալ ի սուր և ի տրտմութիւն ոչ սակաւ: Քանզի, որպէս և ինքն իսկ գրեալ է առ Ձերդ Վեհափառութիւն, ընդ հասանելն ի Թէոդոսիոյ ի Թահանրոյ, արդէն խառնաշփոթ դրութիւն հաշուոց, պարտուց և պահանջից հանդուցելոյն յայլ և այլ անձանց՝ տաղնայէ զնա յոյժ յերկուց ամսոց հետէ. յայնր վերայ յաւելեալ և հարկադրութիւնն հատուցանելոյ զերկուսի ինչ մասն հին պարտուց ուսումնարանին, այսինքն բուսիկ 5,500, արկեալ էր զնա ի վհատութիւն մեծ և ի յուսահատութիւն, և ստիպեալ ձեռքն թափ լինել ոչ միայն ի տալոյ ի նպաստ ուսումնարանին զանկ մի, այլ և յորպիսեոյ և ինչէ գործակցութենէ յերս ուսումնարանին, յանձն առնելով ակամայ կամօք և զկորուստ անուան և յիշատակի հանդուցելոյն յուսումնարանէ տնտի: Ոչ է հարկ ասել Ձերումէ խնամութեան, Վեհափառ Տէր, թէ քանի՜ ծանր էր մեզ և ակնկալ՝ տեսանել զայն և զամուսին նորա յայնպիսում յուսահատութեան, և սակայն յաւուրն երկրորդի հասանելոյ մերոյ այսր՝ իրեն ընկալան և ընթերցան նորա զկոնդակն օրհնու-

Թեան Վեհիզ, և ի մէջ ևս լուան երկարաձիգ բանիւք զբացա-  
տրութիւնս նոցին, ողբ առին տակաւ, և քաջալերեցան յանձինս  
իւրեանց դէժ ախշով՝ զի հաւանեցան տալ զարձեւալ ի նպաստ  
զպրանոցին ամ ըստ ամէ բուսլիս 4,500, ըստ վերջին կամաց  
հանգուցելոյն: Պարոն Նիկողայոսն մեր արդարեւ իբրև զբաջ  
ախոյեան յարձակեալ ընդդէմ ամենայն դժուարութեանց և առար-  
կութեանց զորս առնէին նորա իբաւացի դանդատանօք հանդերձ,  
վերջապէս յետ երկց աւուրց յաջողեցաւ՝ ի զարմանս իմ և այլոց  
բաղմնց՝ հաւանեցուցանել զԱյա Գէորգ և զամուսին նորա, զի  
անդառնալի խոտովմբ որոշեցին ի ստացուածոցն իւրեանց բուս-  
լիս արծաթոյ 6,000 հատուցանելիս ամ ըստ ամէ ի սնունդ և ի  
դաստիարակութիւն 20 աշակերտաց զպրանոցին՝ ընդ անուամբ  
Խաչիգէան Թանգ: Ընդ այս անկարծելի փոփոխումն դիտաւորու-  
թեան նոցա և ընդ յաւելումն դումարին մինչև ց՝,000, զարմա-  
ցան և ուրախացան նաև ամենայն իշխանաւորք քաղաքիս, որք  
առ հասարակ ամենեքեան անխտիր ցուցանեն զհամակրութիւն  
զարմանալի առ այս զործ օգտակար եկեղեցւոյ և ազգի, և սքան-  
ջացեալք ընդ խնամն Հոգևոր Տեառնդ մերոյ՝ լիբերեան գոյու-  
թեամբ դրուատեն զիւրոյթ և զջան Վեհափառութեանդ ի հոգալ  
զմնացելս ծախն կարևորս ի բացումն և ի պահպանութիւն զբա-  
րանոցին, և ուրախակց լինին մեզ և մեմանց ընդ յաջողութիւն  
այսպիսի իսկ իմ տեսեալ զայս ամենայն, և զգալաւ ևս՝ զի  
եթէ յուսով 10 հազարն ոչ շատանայցեմք վեց հազարաւն, ան-  
շուշտ զրկեսցուք և ի վեց հազարէ անտի, հաւանեցուցի զՊարոն  
Նիկողայոս խորհրդով խոհական անձանց՝ զաղարել ուր ուրեմն  
յանօգուտ յորդորանայ յաւելլոյ ի տուրնս, և յետ վերստին զմտաւ  
ածելոյ՝ Թէ արդեօք պարտ իցէ ինձ տաժանելուս արդէն և  
պարտասելումս յայսպիսի վատակոց՝ զարձեւալ արկանել զանձն ի  
յորձանս դժուարակիր աշխատութեանց, բայց և անմուսաց յուշ  
իմ բերելով զհայրագորով խրախուսանս Վեհ. Տէրութեանդ, և  
զանհրաժեշտ պարտս և զցանկութիւն կամակատար Տեառնդ լե-  
նելոյ յամենայնի յոր ինչ ձեռնհաս իցեմ, և յաճախելոյ զփառս  
և զպատիւ Մայր Աթոռոյդ և զԱստուածընտիր Աթոռակալիդ  
սրբոյ լուսաւորչին ազգիս, եզի առաջն աջաց իմոյ զկանխահա-  
շիւն յորինեալ առ յինէն և մատուցեալ առ Ձերք Վեհափառու-  
թիւն, և զամենայն հնարս հնարեցայ ի վերածել զտարեկան ծախն  
զպրանոցին ի 26,000 էն ի 22,000, լաւ համարելով ակն ունել՝  
Թէ ոչ յոյժ նեղեսցի արդեօք անտեսութիւն ուսումնարանին պա-  
կասութեամբ չորեց հազարաց (զոր գուցէ մարթ իցէ այլուստեք  
խուր), քան Թէ պնդելով և պահանջելով զյաւելուած չորեց հա-

զարացն՝ բոլորովն խախան արկանել զործոյն մեծի, որով և ան-  
կատար թողուլ ըբանել իտպաւ զցանկութիւն Տեառնդ ազգա-  
սիրի՝ հանդերձ փոանդաւ աղօտացուցանելոյ այնու առաջն տէ-  
րութեան և ազգիս և աշխարհի զպայծառութիւն հոյակապ անուան  
Հայրագետիդ մերոյ: Այն ունիմ, Վեհափառ Տէր, Թէ այս գնացք  
մեր և զբաժնուէք արժանացին և Ձերումը բարեհաճութեան,  
և Բարձրեալն Հայեցեալ ի ճշուես մեր և յուզութիւն սրտից և  
ընթացից ի կատարման պարտուցս մերոց, այժմէն իսկ պատրաս-  
տեցէ զյաջողութիւն ձեռնարկութեանդ Ձերոյ, այսինքն է վե-  
րականգնելոյ զմին յանկեալ և ի կործանեալ տաճարաց ազգային  
լուսաւորութեան, և առաւել ևս պայծառացուցանելոյ զայն քան  
զառաջինն, և անելոյ իբրև դման ինչ կամ գնախաղուան Գէ-  
որգեան ձեմարանին սրբոյ Էջմիածնի:

«Ահա ըստ հրամանի Վեհափառ Տեառնդ պատրաստեալ այժ-  
մէն զհամառօտադիմ ինչ Յայտարարութիւն՝ առարկեմք ընդ սմին,  
որպէս զի բարեհաճեալք յակն արկանել, և տալ հրաման  
հրատարակելոյ զստ ի միւսմ յառաջիկայ ամսութիւնից «Արա-  
բապայ» եթէ և Ձերումը իմաստութեան պատշաճ թուեսցի: Իսկ  
զբուն և զընդարձակ Կանոնադրութիւնս զպրանոցին պատրաստե-  
ցից ամենայն խնամով աստէն և ի Թշողտիս, այնպէս զի Պ. Նի-  
կողայոս մարթացի անձամբ մատուցանել գնուին Ձերումը Վեհա-  
փառութեան, ի քննութիւն և ի անօրէնութիւն ըստ պատշաճին:  
«Զյանձնարութիւնս Անտղին և զհրամանս Վեհափառ Տէրու-  
թեանդ կատարեցաք և կատարեմք հետ գհեառէ: . . .

«Խոնարհեալ ի համբոյր Աստուածաբեալ աջոյ Վե-  
հապետիդ, մնամ և այլն.

«5 Յուլիսի 1871,  
Ի Նոր Նախիջևան.»

Նոյն օրը նաև Սալիպեանի ժառանգները Հետագայ  
նշանաւոր նամակը գրեցին առ Վեհ. Կաթողիկոսն,  
յորում լիովին բացատրուած էին նոցա գիտաւորու-  
թիւնը և պայմանաւոր խոստմունքը.

«Վեհափառ Տեառն մերում և Աստուածաբեալ Հայրագետի,  
Տեառն Գէորգայ Ամենպատիւ Կաթողիկոսի ամենայն Հայոց,  
Արբաղնասուրբ աջոյն համբոյր որդեկանս:

Վեհափառ Տէր!

«Գերազատիւ Գարբէէ Սրբազան Արքեպիսկոպոսն Ա. Կաթեան,  
և ազնիւ Աստիճանաւորն Պ. Նիկողայոս Տէր Յովնէիեանց բերեալ

մատուցին առ մեզ զօրհնաւաք զպատուական Կոնդակն Վեհա-  
 փառութեան Զերոյ, որոյ աստուածադէցեղի և հայրական բա-  
 նիւքն ոչ սակաւ մխիթարեցան սիրտք մեր վշտացեալք մահուամբ  
 բարեյիշատակ հօրն մերոյ Ադա Յարութիւնի Խալիպեան: Միան-  
 դամայն մեծաւ մտադրութեամբ և որդեապան խոնարհութեամբ  
 և երախտագէտ շնորհակալութեամբ ընթերցաք ի Կոնդակին ըզ-  
 հայրադուծ հոգացողութիւնն զոր ունի Վեհափառութիւն Զեր  
 փանն անկորուստ և պայծառ պահպանելոյ զանունն և զյիշատակ  
 հանգուցելոյն ի վերայ ուսումնարանին Թէոդոսիոյ, որ այժմ փո-  
 խակերպի ի Գարանոց վիճակին Հայոց Նախիջևանի և Պեսարապետի:  
 Յետոյ լուաք ի նոյն Աստիճանաւորէն և ի Սրբազան Արքեպիսկո-  
 պոսէն զայնչափ և զայնպիսի բանս քաջալերականս և յուսադրա-  
 կանս. զի վերջապէս համողեալ յօժարացաք ի բաց թողուլ զտա-  
 րակուսանս՝ յորում անկեալ էաք Հաշուատեսութեամբ իրաց և  
 զործոց հանգուցելոյն, և որոց փանն հաստատութեամբ եղեալ  
 էաք ի մտի բացէ ի բաց հրաժարել ի մասնակցութենէ Ուսում-  
 նարանին կամ Գարանոցին այնորիկ, որպէս և յայտնեցաք Վեհա-  
 փառութեան Զերում զայն հրաժարումն մեր ի դարձին մերում ի  
 Թէոդոսիոյ ի Թախանրոկ ի 25 Յունիսի: Բայց այժմ քաջ վերա-  
 հասու լինելով ամենայն օգտակարութեանց զործոյն, և թէ ս'ը-  
 քան պտտիւ և փառս կարէ յաճախել զարանոցն այն անունն  
 հանգուցելոյն, և ազգիս օգուտ բերել, և մեզ ժառանգացս և  
 սերնդոց Ադա Խալիպեանի մխիթարութիւն և պարծանս պատրաս-  
 տել ազգէ յազգէ և որդւոց յորդիս, զիջաք որչափ հնար էր ի յոր-  
 դորական բանս սուաքելոյն ի Վեհափառութենէդ Զերմէ մեծա-  
 րոյ անձանցն այնոցիկ, և հիացեալ ընդ Հայրապետական խնամն  
 Զեր ի վերայ այսր ազգային գործոյ, և մանաւանդ ընդ այն՝ զի  
 Գերապատիւ Գարբէէ Սրբազանն, որ սկզբնապատճառ և հիմ-  
 նադիւր զոլով Խալիպեան Ուսումնարանին՝ բաղմամբայ քրտնաջան  
 աշխատութեամբ իւրով՝ հանդերձ այնքան և այնպիսի տարա-  
 պարտ հարածանօք զորս կրեաց՝ պայծառացուցեալ էր զայն, այժմ  
 ըստ առաջարկութեան Վեհափառութեան Զերոյ յանձն առնու  
 դարձեալ զվերատեսչութիւն նորին, որով և անտարակուսելի լինի  
 մեզ յաջողութիւն և յառաջադիմութիւն Գարանոցին, կրկին և  
 կրկին քաջալերութիւն զգեցաք, և ահա վստահացեալ բարբոյլին  
 ի զբաւոր և ի բանաւոր խոստմունսն զորս արարեալ էք ըստ այժմ  
 մասին ևս, ուրախութեամբ սրտի յանձն առաք և աւանուժք, և  
 խոստանամք աւասիկ անդարձ խոստմամբ նուրիւր ի նպաստ Գրդ-  
 բանոցին Թէոդոսիոյ ամ ըստ ամէ ըուպլիս արծաթոյ 6,000, յա-  
 պահովելով զայդ գումար առ այժմ անշարժ կայեւք մերովք և

սպա հաստատուն զբամադլիով և այն այսու պայմանաւ, զի  
 նախ, որպէս խոստանայ և Վեհափառութիւն Զեր, Գարանոցն  
 այն կրեացէ ժաննջենաւորապէս զանունս Խալիպեան Գարանոց վի-  
 ճակիս Հայոց Նախիջևանի և Պեսարապետի, և Պատուաւոր Խնա-  
 մակալ Գարանոցին անուանեսցի միշտ մի ոք ի Խալիպեան կամ  
 Խոճայեան սերնդոց. երկրորդ, զի 20 աշակերաք դաստիարակե-  
 ցին ի զպարանոցի անդ ի հաշիւ այնր գումարի, և կոչեսցին Խա-  
 լիպեան Սանք. երրորդ՝ զի Հոգևոր Տեսչութիւնն հոգացի ան-  
 պակաս զմնացեալ ծախսն սահմանեալս ի պահպանութիւն զպրա-  
 նոցին, այնպէս զի թէ յանկարծ որո՞վ և իցէ պատճառաւ դա-  
 դարեսցի կամ պակասեցի վճարումն զբամոցն այնոցիկ ի կողմանէ  
 Հոգևոր Տեսչութեան, մք ևս աղատ լիցուք իսկոյն դադարեցու-  
 ցանել զվճարումն գումարին խոստացելոյ ի մէջդ. և չորրորդ՝ զի  
 զբաւոր կանոնքն կամ կարգադրութիւնք սահմանելիք ի Զերմէ  
 Վեհափառութենէդ՝ հաստատեսցին և ի Կառավարութենէ, փանն  
 ժաննջենաւորութեան և անկորուստ մնալոյ տրոցն մերոց, և անա-  
 դօտ պայծառութեամբ յարատեւելոյ անսւան Վեհափառութեան  
 Զերոյ:»

«Ոչ ինչ երկբայեմք, Վեհափառ և Սրբազնասուրբ Հայրապետ,  
 զի այս դիտաւորութիւն մեր և այսպիսի նուրբարեւութիւն ան-  
 տարակոյս ազդողուտ և Աստուածահաճոյ, զոր ոչ սակաւ ներու-  
 թեամբ հանդերձ աւանել խոստանամք, արժանաւոր դատեսցի բա-  
 րեհաճութեան և լիուրի օրհնութեան Վեհափառութեան Զերոյ,  
 և այնմ օրհնութեան ակն ունելով՝ խոնարհիմք վերստին հան-  
 դերձ համօրէն տիրապարդե զաւակօք մերովք և ազգակցօք առ-  
 ոտս Սրբազնասուրբ Հայրապետիդ, և համբուրել աստուածարեալ  
 աջոյդ մնամք

«Զերումդ Վեհափառութեան ամենախոնարհ ծառայք և որդիք  
 «Ի 5 Յուլիսի 1871.  
 Նախիջևան:

Վեհափառ Կաթողիկոսին պատգամաւորները թէ-  
 պէտ չէին գիտեր՝ թէ նա կհաւանի՞ արդեօք ընդունե-  
 լու 6,000-ը 10,000-ին տեղը, բայց իրենց կողմանէ չաչամ  
 մասին աշխատանք չմտալը տեսնելով՝ դնացին Թէոդո-  
 սիս, ուր հասան ջուլիսի 11-ին, և նոյն ամսոյն 17-ին  
 Պ. Նիկողայոս Տէր Յովսէփեանցը ընդունեցաւ Պ. Սար-  
 գիս Տերգրանեանէն մանրամասն ցուցակադրութեամբ

ուսումնարանին շէնքը՝ մէջի կահ կարասիովը և Տպարանով, չանձնեց Գաբրիէլ եպիսկոպոսին, և ինքը դարձաւ և Թեֆլիզ, ուր պիտի գար նոյն օրերը Վեհափառ Կաթողիկոսը և տեսութիւն Օգոստափառ Կայսերն Ռուսաց Աղեքսանդրի Բ:

Կցանկար Պ. Տէր Յովսէփեանցը վերջացընել նաև Խալիպեան Ուսումնարանին պարտքերուն վճարման գործողութիւնը, որպէս զի այն կողմանէ ևս Գաբրիէլ եպիսկոպոսին նեղութիւն և դժխացաութիւն չմնայ. ըսցց այդ բանը նորա ուղածին պէս չգաջողեցաւ. վասն զի ներքին Գործոց Ոստիկանարանէն նորա Համար եղած կարգադրութիւնը դեռ չէր եկած Տարևոյ նահանգապետին:

**Գ Լ Ո Ւ Խ Լ Բ.**

Խալիպեան Ուսումնարանին հին պարտքերուն վճարման խնդիրը:

Խալիպեան Ուսումնարանին պարտքերուն վերջ առդէն չեղատակութիւն եղած է Պատմութեանս մէջ՝ Թէ ինչ պատճառներով գոչացած էին մինչև 1865 տարւոյն վերջերը. այժմ Համառօտիւ պատմեմք Թէ ինչ կերպով վճարուեցան, և Գաբրիէլ եպիսկոպոսին նոցա մէկ մասին Համար քաշած վերջին անտանելի և անիրաւ տառապանքը ինչ էր և ինչ կերպով վերջացաւ:

Երբոր 1865-ին Տէրութեան Յանձնաժողովը ուսումնարանին Հաշիւները առնելու Հետ էր, Գաբրիէլ եպիսկոպոսը՝ որ դեռ չէր չանձնած ուսումնարանին կառավարութիւնը Յանձնաժողովին կամ նոր դրուած տեսուչին՝ ապապրեց Պ. Տիգրանեանին և նորա օգնական Պ.

Յովհաննէս Գալստեանին որ ուսումնարանին Հաշուհտումարներէն քաղելով պատրաստեի երկու ցուցակ, մէկը ուսումնարանին առնելիքներուն և միւրը պարտքերուն, և նոքա պատրաստեցին ու ներկայացուցին իրեն: Եւ որովհետև ուսումնարանին վերաբերեալ բոլոր Հաշիւներն ևս ուսումնարանին մէջը չէին, այլ մայր դումարները և նոցա աղբււրները վարդապետին քովը կպահուէին, ինքը պարտքերուն ցուցակին մէջ աւելցուց նաև այն դումարներն որ ուսումնարանը պարտական էր այլ և այլ անձանց, և այնպէս սեպտեմբերի 17-ին ներկայացուց Յանձնաժողովոյն. իսկ Յանձնաժողովոյն նախագահը Պ. Քալիլին՝ ինդրեց որ վարդապետը մէկ ամիս չափ ևս կառավարէ ուսումնարանը. որով Հարկաւ ուրիշ մանր պարտքեր ևս գոչացան՝ Թէ իբրև վարժապետներուն ռոճիկ, և Թէ ծառաներուն, նմանապէս աշակերտաց ապրուստին Համար. ուստի Հոկտեմբերի 23-ին պարտքերու նոր ցուցակ մի ևս չինեց և չուղարկեց Յանձնաժողովոյն:

Խալիպեան Յարութիւն աղան այն միջոցին Թէոդոսիա էր, և իջևանել էր ուսումնարանին մէջ: Երբոր Պ. Քալիլինը առնելիքներուն և պարտքերուն ցուցակները Պ. Խալիպեանին ցուցուց, նա խիտցն որոշեց որ առնելիքները ամենայն խստութեամբ և լիով պահանջուն աշակերտաց ծնողքներէն. իսկ պարտքերուն Համար Հարցուց Պ. Տիգրանեանին՝ Թէ նոքա ամէնն ևս դրուած են արդեօք ուսումնարանին մէջ պահուած Հաշուհարբերուն մէջը. իսկ նա առանց լաւ նաշելու Հաշուհարբերուն մէջ՝ Հարեանցի պատասխան տուաւ Թէ վարդապետին չետոյ աւելցուցած դումարները չկան: Պարոն Խալիպեանը խիտցն առաջարկեց Քալիլինին՝ Թէ առնելիքները պէտք է ճանաչել և խիտցն պահանջել, իսկ պարտքերուն մէջէն զայնս միայն ճանաչել որ նշանակուած են (ըստ վկայութեան տեսչին) ու-

տումնարանը դատուած Հաշուէգրքերուն մէջ: Տարակոյս չկայ թէ այս որոշմունքը այն ժամանակը իրաւացի կլինէր՝ երբոր Խալիպեան Ուսումնարանին քուրթ թէ Հաշուներն և թէ Հաշուէգրքերն ուսումնարանին մէջ պահուած լինէին, մինչդեռ յայտնի էր թէ Խալիպեանին և թէ Տիգրանեանին՝ որ մայր Հաշուները և նոցա տումարները վարդապետին քոյր կպահուէին. նա կընդունէր այլ և այլ աղբիւրներէ Հաւաքուած փողերը, կանցընէր իւր Հաշուէգրքերուն մէջ, և ամսէ ամիս կուտար տեսչին ու տնտեսին որ գործածէն, և նոքա ուսումնարանին Հաշուէգրքին մէջ կնշանակէին իրենց առածները Մտից կարգը, ասելով պարզապէս՝ թէ այս ինչ ամսաթուին ընդունեցայ վարդապետէն այսքան փող, և դիմացը ծախք կգրէին նոյն գումարները: Ապա ուրեմն ուսումնարանին վերայ եղած ծախքերուն ու եկամտներուն ամբողջ Հաշուը կարելի չէր տեսնել՝ առանց վարդապետին քոյր Հաշուէգրքերը ղննելու: Եւ սակայն ոչ Խալիպեանը և ոչ Յանձնաժողովը Հարկ չհամարեցան այդ Հարցմունքը անել վարդապետին, և ոչ իսկ գոնէ Հարցանել իրեն՝ թէ ցուցակին մէջ աւելցուցած պարտքի գումարներուն Հաւաստիքը (աստատեմքը) որմնք են. Հասպա ինքնակամ և ինքնաղլուխ վրձնաՀաստութեամբ աւրեցին գուրս ձգեցին ցուցակէն վարդապետին աւելցուցած գումարները, և իրենք նոր ցուցակ մի շարադրեցին: Այս անկրաւ և անտեղի գործողութիւնը եթէ նոյն ժամանակ իմանար վարդապետը, անպատճառ կըողոքէր, և այն գումարներուն Հաւաստիքը առջևնին կգնէր. բայց նոքա ամենայն զգուշութեամբ ծածուկ պահեցին իրմէ իրենց գործողութիւնը:

Այսպիսի կերպով գուրս ձգուած գումարներուն գլխաւորն էր 3,500 ռուպլին՝ Սէրայեայ անուետով դարացիմէն այլ և այլ ժամանակ ըստ պիտոյցի փոխ առ-

նուած: Վարդապետը 1864-ին ապրիլի 24-ին այն դարացիմին խնդրանքը չորս Հինգ կտոր ձեռագիրներուն տեղը տուած էր նորա օրինաւոր մուրհակի ձևով թուղթ մի՝ Խալիպեան Ուսումնարանի թղթառաջբի (պահի) վերայ գրուած, հանդերձ թուահամարով, մէջը յայտնապէս ասուած՝ թէ «Սէրայեայէն փոխ առի Խալիպեան Ուսումնարանին պիտոյցը Համար 3,500 ռուպլի», և տակը ստորագրուած, «Վերադարձուի Խալիպեան Ուսումնարանի Գաբրիէլ վարդապետ» և այլն: — Նոյն տարւոյն վերջերը դարացիմը կմեռնի. նորա ժառանգը Սըմա Հաճի գարացիմը այն մուրհակը ձեռքը առած՝ կերթայ Խալիպեանին ու Պ. Գալիլէինին՝ իւր առնելիքը պահանջելու. նոքա կպատասխանեն թէ ուսումնարանին Հաշուէգրքերուն մէջ այն գումարը չկայ, ուստի իրենք չեն ճանաչեր: Գարացիմը դաւառակիան բարեկարգարանին կղիմէ. կպատասխանեն իրեն «Թէ մուրհակին զօրութեամբ այն պարտքը ուսումնարանինն է. վարդապետը առերէ փողը՝ ոչ ըստ որում ոտն վարդապետ» (որ ըստ օրինաց կարող չէ մուրհակ տալ և առնուլ), այլ ըստ որում վերադարձուցուած ուսումնարանին. ուրեմն պէտք է այժմու վերատեսչութեան դիմես որ առնելիքը ձեռք ձգես»: — Ամիսներ անցնելէն վերջը, երբոր թէ Խալիպեանը և թէ Յանձնաժողովը վաղուց դարձել էին իրենց տեղերը, Սըմա Հաճին վարդապետին կղիմէ նոյն պարտքին համար, բայց նորանէ ևս բարեկարգարանին տուած պատասխանը կընդունի: Այնուհետև ճարը հատած, 1868-ին կղիմէ Սիմֆերոպոլի նահանգապետի դատարանին, որ այն փողը վարդապետէն պահանջուի, որովհետև ուսումնարանին վերատեսչութիւնը չուղեր ճանաչել դայն, և մուրհակին տակը ձեռք ղնողը վարդապետն է: Գատարանը իսկզբան բարեկարգարանին պէս կվճռէ դատը, և ուսումնարանին վերայ կձգէ: Կղիմէ հրէայն 1870-ին առ տեսուչն ուսումնարանի՝ Պ. Տիգ-

րանեան. նա Հարցմունքը կանէ Ներքին Գործոց Ուստիկանարանին, և անտի պատասխան կընդունի թէ ըստ որոշման Յանձնաժողովոյն՝ այն դումարը պարտքերու ցուցակէն դուրս ձգուած լինելով, ուսումնարանը պէտք չէ որ ճանաչէ իրեն պարտք: Նոյն պատասխանը կհաղորդէ Ոստիկանարանը Տարից նահանգապետին ձեռքը նաև Գատարանին, առ որ դիմել էր նորէն հրէայն. դատաւորները նեղը մտած՝ և չկարենալով արդարութեան դէմ չալտնապէս գործ մի գործել, նոր խնդր կըանան՝ թէ արդեօք վարդապետը Խալիպեան Ուսումնարանին վերատեսուչ եղած ժամանակը ունէր հրաման կամ իշխանութիւն փոխ ստակ առնելու տալու, կամ միայն իւր անուշովը մուրհակ ստորագրելու. և այս Հարցմունքը կանեն ուղղակի Պ. Տիգրանեանին: Իսկ նա, որ խղճմանէ հետէ ականատես վկայ էր վարդապետին լիակատար իշխանութեամբ արած օրինաւոր կառավարութեանը, փոխանակ ստույգ դիտցած ճշմարտութեանը վկայելու՝ չգիտեմ ինչ պատճառաւ կպատասխանէ թէ «Ինձ չալտնի չէ»: Եւ ահա այս խախտող հիման վերայ հաստատելով իւր դատաստանը՝ վճիռ կուտայ Գատարանը թէ այն պարտքը պէտք է վարդապետը վճարէ: Կարելի է երեւակայել թէ ինչ աստիճանի դարմանք և վերջ կպատճառէ վարդապետին այն վճիռը, ուստի առանց ժամանակ կորսնելու կըողորէ Օտեսապի Գատաստանական Պալատին 1871-ին վետրուար ամսոյն մէջ. բայց այն Պալատն ևս մեզ անչալտ պատճառաւ՝ ոչ ծանուցադիր կցուղարկէ վարդապետին կամ նորա գործակատար փաստաբանին (որ էր Պ. Սարգիսը Խորասանեանց), և ոչ ի դատ կերպ մէկը կամ միւսը, այլ չանկարճ մարտ ամսոյն վերջերը վճիռ հանելով՝ կհաստատէ Սիմֆերոփոլի նահանգական դատարանին որոշմունքը:

Մինչդեռ կմտածէր վարդապետը՝ թէ պէտք է ար-

դեօք ըողորէ ի բարձրագոյն դատարան, վերայ եկան իւր ճանապարհորդութիւններն դէպի Նախիջևան և Էջմիածին: Նախիջևան եղած ժամանակը պատմեց Պ. Խալիպեանի ժառանգներուն այն պարտքին բանը, և նոքա վկայեցին՝ թէ անպատճառ պէտք է որ այն ևս ուսումնարանին միւս պարտքերուն կարգը դրուի ու վճարուի. ուստի վարդապետն հանգիստ սրտով դարձաւ դնաց իրեն տեղը:

Սահայն Խալիպեան Ուսումնարանը, զոր շատ անգամ անուանած էր ինքը իրեն համար նոր Գողգոթա, պէտք է եղել անշուշտ որ Գողգոթային ուրիշ քանի մի դառնութիւններն ևս մինչև իսպառ ճաշակել տայ վարդապետին:

Գեկտեմբերի 7-ին չանկարճ կոխեց նորա բնակարանը դարաչիմ հրէին գործակալը, և նահանգական դատարանին Գործակատարը (Կրիմլու), բերելով դատարանին տուած կատարողական հրամանադիրը. և կատիպէին որ խոխոյն նոյն վայրկենին կամ վճարէ 3,500 ռուպլին՝ հանդերձ տոկոսեօք և դատաստանական ծախքերով, և կամ թող տայ որ ցուցակագրեն ինչ որ կդտնեն բնակարանին մէջ, ու հրապարակաւ ծախեն: Վարդապետը սաստիկ շփոթեցաւ աչլայլեցաւ, ինչպէս որ բնական էր, բայց և չմոռանալով՝ թէ այն նախատինքը կերթար ոչ միայն իր անձին, այլ և արքեպիսկոպոսական աստիճանին ու նաև ազգիս Հայոց անունին, պատասխանեց իւր վերայ եկողներուն՝ թէ «Սա իբրև կրօնաւոր՝ հիւր եմ այս բնակարանիս մէջ, և ինչ կահ կարասի որ կտեսնէք այս երկու սենեկացս մէջ՝ իմ սեպհական ստացուածքս չեն, հապա քոյրս և եղբայրս պատրաստած են ինձ համար իրենց ծախքովը. ուրեմն իրաւունք չունիք զսոսա ցուցակագրելու, կամ ցուցակագրելն վերջը ի վաճառ հանելու»: Երբոր նոքա վերայ կուտային թէ իրենք պէտք է իրենց չանձուած պաշտօնը

կատարեն, նա պահանջեց որ այն ցուցակազուրկները՝ այն անլուր նախատինքը դադարադուր գործողութիւն մը չդառնայ, այլ քաղաքին բարեկարգապետը և ուրիշ քուէքը մէկ երկու պաշտօնատէրներ թող ներկայ գրտնուին որ վիպէն ըստ ժամանակին: Սկիւ բարեկարգապետը, և Թէոդոսիոյ Նրկրահան կտուովարութեան գահերէցը, և նոքա սաստիկ ցաւակցելով եպիսկոպոսին՝ խօսք անցուցին հրէն ու գործակատարին որ գոնէ քանի մը օր միջոց տան, մինչև որ եպիսկոպոսը կարողանայ թղթակցել որոց հետ որ արժան է, և այն փողին հատուցմանը աշխատել:

Նրկրոք օրը աչսպիսի հեռագիր մի յուղարկեց Վեհափառ Կաթողիկոսին՝ իբրև առ բնական ջատագով իրաւանց, և պաշտպան պատուոց աղգային արքեպիսկոպոսաց, այս խօսքերով:

«Ոսուեմնարանին պարտքը առ Սերայա՝ 3,500 կպահանջուի Քնձմէ՝ իմ աստիճանիս սաստիկ նախատական կերպերով: Կընդհարեմ Ձեր Վեհափառութեանէն յորդորել հեռագրով Խոճայեանը՝ հատուցանելու այս պարտքը: Պատասխանին վճարեալ է:»

Նմանապէս աչսպիսի հեռագիր մի արաւ Խոճայեան Գէորգ աղային և Նախիջևան:

«Ոսուեմնարանին առ Գարայիմն պարտքը 3,500 Գատարանը Քնձմէ կպահանջէ սղաւնալեօք ցուցակազուրկու գրքերս ու սենեակներուս կահ կարասին: Կինդրեմ յանձն առնուլ վճարելու՝ Քնչպէս որ խոստացած էք՝ գէթ կտոր կտոր՝ այն պարտքը որ չաքան անիրաւութեամբ ու նախատանօք կպահանջուի Քնձմէ: «Ցուցակազուրկեան ժամազուրկիւնն է կընդարթի: Հեռագրեցէք: Մանրաման պատմութիւնը նամակով:»

Վեհափառ Կաթողիկոսը հեռագրով պատասխանեց աչսպէս,

«Յաւալի է ինձ այդ անդադար վշտալի դրութիւնը: «Ի՞նչ հեման վերայ կարող եմ առաջարկել Խոճայեանին «որ այն պարտքը վճարէ:»

Կաթողիկոս Գէորգ:»

և Պարոն Խոճայեանը աչսպէս՝

«1,500 վճարեցինք նորա համար որ Ոստիկանարանը հանգուցելոյն յորդորած էր, ինչպէս որ արքունի գանձարանն ևս վճարել էր: Արդեօք այդ գումարն ևս պէ՞տք է ճանաչուի պարտք ռուսեմնարանին: Այդ ուրեմն եթէ ապացուցուի որ Գարայիմն սեղած պարտքը ռուսեմնարանինն է, կարելի կլինի համեմատական հաշուով վճարել նորա եղած պարտքը:»

«Գէորգ Խոճայեան:»

Հասկացաւ եպիսկոպոսը որ գործը հեռագրական թղթակցութեամբ վերջանալիք չունի. առանձին նա. մահներով հասկացուց ինդիրը՝ թէ Վեհափառ Կաթողիկոսին և թէ Պարոն Խոճայեանին: Աչստեղ բաւական համարիմք դնել առ Վեհափառն գրած նամակին պատճէնը.

«Վեհափառ Տէր,

«Ստուածարեալ Հայրապետ.

«Ընկալեալ յ12 ամնոյս զհեռագրական պատուխանի Վեհափառութեան Ձերոյ որ է 11 սորին, փութամ նախ մատուցանել հայրազորով Տէրութեանդ զառ ի սրտէ շնորհակալիս իմ յաղագս կարելիք զթատիրութեանն՝ զոր բարեհաճեցայք ցուցանել առ իս և յայս նուագ, արգահատելով ի յարատեակ կիրս չարջարանաց՝ յորոց տաքնապիմ յամաց բաղմաց հետէ: Եւ ապա պարտանձին ճանաչեմ յայտ առնել՝ թէ յորոց ինչ պատճառաց բերայ ևս ի հայցել զհզօր պաշտպանութիւն Վեհափառութեանդ Ձերոյ ի գործ հատուցման մասին ինչ պարտուց Խալկեան Ոսուեմնարանին, որ յինչն պահանջիւր յանիրաւի:

«Յամին 1865, Յանձնաժողովն կարգեալ Կայսերական հրամանա ի ստուգել զգործս անկանոն և ասօրինաւոր վերադնտութեանն՝ զոր առնէին ի վիճակիս Գերայատիւ Սնդրէաս եպիսկոպոս և Մոյսէս քահանայ Սայեադնեանց, ևս և ի վերադնտել զթեմական Ստեան վիճակիս և զհաշիւս Խալկեան Ոսուեմնարանին, ընկալաւ յինչն ընդ ռուսեմնարանին ընդ այնմիկ և ընդ կահուց նորին և զերկուս ցուցակս, յորոց մին էր ցուցակ զբամական պահանջից ռուսեմնարանին յայլ և այլ անձանց, և միւսն ցուցակ պարտուց նորին առ գանազանս, որոց զումարն հասանէր 915,000ր: Յանձնաժողովն յառնուլ անդ իւրում զցուցակսն զայնոսիկ՝ ինչ ոչ ասաց ցիս, բայց ապա զիտացի՝ զի առաջարկութեամբ հան-

գուցեալ Խալիպովին զըրելոյ է յայնը ժամու Տեսչէն (որ էր Սարգիս Տիգրանեան) է բաց ջնջեալ է ի ցուցակէ անտի պարտուց զնշանակեալն յինէն է կարգի այլոցն զպարտս ուսումնարանին առ Սէքայեայ ոմն հրեայ՝ 3,500 բուսլէ, զոր յոտան է ի դէպս ծախուց ուսումնարանին առեալ էլ է նմանէ ի լուս իբրև վերադարձ ուսումնարանին այնորիկ՝ մասն մասն, և յայլ և այլ ժամանակաւ Արդ յետ մահու հրէին այնորիկ ժառանգք նորա պահանջէին զգումարն յուսումնարանէն՝ և ի պատասխանել տեսչին՝ Թէ Յանձնաժողովն է բաց Թողեալ է զայն զուժար ի ցուցակէն պարտուց, ի դատ կողեցին զիս ի նահանգական դատարանին Սիմֆերոպոլիս Այն ինչ վճռէին դատուորքն ըստ ամենայն իրաւանց՝ Թէ այն պարտք ոչ յինէն են պահանջելի, այլ է Խալիպեան Ուսումնարանէն, հրաման հասանէր ի նախարարութեանէ Ներքին Գործոց (յուրում ոչ սակաւ ներդրումութիւն ունի յայտարար աղբային խնդիրս բարեկամն մեր Պ. Նիզով) Թէ դատուորքն պարտին ազատ ճանաչել զուսումնարանն ի պարտուց անտի յորմէ զհետ զայր ինքնին՝ Թէ ապա ուրեմն յինէն է պահանջելի արձաթն։ Զարմացաւ աշխարհ ամենայն ընդ այնպիսի անտեղի և անիրաւ վճիռ դատարանին, բայց և խոստովանեցան գէթ ոմանք ի դատուորացն՝ Թէ դատարանն չկարաց բողոք հարկանել յայսմ մասին զհրամանէն Բարձրագոյն իշխանութեան, կամ խոստորել ի հրամանաց նորա։

«Մինչդեռ յայս հանգամանս դտանէր խնդիրն այն, զէս եղև ինձ ուղևորել յամենանն Ապրիլի է սուրբ Եջիմիան, ուր և յերկարագոյն բանիւք պատմեցի զայն ոմանց, և յանուանէ Պ. Նիկողայոսի Տէր Յովնէփեանց, ուստի և կարծէի՝ Թէ ոչ անձանօթք իցին Ձերումը Վեհափառութեան հիմունք հեռագրոյն իմոյ, որով ինչդէլ հրաւիրել զժառանգս Խալիպեանին ի հատուցումն այնր պարտուց։ Քանզի և Պ. Խոնայեանն ինքնին ասացեալ էր ցես ի Նախիջևան՝ յանդիման Պ. Նիկողայոսի և այլոց ոմանց, Թէ զայն ևս պարտս հարկ է բռնուց հատուցանել։ Յետ այնորիկ լրուցի ևս զինչդոյն զայնմանէ, զի կարծէի Թէ տէրութիւնն՝ ըստ խոստման նահանգապետին Սիմֆերոպոլի՝ պահանջուց է խոնայեանէն զհատուցումն 3,500 արծաթոյ, միայն Թէ յետս կողեցից ևս զբանս իմ, որով պահանջէի ի Խալիպեան Ուսումնարանէն բուսլէս 5,000։ Բայց և յայսմ խարեցայ ջարջաբ, զի ահա յի ամոյսս Գործակատար ոմն ժառանգաց հրէին այնորիկ առեալ ընդ իւր զպաշտօնեայ դատարանին՝ եկն յանկարծ առ իս, և պահանջէր խնդոյն զգումարն զայն. ապա Թէ ոչ, ասէր, իրաւունս ունիմք ըստ օրինաց ցուցակագրել այժմէն զկաշ և զկարասի և զգրեան սենեկացդ ձերոց, և հանել ի վաճառ։ Ես

ետու պատասխանի՝ Թէ զարծաթն զայն ոչ կրէք ծանեայց ևս իբրև զիմ պարտս, զի ուսումնարանին են պարտք. այլ քանզի մինչև ցայս վայր նեղել զիս կամին և ատուպեցուցանել վայրապար, եթէ ունէի զէթ պման ինչ այնր գումարն՝ այժմ իսկ հատուցանէի, հաշուելով և զայն ընդ անչափ քրտունսն և ընդ որեսպաւ աշխատութիւնս, ևս և ընդ մեծագումար զբաժանան ծախս՝ զորս կորուսի ի վերայ դժբաղը ուսումնարանին այնորիկ։ Այլ քանզի ոչ ունիմ ես ի ձեռնին իմում և ոչ դանկ մի, կարող էք՝ Թէ կամիք՝ ցուցակագրել զգրեանն իմ և զաճառել, բայց ոչ և զկարասի սենեկացս, որք առհասարակ անկ են եղբօրն ի մում և բեռ, և ոչ ինձ՝ որ ընակեմ ի սոսա իբրև զհիւր, և բնիկ տեղի բնակութեան իմոյ է ի սուրբ Եջիմիանին։ Յետ բազում բանեց այսպիսեաց հաւանեցաւ Գործակատարն շնորհել ինձ առուրս քանի մի՝ մինչև հեռագրեցից ուր արժանն է, և ընկալայց զպատասխանել ևս ահա յայն միջոց ժամանակի արարի զհեռագրեցն իմ առ Ձերը Վեհափառութիւն. բայց իբրև ընկալայ զպատասխանի՝ որ կարտէր գրաւոր և ընդարձակ բացատրութեան, հեռագրեցի յիՅ ամոյսս ուղղակի առ Պ. Խոնայեանն, և նա արար ինձ հեռագրով պատասխանի այսպէս, Թէ որովհետև ի հատուցումն պարտուց ուսումնարանին սահմանեալ են երկու գումարք, այսինքն տարեկան առքն Խալիպովի (4,500) վասն 1871 ամի, և Տիտղոսոյն է 11,000 արբուհական նպաստէն, արեւօք ոչ է մարթ յայն գումարն հատուցանել և զայդ պարտս ուսումնարանին առ Հրեայն։ Ի բանեց անտի յայտնապէս ի միտ առեալ՝ Թէ Պ. Խոնայեանն չե. ևս իմացեալ է զիսկութիւն խնդրոյն իմոյ, կարգադրեցայ հայցել և առնուլ ի հրէին գէթ զամսօրեայ մի ժամանակ՝ մինչև մանրատարում նամակագրութեամբ ծանուցից Խոնայանին զամենայն, և առեց ի նմանէ պատասխանի. որ Թէ բացարձակապէս բացասական լինիցի, ի հարկէ պարտիմ Թող տալ զի ցուցակագրեցն զոր ինչ և դտանիցն ի սենեկիս իմում, և հանցն ի վաճառ։

«Այս է ահաւասիկ, Վեհափառ Տէր. ստուգապատում տեղեկութիւնն զառաջիկայ խնդրոյս, զոր իբրև զերուր քրտնութեան վերջնոյ բաժանին տաւապանաց կրելոց յինէն ի պատճառս Խալիպեան աղբային անուանեալ ուսումնարանին՝ քամեալ ճճեցի համբերութեամբ։ Եւցէ Թէ աղօթիւք Վեհափառ Հայրապետիդ համարեցի ինձ Աստուած զայս արբուքն դառնութեան իբրև զշէթ ինչ լեղոյն և քացախոյ զոր ճաշակեաց Փրկիչն իմ ի Խալին, և տացէ ինձ համարձակութիւն ասելոյ վայր ընդ վոյթ՝ Թէ «Ամենայն ինչ կատարեալ է» . . . :

«Խոնարհեալ է համբոյր Աստուածարեալ աջոյդ Արքու-  
թեան մնամե այլն».

«Թ. 52

«18 Դեկտեմբերի 1871.»

է Թ. Կոստիա.

Պարոն Խոճայեանը իւր պատասխանին մէջ կ'իւ-  
յնէ՝ Թէ այն պարտքը չայտնապէս կերէի պարտք ու-  
սումնարանին, և ոչ Թէ եպիսկոպոսին. ուստի և մեծա-  
պէս ցաւակից կ'լինէր եպիսկոպոսին զուր տարապար-  
տուց քաշած նեղութեանը, բայց և ամենեւին յօժարու-  
թիւն չէր ցուցանէր ուսումնարանին պարտքը վճարե-  
լու: Ուստի Հարկ Համարեցաւ եպիսկոպոսը առաջիկայ  
նամակն ևս գրելու՝ նորա Թղթին պատասխան՝ 1872-ին  
յունուարի 29-ին:

«Մեծարդոյ Բարեկամ,

«Նկոր Կաւրելիչ».

«Ձեր երկու պատուական նամակները, որ գրած էք ամսոյս  
16-ին և 18-ին, երկու օր առաջ է միասին ընդունեցայ, և  
կ'իւրթամ պատասխանելու:

«Ոչ սակաւ միտթարուեցայ, Մեծարդոյ Բարեկամ, Ձեր ար-  
դարասէր սրտին դազմունքներովը և ցաւակցական խօսքերովը.  
Վասն զի կտեսնեմ որ ոչ միայն կ'ձանձնաք՝ Թէ Մէրայեայ Խարա-  
յեմին առնելը իմ պարտքս է, ուսումնարանին է, հապա նաև  
է ըրտը սրտէ կցանկաք որ ես ազատ մնամ, կամ Թէ մէկ ժամ  
առաջ ազատիմ այժմու նեղութեանէս, զոր ես վերջին իրաւացի  
պատիժ կ'համարեմ այն անձնանուէր բազմամեայ աշխատութեանցս՝  
որոնք յանձն առի իոյր զիւրային, կամ որ նոյն է՝ անխոհեմ  
տաքզլութեամբ, իբր Թէ յօղուտ և է լուսաւորութիւն կիսա-  
մեռ, յուսահատ, յուսահատելի ու ամենայն կողմանէ խղճալի աղ-  
զիս: Անտարակոյս զուք ալ կ'իկայէք, Մեծարատիւ Բարեկամ, որ  
բաց է սրտազխտէն Աստուծոյ և բացի մէկ քանի սակաւութիւ-  
բարեկամաց, այս տասը կամ տասուերկու տարուանս մէջ ոչ ոք  
չձանձցաւ, ոչ մտքիս յտակութիւնը և ոչ գործերուս ուղղու-  
թիւնը, միտքս ծուռի տանողները շատ եղան, իսկ գործերս խն-  
դարողներն ու խափանողները անթիւ անհամար. արածս բարեք է  
ասած ատենս, չարք արած համարեցայ, ուսումնարան բանալը և  
կառավարելը՝ ազգային լուսաւորութեան համար ճրագ վտուել է

ասած ժամանակս, իբրև ազգին տանը կրակ սուռոյ բամբասուե-  
ցայ. վիճակիս կիսակործան եկեղեցիները նորոգելու ամէն ճանք  
արած ատենս՝ իբրև եկեղեցիներուն փողերը կողոպտող ու վատ-  
նող զըսարտուեցայ. Խալիպեան Ուսումնարանին վերայ ութը  
տարի ձրի աշխատելէս ետև՝ իմ առաջնորդական արդիւնքներս ալ  
անոր վրայ խարճելէս ետև, իբրև Խալիպովին պօլ պօլ կաշառք  
կերած և ուսումնարանին եկամուտները փնջուցած՝ դատապար-  
տուեցայ. վիճակիս բարեկարգութեանը համար ողւտլ չափ չարչա-  
րուած ժամանակս՝ վերջապէս վիճակիս առաջնորդութեանէն անար-  
գաբար մերժուեցայ, և ուսումնարանին կառավարութեանէն խալ-  
տաւակաբար դուրս ձգուեցայ: Չարմանքը ո՞րն է, Նկոր Կաւրելիչ,  
իմ ճակատիս զերնէ եղած (ինչպէս որ կասուի ռամկօրէն), որ  
ուսումնարանի բարերար Հիմնադրին ստիպողական հրաւիրանօքը  
մինչև 500 վերսթ տեղ երթամ հասնիմ՝ իրեն քօլը՝ վերջին հի-  
ւանդութեան օրերը, ես իմ բերնովս կարգամ նորա անկաճէն  
վար՝ իրեն այնքան ծախքով ու հողացողութեամբ կանգնած շէն-  
քին փակուելուն վճիւրը, աչքովս տեսնեմ նորա կրակոտ ու Թա-  
փանցող աչքերուն փակուելը ընդդէմ լուսոյ ապերախտ աշխար-  
հիս, ձեռօքս աւանդեմ զերեզմանին նորա անհնչացեալ մարմինը,  
և տրտում տխուր դառնամ դամ տեղս, տեսնեմ Խալիպեան Ու-  
սումնարանը այնպիսի ողորմելի և ողբալի վիճակի մէջ՝ որ սկիա-  
մայ կամօք հանեմ բերնէս սաղմոսին այն խօսքը Թէ «Ապակա-  
նեաց զնա խոզ անտառի, և էրէ վայրի արածեցաւ ի նմա», տես-  
նեմ այն հոյակապ ուսումնարանը էրէցքի պէս աչքիս առջևը  
զիշեր ցորեկի կեցած՝ իբրև անբեր անապատ, իբրև աւեր բնա-  
կարան բուռոյ և չղջիկանց, իբրև խուխուանք և ահազին գե-  
րեզման Հայոց ազգիս բարեբաղդութեան . . . Սպասեմ որ ձմե-  
ռուան չորցած ցամբած ծառերուն նման՝ Խալիպեան Ուսումնա-  
րանն ալ վերջապէս առաջիկայ զարնանս մէջ (ինչպէս որ կ'յու-  
տացնէ Վեհափառ Կաթուղիկոսը) նորէն ծլի ծաղիկ պտուղ  
ապ, և այնուհետև բարերար Հիմնադրին Յարութիւն Խալիպովի  
անունը վրան կենդանանայ, իբր Թէ նորէն այս ահազին մեռելը  
յարուելէն առնու . . . Իբրև է որ Աստուծոյ ամենակարող զօրու-  
թիւնը չափ ու սահման չունի, և նորա համար անկարելի բան  
չկայ, ուստի մենք ալ իրաւունք չունիմք յոյսերնիս կտրելու նորա  
արդարութեանէն և անհուն ողորմութեանէն. բայց չգիտեմ Թէ ես  
արժանաւարութիւն պիտի ունենամ արդեօք Աստուծմէ այնքան  
օգնականութիւն ընդունելու որ կարենամ զիմանալ մինչև խ-  
պաւ նաև այս ետքի անտանելի նեղութեանս, որով բոլորովին  
զուր և անիրաւ տեղը դատաստանէ դատաստան քաշուելէս ետև,

երբև խարդախ և խաբւբայ (այսինքն իմ պարտքս ուսումնարանին վրայ դրող) դատապարտուիմ, Հրէկց ձեռքը խայտառակաբար մատնուիմ, որ դան տէրութեան մարդիկներով (սուսերօք և բբօք) կանչեն երեսիս թէ կամ քու վրադ ձգուած պարտքը հիմա հոս այս ըտպէիս վճարես, կամ ան է որ ունեցած չունեցածդ զեր կանցընեմք, Բարի՛ւ կծախենք, ու մեր բաղդէն որքան փող որ հաւաքուի՝ կսամանք կերթանք, օրինաց դերքն ալ կըանան, «Խաբւբէրը աչքին առջևը կընեն» — («Մեք օրէնս ունիմք, և ըստ օրէնաց մերոյ պարտի մեռանել՝ զի դանձն իւր մամնեաց վասն Խալիպեան Ուսումնարանին») . . . Ասոնք զուցէ աւելորդ ալ էր ձեղն յեղեցընելս, Մեծապատիւ Բարեկամ, որովհետև գիտեմ որ ո՞վ ալ չըլլայ՝ զուք աղէկ դիտէք այս բաներուս ճշմարտութիւնը. բայց մէկ կողմանէ կուզեմ ասոնք իբրև բարեկամի գրելովս՝ սրտիս դառնութիւնը թեթևցընել. միւս կողմանէ ալ կը յտանկամ որ լաւ հասկընաք՝ թէ ես ի՞նչ մտառանջութեան մէջ կտազնայիմ ու կալէկոծիմ այս միջոցիս՝ յորում վիճակիս մէկ քանի քաղաքներուն խեղճ ու բարեսիրտ ժողովուրդները ուշէն ուշ իրենց մահահանգոյն թմբութենէն զարթածի պէս՝ խնդրադիբեր կըզինեն Կաթողիկոսին որ առաջնորդութեան անտանելի բեռը նորէն դնէ իմ կոտորած մէջքիս վրայ. իմ չորս կողմն կրակ առել է կերել, նոքա ալ իրենց սիկարները բռնկցընելու եկեր են:

Գանք Ձեր երկրորդ նամակին մէջ արած բարեսէր հարցմանը պատասխանին: Իմ արած ստոյգ տեղեկութիւններուս նայելով, նախ՝ վիճակիս և ուսումնարանին հաշիւները քննող Քո՛միտէն վաղուց փակուած է. ուստի ի դուր է անոր անունովը խնդրք խըրկելը: Երկրորդ, Կենեաւ Կուպէնաթորը ներքին Գործոց Միսիսթրէն արդէն Ինթերպոլիս ընդունած է թէ պարտքերէն ո՞րը ուսումնարանին պարտք պէտք է ճանչնալ, և ի՞նչ կերպով վճարել. և այս հրամանը Սիմֆերոփոլի նահանգապետին հաղորդած է. ուստի ի դուր է այս մասին Մենիսթրին նոր խնդրք մը տրուելը: Սակայն, որովհետև պարտքերուն պահասորդը (թէ որ պահասորդ մնայ) ձեղմէ պահանջելու միտք ունին, ինչպէս որ Քոնցէպուլին զրուցեցին կերելի, զուք կարող էք ամենայն իրաւամբ խնդրել որ լիւթիպոլիս զորք ձեղն յանձնուի, ու զուք վերջացրէք այսքան ժամանակի մէջ, որո՞ւ ձեռքով և ի՞նչ կերպով որ կամենաք: Մեայն թէ այս բանս դուրս հանելու համար՝ աղէկը այն կըլլար որ զուք անձամբ դայիք հոս, առնելիք տէրերուն հետ խօսէիք, կատաստ խօսք առնէիք իրենցմէ ջոկ ջոկ՝ որ առնելիքներուն տոկոս չեն պահանջեր, յետոյ Կենեաւ Կուպէնաթորին

ներկայանայէք ու լիւթիպոլիս զորքովութիւնը ձեր վրան առնելով՝ վճարէիք պարտքերը պատրաստ եղած փողէն ու վերջացրէիք ամէն բան:

«Այս ալ գիտնալու է որ Քոնցէպուլին զրած հաշուովը պարտքերը վճարելու համար պատրաստ գտնուած փողերը ասոնք են.

- 1) Ձեր տուածը . . . . . 5,500.
- 2) 11,000-էն մնացորդ քա չնայէ յսթիւն . 6,500.
- 3) Նոյն գումարէն մնացորդ ուսումնարանը . 826. 69 1/2

Բոլորը. 12,826. 69 1/2

«Միւս առաջարկութիւնը որ կանէք ձեր առաջին թղթին ետքերը, այսինքն որ կասէք թէ «Որովհետև Հոգևոր Եշխանութիւնն այդպիսի հոյակապ շէնքը և հարուստ տպարանն իւր ձեռքը անցուց նէ, արդեօք չի՞ պատկանիր որ նա հոգայ այս վաճառիքին, մնացեալ մասնաւոր պարտքին հոգացողութիւնն անէ», այս առաջարկութիւնն ո՞րքան ալ ինծի և ուրիշներուն իրաւացի և արդար դատողութիւն կրենայ, չեմ կարծեր որ կարելի ըլլայ ընդունել անել. մէկ մը որ՝ դոնէ վեր ի վերոյ նայողին՝ այդ առաջարկութիւնը հակառակ կերենայ վերջի կայսերական վճռոյն կարգադրութեանը. մէկն ալ որ արդէն փուշ եղած է ամենուն աչքին այս բանս որ Խալիպեան Ուսումնարանին վրայ այնքան եկեղեցական փող մխտուել է, և ուսումնարանը իբր Բէ անիրաւաբար ասուել է Խալիպէն: Այսու ամենայնիւ ի հարկէ ձեր ձեռքն է փորձ մը փորձել, և Վեհափաւ Կաթաղիկոսին ձեր ուղածին պէս այդ առաջարկութիւնն անելը: Նիթէ կամենաք կամ կարողանաք անձամբ դալ հոս՝ դոնէ մեծ պահոց մէջ, ասոր վրայ ալ կիտիմք. դրով հասկըցընելը զժուար է. և մինչև այն ատենը կարելի է որ Խալիպէն նորէն ժամանակ ընդունիմք:

«Հիմա իմ աղաչանքս այս է ձեզի, Մեծապատիւ Բարեկամ, որովհետև մէկ կողմանէ կճանչնաք թէ բոլորովն զուր տեղն է այս իմ քաշած ներութիւնս, և միւս կողմանէ կհոգաք կաշխատիք որ ազատիմ ես այս պարտքին համար պատասխանատու ըլլալէն, կիտիմ որ բարեհաճիք համառօտ զեր մը կամ քեզի մը զրելու ինծի՝ որքան կարելի է շուտով խոստանաք թէ 3,500 մանէթին վճարումը հոգալը զուք յանձն առած էք. որպէս զի ես ալ այն ձեր յանձնառութիւնը ցուցընելով Խալիպէին՝ խօսք առնում իրմէ բարեկամներու ձեռքով որ մէկ քանի ամիս, կամ զուցէ մինչև մէկ տարի, ժամանակ տայ այս բանիս համար, ու չնեղէ չատիպէ՝ ոչ զիս և ոչ զձեզ:

«Յուսալով որ այս խնդրքս կատարելը զանց չէք ընել, աստուածային օրհնութեամբ կողմունեմ՝ բոլոր ձեր ազնիւ Գերդաստանը, և կիմամն և այլն»:

Մինչև մարտի 6 անպատասխանի մնացած էր այս նամակը, երբոր իմացաւ եպիսկոպոսը քանի մի հարիւրէնէն հարեկամաց ձեռօք՝ թէ Հրեայն ամենեւին չկամենար այլ ևս սպասել, և վաղուան օրը դարձեալ պիտի գայ դատարանի դործակատարի Հետ՝ եպիսկոպոսին ունեցած չունեցածը գիր անցընելու: Յպիսկոպոսը ձանձրացած ու դառնացած՝ պատասխանեց թէ «Թող զան ցուցակագրեն, և ինչ որ դամեն՝ առնուն, ևս տաղտկացայ ամէն բանի, և սիրտ չունիմ այլ ևս այսպիսի նեղութեանց դիմանալու»: Նոքա երկար խօսքերով և գրեթէ աղաչանօք խնդրեցին՝ որ այդ նախատահան ցուցակագրութիւնը չլինի, զոր և կճանաչէին ծանր նախատինք մեր Հայոց աղքին. առաջարկեցին որ իրենք վճարեն փողը գարաջիմին, վրայէն 1,000 ըուպլի չափ կտրել տալով (որ եպիսկոպոսին այն դատին Համար արած ծախքերուն հաւասար դումար էր), և այնպէս աղատել եպիսկոպոսը Հրեից ձեռքէն, չուսալով որ եպիսկոպոսը ե՛րբ և իցէ կընդունի Սալիպեանի ժառանգներէն այն փողը և կհատուցանէ իրենց:—Այսպէս վերջացաւ ահա ըստ մասին այն պարտքին դործողութիւնը, որ այնպիսի երկնաբողոք անիրաւութեամբ կը պահանջուէր Գաբրիէլ եպիսկոպոսէն:

Անցաւ վերան գրեթէ մէկ ամիս. եպիսկոպոսը տեսաւ որ Սալիպեանի ժառանգներուն հետ սկսած թըղթակցութիւնը բաւական չէ այն գործը շուտով ու յաջողութեամբ վերջացընելու. ուստի ապրիլի վերջը հարկ համարեցաւ անձամբ երթալ Նախիջևան, և գրով չը հասկացուած պարագաները բերնով բացատրելով ժառանգաց՝ համոզեց զիրենք վճարելու իսկոյն պարտքին մեծ մասը, այսինքն երկու հազար ըուպլին, և մնա-

ցեալ 1,500-ը շահով հանդերձ՝ մինչև տարւոյն վերջերը:

Այն 15 օրուանը մէջ որ կեցաւ եպիսկոպոսը Նախիջևան, տեսաւ յայտնապէս որ ժողովրդեան մէջի հին դժտութիւններուն ոյժը գրեթէ բոլորովին կտրած է, և Սալիպեան ու Հայրապետեան կուսակցութեանց ոչ անուճը կցելատակուի, և ոչ ցաւալի հետեանքները կերևին: Այս բանին մէկ ապացոյցն ևս էր նոյն իսկ Հայրապետեան Կարապետ աղաչին ոչ սակաւ սերով և մեծարանօք վարուելը եպիսկոպոսին հետ: Բաց յայնմանէ, Սալիպեան կուսակցութեան մէջի անձանց գլխաւորները աւելի մօտեցել էին Հայրապետեանց, և սոքա՝ որ առաջ այնքան սերտ կապակցութեամբ միաբանած էին ընդդէմ Սալիպեանին և նորա կողմնակիցներուն, այժմ պէսպէս պատճառներով աւրուած էին իրարու հետ, ու մէկ մէկէ բաժանուած: Այսու ամենայնիւ տակաւին յոյս չկար որ Նախիջևանի ժողովուրդը հաստատուն միաբանութեամբ իրենց քաղաքին հասարակաց օգտակար պայծառութեանը վերայ տաք սրտով մտածեն ու եռանդուն կերպով աշխատին: Քաղաքը օրէ օր պարպուելու վերայ էր՝ քաղաքացւոց այլ և այլ քաղաքներ ու գիւղեր ցրուելովը. մանր առուտուրը ըստ մեծի մասին փոխադրուած էր Ռասթով քաղաքը, որոյ հետ արդէն սկսած էր Նախիջևանը նիւթապէս միանալ, հասարակաց շէնքերը տարններով կարօտ մնացել էին նորոգութեան, գործարանները բաղմանալու տեղը՝ օրէ օր կպակսէին օտարազգի բնակիչները՝ մեծաւ մասամբ Ռուս զեղացիներ, աղքատ արհեստաւորներ, մինչև մանրալաճառ հրեաներ անգամ, քաղաքին ծայրերէն սկսեալ մինչև մէջտեղերը իրենց բնակութիւնը հաստատել էին: Սկիզբիցական բարեգաղութիւնը ոչ սակաւ պատճառ էր՝ զանազան պատճառներով, որոց մէկն ևս էր վիճակին երկար ժամանակ գրեթէ առանց առաջնորդի մնալը. իսկ դպրոցները երևելի բարեկարգու-

Թիւն կամ յառաջադիմութիւն չունէին: Միայն երկու գովելի և ազգօգուտ ընկերութիւններ իրենց գործունէութեամբը փոքր է շատէ հոգի կուտային այն կետումն քաղաքին. այսինքն Բարեգործական Ընկերութիւնը, որոյ նպատակն է դիտաւորապէս աղքատաց նիւթական՝ քարոզական և ուսումնական կարօտութեանցը օգնել, և Մարասխայի Ընկերութիւնը, որ իրեն նպատակն ընտրած էր՝ աղքատ տղայոց, մանաւանդ եկեղեցականաց որդւոցը, սկզբնական ուսմունք և կրթութիւն տալ:

Որքան և ցաւալի երեւոյթ ամենայն տեսողաց Նախիջևանի այն վիճակը, սակայն չուսոյ նշոյլ մի դարձեալ կերեւոյթ այն միջոցին այս կողմանէ՝ որ ժողովրդեան մէկ մասը, մանաւանդ երիտասարդաց բազմութիւնը, բաւական հասկացած էր հասարակաց թըշուառութիւնը, և թէ անպատճառ հարկ է նորա դարման անել. և թէպէտ երիտասարդաց այս եռանդը, ինչպէս որ բնական է, քիչ շատ արգելք և ընդդիմութիւն կգտնէր հիներուն և ծերերուն կողմանէ, բայց դարձեալ ոչժը մեծ էր, և օր ըստ օրէ աւելի կարող էր զօրանալ՝ նոր քաղաքական կառավարութեան համար եղած կարգադրութեամբ:

Նախիջևանցիք այն կառավարութեան համար խորհրդակիսիներ և քաղաքագլուխ ընտրելու զբաղած էին մայիս և յունիս ամսոց մէջ. ուստի կարելի է ասել թէ ժամանակ չունեցան եպիսկոպոսին հետ երկարօրէն և հաստատուն կերպով խօսելու և խորհելու՝ ոչ Խալիպէան Վարանոցին Նախիջևան փոխադրուելուն վերայ, և ոչ ընդհանրապէս քաղաքին ուսումնարաններուն բարեկարգութեանը վերայ. իսկ մասնաւորը որ կհարցանէին իրեն այս նիւթերուս համար՝ պատասխան կընդունէին թէ Վարանոցին գործը Վ. Կաթուղիոսին ձեռքն է, և նա կապաս է որ Տէրութիւնը նորա կանոնները հաստատէ:

## Գ Լ Ո Ւ Խ Լ Գ.

Թէոդոսիոյ Ուսումնարանին Նախիջևան փոխադրուելը անուամբ Հոգևոր Գործի վիճակիս Նախիջևանի և Պետարապետի, եւ Խալիպէան շէնքին վարձու տրուելը:

Նախիջևանի բնակիչները համագումար քաղաքական ժողով կազմելով խնդրել էին Վեհ. Կաթուղիոսէն որ Թէոդոսիոյ մէջ բացուելու Վարանոցը կամ Սեփարիտ բացուի և Նախիջևան: Արժան կհամարիմք ամբողջ մէջ բերել այն որոշման (որ ուսեթէն շարադրուած էր) հայեթէն թարգմանութիւնը, որպէս զի լաւ հասկացուի թէ Նախիջևանցիք ինչ տրամադրութեան վերայ էին այն ժամանակները:

«Յամի 1871 է Յուլիսի 27, քաղաքական հասարակութիւնս Նախիջևանի որ առ Տոնիս կազմուել յամենայն վիճակաց, թրուով ոչ պակաս քան զերկուս. յերկու մասանց. ներկայ տանուածեաց՝ հանդերձ Քաղաքական Տեսնական կառավարութեան Հոգաբարձուներով, իւր ժողովոյն մէջ ընդ նախագահութեամբ Քաղաքագլուխ Մատթէոսի Խաչէրեւանի Փլոթիկովի խորհրդակցեցաւ այս բանիս վերայ՝ որ Թէոդոսիոյ Խալիպէան Ուսումնարանն յանձնուել է Կայսերական հրամանաւ տեսչութեան Կաթուղիոսին ամենայն Հայոց, և թէ նորին Արքայութիւնն, ինչպէս որ յայտնի է Հասարակութեանս, կցանկայ փոխել այն Վարանոցն անունը և անունիւ Խալիպէան Վարանոց (Սեփարիտ), թողլով զայն Թէոդոսիոյ մէջ, և սորա համար դիտաւորութիւն ունի խնդրելու Օգոստոսիաւ Կայսեր բարեհաճութիւնը, արդէն աւած լինելով իւր գործակատարաց ձեռքովը ըստ այսմ մասին Խալիպէանի ժառանգ արկնոր համաձայնութիւնը: Ի նկատի ունենալով Վարանոցին Թէոդոսիոյ մէջ բացուելուն դիտաւորութիւնը, և մտածելով թէ ի բոլորեզակ Ուսաստան, դուրս հանելով զուրց միայն Անդրկովկասեան աշխարհը, Նախիջևանի Հասարակութեանէն աւելի բազմութիւն Հայ հասարակութիւն չկայ և միանգամայն ուրիշ Հայ ժողովրդաց և ոչ մէկուն մէջ այնքան զգալի է՝ որքան ի Նախիջևան՝ պակասութիւն բարձրագոյն Ուսումնարանի մի, յորում Հայ մանկաւոյն դաս տրուին աւելի ընդարձակ ուսմունք քան թէ ինչ»

որ կտրվեցուի Հասարակութեան Ծախքովը տեղոյս գաւառական դպրոցին մէջ, և թէ սոյն այս կարօտութեանը պատճառ եղած է այն ցաւալի երկարաւակութեանց որ արէկոծեցին մեր Հասարակութիւնը, որովհետեւ այն Ուսումնարանը՝ որուն մեր այնքան կարօս էինք՝ կ'ընկնուէր մեր Հասարակութեան Ծախքովը և մեր Նկեղեցեաց փողերովը մեր քաղաքէն հեռու տեղ: Այնպիսի Հասարակութեան մէջ որ մեզ հետ մասնակցութիւն չունի, և թէ, վերջապէս, նաև այժմու ժամանակս Խալիպեան Գալանոցին գոյութիւնը կ'ախտալ պիտի լինէ զլիսաւորապէս Խալիպեանի ժառանգ տիկնոջ նոր նուէրմունքներէն և Կաթուղիկոսին հրամանաւը որոշուած վեճակային գումարներէ, — Հասարակութիւնս կ'սահմանէ աւաջարկել Վ. Կաթուղիկոսին Ամենայն Հայոց թէ այս Հասարակութեան միախորհուրդ և եռանդուն բաղձանքն է՝ որ Թէոդոսիոյ Ուսումնարանը բացուի Նախիջևանի մէջ անուամբ Խալիպեան Գալանոց, և խնդրել որ Նորին Սրբալիութիւնը բարեհաճի իւր հաւանութեամբը կատարումն տալ այս բաղձանաց, յետոյ միջոցով և ընդունի Նորին Կայսերական Սեփութեան ողորմածութենէն վճիւր՝ որ Գալանոցը փոխադրուի Թէոդոսիայէն Նախիջևանս Այս խնդրոս անելու աւելի ևս սերտ կանէ Հասարակութիւնս անով՝ որ Խալիպեանի ժառանգ տիկինը համաձայնելով Հասարակաց բաղձանքին ու այս կարծեաց թէ աւելի օգտակար է բանալ Գալանոցը ի Նախիջևան քան թէ ուրիշ տեղ ուր որ Հայոց Հասարակութիւն այսքան բաղձաթիւ չէ, յօժար է իւր կողմանէ՝ որ երբ որոշուի Գալանոցին Նախիջևան փոխադրութեամբը, ինքը մատակարարէ նորա պահպանութեանը համար տարուէ տարի նոյն գումարը զոր պիտի տար Թէոդոսիոյ մէջ բացուելու Գալանոցին, միայն թէ այն Գալանոցը բացուի Նախիջևանի մէջ նոյն կիմանց վերայ՝ որ սահմանուած են արդէն Թէոդոսիոյ Գալանոցին համար Կաթուղիկոսին գործախատարացը և իրեն համաձայնութեամբը:

«Այս ամենայն խորհրդածութեանց վերայ հիմնուելով Նախիջևանի Հասարակութիւնս՝ կ'սահմանէ որ եթէ իւր խնդրը՝ յաղաքս փոխադրութեան Թէոդոսիոյ մէջ բացուելու Գալանոցին ի Նախիջևան արժանի դատուի կատարման, 1) որոշէ Գալանոցին համար, քանի որ մնայ Գալանոցը ի Նախիջևան, բովանդակայն բարաշէն կրկնայարկ տունը՝ հանդերձ քովի բնակարաններովը որ տեղոյս Հասարակութեան սեպհականութիւնն, քաղաքիս հրապարակին վերայ, ուր կ'գտնուի այժմ գաւառական դպրոցը, սորա համար նշանակելով մէկ ուրիշ տուն: 2) Ինչ նորոգութիւններ որ հարկաւոր լինին ըստ ցուցանելոյ կառավարչաց Ուսումնարանին՝ սոյն Հասարակութեան սեպհական տանը վերայ, կամ թէ ինչ նոր շէնք որ պէտք լինի աւելցնել վերան նոր նպասակին յարմար կառավարութիւնը լիսաւորապէս ամենայն Հայոց թէ այս Հասարակութեան միախորհուրդ և եռանդուն բաղձանքն է՝ որ Թէոդոսիոյ Ուսումնարանը բացուի Նախիջևանի մէջ անուամբ Խալիպեան Գալանոց, և խնդրել որ Նորին Սրբալիութիւնը բարեհաճի իւր հաւանութեամբը կատարումն տալ այս բաղձանաց, յետոյ միջոցով և ընդունի Նորին Կայսերական Սեփութեան ողորմածութենէն վճիւր՝ որ Գալանոցը փոխադրուի Թէոդոսիայէն Նախիջևանս Այս խնդրոս անելու աւելի ևս սերտ կանէ Հասարակութիւնս անով՝ որ Խալիպեանի ժառանգ տիկինը համաձայնելով Հասարակաց բաղձանքին ու այս կարծեաց թէ աւելի օգտակար է բանալ Գալանոցը ի Նախիջևան քան թէ ուրիշ տեղ ուր որ Հայոց Հասարակութիւն այսքան բաղձաթիւ չէ, յօժար է իւր կողմանէ՝ որ երբ որոշուի Գալանոցին Նախիջևան փոխադրութեամբը, ինքը մատակարարէ նորա պահպանութեանը համար տարուէ տարի նոյն գումարը զոր պիտի տար Թէոդոսիոյ մէջ բացուելու Գալանոցին, միայն թէ այն Գալանոցը բացուի Նախիջևանի մէջ նոյն կիմանց վերայ՝ որ սահմանուած են արդէն Թէոդոսիոյ Գալանոցին համար Կաթուղիկոսին գործախատարացը և իրեն համաձայնութեամբը:

նարանին՝ սոյն Հասարակութեան սեպհական տանը վերայ, կամ թէ ինչ նոր շէնք որ պէտք լինի աւելցնել վերան նոր նպասակին յարմար ամենայն Հայոց քաղաքական գումարներէն, սորա վերայ Քաղաքական Կառավարութիւնը յիւրում ժամանակի առանձին կարգադրութիւն պիտի անէ: Բաց յայտմանէ, Հասարակութիւնս կ'ցանկայ որ Թէոդոսիոյ Խալիպեան Ուսումնարանին շէնքը՝ յետ փոխադրութեան այնտեղ բացուելու դպրանոցին ի Նախիջևան՝ մնայ իբրև եկամուտի աղբիւր յօգուտ տեղոյս Գալանոցին:

Ուստի կ'յանձնեմք մեր քաղաքագլխոյն ներկայացնել այս մեր վճիւր ի Հասարակութիւն քաղաքական նահանգապետին (Կատարինսալի), իսկ սորա պատճէնը այժմէն յուղարկել խնդրագրով աւ Սրբազան Կաթուղիկոսն ամենայն Հայոց որպէս զի նա միջնորդէ կատարել այս աւաջարկութիւնը ըստ կարի շուտով Միանգամայն հարկաւոր կ'ամարիմք աւելցնել՝ որ եթէ յանկարծ Գալանոցին մէջ սովորը բաւական աշակերտ չգտնուի, Հասարակութիւնս կ'խօստանայ վճարել այնքան գումար՝ որ անպատճառ հարկաւոր է ի պահպանութիւն քան աշակերտաց, իւրաքանչիւրն տարեկան Թոշակը հաշուելով երեք հարիւր ըուպլիս:

Ստորագրութիւն 123 անձանց:

Նախիջևանի Հասարակութեան այս առաջարկութեանը մէջ քանի մի բան կայ դիտողութեան արժանի: Մէկը այս որ իրենք կ'համարեն թէ այն Հասարակութեան անցեալ երկարաւակութեանցը գլխաւոր պատճառ իբր թէ ուրիշ բան չէր՝ եթէ ոչ Խալիպեան Ուսումնարանին ի Թէոդոսիա բացուելը և ոչ ի Նախիջևան որ ճշմարիտ չէ, որովհետև նոյն Հասարակութիւնը 1858-ին այսպիսի պահանջմունք կամ ցանկութիւն չէր յայտնած ամենեւին՝ ոչ Տէրութեան և ոչ Ուսումնարանը հիմնող Գալանոցի վարդապետին, ինչպէս որ Պատմութեանս ընթացքին մէջ ևս երեցաւ, ընդհակառակն Նախիջևանցիք ևս առհասարակ համոզուած էին որ Ուսումնարանին իրենց քաղաքէն չափաւորապէս հեռու տեղ բացուելը մեծապէս օգուտներ ունի: Երկրորդը այս որ չափի դուրս բացարձակ և ընդհանուր կերպով է իրենց առածը՝ որ իբր թէ Խալիպեան Ուսումնարանը

երենց եկեղեցիներուն փողերովը միայն շինուած ու պահպանուած էր. որ այնպէս չէ, որովհետեւ այն գումարներուն մէջ կային ոչ միայն Խաչկապեան Յարութիւն Աղաչին նուիրմունքը և Նախիջևանի եկեղեցեաց փողերը, Հապա նաև Խրիմու և Պեսարապետի եկեղեցեաց դրամագլուխներն ու եկամուտներուն մէկ մասը: Երրորդը այս՝ որ խիստ Հարեանցի կերպով յիշուած է Խաչկապեանի ժառանգ Խոճաչեան տիկնոջ Հաւանութիւնը, մինչդեռ նորա Հաւանութիւնը ընդունուած էր առաջիկայ պայմաններով. ա, որ Վ. Կաթուղիկոսին նոր բացուելու Գպրանոցին պահպանութեանը Համար խոստացած դրամական նպաստը ապահով ու Հաստատուն աղբիւրներ ունենայ. բ, որ գպրանոցին կառավարութիւնը մնայ դարձեալ Գաբրիէլ եպիսկոպոսին ձեռքը և գ, որ Խաչկապեան Գպրանոցը ոչ թէ Թէոդոսիոյ ուսումնարանէն վար՝ այլ վեր լինի՝ և չիրաւի օրինաւոր Սեմինարիա, այսինքն, այնպիսի բարձրագոյն Հոգևոր Գպրոց՝ որոյ առաջին վեց կամ եօթը դասարաններէն ելլող աշակերտք կարենան ուղղակի Համալսարան մտնել՝ Տէրութեան Կրմնապիւսաներէն ելնողներուն Հաւասար իրաւունքով; ինչպէս որ ունին այս իրաւունքը Ռուսաց Սեմինարիաները, այն պաաճառաւ ևս նոցա կանոնադրութեանը յարմարցուելու էին նոր բացուելու Գպրանոցին կանոնները:

Ինչ և իցէ, Նախիջևանի Հասարակութիւնը իւր Համաժողով խորհրդակցութեամբ արած որոշմունքը յուղարկեց Կաթուղիկոսին օդոստոսի 27-ին, և նա նոյն տարւոյն Հոկտեմբերի 18-ին տուած էր իւր Հաւանութիւնը այս խօսքերով թէ «Հաճութեամբ սրտի ընկալեալ զինդիւր ձեր և զառաջարկութիւնս Հասարակութեան՝ Հանդերձ մերովքն, և զկանոնս Գպրոցին պատրաստեմք ոչ անապան մատուցանել ուր Հարկն է ի Հաստատութիւն. զոր իրն ընկալցուք ծանուցո՞ւք և

ձեզ ի տեղեկութիւն, և ապա ըստ յաջողելոյ Տեառն ձեռն արկցուք յայդ գործ ազգաշահո՞յ:

Գաբրիէլ եպիսկոպոսը այն միջոցին արդէն պատրաստած և յուղարկած էր առ Վ. Կաթուղիկոսն Գպրանոցին Կարգադրութիւնը կամ կանոնները Հայերէն և ռուսերէն ընդարձակ ոճով՝ Հանդերձ ցուցալօք ուսմանց և տարեկան ծախուց, որպէս և ռոճկաց վարժապետաց և ուրիշ պաշտօնէից. կցուսար որ քանի մի ամսէն նորա Հաստատութիւնը ընդունուի ինչպէս որ գրած էր Կաթուղիկոսը՝ շնորհակալութիւն և գոհութիւն ցուցանելով այն աշխատութեան Համար: Ահաւասիկ Վ. Կաթուղիկոսին գրած կոնդակին օրինակը.

Գէորդ Ծառայ Քրիստոսի և այլն.  
Հարազատի Հայաստանեայց Եկեղեցւոյ Գերապատիւ Գաբրիէլ Արքեպիսկոպոսի Այլաղեան խնդալ ի Տէր:

Ձեմականի ձեր և զկանոնադրութիւն Հոգևոր գպրոցի Վիճակին Նախիջևանու և Բեսարապետի զաշխատեալն ՚ի ձէնջ ՚ի Հայ և ՚ի ռուս բարբառ Հասին առ մեզ, որպէս յառաջ քան զայս ՚ի կոնդակի Մերում յայանցաք սիրելութեանդ, գոհ եմք զեռանդազին աշխատութեանցդ զոր նուիրէք վասն լուսաւորութեան Հայազգի մանկտոյն:

Յետ վերաքննութեան կանոնադրութեանն՝ ունիմք առաքել ուր Հակն է ՚ի Հաստատութիւն, և զկնի ստանալոյ զԲարձրագոյն Հաճութիւն փութով ծանուցանեմք ձեզ՝ ըստ յաջողելոյ Տեառն ձեռն արկանել ՚ի գործն Աղգաշահ, բայց այժմէն պատուիրեցաք թեմական Ատենին Բեսարապետի ՚ի պահպանութիւն գպրոցին և կարասեացն տալ Սրբադնութեան ձերոյ յամսոյ ամիս գեթժանասուն և կինգ րուպլիս արծաթոյ:

Չայս ևս յայտ առնեմք Սերիւոյդ՝ զի ըստ գրութեան ձերոյ ընկալեալ ՚ի Հաճոյս զառաջարկութիւն ժառանգի ՚ի Տէր Հանդուցեալ Յարութիւն Աղայի Ղաչկապեան, և ժողովրդեան նորոյն Նախիջևանու, գրեցաւ ՚ի Մէնջ կոնդակի Հաւանութեան առ Նուրիկ Տիկինն և Խոճայեանց, և առ Քաղաքադուխն Նախիջևանի, թողով առ այժմ՝ զհրատարակութիւն յայտարարութեան զոր վասն տպելոյ յԱրարատ ամազբի յղեալ էիք առ մեզ մինչ ցհաստատութիւն կանոնաց:

Ախորժելի է մեզ յուսալ՝ զի դուք ցանկ առաջի աչաց ու-

նելով թէ զանհրաժեշտ կարօտութիւն եկեղեցւոյ մերոյ բարեկերթ  
և գեղեցիկան պաշտօնէից, և թէ զնուերական պարտաւորութիւն  
ընտրելոց որպէս և դուք իսկ էք, ո՛չ զլատչեք այսուհետև ևս  
նուերել զգործունէութիւն ձեր յօգուտ հայադնայ մանկուոյ և  
եկեղեցւոյ մերոյ սրբոյ:

Ողջ լերուք զօրացեալ Տէրամբ:

Գէորգ Գ. Կաթուղիկոս ամենայն Հայոց:

՚ի 21 Հոկտեմբերի 1871.

և Աղբային ՌՅԻՍ.

՚ի Քաղաքն Տիիխա:

Սակայն անցան զնացին ամիսներ և տարեներ ոչ  
այն կարգադրութեան հաստատութեանը վերայ ձայն  
մն լուռեցաւ, և ոչ դպրանոցի բացման խնդիրը ի գործ  
դրուեցաւ. այսքանը միայն խմացուեցաւ չետոյ որ  
աշխատի չապաղանաց պատճառ եղած էր գլխաւորապէս  
Վեհափառին զբաղած լինելը Եջմիածնայ նորա-  
կառուց ձեռնարանը շինելու և բանալու, և երկրորդա-  
բար՝ Նախիջևանի մէկ երկու եկեղեցականաց ծածկա-  
բար աշխատելը որ իրենց քաղաքին մէջ բացուելու  
Գպրանոցին կառավարութիւնը մանաւանդ տնտեսա-  
կան մասը, իրենց ձեռքը անցնի:

Մինչդեռ վիճակիս Առաջնորդական փոխանորդ Սար-  
գիս վարդապետն Տէր-Գասպարեան Քիչնեէն եկած լի-  
նելով՝ ի Քիչոսիա կգանուէր, Գաբրիէլ Եպիսկոպոսը  
խորհրդակցեցաւ նորա հետ և հարկ համարեցաւ խընդ-  
րել Վ. Կաթուղիկոսէն որ Խալիպեան Ուսումնարանին  
մէջ մնացած հանդերձեղէններն ու լաթեղէն բաները  
(որ բնականաբար երթալից էին ցեցակեր լինելու և  
փճանալու) ծախուին որովհետև երբոր Գպրանոցը բա-  
ցուէ, կարելի է՝ կասէր՝ այն փողով նոցա տեղը նորերը  
պատրաստել: Բայց Կաթուղիկոսը պատասխանեց Ե-  
պիսկոպոսին այն նոյն տարին սեպտեմբերի 5-ին այս  
խօսքերով. «Ընթերցեալ զնամակ Ձեր զգրեալն ի մե-  
տասաներորդ աւուր ամսեան օգոստոսի որ վասն վա-

ճառման հանդերձեղինաց ոմանց և անկողնոց Գպրա-  
նոցին որ ի Քիչոսիա (ասեմք). Սերելիք մեր, բացումն  
Գպրանոցին ի Նախիջևան կամ ի Քիչոսիայ՝ թէպէտ  
հակառակ կամաց և ցանկութեան մերոյ չապաղեցաւ  
ցարդ, յուսով եմք զի այլ ևս ոչ երկարեսցի տնօրէնու-  
թիւն բացման նորա. ուստի աւելորդ համարեմք և  
անօգուտ՝ այժմէն իսկ ի վաճառ հանել զի՛նչ և իցէ  
ի կահ ու կարասեաց և ի հանդերձեղինաց անտի. այլ  
դարձեալ չանձն առնեմք ի խնամս Սերելոյդ՝ պահ-  
պանել ամենայն զգուշութեամբ և խնամով թէ՛ զըլ-  
նուածն և թէ՛ զկարասին, մինչև այց արասցէ Տէր առ-  
նել զարժանն յօգուտ Աղբիս»:

Ողբալի էր այն ատենները Խալիպեան Ուսումնա-  
րանի շէնքին դրութիւնը: Թէպէտ ներքնաչարկին մէջ  
տպարանը դարձեալ կբանէր՝ հոգեվարք հիւանդի կեր-  
պով, բայց վերի երկու հոյակապ չարկերը պարապ էին  
Հարանց վարուց մէջ չեղուած Յանէսի և Յամբէսի պա-  
լատին նման: Երգիքին ու ծինելոյցներուն ծակերուն  
մէջ բուրձակներն ու չղջիկները բոցն դրած՝ տխուր  
ձայներով կողբային և այն ընդարձակ դահլիճները սե-  
ղանատունը, ննջարանները, դասարանները, աղօթա-  
տունը, սրահները, որ ժամանակով հարելուաւոր հաց-  
կաղն աշակերտաց ուրախ դուարթ ճոռողական խօսակ-  
ցութիւններովն ու քաղցրաձայն երգերովը կցնծային,  
այժմ ուրիշ ձայն չէին հանել՝ եթէ ոչ այն հառաչա-  
նաց և աւաղանաց և վաչից արձագանգները՝ որ կը  
լուռէին շէնքին այցելութեան եկող աղբային և օտար  
անձանց բերաններէն . . . Հանդիսարանին մէկ պատին  
վերայ կախուած մնացած էր միայն հանդուցեալ Խա-  
լիպեանին գեղանկար տխուր պատկերը, նորա դե-  
մացի պատին վերայ Օգոստոսափառ Կասեք պատկերը,  
կողմնական պատին վերայ ալ այժմու Վ. Կաթուղիկո-  
սին մեծազիր լուսանկարը, որովհետև Նորին Սրբազնու-

Թիւնը նոյն դահլըճին մէջ 1868-ին օրհնել էր ուսումնարանին վերջի մնացորդ աշակերտները: Այս երեք նշանաւոր կենդանադրերը Թէպէտ դիպուածով մնացած էին ամաչացեալ Ուսումնարանին մէջ, բայց բան Հասկացող մարդիկ նոցա դիմացը եկած Ժամանակները խորին մտածութեանց մէջ կընկղմէին, և կարծես Թէ ծանր ու խորհրդաւոր խօսակցութիւն մի կըսէին այն մեծամեծներուն բերնէն՝ օրինակի Համար Մեծադոր Կայսեր բերնէն Հարցմունքներ առ Վեհափառն՝ Թէ արդեօք ինչ պատճառներով չկամեցաւ կամ չկրցաւ Հայ աղքը վայելել այն կարգէ դուրս պաշտպանութիւնն ու արտօնութիւնները՝ զոր ինքը շնորհել էր այն Ուսումնարանին: Իսկ Թէ Կաթուղիկոսը կամ Խալիպեանը ինչ պատասխաններ կարող էին տալ Կայսեր Հարցմունքներուն, կ'ըսողունք կարգացողաց մակարերութեանը:

Ուսումնարանը ոսկեկազմ տետրակ մի ունէր, չորում ստորադրած էր իւր անունը 1861-ին Օգոստոսիսառ Կայսրն Աղեքսանդր Բ. իւր այցելութեանը Ժամանակ և ապա զանազան աղքերէ մեծամեծ իշխանաւորներ իրենց անունները դրած էին. այժմ այնպիսի այցելուներէն սմանք Համառօտ՝ բայց իմաստալի խօսքեր կաւելընէին. ինչպէս օրինակի Համար մեծանուն Հեղինակն Ռուսաց Փակօտին՝ յետ տխրագին կերպով զննելոյ դատարկացեալ Ուսումնարանին ամէն մէկ մեծագործ կողմերը, երբ կամեցաւ նոյն տետրակին մէջ իւր անունը գրել, այս վկայութիւնս աւելցուց ուստերէն Թէ՝ Հարսանիքս պատրաստ են, բայց հրաւիրեալքն չկան ի միջի: Աւետարանին այս վկայութիւնը չիրաւի աւելի ճիշդ կընէր եթէ ասէր «Հրաւիրեալքն չէին արժանի», բայց ինչպէս որ խոհական հեղինակին սրտի փափկութիւնը չներեց իրեն այդ խօսքը չարմարացընել աղբիս, աղքատէր մարդուն գրելն ևս առաջ չերթար նոյնը կրկնելու:

Մինչդեռ այս կերպով Խալիպեան Ուսումնարանը կեցած մնացած էր ծովահայեաց թէոդոսիա քաղաքին բարձրադիր մէկ կողմը՝ ոչ ևս իբրև հոյակապ Համալսարան ի դարդ և ի պարծանս քաղաքիս և աղբիս այլ իբրև ահագին գերեզման՝ որ կհրաւիրէր անցնող դարձող ճամբորդները իրեն վերայ ողբալու շէլու և վայ տալու աշխարհախորժան հրեշին նախանձու և հակաուսուլութեան, միանգամայն աղի արտասուօք լալու Հայոց աղբիս դժբաղդութեանը այս նոր մահարձանին վերայ, բնականապէս սկսան մէկը մէկալը դարմանալ Հարցանել և հետևել Թէ արդեօք ինչ պատճառաւ այն հոյակապ շէնքը այսպէս երեսի վերայ մնացած կեցած է . . . Ո՞վ կարող էր այսպիսի Հարցման կարճ խօսքով գոհացուցիչ պատասխան տալ . . . Գուցէ բաւական լինէր պատասխանել միայն այսչափով Թէ գլխաւոր պատճառ այս բանիս է մեր Աղբին մեծ մասին Թանձր սգիտութիւնը և նորա առաջին հետևանքները, որ են նախանձ և հակաուսուլութիւն:

Ըստ Կայսերական վերջի հրովարտակին Խալիպեան Ուսումնարանին շէնքը և մէջի կահն ու կարասին Հանդերձ տպարանովը կցանձնուէր Հոգևոր իշխանութեան Ազգիս չօգուտ Գարանոցի կամ Սեմինարիայի վեճակիս Նախիջևանի և Պետարապետոյ, առանց որոշելու Թէ ո՞ր կամ ո՞ր քաղաքին մէջ պիտի բացուի այն Գարանոցը: Հարկաւ այն քաղաքը չորում պիտի գտնուէր վեճակիս Առաջնորդական Աթուղ. սակայն մինչև 1874 տարւոյն վերջերը չայտնի չէր Թէ այն քաղաքը որը պիտի լինէր. Քիշնև, ուր էր Առաջնորդարանը մինչև 1858 տարին, Թէոդոսիա, ուր փոխադրեցաւ այն տարին Հանդերձ Կոնստանտնուպոլիս, Թէ Նախիջևան ուր աւելի յարմար կերևէր տեղւոյն բազմամարդութեանը պատճառաւ: Այսու ամենայնիւ ի 1874 տարւոյն սկիզբները Ներքին Գործոց Ոստիկանարանը չայտնեց իւր կարծիքը

Թէ Խալիպեան Ուսումնարանին շէնքը կարելի է ծախել կամ է վարձու տալ չօգուտ վիճակի Գպրանոցին: Այն միջոցներուն Աղգային Լուսաւորութեան ստիկանը (որ անձամբ տեսած էր շէնքը) ցանկացաւ դնել կամ վարձել զայն տէրութեան Հողով, և նորա մէջ բանալ Նոր Ռուսիոյ նահանգին մէջ բացուելու վարժապետանոցը, այսինքն այն դպրոցը (Ինսթիթուտ) չորում Հարիւրի չափ աշակերտք պիտի սովորին մանկավարժութեան արուեստը, և յետոյ լինին վարժապետք դաւառական կամ քաղաքական ասուած Գպրոցաց: Երբոր այս առաջարկութիւնը ընդունեցաւ Վ. Կաթուղիկոսը, առանձին կոնդակով առաջարկեց Նախիջևանի Հասարակութեան Թէ ահա Հասաւ ժամանակը բանալու վիճակիս Գպրանոցը իրենց քաղաքին մէջ ինչպէս որ կցանկային:

Նախիջևանի Խորհրդարանը (տուման) սաստիկ զբաղած էր այն ժամանակը Գործնական կամ Արդիւնական (ռէալիս) Ուսումնարան մի և ուրիշ Արուեստական կամ Ձեռագործական Գպրոց մի բանալու քաղաքին մէջ. իսկ Գպրանոցի կամ Հոգևոր Գպրոցի բացուելուն վերայ պաղ աչքով կամ անհոգութեամբ կնայէր, Համարելով Թէ այն աւելի Սկեզեցական Իշխանութեան Հոգալու բանն է: Այսու ամենայնիւ չարդելով Վ. Կաթուղիկոսին առաջարկութիւնը Ուսումնական մասնաժողովի մի ջանձնեց նաև այն խնդրոյն քննութիւնը, և մասնաժողովին Հետագայ որոշմունքն արաւ և առաջարկեց Խորհրդարանին. զոր և Խորհրդարանը Հաստատեց 1874 տարւոյն ինտորուարի 22-ին. այսինքն ա, Նախիջևանի մէջ բանալ առ այժմ Հոգևոր Գպրոց մի երթեկերդ աշակերտաց չորս դասարանով: Ե, Այս դպրոցին պահպանութեանը Համար որոշել տարին 8,000 թուլլի. 3 Հաղարը եկեղեցեաց եկամուտներէն ու կամաւոր նուերմունքներէ, և 5 Հաղարը Խալիպեան Ուսում-

նարանի շէնքին ու տպարանին բերելու եկամուտներէն:

Սւ առպէս վիճակիս Համար արժանաւոր Սկեզեցականներ պատրաստելու ուսումնարանը կենէր ոչ Թէ օրինաւոր Գպրանոց կամ Սեմինարիա՝ 7 կամ 8 դասարաններով, ինչպէս որ առաջ որոշուած էր, ինչ կանոններով որ շարադրած էր Գաբրիէլ Սպիտակոսը, և Հաստատած էր Վ. Կաթուղիկոսը, Հապա լոկ չորս դասարանով փոքրիկ Հոգևոր Գպրոց երթեկերդ աշակերտաց, սակայն Կաթուղիկոսը գոհ եղաւ Նախիջևանցոց ջանձնաժողովոյն որոշմանը, և Հրաման սուաւ որ Թէոդոսիոյ Ուսումնարանին շէնքը Հանդերձ տպարանով և մէջի կահ կարստիովը ջանձուի Նախիջևանի մէջ բացուելու Գպրոցին Հոգաբարձուներուն, ինչպէս որ ջանձուեցաւ օգոստոսի 31-ին:

Աղբիս Հացոց Պատմութեանը տեղեակ սրտացաւ աղգասիրաց չաջանի է այս ճշմարտութիւնս որ նաև տաւապեալ Հայաստանին զաւակացը ամենայն կերպով կարմարի, մանաւանդ մեր օրերը, մարգարէին այն խօսքը որ կասէ. «Սթէ ոչ տեսուն զօրութեանց Թողեալ էր մեզ զաւակ, իբրև զՍուբոմ լինէաք, և Գոմորայ նմանէաք»: Ուրեմն մեզ կմնայ մաղթել և աղօթել սրտաուռչ պաղատանօք որ դոնէ այս մինչև ցայժմ մնացած զաւակունքը չխորուին՝ չվերնան աշխարհի երեսէն, այլ մանաւանդ պահպանուին և ծաղկին ըսրեխօսութեամբ Հզօր պաշտպանաց Աղբիս և Սկեզեցոցս Հայաստանեաց. և Նախիջևանի մէջ բացուելու Հոգևոր Գպրոցը Թէ և փոքրիկ, Թէ և Խալիպեան Ուսումնարանին Համեմատութեամբը աննշան բան, սակայն աւելի Հաստատուն Հիմանց վերայ կանդուի և չառաջանաց զի եթէ նորա Հիմունքն ևս աւաղի վերայ դրուած լինին, կործանումը անհրաժեշտ, և այն ժամանակ նորա վերայ ևս կկատարուի մարգարէին

ահաւոր սպառնալիքը, ինչպէս որ կատարուեցաւ Խա-  
լիպեան Ուտումնարանին վերայ թէ «Նրկեր ձեր աւե-  
րակ, քաղաքք ձեր Հրծիգք, դաշխարհն ձեր առաջի ձեր  
օտարք կերկցեն, աւերեալ և կործանեալ չաղգաց օտա-  
րաց: Լքեալ թողցի դուստր Սիօնի իբրև զտաղաւար  
չայգւոջ, և իբրև զհովանի մըգապահաց ի մէջ սեղիսե-  
նեաց» (Յսայ. Ա, 7—9):



## Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Մ Ա.

Պատմին նամակին Մատթէոսի Կաթողիկոսի առ Սարգիս  
վարդապետ Թէոդորեան եւ առ Ամբրոսիոս վարդապետ  
Գալփայեան ի Փարիզ:

«Հոգեհարազատ և Բազմարդիւն Սիրելեացդ  
Խնդալ 'ի Տէր:

«Որ միանդամ 'ի լուծ ճշմարիտ կրօնից զանձն խո-  
նարհեցուցեալ տարաչք ամենայնի, զանխուլ ինչ իցի  
'ի Ձէնջ՝ Որդեակք իմ, զի Հոգի Հայրենասիրութեանն  
սնանի 'ի ստինս տառապանաց, և կատարեալ Համբերու-  
թեան է միայն գործ քաղել 'ի վշտաց դառաքինութիւն:  
Լուծ Տեսուն թեթև է և՛ բեռն նորա փոքրոգի, ցոր-  
ժամ Սէր Աստուածպաշտութեան և Համբերութեան  
գուգալիչիւ և աննկուն կացցէ 'ի սրտի: Մի լիցի Ձեզ  
վհատիլ աչտուհետև, քաջալերեցարուք 'ի Քրիստոս Յի-  
սուս, զի հունձք ճգանց և տառապանաց Ձերոց Հա-  
սեալ է արդ, և ճանապարհ անձուկ և տաժանելի՛ զոր  
առաջի տեսանէք, դարձցի վաղվաղակի 'ի դիւրին. այլ  
աւանդ զի ըստ Համայն փափաքանաց սրտիս՝ 'ի բազմու-  
թեանէ զբազմանցս դեռ ոչ դտայ առաւել ձեռնհաս  
օգնել Ձեզ, և բարեկարգել զամենայն որ զՁեզն լբանէ:  
Արդարև չիք չիս մասն ուրախութեան ցորչափ զՁեօք  
զամպս հեծութեանց տեսանեմ. այլ հաւատտի եմ՝ զի  
օգնականութեամբ Սրբոց Հոգւոցն և շնորհիւն, անձ-  
րևեսցեն Ձեզ անձրևս կենսատուս, և պսակեսցեն զեր-  
կասիրութիւնս Ձեր. որով 'ի Սէր Հայրենեաց խնայեցէք  
և ոչ ինչ: Զայտոսիկ զոր սրտի ցաւօք դրեմ առ Ձեզ,  
ոչ եթէ իբրև լոկ մխիթարութիւն ինչ գրեմ՝ 'ի պար-

տաւորութենէ միայն շարժեալ, այլ և դործով և արդեամբք: Ոչ բաղմաց ժամանակաց զինի իբրև դործ մեծ ունիմ 'ի մտի 'ի կարգ խոնարհեցուցանել զամենայն ինչ օգնականութեամբ Տեառն. որոյ վասն կամիմ զե որպէս սիրով համբերեցէք ամենայնի, այնպէս և դուզն ինչ ժամանակ տակաւին զղեակ համբերութեան Զերոյ պինդ կալջիք ի ձեռին. և թշնամիքն որ զձեզն հալածեն՝ դուք աղօթս արարէք վասն նոցա: Մի բնաւ բան ինչ տրտնջանաց՝ որչափ և իրաւացի լինիցե՛ ի հաւատարիմ շրթանց Զերոց առ թշնամիս ուղեորեսցի, յորմէ չիք մասն առաքինութեան, այլ գուցէ վնասու. վասն որոյ շրթունք Զեր որ զգեցեալ են անգամ մի զհեղութիւն, մի լիցի բնաւին մերկանալ. և տերամբ յետ բարեկարգելոյ ամենայնի ուրախութիւն և զիցի վարձք Զեր, և խաղաղութիւն ընկեր Զեր, և թշնամիք Զեր յայնժամ ամաչելով ամաչեսցեն:»

«Ողջ լերուք ի խնամս Մարդասիրին Աստուծոյ զօրացեալք:

Նու. Մառայ Տեառն

Մատթէոս Կաթողիկոս ամենայն Հայոց:

6 Փետրուարի 1859,  
յՕրթագիւղն Կ. Պօլսոյ:

### ՅԱԻԵԼՈՒԱԾ Բ.

Պատճէն նամակին Յովնանու վարդապետի Բեկնազարեանց առ Մակար Արքեպիսկոպոս՝ գրելոյ ի Թէոդոսիոյ ի 27 Դեկտեմբերի 1860:

«Ամենապատիւ Բարձր Սրբազան Մակար Արքեպիսկոպոս, Հայր Հոգեւոր.

«Դիտեմ հաւատտեալ զի քաղցր է Զերոյն Սրբազ-

նութեան լսել զօրտախար պատմութիւնս Աղգի և Սկեղեցուց մերոյ. նմին իրի վութամ ահան անտաւորել պատմաբանութեամբ սակաւուց ի բաղմաց անտի: Կուչեցայ այսր յԱմենապատիւ Առաջնորդէ վիճակիս, յազազս ինչ ինչ վիճակային դործոց. այո, կարի քաջ գտայ բարեբախտ աստէն, տեսանելով զառաջադիմութիւնս աշակերտելոցն ի Խալիպեան Ուսումնարանի տեղւոյս, և գովասանութեան արժանի կարգադրութիւնս նորա ամենայն մասամբք, ուր անընդհատ խումբ խումբ առաքին չամենայն կողմանց մանկտիկք յուսումն, նոյնպէս տպարան զարդարեալ նախանձելի կարգօք: Գործողութիւնք նորա չառաջանան յոյժ լաւ, և դրատունն շքեղազարդեալ բաղմատեսակ գրեւորք և այլ ամենայն կարեւոր վաշելութեամբք, մինչ զի ի զարմանս անին զտեսողս իւրեանց, մանաւանդ զօտարազգեացն, որք հիացեալ զարմանան ընդ այնքան գեղեցիկ չառաջադիմութիւն միտցն և միւսոցն ի սուղ ժամանակի, և լու ի լու հռչակ արարեալ ասեն խօսին և երանիս տան՝ ի դարաւոր ժամանակաց հետէ տարաբախտացեալ աղգիս, որ զարդիս շնորհս գտեալ յԱստուծոյ բախտաւորեցաւ՝ ունելով այնպիսի իմաստուն և առաքինի Տեսուչ, որ անբուն աչօք հոգայ զայսմ ամենայնէ յօգուտ աղգիս և եկեղեցուց: Սէ ընդէր ոչ կարդասցեն երանիս այժմ առ ազգ մեր և չեկեղեցի. երբ տեսանեն զայսպիսի նախանձաւոր վիճակաւոր նորա յօգնահանձար զարդուք զարդարեալ, և ճանաչեն իսկ զչարգ մեծութեան առաքինի դործոց այնորեկ, մինչ զի մտադիւր ցանկան և փափաքին զի զորիս և զազգականս իւրանց հանեալ ի գաւառական և ի նահանգական Արքունի ուսումնարանաց, զետեղեսցեն ի Խալիպեան Ուսումնարանի ստտ, միայն եթէ կարողանային առ այն դտանել հնարս: Ապաքէն և ես զիմորդ ոչ զուարճացայց ընդ այն, և հիմ ոչ զուարճացուցից անկեղծ պատմաբանութեամբ

Ճշմարիտ գործողութեանց ուսումնարանի, տպարանի  
 և այլն. զՁեզ է խնդակցութիւն, իբրև տեսանեմ զման-  
 կտին, որ ամօք յառաջ ոչ գիտէին զհայերէն նշանա-  
 կութիւն բառի միոյ, այժմ արձակ համարձակ խօսին  
 և ընթեռնուն վարժ, և գրեն ըստ կարգի, հայերէն,  
 ռուսերէն, և գաղիերէն. և զատ այսոցիկ՝ իմանան և  
 գիտեն իսկ զտեղեկութիւնս բարձր կամ վսեմ գիտու-  
 թեանց, միով բանիւ ասացից, են նոր Աթենացիք, և  
 կրթեալ գտանին յամենայնի բարեկրօն կարգօք: Եւ ո  
 արդեօք պատճառ և հոգաբարձու այսքան բարեմաս-  
 նութեանց. ոչ ապաքէն Ամենապատիւ Առաջնորդն  
 վիճակիս, որ տիւ և գեղեր արթուն հսկողութեամբ  
 պատրաստէ վասն ամենեցուն զկարևոր պիտոյս, և  
 տքնի վասն պահպանելոյ է բարեկարգութեան, և յա-  
 ռաքինական գործս և է կեանս զժողովրդականս, զհո-  
 գևորականս և զեկեղեցին: Եւ ոչ այսչափ միայն, այլ և  
 սահմանեալ է՝ յամենայն եօթնեկի յաւուր Կիւրակէի  
 է Յ. ում ժամու հաւաքին է մեծ դահլիճ ուսումնա-  
 րանի առ հասարակ ամենայն ժողովրդականք մեծք և  
 փոքունք, ուր է լուր ամենեցուն ընթեռնու զնախա-  
 պատրաստեալ աշխարհիկ լեզուաւ զպատմութիւնս  
 Աստուածաշունչ սուրբ գրոց պարզ և մեկին ոճով, բա-  
 ցատրութեամբք հանդերձ խորհրդոցն, և օգտակար  
 մտաւարժ խրատուք, ևս և աշխարհադրական և քա-  
 ղաքական ընդարձակ պատմութիւնս Հայաստանի, ցու-  
 ցանելով ամենեցուն մի մի է վերայ տախտակին՝ որ  
 կախեալն է յորմն տանն, ուր գրեթէ անգիր ուսանին  
 ծերք և մանկտին զկարևոր գիտելիս է սուրբ գրոց և է  
 նախնեաց գործոց՝ գիւրին և հեշտ եղանակաւ, և անուն  
 այսր ժողովարանի ասի Կտարան: Արդարև Կտարան, ուր գտն  
 լսելոյ արժանի բանք, բանան անդ գուլ միտք առ լուսա-  
 ւորութիւն, տեղեկանան զկարևոր գիտելեաց, և լինին  
 կատարեալք իմաստութեամբ, բանան այք հոգւոց առ

փրկական ճանապարհ, և ընդ նմին վառին և բորբոքին  
 եռանդք ազգասիրական ոգւոց: Հասլա զի՛նչ պատմե-  
 ցից և զհոգեկան անդադար քարոզութեանց նորա յե-  
 կեղեցւոջ ըստ առաքելական և Աւետարանական ձայ-  
 նարկութեանց: Եւ ո արդեօք պատճառ այսքան բար-  
 եացս և անդուլ աշխատութեանց է պայծառութիւն  
 Ազգիս և եկեղեցւոյս: Հասլա զի՛նչ պատմեցից և զստէպ  
 ստէպ այցելութենէ նորա ինքեան հաւատացեալ Հօ-  
 տին արթուն հսկողութեամբ պարարել զմիտս ամենե-  
 ցուն կենսական բանից Աւետարանական քարոզու-  
 թեանց. ոչ ապաքէն նոյն նա արթուն հսկող Ամենա-  
 պատիւ Առաջնորդն այսր վիճակի: Ո՞վ գեղեցիկ և եր-  
 ջանիկ ժամանակիս: Հասլա զի՛նչ ասացից և զկանոնա-  
 ւոր գործավարութեանց Կոնսիստորիի, որոց գործք յա-  
 ռաջանան՝ ոչ լոկ պատուիրանատուութեամբ, խորհրդ-  
 դածութեամբք և լոկ ստորագրութեամբք և էթ, այլ  
 ամենայն գրութիւնք ընդ գրչովք նոյն սուրբ Հօր  
 զտեալ անցանեն:

«Արդ՝ ասացէք աղայեմ, ո՞ր ճշմարիտ Ազգասէր, որ  
 վառեալն իցէ է սիրոյ Ազգիս, որ լուսաւորութեան Ազգի  
 իւրոյ ցանկաց, որ երջանկութեան ազգիս փափագի, և  
 զաչս է գլուխ իւր ունի, և հալեալ մաշի հանապազօր  
 առ է տեսանել զազգ իւր է գերագոյն փառաւորեալ  
 բարեբախտութեան, և որ զպայծառութենէ եկեղեցւոյն  
 Քրիստոսի խորհի, զի ընդ իմանալն և ընդ տեսանելն  
 իւր զայսքան բեղմնաւորեալ արգասիս բարեաց է պայ-  
 ծառութիւն Ազգի և եկեղեցւոյ իւրոյ՝ ոչ վաղվաղեցեց  
 փութանակի է տրիտուր՝ բոլորապատու զանձն իւր  
 պատրաստեցցէ է գոհ, և է ճշմարիտ գովեստ գրուատից՝  
 Դիւցազն, Առաքինի, բաղմահանձար և իմաստուն Առնս  
 այսմիկ, քրտնաջան և ճշմարիտ Աշակերտիս Քրիստոսի  
 Տեսուն մերոյ:

«Այլ ափսոս, զի ոմանք ցափաբան և փցուն՝ է Կա-

չենեան չար նախանձոտ միաբանութեանց, և ի ծննդոց մարդատեաց Սինոնի Աթենացւոյ ի վեր երևեալ՝ դան ի մարտ Հակառակութեանց, խռովեն զպարզամիտս, և խախտանարարք գործոցս ջանան լինել, որոց պարագլուխ ճանաչի խարդաւան սրբիսց երկտասարդն Նալբանդեանց, ոչ իսպառ անծանօթն որպէս Աբղ Սրբաղնութեան՝ նոյնպէս և ոմանց սուրբ Հարց ի միաբանից սրբոց Աթոռոյդ, զեռ ի 1848 ամէ: Զի վայրավատն այն քանի քանի խռովութեանց եղև պատճառ ամբօխելոյ ընդ մէջ Մատթէոս Արքեպիսկոպոսի երբեմն Առաջնորդի վիճակիս, և արդ Հանդուցեալ արժանայիշատակ Կաթողիկոսի Ամենայն Հայոց Տեառն Ներսիսի, ի կողմանէ Մատթէոս Արքեպիսկոպոսի գրէք ըստ իւրոց քմաց անստանձօրէն յամենայն ուրեք, առ ամենայն ոք և առ Հանդուցեալ Կաթողիկոսն, որպէս զի ըստ զօրութեանց այս ինչ և այն ինչ յօրուածոց օրինաց՝ Առաջնորդն է լիակատար Տէր և իշխան չիւրումն վիճակի. իսկ վասն Կաթողիկոսի խօսէր՝ Հռչակ արկանէր և գրէր՝ Թէ Կաթողիկոսն չունի զիրաւունս ձեռնամուխ լինելոյ չորպիսի գործ և իցէ, կարգելոյ զոք ի պաշտօն և կամ կարգադրելոյ զինչ և իցէ ի վիճակին առանց կամաց և Հաճութեանց Առաջնորդի: Ահա նոյն խարդակն՝ չզիտեմ Թէ զիմրդ՝ այժմ չարախօսելով զաղբօզուտ գործոց անմուռանալի բարերարաց Ազգիս, կարողացաւ Հաճոյանալ յայս ոմանց նախկին ատելեաց իւրոց, և ընդ ձեռն նոցա, ընդՀակառակն իւրոց առաջին մտադրութեանց և գործողութեանց ներգործել մարթացաւ մինչ յայն աստիճան, որ այն Հիացման է կարօտ: Զգործն եկեղեցական Հաշուոց Նախիջևանի զվերջաւորեալն ճիշդ ուղղութեամբ, և անաչառ Հաշուատեսութեամբ, որոց ճշմարտութեանց վկայեցին շնորհակալու գրութիւնք Նախարարին Ներքին Գործոց, Կուսակալին Նոր Ռուսիոյ և Սինօղի սրբոց էջմիածնի,

կարողացաւ վերատին գրգռել՝ յուզել և ամբօխել, և նոր ի նորոց արծարծել տալ և ենթարկել ընդ նոր քնննութեամբ. զի Թերևս չարիս ինչ կարողացի Հասուցանել անմահ բարերարացն Ազգիս և եկեղեցւոյ: Այլ սխալ են յոյժ կարծիք Թշուառականին և արբանեկաց նորուն. քանզի եթէ սատանայն կարողացաւ իւրով խարդակութեամբ չթողուլ զՓրկիչն աշխարհաց առ ի վատարել զտնօրինական խորհուրդս՝ որ էր ի փրկութիւն մարդկան, նոյնպէս և աշակերտեալն նմա (սատանայն) Նալբանդեանց և Համախօհը նորա կարեն խախտանարար լինել Աստուածահաճոյ գործոցն, որոց օգուտն առ Ազգն Հայոց և առ եկեղեցին Քրիստոսի վերաբերի: Եւ ոչ այս միայն էր նպատակ խօլական ցնորից ամբարշտին, այլ և այս՝ զի ծիծաղեսցի անդգամն այն ի վերաց Աթոռային Կառավարութեան, ցուցանելով աշխարհի և իւր չարամիտ Համախօհից երակամաց իշոց ոմանց ի Նախիջևանցւոց, որոց նոր Մարգարէ յայտնեաց զինքենէ առաւել ճարտարութիւն սուտ մարդարէութեան իւրոց, և զզօրութիւն որպիսութեան կղանակի կառավարութեան Աթոռոցն. քանզի վերջաւորեալ գործն ի Սինօղի, զոր միայն Ինքնակալ Կաջարն կարէր արծարծել, և յայնժամ՝ եթէ անշուշտ Հարկն ստիպէր՝ զիրաւունս Համարէր բերել ի նոր քննութիւն և ոչ Սինօղն, որ Հակառակ իւրումն առաջնոց վճռոցն առնէ. զի Սինօղն գոլով ծաչրագոցն Հ. Ատեան, միոց անհատ ազգի Հանդերձ իւրով գահագլխով, որ էր Տեղակալ Կաթողիկոսի ամենայն Հայոց, որ յամենայն պարզ գործս քննողականս և առհասարակ յամենայն գործս յայն Ատեան վերաբերեալս բաց ի մասանց Հաւատոց՝ ունէր կատարեալ իրաւունս իբրև գահագլուխ Ատենին, չեա տեղեկանալոյ Հանդամանացն՝ վախճան տալ գործոցն իբրև Կաթողիկոս, որ և տուեալ էր այնմ վախճանական եզրակացութիւն ամօք յառաջ, զայն

գործ վերստին ահա նոյն Նալբանդեանց եհանն ի նոր արծարծումն ընդ ձեռն Սինօզի, որով և ևս առաւելեալ զնիւթ չարութեան իւրոյ՝ արդ ինքնահալած երթաց ամբարիշտն այն, խմորել և զմիտս պարզամտաց՝ որ ընդ ոլորտս տիեզերաց, զրախօսութեամբ ոչպէս ի վերայ սոյն գործոյ եկեղեցական հաշուոց Նախիջևանայ, նոյնպէս և ի վերայ ամենայն Հոգևորականաց Աթոռոյն, մանաւանդ ի վերայ Զերդ Սրբադնութեան, ըստ որում ի բարձի բարձրացուցիք զնա. որոյ կեղծեալ հռչակն քարոզից բացի լրոց պատմաբանից ոչ անազան ընթերցջիք և Գուք ի հայերէն և յօտարալեզու լրագիրս՝ գոգջիք ամենայն աշխարհաց ուր ոտք ամբարշտին մուտ արասցեն, և ուր հողմն Սամալելի տարցից զերերեալն և զտատանեալն: Այլ ի վերայ այսր ամենայնի զարմանք մեծ գրաւեն զիս՝ թէ Գուք գոլով տեղեակ ի վաղուց անտի այնքան վնասաւոր խարդախութեանց նորա, և գիտելով թէ այնպիսի ձեռնարկութիւնք չարին չեն վասն օգտի աղբի և եկեղեցւոց, այլ մանաւանդ գլխովին վտանգ և վնաս չոյժ չոյժ, զխնդ գտալք յօժարակամ ընդ անդթական իղձ նորա, որպէս յայս գործումս՝ նոյնպէս և յայն, որ իբր ընտրեցեալ եցէ նա ի ժողովրդոց Նախիջևանի երէցփոխան զնալ ի Հնդկաստան: Հապա զի՞նչ ասացուք ընդ այն՝ զի ըստ մեծի մասին Արք նշանաւորք և ակնաւորք քաղաքին և գիւղօրէից նորուն չեղեն երբէք այնմ խորհրդակից և կամակից, այլ միայն ոմանք խռովացոյց երիտասարդք կուսակիցք Նալբանդեանցի, և ոմանք չականայս, ոչ այնքան յօժարամիտ առ կատարումն գործոյն, որչափ յայս՝ զի խռովարարն այն, այնու պատճառաւ օր մի յառաջ հեռացի ի քաղաքէ անտի. թէ և վաւերացուցեալ է գիր նորա ի Գոլովայէ իբր առ ի զօրաւոր առնել զբան իւր առաջի չգիտողաց, մանաւանդ թէ էր և գոլովայն մի ի համախոհից նորա:

«Այլ արդ՝ արժան է իմանալ և զայս. զի Գոլովայն ոչ այլ ինչ է ի քաղաքին, բայց միայն հաւաքող տարեկան հարկին, և գործի իւրով խորհրդակցօք հանդերձ մասնաւոր աննշան արտաքին գործոց կառավարութեան, մաքրելոյ զքաղաքն, ընդունելոյ զեկաւորս ի զինուորաց Տէրութեան և այլ այսպիսի գործս՝ որպէս տանուտէրն Վաղարշապատու, և կամ թէ էս Մըկօն Ալիբեկլոյն: Այլ թէ ձայն Խալիպովի Բարբերաբի Ազգիս սասանեցոյց զոմանս, առաւել յայնժամ՝ որ երբեմն վաւեր զպաշտօն Գոլովայի Նախիջևանայ, լաւ ի միտ առնուլ անկէ, զի այն զօրութիւն նորա ոչ թէ էր ի զօրութեան ուժոյ պաշտօնին իւրոյ, այլ իւր ինքեան իսկ. քանզի նա էր այր կատարեալ խոհական, բաղմափորձ, այր կորովի, Գիւցալն, իմաստուն հանճարեղ և քաջ ընտրեալ ի բիւրաւորաց: Ահա այժմ թէ և չէ նա Գոլովայ, սակայն նոյն է նա որպէս յառաջն, և ևս մարթի ասել բաղմացուցեալ է զհամարումն մեծի չարգանաց իւրոց՝ որպէս ի քաղաքի անդ, նոյնպէս և յայս ամենայն մեծամեծաց, որպէս չեբեկն և չեռանդն: Գուցէ և վասն այժմեան Գոլովայի զնոյն համարումն կարծեաց ունելով՝ խարեցայք, զի զստորագրութիւն Հաչրապետովի տեսեալ ի թերալաւէր վկայագրի նոյն Նալբանդեանցի, և վասն այնորիկ բոլորովին մոռացայք, և այնու անտեղի իսկ համարեցիք զառաջս առնուլ ապագայ վրտանդին. բայց ոչ. զի որչափ հեռի են արեւելք չարեմտից, այնչափ հեռի են և այս կարծիք:

«Զայս ամենայն գրելով՝ ոչ են իմ կամք վշտացուցանել զսիրտ Զեր. օն անդր ի բաց տար. այլ չուշ ի կուրծս արարեալ աղբ առնեմ Զեղ ի նախադրուշութիւն չամենայն վտանգաւոր գործոց, որք կարեն յառաջ գալ ի խռովացոյց չարանց անտի, և միանգամայն աղաչել զՁեր Սրբադնութիւն, զի ըստ Զերում սուրբ կոյման գոլովեալ գթովք՝ սէր ցուցանիջիք առ օգտակար բարե-

բարս Աղգիս՝ լինել պաշտպան ամենայն իրաւանց և արդարութեանց նոցա, զի մի չար նախանձաւորք կարողացին չարանիւթ հնարելք իւրեանց վշտացուցանել զսիրտս անմահ բարերարացն աղգիս: Քանզի բնական է, զի Գիւցաղն քաջք Առաքելնիք խրատուեալք՝ և ևս պտղաբեր և օգտաբեր լիցին. իսկ վշտացեալք և տարապարտուց՝ լքանիցին, թէ և իցէ այնպիսին ոմն լայնախորհուրդ, վեհանձն, կորովի և մեծահոգի: Զմտուածէք ինդրեմ, ոչ Գուք և ես երբեմն մինչ պատանեակն էաք՝ յամենայն սրտէ վառեալ ըղձաչաք ուսման. բայց աւանդ, ոչ ուսուցիչք կացին չթողի այդր, և ոչ հոգացողք զուսմանէ. չայնժամ զի՞նչ առնէաք. ոչ ապաքէն վշտացեալ սրտիւք անիծէաք զայն տարախտ ժամանակ, անիծէաք և զայնպիսի ուսումնատեաց անհոգ կառավարիչս Աթոռոցն, որք պորտաբուծութեան միայն ունէին զիտլթ, և եղեն իսկ առիթ ըստ իւրեանց անհոգութեանց թողլոյ զմեզ և կուրութեան մտաց: Ապաքէն հաստեալ և չուտոյ, հարկադիր լեալ, մինչ մեք խորհէաք դադտագողի փախչել այտի և գնալ յայնպիսի տեղի ուր կամք Հաստչին ունէր չաջողել, ուր հնար լինելոց էր մեզ Հաստնել բարենպատակ մերոց ըղձից, ահա զհրապարակական անդէն իսկ և իսկ ընկալաք և միտին զնախատինս բազումս, և և բանտի իսկ կալանաւորեցաք: Ոչ բանք բերանոյ մերոյ էին ուխտիւ հաստատեալ՝ թէ լաւ է մեզ մեռանել լաւ անուամբ, ուսումնասէր անուամբ, պաշտպան ուսմանց, քան թէ անձնատիրական փառօք փառաւորել, և հայրենեաց լինել անօգտակար: Արդ՝ եթէ և մերում պատանեկութեան այնչափ սէր և եռանդ ունեցաք և վերաց ուսման, որ նախագատելին է քան զփառս և զայլ ինչս, ապա ուրեմն ոչչափ առաւել այժմ պարտեմք ցանկացող լինել այնմ ամենայն մասամբք: Թէ և ժամանակն էանց, մեք ոչ կարեմք ուսանել, քանզի

և սնտու մեծութիւն հասաք, սակայն որդիք Հայկաց Հրեշտակին Հայաստանի պէտս ունին ուսման, և մանկտն, զորոց միայնակ ակնկալութեան յոչս ողջոյն աղգի կախեալ մնայ: Հապա զի այժմ, Սրբազան, ունչս առնելով բանիցս և ուխտին՝ զոր ուխտեցաք և պատանեկութեան՝ և մոռացոնս տաչք, և ոչ մատն անգամ մերձեցուցանէք յօժանդակութիւն գէթ չուսողութեամբ և միութարութիւն և և քաջալերութիւն: Ահա ճիւղ բաշխողն շնորհաց, ահա ուսուցիչն, ահա արթուն և իմաստուն հոգացողն ամենայն կարեւորաց մերազանց հողեւորականաց և աշխարհականաց: Որպիտո՞ւմ արդեօք բարեբախտի քան զայս դար՝ սպասեալ մնայք. ոչ ապաքէն ուսանողքն են մեր աղգի որդիք. ոչ ապաքէն նորօք պարծեսցի աղգն մեր յիւրումն ժամանակի. արդ զի ապա թոյլ տաչք չարակամաց հզօրանալ ընդդէմ բարեացս:

«Հաւատացէք, Սրբազան, կարմրանան երեսք մեր ընդ ումեք և խօսել. վասն զի վաղվադակի զայս ասեն. «Վարդապետ, զի՞նչ է նպատակ այսպիսի դործողութեանց Աթոռոց Կառավարութեան ընդ իմաստուն Առաջնորդի մերոյ. զի՞նչ կամին Աթոռացիք, զի՞ ջանան արդեօք. խափանարսնը դործոց Ուսումնարանին և այլ ամենայն բարեկարգութեանց խանդարիչ լինել: Ինքեանք, ասեն, անհոգ մնացին ցաչսօր ժամանակի, և մնան, և թերևս մնացեն չամս բազումս, թողլով զորդիս մեր և զհոգեւորական ուխտս և խաւար տղխութեան. ինքեանք ոչ հոգացին ցաչսմ փոսմ կարեւորաց զպետոյն, և որք հոգանն զարդիս՝ հնարս նիւթն խափանարար լինել: Ոչ ոչ, և ոչ երբէք կարեն հասանել այնպիսի աղագատեաց ըղձիցն իւրեանց, պատրաստ է, ասեն, ողջոյն Աղգն՝ զի բարձրացուցէ զիւր իրաւացի բողոք առ բարձունս երկնից, և առ պաշտպանութիւն ամենայն իրաւանց և արդարութեանց:»

## ՅԱԻԵԼՈՒԱԾ Գ.

Նախագիծ Սահմանաց Ազգայնոց Գործոցին վաճառակա-  
կանութեան որ հիմնելոց էր ի Նախիջևան քաղաքի  
յամին 1862.

«Ազգային Գործոց վաճառականութեան Նախիջևա-  
նի (1) Հաստատեսցի ի Նոր Նախիջևան՝ ի կրթել և ի  
հրահանգել դպրատանն քաղաքին և շրջակայցին  
ընդհանրապէս չուսմունս հարկաւորս ամենայն բարե-  
կերթ մարդոց, և առանձինն՝ ի հմտութիւնս այնոցիկ  
գետութեանց և լեզուաց՝ որք առաւելապէս պիտանիք  
եցեն վաճառականութեան:

### Կառավարութեան Գործոցին:

Ընդհանուր կառավարութիւնս դպրոցին է ի ձեռս  
Մաղխտրաթին Նախիջևանի:

Յերին ամս միանգամ առնէ Մաղխտրաթին զընտ-  
րութիւնն ժողովոց Հոգաբարձուաց (2) դպրոցին:

Գահերէց ժողովոցն Հոգաբարձուաց է միշտ Քաղա-  
քական զլուխն Նախիջևանի, և անգամք ժողովոցն՝  
վեց եշխանաւորք ի վաճառականաց:

Բաց ի նոցանէ անփոփոխ անգամք են ժողովոցն՝  
վերատեսուչն դպրոցին և օգնականն կամ տեսուչն: (3)

Ըստ կրօնական ուսմանց, և ընդհանրապէս ըստ  
բարոյական կրթութեան, գտանի դպրոցն ըստ հսկո-  
ղութեամբ Առաջնորդին վիճակիս. իսկ ըստ ուսումնա-

(1) Нахичеванское Народное Коммечерское Училище.

(2) Советъ.

(3) Директоръ Инспекторъ.

կան մասին ընդհանրական վերատեսուչութեամբ Խնա-  
մակալին ուսումնական շրջանակին Օտեսուցի: (1)

Վերատեսուչն կարգի ընտրութեամբ ժողովոցն Հո-  
գաբարձուաց, և Հաստատութեամբ Առաջնորդի վիճա-  
կիս և Խնամակալին ուսումնական շրջանակին Օտեսուցի:

Տեսուչն և վարժապետք և վերակացուք կարգին ի  
ժողովոցն Հոգաբարձուաց:

Պաշտօն ժողովոցն Հոգաբարձուաց է

ա. Միտ գնել բարեկարգութեան դպրոցին և դար-  
դացման նորին, ևս և խնամ ունել չառաջադէմ աշա-  
կերաց, մանաւանդ չքաւորաց, չետ ելլից նոցա ի դըպ-  
րոցէն:

բ. Որչեւ և լուծանել զամենայն ուսումնական և  
զանտեսական խնդիրս սովորական կառավարութեան  
դպրոցին, առանց կարելոց փոփոխել զհիմնական կա-  
նոնս և զսահմանս նորին:

գ. Տնտեսել և մատակարարել զհասս և զծախս դըպ-  
րոցին:

Ընդհանուր Քննութիւնս Հասից և ծախուց դպրոցին  
լինի ամ ըստ ամէ ի ժողովի Հոգաբարձուաց՝ չառաջի-  
կացութեան Մաղխտրաթին և Առաջնորդին վիճակիս:

Յաւարտ իւրաքանչիւր ուսումնական տարւոց, այս-  
լինքն չամսեանն չուլիսի, ժողովն Հոգաբարձուաց տաց  
գրաւոր տեղեկութիւնս զվիճակէ և զընթացից դպրոցին  
Առաջնորդի վիճակիս և խնամակալին որ չՕտեսուցի:

Հոգաբարձուք գումարին ի ժողով գոնեաց երկիցս  
չամսեանն անպատճառ, և առ ի սահմանել ինչ վա-  
ւերաբար՝ հարկ է առաջիկայ լինել գէթ երկցն, բաց  
ի վերատեսչէն և ի Տեսչէն:

ժողովն Հոգաբարձուաց պարտի ունել Քարտուղար

(1) Попечитель Одесскаго Округа.

մի, որ առնիցէ զնամակագրութիւնս, և յօրինեսցէ զատենագրութիւնս (1) ժողովոյն:

Ա շ ա ի է ր ր 4:

Ի դպրոցն վաճառականութեան մտանեն չաշակերտութիւն պատանիք՝ չերկոտասանամենից մինչև ցվերտասանամեայ:

Մուտ նորոց աշակերտաց լինի երկիցս և տարւոջ, աջսինքն և սիկզքն Օգոստոսի, և և սիկզքն Յունվարի:

Ամբողջ թիւ աշակերտաց կարէ Հասանել մինչև 9400:

Ամենայն աշակերտք դպրոցին զգեհուն Հանդերձ մի օրինակ ըստ սահմանելոյն:

Ամենայն աշակերտք դպրոցին երթևեկողք են, աջսինքն չառաւօտու դան և չերեկոյի դառնան և տունս իւրեանց զոչք զոչք՝ և խումբս խումբս, անշիթ իւրագաւ:

Զնախաճաշն առնեն և դպրոցին գմիջաւուրք, շատանալով թեթև ուտելօք, պանրով, մրգով և այլն, Հանդերձ Հացիւ:

Ո ս յ ա ն 4:

Ի դպրոցին վաճառականութեան նիւթք ուսման աջտքիկ են.

ա. Քրիստոնէական վարդապետութիւն՝ ըստ դաւաճութեան Հայաստանեայցս Յիկեղեցւոյ, և Պատմութիւն Հին և նոր կտակարանաց:

բ. Հայերէն Քերականութիւն:

գ. Ռուսերէն և Քաղղիարէն լեզուի:

դ. Ընդհանուր Պատմութիւն:

ե. Համառօտ Պատմութիւն Հայոց, Հանդերձ աշխարհագրութեամբ Հին և նոր Հայաստանի:

զ. Ընդհանուր Աշխարհագրութիւն՝ Հանդերձ պատ-

(2) Журналь.

մութեամբ վաճառականութեան, ևս և տիկերաբանութեամբ:

է. Թուաբանութիւն գործնական ընդարձակ:

ը. Հաշուեկալութիւն, կամ Հաշուետումար վաճառականութեան:

թ. Քեղագրութիւն և դժագրութիւն:

Վասակօտութիւնք լինին ընդհանրապէս Հայերէն:

Ընթացք ուսման տեւն դամս չորս, և չորս Վասարանս, բաց և Նախակրթարանէն՝ որոյ վասն սահմանի այլ ևս տարի մի:

Գպրոցն ունի զհաւաքումն Հարկաւոր գրեհոյ, պատկերաց, գործեաց, ևս և օրինակաց աղբի աղբի վաճառուց և բնական և արուեստական բերոց:

Հաս Կամ Նկատուի Գպրոցին:

Նկամուտք դպրոցին են.

ա. Թոշակքն բերելիք չաշակերտաց:

բ. Մասն ինչ չնիկեղեցական գումարաց վիճակիս:

Թոշակքն այնքիկ մարթին Հաւաքել աջտպէս.

և 50 աշակերտաց, որք Հատուցանեն ուուպլիս 60	
և տարւոջ. . . . .	3,000.
և 150 աշակերտաց որք Հատուցանեն 30 . . .	4,500.
և 100 աշակերտաց որք Հատուցանեն 15 . . .	1,500.
	<hr/>
	9,000.

և կամ աջտպէս.

300 աշակերտք Հատուցեն Հաւասարապէս 30 ր. 9,000.

100 աշակերտք ևս ուոցին և Հաշիւ եկեղեցական գումարաց վիճակիս, աջսինքն չնիկեղեցական դրամոց ւցցի պակասորդն գումարին՝ որ պետոյ լինիցի և լրումն ծախուց, առ նուազն 1,500 ր. և տարւոջ:

Իսկ եթէ գումարն 9,000 կամ 10,000 բաւական լինիցի և ծախս դպրոցին, չաւելուածովն կաղմեսցի

դրամադրուխն՝ պահեստի և պէտս զանազան օգտակար ձեռնարկութեանց և չառաջադիմութիւն դպրոցին, կամ և թեթևութիւն թոշակաց պահանջելոյ և ճնողաց մանկուսին:

**Ծախ Ի պրոցին:**

Ծախք դպրոցին են.

ա. Ռոճիկք Վերատեսչին, Տեսչին, վարժապետաց և վերահացուաց:

բ. Ռոճիկք ծառայից և պահապանաց:

գ. Գրեան, Գործիք, Օրինակք և այլն:

դ. Վարձատրութիւնք ընտիր աշակերտաց չքաւորաց:

ե. Այս ամենայն ծախք լինին և թոշակացն զորս Հատուցանեն աշակերտք. միայն զվարձ տան դպրոցին և զնորդութիւնան, ևս և զվառելիս չանձն առնուքազաքն:

Ռոճիկք վերատեսչին և Տեսչին և վարժապետաց սահմանին ըստ արժանաւորութեանց իւրաքանչիւրոցն՝ աւելի կամ պակաս:

**ՅԱԻԵԼՈՒԱԾ Դ.**

Պատճէն Բողոքոյ առ Վեհափառ Կաթողիկոսն ազգիս Հայոց Տ. Մատթէոս Ա. որ գրեցաւ յԹ Նոյեմբերի 1864 ամի (1):

«Վեհափառ Տէր,

«Աստուածարեալ Հայրապետ.

«Քան զամենայն վիշտս վտանգի որ երբէք և վերայ Հասանիցեն և կենցաղումս արանց նահատակելոց չօ-

(1) Թեղէր և Բողոքոյն իմաստներէն ու խօսերէն ճէլ չանին արդէն

զուտ Հասարակաց, սաստիագոյն է պարզէն և դողցես անմբերելի՝ մեղադրութիւնն և դարձանք որ չառաջ դացեն չաջնմանէ՝ չորմէ միայնոց էր արդեօք անն ունել քաջաւերութեան և խրախուսանաց: Այսպիսեալ վտանգեալ վարանահան վշտաբերութեամբ և իմ,— որ ըստ անձինս կարի և չափու վաստակեմ ի դժնդակ ժամանակիս բարի առնել աղղի և եկեղեցուց,— այն ինչ մնացի և Վեհափառ Հայրապետէդ մերմէ լսել բանս միխթարութեան, և ահա ոչ մի անգամ և ոչ երկիցս, այլ և տասնիցս և բիւրիցս ստգիւտ և չանդիմանութիւն, ոտնհարութիւն և թշնամանս, դատապարտութիւն և Հալածանս անսպառս և անդադարս կրեցի և կրեմ առ և Ձէնջ, և զվասն էրն չե ևս ստուգութեամբ և Հաւաստեալ գիտեմ:

«Նւ առ մ արդեօք բողոք դաչապիսեացս Հարկանել պարտ իցէ կրեց: Առ մեծաղօրն Աետութիւն. — այլ գուցէ առձեռնապատրաստ իցէ նորայն պատասխանի. «Աղղն քո և Քահանայապետք մատնեցին զքեզ»: Առ մողղն իմ և ժողովուրդ.— այլ գուցէ և նա (չուղեալ և Քահանայապետիցն) աղաղակիցէ և ասիցէ. «Մահապարտ է»: Առ օտմար և առ թշնամիս.— այլ ընդէր իցէ ինձ պատճառս չաւելուլ նոցա չչելոյ և վերայ վարատահան աղղիս, և ծաղր և ծանակ զմեզ առ նելոյ: — Նւ արդ առ ողիմեցից՝ եթէ ոչ առ Վեհափառ Աթուակալն սրբոց Լուսաւորչին և երանելեացն նորին չաջորդաց, Մահակեանցն և Մեսրոպեանց, Գրիգորիսեանցն և Ներսիսեանց, ոչ ինչ գնելով միտ՝ թէ ս ոք նա իցէ, Ներսէս թէ Մովսէս, Մատթէոս թէ Մարկոս, զի ոչ առ մարդն զայս

բնութեան Պատմութեան ճեջ, ստեյն այս որդի քրեթէ մժողջ կրտաւրալէր հարչ իհամարիճ: Իբրև հասարակութիւն արդէն պատմաւած անցեբուն, որդ որդ ևս հարչաւոր շտնաւաւած ծանօթութիւններ խաւիցնեմ:

իմ կառուցանեմ, այլ յԱթուռ անդր զոր կալեալ ունի: Եւ կարի խկ քաջ. զի ոչ միայն զորդուոց Հարազատի կատարեմ այսու զպարտս պաշտաման, որ ի Հօրէն Հարուածեալ՝ առ Հայրենին դարձեալ արդարութիւն լինի ապաստան, այլ և յայտ յանդիմանութեամբ ցուցանեմ՝ զի ոչ անգէտ եմ ճշմարտութեան խրատուն՝ թէ «Որդեակ, մի նշաւակիցես դառականս Հօր քո և ալգի առաջի օտարաց»:

«Ապա ուրեմն առ Վեհափառ Վաթուղիկոսն ամենայն Հայոց Հարկանեմ ես զայս իմ բողբ: Եթէ Սըբազան Տէրն Մատթէոս չկամիցի լինել ունկնդիր, — թէպէտ և զնմանէ և առ նա իցեն բանքս իմ, — չէ ինչ ինձ վնաս. թող նախորդացն նորա երանելեաց հոգիք՝ որ ցանդ զԱթուռոյն սրբով դեգերեալ չածին, թող և յաջորդացն անկաշառ դատաստանք, իրաւունս արասցեն ընդ իս և ընդ նա: «Լիւր արդ, Վեհափառ Տէր, զՔո բանսդ առ իս, և զիմ առ նոսին պատասխանիս. և նախ ոչ դառաջնանն, այլ զհոռսի վերջինս և զմօտաւորս. գուցէ և առաջնոցն պատճառք զիւրադոյնս այսու իմասցին և ի յայտ եկեսցեն»:

Վերջին ի կոնդակս Սըբութեանդ որ առ իմս նուաստութիւն՝ գրեալ էր չամին 1863 յ17 յուլիսի ընդ Համարաւս 320. և թէ զինչ ինչ Հրամայեալ էր Վեհափառութիւնդ ասել ի նմին՝ արժան է լի բովանդակ չառաջ բերել, և առ ամբաստանականսն որ ի նմա՝ կարճ ի կարճոց առնել պատխանի:

«Արժանապատիւ Գաբրիէլ վարդապետ Այվազեան. ծանուցանիմք, զի ի պատասխանի գրութեան մերոյ յՅ Սեպտեմբերի 1861 Վաթուղիկոսն, ընկալաք ի Ձէնջ զգրութիւն յՅ Նոյեմբերի երկարածիգ իմն շարհարդեալ այն յՅ Հոկտեմբերի նոյն ամի. որում ցայսօր Վանդատասխան կալ և մնալ մեր՝ անակնուկեղին միանգամայն ի ձեռնդ՝ զչափ ասնուին էր չերոց խաբէութեանց»:

«Թէ զինչ էր այն գրութիւն Վեհափառ յՅ Սեպտեմբերի 1861 ամի, և զինչ երկարածիգն իմ առ այն պա-

տասխանի, տեսցի ապաքէն չիւրումն տեղոջ. խկ թէ երկարածիգն այն իմ նամակ անպատասխան մնացեալ իցէ առ ի Ձէնջ, այդ ոչ ընաւ զարմացուցեալ է զիս՝ իբրև անակնուկեղին չինէն. սակայն զարմանալի չոյժ այնու թուի՝ զի իմ զպատասխանի Վեհափառ առ այն՝ գրութիւն իմ վաղու ևս ընկալեալ էր, զգրեալն ի 16 յուլիսի 1862 ամի. որոց նոյնպէս տեսցի պատճէնն ի ստորևս: Իսկ եթէ զարդիս Հաճոյ լեալ իցէ Ձերումդ Վեհափառութեան վերստին զնովաւ դալ, և կրինել զնոյն պատասխանիս առ բանսն իմ, այն այլ ինդիր է. միայն թէ նպատակն զոր դիտեալ էք այնու կարծեցեալ լուրթութեամբ, որ էր որպէս թէ զչափ ասնուին զիմոց խաբէութեանց, բոլորովին ի թերև ելանէ. որով ինքնին թերևանայ և կարծեցեալն այն անպատասխան ընդ խաբէութիւնս իմ. զի ասէք. «Որ և ոչ սակաւուց այս անպատասխան եղև մեզ առ ի թ»:

«Բայց ես չընթեռնուլ անդ զբանս զայստակի Անուղի Վեհափառութեանդ, իսկոյն Հարցանէի ցանձն իմ թէ ո՞ր այն խաբէութիւնքն իցեն արդեօք զարմանալիք և անակնուկեղիք. և ահա ընթեռնուի ի նմին շարայարութեան զարդարև զարմանալի բանքս, թէ

«Ձի բովանդակութիւն մտաց ամբողջ գրութեան մերոյ յայն «Եթէ զոգջիւր կըրտակիւր, լինել չէ՞ ճշմարտութեան զչերոց ամենից «Վիստարութեան յարոգիս յօգոսիս ալգի և էլեղեցոյ աշխատանքութեանց «չէր և ջանադրութեանց. այլ ի վերջոյ ստուժիւն ինչ յանձն մեր ի «վեր երևեցուցեալ՝ հաստատեցիք հետի լինել չէ՞ ճառածք ի ժողովոյ «ճշմարտութեանց. զի ըստ երանելւոյն «Նարեկացւոյ՝ անպատշաճ էր «և է մեզ ամպել և ոչ անձրեւել, ասել և ոչ ասնել: Խոհեմու «թիւն մեր գեղեցիկ իմն միջոցովք մեռնաու էր եղեալ մեզ յին «թացս բանիցք ի մեռն աղգի աղգի փաստից հրաւիրել զտեսութիւն «մտաց մերոյ ի նպատակն ամենից զարժանուութեանց մերոյ, լի «նել այն անշուշտ յօգոսիս ալգի և էլեղեցոյ: Այլ երանի՝ և մեռնաու «իսկ լինէր մասամբ իւրք շարժել զնեղործութիւն հոգւոյ մերոյ «ժող ի կարգութեան քէլ մասին այն օրինակ խոստովութեան արդարութեան «չէրոց, զի ի նմին գրութեանդ խօսապեալ էիք՝ ոչ անազան բան «զմեռնան առաջիկայ զարնայնոյն «Ներկայանալ աստէն առ մեզ, և «յատենի մերում անժխտելի փաստիւք և ընդարձակ բանիւք հա-

«Լատուել և ապացուցանել, բայց ահա ցայսօր այն օրինակ խոս-  
 ւումն ձեր չարակեաց զճահատ ձեր արդասեօք ճշմարտութեան,  
 չիրաւունս և ոչ բնաւ տալով ձեզ միւս անգամ հրաւիրել զմեզ  
 «հասարկութեան ամենից չերոյ իբր ազգօգուտ ջանասցաւ իննս. մա-  
 ճնաւանդ թէ և յետ նորս երկիցս անգամ ևս առանձին զրու-  
 «թեամբ ձերով զնոյն խոստումն խոստացայք, տալով մեզ սպասել  
 «բերել ձեզ վաղ բնդ փոյթ ի նոյն դործով»:

«Սպաբէն չաչտ իսկ է ի բանիցս չաչսցանէ, զի Տէ  
 Տէրն ապացոյց և հաւատտիք իմոցս իմքէս լեռնայ այն իցէ,  
 զի խոստացեալ եմ զնալ գարնային ի կոչ Վեհափա-  
 ռութեանդ, և չեմ կացեալ ի խոստմանս իմում: Եւ  
 դուք առանց բնաւ քննելոյ՝ թէ զինչ պատճառք  
 չգնալոցս իցեն՝ զխաբեբայի հաճիք շինել զինն զանուն,  
 և ի վերայ բերել՝ թէ սուտ են ուրեմն և ամենայն  
 բանք իմ, և զլիաւորապէս այնորիկ՝ որովք ասացեալ  
 եմ թէ աշխատութիւնք իմ և ջանացողութիւնք իցեն  
 չօգուտ ազգի և եկեղեցւոյ: Այնչափ անախտունելի էք  
 ինձ, և արդարեւ զարմացման արժանի այս ձեռնարկու-  
 թիւն արամաբանական, զի թէ ոչ Հայրապետական կրն-  
 դալի էին բանք՝ ոչինչ զանդաղէի քծմիրբարութեան զնոսին  
 անուանել և անփշի արամաբանութիւն: Քանզի նախ,  
 եթէ ոք անախտառու մտօք Հայել ախորժիցէ չաշխա-  
 տութիւնս իմ և ի վաստակս, ոչ չառժամեալս և ի  
 վաղանցիկս և չառանձնականս, աչլ կօթնամեալս և  
 ի հաստատունս, չերեւելիս ամենեցուն և ի հրապարա-  
 կականս, անհնարին իմն է այնպիսոցն չերկբայս լի-  
 նել՝ յփոք իցեն ազգի և եկեղեցւոյ վաստակքն իմ և  
 ջանացողութիւնք՝ թէ ի վնաս. և ոչ բնաւ կարօտի  
 պատ ի պատ պատճառանաց առ ի զիտելոյ զճշմար-  
 տախօսութիւն իմ կամ զխաբէութիւն, և երկրորդ՝ ոչ  
 կարէ այնպիսին զգնալն իմ և կամ ոչ ի Ս. Եջմիածին  
 չաչսմ ամի և չամոսան և կամ չաչլումն՝ ապացոյց առ-  
 նուլ իմումս ճշմարտախօսութեան կամ ստութեան:

«Բայց զարմանալի ևս և անախտալ ամբաստանու-

թիւն այն է, որով հետ այնորիկ ստղտանիմ ի Ձերմէ  
 Վեհափառութեանդ՝ որպէս թէ զսրավեալ և նախա-  
 տեալ իցեմ զբնդ հանրութիւն Նախկապոսաց Սրբոյ Ա-  
 թուոյդ իբրև փառամուլս, արծաթասէրս, գոռոզս և  
 բռնակալս. քանզի ստէք.

«Ինչ չեղ համարեցարու՝ Տիանփամայն զփալի հարուածով՝ յերազա-  
 ճնալ ի կործին. որով և որով փիտել անշուշտ ընդ հասարակեամբ ճոսայ ար-  
 չիեալ լինել ձեզ զտիրաբարոզ բան աւետարանական ճայնարձա-  
 չիութեան. «Մի՛ դատէքն և մի դատեցիքն». վասն զի անկերելի են  
 «ձեզ միանգամայն անխոհեմ կշռադատութեամբ և անորոշ ցու-  
 չցակութեամբ ի դատաստան անգր մտտի կարճեաց ձերոց մատ-  
 չնելով զընդհանրութեան Եղեմիոսոսայ որբոյ Ալուսոյն՝ առանց իբրք  
 չխղճահարութեան ամել զլեզու ձեր զնորք, և այնպէս ապա  
 չդատել և անգոսնել իբր զխաւամուլութիւն նոցա և զարծաթախ-  
 չբութիւն և զգոռոզութիւն, քանիչ անուճը զանուանս նոցա  
 չպոսկեալ, որով և արտաքս վաղեալ քան զսահման աւետարանա-  
 չկան իբաւանց. «Չի՞ տեսնես զլեզու ական կըբօք քոյ, և ի  
 չքում ական զլեբանդ ոչ նշմարես. կի՛ղծաւոր, հան նախ զզե-  
 չբանդ յախանէ քումմէ, և սպա հայեցիս հանել զլեզու յախանէ  
 «կըբօք քոյ», զորոյ զմեկնաբանօրէն բացատրութեանց կարէք  
 չհասու լինել ի բացատրութեան անդ Յոհաննու Ծործորեցւոյն,  
 չենթադրել զհոգի ձեր բնդ աւետարանական դատապարտու-  
 չթեամբ, ըստ այնմ. «Որ ասիցէ ցեղբայր եւր յինար կամ մորոս,  
 չպարտաւոր լիցի յաւուրն դատաստանի.» և որ զհետ սորին բե-  
 չբին բանք թող բորբօք կրից ձերոց ցամնականի մի՛ զեր քան  
 «զչալին բորբօքեալ ի ձեզ՝ զկերպարան խոհեմութեան ձերոյ  
 չյանխոհեմութիւն անդ կերպարանցէ. վասն զի ըստ Տէրունեան  
 չբանին, եթէ ճրագ մարմնոյն են աչք առ առաջնորդել նմա  
 չզուղիցն ընթանալ զշաւիղ՝ համաձայն աստուածային սահմանա-  
 չդրութեանց, ապա և ըստ իմաստնոյն բանի՝ զառաջնորդութիւն  
 չմտաց խոհականութիւնն ուղղէ առ աստուածայինս պատուիրա-  
 չնապահութիւն, դուք զի՞ ապա կուրօրէն իմն բերեալ ի նոյն՝  
 չի բոց ցամնական կրից ձերոց միակողմն մասնէք զարտօնու-  
 չթիւն համբաւոյ անուանց և կոչմանց ամենից նոցին: Հաստա՞տ  
 չէք ի կարծիս ձեր. կարէք ազատ իմն վաստակութեամբ զչարն ի  
 չբարեաց տարորոշեալ՝ յիշել միմեայն զանուն նորին մեզ, իբրև  
 չարգարև. Միակ Գլխոյ Հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյ և ծայ-  
 չբազոյն իմն իբաւամբ իշխանութեան իշխողի ի վերայ ամենից նոցին.  
 չթերևս անգիտելեացն ի մէնջ ձեօք ծանօթացեալ՝ դո՛հ զձէնդ

«լինել, և այնպէս ապա ջանալ վերածել զնա յուղղութիւն, ապա «Թէ ոչ, ձեօք է մէջ բերեալ է գրութեանդ՝ ընդ վայելք մար- «գարէական սպառնալեաց ենթարկեալք զձեզ՝ զբարին է չարաց «և զչարն է բարեաց չընտրելովք, և զերկուսն է մի դա- «տաստան անխիղճ ամբաստանութեան մասնելովք: Այլ զի զե- «տեմք մեք հաւաստեալ, խիղճ ոչ բնաւ համարեմք մեզ վկայել «խկութեամբ, Թէ աղաք էն ամենեւն ամենեւին նոյա է ձերոց՝ այն «օրինակ անկշռադատ և երբ յերաւացի վճուագատութեանց.»

«Յորժամ բան ինչ ամբաստանութեան անհիմն իցէ բոլորովին, ապաքէն անկարօտ դտանի և պատասխան- «ւոյ: Ոչ արդեօք յայտարեաց սակի է և այս մասն կոն- «դակի Վեհափառութեանդ՝ անշուշտ ոչ առ է Ձէնջ շարագրեալ, այլ է միոյ ումեքէ չեպիսկոպոսացն, — որ- «պէս հաւանեալս եմ, — կամ Թէ է վարդապետաց ոք, որ այլ ընդ այլոյ ընթերցեալ կամ լուեալ է զբանս իմոյ նամակին, և անձին իւրում զնոսին պատշաճե- «ցուցեալ. ուր իմ ոչ բնաւ զեպիսկոպոսաց Արարչոյ որբոյ արա- «րեալ է բնաւ չեղատակութիւն, և ոչ երբէք դամեայն էպիս- «կոպոսաց ազգին ճերոյ բանս է մէջ արկեալ, այլ զամանց և և Թ- «անարժան եպիսկոպոսաց՝ որ է սիւլուս աշխարհի գտա- «նիցին՝ չամենայն աղբս և է ժողովուրդս, և ոչ միայն այժմ՝ այլ և չամենայն ժամանակս (1): Քանզի այս են անհա բանք նամակին իմոյ պատճառս տուեալ են պատճառախնդրացն կամակորելոյ զխօսս իմ և զկար- «ծիս զեպիսկոպոսութեան է զեպիսկոպոսաց, որպէս զի զիւրագոյնս յաջողեացն նոցա զրկել զիս (ըստ իւրեանցն կարծեաց) չեպիսկոպոսական աստիճանէ մինչև իսպառ՝ իբրև զարհամարհող ոք այնր սուրբ աստիճանի, և իբ- «րև զպարսաւիչ վերապատուելոցն նովաւ է Ձերմէ Վե- «հափառութեանդ, որով և զանձանց իւրեանց.

«Ապա ուրեմն որք այլազգ ամենեւին տուեալ են զիրացս տե- «ղեկութիւն Ձերումք Վեհափառութեան, Աստուածարեալ Հայ-

(1) Տե՛ս է Պատմութեանս, Գլ. ԺԹ:

«բարեա, յայննապէս է բաց եղեալ է նոցա զերկիւզն Աստուծոյ «և դամթ երեսաց՝ եթէ զիտութեամբ աննիցն զայն. և ոչ «զանդիտեն յահազին սպառնալեաց մարգարէին՝ Թէ «Վայ որ «սասն զչարն բարի և զբարին չար, վայ որ ասն զլոյսն խաւար «և զխաւարն լոյս»: Նախանձ և ասելութիւն կուրացուցեալ է «զգաւ նոցա, և մարձ դաւնութեան զըրտիւքն պատեալ. և զօ- «գուտ ազգի և եկեղեցւոյ այդպէս զօհն աւաղիկ չարաշահու- «թեան և չարամտութեան անձանց, և ոչ խղճեն բնաւ ամենեւին «զհայրապետական սիրտ Վեհափառ. Տէրութեանդ պղտորել և «վերովել է վերայ գործոց՝ որոց վասն յերաւ էր ինձ արդեօք, — «եթէ ներեացն ինձ համարձակագոյնս ասել, — զբուստեաց բազ- «մաց առ է Սբբութեանդ և օրհնութեանց մեծաց ակնունել ա- «նեղիւրայ փտահութեամբ: Եւ մի՛ բնաւ է կարծիս լինելք՝ աղա- «չչեմ, Վեհափառ Տէրք է բանկս իմաց յայցանէ՛ կեթ սովմբ «չեպիսկոպոսականն ակնարկելեմ ես յաստիճան. զորմէ է միտմն «է կոնդակաց Սբբութեանդ է տողեալն է 27 Հոկտեմբերի 1860 «ամի առ այժմու քաղաքադուլն Նախիջևանի՝ հաճեալ էր Վե- «հափառութիւնդ ասել՝ Թէ Վաղարեան էլխանքն, Փոխարքայն «Վոյլիատու, և ոմանք է բնակաց քաղաքին Նախիջևանի, — և հա- «մօրէն իսկ բնակիչք ամենայն քաղաքաց վիճակիս, — հայցեալ են «զբոյլ է Ձերմէ Սբբութեանդ: Քանզի Թէպէտ և ոչ անձանթ է և «ինձ աւաքելականն, «եթէ որ եպիսկոպոսութեան ցանկայ՝ բար- «ւոյ զործոյ ցանկայ», բայց ոչ ըստ բաղմացն իմանալոյ իմանամ «զայն և ես, որպէս Թէ Բարոյ է՛ ի ցանկայ, այլ ըստ աւաքե- «լադաւան Հարցն Հաստատելոյ՝ Թէ Բարոյ պարսման, աշխարհ- «ութեան, նահապարհութեան ցանկայ. որոյ վասն ես ոչ միայն ոչ ցանկա- «նամ այնմ յինչն կողմանէ, Վեհափառ Տէր, այլ և համարձակիմ «ասել՝ զի որք ինդրենն զայն վասն իմ՝ ոչ զիտեն զի՛նչ խն- «դրեն, և վասն ո՛րք ինդրեն: Ոչ զիտեն ասեմ զի՛նչ ինդրեն, «քանզի ըստ իւրեանց բարեմտութեանն, ևս և ըստ ողբալի ե- «րևութիւն՝ զոր յայս ոման չեպիսկոպոսաց ժամանակն նշմարեն, անու- «զից առնեն դատաստան զեպիսկոպոսական աստիճանէն, և հա- «մարեն իմն եթէ եպիսկոպոսութիւնն ինքնին ըստ ինքեան փառս «և զիւրութիւն և ճոխութիւն պարզէ է որոց այնմ հասանիցն, «Թէպէտե լոկ և Թախուր իցին է բարեմասնութեանցն որ պա- «հանջին յայնցանէ՝ որք Թեախիսիցեն վերոսնել յայն աստիճան. «նովն իրի և զփաստական իմ դուզնաբեայս յօգուտ և է պայծա- «ռութիւն Հայաստանեայցս ազգի և եկեղեցւոյ՝ եպիսկոպոսու- «թեամբ կամին պատիւ, և վարձակատոյց իմն լինել այնու տա- «ժամական աշխատութեանցս արդէն յանձն աւելոց, կամ Թէ

«արդեօք և յառաւելադոյնան քան զկար զօրութեան իմոյ խրա-  
 «խուսել զձեռս իմ և զքանասիրութիւնս: Ա՛չ զիտեն թէ քանի՛  
 «միտասարկ է յայժման ժամանակիս Բաղձայ ի մերգնեայ վարդա-  
 «պետաց եպիսկոպոսականն աստիճանս, մինչդեռ տեսանեն զի յա-  
 «լուք ի նոցանէ պատրուակ անձանցն փառամոլութեան և արձաթ-  
 «սիրութեան աւնուն զուղղութեամբ ասացեալն յառաքելոյն, և  
 «զուռն իմ համարին զեպիսկոպոսութիւնն այնպիսեաց ակտից և  
 «մոլութեանց՝ որք և ոչ աշխարհականացն ներելն են քրիստո-  
 «նէից՝ թող թէ եպիսկոպոսաց, զուղղութեան ասեմ և նախան-  
 «ձու, ծուլութեան և անձնդիւր կենաց, խրոխտանաց և բռնա-  
 «կալութեան, և համբէն ամենայն մոլութեանց՝ որ տեսան եր-  
 «բեմն և ի դասս ակրասպան քահանայապետացն չեղից՝ առ Փրբե-  
 «չաւն մերով Քրիստոսիւ: Զայս ամենայն թէ զիտէին, ասեմ, բա-  
 «րեմիտքն այն ակրասարկուք (որոց սակայն շնորհապարտ եմ և  
 «շնորհակալու սակս զթատէր բարեխօսութեանն), փոխանակ և  
 «պիսկոպոսականաւն փառաւոր զիս աւնելոյ ձեռնադրութեամբ՝  
 «զմնային արդեօք նախ այնմ լինել վերահասու՝ եթէ չեցեմ ես  
 «արդեօք յայնպիսեայ անոր չեղեցեալացն՝ որ յեպիսկոպոսութեանն  
 «մանաւանդ ինդրեցեն մուրանալ զպատիւ, քան թէ զեպիսկոպո-  
 «սութիւնն փառաւոր աւնելցեն՝ զնացելն իւրեանցն անարատու-  
 «թեամբ և վաստակոյն արդասաւորութեամբ: Աչ վայրապար և  
 «զայն ասացի, Վեհափառ Տէր, թէ և ոչ զայն զիտեն՝ թէ վասն  
 «ո՛ր ինդրն զեպիսկոպոսութիւնս Քանդի որք միանգամ զեպիսկոպո-  
 «սութեանն անաւորութեան իմում, կարող են վկայել՝ թէ կամեցին՝  
 «եթէ ո՛րպէս ասեցող իցեմ ես Տեսուն շնորհիւ ամենայն արտաք-  
 «նայարդար ձոխութեանց և ունայնութեանց և բարձից աւաղու-  
 «թեան ի մանկութենէ հետէ, առ որ ոչ զոյգն ինչ և կեղակարծ  
 «փաստ ապացուցի զայն ունիմ, զի մինչդեռ տակաւին ըստ վեր-  
 «նախնամ Տեսութեանն ներելոյ՝ ի խուճիս Միթարեանցն զե-  
 «զերէի միամտութեամբ, բացէ ի բաց մերժեցի յանձնէ զեպիսկո-  
 «պոսութեանն աստիճանն՝ յոր հրաւերէցն զիս մեծադոյն մասն  
 «միաբանից վանուցն ի ժամանակի ընտրութեան նորոյ վանահօր  
 «յամին 1846, ևս և յղինին միանգամ և երկիցս . . . իսկ յորմէ  
 «հետէ վերադարձայ ընդ հովանեաւ Մայր Աթոռոյ Հայաստան-  
 «եայցս Նիկեացոյ, ևս առաւել խորշիմ մերժիմ ես ի նշանակաց  
 «անդամ փառասիրութեան, զի մե՛ յորոց կամակար մտօք անջա-  
 «տեալս մեկնեցայ պարտաւորէտք՝ ի վերայ այլոցն բամբասանաց  
 «և զայս ևս յաւելուցուն՝ եթէ ի ինդր բարձի և աւաղութեան  
 «օցտեալ ի նոցանէ, և ի սուրբ Աթոռոյ յարեցայ: Աչ, ոչ զիտեն  
 «զայս ամենայն, Վեհափառ Տէր, որք զեպիսկոպոսութիւն հայ-

«ցեն վասն իմ ի Սրբութենէդ՝ անուանեալ կամ ճշմարիտ բարե-  
 «կամքն իմ և բարեխօսք, այլ և ոչ խուռն բաղմութիւնք չարա-  
 «խօսացն իմոց և յաջողութեանց՝ զմիտս Աստուածարեալ Հայրա-  
 «պետիդ պղտորել ինդրոզաց ցանդ ի վերայ իմն:

«Նւ չգիտեմ ո՛րպէս կամ որո՞ւք բացիւք և բառիւք  
 աչսր նամակն անարդեալ իցի իմ զբոսոս Եփեսոսացոց առ հա-  
 սարէ, և զԵփեսոսացոսն որքոյ Աթոռոյ յանձնէ յանուանէ . . . Զայս  
 ինչ հաւաստեալ գիտեմ, զի նախ ի կալ իմում յատենի  
 Սրբութեանդ յանդիման եպիսկոպոսաց ոմանց անդա-  
 մոց Սեւհոզոսիդ յամսեան հոկտեմբերի 1863 ամի,  
 իբրև վերստին բանս ի մէջ արկիք զայսմ ինդրոց, և  
 ստիպաւ իմն պահանջիւք չինէն տալ Ձեզ զա-  
 նուն գէլը ծիոյ ուրուս յԵփեսոսացոց, մանաւանդ զառ ի Սրբու-  
 թենէդ ձեռնադրելոց, որոց մարթ իցի զպարտաւական  
 ասացուածսն իմ պատշաճեցուցանել, ես բացուտ ի  
 բաց հրաժարեցի յանուանելոյ զոք. այլ շատ համարեցայ  
 յուշ աւնել Ձերումդ Վեհափառութեան զոր Գուք իսկ  
 Ձերովք բերանով ասացեալ էք բաղում անդամ ցո՞մնս չե-  
 պիսկոպոսացն առ ի Ձէնջ ձեռնադրելոց՝ թէ «Իցի թէ  
 դոսացեալ էք աջ իմ, և չէի եղեալ զսա ի գլուխ քո»:  
 Առ որ ետուք պատասխանի՝ թէ «Այդպիսի բանք ընդ  
 խաղ ասին երբեմն իբրև ի հօրէ առ որդիս.—(և դար-  
 ձեալ առ եպիսկոպոսունսն որք անդէն բաղմեալ էին  
 ասացիք)— ո՛չ այնպէս իցի»:  
 Նւ նոքա զճաղու իմն ե-  
 կեալ՝ ասացին. «Այո, Վեհափառ Տէր»:  
 Նւ երկրորդ՝ ի  
 պատահել միոյ ուրեմն ի Ձերոցն հաւատարմաց ի Ս.  
 Էջմիածին յամին 1864, Ձերդ Վեհափառութիւնս չեա  
 պատմելոց նմին զվերտան զոր հասուցանէին Ձեզ ո՞մնս  
 յԵփեսոսացոց որքոյ Աթոռոյդ՝ միաբանական բողոքովն իւ-  
 րեանց առ աղոս Հայոց առ հասարակ, և այլովք գնա-  
 ցիւք, հաճեալ էիք յաւելուլ և զայս ինչ՝ թէ «Թող  
 տեսից միւս ևս անգամ զՍյուլպեան վարդապետն, և  
 պատրաստ եմ ներումն ի նմանէ հացել յաղաքս այնր՝

զի մեղադրել եղէ նմին վասն պարսաւանօք խօսելոյն զտոցանէ» . . . Իցիւ թէ և զալոց ամբաստանութեանց եղելոց զինէն դոջնպէս ճանաչէր Վեհափառ Տէրդ զանտեղութիւնն և զանիրաւութիւնն. սակաւն տակաւին ևս հեռի թուի ինձ ժամանակն այն . . . Առ այժմ տեսցուք զլինչ Վեհափառ Տէրդ ասկցի զհետ վերջիւ շերտն ամբաստանութեանց.

«Զի՞ է ձեզ հուրանալ կամովին զհուրութիւն մեծ, որով և չճանաչել զԵհիակիան զբուն պատճառ այդ օրինակ մատուրական «տաղնապոյց ձերոց, զայլովք միանգամայն տարածեալ զանտի «կարծիս ձերս: Ահա անդարձաւ լինիչ ընկացից աստճորդայն իստ- «վարութեանց շերտ իբրև քաղաք ի գլուխ լեւին ակն յանդիմանն և «բեմամբ ի ցոյց եկեալ ամենից, որոց աչք են լուսաւոր, տան «նոցա գիտել՝ ձեզ միայն լինել խիստպէս պատճառ այդ օրինակ «սպալի հարուածոց մտաց ձերոց: Եւ ընդէ՞ր ապա յանիրաւին դա- «տել ինչ՞ և ո՞չ մի համարէք ձեզ լինածի զեղիւնդարձան Տէր շէր Տիտն իբրձեւ, մանաւանդ թէ դուք ինքնին գիտէք զի չեն մատ- «նեալ ականջք մեր ի գերութիւն ամենատեսակ տարածայնու- «թեանց, անմուտանալի միանգամայն ի մերոց յիշողականութեանց «ունելով միշտ զԱւաքելականն զպատուելանն զի՞ն՝ ամենայն հոգ- «ւոյ հաւատայքն»: Գարձարուք ապա անգամ մի յուշս իմանալի «տեսութեան ձերոյ, և կարէք յայնժամ ըստ արդարութեանցն «սրահանջման վկայել և դուք, թէ անպատշաճ են այն ձեզ դարձ- «նութեամբ ի վերայ հօրեդ զանց արարեալ՝ հեղեւիլ Տի Տիտն շէր ար- «ժելեանց Գործոց, զորոց զհոգ կաւալարութեանցն և աշխարհական «ոք ուսումնական գիտէ ի գլուխ տանել. զորմէ և Բաղճից անգամ «յաւանձին զբութիւնս մեր հաղորդեալ եմք ձեզ: Չէ անշօշա- «վիել ի ձերոց յիշողականութեանց աւաքելականն պատուելանն. «Արածեցէք որ ի ձեզ հօտդ է Աստուծոյ. մի՛ ահամայ, այլ կա- «մաւ ըստ Աստուծոյ. մի՛ զօշաքարութեամբ, այլ յօժարութեամբ».

«Եւ որ զինի սորին բերին բանք Աստուածաշունչք: Այլ սակայն «չպակասեցան ցայսօր ի միջոյ ձեզ հաւատացեալ հօտիդ վրդով- «մունք և խափութիւնք, հարստահարութիւնք և այլ պէսպէս «ապօրինի ներգործութիւնք՝ քարոզք այն ձերոց անհոգի և անհոգ «հաստատութեանց: Գուք առ ոչինչ համարելով զինամատարութիւն «և զխաղաղ կենցաղաբարութիւն հօտիդ՝ հեղուրեցայ և հեղու- «րեցի Տիտն յանդարձելին»:

Նախ՝ իմ երբէք չէ ասացեալ, և ոչ ընդ միտ բնաւ

ածեալ, թէ եպիսկոպոսունք սրբոյ Աթուռոյդ, կամ Տիտն իսկն, թշնամիք իմ իցեն. զի համարեմ թէ ոչ ումեք երբէք ի նոցանէ տուեալ է իմ պատճառս թշնամու- թեան: Գիտել գիտեմ, զի մի ոմն ի նոցանէ (1) ասա- ցեալ է երբեմն ուրեմն. «Գարբէլ վարդապետն վնաս մեծ արար մեզ, քանզի նա եբաց զաչս ժողովրդոց պա- հանջել յառաջնորդացս իւրեանց զայն ինչ իրս՝ զորս մեք չեմք ձեռնհաս տալ նոցա»: Այլ աչսօքի բարե- մտութեան թուին ինձ բանք ի կողմանէ ասողին, և վասն իմ ի զբուստեաց սակի՝ քան թէ ի պարսաւա- նաց: — Երկրորդ՝ ինձ այս էր ցանկալի ի գիտել՝ թէ ո՞ր այն իցեն անդարձաւ լինիչ ընկացից աստճորդայն իստ- վարութեանց շերտ իբրև քաղաք ի գլուխ լեւին ակններև ամենե- ցուն գոլ հոչակէ Ձերդ Վեհափառութիւն. կամ թէ երբ և յորում ամի կամ ամսեան դարձութեամբ ի վերայ հօրեդ զանց արարեալ՝ հեղեւիլ ինչ Տի Տիտն ինչ արժեւեցան Գործոց. կամ թէ ո՞րք իցեն իմս անհոգի և անհոգի հաստատութեան՝ որոց վասն անպակաս լեալ իցեն ցայսօր ի վիճակէ աստի վրդովմունք և խափութեան, հարստահարութեան և այլ պէսպէս արարեալ ներգործութեան. և ուստի՞ յայտ իցէ արդեօք՝ թէ իմ աս- ոչ ինչ համարելով զինամատարութեան և զխաղաղ կենցաղաբարութեան հօրեդ՝ հետապնդեցայ և հեղուրեցի Տիտն յանդարձելին: — Յընթեո- նուէ անդ զամբաստանական բանս զաչստիկ՝ հարցա- նէի ցանձն իմ թէ մի՞ դուցէ կաշառս ի մեղաւորաց և չարդարոց առեալ իցեմ երբէք. կամ թէ զանարժան ոք չանարժանից ի ձեռնադրութիւն եկեղեցական աստի- ճանի մատուցեալ՝ կամ թէ պօրտաբոյժ որովայնապա- րար քննածութեամբ զաւուրս իմ անցուցեալ. կամ թէ զթիկուրս իմ ի բաղմոց տալով՝ զօրն ցերեկ ի դատար- կարանութիւն և ի խաղս, ի ծխաբարութիւն և ի հա-

(1) Հանգուցեալ Սրբեփոն Եղիսիպոսն Յոջորբն Երևանայ:

տաճգութիւնն պարապեալ. կամ թէ դանհատոյթ ա-  
նուանեալ պոսախ ամուսնութեանց հատուցեալ. կամ  
թէ դօրինաւոր պոսախ ամուսնութեանց՝ հակառակ  
եկեղեցական և քաղաքական օրինաց լուծեալ և քա-  
կեալ. կամ թէ ի մըրկեալ նեղորտութեան զըզմանէ  
զարս և զկանաչս, զեկեղեցականս և զաշխարհականս  
զահճօրէն հարուածեալ. կամ թէ մօլորութիւնս ինչ ի  
վարդապետութիւնս իմ խառնեալ. կամ թէ զբարեկար-  
գութիւնս ինչ եկեղեցւոյ խանդարեալ և խաթարեալ.  
կամ թէ զեկեղեցեաց դուժարս չօգուտ իմ և իմօցն շոր-  
թեալ և վատնեալ. կամ թէ զեկեղեցիս փակեալ և  
աւերեալ, զպարօցս խափանեալ, զգրեան և զպարու-  
թիւնն ի հուր և ի ջուր մատնեալ. կամ թէ քառութիւն  
և շողմորութիւնն ի ժողովուրդս տարածելով՝ ընդ մի-  
մեանս զնոսին արկեալ. կամ թէ չեկեղեցի չաճախե-  
լով, ի ժամարարութենէ խորշելով, և զժամատացու-  
թիւնս կարճելով, զհաւատացեալս առհասարակ ի հա-  
ւատոց և չեկեղեցւոյ ուժացուցեալ. կամ թէ դանուս և  
զպատիւ եկեղեցական և քաղաքական իշխանաւորաց  
ցանդ ընդ բերան անելով թշնամանեալ առաջի մեծի  
և փոքու, և ընդ աղբ և ընդ տիղմն դարչաբանութեանց  
զնոսին շաղախեալ. կամ թէ բնաւ ամենեկն դործ ինչ  
կամ կարգադրութիւն հակառակ արքայազիր և եկեղե-  
ցական կարգաց և կանոնաց արարեալ: Եւ միթէ չանցն  
ատախճան անփութութեան կամ ակնառութեան հա-  
սեալ իցէ, ասէի, Սիւնհոգոսն սրբոյ Եջմկաճնի՝ զի մե-  
ղապարտ զիս ճանաչելով ըստ միտում կամ ըստ բազմաց  
ինչ ի գլխոցդ չաչոցանէ, և ոչ չանդիմանէ զիս բնաւին  
և ոչ չերեսս ինձ հարկանէ զանորոշեացն հեթոտիւրութիւնս:

«Սակաչն վաղ իսկ փարատեցան իմս կասկածանք և  
տաղտապանք, չորժամ ստուղեալ ծանեայ՝ զի ոչ վասն  
ի վեր այսր չեղատակելոց ինչ ինչ չանցաւորութեանց  
ստղտանիմ ես և կշտամբիմ չարաչար ի գլխոցդ Հայաս-

տանեացս Եկեղեցւոյ, այլ զինչ. — վասն այնորիկ և եթ՝  
զի ուսումնարան ազգային հաստատեցի ի թէոդոսիա, և ու-  
նիմ զվերատեսչութիւնն նորին, և զհայ մանկտին հրա-  
հանդեմ ի նմա ի վարժս հմտութեան հայրենի լուսա-  
ւորչակրօն դաւանութեան և հայկաբանութեան և այ-  
լոց կարեւոր մակացութեանց. և ոչ այնու շատացեալ,  
պարս ևս առ ուսումնարանաւն բացեալ եմ, և զբեան  
պիտանի հրատարակեմ ի նմին, և քառքիս ևս բարոյական  
և բանասիրական գիտելեաց. այլ և զպրօցս ժողովրդա-  
կանս առ միով միով չեկեղեցեաց բացեալ, կամ թէ  
զարդէն եղեալսն բարեկարգեալ, հետամուտ եմ ու-  
սուցանելոյ մանկաւոյն զտարբար կարեւորագոյն գիտե-  
լեաց հաւատոյ և լեզուի և ազգային և ընդհանուր  
պատմութեան. և այն ևս չէ շատ, փոյթ չանձին կա-  
լեալ եմ և սակս օրիորդաց բանալ վարժոցս՝ ոչ միայն  
ի թէոդոսիա, այլ և չայլս ի քաղաքաց վիճակիս. և այն  
ևս չէ շատ, այլ միտ եղեալ և չափահասելն կրթու-  
թեան և լուսաւորութեան Լաւրան իմն հաստատել ճըզ-  
նիմ, չորս ճառ արկեալ խօսիմ արանց և կանանց զգրօցն  
սրբոց պատմութիւնս և զարդարօցն զվարս, այլովքն  
հանդերձ: Եւ միթէ սօքա այսօրքի իցեն անպատշա-  
ճելիքն և անվայելք առն առաջնորդի: — Եւ կարի իսկ  
քաջ: Թող որ ընդ այս երկմտեցէն՝ եբրե ընդ անհա-  
ւատալիս ինչ, լուեցէ զբուն իսկ զբանս Ձերդ Վեհա-  
փառութեան՝ որ արդէն առ նմին ի վերայ բերին ի  
նամակիդ. քանդի ասէք.

«Ձայս ասելով՝ չկամիք մեր կարճել ձեզ ճին խոստ-  
«ւանս այդ օրինակ ուսումնարան աշխատակրութեանց չերօց, այլ անձըն-  
«ջելի տալ տպաւորել յաւաճնորդական միտս ձեր զԱւետարանա-  
«կան բարբառ աստուածային բարձրագոյ ճայնարկութեանց, «զմջ  
«կարէք երկօց սերանց ծառայելն», կամ թէ, «Ձայս պարտ է  
«առնել և զայն չթողուլ». որպէս զի ի նիսակ ունելով ձեզ միշտ՝  
«ջանալ նախ քան զամենայն խնամատար զհօտէդ լինիլ միշտ, եր-  
«բե արդարեւ առաջին և եթ պարտաւորութիւն անհրաժեշտ հա-

«մարելով ձեզ դայն: Իսկ եթէ դառաջնորդութեան վիճակեալ «ձեզ զվիճակ, և յանձն կարեալ ձեզ զհող նորին, և զանազան իրս «ձգձգէք զսիրտ ձեր, զխտաջէք դայս՝ անբաւական գտանիլն «անշուշտ անձին ձերոյ առ իւրաքանչիւրսն. ուր և շիտթեալ «մտօք ի յոքունս բաժանեալ՝ լսող և առնող իմաստնոյն կացջէք «Հանձարիմաստ բանին խրատու. ըստ այնմ՝ «Որդեակ, մի՛ զբազմօք անկցին գործք քո»:

«Բնբէ բնբէ. սրբան և որպիսի այս օտարոտի կարծիք և վարդապետութիւն, որով ուսումնական լուսաւորութեան վաստակք անչնչաւ տարանջատ Համարին Վառճնորդական պաշտամանց, զի եթէ ոք երկոցունցն միանգամայն թեւախիտիցէ պարապել, երկուց տերանց ամբաստանի լինել պաշտօնատար, ուստի և աւետարանական խրատուցն ոտնհար՝ իբրև Աստուծոյ ծառայող և մամուռնայի՝ զէմ ընդզէմ Հակառակելով սոցին իրերաց:— Իսկ եթէ և այն ինձ պատշաճիցի խրատ յանդիմանութեան՝ թէ «Թէ դայս պնդոտ է առնել, և դայն չթողուլ», կամ էլ թէ ցուցանէր ինձ Վեհափառ Տէրդ կամ թէ Սինոդդ, թէ իմ երբ և չոր ինչ զէպս Խոջու իցէ դառաջնորդական տեսչութեան գործս յանհոգութեան և յանկարգութեան՝ զի ուսումնականացն և եթ միտ դնիցեն մշխատութեանց: Այլ ես զնորին Հակառակն պատրաստ եմ միշտ ցուցանել՝ թէ ըստ առաջնորդականին մանաւանդ տեսչութեան՝ քան զչորովս իսկ ի վիճակաց կողմանցս բարեկարգ և անսայթաք և անդանդաղ են ընթացք գործոց մերոցս վիճակի, և թէ չիք և չիք դողցես դանդատանք և կամ բողբոք և ոչ մի զինէն ըստ այսմ մասին առ Սիւնհոգոսն Հասեալք, որպէս և նոքին իսկ Անդամք Սիւնհոգոսին ետուն վիստրութիւն յատենի Սրբութեանդ՝ ինձ լու ի լու: Ապա ուրեմն չիբաւի է արդեօք ամենեւին իսկ անտեղի և անչարմար ինձ դատել՝ զոր Ձերումդ Վեհափառութեան Հաճոյ թուեցեալ է չարել ի բանս Կոնդակիդ՝ իբրև վերջին կշտամբանս, թէ

«Գուք ինքնին դէք ի սիրտ ձեր անկարող լինել ձեզ յայսմ «Հեռէ ընդ այդ օրինակ ազդի ազդի գործաւնութեանց ձերոց «և դառաջնորդականն վարել զպաշտօն կառավարութեան, Ընտրեցէք ձեզ զմի և եթ յերկուց անտի»:

«ՉՀամարեմ իսկ Հարկ կրինել աստէն զոր ինչ յանդիման ևս ասացի Սրբութեանդ, զի եթէ այդպէս անհրաժեշտ ինչ իցէ ընտրել զմին կամ զմիւրսն, ինձ լիցի մտադիւրագոյն Հրաժարել ի սուտանունս առաջնորդութեանէ աջնպետոյ՝ քան թէ չիմոցն ձեռնարկութեանց՝ զորս Հոգի և իսկութիւն ճանաչեմ ես առաջնորդականին պաշտաման, որպէս դիրք սուրբք վիպէն, և որպէս Հարցն առաջնոց քանք և վաստակք և գրութիւնք ամենայն ուրք Հաստատելով Հաստատեն, և քաղաքական օրէնք Պետութեանս զնոցն պահանջելով պահանջեն:

«Ատարան» և «Գասատար» անուանեալ ի տեղակին ձեր ոչ «սակաւ նշմարեալ լինին սխալանք անուղղութեանց, որ չեն վա«յել ձեզ, զորս և արդէն իսկ սկզբնաւորեալ եմք ուղղել զլի«պակս նոցին ըստ բաւելն և ըստ իմաստիցն: Առ այս զգուշա«նեալ պարտ է ձեզ յայսմՀեռէ»:

«Ի բանից աստի Վեհափառութեանդ դայս ինչ և եթ ի միտ առնուլ մարթացայ յայնժամ, եթէ սխալանքն այն և անուղղութիւնք նշմարեալք ի գրուածսն իմ՝ ինձ միանումս ցուցցին երբ և իցէ գրով կամ բանիւ, որպէս պահանջէ արդարութիւնն և օրինաւորն սովորութիւնս. և եթէ յանկարծ յամառեալ մնացի ես չեմ սխալանսն, յայնժամ յանդիմանութիւնս առ ի Սրբութեանդ լսէի գրով կամ բանիւ առաջի սակաւուց կամ բաղմաց. և եթէ այնմ ևս չլսէի, յայնժամ և եթ Հրապարակաւ և տպագրութեամբ կշտամբէի առ ի Ձէնջ իբրև անխող Գլխոյ Հայաստանեաց Եկեղեցւոց, արժանի Համարելոյ իբրև զհեթանոսն և զմաքսաւոր: Եւ սակայն խաբեցայ և չայս կարծիս իմ, և չարաչար սխալեցայ, քանզի այն ինչ Հասեալ է Ս. Եջմիածին՝ լուաց և տեսի

զի Աւհափառ Տէրութիւնդ զկարծեցեալն Հերքումն  
կմոյ Սխալանաց տպագրէ և տպարանի վանուցն: Չայս-  
մանէ թողեալ չառաջիկայսն խօսել, տեսցուք արդ և  
զվերջին ազգարարութիւնս կոնդակի Սրբութեանդ, և  
թէ չինչ արդեօք ակնարկեցեն նոքին՝ յորժամ ասէքն:

«Չգուշանալ նաև առ զառաջս կաշնուլ ամենեց զնոսսովի  
«հերանայ չերոյ իս: Գործաւորութեանց . . . Չիք որ ձեզ թշնամի և  
«չցանկայ որ ձերոյ և ոչ մի վշտակութեանց, եթէ չըպցէք դուք  
«ինքնաբերաբար ի նոր վնասաւորութիւն՝ անշարժաւ խորհրդով  
«չերոյ: Յապացուցութիւն բանիս եհաս ի ձեռս մեր յայդոյնի կող-  
«մանց ի 16 Յունիսի տոյն ամի պատճէն յայտարարութեան ձերոյ  
«յանուն Սինդի գրեալ այն ի 4 նոքին ամսոյ համարաւ 161  
«ի թէ՛դոսիս քաղաքի. ընդ որ եթէ խոհական իմն հանձարով  
«անդամ մի դարցուցանէիք զուշ խնայականութեան ձերոյ, զու-  
«շանալ զուշանայիք անշուշտ ընդ այն, քնասակար առ յապայն  
«չայն ձեզ և զայլ բարումն այնպիսին տալ պատրաստելով:»

«Թէ չինչ ունեցին ակնարկութիւն բանքս խորհրդ-  
դաւորք՝ չայնժամ ևեթ եղէ խելամուտ, յորժամ վերս-  
տին ընթերցայ զգրեալսն առ չինէն արդարև ի 4 յու-  
նիսի 1863 ամի առ Սիւնհոգոսն սրբոյ Էջմիածնի, յու-  
րում ասէի:

«Յայտ խի է Սրբազումար Սիւնհոգոսիդ, զի երկասիրեալն յի-  
«նէն երբեմն առաջարկութեամբ Սրբազան Պատրիարքին Կոստան-  
«դնուպոլսոյ Գրքոյի մակագրեալ «Վարդապետարան ուղղափառ  
«հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ», և նորին հրամանաւն տը-  
«պագրեալ ի Փարիզ յամին 1858, ամբաստանեցաւ ի լուսերամիտ  
«խմաստակաց ոմանց որ ի Մոսքուա և ի Փեթերպուրի՝ իբրև թէ  
«բովանդակեցէ վարդապետութիւնս հակառակս ողջամիտ դաւա-  
«նութեան մերումն առաքելական եկեղեցւոյ. և ես . . . միան-  
«զամայն փութացայ առ Վեհափառ Գլուխն Հայաստանեայցս  
«եկեղեցւոյ գրել զեր խոնարհական ի դեկտեմբերի 2, յամի 1859,  
«յորում հայցէի զի և նորին Սրբութիւնն շնորհեցէ զիւրն գրա-  
«ւորական հաճութիւն հաւանութեան . . . Եւ սակայն ահա չորք  
«ամբ ի վերայ անձին, և վարդապետարանն այն չև ևս երևեցաւ,  
«և ոչ իսկ յայտնի եղև թէ Սիւնհոգոսդ և կամ Վեհափառ Կա-  
«թողիկոսն ինքնին զորս ինչ ի բանեց զբրտկին այնորիկ համա-  
«բեցաւ հակառակս վարդապետութեան մերոյ եկեղեցւոյս. ուստի

«և տեղի ետ մեզ ի կարծիս լինելոյ՝ թէ կամ արդարացեալ է  
«հսպառ առաջի վեհադոյն ատենիդ, և կամ դատապարտեալ ի  
«չգմանէ յայրումն և ի կորուստ . . . : Մինչդեռ ես և որ ընդ ինն  
«են պաշտօնեայք և ժողովուրդք՝ սպասեալ մնայք վճռոյ Սիւն-  
«հոգոսիդ և կամ Վեհափառ Կատողիկոսին մերոյ զվարդապետա-  
«բանէն զայնմանէ, և ահա ի 10 ամսոյս ընկալաւ Առաջնորդա-  
«կան Ատեանս մեր կոնդակի գրեալ ի Տիֆլիս ի նորին Սրբութեանէ  
«ի 20 Մայիսի տարւոյս ընդ համարաւս 197, յորում ի մէջ այլոց  
«բանեց ասէ. «Ընթերցեալ մեր ուշի ուշով (չԳաստոտեօրն Մեկ-  
«նութեան խորհրդոյ և արարողութեանց պատարագին) գտաք ի  
«նմա Բաղաճ Բնոս հայտաւորութեան ուղղափառութեանն եկեղեցւոյ Տերոյ.  
«ուստի առաջադրեմք վիճակային Կոնստանտնուպոլսոյ, զի եթէ տա-  
«բածեալ իցէ հեղինակ նորին զայնտիկ դատաւարս յայլ և այլ  
«քաղաքս ի դատաստութիւն մանկուոյն ազգիս, անյայտալ ի մի  
«վայր հաւաքել, և ոչ տալ թոյլ առնել ի վերայ նորա դատախօ-  
«տութիւն ի ժողովրդական և յայլ ուսուցմանս, ճիշտեալ չնոստ  
«և ի լոյս հանեալ դաճեալսն անհարապարտութեան գրաւորոցն ի նճիւն . . .  
«Այլ և պատուելեմք դմա անյայտալ ծանուցանել մեզ՝ ս է զրա-  
«քըննելէն այն եկեղեցական մատենից, որոյ հրամանաւ տպագրեալ  
«գտանի այն դատաստեօր:» — Առաջնորդական Ատեանս մեր չկարէք  
«փութալ ի կատարումն այսր հրամանի Վեհափառ Կատողիկո-  
«սին՝ առանց ակնեղև փտանդի յաւելլոյ ևս քան զևս զգայ-  
«թեանքութիւն ժողովրդոց և քահանայեց վիճակիս ի պատճառս  
«զբուսածոյն այնորիկ փոքրիկն՝ ընդ որոյ ուղղութիւնն և ողջա-  
«միան վարդապետութիւն փտաւ իսկ է ամենայն իբրք: Այլ և ոչ  
«իսկ ես՝ իբրև Ատեանապետ նորին՝ կարէի թոյլ տալ նմին, զի  
«առաջարկեցէ յետս հաւաքել ըստ առաջնոյն զորինսիս Գաստ-  
«տեօրակին այնորիկ՝ մինչչև տեսեալ թէ որք իցեն բանքն հա-  
«կառակ անուանեալք վարդապետութեան մերոյս առաքելական  
«եկեղեցւոյ, և կամ անհարապարտութեանն նշմարեալք ի նմին:  
«Քանզի և ոչ անյայտ ինչ է յիմաստութեան Սրբազումար Սիւն-  
«հոգոսիդ, զի որ կամեցի որ ոգւով հակառակութեան մտրու-  
«թիւնս և վրեպական վարդապետութիւնս յուրել և որոնել յու-  
«բում և իցէ մատենի՝ կարող է գտանել, և թէ ի տէրունական  
«աղօթիցն անդամ ասացուածս աւելի քան գտանեալ մտրու-  
«թիւնս խնայան ոմանք ի հակառակորդացն ճշմարտութեան, Ա-  
«պաքէն . . . զէթ ի պատիւ սրբոյ Աթուոյն արժան է լուել մեզ  
«առ ծածո, և չլինել նմանող Կարապետի վարդապետի Շահնապար-  
«եանն, անուանեալ միաբանի Աթուոյդ, որ ի Փարիզ լրագրին հրա-  
«տարակեալ զիւրն կարծիս ընդ զբութիւնն ինչ Վեհափառ Կա-

«Թուղիկոսին աղղիս յաղազս Թղլայն Դարանց՝ զՀայս Տաճկաս-  
 ւանի, ըստ մասին և զՌուսաստանեայքս, սոսկալի գայթակղու-  
 շեթեմբու և Եթէ նա՝ և նմանիքն համարձակին մեկ ի խնդիրս  
 «յայսպիսիս, առանց իսկ ունելոյ առ այն պարտականութիւն  
 «կամ ստիպումն ուստեք, կամ Թէ հարկ ինչ ջատաղովելոյ զանձ-  
 «նական պատիւ և զկարծիս, որչափ ևս առաւել մեզ օրէն էք  
 «զիւրթալ արգարացուցանել զանձինս և զվարդապետութիւնս մեր  
 «առաջն հաւատացելոց այսր վիճակի և աղղիս և ամենայն աշխարհի՝  
 «յորժամ ի Գլխոյ եկեղեցւոյս մերոյ զուր տարապարտուց դատախի-  
 «ւորելիմք և անպատուելիմք մինչև իսպառ:՝ Արդ աղաչեմ զսրբա-  
 «զումար Սիւնհոդոսոյ, զի բարեհաճեցի նախ ի քնին առնուլ  
 «ուշի ուշով զԴասատեարն խորհրդոյ և արարողութեանց սրբոյ  
 «պատարազին . . . և ապա զհետեանս քննադատութեան իւրոյ  
 «հանդերձ արդարագատ կարծեօքն առաջի առնել Վեհափառ  
 «Հայրապետին ազգիս, ընդ նմին և մեզ տայ տեղեկութիւն զլրձ-  
 «ուոյն իւրմէ զայսմ Դասատեարակէ, որպէս և զվարդապետարանէն  
 «մերմէ, որպէս զի զիտացուք գէթ յայսմ հետէ Թէ յորում իցէ  
 «մոլորութիւն մեր՝ Թէ ունիցիմք, և ըստ այնմ արասցուք զար-  
 «ժանն առ ի չտալոյ պատճառս նորանոր գայթակղութեանց՝ եթէ  
 «բանիւ և եթէ զրով և արգեամբք . . . Իսկ եթէ ի հարկէ ի-  
 «բացն բռնադատեալ՝ ուր ուրեմն ելանիցիմք յասպարէլ վիճմանց  
 «և հակաճառութեանց, ոչինչ երկմտիմք ընդ իրաւունան զոր տա-  
 «ւրոց է մեզ նախ Սրբազումար Սիւնհոդոսոյ՝ իւրովն արդարագատ  
 «իմաստութեամբ, և ապա ամենայն համօրէն Պատրիարքուհի և  
 «եպիսկոպոսք և վարդապետք և քահանայք աղղիս որ ի սփիւռս  
 «իցեն ազգաց և ժողովրդոց. Թող և զանկաշառ դատաստան որոց  
 «զկնի մեր զաւրոց են աննախանձ եկեղեցականաց և աշխարհականաց:»  
 «Զայստիկ մեք առ Սիւնհոդոսն սրբոց Եջմիածնի:  
 Թէ որք իցեն Բանն Բողոսայ հախաւիս ուղղափառ աստեղանն և  
 «Եղեցաւոյ Տերոյ՝ գտեալք ի Ձերմէ Վեհափառութեանդ ի  
 «Դասատեարակին չաչնմիկ՝ տեսաք չետոյ ի տետրակին  
 «տպագրելոց ի Ս. Եջմիածին (նախ հրամանաւ՝ և ապա  
 «առանց հրամանի Սիւողին). (1) առ որ և պատասխա-  
 «նեսցուք մի առ մի չիւրումն տեղուոյ: Առ ժամս դարձ-  
 «ցուք ի պատասխանի վերջնոցն բանից կոնդակի Սրբու-  
 «թեանդ, որով ասէքն».

(1) Տես ի Պատմութեանս, Գլ. ԺԹ.

«Գիտեմք, շատ են ձեզ բարեկամք յայստիկ կողմանս. յորոց  
 «մին է Պ. Պրոկուրորն Սինոդիս մերոյ. յոր և յեցեալ զլոյս ձեր,  
 «նորպէս նշմարեալ տեսանին յառանձնակի յանուն նոցա ի դրու-  
 «թիւնն ձեր, բաւական էք նոցուն բարեկամական պաշտպանու-  
 «թեանց. բայց դուք մի՛ բնաւ զմարդարէական դատիցն մուս-  
 «նայք զբան աստուածային «Մի՛ յուսայք յեշխանս և մի յորդիս  
 «մարդկան», զի ըստ Տէրունեան բանին «Թշնամիք առն ընտա-  
 «նիք իւր են»:

«Համար 326. յամի Փրկչին 1853 յ7 Յուլիսի  
 ի Ս. Եջմիածին».

«Անչալտ է ինձ այսր աղգարարութեան գորութիւնս,  
 և չգիտեմ Թէ զի՞նչ այսու կամիցի Վեհափառութիւնդ  
 «ակնարկել. քանզի իմ վաղու ևս խրատեալ է բազմա-  
 «պատիկ փորձով՝ չլուսալ յեշխանս, և բնաւ իսկ և ոչ ի մի  
 «ոք յորդուց մարդկանէ, գիտելով ըն որ քոյ քրիստոնէիս ինչոս:  
 «Իսկ Թէ չառանձնն գրութիւնս իմ Բարեկամս կոչիցեմ զսա-  
 «կաւս ոմանս որ բարեմտութիւնս առ իս ցուցանիցեն,  
 «էք աղաղաւ արդեօք ի մեզս և ի սագիւտ ինձ գրեցի  
 «այս, Վեհափառ Տէր: Եւ միԹէ կամէք Ձերդ Սրբու-  
 «թիւն՝ զի և «Ենայն» ու Թշնամութեամբ և աստելութեամբ  
 «գնասցէ ընդ իս. և զի՞նչ անտի օգուտ աղղի կամ եկե-  
 «ղեցուոյ, և կամ ում ումեք և իցէ:

«Այսպիսի էք աւատիկ վերջինն կոնդակ Վեհափառ  
 «Հայրապետիդ առ իս. այս իմաստն նորին և սոչն մե-  
 «ղադրութիւնք և սագտանք և կշտամբանք և խրատա-  
 «բանութիւնք: — Եւ քանզի անհնարին և անդէպ իսկ  
 «վարկանէի կշուել երկարածիդ պատասխանիս միտց միտց  
 «չամբաստանութեանցն որ գիցեալ կուտեալ են ի կոն-  
 «դակի անդ, կարծեցի առ ժամն՝ Թէ ոչ աչլաղք կարէի  
 «հատուցանել իմովսանն զայն պատասխանիս, եթէ ոչ  
 «անձամբ չանդիման լինելով Բարձրագահ Ատենիդ: Յոր  
 «և աճապարեալ, անդէն ետու խոնարհական պատաս-  
 «խանի չ30 Օգոստ. 1863 ամի, Թէ

«Ռեկարեալ զպաշտելի կոնդակ Ձերդ Վեհափառութեան՝  
 «գտուեալն առ իմն նուաստութիւն յ7 յուլիսի ընդ համարաւս

«326. և ուշի ուշով ընթերցեալ զայն բազում անգամ՝ յայն հան-  
 «գորցի ի վերջէ զգործանս իմ և զպէսպէս խորհրդածութիւնս,  
 «Թէ պարտ և արժան է ինձ փութալ զիմել առ ոտս Սրբու-  
 «թեանդ, և բերանացի տալ պատասխանի ամբաստանութեանցի  
 «եղևրոց մինչև ցայժմ զգնացից և զմտաց և զգործոց իմոց առ  
 «հասարակ: Որով ոչինչ կրկնայիմ զի և Ձերդ Վեհափառութիւն  
 «փոխեսցէ ինչ ինչ ի կարծեսացն զորս ունի զինէն. և ես զէ՛՛՛  
 «այնու մխիթարեցայց՝ զի առնելով արարի յինէն կողմանէ զոր  
 «ինչ անին էր հարադատ և հաւատարիմ պաշտօնէի Մայր Աթո-  
 «ւոյ Սրբոյ Էջմիածնի, և հնազանդ որդւոյ Արժանընտիր Աթո-  
 «ւակալիդ երջանիկ Հովուպետաց Հայաստանեայց Նկեղեցւոյ:

Ի Սիւնհոգոսէն ևս ընկալեալ էի նոյնպիսի ինչ Հրա-  
 ման գնալոյ ի Ս. Էջմիածին՝ գրեալ չ17 յուլիսի այնը  
 ամի ընդ Համարաւս 997, օրինակ զայս.

«Ի Սինոդիս լուան զերես յայտարարութիւնս Ձեր ի 28 Մա-  
 «լիսի, ի 4 և ի 25 Յունիսի տարւոյս Համարօք 145, 161 և  
 «181, յորոց . . . Երբորդ յաղաղս «Վարդապետարանն ուղղափառ  
 «Հաւատոյ Հայաստանեայց Նկեղեցւոյ» և «Գաստետար խորհրդոյ  
 «և արարողութեանց սրբոյ պատարագին» մատենիցայ: Ի զեկու-  
 «ցանէն զվերոգրեալ յայտարարութեանց Ձերոց վեհափառ Կա-  
 «թուղիկոսի ամենայն Հայոց Տեսուն Մատթէոսի, Նորին Սրբու-  
 «թիւնն բարեհաճեցաւ աղբ առնել յԱտենի Սինոդիս՝ Թէ հար-  
 «կաւոր Համարելով զնեղիպուցութիւն Ձեր աստ յԷջմիածին ըստ ինչ  
 «ինչ կարեօր զործոց և հաշուոց եկեղեցական դուժմարաց, Նորին  
 «Վեհափառութիւնն առանձին Կոնդակօք պահանջեալ է զՁեզ  
 «այսր. և Թէ և քանկոց գրով խոստացեալ էք գալ ներկայանալ  
 «Նորին Վեհափառութեան, սակայն չէք կատարեալ ցարդ զխոս-  
 «տումն Ձեր. ուստի և որպէս ինդիլին մատենիցայ վարդապետա-  
 «բանի և Մեկնութեան խորհրդոյ և արարողութեանց պատարագի,  
 «նոյնպէս և այլոց կարեւոր զործոց ունի եղերել յայնժամ, իբր  
 «Գուք անձամբ գիմնաջիք այսր յԷջմիածին և ի ներկայութեան  
 «Նորին Վեհափառութեան պարզեմջիք զամենայն. և եթէ յայժմ  
 «ևս Գուք յամառեալ ի կամախորութեան՝ անկատար թողուցուք  
 «զհրամանս Նորին Վեհափառութեան և անհնազանդեմջիք կա-  
 «ւմացն նորա՝ իբրև Հայրապետի Ձերոյ, յամելով ըստ զանազան  
 «պատճառաբանութեանց զգալուստ Ձեր այսր, յայնժամ և Նորին  
 «Վեհափառութիւնն չունի ճանաչել զՁեզ Առաջնորդ ըստ օրինի  
 «և կարգաց Տէրութեանն, և վարեսցի ընդ ձեզ իբրև ընդ ան-  
 «հնազանդի հրամանաց Բարձրագոյն Եշխանութեան իւրում» և այլն:

Առ այս հրովարտակ ևս փութացայ տալ պատաս-  
 խանի ի 29 օգոստոսի ընդ Համարաւս 230 ըստ այսմ  
 պատճէնի.

«Մեծարոյ հրամանս Սիւնհոգոսիդ ուղղեալ առ իս յ18 Յու-  
 «լիսի տարւոյս ընդ Համարաւս 997, և հաս ի ձեռս իմ ի 20 Օ-  
 «գոստոսի, և ծանոյց ինձ զանօրէնութիւն կամաց Վեհափառ  
 «Ատենապետի զորին իբրև ի պատասխանի յայտարարութեանցն  
 «իմոց որ ի 28 Մայիսի և ի 4 և ի 25 Յունիսի այսր ամի: Առ  
 «այս պարտ անձին վարիանիմ յայտ առնել խոնարհաբար Մեծի  
 «Սիւնհոգոսիդ, զի արդարև իսկ կոչեաց զիս Վեհափառ Տէրն  
 «մխնեղամ և երկնցս ի Ս. Էջմիածին, և ես խոստացայ առաջիկայ  
 «լինել ատենի Նորին Վեհափառութեանն ընդ ներել զբարանաց  
 «իմոց և աշխատութեանց: Իսկ զի չմարթացայ մինչև ցայժմ կա-  
 «տարումն տալ խոստմանս իմում, այն ոչ եթէ ի յաճախութեան և  
 «ի համարութեան և կամ յանհնազանդութեան իմոյ Հայրապետին էր. որ  
 «քա՛ւ և մի՛ լիցի երբէք. այլ քանզի քաջ տեղեկացեալ զիտէի՝  
 «զի առ նուազն կրկանեայ ժամանակի պէտք են ինձ առ ի գնա-  
 «լոյ և զալոյ ի Ս. Էջմիածին:

«Մեծապէս զարմացայ և ընդ այն՝ զի և Սրբազումար Ատենադ,  
 «տրում առաւել քան այլում ումեք քաջածանօթ պարտ էին լի-  
 «ւել ամենայն զնացք իմ և աշխատութիւնք ի հնգամայ ժամա-  
 «նակէ հետէ, հաւանեալ Թուի բոլորովին ընդ քանս Վեհափառ  
 «Ատենապետի իւրոյ, և ծանուցանէ ինձ զորոշումն Նորին Վե-  
 «հափառութեան, և զպառնալիսն ևս, իբր զի եթէ յամեցից  
 «այլ ևս ըստ զանազան պատճառաբանութեանց զգալուստ իմ  
 «այլք, յայնժամ և Նորին Վեհափառութիւնն չունի ճանաչել  
 «զիս Առաջնորդ՝ ըստ օրինի և կարգաց Տէրութեանն, և վարեոյի  
 «ընդ ի՞նչն ընդ անհնազանդի Բարձրագոյն Եշխանութեան իւրում: Առ  
 «որ արժան և իրաւ էր ինձ արարէն յառաջ քան զամենայն հայ-  
 «ցել խոնարհաբար ի Սրբազումար Սիւնհոգոսիդ՝ տալ զուժումն  
 «այսր հարցմանս իմոյ՝ եթէ գտանեցէ՞ արդեօք և Սիւնհոգոսդ ի  
 «զնացս իմ և ի դործս և ի դրուածս՝ պատճառ բաւական ըստ  
 «օրինոց և հարգոց պէտքութեան՝ առ ի ճանաչելոյ զիս առաջնորդ  
 «միւր ի վերահաց Հայաստանեայց Նկեղեցւոյ ի Ռուսաստան. և  
 «եթէ գտանեցէ՞ ո՞ր այն իցի պատճառն: Քանզի եթէ էր ինձ  
 «հաւատեալ դուշակել՝ Թէ այնպէս համարի և վճռէ Ատենադ  
 «այդ Գերագոյն, որում և եթ անի է դատել և քննել զդործս Ա-  
 «ռաջնորդաց Նկեղեցւոյ՝ ըստ կաւախորութեան և տեսչութեան  
 «զիմնակաց, ոչինչ ընաւ զանազան այժմէն իսկ հրաժարել յԱ-

«աւջնորդական ծանրատարուի իշխանութենէ աստի՛ յոր կարգ-  
«եալս եմ արդէն առանց իմոց ինչ խնդրանաց և հետամուտութեանս  
«Հանդերձ այսու ամենայնիւ, և ցոյց իմումս անյղլի հաւատար-  
«մութեան առ Աթոռն սուրբ և առ Աթուակալ սրբոյ Հօրն մե-  
«ջոյ Գրիգորի Լուսաւորչին, փութամ աւասիկ ընդ աւարտել զոր-  
«ճոց ինչ ամենակարեւորաց որ արդ և ձեռլինս են՝ անկանել յուզի  
«և զալ այդը, առաջիկայ լինել Սրբազումար Աստեղիդ»:

«Եւ ապա յ18 սեպտեմբերի աչնը ամի ուղեւորեալ  
աստի Հասի և Ս. Էջմիածին յ30 աչնը ամսոց:

«Ձաւուրս 20 կացեալ անդէն, և բազում անգամ  
արժանացեալ շնորհի յանդիման լինելոյ Վեհափառ  
Տեառնդ. և զբազում ինչ իրաց ճառ արկեալ խօսելոյ,  
նչ ապաքէն զարմանալի իմն էր՝ զի դուն ուրեք լուսյ  
բանս ըստ բանիցն որ և վերողբեալ Կոնդակին և կամ և  
նախընթացան յաճախեալք էին: Ընդ որ չիրաւի էր ինձ  
արդեօք ուրախանալ և մխիթարել յանձն իմ՝ Համա-  
րելով եթէ դէթ բազում ինչ և գրելոց անտի արդարեւ  
խի ոչ եթէ Վեհափառ Տէրութեանդ խիսական և սեպ-  
Հահան աղոթունք էին Հայրախնամ մտաց, այլ որոց  
շուրջ զԱթոռովդ թարթալին կարծեցեալ Հաւատար-  
մաց, և մարդահաճոց պաշտօնէից և կամ տգէտ գրա-  
գրաց: Եւ չիրաւի խի. զի որ սողաանէիքն զիս իբրև  
զանլսող կոչոց և Հրամանաց Վեհիդ, և ցանդ ամպող և  
ոչ երբէք անձրևող, տեսիք զի ընդ մարթանալս կա-  
տարել զխոստումն իմ՝ ոչ դանդաղեցայ և նոցն, և ա-  
ռանց նայելոյ և վերահաս չեղանակն ձմեռացին սառ-  
նամանեաց Կովիասու, փութացայ և չու. ապա ուրեմն  
չիք և բանս իմ և և դնացս խարէութիւն կամ ստու-  
թիւն, որ և մի լիցի երբէք: Եթէ ասացի, ահա և ա-  
րարի յորժամ և որպէս կարողացայ:

«Այսու ամենայնիւ Հանդերձ՝ երկիցս և երկցս ար-  
ժան Համարեցաւ Ձերդ Վեհափառութիւն առարկուածս  
ինչ առնել իմումս նուաստութեան և վերայ ինչ ինչ  
բանից գրուածոցն իմոց արդէն տպագրելոց, և այն

առաջի ոմանց յԱնդամոց Սիւնհոգոսիդ և Ատենադպրի  
դորին, և յանուանէ յաղաղս աչնը՝ զի որպէս թէ զՓր-  
կիչն մեր «երանդ ասացեալ իցեմ Կայէնի, և յաղաղս բոցն  
նշանակութեան: Որոց իբրև ետու Համառօտիւ զպա-  
տասխանիսն, թէ նախ զառաջնոցն խօսելով՝ որ ինչ  
ընդ միտ անգամ չեմ անցուցեալ այնպիսի բան Հայ-  
Հոյական, չկարէր երբէք և ընդ գրէչ իմ ելանել, զՓր-  
կիչն մեր սերունդ ասել Կայէնի: Ասել ասացեալ եմ  
ըստ բանից ոմանց և վարդապետաց եկեղեցւոյ թէ Գոցն  
Ադամ յասելն և Ծննդեան անդրանկանն իւրոց Կայէնի,  
«Ստացայ մարդ Աստուծով. «Կարծի» և Գոց եպեալ իցի յուսով՝  
թէ և սերնդոց նորա եկեսցէ Փրկիչն աշխարհի. բայց  
նւր ասացեալ կամ գրեալ իցեմ ընաւ՝ թէ ճշմարտե-  
ցաւ ակնկալութիւնն Ադամայ աչնպէս որպէս ինքն  
կարծեալ էր: Իսկ յաղաղս երկրորդին ասացի թէ իմ ոչ  
երբէք ժխտեալ է զխորհրդաւոր նշանակութիւնս բոցն,  
այլ միայն զայն ասացեալ եմ՝ թէ իսկզբան յոր պէտս  
կարդեալ և սահմանեալ իցի և Հարցն առաջնոց յամե-  
նայն եկեղեցիս քրիստոնէից, և ապա՝ մանաւանդ առ  
մեզ՝ մի և գեղեցիկ և և խորհրդաւոր զարդուց եղեալ է  
եկեղեցւոյ: Ընդ այստիկ բանս իմ Վեհափառ Տէրդ  
եցոյց յայտնապէս զիւրն Հաւանութիւնս. և յասել  
նուաստութեանս՝ թէ պատրաստ եմ և այլոց նմանօ-  
րինակ առարկուածոց տալ զլուծումն, զի յայս իսկ կո-  
չեցեալ Համարիմ զանձն իմ, Ձերդ Սրբութիւնս շատ  
Համարեցաւ յորդորական բանիւ տալ ինձ պատուէք՝ զի  
յայտնեալ եթէ կամիցիմ աստուածաբանական ինչ  
գրուած և լոցս ընծայել, մի դանդաղեցայ առաքել նախ  
և զննութիւնն Ձերումդ Վեհափառութեանս. և քաջա-  
լերս ևս առ այս կատարումն պարտուց իմոց յաւելիք,  
օրինակ և մէջ ամելով զՁերոց իսկ Սրբութեանդ չեղա-  
նակ գործոց, որով զաստուածաբանութեան Գրութեանս Ձեր ասուեալ է  
և Գրութեանս Յովնայ վարժապետի Կարիւնեան և Կարգուս Աստի բակա-

նայի և Տիխիս: Քանզի (ասէիք լու և լու Սինոդականացն) աստ չէջմիածին չի: ոչ հմար ասորուածաբանութեանցն քերականաց, և մի ոմն յԱրքեպիսկոպոսաց անտի Հաստատեաց զնոցն՝ ասելով. «Այո, զի ո՞ր է ճեղ ուսանել զասորուածաբանութեան և մենաստանիս» . . .

«Յաղագս խնդրոյ Հաշուոց եկեղեցական և վիճակային գումարաց վիճակիս Հրաման ետ Ձերդ Վեհափառութիւն Սիւնհոգոսին սրբոյ Էջմիածնի՝ Հարցմունս կարեորս առնել ինձ բանիւ և գրով, և զպատասխանինս պահանջել: Վատարեց Սիւնհոգոսն զպատուէր Սրբութեանդ, և գրաւոյ յայտարարութեամբ ծանոցց,— որպէս և տեսի խի աչօք իմովք զպատճէնն,— Ձերումդ Վեհափառութեան՝ մինչդեռ տակաւին և սուրբ Էջմիածին էի:

«Իբրև այսպէս լուծեալ Համարելով զկարեորագոցն խնդիրն՝ սպասեալ մնայի այլոց ևս առարկուածոց և Հարցմանց, և ահա՝ որպէս ականատես և ականջարուր եղի ինքնին այդք ելով, խնդիրն յուղեալ անդէն խի և մենաստանիդ յաղագս իմոյ ձեռնադրութեան չեպիսկոպոսութիւն՝ ոչ սակաւ յարոց շիտթ և աղմուկ վայրապար, մանաւանդ և գրգռութենէ եկամուտ Հակառակորդաց ոմանց՝ զորոց ոչ է Հարկ ասել աստանոր: Յայնժամ և ես պարտ անձին վարկաց փութալ և չու դարձի՝ Հրամանաւ և օրհնութեամբ Վեհիդ, և և վերջումն խի աւուր և ժամու մեկնելոց իմոց և սրբոյ Աթոռոյդ ոչ այլ ինչ լուաց և Սրբութենէդ՝ եթէ ոչ խըրատս բարեաց Հանրականս, յանդիմանութիւն և ոչ մի, և օրհնութիւն բազում. որոց վկայ երաշխաւոր ունիմ զԱնդամ Սիւնհոգոսիդ զԳերապատիւ Սարգիս վարդապետ Տէր Գասպարեան, որ անդ մօտ կայր:

«Ժամանեալ և Տիխիս, չետ սակաւ աւուրց տեսի անդ զարմացմամբ զտեարակն Հրատարակեալ և Ձերմէ Վեհափառութենէդ և Ս. Էջմիածին և նմին խի 1863

ամի՛ այսու մակագրաւ. «Սխալմունք Գաստատարակին Խորհրդոյ և արարողութեանց սրբոյ Պատարագին տըպագրելոյ և Թէոդոսիա և Տպարանի Խալիպեան Ուսումնարանի»: Եւ լրագիրն Մեղու Հայաստանի անուանեալ՝ փութացաւ ծանուցանել Հասարակաց Յոցեմբերի զՀըրատարակումն այնր երկասիրութեան Վեհափառ Վաթուղիտոսին աղգիս: Ոչ է Հարկ ասել Ձերումդ իմաստութեան թէ որպիսի զարմանք կալան զիս ընդ իրսն, և կամ իրքան վիշտ եղև ինձ ականատես լինել զայթակրական զուրցաց այնոցիկ որք ընթերցանն զայն տեարակ:

«Չարմանացս իմոց պատճառք Հարկաւ այն էին, զի մինչդեռ տակաւին և Ս. Էջմիածին էի, զերոյ կամ զերի կեթ և խնդրոցն յուղելոց և տեարակ անդ՝ եղին զրոցցք, որպէս ասացի. զայլոցն բնաւ և ոչինչ. խի իբրև մեկնեցայ անտի, զհետ իմ փողեաց աշխարհալուր տետրակաւ ամբաստանութիւն և մեղադրանք և յանդիմանութիւն իրական կամ կարծեցեալ սխալանաց դուղնաքեաց գրուածոցն իմոց: Ապա զմտաւ ածեալ՝ եթէ պարտքանհրաժեշտք են ինձ բառնալ զպատճառս գայթակղութեան այնքանեաց տկարաց կամ տկարամտաց՝ որք ընթեռնուցուն կամ լսիցեն զբանս տեարակին Հրատարակելոյ տպագրութեամբ, չառաջ քան զամենայն արժան Համարեցայ գրել առ Սիւնհոգոսն սրբոյ Էջմիածնի խնդիր այսպիսի.

« . . . Յայտ խի է Սինոդիդ՝ զի հասեալ և Յ հոկտեմբերի ատարուոյս և Ս. Էջմիածին, ներկայացայ Նորին Վեհափառութեան և 77 ամոյն, և կացի մնացի այդք զաւուրս քանս Յայն՝ միջոցի թէպէտ և բազում անդամ խնդրեցի և Նորին Սրբութենէ, ևս չե յանդիման Անդամոց և Ատենադպրի Սինոդիդ, ասել և ցուցանել ինձ զսխալմունսն զայնոսիկ, ոչ կարացի հասանել խնդրոյս, և Վեհափառ Տէրն զերոյ կեթ ասացուածոց իմոց պահանջեալ զբացատրութիւն, թուեցաւ հաւանել ընդ պատասխանին իմ, և այլ ինչ յայնպիսեաց ոչ ևս եկարց բնաւ երբէք:

«ոչ առանձինն և ոչ հրատարակաւ, ոչ բանիւ և ոչ գրով: Իսկ է  
 «գալ հասանել խնամ այսր է Տիկիս, տեսի՛ զի Վեհափառ Կա-  
 «թուղիկոսին հաճոյ թուեցեալ է հրատարակել տպագրութեամբ  
 «է Ս. Էջմիածին տետրակ մի մակադրեալ այսպէս. «Սխալմունք  
 «Գասատարին Մեկնութեան Խորհրդոյ և արարողութեանց սրբոյ  
 «Պատարազին տպելոյ է Թէոդոսիա է Տպարանի Խալիպեան Ու-  
 «սումնարանին»: և շարադրեալ, որպէս յայտ է ի յառաջբանէն,  
 «է Նորին Վեհափառութեանէ, զորմէ և անուանեալն «Մեղու- Հայաս-  
 «տանի» լրագիր Տիկիսեաց յ39 թուահամարին իւրում արար զԾա-  
 «նուցումն, և տպագիր օրինակք տետրակին արգէն ցրուեալ են  
 «ոչ միայն աստ, այլ և յիմում վիճակի, և լցեալ զբարեմիտ Ժո-  
 «ղովուրդս մեր ոչ սակաւ շնոթութեամբ: Արդ Հայցեմ խնար-  
 «հարար ի մեծարդոյ Սիւնհոգոսէդ՝ ծանուցանել ինձ նախ՝ թէ  
 «Հաւանեալ էցեն և Ատենակալքդ ընդ վճարողական բանս Վեհա-  
 «փառ Կաթուղիկոսին որ է տետրակի անդ, որպէս պահանջէ 929  
 «յօդուածն կարգադրութեան որ յարաբս տեսչութեան Հայաս-  
 «տանեայցս Նիկիեցոյ է Ռուսաստան (տպ. 1857 ամի), ուստի  
 «և երկրորդ՝ սմբտ էցէ մեզ ճանաչել զբանս տետրակին այնորիկ  
 «Երբև զհայրապետիս վճիռ անկերբելիս՝ թէ իբրև զլոկ կարծիս  
 «չաստուածարանի»:

«Ոչ է Հարկ ասել Ձերումդ Սրբութեան՝ զի ցարդ  
 ևս չեք իմ ընկալեալ է Սիւնհոգոսէ անտի պատաս-  
 խանի առ այն գրուածն իմ և ոչ բան մի, և զվասնէն  
 անդիտանամ: Սակայն դայթակղութիւնն ծագեալ և  
 տարածեալ հետզհետէ ի պատճառս Հրապարակման  
 այնր տետրակի չարեւելից մինչև չարեմուտս՝ ստիպէ  
 զիս առնել մի առ մի պատասխանի առ քննութիւնս  
 Վեհափառ Հայրապետիդ. զոր եթէ հաճեցի Սրբու-  
 թիւնդ հրաման տալ և տպագրութեամբ հրատարա-  
 կելոյ, որպէս հայցեմս և ակն ունիմ, թերևս բուժեցի  
 և փարատեցի ըստ մասին դայթակղութիւնն ճարա-  
 կեալ չԱզգիս:

«Ի վախճանի աչսր ամենայնի, և իբրև ի բովանդա-  
 կութիւն ասացելոցս մինչև ցայս վայր, պարտ անձին  
 համարեմ բացէ ի բաց հերքել վերստին դայն բան կոն-  
 դակի Սրբութեանդ, որով համարի Վեհափառ Տէրդ՝

որպէս թէ ըմբոստացեալ Հակառակիցիմ ես որպիտեաց  
 և իցէ հրամանաց Վեհիդ: Այլ և ոչ դայն ինչ չանձն  
 առնում բնաւ ամենեկին՝ թէ անպատասխանի թողեալ  
 իցէ իմ երբէք զկարևոր հարցմունս և զբանս կոնդա-  
 կաց Սրբութեանդ, որպէս ամբաստանեալ են ոմանք:  
 Եւ եթէ չերկնչէի ճանճրութեան և տաղտիանաց տալ  
 Սրբութեան Ձերում պատճառս, զամենայն իսկ զկոն-  
 դակս Սրբութեանդ և զիմ առ նոսին պատասխանիս ի  
 մէջ բերէի աստանօր:

«Սակայն առ ի յուշ առնելոյ Ձերումդ Սրբութեան  
 եթէ քանի մեծարանօք և որպիսի մեղմական զգուշու-  
 թեամբ նամակաղիր լեալ իցէ իմ ցանդ ընդ Վեհափառ  
 Գլխոյ Հայաստանեացոս Նիկիեցոյ, արժան համարիմ  
 ի մէջ բերել դայն՝ զոր է լուր ընտրութեան Սրբու-  
 թեանդ Ձերոյ չԱթոռ Կաթուղիկոսութեան Ազգիս՝  
 պարտ անձին վարկուցեալ էի գրել:

Աստուածապատիւ Վեհափառ Տէր, և այլն. (Տես ի  
 Պատմութեան աստ, էջ 70.)

«Առ այն ընկալաց ի Ձերմէ Վեհափառութեանդ  
 զկոնդակ օրհնութեան, որոյ մէն մի է բառիցն մի մի վկա-  
 յագիր է անժխտելի. (Տես ի Պատմութեան աստ, էջ 71.)

«Թէպէտ և քաջ ճանաչէի զառաւելադանցութեան  
 այնքանեաց զովեստից զիմոցս վաստակոց և զանուա-  
 նեալ բարեմասնութեանց, սակայն նշանաւոր յոյժ ե-  
 ընին ինձ բանք այնր նամակի Սրբութեանդ, որովք  
 վկայէք ասելով. «Գիտէք զմիջոցս ի փառաւորութիւն  
 «սիրելի ազգիս, որպէս և զպայցոցոցս նոցեն վայելեն  
 «զարգիս որք է վեճակիդ են բարեկրօն եկեղեցականք և  
 «հոգեւոյր ուսումնատենչ և ազնուատոհմ աշխարհա-  
 «կանք ըստ բարեհոգան լրոց», և ի կարդին:

«Յորոց ինքնաբերաբար յառաջ դայ Հարցումն տա-  
 րակուսանաց՝ թէ ուստի արդեօք առնելով կամ յորպիսի  
 լրոց և յորմց մանրաքնին հետազօտութեանց ստիպեալ,

և փոխեալ է արդ Վեհափառ Տէրդ զկարծիս իւր զինէն և զնպատակէ դործոց և աշխատութեանց իմոց, որպէս ի բանից վերջնոցն կոնդակաց երեւի. բացց եթէ . . .

«Իսկ թէ որքան Հեռի էր իմս միամտութիւն ի կառուածելոյ՝ թէ եկեացէ երբէք ժամանակ, յորում Վեհափառ Գլուխդ Յիկղեցւոցս մերոյ այդպէս զիւրաւոր դտեալ անհրճմն չարախօտութեանց՝ փոխեցէ բարբոս վին զկարծիս իւր զինէն, և զորձ գրութեանցն իւրոց առ իս, չպտ է և ի պատասխանուցն իմմէ՛ զոր փութացայ տալ չայնժամ շնորհակալեօք Հանդերձ առ վերոյշխեալն կոնդակ օրհնութեան:

Ի դէպ ժամանակի պատահեցաւ չայնժամ առաջարկն զոր Ձերդ Վեհափառութիւն կամեցաւ առնել վասն նուիրանաց Հաւաքելեաց ի նպատակ կառուցման Յիկղեցւոց սրբոյ Լուսաւորչին ի լեառն Սեպուհ. զորմէ գրելով առ իս Վեհափառ Տէրդ ի 6 փետր. 1859 ամի, այնպիսի դրուատական բանիւք մեծացուցանէր զվատակս իմ և զդիտաւորութիւն, զորս շատ Համարեմ ի նմին իսկ կոնդակին նօտրել և այնպէս բերել ի մէջ:

«Գերատարել և Ծնորհապերձ մեծի բարունեայդ ինդալ ի Տէր.

«Ձեռանդակին բորբոք Հայրենասէր ոգւոյ Սրբութեանդ ի շխել մեր Հանապաղ ուրախութիւն սրտի, բարէ քանի՛ հեշտա՝ «գուարձ ազդեցութիւնք բերկրաւիթն զգացմանց ո՛չ տպաւորին «ի սիրտ մեր. քանզի դքանքարն անապահան ընկալեալ Ձեր յանձնատական շնորհաց բաշխողէն ծաւալէ՛ անխփիչ յօրհնեալ Ազգայնոս «որ ընդ անորոքսեայ ինձմանչալու-լեւա՛ք անդու-փայտն Սիրելոյդ հովա- «նա-որին, և ի բարնալուն վաստայոց ազգասէր Սրբութեանդ յառաջապահին «այս վաղ ընդ փոյլ յառնուն օգոստոսալու-լեւան և Քեդիսա-որեային ի հառ- «նալուսոց ցրեան իմաստալու-լեւան ի Բանասար այգե-ով վայելչալու-լեւան Տանն «Թարգմայ, արդիանա-որել ի ժամոս ընդ ճիւղ երեսուն և վախտան:

«Ապա ցնծասցեն ի ինեդ Հոգեւոր, որ այսոցիկ բարեացս եղին «և լլցին ընկալուչք. ցնծասցեն համայն ժողովուրդս՝ մեծի վիճակաց. «զի յարարէ՛ նոցա վիճակի Բարեկենդանալու-լեւան ըստ հոգեւոյ, որպէս և էս «իս՛ Բերեթալս է՛ յոյժ՝ դեպմն ուշի ուշով իալեալ այսոցիկ Բարեբերկա- «լու-լեւանց. ու որ և ի յարադասարձ Բերեթան՝ Բանս փոխաբից շեղջուտարեն «զԱրբու-լեւեկդ օրհնեալ Ազգայնոս, և այլն. և այլն:

եթէ Հարկաւոր իցէ նոր իմն ապացոյց գործնական՝ թէ որքան Հեռի իցեմ լեալ ցանդ ի Հակառակելոյ կամաց և Հրամանաց Ձերումդ Վեհափառութեան, վը- կալեն ասա և բանք պատասխանուոյ իմոյ առ վերոյ- գրեալ առաջարկն Սրբութեանդ, օրինակ դայս.

«Վեհափառ Տէր, Աստուածարեալ Հայրապետ.

«Ձնորհաբերն Ձերոյ Սրբութեան զնամակ ընկալեալ ի ձե- «ւանէ Տեառն Վարդանայ Քահանային Տէր Յարութիւնեան՝ լցաք «հոգեւորաւձ՝ բերկրանօք, և անդէն փոյթ յանձին կալեալ վաղ- «վաղեցաք հատարել զհրամայեալն ի Վեհափառ Տէրութենէդ Հա- «ւաքումն կամաւոր նուիրանաց ի Քրիստոսասէր ժողովրդոց վիճա- «կիս՝ ի լրումն ծախուց շինութեան ցանկալի ճգնարանին առա- «ւքելաշաւիկ ճնողին մերոյ ի Քրիստոս Սրբոյն Գրեգորի Հայաստա- «նեայցս Լուսաւորչի:

«Իբրև զի բազմք է մեզ, Վեհափառ Հայրապետ, տեսնել «այժմէն, զի ի դուրս հանդիսի Հոյակապ դործոց Սրբութեանդ ի «սպայծառութիւն Աղբիս մերոյ և Յիկղեցւոյ՝ զբազմաչարչարնա- «հատակին այնորիկ մաղթէք և ընդունիք աներկբայ զհզօր բա- «րեխօտութիւն և զանվիանդն սաշտպանութիւն այդպիսեօք խրա- «խուսական բանիւք և զեղեցիկ դործովք: Ձայն ինդրութիւն «մեր մասնաւորեցաք ասա և առանձինն Հրամանադրով համօրէն «Քահանայից և Երէցիօրեանաց մերոյս վիճակի, և անշուշտ եմք «զի ոչ միայն ելելելս զմիմեամբք արասցին ամենեքեան ի հանդա- «նակիկ զնուէրս բարեպաշտութեան իւրեանց ըստ իւրաքանչիւր «եկարի և եռանդեան, այլ և օրհնաբանեալ դրուատեացին զՎե- «հափառ Հայրապետդ մեր և զՀայրդ հատարակաց, զի հաճեցայք «պատճառս իմն տալ և նոցա հաղորդս և բաժանորդս լինելոյ «աստուածահաճոյ Գործոյն:

«Ընկալարձք ուրեմն, Աստուածարեալ Հայրապետ զբոն- «ւանդն շնորհակալիս մեր և զմերոցս հաւատացեալ ժողովրդոց «յառաջադոյն և քան զ20,000 դահեկանայն տուրս. զոր և ոչ «անաղան քան թէ յառուրս սրբոյ Ձառիկն փութացուք հա- «ւուցանել ուղղակի առ Սրբադան Տէրութեանդ, և փոխարէն հա- «ւճեցարուք աւատացուցանել ի մեզ և ի վաստակս ձեռաց մերոց «զհայրապետական օրհնութեանդ շնորհ, և ս ի զիմաց նորին «ինքեան երանելոյն Գրեգորի:

«Յետ այսորիկ մեծաւ անձկանօք սպասեալ մնայաք Հանդիպել տեսութեան Վեհափառ Տեառնդ ի Թէոդո-

սիա. քանզի ահն ունեայք այնու պատեհաւ ոչ միայն զհայրապետական օրհնութիւնդ Ձեր և մեզ ընդունել, այլ և զգործս և զլիստտակս ձեռաց մերոց պարզել առաջի Սրբութեանդ, որպէս զի ահանատես ելով անձամբ ամենայնի՝ մի՛ զեւրանսաց լինիցիք որոց մտաբերիցենն երբէք չայլ կերպարան չեղաշրջել զբարին և զօրտակարն: Այլ աւանդ, զի վրեպեցաք և չուսոյ անտի, և ի բարեաց որ անշուշտ զհետ դաշին այնմ պատահման:

«Ի մայիսի 12 աւուր ընկալաց զհամառօտադիծն Վեհիդ ըստ օրինակին որ չառաջիկայդ»

«Գերապատիւ Սիրելի.

«Թէպէտ չէ որոշեալ տակաւին օր մեկնելոյ մերոյ ի մայրաքաղաքէս՝ բայց այսու գրութեամբս ծանուցանեմ զի ի 20 աւուր «նեղիայ ամոնոյս դտանիջիք և Փոթի. զի ոչ յաջողեցաւ մեզ ուղղակի ճանապարհորդել այդ և Քէֆէ. զոր դետացեալ՝ լեր ոյջ չյամայր ամս»

«Մատթէոս Կաթուղիկոս ամենայն Հայոց»

«Ըստ այսմ հրամանի Վեհիդ մեկնեալ ի Թէոդոսիոյ ի վերջին աւուրս մայիսի, և հասեալ ի Պատմ, մինչդեռ համարէի եթէ վաղ իսկ անցեալ դնացեալ իցէ Սրբութիւնդ և Տփլիսի կամ ի սուրբ Էջմիածին, և ահա եկն եհաս ի նոյն նաւահանգիստ և շողենաւն որ բարձեալ բերէր զՎեհափառ Հայրապետդ: Անմոռաց է ինձ վայրիկեանն այն, չորում ողջադուրեալ ընկալաւ դնուստութիւնս՝ Ձերդ Վեհափառութիւն՝ արդարեւ հայրադորով խանդաղատանօք, մինչև զարմանալ ամենեցուն որ անդն կային: Ապա չեա այնորիկ ուղեորեալ ընդ Վեհիդ ի Փոթի և ի Քութայիս՝ մինչև ի Տփլիս, ամենայն ուրեք և չամենայն դէպս վայելելով վայելեցի աննկաղ և շնորհս և ի սէր Ձերումդ Վեհափառութեան: Եւ Թէպէտ ի հասանելն մերում ի Տփլիս, ըստ խնդրոյ Վսեմափայլ զօրավարին Լօու-Մէլեքեանց և ըստ բա-

րեհաճ հրամանի Վեհափառ Տեառնդ օթեանս կալաց ևս ի տան զօրավարին, սակայն զօրհանապաղ դնացի և տեսութիւն և ջնդուներ և զհրամանս և զպատուէրս Վեհապետիդ, մինչև մեկնեալ և անտի չուեցաք ի միասին յերևան և ի Ս. Էջմիածին:

«Կացեալ անդանօր զաւուրս 15 և աւելի, և տեսեալ զի ի պատճառս տկարանալոյ Սրբութեանդ անադանել պարտի օծումն Ձեր և Կաթուղիկոսութիւն աղբիս, ըստ Ձերումդ իսկ հաճութեան և հրամանի պատրաստեցայ չու դարձի առնել ի տեղի իմ. զի և չաճախութիւն գործոց կարեւորաց վաղու ևս կոչէր զիս ի Թէոդոսիա: Եւ Վեհափառ Տէրդ հաճեցաւ շնորհել իմումս նուստութեան Խաչ և Կոնդակս երկուս՝ մի քան զմի պանծալիս, որոց այսօրիկ են պատճէնք հաւատարիմք»

Ա. «Մատթէոս ծառայ Քրիստոսի, և այլն. (Տես ի Պատմութեանս, էջ 75.)

Բ. «Մատթէոս ծառայ Քրիստոսի, և այլն. (Տես էջ 76.)

«Այսպիսեօք յաջողեալս՝ մանաւանդ թէ և գրաւորան կոնդակօք դարձ արարեալ ի վիճակն հաւատացեալ իմոցս խնամոց, զերկրորդն ի կոնդակաց աստի ետու ի վերձանութիւն յնկեղեցւոջ մերում ի Թէոդոսիա. և քանզի առ ամենայն բարեպաշտ ժողովրդականս վիճակիս ուղղեալ էր այն, արժան համարեցայ և տպադրութեանք հրատարակել զնոյն, որպէս զի և հեռաւորքն և տարաբնակ որդեք հարազատք Աթոռոց սուրբ Լուսաւորչին սիրտիսցին փօքք ի շատէ խրախուսական և չուսողիք բանիւքն: Քանզի և ոչ սակաւք ի նոցանէ իրաւամբ իմն դաշթակեալ էին ըստ իւրեանց պարզմտութեան և բարեսրտութեան ընդ այն՝ զի Առաջնորդն իւրեանց ոչ վերառեալ էր չաստիճան Նպիսկոպոսութեան, և զպատճառսն չկարելին ընաւ ի միս առնուլ, որպէս և ցարդ իսկ բաղումք են որ չլինին

այնմ խելամուտ, թէպէտ և մեղ և բազմաց յայտ չան-  
դիմանութեան ծանօթ է այժմ խնդիրն այն՝ Հանդերձ  
Հին և նոր պատճառօքն:

«Այսու ամենայնիւ Հանդերձ, այն ինչ Հասեալ իմ  
ի տեղի վաստակոց իմոց և աշխատութեանց, փութա-  
ցաց դրել և ծանուցանել զայնմանէ առ Ձերդ Վեհա-  
փառութիւն: Սակայն մինչև իսկ Հասեալ այնքո՛ւ նա-  
մակի իմոց առ Ձերդ Սրբութիւն՝ ընկալաց ի Վեհափա-  
ռութենէդ զկոնդակն դրեալ ի 28 օգոստոսի օրինակ  
զայս.

«Մատթէոս ծառայ Քրիստոսի, և այլն.

«Գերապատիւ Գաբրիէլ Վ. Այլադեան Հաւատարիմ սիրելի  
«որդւոյ մերոյ և Հարազատ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյս՝  
«խնդալ ի Տէր: Յայտ առնեմ Սրբութեան Ձերոմ, զի ըստ  
«տնօրէնութեան ամենօրհնեալ կամաց Բարձրելոյն ի 15 Օգոստոսի  
«յաւուր տօնախմբութեան Եղեղեցի Վաթուղիկէ Մայր Եկե-  
«ղեցւոյս՝ օր խորհրդաւոր Համարեալ ըստ ջրմուռանդութեան  
«սրտի և մտաց, ընկալար ի զլուխս մեր զՍրբալոյս շնորհ Հող-  
«ւոյն Աստուծոյ զՍուրբ Օծումն Քաջանայտարեութեան ընդ-  
«Հանրական Եկեղեցւոյ, և յանձն առար զճանրութիւն Տիրական  
«լծոյս՝ յանձնելով զմեղ շնորհաց և ամենաբարեան կարողութեանն  
«Աստուծոյ:

«Յայտ առնեմ և զայս, զի երեւելի վաճառանքն է Տերադնէից Էր-  
«ւանդոյ ի Նորն Նախնիքան չառախի՝ առաքեալ էին առ մեղ ըստ  
«ջրմուռանդութեան հողոյ իւրեանց՝ զնամակ յարգանաց և խո-  
«ւնարհ Հպատակութեան ի շնորհաւորել զկոչումն մեր յԱթու Քա-  
«Հանայապետութեան Տանս Հայոց: Առ որս ուղեորեցար զԿոնդակ  
«Աստուածային օրհնութեան և Քրիստոսաւանդ ողջունի մերոյ,  
«յորում և պարտաբեցա՛ս նոցա զՍուրբ Խաչի վանոն որ անդ՝ ստնել  
«Էրեւ Պարոյ ին հոգեւոր Էրեւանն. ուր հաւաքեալ մանկունք՝  
«վարժեսցին ի բարի վարս և յուսմունս կարեօրս, և ի զարդանալ  
«Հասակի նոցին՝ ընտրեսցին ի նոցանէ ի քաջանայութիւն: Զայդ  
«կարողորութիւն մեր հրամայեալ եմք ի կոնդակին Խորհրդացա-  
«լեւածք և նախափառութեամբ չեբով ստնել, և ոչ ստնոց ծոռոցանելոյ  
«չէր: Առտալ զայսմանէ և Գուր Հող տարջել, և անտարակոյս եմք  
«թէ փութով ի դուրձ դնէք զկատարումն Հրամանաց ստնոց Տէճի

«Ի Թուարութեան և յերկարագիծն, ի փորոք է սկսեալ ցմեծն Հասանիլ:  
«Մեամ բարբութեան ձերոյ ցանկացող և աղօթարար առ Տէր  
«Մատթէոս կաթուղիկս ամենայն Հայոց»:

«Ի 1859, յՕգոստոսի 28,  
«Ի Սուրբ Էջմիածին.—  
«Համար 104».

«Այս կոնդակ Վեհիդ, չորում ոչ սակաւ նշանաւորք  
էին արդէն բանքն որ զխնդրոց վաճառանքոց ոմանց Նախի-  
ջեանի,—չորս և դիտամբ իմն նօտրեցի,—առաջինն է  
աՀա՛ չորում ըստ իմումս ապաբաղդութեան սկիզբն  
նշմարել պղտորութեան մտաց Վեհափառ Տեառնդ ի  
բանից նամակի Նախիջեանցւոցն այնոցիկ, որոց ոչ սա-  
կաւ Հաճոցահան երեւեալ էր դարձն իմ զջրմիածնէ ա-  
ռանց ընդունելոց զձեռնադրութիւն եպիսկոպոսու-  
թեան, և որք ոչ վայրապար քաջալերեցան այնու յու-  
սալ՝ թէ եՀաս ինքեանց ժամանակ ողորելոց ընդ սո-  
խին իւրեանց Ադա Խալիպեանի և ընդ կուսակիցս նո-  
րա, բողբելով զնոցանէ յաղադս եկեղեցական դումա-  
րացն պահելոց առ նմին զամս բազումս, և այնու  
պատեՀաւ յաղթահարելոց զնա ուր ուրեմն. զոր առ  
բարեչիշատակ նախորդաւն Ձերով չէին ատակեալ առ-  
նել՝ ոչ ուղղակի և ոչ ի ձեռն իմքն նախորդի ջԱռաջ-  
նորդութեանս: Այսու ամենայնիւ յոյժ իմաստութեամբ  
և Հաչբորէն զթով և ըստ վայելչական կարգի էին բանք  
Վեհիդ առ իս յայնմ կոնդակի. առ որ և պարտ ան-  
ձին Համարեցայ սալ զառաջիկայդ պատասխանի.

«Աւետարան լուր օծութեան աստուածընտիր Գլխոյդ ի  
«Հայրապետութիւն Տանս Հայոց կրկնեալ ի լուխս մեր այնու  
«նամակաւ՝ կրկնակի և ս բերկրեցոյց զսիրտս մեր, և դարձեալ  
«բղխեցոյց ի բերանոց մերոց մաղթանս և օրհնութիւնս սրտա-  
«ւուչս առ Ամենախնամ Հայրն բոլորեց փան երկարութեան կե-  
«նաց և անվթար առողջութեան մեծի Աթուակալիդ սրբոցն և  
«երջանիկ Հօտապետաց Հայաստանեայցս Եկեղեցւոյ:

«Զճրարեայն ի նմին նամակի Կոնդակ օրհնութեան առ Վա-  
ճառականս ոմանս Նորոյն Նախնիքանի յղեցի անյապաղ ի քա-

«զար անգր առ անդամն Հոգևորական Կառավարութեան մերոյ, զի տեղեկացեալ անուանց դրողացն առ Ձերք Սրբութիւն զպարտուպատշաճ մեծարանացն իւրեանց զնամակ՝ աւանդեցցեն անկորուստ զպատասխանին ի ձեռս նոցա: Իսկ յաղաքս պաշտելի Հրամանին Վեհափառ Տէրութեանդ որ վասն Հաստատելոյ ի Սրբոյ Խաչի վանս անդ զպրոց ինչ Հոգևորական կրթութեան՝ շնորհեցայ նախ յորդորական բանիւք ընդ Մեծապատիւ ն. Ազգաւանք իշխանին մերում Ադա Յարութիւնի Խաչիկեան, որ ի Թէոզոսիա էր յաւուրն յայնոսիկ, և որ խոստացեալ իսկ է ի Հերուն Հէտէ գրով և բանիւ՝ կառուցանել ընդ հուպ և ի վանս անդ Քոյրոց նոյնպիսի յերոց սեպհական ընչից: (1)

«Զամենայն Հնարս Հնարեցայ յինէն կողմանէ, զի ոչ միայն շնա մի՛ կասեցել յիւրմէ զեղեցիկ գիտաւորութենէն, այլ և չայլքն ևս օգնական և զործակից նմա եղցին ի կատարումն Հրամանի Աստուածընտիր Հայրապետիդ, և յուրախութիւն և ի չպայծառութիւն ազգիս մերոյ առհասարակ:»

Յայտ իսկ է Սրբութեանդ՝ զի ոչ անհիմն էին զգուշութիւնքն որովք բանս ի մէջ արկեալ էր իմ զբաղձանաց վաճառականացն Նախիջևանի յաջանելոց Ձերումդ Վեհափառութեան: Ապաքէն ի Հետևորդ Թղթակցութեանց և ի շիտթից չուղեւոց մինչև ցայսօր ի կողմանէ ստիպուաւոր խռովարարաց քաղաքին աջնորդի՝ անչ յաջանի երևեցաւ այն ամենայն չառաջիկայն:

«Բայց որ ցառալին էր ինձ անդատին յայնմ ժամանակէ՝ այս իսկ է, զի դամ քան զդամ չաջողեաց բանսարկու արանց ոմանց ոչ անձանիթից առ չինէն՝ այն-

(1) Ինչպէս որ Պարսութեան ընթացին Տէր ևս յիշեցին, Պ. Խաչիկեանը գլխաւորապէս նորս համար էր ինչպէս իւր այն խոսքումնսը Հարարելէն՝ որ Վեհ. Կաթողիկոսին Գոթթիէլ վարդապետին դէմ սլոսած հայտաւանութենէն ի վառաշէր այնպիսի արարցի Տի տառը չէր լուրիւր. ուստի և լուս համարեցաւ գտնէ Թէոդորոսի Տէր Բարսեղ Սալիկեան Ոստանարանին շէնքը աւելի Տէճ անէլ, և վերան աւելի իրոյ դնէլ 50 հարարին որոշը 150 հարար խարժելով շէնքին, 40 հարարով ևս նախած Տը գնէլ Խրիմս Տէր, ու նորս էլամարը ոստանարանին սեղհայնէլ:

քան պղտորել զմիտս Ձերոյ Վեհափառութեանդ ի վերաց իմ, զի արժան Համարեցայք ուղղել առ իս Հետզհետէ կոնդակս մի քան զմի յանդիմանականս, չազազս ընտրութեան վարժապետաց կրօնական զիտելեաց, չազազս Աւետիս քահանայի էլմասեան, չազազս Մովսիս Աւագ քահանայի Ալամխանեանց, և որ այլն ևս:— Առ որս Թէպէտ և ամենայն զգուշաւոր և անկեղծիկ բանիւք արարի միշտ պատասխանի, սական չեղէ երբէք արժանի և ոչ ընդ մի ի նոցանէ ընդունել առ Ե Ձերմէ Սրբութենէդ զանդրադարձն Հաւանողական բանից: Որոյ վասն աւելորդ Համարիմ և ի մէջ բերել զնոսին աստանոր:

«Ընդ այն ժամանակս չարաչաչաղ անձինք ոմանք՝ արք կարճատեսք և կարճամիտք, ընդ ինքնահաճք և իմաստակք, որք աշխարհականք իսկ ելով՝ չաստուածաբանական գիտութիւնս չաւանդին Թեախիսել, քան զամենայն աստուածաբանս անդամ զանցանելով ճամարտակութեամբ, — Երբև տեսին կամ լուսն զհողմն ցրտաշունչ սաստկացեալ հետզհետէ ի միջմանէ բանասարկու արանց հախառակ իմոցս դործոց, ժամ պատահ Համարեցան չարձակել բանիւք սնտուովք ընդդէմ «Վարդապետարանին ուղղափառ Հաւատոյ Հայաստանեացս Սիեղեցուց», զոր իմ չօրինեալ էր ի խնդրոյ Սրբազան Պատրիարքին Կ. Պօլսոց, և Հրամանաւ Հոգևորական Ժողովոյ Պատրիարքարանին աջնորդի տուեալ ի տպագրութիւն ի Փարսի: Եւ զայս ոչ միայն ի Հայ բարբառ չարախօսեցին, այլ և ի ռուս լեզու, զի պղտորեցցեն և շիտթեացեն զմիտս պաշտօնից Տէրութեան ի վերաց ուղղափառութեան իմոցս վարդապետութեանց. որպէս և չաջողեցան իսկ փոքր ի շատէ առ սակաւ մի ժամանակ ի գիտաւորութեան իւրեանց: Եւ զի՞նչ արդեօք առնել էր ինձ յայնպիսում անսակնկալ չարձակման անսպաշից և չաչաղիտ ստիպաց՝ եթէ ոչ զիմել խոնարհա-

բար և որդեական վստահութեամբ առ Վեհափառ Գը-  
լուխը Հայաստանեայցս Յիկեղեցւոյ, և զՁերդ խնդրել  
դատաստան և զխճիւռ: Վասն որոյ աճապարեցի գրել  
առ Սրբութիւնդ նամակ խոնարհական, յորում չեա  
այլոց ինչ բանից ասէի.

«Արդ քանզի օրինակք առաջնոյ տպադրութեան այն փոքու  
«վարդապետարանի սպառեալ էին, և հարկ է կրկին տպադրել  
«զնոյն, պարտ անհրաժեշտ անձին համարեցայ՝ յղել ընդ զոյս  
«առ Վեհափառ Տէրդ իմ՝ և Հայր զօրինակ մի զգրուածոյն, և  
«Հայցել խոնարհաբար՝ զի և Ձերդ Սրբութիւն շնորհեցէ զիւրն  
«զգրուորական հաճութիւն հաւանութեան, որպէս զի որդիք հա-  
«բաղաօք Հայաստանեայցս Սուրբ Յիկեղեցւոյ ևս առաւել աներկ-  
«ւիտ վստահութեամբ վարեցին և հրահանդեսցին սովաւ, և թէ  
«և Ձերումդ հողեշունչ և աստուածիմաստ դատողութեան անբառ-  
«ւելու թուեցի վաստակն իմ: Իսկ և թէ Վեհափառ Տէրդ մեր  
«և Հայր գոցէ ինչ ի զրուածի անդ թերի կամ աւելորդ և կամ  
«եկասիածանաց իմք և երկմտութեան աւելթ, խնդրեմ մի՛ խնա-  
«ւել յուզողութիւն այնպիսեացն բանից՝ թէ զուցին, և այս-  
«երէն առ իս զօրինակդ դարձուցանել. և ես նուիրական ինձ  
«պարտս վարկանիմ՝ ըստ այնմ՝ տալ տպադրել զնոյն այնու խո-  
«նարհ հպատակութեամբ՝ զոր որդւոյ հաբաղատի և հաւատարմի  
«Հայաստանեայցս Յիկեղեցւոյ պարտ և պատշաճ է ունել առ Սու-  
«տուածընտիր Գլուխ նորին և Գերագահ Պատրիարք:

«Սակայն ես, աւանդ, անաղան ուրեմն ծանեաց յար-  
դեանց իրացն, և ի բանից երկից և չորից կոնդակաց՝ որք  
կուռ զմիմեանց զինի հասանելին առ իս զայլ և այլ  
անցից և զինդրոց՝ այլ ընդ այլոց հասելոց ի լսելիս  
Սրբութեանդ, զի զուր և ընդունայն ջանահնար լինէի  
հաճոց առնել Ձերումդ Վեհափառութեան զուզու-  
թիւն իմնցս մտաց, և կամ չանձն իմ ձգել զիրաւա-  
բար և զարդարացի դատաստան Ձեր զգրուածոցն իմոց  
և զվաստակոց: Քանզի կոնդակն Վեհիդ որ ի 25 նոյեմ-  
բերի 1860 ամի՝ բովանդակ իսկ կշտամբողական էր և  
բանդիչ ամենայն ձեռնարկութեանց իմոց և ակնկա-  
լութեանց, ունելով բանին աջակէս.

«Շնորհազարդ Գարբէէ վարդապետի Այվաղեանց սիրելւոյ

«մերոյ Քրիստոսական սուրբ ողջունիւ ճանուցանեմք, զի ի տե-  
«ւղեաց այդոցիկ կողմանց առաւելան առ մեզ միջնորդական խընդ-  
«բազրութիւնք, որովք խնդրեն ամբառնալ զՁեզ ի բարձր աս-  
«աթիճան Եպիսկոպոսութեան. նա մանաւանդ և Տէր Փոխարքայն  
«Վոյկասեան սահմանաց՝ գրութեամբ յ31 Մայիսի սոյն ամի հա-  
«ւանաւ 8 յայտնելով մեզ զԲարձրագոյն հաճութենէ Բարձրագոյն  
«Հրովարտակաւ արեցելոյ Կառավարիչ Անիթի ի 1 Մարտի 1857  
«ամի յառաջադրեալ էր մեզ առ վերածել զձեզ յաստիճան Եպիս-  
«կոպոսութեան. որում և մեք գրութեամբ մերով ի 25 Յունիսի  
«հնրկայ ամի համարաւ 350, պատասխանեցաք ըստ արժանոյ ի  
«միջ բերելով ի նմին դաւթի աւթի ներքործութիւնս չէր անպարշաճ  
«բարբեալ անհնախ աստիճանս իրան և պարբաւորութեան, զորս մի  
«առ մի արժան դատեցաք և աստանօր ի համար բերել ձեզ:

«Նախ՝ զի ի մուտ գործելն Ձեր ի Ռուսաստան ի պաշտօն վե-  
«ճակաւոր Առաջնորդութեան Նոր Նախիջևանայ և Բեսարաբիոյ,  
«առանց բարեհաճութեան հողեորական Ծայրագոյն իշխանու-  
«թեան, այն է մեր և Սինոդի Սրբոյ Էջմիածնի՝ միայն ըստ կա-  
«ւմաց ձեր ջան գործեալ փոխադրեցէք զԱռաջնորդարանն և զթե-  
«ւմական Կոմսիատորեական Ատեանն ի Քիշնևայ ի Թէոդոսիա քա-  
«ղաք, ըստ ձերոյ նկատման տեղի կեդրոնի վարկուցեալ զայն՝  
«անկեալ ի շրջան բնակութեան Հայազգեաց, վասն յարմարագոյն  
«լինելոյ ի հաղորդակցութիւն Կ. Պոլսոյ, Փորոն Ասիոյ, Կաղ-  
«ւմանց Կոյկասու և վանից Կաթողիկէ Էջմիածնի:

«Այլ այն օրինակ ձեզ հաճոյական ընտրութիւն ձեր զտեղ-  
«ւոյն՝ լինելոյ այն կեդրոն բնակութեան Հայազգեաց ստանձ-  
«նելոց ձերոց հովուական և առաջնորդական հոգատարութեանց,  
«զոտանին առաւելապէս ի Նախիջևան. և ըստ յարմարու-  
«թեան հաղորդակցութեանց Նախիջևանն որ առ Գոնիւ՝ կարէ  
«զող կեդրոն. ուստի և չէր հարկ ձեզ կեդրոն կարծե-  
«լով զԹէոդոսիա քաղաք՝ փոխադրել անդ զառաջնորդական  
«տեղին, այլ կալ և մնալ ի Նախիջևան տեղոջ ի կեդրոն բնա-  
«կութեան Հայազգեաց առ ի ժամու և ի տարածամու տրթ-  
«նութեամբ հողոյ հսկելով ի վերայ նոցա՝ պարբեր զմիտս նոցա  
«բանիւ Աստուածահաճոյ վարդապետութեան ձերոյ, զգուշանալով  
«միանգամայն զպահպանութենէ նոցին համաձայն առաքելական  
«պատուիրանատու ձայնարկութեանց. «Զգոյշ կացէք, ասէ, ան-  
«ձանձ և ամենայն հօտիդ, յորում ետ զձեզ Հոգին սուրբ տեսուչս՝  
«հովուել զՓողոսլուրդս Տեառն, զոր սպրեցոյց արեամբ իւրով»  
«Գլուխ 20, համար 28. և թէ «Արածեցէք որ ի ձեզ հօտդ է  
«Աստուծոյ, վերահացու լինել մի՛ իբրև սկամայ, այլ կամաւ ըստ

«Աստուծոյ, մի՛ զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ, մի՛ իրբև «տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին. զի յերևել Հօ- «տապեօին ընդունիջիք զանթառամ փառացն սրակ»: զլուսն Տ, «համար 2: Այլ դուք հակառակ ամենեկն այսօրինակ առաքե- «լական ձայնարկութեանց, ոչ կամիք ցուցանել յընթացս ձերոյ «առաջնորդական կառավարութեան զհպատակութիւն կամաց մեր «եւ առ եկեղեցական կանոնս սրբազան Հայրապետաց եւ վարդա- «պետաց Հաստատեցեալս ի վերայ հիման այսոցիկ առաքելագիր «պատուիրանաց. քանզի ամենայն կանոնք եկեղեցական՝ որ վասն «առաջնորդաց՝ զնոսին իսկ զառաջնորդսն պարաւանդեն քան «գրամենայն փոյթ յանձին բերել նախապէս զհօտէն ստանձնելոյ «իւրում առաջնորդական վերանկատողութեանց, եւ զյամառեալս «էի կամս իւրեանց՝ բացամբժեն ի հոգևոր ճշմարիտ հովուաց, «չճանաչելով զնոսս զոլ ճշմարիտ հովիւ Քրիստոսեան Հօտին:

«Նրկորդ» դուք զգերադոյն պաշտօն վիճակաւոր առաջնոր- «չութեան, որ պարտաւորէ զձեզ զպահպանութենէ Հօտին յան- «ձին բերել զհոգատարութիւն, ի բաց թողեալ, պարտապէք ըստ «մեծի մասին ի դրաղմունս վերատեսչական կառավարութեանց «Խալիպեան Ուսումնարանի, մեծ եւ երևելի դասելով զայն քան «զպաշտօն վիճակաւոր Առաջնորդութեան. պարտապէք նոյնպէս եւ «Հնու-իբեոյ ինչ էր Բողոքին զսփոքն ժամանակ չէր՝ ի դրաղմունս «Թիսփան» անուն օրադրական տպագրութեան, ընդ որ ոչ որ «յառ պելլական պատուիրանաց եւ ի կանոնաց եկեղեցականաց հար- «կադրեն զձեզ լինել ձեռնամուխ, մանաւանդ թէ եւ արգելան ինչ «յասելն. «Ո՛չ է պարտ թողուլ զբանն Աստուծոյ եւ պաշտել զսե- «զանս»: զի զպտուզս այն օրինակ զործաւնութեան ձերոյ կարեն «ընձեռել ազգիս եւ երկասիրութիւնք ուրումն զիսնական աշխար- «հականի՝ ըստ սեպուհ ազգային պարտաւորութեան իւրոյ. այլ «եթէ կամիք դուք ընդ այնորինակ աշխարհական զործաւնու- «թեանց զհոգևոր պաշտօն վիճակաւոր առաջնորդութեան յառաջ «վարել, ի նկատի կալարուք ձեզ զբանն Աստուածաբանին. «Ս.ա. «բազումն ձգուեալքն, տիարանան առ մին»: ընդ նոսն եւ զա- «ռածն Տարեկան. «Մարդն միում բանի հետամուտ՝ հասարակօրէն «առաւել մտադիր դասի. իսկ որ բազմաց հոգ ունի, ոչ մեծ «ինչ վճարէ.» մանաւանդ թէ եւ պարտաւորութիւն պաշտօնի վի- «ճակաւոր Առաջնորդութեան ձերոյ ոչ զնոյն պահանջէ, անհոգ «ամենեկն զհօտէն՝ խորասուզել միայն ի զործ ինչ, ընդ որ որ- «պէս ի վերոյ յեշտասկեցաք՝ կարէ եւ ոմն ի գիտնական աշխարհա- «կանաց ձեռնամուխ լինել, տալով զպտուզս ազգասիրական եր- «կասիրութեանցն ի ճաշակ համադրեաց իւրոյ:

»Ձեն մեր կամք շինուցանել զբոց եւանդեան ազգասիրական «ընտասիրութեանց ձերոց. քանի չէ արդարեւ արժանի պարսա- «ւանաց, այլ զավութեան եւ վարձուց ըստ հոգւոյ եւ ըստ մարմ- «նոյ՝ աշակերտել ուսումնական եւ ազգասիրական յառաջադիմու- «թեանց. միայն եթէ ներեսցեն ձեզ միջոցք առաջնորդական ըստ «պատշաճի կառավարութեանց ձերոց, ապա թէ ոչ՝ անպատշա- «ճաբար դատեալ լինի ձեզ ծախել զէթ եւ զվայրկեան մի առաջ- «նորդական կառավարութեանց ձերոց յայլ զործ, որ ոչ հաւա- «տացեալ ձեզ. զի զի՛նչ օգուտ է ձեզ պատաղել ի դրաղմունս «ազգի ազգի զործաւնութեանց, եւ ոչ զմին կարել Հասուցանել «էի կատար զօրինի վախճանաւ. զի ըստ աւետարանական սիրա- «բարբառ ձայնարկութեան՝ չկարէք երկոց փերանց ծառայել, եւ զեր- «կոսին եւս զուղահաւասար ի մի սէք պատուել եւ մեծարել. ապա «ուրեմն լաւ է ձեւ յերկուց միում ծառայել, եւ զվախճան նորին «աւանել գովանի, քան ի բազումս պատաղմամբ չկարել մեծ ինչ «վճարել. թողումք ասել զծախելն ձեր զժամանակ առաջնորդա- «կան կառավարութեանց ձերոց ի թղթակցութիւն ընդ զործա- «կալաց ձերոց դասնեցելոյ ի Տաճկաստան եւ յայլ Տէրութիւնս, «որով ոչ սակաւ յետաձգութիւնք յառաջանան վիճակային զոր- «ծոց ձեզ հաւատացելոց:

«Նրկորդ՝ առանձին կոնդակաւ մերով պատուիրեցաք ձեզ ի «վաղ անդը չընդունել ի յԱստուծոսարանն Խալիպեան զորդս Պրօ- «տեսդանտաց եւ Կաթողիկոս ի ուսումն եւ ի դաստիարակութիւն, «զի մի՛ հարազատ որդիք Հարազատ ծնողաց սիրելի ազգիս մերոյ «էի մտաղ տիս մանկութեան՝ կրեսցեն ի նոցունց զգաղափարս «անհարազատս մերում առաքելական ամենաբարեօղաշտ Հայրենի «սուրբ Նիկիեցւոյ, ի նկատի ունելով ձեզ զգուշարարն բարբառ «Պօղոսեան առաքելական բանի յառաջին թուղթն նորա՝ որ առ «Կորնթացիս, Գլուխ Ե. «Ոչ բարեօք են պարծանքք ձեր. ոչ գի- «տէք, եթէ փոքր մի խմոր զամենայն զանդուածսն խմորէ». եւ «ի նոյն թուղթն՝ Գլուխ ԺԵ. , 33 համար. «Մի խաբիք, ապա- «կանեն զբարս քաղցունս բանք չարք»: Այլ դուք ի միջոցի օրա- «գրութեան ձերոյ պատրուակեալ էիք զբան ձեր յասելն, թէ «յԱստուծոսարանն Խալիպեանց ընդունին որդիք հայոց». ըստ որում «քաջ յայսնի էին ձեզ թէ ընդ ընդհանուր բառիս «Հայք» են «թարկեալ լինին Հայ Լուսաւորչականք, Հայ Պրօտեսդանք եւ «Հայ Կաթողիկէք, ուստի հարկ էր ձեզ որոշակի յայտ աւանել թէ «յԱստուծոսարանն Խալիպեանց ընդունին ճիշտ որդիք Լուսաւորչայն «Հայոց». եւ ոչ եթէ ի կեր արկանելով զընդհանուր բառ «Հայ» «պատրուակել զբան ձեր:

«Եւ Չորրորդ՝ անպատեհ և անվայել մինչ խաղաւ Հոգևոր կոչման ձերոյ ձեռնամուխ եղայք և հաստատել և խաղաղեան Ռոտուճ-  
 շնորհի անդ զիրթարան օրերդաց, ուր ուսանելոց են նորա դիւ-  
 քաւ կայթից. որոյ հոգատարութեանց փոյթ ունիլ աշխարհա-  
 «կանաց միայն է վայել և ոչ հոգևորականաց. զորմէ և առանց  
 «ինչ անհաճութեան արժան էիք դատեալ հրատարակել տպա-  
 «գրութեամբ, պարծանք ձեզ համարելով զայն. այլ և վերայ այսր  
 «ամենայնի պարտ էր ձեզ և պարծանք հոգւոյ համարել անգամ  
 «մի և յուշ բերել ձեզ զբանս սրբոյն Յովհաննու Ռսկեբերանի և  
 «Բարոզի Կեսարացոյն, որք և բան բերելով զառիթ զլիսատման  
 «սրբոյն Յովհաննու Մկրտչի զկարաւ դիւանիան կրթականութեամբ  
 «վարժել զստերն Հերովդիակայ, որ զհաճութիւն թաքաւորին և  
 «չարանենդ և և զիւսանախանձ խորհուրդ մօրն իւրոյ երեք, և  
 «զլիսատումն ասեմ սրբոյն Աստուծոյ, և յայտ բերեն զազգի ազգի  
 «Աստուածընդդէմ ներդործութիւնս կարաւմանց. զոր եթէ ան-  
 «զգամ մի և յուշ բերէիք, կարծեմք թէ ոչ հաճէիք երբէք զհո-  
 «գատարութեանց այնր կրթարանի փոյթ ունիլ, և չտալ տեղի  
 «ընդարձակութեան ասպարիզի վարժից կարաւման:

«Ահա այսոքի՛ն են պատմանն ներդործութիւնս չերոյ ընկացից և իս-  
 «տախարհութեանց, որք ոչ արժանի վարչաց զչեղ հայուցանեն. այսօրիկ են՝  
 «ընդդէմ համարեալ լինին աստիճանն պատմութեանց և իննսնաց էլեղացու-  
 «նաց, և այսօրիկ են ընդ որս ոչ հաճին և իստ՝ Տերաւ Տարաբոյն  
 «Իրաւանց՝ վասն անպատշաճ լինելոյ կոչման և պարտաւորութեան  
 «վիճակաւոր առաջնորդութեան ձերոյ, ուստի յառաջադրեմք ձեզ՝  
 «էստ՝ հրաժարել յայսօրինակ տարականն ներդործութեանց, և փո-  
 «խադրելով զարձեալ զառաջնորդարանն և զթեմակալ Կոնստանտ-  
 «նոսական ասեանն և սեպհական տեղի նոցա և Քիլիկիայ քաղաք՝ պա-  
 «րապիլ Տիւրքի հոգևոր փորձով՝ համաձայն առաջնորդական պար-  
 «տաւորութեան ձերոյ, և կամ՝ յայտնել Տեղ հրաժարեցուցանել զչեղ  
 «և պաշտօնի վիճակաւոր առաջնորդութեան, և պարապել միայն  
 «ձեզ հաճոյ եղեալ գործովք. որոյ վասն և պարտաւորեմք զձեզ  
 «ոչ անազան տալ մեզ զպատասխանին. և այն ոչ եթէ միջնորդու-  
 «թեամբ այլոց, այլ ձերով իսկ սեպհական գրութեամբք. զի և մեր  
 «տեղեկացեալ զհաճութեանց կամաց և յօժարութեան ձերոյ,  
 «անօրինեցուք ըստ արժանոյն: Ողջ լերուք և շնորհս սուրբ  
 «Հոգւոյն:

«Մատթէոս Կաթուղիկոս ամենայն Հայոց»:  
 «Յամի Փրկչական 1860,  
 և 25 Նոյեմբերի,  
 և Սուրբ Էջմիածին, Թիւ 576.»

«Ապաքէն բազում ինչ և ընդարձակ յոյժ մարթէր ա-  
 սել առ մէն մի և բանից Վեհափառ Տեառնդ որ և դմին  
 կոնդակի՝ առանց ելանելոց բնաւ ըստ սահման ակ-  
 նաճութեանն և պատկառանաց զոր ամենայն որդի  
 Հայաստանեացս Եկեղեցւոյ պարտի առ Վեհապատիւ  
 Գրուխն իւր: Սակայն շատ համարեցայ ևս առ ժամն  
 զ առաջխաչդ դրել պատասխանի առ Վեհափառդ:

«Վեհապատիւ Տէր, Աստուածարեալ Հայրապետ.

«Ձշնորհարաշէ կոնդակ Վեհապատիւ Տէրութեանդ, զգրեալն  
 «և 25 Նոյեմբերի ընդ թուահամարաւ 576, ընկալայ յ19 այսր  
 «ամսոյ հանդերձ պարտուգառոշաճն մեծարանօք. և ահա փու-  
 «թամ առնել այնմ պատասխանի, եթէ զործքն և վաստակք որոց  
 «վասն մեղապարտ զիս համարի Սրբութիւնդ իբրև յայնպիսիս  
 «ձեռնամուխ զբազմանս՝ որ անպատշաճ դատեցին ամենեկն ա-  
 «ռաջնորդականին, հրամայեալք են ինձ և ստանձնեալք՝ որպէս  
 «և Առաջնորդութիւնս ինքնին — և Կայսերական զերազոյն հրա-  
 «մանաց, այսինքն է, ա) փոխադրութիւն առաջնորդական ամթո-  
 «ւոց և տանի վիճակիս և Քիլիկիայ և Թիւրքիսիա՝ հրովարտական  
 «որ և 15 Ապրիլի 1858 ընդ համարաւ 69. բ) բայումն և վի-  
 «րատեցութիւն Խալիպեան ազգային Ռատումարանին հրովար-  
 «տական որ յ9 Յուլիսի 1858 ընդ համարաւ 110. գ) հրա-  
 «տարակումն «Միածան» անուանեալ օրաւորոյ՝ հրովարտական որ  
 «և 5 Ապրիլի 1859 ընդ համարաւ 54. և դ) ընդունելութիւն  
 «որոյ և իցէ հայազէի պատմանց յաշակերտութիւն Խալիպեան  
 «Ռատումարանին՝ ըստ պայմանացն սահմանելոց և կարգադրու-  
 «թեան՝ հրովարտական որ և 4 Յուլիսի 1858 ընդ համարաւ 110:

«Արդ առ և կարող լինելոյ տալ պատասխանի Վեհապատիւ  
 «Տէրութեանդ անյերկաւանալի բանիւ՝ եթէ խորհրդիմ ևս յետս  
 «կալ և զործադրութեանէ այս ամենայն հրովարտակաց, հարկ ան-  
 «հրաժեշտ համարեցայ դրել և հարցանել կանխաւ զիսմա և զհա-  
 «ճութիւն Վեհափառ Կայսերն ամենայն Ռուսաց՝ և ձեռն վսե-  
 «մախալ Ռատիկանին ներքին Գործոց, առաքելով առ նա զբնա-  
 «զդրն իսկ կոնդակի Սրբութեանդ հանդերձ վաւերական թարգ-  
 «մանութեամբ նորին:

«Աներկիտ լերուք աղաչեմ, Աստուածարեալ Հայրապետ, զի  
 «ընդ առնուր իմ զպատասխանի և զլուծումն հարցմանցն զորս  
 «նեքրոյ արկանեմ հաճութեան Մեծի Կայսերն մերոյ՝ ըստ պար-  
 «տուց պաշտամանս, փութացայ ծանուցանել Ձերումը Սրբու-  
 «թեան սոյնպէս իմով փոխութեմք, որպէս միշտն, և ոչ ընդ այլոց ձեռն:

«Չայս միայն ներկայէ ինձ Սրբութիւնդ ասել աստանօր է սէր  
 «Ճշմարտութեան և յանդորրութիւն բազմահոգ սրտի Աստուա-  
 «ճարեալ Հորդ. հասարակաց, զի նախ՝ դպրոցն Օրինորդաց որ է  
 «Թէոզոսիա՝ ոչ է ի Սալիպեան Ոսոսանքանին, և ոչ ունի ինչ ընաւ-  
 «ընդ նմին յարակցութիւն, այլ կայ յառանձին և հեռաւոր դրոյ-  
 «րոցի՝ ընդ անընդմէջ հսկողութեամբ զաստիարակուհւոյ ուրումն  
 «և Հողաշարձուաց ընտրելոց ի պատուաւորաց ժողովրդեանս, և  
 «զրեա թէ միայն ըստ կրօնական ուսմանցն զտանի ընդ առաջ-  
 «նորդականս վերադիտողութեամբ, ոչինչ ընդհատ յայլոց ժողո-  
 «վրդական Գպրոցաց, որպէս հաւաստեալ կարող է Սրբութիւնդ  
 «տեղեկանալ յականատեսից:

«Ներկորդ, Գործք առաջնորդական տեսութեան վիճակիս չեն  
 «ինչ ընաւ ամենեւին երբէք կրեալ վնաս, և ոչ դուրնաբեայ  
 «ինչ անդամ յապաղումն, ի պատճառս գրաւորականացն իմոց վաս-  
 «տակոց յօղուտ մանկանց Հայաստանեայցս եկեղեցւոյ և ազգի.  
 «Գոր և դիւրին իմն է Սրբութեանդ ստուգել ի ձեռն Սրբահոգո-  
 «սելո սրբոյ Էջմիածնի:

«Համբուրել Աստուածաբեալ աջոյդ Սրբութեանդ մնամ և այլն»  
 «Թէոզոսիա, ի 23 Վեհտեմբերի 1860.  
 Թիւ 459.»

«Յայտ խոյ կր ինձ, զի եթէ ոչ Ձերումդ Վեհափա-  
 «ռութեան, դէթ որոց թերադերն լինել Համարձակէին  
 «Վեհիդ խտապոցնս դնալ ընդ իմումս նուաստութեան,  
 «անհաճոյ յոյժ էր այդ պատասխանի: (1) Վասն որոյ և  
 «չէին ինչ զարմանք՝ Վեհափառ Տէրդ արժան Համարեալ  
 «էր չեա աչնորելի, և չաւաջ խոյ քան զայն, աղարտել  
 «առաջի իմոց խոյ ժողովրդոց՝ թող թէ օտարաց՝ զգործս  
 «լո՛ և զհամբաւ: Նւ զայս մանաւանդ չափանի աղար  
 «Սրբութիւնդ կրնդակաւն իւրով զոր զրեալ էր ի 6 Հոկ-  
 «տեմբերի 1860 ամի առ Քաղաքադուրն Նախիջևանի՝  
 «ըստ չաւաջ բերելոյ նորին խոյ քաղաքադուրնս Վարա-  
 «պետի Հայրապետանց ի նամակին իւրում որ առ իս  
 «և 27 նորին ամսոյ ըստ առաջիկայ օրինակիդ.

(1) Հոսիոցեալ կախաւիտիսն ուրիշ ամէն հոսիոցեալն տեւի յայն  
 վերայեւեալ երկարայիժ հոսիոցն ոչ ճիշտն չով ինքնուրոյն լի է և ուր ու-

«Բարձր Արժանագասիւ Գաբրէէլ վարդապետ Տեղակալ Ա-  
 «ռաջնորդի Նախիջևանի և Պետաբաբիոյ.

«Ողորմած Տէր իմ.

«Չառաջին զայս թղթոց նախնիս, զոր պարտաւորեմ զրել առ  
 «Սրբութիւն Ձեր, ոչ յանձնէ ինչ ծանիծիք խնդրեմ, այլ է ստի-  
 «պողական հարկէ, զոր յանձն արար ինձ Հայրապետական պաշ-  
 «տելի հրաման լուսարանեալն ի հրաշատառ պատգամս կրնդակին  
 «զրելոյն յանուն իմ ի 6 այսր Հոկտեմբերի, համար 493, զոր  
 «ընկալար ի 22 սորին. յորում նորին Քահանայապետական օծու-  
 «թիւնն յեա ծանուցանելոյ ինձ, և ի ձեռն իմ ամենայն ժողո-  
 «վրդեան զհաստատութիւն երեսօխտանաց հասարակութեան մե-  
 «ւոյ ի գործ հեղիական հրեալաց, հարեանցի յիշէ զմիջնորդու-  
 «թեանց զորս արարեալ են երբեմն յառաջ քան զայս վեհադիւնայ  
 «տունն Վաղարշիւսն, և Պայծառափայլ Փոխաբքայն կովիտեան.  
 «Ծանուցանէ և զարդի մահաւորութիւն ոմանց ի մերոց քաղա-  
 «քակցաց, որք անուամբ հասարակութեան առաջարկեալ են նորին  
 «Աստուածաբեալ Հայրապետութեան ձեռնադրել զձերդ Սրբու-  
 «թիւն եպիսկոպոս Վասն որոյ և յեք ընդ երկուք Բարաբարեայ  
 «Քեւտիլիսն, ի դարձաւ որոց անարարն ինքնուրոյն նոցա, (1)  
 «յայս յանդ է զըանն. Պատուիրելով պատուիրեմք յարդութեան  
 «ձերում, զայսմ ամենայնէ ծանուցանել ազգին մերոյ յաշխարհա-  
 «կան տեսութիւն ձեր յանձն եղելոյ, և նոցա որք անզոյժ գտան  
 «ձեռնեղէց լինել ի գործ որ ոչ վերաբերի ընաւ ինքեանց: Ընդ  
 «այսմ յանձն ասնե՛՛՛ չե՛՛ յայտնել Գերադարձիս Գաբրէէլ վարդապետին Այ-  
 «վաղեանց, ոչ ճիշտն յեք իսլ ի նմանօրինա՛ չեանարիւնեանց, այլ և ուշի

լի է ս Տէր Գրոսած է, այլ և ծայրէ ի ծայր Էջմիածնայ Բարձրաստիճան  
 ճիւղաններէն ճիւղան շարաբարծնէ, ինչպէս որ յեղոյ սրտափեցիկն, և ինչ-  
 պէս որ դիւրին էր Գրոսածնէն նոյն ինչ Գրոսածնէն ու՛՛ն, և նոցա Տէր  
 Բուռեալ նախնայն և հոսիոցեալն հոսիոցն: Եւ այս Բուռեալ Տէր ինչ  
 ճանն ուրիշ ե՛՛՛ որ Գրիլ Գորն ի շարք ինքնուրոյն անով հոսիոցեալ  
 Հայրապետին վարձանէ՛՛ և Գրոսածնէն:

(1) Այդ արժեւաւիտեանն անշուշտ նոցա են որ Վ. կախաւիտիսն Տի  
 սո Տի Գրոսած էր Գաբրէէլ վարդապետին նոյն սրտափեցիկն 25-ին,  
 ինչպէս որ վերջը քննանք, լիպիկս և յայտնի է նոցա ամենան ևս չի՛ ոչ ու-  
 ճան ան է լի է և Է:

«մնօր աշխատ լինել նաև կատարել զոր պահանջվե՞ք ի դրուժեան  
«մեր առ Պայծառախալլ Փոխաբերայն, և երկրորդ՝ զհետ գնացեալ  
«անարատ վարդապետութեանց եկեղեցւոյ մերոյ սրբոյ, և առա-  
«քելախան ձայնարիութեանց, ունինդեր լինել մեզ: (1) քանզի  
«հրամայէ Սրբազանն Պօղոս «Յիշեցէք զառաջնորդս ձեր, որք խօ-  
«սեցան ձեզ զբանն Աստուծոյ», և թէ «Ունինդեր լերուք առաջ-  
«նորդաց ձերոց, և հպատակ կացէք նոցա, զի նորա արնին վանն  
«հողուց ձերոց, որպէս թէ համարս ասուց լցին ընդ ձեր, զի  
«խնդութեամբ արասցին զայն և մի՛ հողուց հանելով, զի այն ոչ  
«յողուտ ձեր է»: (Թուղթ Պօղոսի առ Եբբ. ԳԼ ԹԵ, համար  
«7—17:)) Կաւել քան զայս ընթերցցել վարդապետն Այլազեան  
«զբանս Յովհաննու Ոսկերեանի յայտ՝ մասին:

«Այլ թէ վանն էր ոչ ուղղակի յանուն նորա գրեմք, առ այդ  
«պատճառք են անպարտախտն լեռնու նորս զնորսունն զորս քանիցս քը-  
«քեայ է՞ք առ նա. զվերջին կամս մեր յայտնեմք նմա և ձեզ ամե-  
«նեցուն, զի վերջիշեալ վարդապետն պարտական է նա՞ յառաջնոր-  
«դութեան հրաժարել, նա՞ ի քործոցն՝ զորոց ասացաք, և զորս վայելաւ քա-  
«րի՞ք ճանաչանք աշխարհամասց՝ քան ասն հոգեւոր: Եւ ի վերջէ յը-  
«շեսցէ Գարբեէլ վարդապետն զբան առաքելոյն. «Եթէ մարդկան  
«հաճոյ լինէն, սպարէն Աստուծոյ ծառայ ոչ էի»: Քաջայրոյ տե՞ք եթէ  
«յարգութեան ձեր որպէս գլուխ քաղաքին Նախիջևանայ և շըր-  
«ջակայ զիւղօրէից նորա, որպէս անձն պաշտօնական կարգեալ ի  
«կառավարութեան աղբի, ըստ զօրութեան արտօնութեանց շնոր-  
«հելոց այդք՝ քաղաքի յՕԳՈՍՏԱՓԱՌ ԿՍՅՍԵՐՍՅ Ռուսոյ, և հա-  
«մանայն ներգործական օրէնսդրութեանց ի կեր սաջըր զհնարս  
«առ ի կարճել զդրութեան մասնաւոր անձանց սքօղելոց ընդ  
«պատրուակաւ անուան հասարակութեան. զի հասարակութեանն քա-  
«ղաքեզ, զոյգ ընդ զիւղօրէից բազմանայ ի 20,000 անձանց, և  
«ամենայն թուղթք յանուն այդք հասարակութեան պարտին դրել  
«և վաւերանալ յազգային խորհրդարանի պաշտօնական ժողովով և  
«նախագահութեան քաղաքական գլխոյ:

«Մեք ըստ մերում որդեական պարտաւորութեան, որպէս  
«փութացաք ի կատարումն հայրական պատուիրանաց նորին Սըր-

(1) Ինչպէս որ այս խօսքերն եւ յայտնի է, ինչո՞՞ հանգուցեալ Կալուս-  
«տիանին հասնացուցած էին: Բովինները լին Նախիջևանի քաղաքս քաղաքս քաղաքս  
«Ռուսաստանի Հայոց Ա. զ. քաղաքս էր, և վերջնաւոր Առաջնորդն վերջոյ  
«եւ իշխանութեան ունի:

«բաղնակատար Օծութեան ի ծանուցանել հասարակութեան մե-  
«րում զբաղնակատարական կնիգակն, նոյնպէս և յակնարկու-  
«թեանէ կամաց Սրբազան Հայրապետին փութամք այսու ծանու-  
«ցանել և ձերում Բարձու Արժանապատուութեան, և ոչ ինչ  
«յետս կատիկը յապացուցանելոյ և առ Ձերք Սրբութեան զմերս  
«սրբաւանդն մտնումութեան, և զՁերք իսկ Բարձր Արժանապա-  
«տուութեան աղաչեմք զիջանել առ բացատրութեան սրտից մե-  
«րոց, զի ըստ Բնի՞ ճրբմութեան արդիս առ փլուսն էլեղեցոյ Տէր, ոչ  
«ոչ ի Հայնազանց խորքեացէ շարժաւիլս ի Բոյ իսկ ի հոսարակութեան սուրբ  
«նախնայ նորս. (1) որով մերս ոչևորեալ զտանիմք գտիւ և զընչեր  
«պատրաստ առ մերսման հրամանաց Ձեր կատարումն:

Ձերք Բարձու Արժանապատուութեան Խնարհ Ծառայ  
«քաղաքապետ Նախիջևանայ Կարապետ Հայրապետականց:

Թիւ 488.  
27 Հոկտեմբեր 1860.  
Նախիջևան:

«Բարէ, ասէի ցանձն իմ, զեա վերձանելոյ զպայակի  
«բանս ի թղթի արանց աշխարհահանաց, որք չեաս ընդ-  
«դէմ կոչմանն իւրեանց և աստիճանի՝ հրաւիրեալք լի-  
«նէին ի Կաթուղիկոսէ Հայոց, խրատիչս լինել և կշտամ-  
«բեչս (Թէպէտ և մեղմիւս բանիւք) Առաջնորդի վերձակին  
«իւրեանց, դառնիք զհովիւն զանդիմանելով, և առաջ-  
«նորդեալքն Առաջնորդին կալով ուղեցոցց. բարէ, չոր  
«խորս թշուառութեան անկեալ դնի սպաքէն գերա-  
«դոցնն վերատեսչութեան Հաչաստանեացս եկեղեցւոց,  
«և որոց բարեաց լցէ ակն ունել աչնուհիսաւ ի ժողու-

(1) Պ. Հայնազանցն այս քաղաքս քաղաքս քաղաքս անպարտախտս ճա-  
«սացած ի լինել լին քաղաքս նորս նա՞ զիս քաղաքս քաղաքս քաղաքս քաղաքս  
«Խորհրդակցութեանն էնչ վերջով հոս քաղաքս քաղաքս քաղաքս քաղաքս  
«Ներքին Կալուստիանին, երբոր նա հոսարակութեան քաղաքս քաղաքս  
«բան քործին շխտանալն, և նորս Առաջնորդին ինչո՞՞ քաղաքս քաղաքս  
«քաղաքս քաղաքս էլեղեցոյ Տէր ասէն քաղաքս քաղաքս քաղաքս քաղաքս  
«քաղաքս քաղաքս էլեղեցոյ Տէր ասէն քաղաքս քաղաքս քաղաքս քաղաքս  
«քաղաքս քաղաքս էլեղեցոյ Տէր ասէն քաղաքս քաղաքս քաղաքս քաղաքս

վերջոց՝ որք այսպէս Հայրապետական կոնգակաւ գրք-  
դռեցին ընդդէմ Առաջնորդին իւրեանց և գործոց նորա:  
Ոչ լաւ իցէ ինձ այժմէն և խոյնն ի բաց դնել յանձնէ  
դայսպիսի թարմատար պաշտօն առաջնորդութեան, և  
առանձնանալ մենանալ ուրեք յողջս և ի սուգ թախ-  
ծութեանն ի վերայ անբուժելի աղետից աղբիս . . . Սա-  
կաչն ի միոյ կողմանէ ցաւէք ինձ յոյժ ընդ զուր տա-  
րապարտուց աղարտումն այնքանեաց երկոց և աշխա-  
տութեանց՝ յորս ձեռնարկեալ և չառաջ տարեալ էք  
իմ Տեառն օգնականութեամբ, և ի միւսմէն ոչ սակաւ  
ամօթ չանձին կրէի վասն աղբիս իմոց և եկեղեցւոյ՝  
չերեսաց խաչտառակութեանն մեծի զոր սպառնացին  
դէպքն ի զիմաց օտարաց և Վաչսերականին Պետու-  
թեան: Կաւ Համարեցայ Համբերելով Համբերել Տեառն՝  
մինչև նայեսցի առ իս, և եթէ Հաճոյ իցէ նմին ուղ-  
ղութիւն մտաց իմոց և գործոց՝ օգնեսցէ ինձ ի չաղ-  
թել այս ամենայն դժուարութեանց. իսկ եթէ ոչ՝ թոյլ  
արասցէ ոտխայն իմոց չարուցելոց ի վերայ իմ Հաղա-  
բաւորօք ժողովրդեան և եպիսկոպոսօք և վարդապետօք  
և կաթուղիկոսաւ՝ առնուլ կորզել ի ձեռաց իմոց զեշ-  
խանութիւնս, և չեղծումն և չապաստանութիւն դնել  
զվաստակա իմ զամենայն:

«Մինչդեռ չայսպիսի խորհուրդս դեղերէի, առանց  
բնաւ ի բաց կալոյ ի գործոց տեսչութեանն վիճակիս և  
ուսումնարանաց, ընկալայ ի Սրբութենէդ զկոնգակն  
նշանաւոր՝ գրեալ է՞ Սպրբիւ 1861 ամի առաջիկայ բա-  
նիւք:

«Արժանապատիւ Գաբրիէի վարդապետի Այվազեանց ծանու-  
ցանեմք:

«Ձեռնարկութեան չէք և Գործողութեան, զոր ոչն պահանջէ երբէք ին-  
չուսն հոգեւորական պաշտօնաւոր՝ տնց մեզ խորհրդածել ի տուէ և ի  
«զեշերէ և Հարկադրել կոչել զքեզ աստանօր: Ուստի Հրաման է  
«քեզ վուժալ զալ այսր՝ աւեալ ի միասին զՅովհաննէս վարդա-  
պետն Բեկնապարեանց, որպէս զի վարեւորն խօսեցուք ընդ քեզ

«առ ի խախտել զկործինչան զբոյս բաղանց. և զի զարժան խոր-  
«Հեցուք և անօրինեցուք ընդ քեզ ոչ զհաճոյս ճարգան, այլ ճա-  
«նասանք զԱրարածոյն, որչափ կանոնադրութեան և սահմանադրութեան  
«սրբապան աստուծոյ և երանելու Հայրապետաց Եղիշորէն ճեզ (1)

«Ողջ լիւր Սէք:

«Վշտալի Մատթէոս Կաթուղիկոս ամենայն Հայոց,

«յՅ Սպրբիւ 1861.

Թիւ 157.

Ի Ս. Եջմիածին:

«Ի բանից այդը կոնգակի, մանաւանդ չառաջնոցն  
և ի վերջնոց, զիւրին էք ինձ ասպարէն իմաստասիրել՝  
զի ոչ այնչափ ի դատ կոչիմ առաջի Գերագահ իշխա-  
նութեան ձերոց, որքան ի լուր վճռուցդ դատասպարտու-  
թեան՝ որ վաղու ևս Հատեալ էք զինէն:

«Սակաչն ինձ Հարկ թուեցաւ մինչև իսպառ Հոյա-  
տակ կալ Հրամանաց Ձերումդ Վեհափառութեան.  
որոց վասն և ետու պատասխանի այսպէս.

«Դնորհազլծն կոնգակի Վեհիւ գրոշմաւ յ՞ Սպրբիւ տար-  
«ւոյս ընդ Համարաւ 157, ե՛հաս ի ձեռս իմ ի 10 Մայիսի.  
«յուրմէ և խելամուտ եղէ զի Ձերդ Սրբութիւն Հարկադրեալ էք  
«ի նործինչան զբոյսաց Բաղանց՝ կոչել զիմն նուստուժիւն ի Ս.  
«Եջմիածին սա ի խորհելոյ և խօսելոյ ընդ իս զհնարեց խախտման  
«այնպիսի զրուցաց, և անօրինելոյ զարժանն՝ որչափ աստուծոյ  
«կանոնադրութեան և սահման Հարցն երանելոց Եղիշորէն:

«Ձէ ինչ արդեօք զանխուլ ի Ձերմէ Սրբութենէդ, Վեհափառ  
«Տէք, զի Յովհաննէս վարդապետն մեր Բեկնապարեանց, — զոր ընդ  
«իս առնուլ Հրամայէք յուղեորութեանս, — ի 14 Սպրբիւ Հրա-  
«ւերեցաւ ի վերինն Երուսաղէմ, և զերծաւ յորպայթից չարայա-  
«չաղ թշնամեցն, որք ի Հերուն Հեաէ անաստապք ընդդէմ  
«կարդաղբութեանց առաջնորդական իշխանութեան, Հալածանս ոչ

(1) Դիտելու սրժանի են այս յեթին որոշեք՝ իբրև ըստ Բասանին  
դեմաստիկոնիս (որ ինչ 20 Տալէ) ոճով Գրուած, ուստի և իբրև հոն-  
վուցեալ Հայրապետին քովէ անշտոյց լեւորդութեանը, և ոչ լէ նորո Բա-  
րեմիութեան աստղ ելած խօսեք:

«սահաւ յարուցեալ էին և ի վերայ աւանն արդարոյ ի Նախիջևան  
 «քաղաքի Արդ ի փոխել յաստեացս Տեառն կամօք այնպիսուոյ ար-  
 «զիւնահան փարդապետի, ապաքէն հարկ անհրաժեշտ ի վերայ կայ  
 «ինձ անմեկին մնալ առ ժամն ի վիճակէ աստի, և արթուն հըս-  
 «կողութեամբ միա դնել անսայթար ընթացից տեսչութեան սո-  
 «ւրին. մանաւանդ զի և հախաւակորդք ոչ պակասեն իմոցս ձեռ-  
 «նարկութեանց, և օգնականս համամիտս՝ աղլասէրս՝ և աստուա-  
 «ճասէրս՝ սակաւս յոյժ ունիմ:

«Ավին իրէ ներել աղաչեմ համարձակութեանս, Վեհափառ  
 «Տէր, և թէ բունադատիցեմ հայցել զբոլոս այսու ի Ձերմէ Սրբու-  
 «թեանէդ զհրաման յապաղելոյ առ այժմ՝ զուղեւորութիւն իմ ի  
 «Ս. Էջմիածին. և միանդամայն ասել, զի և թէ Կարծիքս զբոլոսս  
 «այնորիկ նոր ինչ կցեն և արասալոյ նշանակելոցն ի կրնդակին  
 «տուելոյ առ իս 25 Նոյեմբերին 1860 ամի, և Սրբութեանդ բա-  
 «րեհաճիցի մանաւորել ինձ և զայնտոյի զբաւորական բանիւ,  
 «զամենայն ջան ի զօրծ արկից ի խափանել զնոսին, և սխտիւ  
 «իմովանն զվշտացեալ սիրտ Հօրդ հասարակաց:

Թիւղտիւ, ի 25 Մայիսի 1861.  
 Թ. 250.

Յետ այնորիկ, չգիտեմ զինչ պատճառաց բերեալ՝  
 բարեհաճեցաւ Տէրդ զրել առ իս իբր աստիճանս զառա-  
 ջիկալդ նամակ, որ ըստ սճոցն և ըստ իմաստիցն ամե-  
 նելին իսկ նորանշան իմն թուեցաւ բուրեաց իմոց: Նւ  
 չիրաւի. զի սրպէս տեղեկացեալ ծանեալ անձամբ ի  
 գնալն իմում չերկրորդումն նուազի զէջմիածին, ոչ օտա-  
 րտաի թելադրութեամբ ատղեալ էր այն՝ ըստ առաջ-  
 նոցն օրինակի, այլ ըստ սեպհական իմաստից Սրբու-  
 թեանդ չերկրեալ ի բարեմիտ անձնէ ումեմնէ: (1)  
 Քանզի ասէր Վեհափառ Տէրդ ի նմին.

Արժանապատիւ Գաբրիէլի վարդապետի Աջլաղ-  
 եանց. (2) և այլն:

(1) Պատշաճ չէ՞՞ համարիք դնել այսորեղ շարադրողին անունը, լէ-  
 պէրիս այն անչը ինչն ասած է Տէր լէ այն փրո-սճոց իւր շարադրանն է:

(2) Տէր էջ 105:

Նւ ահա առ այս իսկ առանձնական խրատարա-  
 նութիւն Վեհիդ համարձակեցայ ևս չայնժամ գրել  
 զանուանեալն զայն երբորքի նամակ, զոր գրելթէ ամ-  
 րոջ իսկ դրոշմեմ աստէն.

«Վեհափառ Տէր, Աստուածարեալ Հայրապետ.  
 «Յորմէ հետէ համբոյր հրաժեշտի տուեալ և այլն. (1)

«Նւ քանզի զջարտասացն իմոյ կալոյ բանս ինչ ասել առաջի  
 «Սրբութեանդ, ներեալիք ինձ, Վեհափառ Տէր, պարզել այժմէն  
 «և զվիշտս իմ որ ի նոցուս ըստ մասնէ, զմնացեալն պահելով գէպ  
 «ժամանակին յորում ապի ինձ սխալ առ ոստ Սրբութեանդ լի  
 «բաւանդակ զերաշխէս սրտիս ընդ այնքան յանդիմութիւն  
 «սկզբնաջարկն և արբանեկոց նորա: Զամանս ի նոցանէ յանուանէ  
 «իսկ զիտեմ ևս, և զայլն անշուշտ ոչ անդիտանայ Ձերդ Վեհա-  
 «փառութիւնս. այլ ինձ աստանօր ոչ անուանքն ևս սխտանացու,  
 «այլ ահազին արդասիք չարութեան նոցա որ քաջայայտն է և  
 «չամենայն մտադրութեան արժանի:

«Նորա ևն, Աստուածարեալ Հայրապետ, որ զերծեալք յամե-  
 «նայնի Ձերմիդ անմեղ բարեկրութեամբ՝ այլ ընդ այլոյ զգա-  
 «ցուցին և զպայտցանեն Սրբութեանդ զամենայն զգործս իմ և  
 «զդիտաւորութիւնս, աներկիւղքն յԱստուծոյ և անպատկաւք ի  
 «մարդկանէ:

«Նորա ևն որ զիրս էլ մասեան քահանային Տրապիչոնցւոյ չա-  
 «բաջար մեկնեալ առաջի Սրբութեանդ, և զիւր յանդիմանական  
 «առ իս ետուն զրել անդէն իսկ ի 1859 ամի: (2)

(1) Իբր լէ Օսմանեան հոյսաւ ը չահանայ չեանադրել քուել,  
 ու փոխանի իւր հայրենիք ճամբելու՝ այս վիճակին Տէր փոստուրեալ ու-  
 հանփոս Էտեմ անցնել ինոսոց նորա: — Յետոյ երբ նոյն չահանան ասոնց  
 հրամանի Գաբրիէլ վարդապետին փոսց Էջմիածին ու իւր Աստուծոյն  
 քէ՞՞ անչի՞ն փանփոսներ արտաւ, Վ. Առլաղիւնս ի Էջմիածին  
 Տէր ծուխ քալ քուսու նորա:

(2) Իբր լէ Գաբրիէլ վարդապետը այնպիսի անարժան չահանային  
 ուսուցիչութեամբ իւր քուել է, Տէր լէ այն պատիւն նորա քուսուր  
 Մարկոս Արքեպիսկոպոսն էր: — Յետոյ Մասնուան ժողովարոց Տէր չանի  
 երիտասարդներուն ինքնաճաջ ինչն իսկ Վ. Առլաղիւնս վարդապետին  
 իսկ քուսու նոյն չահանային հանդերձ Տէր լէ՞՞ փոխարկելով:

«Նորա են որ չետուն թոյլ Ձերումդ Սրբութեան ի քնին  
«աւետուլ նախ ի գնացս մեր ընդ Ալախանեան քահանային, և  
«սպա թէ դմեղ կշտամբել:» (1)

«Նորա են որ դատելութիւն իւրեանց զանձնական ընդդէմ  
«Սուրէնեան քահանային և մեղ՝ հնարեցան կշտամբողական կոն-  
«գահաւ Վեհիք իբրև զինու յաղեցուցանել:

«Նորա են որ զՈւսումնարանն կանգնեալ աստանօր Տեառն  
«օրորումութեամբ՝ ջանահար եղին հիմն ի վեր տաղալել, կաս-  
«կածանս անտեղիս ի միտ Տեառնդ արկանելով զանարատ դաստի-  
«արակութենէն զոր ընդունել ի նմա մանկալն աղբիս:

«Նորա են որ զանարատութեամբ իմումս իսկ դաւանութեան  
«և վարդապետութեան ստուերածս կամեցեալ արկանել՝ աղէտըն  
«և չարամտը, զամենայն հնարս հնարեցան զի անորիշ և անյայտ  
«Թողուցու լքանիցէ ցարդ Վեհափառ Տէրդ զինդեր և զքննու-  
«թիւն «Վարդապետարանին» իմոյ:

«Նորա են որ զզանդասար օրադիրն «Հիւսիսախայլ» անուա-  
«նեալ՝ դործի աւին չարութեան իւրեանց ի զբել ի նմա ան-  
«հնարին յանդուրութեամբ զամենայն չարախօսութիւն և զհայհո-  
«յութիւն ընդդէմ հանդուցեալ երջանիւյնշատակ նախորդի Սրբ-  
«բութեանդ, ընդդէմ Մայր վանից սրբոյ Եջմիածնի, ընդդէմ Սրբ-  
«բաղան Եսրիսիոսոսաց ոմանց յանուանէ, ընդդէմ եկեղեցականաց  
«աղբիս աւհասարակ, ընդդէմ աղբասէր և Վեհանձն Խալիպեան  
«Էշխանին, ընդդէմ ինձ և այլոց բազմաց, և միանդամայն յաջո-  
«ւղեցան շորթիլ ի Ձերմէ Սրբութենէդ իսկզբան անդ Անդակ  
«օրհնութեան և դովեստից:

«Նորա են և որք մինչև ցայժմ չթողին վերջին վճուղ դատա-  
«պարտութեան Սրբագումար Սիւնհադոսիդ աւետուլ զկատարումն,  
«ջանալով զի մի՛ խախտեցի ձեւամբ Ոստիկանին հրատարակումն  
«զիււաշունչ օրադիրն այնորիկ:

«Նորա են որ զհրդեհ հախաւակութեանն անիւրոյ առ մե-  
«րոյն նախորդաւ առ ընակիչս Նախիջևանի (զոր մեք ջանահնար  
«եղաք ծանուցանել և ծանուցար իսկ Տեառն օղնականութեամբ  
«յամին 1858) վերստին բորբոքեցին՝ կոնդակս օրհնութեան ի  
«Ձերմէ Սրբութենէդ առաքելով առ սկզբնապատճառս իւրոյու-  
«թեանցն, և այնպէս ի յայտնի ապստամբութիւն և յանաստու-  
«թիւն զբղեւով զմասն ինչ Ժողովրդաց տեղոյն . . . :

«Նորա են որ յանցանս ինձ գրելով առաջի Վեհափառ Տեառնդ

(1) Տես ի Պատմութեանս էջ 107:

«չլմն երդմնախուռ հաւատարմութիւն առ օրհնս Պետութեան  
«Ռուսաց՝ ի զլուխս իւրեանց ստեղին, կարծիս ի մտի գնել Ձե-  
«բումդ Վեհափառութեան, որպէս թէ ևս զօրուտ աղբի և եկիւ-  
«ղեցուլ մերոյ խորհրցիմ աշէլ (որպէս ինքեանք սովոր են առնել)  
«բարձի և աւաղութեան, խաչից և աստետութեանց:

«Նորա են որ զանարժանն քահանայութեան զողէտ զիւղա-  
«կանն Խաչուկ՝ առանց վիպութեան մերոյ՝ զաղտագողի այգր  
«փախուցեալ, և չղիտեմ որպիսի հիմամբք կամ՝ պատճառանք  
«կարողացան ընդունել վասն նորա զհրաման ձեւնադրութեան:

«Միով բանիւ, նորա են, Վեհափառ Տէր, որ զամենայն զործս  
«իմ և զձեռնարիս և զխօսս, և զգիտաւորութիւնս անգամ, զան-  
«ցեալսն և զառաջիկայս և զհանդերձեալս աւհասարակ՝ յան-  
«գուզն դատողութեամբ և չարադրելու նախանձու ի թիւրն տա-  
«բան, և այնպէս դայթակղեցուցին փոքր ի շատէ զիմս աս-  
«տուածընտիր Հայրապետիդ ի վերայ իմ, որպէս կարող եմ ան-  
«ժխտելի փաստիւք և ընդարձակ բանիւք հաւաստել և ապա-  
«ցուցանել զայս ամենայն յԱտենի Սրբութեանդ՝ յորժամ շնոր-  
«հեցի ինձ այնմ երջանիււէտ ժամու պատահել, և որ յուսամ  
«թէ ոչ ևս անաղանեսցէ քան զմուսս առաջիկայ զարնայնոյն  
«եթէ Տէր կամեցի:

«Վախայն փառք և զօհութիւն Աստուծոյն արգարութեան և  
«ճշմարտութեան, որ այժմէն քաղցրացոյց զսիրտ զորովազուր  
«Հայրապետիդ ի վերայ իմ, և աղբեաց ի Սրբութիւնդ զխորհուրդ  
«ուղղակի գրելոյ առ իս զոր ինչ միանգամ կարծիս և կասկա-  
«ծանս ունիցի զիմոց մտացս և զաշխատութեանց:

Ձայս ինչ և եթ մնայ ինձ աղերսել ի Վեհափառ Տէրութե-  
«նէդ՝ զի մի՛ և յայտնիտէ անխայեսջիք աղբարար բանիւք միւ-  
«թարել և քաջարել զիմս յողնատաժան նուաստութիւն ի վաս-  
«տակնս զորս միամուրթեամբ սրտի ստանձնեալս եմ յօրուտ ման-  
«կանց Հայաստանեայցս սուրբ Ակեղեցոյս, մինչև արժանի եղց  
«անձամբ իսկ դալ և յանդիման լինել Աստուածարեալ Հօրդ  
«հասարակաց, զորոյ առ ժամն ի հեռուս հայցելով զհայրա-  
«պետականն Օրհնութիւն՝ մնամ համբուրել աջոյդ Սրբու-  
«թեան, և այլն:

«Ի Թէոդոսիա, յ3 Հոկտեմբերի 1861.»

«Ապաքէն ոչ է հարի յուշ առնել Ձերումդ Վեհա-  
«փառութեան, զի ոչ անպարտախնի մնացեալ էք իսպառ այս  
«իմ նամակ ի Ձերմէ Վեհափառութենէդ, որպէս ի վերջ-  
«նումն կոնդակին ասէ. քանզի այս իսկ է պատճէն կոն-

դակին շնորհելոյ առ իս ի 16 յուլիսի 1862 ամի, որ ամբողջ ամառ միտլ չառաջ է քան զվերջինն.

«Արժանապատե Գարբէլէ վարդապետ սիրելի մեր է Տէր՝ «Ըստ զօրութեան երկրորեց զրութեանց ձեր՝ սողեալ մին է «28 Մայիսի 1861 ընդ Թուահամարան 250, և Տիւնոյ յ3 Հոկտեմբերի 1861, մնամ սպասու զալստեան ձեր առ մեզ, քանզի է «պատասխանի յ9 Սպրեղի ամին անցելոյ ընդ Համարաւս 157 «գրեալ առ ձեզ կոնդակի մերում, որ հրաւերակն էր զալստեան «ձերոյ առ մեզ, պատճառեալ էիք զխոսումն Յովհաննէս վարդապետի Բեկինազարեանց յաստեացս, զի անմեկին մնացեալ առ «ժամն ի վիճակէ այտի՝ արթուն հսկողութեամբ միտ առնել «կարազնք անսպլծաք ընթացից անհաւթեան նորին, և այնպէս «խնդրէիք զհրաման յարագելոյ առ ժամն զուղեորութիւն ձեր «է Ս. Եջիմածին. իսկ յ3 Սեպտեմբերի այնր ամի խորհրդաբար և «ցաւօք սրտի տողեալ զրութեան մեր է պատասխանի զրեալ է «Բողոքներն և յնորոյս՝ կրեւք շարադրուածոյն ձեր՝ հակառակ «սրբազան աւետարանչին Մատթէոսի, Գլ. Ի. 1, 4. Հում. Բ. «1. յորում պատճառեալ զցրտազին եղանակ ձմերայնոյն, որ առ «ուսջի կայր յայնժամ, խոստանայիք ճանապարհորդութիւնս առ «նել է ներկայութիւն մեր, ոչ անագան քան ի մուտս զարեանա- «չին եղանակի. որ այժմ անցեալ սրացեալ է մէնջ՝ ի յաջորդին «նորին կենցաղաբարիմք. և չեղև ճանապարհորդութիւն ձեր «յայտսելի կողմանս՝ յորմէ խիթալի է թէ և ևս անաղանկացի «Վանս որոյ հարկ համարեալ այսու կոնդակաւ զվերջոյրելոյն «ամենից է յուշ արարեալ, հրամայել ձեզ թերևս առանց պատ- «ճառանաց և յարագելոյ զալ է ներկայութիւն մեզ ի յաճոնս «Բողոքներն և Գրքերն՝ Գրքադրութեան և ընթացից Հաստիարակութեան «այդր վիճակի, որք ցայսօր քիզեալ Հոգեալ մնան առ մեզ, և որ- «ոչէս նկատեմք՝ տակալին հետզհետէ ունին մի զկնի միոյ որ- «ոչէս զմիանունս ջրոց բազմանալ յեղերս, նոյնպէս և առաքելու- «թիւնքն և զրութիւնք առ մեզ, որոց զործարդութիւնն ան- «շուշտ պահանջէ գնեակայութիւն ձեր, առանց յետաձգութեան «օր ըստ օրէ: Թերևս և կարողասցիք դտանել զերս իրացն, և «այսու յայտ առնէք զանհնազանդութիւն ձեր ընդ լծով հոգև որ «իշխանութեան մերում, այլ կամք ըստ վաղէ՛ն. սովորութեան չէր՝ «աղաք Հոգեալ և համարչալ ընթացալ է Գրքադրութեան և ի շար օրինակ «այլոց. (1) զորս յանդիման կացուցեալ առաջի ձեր ըստ պար-

(1) Արդեօք այս խոսքով ասել չուզէր Վ. Կաթողիկոսը լին փէշ ա-

«առորութեան պաշտամանս, հուսկ ուրեմն ի թէ անագանկացի և «ևս զարուստ ձեր առ մեզ, յայնժամ զայլ Գրքերն և ի նոյն «առնէլ, որպէս պատշաճն անկախի ուսման յիշխանութեան: ընդ- «հանրական Պատրիարք Կաթողիկոսի ամենայն Հայոց:

Ողջ լեր է Տէր.

Վշտալի Մատթէոս Կաթողիկոս ամենայն Հայոց՝  
է 16 Յուլիսի 1862  
է Տիւնոյ. Թ. 208.»

«Ի սաստկապահանջ քանից այսր կոնդակի ստեղ- «եալ՝ ընդ Համառօտադիմ պատասխանուոյն իմում (յո- «րում ասէի թէ հանգամանս: Ժամանակն ոչ ներկային ինձ ցարդ «կատարել զպարտս իմ և զալ է կոչ Վեհախառ Տեսաճոյ) չաւելի և զթուղթդ առաջիկայ մակագրեալ,

«Առ Հայրդ. հասարակաց որդեաբար խոստովանութիւն.

«Քանզի զհանգամանաց ժամանակիս ստեղծեցայ առնել լի թղ- «թիս իմում յիշատակութիւն, ներկայէ ինձ Սրբութիւնդ զոյզն «քանիւ պարզել առանձնաբար զմիտս իմ՝ ևս և մինչև արժա- «նացեալ զլիւրին տալ պատասխանի ամենայնի քանիւ բերանոյ: «Հանգամանս Ժամանակն զայն ասեմ զլիւրեւորապէս, Վեհախառ «Տէր, զի չըտեմ յորոց իրաւացի պատճառանաց անհարին եղև «ինձ մինչև ցայժմ լսելի առնել յունկն Սրբութեանդ զողերս «իմ և զբողոք և զգանդատանս. և սրովհետև զանպատրուակն «իսկ զիմ զրութիւնս իրե՛ս զրեալ բամբակեցին առաջի Սրբութե- «թեանդ, և որպէս թէ հակառակ իմն աւետարանական և ա- «ռաքելական խրատուց, չըտեմ արգարև ի թէ զիմնչ այլ ինչ «մնայր ինձ առնել, զէթ առժամանակ մի, ի թէ ոչ ձեռնթափ «յամենայնէ լինելով՝ ի լուութիւն և ի յուսարեկ տրամուծիւն «տալ զանձն իմ մինչև կամք լլցին արդարադատին Աստուծոյ «յայտ յանդիմանութեամբ ի վեր հանել զճշմարտութիւն, և ա- «ռակ նշաւակի կացուցանել զիմանեալնս . . . որք շիթեալ

բառ Գրքերի վարդապետն որ մինչև իսպաս չհաստատեցաւ Մեկեղաբեանց վանահօրը և Հասմազ Փրոֆուսորային սպարիտարս հրահանգերուն. . . Աստ լին ոչ, այն վարդապետին վաղէ՛ն սովորութիւնն ոչ լին անհնա- զանդութիւնն էր, այլ է աղաքեալ հնազանդութիւնն ամենայն օրինաբար հոգեւոր իշխանաւորաց, ինչպէս որ մինչև ցայսօր ի վերն նորին ին: Մեկեղաբեանս:

«պղտորեցին ցարդ զմիտս Սրբութեանդ և զամենեցուն զորոյ  
«կարացին զկարծիս իմ՝ վերայ:

«Իսկ զանյայտիցն ինձ թշնամեաց, որք անշուշտ յայտնի են  
«Աստուծոյ, և զուր է ինձ, Աստուածարեալ Հայրապետ, կրկնել  
«աստէն զչարախօսութիւնս և զչարաչար արգասիս նոցին: Ես  
«յետ մաղթելոյ ման ամենեցուն նոցա թողնութիւն և քառու-  
«թիւն որ առ իս յանցանաց, ընդ այն և եթ զարմանամ, թէ  
«զիմորդ Վեհափառ Տէրդ, յետ այնքանս և այնպիսիս լսելոյ և  
«նոցանէ՝ ոչ սաստիպողենիւ ևս խտուութեամբ վարեցաւ ցարդ-  
«քնդ իս, և զիմորդ զյուրով անդամ՝ կրկնեալ սպառնալինն ոչ ի  
«վաղուց հետէ կատարեաց, եթէ ոչ յայն սակա միայն՝ զի հարկ  
«և օրէն համարել անշուշտ Սրբութեանդ նախ քննութեամբ դա-  
«տաստան աւանել ըստ իրաւանց, և այնպէս սպա մատնել ի  
«գատապարտութիւն զհաւատարմագոյնս ի պաշտօնէից եկեղեցւոյ՝  
«եթէ արդարեւ յանցաւորք յանդիմանեցին նորա Այլք և ընդ  
«այն իսկ զարմանան, Աստուածարեալ Հայրապետ, թէ զիմորդ  
«եկեղեցեակնոր և աշխարհակնոր այսր մերոյ վիճակի, յետ տե-  
«սանելոյ զմերժումն ամենայն ինդրուածոց իւրեանց որ վասն իմ՝  
«ըստ իւրեանցն խելամուտութեան, և յետ լսելոյ և «փառէ» կու-  
«տակցութեանց, և յուստաւորաց ոմանց զարձեւոց ի Սուրբ Կա-  
«րապետէ և ի սրբոյ Էջմիածնէ, այնքան ամբաստանութիւնս և  
«մեղադրութիւնս զինէն և զգործոց իմոց համբաւեալս ի կողմանոր  
«յայդոսիկ, զիմորդ տակաւին ևս սէր և մտահաւթութիւն ոչ սակաւ  
«ցուցանինն աւհասարակ յիմն աւաջնորդութիւն ի վարդապե-  
«տութիւնս հաւատոյ և ի քարոզութիւնս վարուց բարեաց, բայց  
«եթէ զի աչօք բացօք զծառն ի ստորոյն ճանաչեն, այսինքն ի  
«բարեկարգութեանցն բազմաց որ եղեն և լինին մեզք ի վիճակիս  
«յայտմիկ շնորհիւ Բարձրելոյն, զի չեք ոք չեք ուրեք ի հնգամեայ  
«միջոցի ժամանակիս որ ի յունականութիւն դարձեալ լցէ ի մե-  
«րոցս, և ոչ ի պապականութիւն և ոչ ի լուսեւրականութիւն, մինչ-  
«զիս, որպէս և Սրբութեանդ զիտէ, յայլս ի վիճակաց Ռուսաս-  
«տանի և Տաճկաստանի չղակասեն դժբաղդաբար այնպիսի դէպք  
«աղետաղիք և հերձուածք չարաչարք և ահազին սպառնալիք մե-  
«ծագունից ևս վասնդից, յորոց պահեսցէ հովուապետն Յիսուս  
«զհօտս սրբոյ Ղուսաւորչին՝ ձեռամբ և ինամօք Վեհափառ Ա-  
«թուակալիդ նորա:

«Այլ զի մի՛ բանիցս յաճախութեամբ ձանձրութիւն Տեառնդ  
«յաւելուցում, մութամ կերել զթուղթս հայցելով ի Սրբութեանդ  
«զարդարացի և զբաղցր ակնարկութիւն ի պաշտօնեայս հաւա-  
«տարեան Հայաստանեայց եկեղեցւոյ և Ձեր, միանգամայն և մի՛

«ևս զանալ՝ եթէ լցէ հնար՝ աւաջարկելոցն յինէն ի վարձա-  
«տարութիւն Սրբութեանդ ընդ ձեռն Սեւնհողոսին սրբոյ Էջմիած-  
«նի վարդապետաց և քահանայից զարժանին զշնորհ պարանոցա-  
«կան խաչից:

«Եւ ահա յայնմհետէ ընկալաց զվերջին կոնդակս,  
զորս յառաջագոյն յերատակեցի ի թղթիս, և զորոց  
զգլխաւոր չօղուածոն բանից մի առ մի արկի ընդ քրն-  
նութեամբ:

«Իսկ զի՛նչ բովանդակութիւն և գլխաւորումն լցէ  
այսմ ամենաչնի, Վեհափառ Տէր, և ո՞ր այն կէտ նպա-  
տակի այսր Բողոքոյ, եթէ ոչ այսոքիկ:

«Ձերումդ Վեհափառութեան, որպէս թուի ի բա-  
նից պէսպէս կոնդակաց Սրբութեանդ, քաջաչաչտ իսկ  
է, Աստուածարեալ Հայրապետ, և մտացս իմոց ուղղու-  
թիւն, և մաստակոցս օգտակարութիւն, և ի գործս  
պաշտաման իմոց անխարդախ հաւատարմութիւն, և  
թէ որք չարախօսենն զինէն առաջի Ձեր իրբև զմուր-  
բեցուցչէ, զկատկածելուց, զանլսողէ հրամանաց Վեհա-  
գունիցն իմոց, և որ այլն ևս, ստեղծատեն ի զլուսս  
իւրեանց, և ի չաւելուածոց անտի չարանախանձ սրտիցն՝  
որ լին է իմորով չարութեան՝ խօսին և գրեն զոր ինչ  
ասենն: Սակայն ի հակառակէն՝ և այն ևս չաչտ չան-  
դիմանութեամբ երևի ի նոյն կոնդակաց, զի որք շուրջ  
զԱթուղիւ թարթախին եպիսկոպոսունք ոմանք և վար-  
դապետք և արեղայք, և այլ ընդ այլոց տան Ձերումդ  
Վեհափառութեան կարծիս և կատկածանս զինէն և  
զգործոց իմոց և զվարդապետութեանցս զլիտովին, (1)  
ոչ միայն չմերժէք Իււք զնոսա և չստատէք և չպա-  
պանձեցուցանէք ըստ արժանւոյն, այլ և Ձերովդ ըն-

(1) Վարդապետը սորոյք քեզէնուրեմք հասնուցած էր լի ո՛րոնք էին  
այն անջինքը յաճախել յանուսնէ, բայց արժան չէր համարած անանները  
բաւ ուսոյի և Տէք չէ՛նք քեզք այս քեզ:

դաքոյս բարեմտութեամբ հաւատս ընծայէք բանից նոցին, և ըստ այնմ հրամայէք զբեւ առ իս և խօսել: Մի է հաւատտեաց այսր զիւրահաւանութեան է ապաքէն և այն՝ զոր Ձերովդ բերանով ասացէքն զիս չայտ յանդիման ոմանց չանդամոց Սինողին, իբրև թէ ես ոչ շատացեալ Առաջնորդութեամբս նախնայնի վիճակիս Նախիջևանի և Պետարապետի (նորոց իմն ըստ նոցին կարծեաց ուրեքն Քալիֆոսիոյ), — Վաթուղիկոսականին անդամ հետամուտ իցեմ ես բարձր ատիւճանի և ամենազօր իշխանութեան: Ար թէ սրբան հեռի է այս չիմոցս ընթացից և է ընածին ակորթակաց՝ անդէն խի է ժամուն կարծեմ թէ ըստ արժան բաւականին ետու պատասխանի, և զհաւանողականն ընկալաց է Ձէնջ ակնարկութիւն: Քանզի, որպէս Հանդուցեալն արդ է Տէր՝ Սրբազան Արքեպիսկոպոսն Ղուկաս Հաւատտեաւ պատմեաց ինձ, Ձերդ Սրբութիւնն զայդ անկէն խառնածսն իւր զինէն ասացեալ էր չառուր միում անդէն խի է Սինողին առ որս առաջարկէինն Սրբութեանդ՝ ձեռնադրել զիս եպիսկոպոս: Խի է ինձ չերեսս խի ասացիք թէ մթթէ օրէն իցէ զչի վարդապետ ոք ամբառնալ երբէք չատիւճան Վաթուղիկոսութեան, և չատելն իմ թէ ոչ բընաւ, և է հաստատել վիպութեամբք և օրինակօք, հանդարտեցայք և զաղար ետուք ինդրոյն:

«Ոչ կարծեմ, Վեհափառ Տէր, թէ անձանթ իցէ Ձերումդ Սրբութեան այնպիսեացն միակ ցանկութիւնն սրտի. այն խի՞ զի է թէ ոչ կամակար մտօք, զէթ Վեհազուռնիդ իշխանութեան հրամանաւ է բաց զնիցեմ չանձնէ զառաջնորդական պաշտօն, և ձեռնթափ չամենայնէ լինելով՝ չէրո անդէն դատարարեմ ուսրի ելեալ է ի՞՞ (1), կամ թէ չառանձնութիւն անապատի և է լուին անդոր-

(1) Որպէս զի նրբնան հասարակել իրենց անասել զբարբարութեանը՝

ճութիւնն զանձն իմ առնիցեմ զատապարտ: Արդ է թէ և Վեհափառ Տէրդ է նոյն է նոցա կարծինն իցէ հախամէտ, որպէս է բանից և է զըուածոց ոմանց Վեհիդ երևի, ներեսցի, ապա և ինձ ասել անպատրուակ և անկեղծաւոր բանիւ, զի է թէ Վաչսերականն օրէնք չխափանէին զիս է հրաժարելոյ ինքն է ծառայութեանն զոր ստանձնեալս եմ, և է թէ է Տաճկաստանն աշխարհին էաք և ոչ չիւրոյիչ, ուր ասոնց ծանունց և անկրօնաց ցարժան՝ չէ օրէն երբէք է բաց կալ է սպասահարկութեանէ հասարակաց ինչ դորձոյ չանձնելոյ ումեք, — օ՛ն և օ՛ն ասեմ, Վեհափառ Տէր, զի և ոչ չէրոյրդ միւս ուրուք է կնիդակայն Ձերոց կշտամբողականաց չանձն առնուի լսել կամ ընդունել. ո՛չ բնաւ այլ անդէն և անդ ակիլ տուեալ ստիւացն իմոց, և մեկուսի է բաց զնայցեալ՝ թօթախիչի չանձնէ զճանրատաղտուկն զայս պաշտօն սպասաւորութեանն անդի՞ որոյ ոչ Քլուինն ուղղադէտ մտօք կամի ակնարկել չանդամոցն արսուածս, և ոչ անդամքն զաղարեն է խանդակելոյ զգործս իբրեաց՝ չեմ զիւրեանցսն խառնակար առնելոյ: Յազագս այսր ամենայնի և կնիք բանիս, և բնաւ խի կէտ նախատակն այսր Բողոքոց ոչ այլ ինչ զիտասցէ Վեհափառ Տէրդ լինել՝ է թէ ոչ զաղերս պաղատանաց՝ զի զամենայն հնարս չաճակեցէք է թէ թեւացուցանել և է բառնալ չինէն է ձեռն օրինաւոր Վաչսերական իշխանութեան հրամանաց զտաժանակիրս զայս ճանրութիւնն Առաջնորդական պաշտաման, ընդ որով ընկճիմս ողեսպառ, և ոչ ևս ունիմ ժող՝: Բաց և ոչ բնաւ հաւանիմ, Վեհափառ Տէր, և ոչ չանձն առնում ամենե-

Ինչ վարդապետն վերաբարչը ինքնեօ է և ոչ ճշմարտութեամբ, և անով արդարացնեն իրենց անասնելի նախնայն և հախատիւնիւնն ասարի արգիս և փերութեան:

ւին՝ զի երբևս չյանայոր ոք և երբևս չվատարար իմունս  
 եկեղեցւոյ և աղբի՝ և բաց զնիցեմ զԱռաջնորդութիւնս.  
 ոչ երբէք: Ապա թէ ոչ, լաւ է ինձ ընդ խաչն աչտու  
 ճմլեալ մեռանել, կամ և վերայ այսր խաչի աւանդել  
 զողխ, քան թէ զաչնպիսի ժառանգել անուն վատու-  
 թեան առաջի աշխուհոյ և ապագայից, զոր թերազ-  
 րողքն կամ սաղբիչք և կամ սատարք չօրհնուածոց կոն-  
 դակացն ձերոց շիկեցին և շիկն ցանդ զանարատ ա-  
 նուամբս և զվարդապետութեամբ և զընթացիւք և ձեռ-  
 նարկութեամբ: Թող նախ ուրեմն արդարացաց ուղղա-  
 դատ քննութեամբ առաջի Պետութեան և աշխարհի,  
 առաջի աղբի և Նիկեղեցւոյ, առաջի մեծի և փոքու, և  
 ապա ուրախութեամբ և բերկրութեամբ սրտի շնորհս  
 անթիւս ունելով աջոցն որ արձակիցէ զիս և պաշտա-  
 մանէ աստի, փառս սաց Փրկչին բոլորեցուն, և գո-  
 հութիւն բազում Ձերումդ Վեհափառութեան, որոյ  
 եմս և եղէց՝ երբև Աթուախալի սրբոյ Հօրն իմոյ Գրե-  
 դօրի Նուսաւորչին»:

Մաւայ ամենախոնարհ

Ի Թէոդոսիա, Գարբէլէ վարդապետ Ա. Երկան  
 19 Նոյեմբեր 1864.

**ՅԱԻԵԼՈՒԱՆ Ե.**

Պատեն խնդրազրոյն հասարակութեան Հայոց Քիչնե  
 բաղարի Անսարապիոյ առ Սինոդն սրբոյ Էջմիածնի:

«Նուսաւորչական Հայոց Սինոդի Սրբոյ Էջմիածնի  
 Միաբան Հասարակութենէն Հայոց Քիչնե քաղաքի  
 Խնդիր.

«Յուլիս ամսոյ 26-ն 1859 թուականի Վեհափառ.

Հայրապետան Աղղիս Տէր Մատթէոս արժանընտիր Կա-  
 թուղիոս իւր բարեշաջող ուղեորութենէն ետքը Կոս-  
 տանդնուպօլսէն Մայր Աթոռդ, առանձին օրհնատակ  
 կոնդակաւ երբև և միւթարութիւն մեր և առ և առա-  
 լել Հաստատութիւն իւրոյ Վեհափառական խոստման,  
 ընդ ձեռն Գերապատիւ Առաջնորդի մերոյ Տեառն  
 Գարբէլէ վարդապետի՝ որ եկեալ էր Հրամանաւ Սինո-  
 դիդ ընդ չառաջ Նորին մեծ Քահանայապետութեան,  
 աղղ արար մեզ այսու բանիւ. «Թէպէս Հաւաստու-  
 «թեամբ եղեալ էաք և եմք և մտի շնորհազարդել ևս  
 «և զսոցն Հոգևոր Հովիւն ձեր զԳերապատիւ Գարբէլէ  
 «վարդապետն՝ ամբառնալով զնա՝ և բարձր աստիճան  
 «Արքեպիսկոպոսութեան, այլ ըստ անօրէնութեան ա-  
 «մենօրհնեալ կամաց Բարձրելոցն՝ տկարութիւնք մարմ-  
 «նոյ ստիպեցին զմեզ չապաղել զՀանդէս օծութեան  
 «մերոյ: Աւտի Հրաման տուաք Գերապատիւ Առաջ-  
 «նորդին զարձ առնել յԱթոռ իշխանութեան իւրոյ,  
 «պատուիրեցաք միանգամայն՝ զի ընդ առնուլն և մէնջ  
 «զհրաւէր փութացի գալ այսր վերատին և այլն.» Սա-  
 կացն մեր Հարուստ և աներկբայ անիալութիւնն որ  
 աւետեցաւ մեզ ընդ ձեռն Առաջնորդի մերոյ յիշատա-  
 կեալ Հայրապետական Կոնդակաւ Նորին Վեհափա-  
 ռութեան, մինչև ցարդ չընկալաւ զիւր կատարումն:  
 Քաջապէս չայտնի է Մայրազոյն Ատենիդ, զի Նիկեղեցիք  
 մեր, որպէս այլուրեք և վիճակիս՝ նոյնպէս և այսրէն  
 իսկ, կարի պէտս ունին աշխմ Հոգևորական աստիճա-  
 նաւորաց, որոց լըռմն ընդ ձեռն ոչ այլոց ուրուք եթէ  
 ոչ միայն Նպիսկոպոսաց լինին. իսկ մեք ահա առաւել  
 քան երկու ամք են՝ չորմէ Հետէ զրկեալ եմք երբէք  
 չաչնպիսի Հովուական իշխանութենէ Նպիսկոպոսական  
 դաւադանաց, և այս իսկ է որ ըստ պատկառելի Կոն-  
 դակի Նորին Վեհափառ Տէրութեան Հարկադրեաց  
 զմեզ առաջի առնել Սինոդիդ Հարուստ չուսով մեր

միաբանական աղերսն, և խնդրել թախանձանօք միջ-  
 նորու թիւն Գորին առ Նորին Վեհափառութիւն որ  
 բարեհաճի մեր Գերապատիւ Գործիչ վարդապետ Ա-  
 ռաջնորդն ամբառնալ Արքեպիսկոպոս թեան ըստ ան-  
 սուտ խոստման իւրոյ: Զորոյ նախանձելի արժանաւո-  
 րութիւնն չաչանաբարբառ կըբարդեն նորա ազդաշահ  
 և մեծադործ սիրադործութիւններն, և նա մանաւանդ  
 նորին քրտնալատասի և արթուն հոկորութիւններն,  
 սրպէս և վերայ ինքեան հաւատացեալ հօտիցս Քրիս-  
 տասի, նոյնպէս և ի վերայ եկեղեցեաց նորին, որոց խ-  
 հրութեանց աներկբայ հոգւով ակնհասոր վկայ և հան-  
 դիսազիւր կարեն լինել և ամենայն ճշմարտախնդիր  
 օտարաղինք: Թէ և բարւօք չաչանի է Ատենիդ, բայց  
 մեք աւելորդ չեմք համարել՝ թէ Նորին Գերապատու-  
 ութիւն Տէր Առաջնորդներս իրեն չանձնելոյ օրէն այս  
 վիճակի ելնանու թիւնն՝ չէ դադարած երբէք և ոչ ժամ  
 մի աղբապարծանք գործքեր վատասիւլէն յօգուտ ազգի  
 և առաքելական սուրբ և ուղղափառ Հայաստանեայցս  
 եկեղեցւոյ, բանալով ամենայն ուրեք և վիճակիս նորա-  
 նոր դպրոցներ և ծաղկեցնելով զնոսա եկեղեցական և  
 քաղաքական ուսմունքներով, ևս և պայծառացնելով  
 զեկեղեցիս մեր հոգեշահ Աւետարանական խրատներով,  
 և առաջին Կուսարջաց մերոց սրբոց Թադդէի և Բար-  
 դուղիմեայ առաքելոց և փոխանորդի նոցին Հայաս-  
 տանեայցս Հօր պարթեան Գրեգորի գրաւոր կանոննե-  
 րով, և պաշտելի աւանդութիւններով: Եւ զեւորդ ապա-  
 քէն տեսանելով որ այսպէս մեր վիճակի եկեղեցիներն  
 Նորին Գերապատուութեան Առաջնորդութեամբն ան-  
 շեղի ընթանալէն չետոյ նախնի սրբոց հարց կանոն-  
 ներուն վրայ, մեր սերան ևս մէկ առանձին իմն առքն-  
 չական կապով և ջերմեռանդութիւնով կըլլթալէ Մայր  
 Աթոռին հետ իրաւունք չպէտք է տայ հարուստ յու-  
 սով աղերսել զսուրբ Անուշաբ, որ ընդունելով այս մեր

միաբանական ջերմեռանդ խնդիրն, Տիրաբար հսկէ մեր  
 հոգևոր փախարն կատարելու համար, որոյ վախճա-  
 նական օգուտն հայի և լուսաւորութիւն Ակեղեցեաց  
 և ի պայծառութիւն ազգես:—1 Մարտի 1861, և Քիչնէ:

- Քօմիս Կարապետ Անուշեանց.
- Տիօրեանին Աւետիս Ետայեան Օհանեանց.
- Քօմիս Մկրտիչ Պըլլըլեանց.
- Քուլէժակի Ատենօր Ստեփան Կէպէտեանց.
- Մահատի Կարապետ Մուրատեանց.
- Գրեգորիայօրու Գրաժտանին Յովակիմ Պապովեան.
- Շտաբ Գրեգորի Գօղալաչով.
- Քօմիշչիք Յարութիւն Խաչիկեանց.
- Վաճառականի որդի Առտուածատուր Ուրջալեանց.
- Բուրդալ Յովհաննէս Տէր Փիլիպպոսեան.
- Յակոբ Մաճուկեան.
- Յարութիւն Թումանեան.
- Յակոբ Հալբապեան.
- Գրեգոր Չէրնիկեանց.
- Բուրդալ մահատի Առտուածատուր Բաղդասարեանց.
- Կարապետ Ալեքսանեանց.
- Քուլէժակի Սեբեդար Յակոբ Մատֆէլչի.
- Պետրոս Տէր Սահակեան.
- Գրեգոր Մովսէսեան Եիշմանով.
- Կարապետ Սաղարով.
- Սարգիս Թաւշանով.
- Յովհաննէս Խաչատուրով.
- Քաղէք Փօլլուքճի Յարութեանց.
- Պօզոս Կարապետեանց.
- Գրեգոր Զօնդուրեանց.
- Յակոբ Նաւասարեան.
- Մկրտիչ Բանիկեանց.
- Թիւթիւրեանի Սովէթիք Գաւիթ Զախարեանց.
- Թիւթիւրեանի Սովէթիք Աբդար Զախարեանց.

Թիւթիւլեարնի Սովէթնիք Անդրէաս Զախարեանց.  
 Յարութիւն Քըրկեանց.  
 Պապիկ Բանդանջեանց.  
 Յովհաննէս Ալէքսանեանց.  
 Յովհան Յովհաննէսեան Պէտէլով.  
 Առաքել Անտոնով.  
 Խաչիկ Աճէմով.  
 Յովհաննէս մահախի Յարութիւնով.  
 Երեցփոխ Մարտիրոս Սարգսեան.  
 Հայոց Հասարակութեան ստարոստայ Մարգար Մար-  
 դարեանց»

**ՅԱԻԵԼՈՒՍԾ Զ. (Թ).**

Պատճէն նամակի Յախորայ վարժապետի կարենեանց ան-  
 Վէտրդ վարդապետ Արտմեան:

«Անընդձեռն ակոյցեան Հայաստանեացս սուրբ  
 «Եկեղեցւոյ,

«Վէտրդ վարդապետ:

«Ն[թ]է կրկնադորժ ոք արկեալ զսերմանիս չերկի՛ր՝  
 խրախանայ ի հունձս. ատոքացեալ բաղմարեր հասկաց,  
 ընդէր ապա ոչ խրախասցի և իմ սիրտ և հոգի ի լուր  
 սխրագործ քաջարութեանց անձանց երբեմն իմումս  
 տկարամիտ՝ ստիպն ճշմարիտ վարդապետութեան  
 աշակերտելոց. ի միջի որոց դուք գտայք նախընթաց  
 դրօշակիր: Հազար բերան գոհութիւն վերնախնամ  
 տեսչութեանն, որ ի բարեաց նուազեալ ժամանակիս  
 չարուցանէ տակաւին զանձինս, որք զփառս աշխարհի  
 և զճոխութիւն և զամենայն ինչ ի գոհ բերեն անդոր-  
 րութեան խղճի իւրեանց, և օգտի աղբի և եկեղեցւոյ:

«Ի դրութեանց Ձերոց առ ճշմարիտ Հայ Պ. Նատեր-  
 եանցն և յաչրոց հաւատարան ապացուցութեանց  
 հասու եղեալ նահատակութեանց Ձերոց ի պաշտպա-  
 նութիւն աղբի մերում և եկեղեցւոյ, զառաջինն զար-  
 մացայ, թէ դուք՝ որ յանչալիս մտերիմ էիք քարոզչին  
 նոր վարդապետութեան ի բաղում ամաց հետէ, որ-  
 պիտի վստահութեամբ զղէմ կալայք նորին ուսման:  
 Բայց ապա ի յուշ բերեալ՝ թէ դուք անմոռաց պա-  
 հեալ էք ի մտի զոր երբեմն ուսանէիք, «Աղբն կամ  
 աղղութիւնն երկց է քան զկրօնն, կրօնն երկց է քան  
 զամենայն բարեկամս, ապա ուրեմն պարտ է հնադունից  
 բարեկամաց առաւելապէս պատկառ կալ քան նորոց: Որ  
 չունի զկեր ինքեան տէրութիւն, չունի արքունի գահ,  
 եկեղեցին պարտն ունել զտեղի ամենայնի, նա պարտի  
 լինել կեղբոն նորին միութեան և ապագայ նորին դս-  
 յութեան»: Այլ աւանդ, և ահա ներքին և արտաքին  
 թշնամիք ական հատանեն ընդ նովառ: Մեք տեսա-  
 նեմք զայդ, և չում պէտս լինիմք, և յանձնամ միայն  
 ի յուշ գամք՝ երբ յամէն կուսէ խարխալեալ հիմանց  
 միակ ևեթ մերում ապաստանարանի՝ թագեցեց զմեզ  
 ընդ իւրով իլլատախաւ, բանամք յանձնամ զայս մեր,  
 այլ արտասուել մեացն. կործանեցաւ եկեղեցին Հայոց,  
 անհետ եղև և անուն հայկական:

«Նրանելի էք դուք և որք պաշտպան կացին խոր-  
 հըրոց Ձերոց, անուն Ձեր և նոցա սփի տառեւք դրօշ-  
 մելոց են ի պատմութեան աղբին. ուստի իբրև նիւթ  
 պատմութեան և իբրև առարկայ խելամտութեան՝ տա-  
 ղեսցին և իմ հակիրճ բանք:

«Ձէ անչալտ Ձեզ, զի այդ խմոր չարութեան կեկեալ  
 ի հիւսիսոյ՝ սկիզբն կալաւ առ մեզ չաւորս՝ հանդու-  
 ցեալ Հայրապետին Ներսիսի: Ի դուք էին ամենայն կեր-  
 պարանափոխ հնարք թաղուցանելոց զայն, որառես  
 աչք հանդուցելոցն ի խոր թափանցիկն, և խահուն հա-

վեցուածք նորա միայն դամենեսեան և սարսափ բէրէնն. ուստի և դարանագործութիւնք նորասիրաց կային կան- դաղեալ երբև զհուր ընդ դադախաւ: Վախճան եհաս կենաց նորա, նոքա իրագործել կամեցան զդադախար մտաց իւրեանց. բայց և չաչնժամ չարեան խոչընդոտք, Սարգիս Յակոբիոզոս և Նաբրէկ վարդապետ Այվաղովսբի, արք հզօրք և բան և ի դեր, արք խորագէտք և կարողք ամենաչնի: «Զլինչ այժմ պարտ է առնել» խորհեցան նոքա. «պարտ է բուռն հարկբանել զհնարեց, նախ զհզօրն կապելոյ, և ապա դուռն նորա աւար հարկա- նելոյ» և զի ըստ վարդապետութեան նոցա և ամե- նայն չարագործաց՝ նպատակն սրբէ դամենայն չան- ցանս, ուստի սկսան դամենայն չարիս կուտել ի վերաց նոցա, զբարտեւելով, հայհոյելով, բամբասելով, զմին կոչելով Ռուսասէր, մարդասպան, չարաբարոյ, խիզմիւսն նոյնպէս առ Ռուսս, հակամէտ և Վաթուրիկութիւն, ան- հնազանդ իշխանութեան, և այլն և այլն. միով բա- նիւ՝ զի թիւրէ զաղս մեր, և արդելու հարկս տալ կայսեր»: Ոհ, ցաւ է ինձ, զի և ես, թերևս և դուք և այլք բազումք, միամտաբար դաւախեց կմք եղեալ դա- ւաճանիցն այնոցիկ, խորհրդով՝ բանիւ և դործով:

«Ի վերջոյ չաջողեցաւ նոցա կատարել զկամս իւ- րեանց: Վարդապետարանք մեր տուան ի ձեռս նոցա՝ հզօրաց կապեցան բերանք և լեղուք, և որք վստահա- նային ճին հանել ընդդէմ նոցա՝ անկանէին ընդ կա- կածանօք. անատրաղիւ նամակք չաճախեցին, և չմնա- ցին չարիք՝ որք ոչ գործեցան, ըստ որում նպատակն սրբէ դամենայն:

«Եւ ահա չայտմ խի ժամանակի դուք ճշմարիտ վար- դապետ, խաչանիչ դրօշ և ձեռնն՝ հրապարակաւ ի չայտ ածիք դամենայն թաղուցեալ որոգայթս որամնացա- նիցդ այդոցիկ և կործանուան աղբի և եկեղեցուց:

«Այժմ ևս ննջելն մեռելութեան է նշանակ. այժմ

պարտ է քաջ գիտել, զի շառաւիղք դոցա ձգին ի ծովէ մինչև ի ծով. այժմ պարտ է հասու լինել, զի զորոց դոքա քիս ամբաստանութեան մատացեալ են, և ամե- նայն հնարիւք թեւախօսեն և ևս արատարել զնոսա, են անձինք պիտանիք աղբի և եկեղեցուց. խի վասն նոցա՝ դահիճք խախանարարք չառաջադիմութեան իւ- րեանց մտաց, զոր ուխտեալ են չառաջ վարել ըստ ա- մենայն հնարեց, ըստ որում նպատակն սրբէ դամե- նայն: Ժամ է արդ քաջ գիտել, թէ հայք ոչ Ռուսա- նան և ոչ Վաթուրիկանան, այլ միայն յեռախիւն. չորում ըստ վարդապետութեան նորասիրաց ամփոփեալ պա- Հին վասն մեր երկրաւոր և երկնաւոր թաղաւորութիւն. եկնաւոր՝ օժանդակութեամբ կրօնակցաց նորընդունելի կրօնի, և երկրաւոր՝ օժանդակութեամբ հաւատոյ՝ ա- ռանց բարի գործոց: Յնորաբան վարդապետութիւն կոր- ծանիչ աղբի և եկեղեցուց: Զչարք բարուցն զոր ոք ունի՝ քաջ ճանաչէ երբ կորնչի:

«Այսօրինակ մուրամիտ վարդապետութեամբ և սնու- տի չուտով պատրեցին երբեմն (սուտ մարդարէք) զժս- զովուզն Խորացիլի ընդդէմ տերող աղբին, զիճեցուցին զսիրտս տիրոզաց, և այնու ամին լինբեանս զբարիու- թիւն Աստուծոյ և մարդկան՝ չանկանդնելի կործանումն իւրեանց ցայսօր ժամանակի:

«Եւ հիշք իցին հնարք դաւաճս առնելոյ այսոցիկ ա- զետից: Ըստ իմ կարծեաց՝ միմիայն ճար է միաբանու- թիւն ամենայն ճշմարիտ աղգասիրաց հոգեւորականաց և աշխարհականաց. թողուլ միմեանց զչանցանս որ սու միմեանս. կոչել չատարեզ դամենայն քանբարաւոր հո- զեւորսկանս. խրախուսել զնոսա, քաջալերել, նաև ա- դաչել՝ առ ի գործ դնել զքանքար իւրեանց չօղուտ և ի պահպանութիւն աղբի և եկեղեցուց: Քնդ կրիցեն զբամք և զբամական հաշիւք. զիւրաւ մարթ է լնուլ զտեղի նոցա՝ եթէ դոց աղբն: Այսուհետև պարտ է

գիտել, զի որք ցանկան զխոճանումն անձին՝ որ իւրովք քանքարօք կարէ զառաջս առնուլ նորադանդութեան, են ի թուոյ տարածողաց զայն վարդապետութիւն՝ զի մահաւորեալ չայլ կերպարան. սատանայ ի կերպարանս օձի: Ի վերջոյ միաբան աղաչեցոյ՛ք զԱստուած ասելով. «Աստուած զօրութեանց, զանրձ, Հայեանց չերկնից և տես. այց արն այգւոյս այսմիկ և զարման տար սմա, զըր անկեաց աջ քս և աչն:»

Ի 26 Դեկտեմբերի 1866 ամի,  
Ի Թիֆլիզի»

### ՅԱԻԵԼՈՒԱԾ Ի.

Պատճէն Ստորամտութեան խնդրադրոյ իշխանաւորաց եւ ժողովրդոց Նախիջեւանի առ Վսեմախալ Ոստիկանն Ներքին Գործոց:

«Առ Վսեմախալ Ոստիկանն Ներքին Գործոց  
«Ի ստորագրեալ բնակչաց քաղաքին Նախիջեւանի.  
«Խնդիր.

«Աչն ժամանակէն որ Թէոդոսիոյ մէջ Աջիպեան Գարբէլէ Վ. Հայրը Հիմնեց Խալիպեան աղգային Հայկական Ուսումնարանը, ինչպէս որ չաչանի է Ձեռք Վսեմութեան, Նախիջեւանի մէջ դանուող ժողովրդեան աչն մասը որ Նախիջեւանի և Պեսարասլոյ վիճակին նոր Առաջնորդէն տժգոհ էր՝ չբողոքեցաւ ամէն տեսակ Հնարքներով նորա ղէմ թշնամաբար և անխղճմտանք կերպով աշխատելէն. և այս խաւարային ու անհիմն թշնամութեան սաստկանալը վերջապէս այս հետեւանքը ունեցաւ որ աչն կուսակցութեան գլխաւորներուն առաջնորդ կեցողներուն անխոնջ և տեսակ տե-

տակ խարդախութիւններովը, նոյն իսկ Նախիջեւանի ժողովրդեան մէջ բաւական բաղմաթիւ Հեռեողներ գտնուեցան. նոցա մեծ մասը չբաւոր, առանց բանին կութիւնը Հասկանալու՝ իրենց տէրութիւն անողներուն կողմը բռնեցին: Սուքա ևս իրենց բռնած ճանապարհաւը մինչև այս ժամանակներս կարողացան նաև աչնպէս անել որ զնոյն իսկ Պատրիարք Վաթուղիկոսը գրգռուեցին մեր վիճակին արժանապատիւ Առաջնորդին ղէմ:

«Չանապան բժականգրութեամբ կարողացան զբարտախնները վերջապէս աչնպէս համոզել և հաւատացնել Վաթուղիկոսին՝ որ իբր թէ մեր վիճակին եկեղեցական կառավարութեանը մէջ Առաջնորդը խիստ շատ անկարգութիւններու տեղիք տուած է. և ահա այս պատճառաւ միայն չուղարկեց Վ. Վաթուղիկոսը այստեղ իբրև վերադննիչ Անդրէաս եպիսկոպոսը, որ հաւանական կարծեօք՝ ամէն Հնարքներով, ևս և անիրաւ ճանապարհներով պիտի ջանար զնա չանցաւոր ցուցանել, մանաւանդ որ ինքն իսկ մեր վիճակին Առաջնորդ մնալու զիտաւորութիւնն ունի: Այս բանս կարողացաւ նա չաչանի անել վերադննութեան ժամանակը նաև իւր քանի մի դործողութեամբքը, որոց մէկն էր, օրինակի համար, այս տեղի Հոգեւորական կառավարութեան անդամները հեռացնելը, և նոցա տեղն ըստ կամի տրելները նշանակելը: Բաց չաչնմանէ, նոյն Անդրէաս եպիսկոպոսին չորդորանօքը այս օրերս քաղաքիս մէջ շինծու աղերսագիր մի պատրաստուեցաւ չանուն Վաթուղիկոսին, որ իբր թէ աղգը չկամենար Գարբէլէ վարդապետին մեր վիճակիս Առաջնորդ մնալը: Աչն աղերսագրին ստորագրութիւնները հաւաքուեցան աներու մէջ և քաղաքի փողոցներուն մէջ, առանց նայելու ոչ ստորագրողաց աստիճաններուն և ոչ իսկ հասակին. այս ևս արին՝ Նախիջեւանի բարեկարգ բնակիչներէն գրեթէ ծածուկ կերպով:

Միւս կողմանէ՝ թէ՛ Նախիջևեան քաղաքին բա-  
րեխորհուրդ Հայերը, և թէ՛ ընդհանրապէս բոլոր  
մեր վիճակին ժողովուրդները, այժմու անձին մեր  
վիճակին Առաջնորդ որչափ ժամանակէն մեծ ա-  
րախութեամբ նոր արշալոյս մի տեսան, և իրա-  
րու աւետիս տուին թէ՛ երջանիկ դարադրուի բացուե-  
ցաւ իրենց առջևը, երբ ունեցան այնպիսի արժանա-  
ւոր Հովիւ եկեղեցւոյ, գիտուն մարդ, իմաստուն և ճար-  
տասան քարոզիչ, փորձառու խրատիչ, դարդարեալ կերպ  
կերպ գերազանց չափաւթիւններով, և մեր չոչնորբ բո-  
ւրբովին արդարացան՝ մէկ կողմանէ նորա բաղձամեաց  
ուսումնական գործունէութեամբը, որ չաջանի է Ներս-  
պայի մէջ, և միւս կողմանէ այժմու և թէ՛ր տարուան  
անխնայ և օգտակար ծառայութեամբը՝ թէ՛ մեր վի-  
ճակին կառավարութեանը մէջ և թէ՛ Թէոդոսիոյ Սա-  
լիպեան Աւսումնարանին ամենաշաջող չառաջադիմու-  
թեամբը՝ չօգուտ Հայ մանկանց: Այժմ ցառով սրտի  
տեղներով սր այս արժանաւոր Հովիւը ամէն կողմանէ  
անդադար իրեն գէմ եղած հալածանքներէն ընկճելով՝  
կտարչարուի, ահամայ կամօք կիսակած իմք թէ՛ մեր վի-  
ճակը մի գուցէ զրիւսի այնպիսի արժանաւոր Առաջ-  
նորդէ մի, որոյ տեղը բռնող չկայ այնպիսի ժամանակ:

«Թէպէտ և Գաբրիէլ վարդապետ Հօր գիտութեանը  
և չաջողակութեանց չարգը ճանաչելը, կամ դաշնո Համ-  
րելը մեր հասկացողութենէն վեր է, սակայն չեմք կա-  
րող լուել և չխոստովանիլ սրչափ օգտակար գործեր որ  
գործուեցան մեր աչքին առջևը նորա առաջնորդու-  
թեան ժամանակը:

«Նախ՝ այս միջոցիս վիճակին գրեթէ ամէն քա-  
ղաքները բացուեցան եկեղեցական դպրոցներ, և այն  
հոյակապ աղբային Սալիպեան Աւսումնարանը՝ որ թէ-  
պէտ և խիստ չափաւոր նիւթական միջոցներով, բայց  
արագ արագ չառաջադիմութեամբը գեղեցիկ դաստա-

կերտ մի եղած է՝ Հայ պատանեաց կրթութեանը հա-  
մար, թէ՛ եկեղեցական և թէ՛ աշխարհական դաստիա-  
րակութեան կողմանէ: Ներքորդ, բաղձաթիւ վաչելչա-  
դեղ տաճարներ կանգնեցան քաղաքներու, գեղերու և  
վանքերու մէջ, և շատն ևս կնորոգուին ներքին և ար-  
տաքին երևելի նորոգութիւններով: Ներքորդ, նորա հո-  
վուական գործունէութենէն, անշահախնդիր վարմուն-  
քէն և անձնական բարեպաշտութեան օրինակէն չոր-  
դորուելով, շատ մարդիկ սիրտ առին առատաձեռն  
նուիրմունքներ անելու չօգուտ եկեղեցեաց և վանո-  
րէից, որոց բարեվաչելչութեամբը չաջանապէս կհաս-  
տատուի մեր խօսքին ճշմարտութիւնը: Նա ինքն կա-  
րելի բարեկարգութեամբ դարդարեց նաև վիճակին եկե-  
ղեցական կառավարութիւնը: Մէկ խօսքով, նորա ան-  
խնայ ջանքովը տարածուեցան և հաստատուեցան ա-  
ւետարանական սուրբ ճշմարտութիւնները, ուղիղ բա-  
րոյշականը, եղբայրսիրութիւնը, և խաղաղասէր միաբա-  
նութիւնը՝ ամէն տեսակ վիճակի և ստախճանի մարդ-  
կանց մէջ, այս բաներս լինելով իրեն խնամոցը և աշ-  
խատութեանց անդադար նպատակ:

«Բացաչաջտ ասրացոյց, և նորա օգտակար գործողու-  
թեանցը չաջանի գործիք են Թէոդոսիոյ մէջ հրատա-  
րակած «Միժո» օրագիրը, և ուրիշ շատ օգտակար գը-  
րուածքներ, որոց նիւթը և բարեչարմար ու ճարտար  
հիւսուածքը ընդհանրապէս շատ գեղեցիկ կերպով չար-  
մարացուցած է մեր աղբին հասկացողութեանը՝ նորա  
այժմու մտաւորական կրթութեան վիճակին նայելով,  
և առատ աղբիւր մի է ամենաաւետալ օգտակար խրա-  
տուց՝ իրբե եկեղեցական և աշխարհական կրթութիւն:

«Սուքա են ահա այն գլխաւոր և նշանաւոր դժա-  
գրութիւնները՝ որովք այս Հովուապետին կառավա-  
րութիւնը կիսալի, և որոյ կեանքը նուիրած լինելով  
միայն չօգուտ հաւարակաց, մեր եկեղեցականներուն

Համար գերազանց օրինակ է քրիստոնէական բարեպաշտութեան և հոյութեան առաքինութեանց, և բարեբար ազդեցութեան ունին ժողովրդեան բարքը շտիկելու, մանաւանդ այնպիսի ժողովրդեան՝ որ այսպիսի աշխատաւորաց և խրատողաց մեծապէս կարօտ է:

«Այժմու եկեղեցական վերադննութեան ժամանակը՝ նաև քաղաքիս գրեթէ ամէն եկեղեցեաց երէցփոխաններուն գործողութեանցը վերայ տեսակ տեսակ կատարածանքներ և անհիմն դանցաւութիւններ ձգուեցան. բայց արդարասիրութիւնը կտախպէ զմեզ որ նոցա Համար ևս ասեմք՝ թէ այն երէցփոխանները ամենահաւատարիմ, կողմնատանքաւոր, և մեր ժողովրդեան առջև իրենց բազմամեայ աշխատութիւններովը մեծ պատիւ ունեցող մարդիկ լինելով, այնպիսի երէցփոխաններ են որ մեր եկեղեցիներուն օգտին Համար՝ անշահատէք ջերմեռանդութեամբ կաշխատին ամէն կողմանէ, այնպէս որ վաղուց արժանի եղած են ժողովրդեան լիակատար շնորհակալութիւններուն, և ամէն ժամանակ բարեհամբաւ դատուած են մեր մէջ:

«Վերջգրեալ Հանդամանքը, որ ամենայն Հայոց ընդհանրապէս ցաւալի են, և չատկապէս մեզ բնակչացս Նախիջևանի, ձեր Վսեմութեան բարեգութ մտադրութեանը առջև դնելով, մեզ պարտք կհամարեմք խնդրել խոնարհաբար որ արժանի Համարեք ամենայն վստահութեամբ հաւատալ նոցա, և ընդունել իբրև անկեղծ ճշմարտութիւնք՝ որ այս տեղ չիշուած գործերով կհաստատուին, և ոչ թէ իբրև անպիտան պտուղ կողմնասիրութեան այնպիսի մարդկանց՝ որ այս կամ այն կուսակցութեան կվերաբերին, թէպէտ և այս աղերսագիրը բազմաթիւ ստորագրութիւններ չունի:

«Միանգամայն կխնդրեմք որ Ձեր Վսեմութեան ամենահարկաւոր ազդեցութիւնը բանեցընէք և գործակեց լինիք՝ որ Այվաղեան Գարբիէլ վարդապետ Հայրը

Եպիսկոպոսական ձեռնադրութիւնը առնու՝ իբրև մեր եկեղեցւոյ յոյժ արժանաւոր Հովիւ: Եւ վերջապէս, եթէ որպիսի և իցէ անակնկալ պատճառներով այս մեր բարձր Նախիջևանի և Պետարապետի վիճակին Հայոցս վիպութիւնը, որ այսպիսի դիպուածոց մէջ հիմն կառնուի իբրև վաւերագիր, ևս և Ձեր Վսեմութեան արդարացի միջնորդութիւնը, բաւական չլինին Համոզելու զՍրբազան Վաթուղիկոսն որ բարեհաճի մեր խնդիրը կատարելու, գարձեալ չցրիէք զմեզ մեր Արժանապատիւ Հովուապետին՝ Այվաղեան Գարբիէլ վարդապետին, այլ Ձեր հոգը միջնորդութեամբը առաջի Աթոռոյ ՕԳՈՍՏԱՓՈՒ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ՝ Հաստատէք Գարբիէլ վարդապետ Հայրը մշանջնաւոր Առաջնորդ վիճակիս՝ նաև նորա այժմու առախճանին մէջ. վասն զի ըստ կանոնաց Հայաստանեաց եկեղեցւոյ՝ վարդապետական ատախճանը չէ կարող արդէլը լինել վիճակի կառավարութեան. և այս բանիս օրինակ կարող է լինել նաև այն՝ որ մեր Խրիմու թերակողիէն գաղթականութեամբ ելած ժամանակը՝ մեր նախնեաց Հողեւոր Առաջնորդ Պետրոս Մարկոսեանը վարդապետ էր:

«Այս վերջի կարգադրութեամբ սահման կղբուի վերադննիչ Անդրէաս Եպիսկոպոսին փառասիրական ջանքերուն, և Գարբիէլ վարդապետին դէմ աշխատող կուսակցութիւնը՝ որ բոլոր վիճակիս քաղաքներէն միայն Նախիջևանի մէջ է, երբոր Անդրէաս Եպիսկոպոսին պաշտպանութենէն ու գրգռութենէն ազատ մնաց, դիւրաւ կիմանայ իրեն անիրաւութիւնները. իսկ մեք և մեզ հետ վիճակիս բոլոր Հայ բնակիչները կունենամք մեզ կառավարիչ հոգեւոր այնպիսի արժանաւոր և շատ կողմանէ օգտակար Հովիւ մի, որպիսի է Գարբիէլ վարդապետը, որ այժմու ժամանակս պարծանք է բոլոր ազգին, և որոյ ձեռքովը չատկապէս Խալիպեան ազգային Ուսումնարանը, որ մեր ազգային լուսաւորու-

Թեան տաճարն է, ևս քան զևս Հաստատուելով իւր  
հիմանցը վերայ, աւելի լաւ կերպով կճառայէ բոլոր  
ազգին լուսաւորութեանը:

«Ոչ աւելորդ կհամարեմք այս տեղ աւելցնել ո՞ր  
Ժողովրդեան մէջ ուրիշներուն միտքը գրգռող և այս-  
պիսի վնասակար ալէկոծութիւններ ելնելուն պատճառ  
կերևան երկու կամ երեք անձինք, որ քաղաքիս մէջ  
զիւրահաւան մարդոց առջևը համարում ունին, և ի-  
րենց ազդեցութիւնը ի չարն կրանեցնեն. ուստի եթէ  
այն անձինքը հասարակութեան գործերուն կառավա-  
րութեանը մէջ մաս ունենալէն հեռանային, չիրաւի  
կարելի էր ճշմարիտ երջանկութիւն պատրաստել:

«Ի վախճանի կհամարձակեմք չուսալ՝ որ Ձեր Վսե-  
մութիւնը կարեհաճի մեր հասարակութեան այսպիսի  
ցանկալի և անհրաժեշտ հանդստութիւն մի պատճա-  
ռել, և ետ չկենար բարեգութ մտադրութեամբ փու-  
թացնել այս մեր խոնարհական խնդրոյն կատարումը,  
և իւր Բարձր իշխանութեամբը կարգադրութիւն մի կանխ-  
նելթոյն ծանրութեանը և մեծութեանը համեմատ, և  
հետևանքը կխնդրեմք ծանուցանել մեզ ի ձեռն Բա-  
րեկարգչի քաղաքիս Նախիջևանի որ առ Տօն գետով:—  
Յամսեանն Հոկտեմբերի 1864 ամի, ի քաղաքն Նախի-  
ջևան առ Տօն գետով:»

### Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Մ Ը .

Պատմէն նամակին Յարուիւն վարժապետի Յակոբեան:

«Յմենապատիւ Հայրախնամ Սրբազան Տէր իմ.  
մաքուր սուրբ գարշապարացի  
համբոյր խոնարհութեան.

«Ո՛ր տալը ինձ ի ժամուս՝ չորում բաղնութիւն բա-

րերարեալ Որդւոց պարսոեալ շուրջ զԱնձամբ Սրբազ-  
նութեան Ձերոց շնորհաւորեն զսերկեանս Տօնախմբու-  
թիւն (սրբոց Հրեշտակապետաց), սլանալ մատչիլ և ինձ  
ի բացուստ աստի, և նոցին բարեմաղթութեանց լինել  
ճաչնակից,

«Այլ զի՝ թէպէտ և խտրոց տարակալութեանն բազ-  
մօրեայ, բաց և իղձ հոգւոյս սրաթուի սրանայ առ  
Ձեզ սիրաղէմ, ընկալարնէք ապա զտկարս զայս զթարգ-  
ման նորին՝ որ մաղթէ վասն Ձեր—թէ և անարժան  
չթամբք—բաղում ամս երջանկաւէտ կենաց, և յաղ-  
թանալ փառաւոր ի տարժանելի և յանձնուբաց զոհո-  
ղութիւնս Ձեր յԱզգիս լուսաւորութիւն, խնդրելով մի-  
անգամայն ներողամտութեան արժանի կացուցանել՝  
իբրու որ զմետասաներորդ ժամու եկեալ մշակացն սպա-  
սահարկութիւնս:—

«Սրբազան Տէր իմ, որչափ ինչ չուսապատար ցնծու-  
թեամբ զուարճանալի չանձին ընդ յառաջադիմութիւն  
ազգալոյս Ուսումնարանիդ, փորձով որդեկաց մերոց ի  
սակաւուն զբաղումն իմաստասիրեալ, նոյնչափ և ընդ-  
հակառակն կարելիք ցաւեցաք, լուեալ եթէ ազգա-  
կործան նախանձ հակառակախրաց ոմանց չայն աստի-  
ճան վշտացուցին զԱզգասէր սիրտ Սրբազնութեան Ձե-  
րոց, մինչև ձեռնթափ լինել ի վերատեսչութենէ Ու-  
սումնարանիդ, և բարձի թողի առնել զայնչափ վայրա-  
վատին մանկունս Հայաստանի, որք իբրու զմատաղերամ  
գառինս Քաջի Հովուի պատահեալ՝ ընդ Ձերովք խնա-  
մարկութեամբ ի մարդս իմաստութեան երջանկաբար  
մակաղէին:—

«Յայս իսկ վեր ի վերոյ և որդեկին իմոց ի գրութեան  
իւրում աղնարկեալ՝ հակերձ բանիւք չաւելու զիւրն  
զայս սրտարուխ և որտաճմլիկ խորհրդածութիւն. «Ու-  
րեմն հասան այն ժամանակները որ կրկնեմք Խորե-  
նացոյն արտասուական խօսքերը՝ (Ողբում զքեզ Հա-

չոց Աշխարհ). Թշուան Ազգ, Թշուան Ժամանակ»:  
 Այսօրինակ Հառաչանօք ս զխաչ Թէ սրջափ և քանի սիրտք երախտագէտ աշակերտաց դառնապէս ճմլին. ընդ որս և վիմեղէն սիրտք անգամ չկարկեցն Թերևս անկարեկիր գտանել:—Սս ինքն Թէպէտե ապարզին ոմն և անբաղդաւոր գլխովին՝ արդեամբ փոխարկնելոյ բաղմապատիկ երախտեաց Ձերոց, որով և քաջալեր ունիցիմ առանձին խնդիրս չաւելուլ վասն որդեկին իմոյ, բաց և ընդ զրիւմն առհասարակ այնչափ սերասուն Սանից և Բարեգութ Հօրէդ իւրեանց՝ չկարացեալ անկարեկիր լինել, զմարգարէն փոխաբերաբար և բերան առնում, և մեծաւ Թախանձանօք Հացցեմ և աղերսեմ, «Ա՛յց արա այդուոյդ այդմիկ, և դարման տար դմա զոր տնկեաց այ ջր»:

«Մի չաղթեսցէ Նախանձ չարատիրացն աղբօղուտ եռանդեան Սրբազնութեան Ձերոյ: Մի վհատիք, Ա՛գ դասէր Տէր իմ, և բարերարելոյ ընդհանրութեան տառապեալ Աղբիս և պատճառս ապերախտութեան կամ չար նախանձու խռովասիրաց ոմանց, որպիսիք ոմանք դժբաղդաբար ամենայն ուրեք և չամենայն ժամանակի անպահաս գտանին. չորոց և դուրս արդարադասն ապագայ ըստ արժանի գործոց իւրեանց քարնս կուտեսցէ անիծից, և Ձեր օրհնեսցի Անուն և չեշատակ և կրկնակի կեանս և դարուց և դարս:—

«Այսու ամենայնիւ խնդրելով ներողամիտ լինել չանգուղն Համարձակութեանս, և զայցելութիւն Վեւրին Տեսչութեանն և վերայ Թշուառացեալ Աղբիս արտասուախառն մաղթանօք Հացցեալ, նա մանաւանդ Թէ և ողջանձնութեան Վսեմական Անձին Ձերոյ և սրտէ լեալ ըզձալաւ, մնամ միշտ

«Ամենապատիւ Սրբազնութեան Ձերոյ  
 Խորին երախտագիտութեամբ Բարեպապարտ  
 և ամենախոնարհ ծառայ

«1865 Նոյեմբեր 6. Յարութիւն Մ. Յակոբեանց»  
 և Պօթուշան»

### Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ն Թ.

Նամակք երկու տու Գահերէց Յանձնաժողովոյ կարգելոյ և վերազննութիւն Խալիպեան Ուսումնարանին, տու գընդապետն Քավելին, եւ պատասխանի նորա:



Առ Տէր Համհարզն Վեհափառ Կաջսեր, առ Գնդապետն Քավելին.

18 Մայիսի 1865, և Նախիջևան.  
 Թ. 285.

«Ըստ զօրութեան Հրամանագրոյ Ոստիկանին Ներքին Գործոց առ իս և 14 Մարտի 1865 ընդ Համարաւս 450, յորում ասուած է Թէ Ձեր Աղնուութեանը չանձնուած է նաև փնտուել գտնել այն միջոցները՝ որ Հարկաւոր են Խալիպեան Ուսումնարանին այսուհետև ևս առաջ երթալուն, կենդրեմ խոնարհաբար ոք երբ սկսիք քննել այն խնդրը՝ Թէ արդեօք ինչ հնարքներով կարելի է ուսումնարանին ապագայ կացութիւնը ապահովել, բարեհաճիք աչքերնուդ առջև ունենալ իմ այս նիւթիս վերայ արած առաջիկայ խորհրդածութիւններս.

«Ա) Որովհետև ուսումնարանին արկղը մտնելիք գումարները անկանոն կերպով և ուշ ուշ կուգային, և ընդհանրապէս ուսումնարանին պահպանութեանը համար պէտք եղած ու եկեղեցական եկամուտներէն ու աշակերտներուն թոշակներէն սպասուած գումարները ոչ բաւական էին և ոչ սրտեալ, ուսումնարանը այս վերջին երեք չորս տարուանս մէջ անդադար նեղութիւն քաշեց ստակի կողմանէ՝ իւր կարօտութիւնները հոգալու համար, ուստի և չկարողացաւ պարտքի տակ չքննիլ: Այժմ

Ուսումնարանին պարտքերուն գումարը 10,000 ըուպլիկ կհասնի. և այս պարտքերը մեծ վնաս են ուսումնարանին՝ ոչ միայն ըստ նիւթականին՝ արդէր լինելով նորա կառավարչին գործունէութեանը, և ստիպելով զինքն որ անդադար ուսումնարանին տարեկան եկամուտներէն վճարէ առաջին պարտքերը, այլ և ըստ բարոյականին, որով ուսումնարանին հաւատարմութիւնը կկորսընէ, և պատճառ կուտայ նորա վերայ պէսպէս ճակողակ կարծիքներ տարածուելու հասարակութեան մէջ: Ուսումնարանը իւր այժմու բաղմամբ զրութենէն դուրս հանելու համար, անպատճառ հարկ է՝ ոչ միայն նորա ասպիտակ հաստատութեանը ճարերը մտածել, այլ և պարքերը վճարելուն հոգը քաշել որքան կարելի է շուտով: Վասն զի առանց նոցա վճարմանը կարելի չէ՝ ոչ վերոյիշեալ նեղութիւններէն ու վնասներէն ազատել ուսումնարանը, ոչ կանոնաւոր ճշգրութեամբ բռնել նորա հաշիւները և ոչ խի նորէն բանալ ուսումնարանը առաջիկայ ամսանային արձակուրդէն չետոյ, և դասախօսութիւններն առաջ տանել ուսումնական տարեգլխէն:

«Բ) Ընդհանուր կանոն այս դնելով որ թէ Խալիպեան ատուած սաները, և թէ եկեղեցական գումարներով պահուող աշակերտները պէտք է անպատճառ լեռնահանքի համարել, որոց համար ուսումնարանի արդը պետի մտնէ՝ իւրաքանչիւրէն տարին 250 ըուպլի, հարկ է սահմանել որ թէ Խալիպեան և թէ եկեղեցական սաներուն թիւը այնքան լինի՝ որքան որ է նոցա համար ընդունուած փողը Պ. Խալիպեանէն, կամ նորա նուիրած կալուածներուն եկամուտներէն, ևս և եկեղեցական դրամագլուխներէն ու եկամուտներէն:

«Գ) Երբոր Խալիպեան Ուսումնարանին համար եկեղեցական դրամագլուխներէն ու եկամուտներէն այսքան գումար առնուելիքը որոշուի, կարելի չէ առանց

մտադրութեան թողուլ այս պարագան՝ որ եկեղեցական դրամոց խնդիրը թէ մինչև իմ ժամանակս և թէ այնուհետև անդադար պատճառ եղած է գանգատանաց, կուլենելու և խռովութեան Նախիջևանի բնակիչներուն ու նորա գեղերուն ժողովրդոցը մէջ: Որպէս զի այնուհետև ևս այնպիսի գանգատներ չպատահին, կարծեմ թէ կարելի է Խալիպեան Ուսումնարանին քով բանալ *«-ճամնալ»* եկեղեցական դպրոց (Սեմինարիա), որում Նախիջևանի և Պեսարապիոյ վիճակը մեծապէս կարօտութիւն ունի, և միանգամայն բաւական փող չունի այժմու ժամանակս բանալու դաշն: Եկեղեցական դպրոցը կարող է բացուիլ Խալիպեան Ուսումնարանին քովը այս պայմաններով:

ա, Եկեղեցական դպրոցը Խալիպեան Ուսումնարանին հետ միանայ *«-ճամնալ»*: Ի մինչև որ կարելի լինի առանձին եկեղեցական Դպրոց (կամ Դպրեվանք) բանալ Նախիջևանի և Պեսարապիոյ վիճակին մէջ:

բ, Եկեղեցական դպրոցի աշակերտներուն թիւը 20-էն աւելի չլինի, ամէնքն ևս եկեղեցականաց որդիք, և վիճակին ամէն եկեղեցիներն ու վանքերը պարտաւորուին նոցա դասախարակութեանն ու սննդին համար վճարել Խալիպեան Ուսումնարանին տարին 8,000 ըուպլի, որ կարող է օրինակի համար՝ այսպէս բաժնուել եկեղեցեաց ու վանքից վերայ.

Նախիջևանի և Պեսարապիոյ եկեղեցիներէն.	4,000
Փեթերպուրկի և Մոսքուայի եկեղեցիներէն.	2,000
Հին Խրիմու վանքէն . . . . .	1,000
Քիչնէի եկեղեցական կալուածներէն . . . . .	1,000
Ընդ ամենայն	8,000

գ, Եկեղեցական դպրոցին աշակերտները քանի որ Խալիպեան Ուսումնարանին մէջն են, մինչև Ն դասարանը ուսումնարանին աշակերտացը հետ աւանին նոյն առարկաները. չետ այնորիկ սկսին սովորել բուն եկեղե-

ցական առարկաները, և միանգամայն Չ դատարանի ուսումնաբեր, շարունակելով այնուհետև աստուածաբանական ուսումը և յունաց և լատինաւոց լեզուները սովորելը չորս տարի, երկու աստուածաբանական դասարանի բաժնելով այն ուսումնաբեր:

դ, ՆԹԷ մեւ Հայոց վեճակներէն պատանիք ցանկանան Նկեղեցական դպրոցին մէջ ուսում առնուլ, կարենան ընդունուիլ, բայց տարին 250 ըուպլի վճարելով: Նւ

ե, Ինքնին կիմացուի որ Նկեղեցական դպրոցին Խալիպեան ուսումնարանին մէջ կամ մօտ բացուելովն ևս՝ եկեղեցական լեշանութիւնը պետի չկարենաց խառնուիլ նորա կառավարութեանը, կամ ուսումնարանին անտեսական և ուսումնական մասին, այլ միայն ընդհանուր վերադիտողութիւն կարենաց ունենալ կրօնագիտութեան և աստուածաբանական ուսմանց դաստիարակութեանը վերայ:

«Գ) Ուսումնարանի շէնքին նորոգութիւնը և ձեռք ու կառաց պահպանութեան ծախքը ըստ մասին մնացած էին Պ. Խալիպեանին վերայ, որովհետև ուսումնարանին չքաւորութիւնը չէր թողուր որ այդ նիւթերուն ծախքերն ևս հոգայ: Մեծ թեթեւութիւն կլինէր ուսումնարանին՝ եթէ շէնքին նորոգութեան ու ձեռք և կառաց պահպանութեան ծախքերը այսուհետև ևս Պ. Խալիպեանը իւր հաշուին առնուր:

«Ե) Ուսումնարանը չունի Թանգարան ընդհատութեան, վայելուչ Մատենադարան և հարկաւոր կահ կարասի: Մնապատճառ պէտք է ճար անել որ ընդհատութեան Թանգարանն ու Մատենադարանը կազմուին, և նոցա պահպանութեանը համար տարեկան դուժար մի սահմանուի, նմանապէս հարկաւոր կահն ու կարասին առնուի:

«Զ) Ուսումնարանին պահպանութեանը համար ե-

կեղեցական դրամագլուխներէն ու եկամտաներէն առնուելու դուժարը որոշելու ժամանակ, պէտք չէ նոցա մէջ սեպել և ոչ փոքրիկ մաս մի վիճակին ասուած արդիւնքներէն, որովհետև սոքա իրենց սեպհական նպատակներն ունին, և ես միայն վերջին աստիճանի հարկաւորութենէ ստիպեալ՝ դորձածեցի զայնս ուսումնարանին վերայ. վասն զի վերջին ժամանակներս ուսումնարանը շատ անգամ կարօտութիւն կբաշէր առաջին կարգի հարկաւոր բաներուն, և ես կատիպուէի՝ ինքզինքս աստիկ նեղելով ուսումնարանին ծախուցը համար տալու խիստ շատ անգամ ոչ միայն վեճակային դրամները, այլ և իմ անձնական պարուստիս համար կամ առաջնորդարանի պահպանութեան համար որոշուած ռոճիկը՝ զոր տէրութեան գանձարանը կվճարէ ի փոխարէն վեճակիս եկեղեցիներուն ու վանքերուն պատկանեալ գետններուն: Նւ

«Է) Նս կցանկամ այսուհետև բարձրովին ձգել իմ վերադէս ուսումնարանին անտեսական մասին հոգը, ամէն բան չանձնելով անտեսական խորհրդարանին և ուսումնարանի Տեսչին, և ինձ պահելով միայն վերջին հաշուատեսութիւնը և ծախուց վերադիտողութիւնն ու քննութիւնը:»



Մեծարդոյ Տէր,  
Ալեքսանտր Ալեքսանտրովիչ (Քալիլին.)  
և 14 Յուլիսի 1865, Թէտրոսիա:

«Մայիս 18-ին ընդ 285 համարու դրած նամակէս յայտնի է ձեզ Խալիպեան Ուսումնարանին այժմու վրտանդաւոր դրութիւնը՝ չորում կգտնուի վերջի տարիներս վերան գիպուած պարտքերուն պատճառաւ: Նորահետ ի միասին առաջարկեցի խոնարհաբար նաև իմ

մտածութիւնքս՝ որովք կցուցանէի թէ անպատճառ հարկաւոր է ճար մի անել ուսումնարանին պարտքերը ըստ կարի շուտով վճարելու, «...անց նայելու այն կողմն» թէ նորս աստիճան պահպանութեանը համար ինչ միջոցներ գործելու է, որովհետեւ անկարելի է՝ առանց այն պարտքերը վճարելու ոչ ուսումնարանը բանալ և ոչ ուսման ընթացքը սկսել առաջիկայ ուսումնական տարւոյն մէջ: Գրել էի այն ժամանակը թէ ուսումնարանին պարտքերը 10,000 ռուպլի կհասնին. բայց այն միջոցին ուշ չէի դրած այն փողերուն որ անտեւ առաջ փոխ առել էի ուսումնարանին համար, ինչպէս նաև այն ծախքերուն որ եղան մինչև այս տարւոյս վերջերը, այնպէս որ ուսումնարանին պարտքերը՝ ճիշդ հարուստեսութեամբ՝ կհասնին այժմ ոչ թէ 10, այլ 15,087 ռուպլի և 97 քոփէքի:

«Վերջիշեալ նամակիս մէջ յայտնել էի այն պատճառները՝ որովք Խալիպեան Ուսումնարանին անկարելի եղած էր պարտքի տակ չմտնելը. այժմ այս ևս պէտք է աւելցնեմ՝ թէ ուսումնարանին պարտուցը շահանալուն մեծապէս պատճառ եղաւ վերջին տարիներս լիաթողակ աշակերտաց պակսիլը. սորա ևս պատճառ էր նախ՝ այժմու Ս. Կաթողիկոսին ինձ դէմ և ուսումնարանին դէմ հանած անդադար հալածանքը, որովհետեւ ուսումնարանին վերայ ամէն ժամանակ և յայտնապէս դէշ համբաւներ կտարածէր Հայոց մէջ՝ ոչ միայն ի Ռուսաստան, այլ և ի Տաճկաստան: Երկրորդ՝ փողի պակասութիւնը, և առուտուրներուն ամէն տեղ դադարումը, մինչդեռ յայտնի է որ Հայերուն գրեթէ միմիայն զբաղմունքը առուտուրն է: Իրենց գործողութեանցը մէջ նեղութիւն քաշելով՝ հարկաւ չէին կարող իրենց զաւակները Խալիպեան Ուսումնարանը տալ, և նոցա համար թողակ վճարել:

«Ուսումնարանին պարտքերուն շահանալը սաստիկ

միասակար ազդեցութիւն ունեցաւ նորա չառաջադիմութեանն ու ծաղկելուն վերայ, որովհետեւ անով հասարակութեան մէջ քանի գնաց աւելի հաստատուցաւ այս անախորժ կասկածը՝ թէ առաջ երթալու բան չէ ուսումնարանը, և վերջին աստիճանի դժուարացաւ նորա գործերուն կառավարութիւնը ամէն կողմանէ: Վասն որոչ ուսումնարանին շարունակութեանը՝ այս վիճակիս մէջ՝ առանց անպարտ և անբերի հատուցման պարտուց նորին, բացարձակապէս անկարելի կըլինայ:

«Եթէ դարձեալ սկսեմք խորհրդածել՝ թէ արդեօք ինչ կերպով կարող է ուսումնարանը ազատել իւր պարտքերէն, ևս իմ կողմանէս այս դրութեան մէջ ամենեւին սպահով միջոց կամ աղբիւր չեմ գտներ: Վասն զի

«Ա) Եկեղեցական գումարները, որովք մինչև ցաժմ դիտաւորապէս բացուեցաւ և պահուեցաւ ուսումնարանը, սպառեցան, և անկարելի է ասել թէ նոցամով պէտք է վճարուին նորա պարտքերը:

«Բ) Այս բանիս համար փոխ ստակ առնուլը ինձ համար ամենադժուար ու ամենածանր գործ է, և ոչ միայն ինձ՝ այլ և նոյն խի ուսումնարանին, որովհետեւ դժուար բան է գուշակելը թէ նա իւր փողերովն, ու եկամուտներովը կարողանայ առած փոխը հատուցանել՝—թէ և կարենայ փոխ ստակ գտնել—ևս և շատ ժամանակի վերջը:

«Գ) Գուցէ կարելի էր առանձին դրամաժողով մի բանալ յօգուտ ուսումնարանին այս վիճակիս մէջ՝ նորա պարտքերը վճարելու նպատակով. բայց կարելի է հաստատ կերպով ասել՝ թէ այնպիսի դրամաժողովը բոլորովին անտեղի բան պիտի երևնայ. վասն զի ամենայն Հայք ևս իրաւամբ կհամարին՝ թէ որովհետեւ Պ. Խալիպեանը կվայելէ այն ուսումնարանին վերայ իւր անունը գնելու պատիւն ու այդ բանին համար իրեն

տրուած իրաւունքը, ինքը միայն պարտական է նաև նորա ամէն ներթախան պիտոյքը հոգալ: Եւ

«Պ) Գուցէ կարելի էր խնդրել Պ. Սալիպեանէն որ ինքը վճարէ ուսումնարանին պարտքերը, կամ իբրև փոխարինութիւն նորա՝ որ չորս տարի 20 հատ Սալիպեան սանք կըթուեցան ուսումնարանին մէջ էլեդէյոյն Գուգուլ, կամ իբրև նոր մէկ նուէր իբրև կողմանէ ի նրպատ ուսումնարանին, և կամ գոնէ փոխատուութեամբ զոր ինքն անէր ուսումնարանին՝ ինչ պայմաններով որ պատշաճ տեսնէր:

«Միայն այս վերջին հնարքով չոյս մի կերևէր ուսումնարանին իւր նեղ վիճակէն դուրս ելնելուն. ուստի և գրաւոր առաջարկութեամբ դիմեցի ես Յունիսի 19-ին առ պ. Սալիպեանն: Բայց նա հեռագրով պատասխանեց ինձ բացարձակ կերպով թէ ամենեւին չեմ կարող ուսումնարանին համար փող վճարել, և ոչ ընդունիլ առաջարկութիւններէդ և ոչ մէկը, թէպէտ և ես իրեն իմացուցել էի թէ անպատճառ պիտի փակուի ուսումնարանը՝ եթէ պարտքերը չվճարուին:

«Այս տարուան հարցաքննութենէն յետոյ ուսումնարանէն արձակուեցան 85 աշակերտ, որ զանազան տեղեր գնացին՝ հանգստեան օրերը իրենց ծնողացը կամ ազգականներուն մօտ անցընելու, որով այժմ միայն 23 աշակերտ մնաց ուսումնարանին մէջ: Այս բանէս առիթ առնելով՝ միտքս դրել եմ որ այս պարագայից մէջ ինձ մնացած մի միայն հնարքին ձեռք դարնեմ. այսինքն հրատարակեմ ամէն տեղ թէ Սալիպեան ուսումնարանը «Գուգուլ» է փակուեցաւ. մնացած 23 աշակերտներն ևս իրենց տները ճամբեմ, և արդէն գնացածներուն ծնողացն ու ազգականացը իմացընեմ որ նորէն ուսումնարան չյուզարկին զնոսա՝ մինչև որ նոր կարգադրութիւն մի չլինի:

«Բայց այս վերջին մտածութեանս կատարում տա-

լէն առաջ՝ ինձ պարտք համարեցայ իմացընել Ձեզ իմ միտքս, Սեծարգոյ Տէր, և խնդրել խոնարհաբար որ Վսեմափայլ Ոստիկանին ներքին Գործոց ծանուցանէք այս իմ նամակիս միտքը, և թէ ուսումնարանին պարտքերուն պատճառաւ քաշած նեղութենէս բռնադատուած եմ ուսումնարանը առժամանակ մի փակելու: Թէպէտ և կհամարեմ թէ Վսեմափայլ Ոստիկանը արդեւ մի չգտնէր Սալիպեան Ուսումնարանը փակելու համար ունեցած հաստատ գիտաւոտութեանս կատարմանը, այսու ամենայնիւ խոնարհաբար կխնդրեմ որ նորա որոշումը հարցանէք ընդունիք, և հեռագրով իմացընէք զայն ինձ, որպէս զի և ես ժամանակ ունենամ պէտք եղած կարգադրութիւններն անելու:

«Սալիպեան Ուսումնարանին փակուելը աշակերտաց ծնողացն ու ազգականացը իմացընելէս յետոյ՝ մանրամասն տեղեկագրով կղեմեմ առ պ. Ոստիկանն, և նորա մէջ կառաջարկեմ իմ դիտաւորութիւնս՝ թէ Սալիպեան ուսումնարանին փակուելը կարող է արդեւ չանել դարձեալ թէոդոսիոյ մէջ «Առանձին Հայկական Ուսումնարանին» մի գտնուելուն՝ իբրև Բուրուլին «Գուգուլ» դպրոց, հիմնեալ ի Թէոդոսիա չափաւոր մեծութեամբ և ըստ չափու կարողութեամբ. որ և իմ ձեռքիս տակը, և նոյն կանոններով որ դրուեցան և հաստատուեցան՝ իմ առաջարկութեանս համեմատ պ. Սալիպեանին նուիրմունքէն ևս առաջ, շուտով կարող է ամենայն Հայոց վստահութիւնը ձեռք բերել և չարջողութիւն գտնել:»

Այս երկրորդ նամակը առնելէն յետոյ՝ Պ. Բալիւլինը հեռագրով իմացուց վարդապետին որ «Ուսումնարանին փակման կարգադրութիւնը կխնդրեմ որ չանէք. պարտքերուն վճարման հնարքներուն վերայ «շուտով անձամբ կխօսիմ հետեւիդ:»

Յետոյ երբոր Փեթերպուրկէն հասաւ Ռոսթով՝ հետագայ նամակը դրեց վարդապետին.



«Գերապատիւ Տէր,

Շնորհազարդ Հովուապետ.

«Ունելով ի նկատի այնպիսի դրական ապացոյցներ որ Վեհափառ Կայսեր Հաստատութիւնն ընդունած են՝ թէ Խաչկախան ուսումնարանը առաջ պիտի երթայ, և նիւթական միջոցներու կողմանէ ապահովութիւն պիտի ունենայ, ես Ձեր Գերապատուութեան այս նիւթիս համար գրած նամակն որ առև՝ ինձ պարտք կհամարեմ խնդրել Ձեզնէ, Շնորհազարդ Հովուապետ, որ բարեհաճիք Ձեզնէ կատեալ կարգադրութիւնն անել՝ որպէս զի ծնողք Հրաւերուին իրենց որդիքը՝ որ արձակման միջոցին իրենց տները դարձել են՝ չուղարկել յաշակերտութիւն ուսումնարանին, և ընդհանրապէս Հաստատել Հայոց միտքը այս բանն զերայ՝ թէ Վեհափառ Կայսեր բարեհաճութեամբը այն ուսումնարանին գոյութիւնը ապահովեալ է: Այս գործին մանր հանգամանքը քիչ ժամանակէն Ձեր Գերապատուութեան հաղորդելու պատիւը կունենամ՝ երբոր սորա վերայ պէտք եղած պաշտօնական թուղթն ընդունելմ:

Ընդունեցէք և այլն.

20 Օգոստոսի 1865,  
Ի Ռոսթով:

Ա. Քավելին:

Այս նամակը հարկաւ առանց պատասխանի մնաց, վասն զի այն ատեն հասաւ (Օգոստոսի 29-ին) վարդապետին ձեռքը՝ երբ նա վաղուց կարգացած էր օրաց գրաց մէջ իւր արձակման լուրը:



### ՀԱՆՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ ԱՇԱԿԵՐՏԱՑ

ԽԱՂԻՊԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ

### Թ Է Ո Դ Ո Ս Ի Ո Յ.

- 1 Սգ. քերմանցեան Մեքայէլ
- 2 Ալաճալեան Գալուստ
- 3 Ալաճալեան Ղուկաս
- 4 Ալաճալեան Մարկոս
- 5 Ալաճալեան Մինաս
- 6 Ալելով Գաւիթ
- 7 Ալթունճեան Կոստանդին
- 8 Ալթունճեան Աղեքսանդր
- 9 Ալթունճեան Յովսէփ
- 10 Ալթունճեան Վարդերէս
- 11 Ալթընթովեան Գրիգոր
- 12 Աղամալեան Յովհաննէս
- 13 Սճեմեան Տիգրան
- 14 Սմատեան Կարապետ (Սարկաւազ)
- 15 Աստուածատրեան Յովհաննէս
- 16 Արութեան Սիմէոն
- 17 Աւաղեան Մկրտիչ (Գպիւր)
- 18 Աւալեան Մատաթիա
- 19 Ա՛ջնասեան Միմէոն
- 20 Բաղրատունի Արսէն (Քաչանայ)
- 21 Գալեմբարեան Գրիգոր
- 22 Գարգիւբեան Սուքիաս
- 23 Գանձապետեան Մարտիրոս (Քաչանայ)
- 24 Գանձապետեան Նիկողայոս (Գպիւր)
- 25 Գուրգէնբէկեան Ստեփաննոս
- 26 Գեղամեան Յովակիմ (Քաղաքազլուխ)
- 27 Գաւթեան Եփրեմ (Նիկարիչ)
- 28 Եղապարեան Մկրտիչ
- 29 Եղեազարեան Բարսեղ
- 30 Էթիպեան Յովհաննէս
- 31 Էպէյեան Միկայիլ

Տեղի բնակութեան

Նոր-Նախիջևան.

>

>

>

>

Տփլիս

Թէոդոսիա.

>

>

>

>

Սգուլիս

Կ. Պոլիս

Քիշնև

Սգ. քերման

Թէոդոսիա

Հնչեշտ

Գանձակ.

Երևան.

Տփլիս.

Տրապիզոն.

Նոր-Նախիջևան.

>

>

Տփլիս.

Ախալցխա.

Հին-Ջուղա.

Հին-Խրիմ.

Երևան.

Օսեսա.

Կ. Պոլիս.

- 32 Երեւեան Յովհաննէս
- 33 Թոբեան Յովհաննէս
- 34 Թուֆլիկեան Գալուստ
- 35 Խմանով Աղեքսանդր
- 36 Խահակեան Աղեքսանդր
- 37 Լաղարեան Գրեղոր
- 38 Խաղանձեան Բարսեղ (Քահանայ)
- 39 Խաթրանեան Պողոս
- 40 Խաչատրեան Խաչատուր
- 41 Խաչինեան Մարտիրոս
- 42 Խաչինեան Խաչիկ
- 43 Խոճայեան Գարբրէշ
- 44 Խոճայեան Աղեքսանդր
- 45 Խոճապարոնեան Կարապետ
- 46 Խուպեան Աղեքսանդր
- 47 Խուճեան Խաչատուր
- 48 Ծերոնեան Ծերոն
- 49 Կիւմիւշեան Համբարձում
- 50 Կրդպէթլեան Մերկեան
- 51 Կոյլաւեան Կարապետ
- 52 Հախնաղարեան Սարգիս
- 53 Հախումեան Կոստանդին
- 54 Հախումեան Յովհաննէս
- 55 Ճենանեան Մկրտիչ (Ուսուց. ծխ. դպրոց.)
- 56 Մաղիբեան Ներսէս (Կապիթան.)
- 57 Մաղլըմեան Մկրտիչ (Ուսուց. ծխ. դպ.)
- 58 Մամեան Մկրտիչ (Հեռադ. ծառայող)
- 59 Մամիկոնեան Մանուէլ (Փաստաբան)
- 60 Մամիկոնեան Յովհաննէս
- 61 Մամիկոնեան Կոստանդին
- 62 Մաքսիմաճեան Սարգիս (Քահանայ)
- 63 Մէլիք-Բէկլարեան Կարապետ (Բժշկույց.)
- 64 Մելքումեան Աթանաղինէ (Բժիշկ.)
- 65 Մեանկրեան Մկրտիչ (Ուսուց. ծխ. դպ.)
- 66 Միրիմանեան Խահակ
- 67 Միրիմանեան Գարբրէշ
- 68 Մկրտչեան Մկրտիչ (Ուսուց. ծխ. դպր.)
- 69 Մովճեան Անտոն
- 70 Մութաֆեան Յովհաննէս
- 71 Մուշեղեան Կարապետ

- Օտեսաս.
- Նոր-Նախիջեան.
- >
- >
- Գանձակ.
- Պէլց
- Խարասուպաղար.
- Նոր-Նախիջեան.
- Նուխի.
- Հնչեշտ.
- >
- Նոր-Նախիջեան.
- >
- Թէոդոսիա.
- Տիֆլիս.
- Նոր-Նախիջեան.
- Խարասուպաղար.
- Կ. Պոլիս.
- Նոր-Նախիջեան.
- Պոթուշան.
- Ադուլիս.
- Շուշե.
- >
- Հին-Խրիմ.
- Թէոդոսիա.
- Խարասուպաղար.
- Դիւլիջան.
- Սիմֆերոփոլ.
- Խամայիլ.
- >
- Նոր-Նախիջեան.
- Ղարաբաղ.
- Տիֆլիս.
- Նոր-Նախիջեան.
- Տիֆլիս.
- >
- Սիմֆերոփոլ.
- Թէոդոսիա.
- Ախալցխա.
- Երևան.

- 72 Մուրատեան Յովսէփ (Նօտար)
- 73 Մրզայեան Մկրտիչ I.
- 74 Մրզայեան Մկրտիչ II.
- 75 Մրզայեան Մերկեան
- 76 Յակոբեան Յակոբ
- 77 Յարոյեան Գրեղոր
- 78 Յարութլեանեան Սերոփէ (Իրաւաբան)
- 79 Նաբաղեան Մկրտիչ
- 80 Նաբաղեան Տրդատ
- + 81 Նաւասարդեան Փելլիպպոս (Աստճ՛նւր.)
- 82 Նորիկեան Մկրտիչ
- 83 Շելլիկեան Մանուէլ
- 84 Շահնայատեան Մարգար
- 85 Ոսկերչեան Սարգիս (Քահանայ)
- 86 Չալիսուշեան Խաչատուր (Նօտար)
- 87 Չեմպէրճեան Գէորգ
- 88 Չեմպէրճեան Յովհաննէս
- 89 Չեանկրեան Պետրոս
- 90 Չուխեան Պետրոս (Քահանայ)
- 91 Չուչուխեան Յակոբ
- 92 Չուչուխեան Մարտիրոս
- 93 Պալասանեան Դաւիթ
- 94 Պաղտասարեան Մարտիրոս
- 95 Պաղտիկեան Քրիստափոր
- 96 Պապայեան Գարբրէշ
- 97 Պապի՛ան Մանուէլ (Տեսուչ դպրոցաց)
- 98 Պապիեան Ստեփաննոս (Ուս. ծխ. դպր.)
- 99 Պարխուտարեան Ստեփան (Աստճ՛նւր.)
- 100 Պարտախճեան Գրեղոր
- 101 Պարտախճեան Ստեփաննոս
- 102 Պէշտաւեան Պետրոս
- 103 Պիճայեան Մարտիրոս (Ուս. ծխ. դպրց.)
- 104 Պոլուպէկեան Գրեղոր
- 105 Ջալալեան Նիկողայոս
- 106 Սաթուհեան Յովհաննէս
- 107 Սաղիմեան Պետրոս
- 108 Սաղիմեան Ղազարոս
- 109 Սաղիմեան Յովսէփ
- 110 Սամուէլեան Մկրտիչ
- 111 Սամուէլեան Ստեփան (Քահանայ)

- Տիֆլիս.
- Խարասուպաղար.
- >
- >
- Պոթուշան.
- Ախալցխա.
- Նոր-Նախիջեան.
- Գանձակ.
- >
- Վաղարշապատ.
- Կ. Պոլիս
- Թէոդոսիա.
- Ադուլիս.
- Նոր-Նախիջեան
- >
- Թէոդոսիա.
- >
- Մելիթոփոլ.
- Նոր Նախիջեան.
- >
- >
- Պոթուշան.
- Քրիմպրի սաանիցա.
- Նոր-Նախիջեան.
- Թէոդոսիա.
- Սիմֆերոփոլ.
- Խարասուպաղար.
- Քիչնե.
- Նոր Նախիջեան.
- >
- >
- >
- Թէոդոսիա.
- Երևան.
- Նոր Նախիջեան.
- >
- >
- Գրեղորուպոլիս.
- >

*Handwritten notes in Armenian script:*  
 Չեմպէրճեան Պետրոս  
 Չեմպէրճեան Յովհաննէս  
 Չեմպէրճեան Գէորգ

112	Սամուէլեան Մովսէս (Տեսուչ զպրոց.)	Գրեղորուպօլիս
113	Սամուէլեան Յար. (Փոթփորուտչիք)	»
114	Սամուէլեան Ղուկաս (Ուս. ծխ. զպ.)	
115	Սարգսեան Մարգար (Գպիք)	Նոր-Նախիջևան
116	Սելինեան Յովհաննէս I (Նօտար)	Խարասուպագար.
117	Սելինեան Յովհաննէս II	»
118	Սելինեան Մկրտիչ	»
119	Սեմերեան Յովհաննէս	Ազուլիս.
120	Սիմէոնեան Ներսէս (Ուսուց. ծխ. զպ.)	Երևան.
121	Սիմէոնեան Գէորգ. (Ուսուց. ծխ. զպ.)	Աշտարակ.
122	Սինանեան Մկրտիչ	Կ. Պօլիս.
123	Սուպաշեան Կարապետ	Թէոդոսիա.
124	Սուպաշեան Պետրոս	»
125	Սուպաշեան Նիկողայոս	»
126	Սուբէնեան Սուբէն (Բժշկապետ)	Մոսկուա
127	Սուբէնեան Աբտաշէս (Փոթփորուտչիք)	Սիմֆերոպոլ
128	Սուբէնեան Վարդգէս (Ճարտարապետ)	»
129	Սպանդարեան Սպանդար	Տփլիս
130	Սպանդարեան Կոստանդին	»
131	Ստեփանոսեան Քերովբէ	Նոր-Նախաջևան
132	Ստեփանոսեան Խաչատուր (Նօտար)	»
133	Սինտոնարեան Ղազարոս	Օրբազար.
134	Տալութեան Յակոբ	Սիմֆերոպոլ.
135	Տէր-Գաւթեան Մարտիրոս	Թէոդոսիա.
136	Տէր-Սարգսեան Սարգիս	Հին-Նախիջևան.
137	Տէմիրթաշեան մսիթար	Ռոստա
138	Տէր-Ստեփանեան Կոստանդին (Քհնյ.)	Կորե
139	Տէր-Գաւթեան Տիգրան (Ուս. ծխ. զպր.)	Զալալ-Օղլու
140	Տէր-Ներսիսեան Կարապետ	Գանձակ
141	Յիցուլեան Գրեղոր	Պօթուշան
142	Փախալեան Մինաս (Քհնյ. Թեմ. Տես.)	Նոր-Նախիջևան.
143	Փէշէքերեան Մանուկ	»
144	Քալանթարեան Կարապետ	Ազուլիս
145	Քալանթարեան Գաւթիթ (Ուս. ծխ. զպ.)	»
146	Քասապեան Յարութիւն	Գրեղորուպօլիս.
147	Քասապեան Աստուածատուր	»
148	Քացախեան Մինաս (Ուս. ծխ. զպրոց.)	Նոր-Նախիջևան.
149	Քրքմիեան Խաչիկ	Օտեսա
150	Տապախեան Սերովբէ	Նոր-Նախիջևան.

## Յ Ա Ն Կ

### Գ Լ Խ Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Թ Ե Ա Ն Յ.

Յառաջարան.	Ներածութիւն.	Երէս.
Ա. Փարեղու Հայկաղեան վարժարանին բացուելը . . . . .		1
Բ. Հայկաղեան վարժարանին Հաստատութեանը Համար Հարկաւոր ճանչցուած քաղաքական պաշտպանութիւնը . . . . .		6
Գլուխ. Ա. Ռուսաստանի Հացոց վիճակը 1857-ին.		12
— Բ. Նախիջևանի և Պեսարապիոյ վիճակին կառավարութիւնը Գարբիէ վարդապետին յանձնուելը. . . . .		18
— Գ. Գարբիէ վարդապետին Քիշնև երթալն ու Առաջնորդական կառավարութիւնն ընդունելը. . . . .		30
— Դ. Նախիջևանի եկեղեցեաց գումարներուն խնդրը և նորա լուծուելը . . . . .		34
— Ե. Նախիջևանի եկեղեցական դրամոց խընդրոյն որոշման Հաստատութիւնը և Տէրութեան և Ս. Էջմիածնայ Սինողէն		44
— Զ. Խալիպեան ուսումնարանին սիլընաւորութեան առաջարկութիւնը և որոշմունքը . . . . .		47
— Է. Խալիպեան ուսումնարանին կաշտերական Հրամանով Հաստատուելը և բացուելը.		53
— Ը. Վիճակագրին կառավարութեան մէջ սկըսուած բարեկարգութիւնները . . . . .		62
— Թ. Ընտրութիւն Տեսուն Մատթէոսի Արք.		

	Երէս.
Եպիսկոպոսի և կաթողիկոսութիւն ամենայն Հայոց, և առաջին ուղե- բութիւն Առաջնորդին չէջմիածին .	69
Գլուխ. Ժ. Գաբրիէլ վարդապետին զէմ պէսպէս Հակառակութեանց սկսելը . . . . .	78
— ԺԱ. Գաբր. վարդապետին շարադրած «Վար- դապետարան Ուղղափառ Հաւատոց Հայաստանեայց Եկեղեցւոց» ասուած գրքին քննութիւնը . . . . .	84
— ԺԲ. Փարիզու Հայկազեան վարժարանին փակուելը . . . . .	95
— ԺԳ. Խալիպեան ուսումնարանին ընթաց- քը, և Թէոդոսիոյ մէջ Լ. Բարսեղի բացուելը . . . . .	101
— ԺԴ. Օգոստոսիաու Ինքնակալին Ռուսաց Աղեքսանդր Բ. Կայսեր այցելութիւնը և Խալիպեան ուսումնարան ազգիս Հայոց . . . . .	110
— ԺԵ. Նախիջևանի երկպառակութեան աստ- կանալը, և երկպառակելոց առ երե- ւոյթ Հաշտութիւնը . . . . .	114
— ԺԶ. Հանդէս նաւակատեաց նորակառուց չինուածոց Խալիպեան ուսումնարանին ազգիս Հայոց . . . . .	121
— ԺԷ. Նախիջևանի երկպառակութիւնը վեր- ցընելու Համար Առաջնորդին արած առաջարկութիւնը, և նորա չջաջողելը .	132
— ԺԸ. Գաբրիէլ վարդապետին երկրորդ անգամ Ս. Էջմիածին երթալն ու դառնալը .	143
— ԺԹ. Անդրէաս Եպիսկոպոսին Նախիջևանի և Պետարապետի վիճակին վերադնել գալը . . . . .	158
— Ի. Գաբրիէլ վարդապետին տեղը Առաջ-	

	Երէս.
նորդութեան Համար Յովհաննէս Արքեպիսկոպոսին գալն ու ետ դառ- նալը . . . . .	163
Գլուխ. ԻԱ. Գաբրիէլ վարդապետին վերադառն 19-ին Հանած շրջաբերականը . . .	169
— ԻԲ. Խալիպեան ուսումնարանին վերադն- նութիւնը, և Գաբրիէլ վարդապետին վերջին անգամ Նախիջևան երթալը .	179
— ԻԳ. Խալիպեան ուսումնարանին կառավա- րութեան և ընթացքին փոփոխու- թիւնը . . . . .	186
— ԻԴ. Նախիջևանի և Պետարապետի վիճակին վերադնութեան վերջաւորութիւնը .	190
— ԻԵ. Նղիազար Արքեպիսկոպոսին Նախիջև- անի և Պետարապետի կառավարել գրուելը: — Երևանի Յաջորդութեան Գաբրիէլ վարդապետին առաջար- կուելը . . . . .	194
— ԻԶ. Գաբրիէլ վարդապետին իւր Առաջնոր- դութեանը ժամանակ ունեցած գըլ- խաւոր օգնականները . . . . .	204
— ԻԷ. Գաբրիէլ վարդապետին ութ տարուան Առաջնորդութեանը մէջ կրած նեղու- թիւններուն վրայ խորհրդածութիւն .	208
— ԻԸ. Խալիպեան ուսումնարանին վերջ վեց տարուան վիճակը . . . . .	220
— ԻԹ. Նորընտիր Գէորգ Վ. Կաթողիկոսին այցելութիւնը և Խալիպեան ուսում- նարան: — Ուսումնարանին ապագայ վիճակին Համար եղած առաջարկու- թիւնները . . . . .	224
— Լ. Խալիպեան ուսումնարանին փակուելը:	

	երէս.
— Յարութիւն Աղային վախճանիւր . . . . .	232
Գլուխ. ԼԱ. Խալիպեան ուսումնարանի փակման վճռոյն դործադրութիւնը, և նորա տեղը վիճակիս Համար Խալիպեան դպրանոց բանալու առաջարկութիւնը . . . . .	245
— ԼԲ. Խալիպեան ուսումնարանին Հին սրարտ- քերուն վճարման խնդիրը . . . . .	256
— ԼԳ. Թէոդոսիոյ Ուսումնարանին Նախիջևան փոխադրուելը ընդ անուամբ Հոֆմայր Գորոյի վիճակիս Նախիջևանի և Պետա- րապետոյ, և Խալիպեան շէնքին վարձու- արուելը . . . . .	273

**Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ծ Գ .**

**Ա.**

Պատճէն նամու վին Մատթէոսի Կաթուղիոսի առ Սարգիս Վ. Թէոդորեան և առ Ամբրոսիոս Գալ- ֆայեան և Փարիզ . . . . .	285
----------------------------------------------------------------------------------------------------------------	-----

**Բ.**

Պատճէն նամակին Յովհաննու վարդապետին Բեկ- նաղարեանց առ Մախար Արքեպիսկոպոս՝ գրե- լոյ և Թէոդոսիոյ և 27 Դեկտ. 1860 . . . . .	286
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-----

**Գ.**

Նախագիծ սահմանաց աղգաչնոց դպրոցին վա- ճառակիսնութեան որ Հիմնելոց էր և Նախի- ջևան քաղաքի չամին 1862 . . . . .	296
--------------------------------------------------------------------------------------------------------------------	-----

**Դ.**

	երէս.
Պատճէն Բողոքոյ առ Վեհափառ Կաթուղիոսն աղգիս Հայոց Տ. Մատթէոս Ա. որ գրեցաւ էջ նոյեմբերի 1864 ամի . . . . .	300

**Ե.**

Պատճէն խնդրագրոյն Հայոց Հասարակութեան Քիչնե քաղաքի Պետարապետոյ առ Սինոդն որը- րոյ էջմիածնի, և 1 Մարտի 1861 ամի . . . . .	358
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-----

**Զ.**

Պատճէն նամակին Յակոբայ վարժապետի Կարե- նեանց առ Վէորդ վարդապետ Արամեան . . . . .	362
-------------------------------------------------------------------------------------	-----

**Է.**

Պատճէն թարգմանութեան խնդրագրոյն Ելիա- նաւորաց և Ժողովրդոց Նախիջևանի առ Վսե- մափայլ Ոստիկանն Ներքին Գործոց . . . . .	366
---------------------------------------------------------------------------------------------------------------------------	-----

**Ը.**

Պատճէն նամակին Յարութիւն վարժապետի Յա- կոբեանց՝ գրելոյ առ Բարբէկ վարդապետ և Պսթուշանէ և 6 նոյեմ. 1865 ամի . . . . .	372
---------------------------------------------------------------------------------------------------------------------------	-----

**Թ.**

Նամակը երկու առ Բահերէց Յանճաժողովոյն կարգելոյ և վերադննութիւն Խալիպեան ու- սումնարանին, առ դնդապետն Քալիելին, և պատասխանի նորա . . . . .	375
----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-----

« Ազգային գրադարան



NL0240380

